

ՅՈՒՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ



ԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ԵՎ ԽՈՍՔԻ
ՄՇԱԿՈՒՅԹ

Գիրք Ա

ՅՈՒՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

**ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԵՎ ԽՈՍՔԻ ՄՇԱԿՈՒՅԹ**

ԳԻՐՔ Ա

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ. ԳՐԱԿԱՆ ԱՐԵՎԵԼԱՅԱՅԵՐԵՆԻ ՆՈՐՄԸ

Ուսումնական ձեռնարկ բուհերի
հումանիտար և բնագիտական
ֆակուլտետների ուսանողների համար

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆ • 2014

Հրատարակության են երաշխավորել ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնը
և բանասիրության ֆակուլտետի գիտական խորհուրդը

ՀՏԴ 809.198.1:808.5
ԳՄԴ 81.2Հ
Ա 791

Խմբագիրներ՝ բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Սերգեյ Գալստյան**
բան. գիտ. թեկնածու, դոցենտ **Լեոնիդ Թեյան**
Գրախոսներ՝ բան. գիտ. թեկնածու, դոցենտ **Յ. Ջաքարյան**
բան. գիտ. թեկնածու, դոցենտ **Ն. Ներսիսյան**
բան. գիտ. թեկնածու, դոցենտ **Ա. Սարգսյան**
բան. գիտ. թեկնածու, դոցենտ **Ա. Տեր-Մինասյան**

Ավետիսյան Յուրի

Ա 791 **ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԽՈՍՔԻ ՄՇԱԿՈՒՅԹ** / Յու. Ավետիսյան.— Եր.:
ԵՊՀ, 2014. Գիրք Ա — 312 էջ:

Դասագրքում ներկայացված է «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» դասընթացի առաջին բաժինը, որը վերաբերում է գրական արևելահայերենի հնչյունական, բառային և քերականական նորմերի քննությանը, խոսքում դրանց ճիշտ իրացմանը: Ներկայացվում են այն հիմնական լեզվական կանոնները, որոնցում առկա են գործածության դժվարություններ: Նախատեսված է ուսանողների և բոլոր նրանց համար, ովքեր ուզում են հայերեն ճիշտ խոսել և գրել:

ՀՏԴ 809.198.1:808.5
ԳՄԴ 81.2Հ

ISBN 978–5–8084–1885–1

© Ավետիսյան Յու. Ս., 2014

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ժամանակակից բարձրագույն կրթության հիմնական խնդիրներից մեկը անհատականության զարգացման համար պայմաններ ապահովելն է: Սա ենթադրում է կրթական այնպիսի միջավայրի ստեղծում, որտեղ կրթություն ստանալով՝ անհատը հետագայում կարողանա ինքնադրսևորվել ոչ միայն իր մասնագիտության մեջ, այլև հասարակական կյանքի տարբեր ոլորտներում: Այդ նպատակին է կոչված ծառայելու նաև «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» առարկայի դասավանդումը բուհերում:

Խոսքի մշակույթը (կուլտուրան) ուսուցանում է լեզվի կիրառական և հաղորդակցային հնարավորությունները: Լեզուն աշխատանքային կարևոր գործիք է բոլոր նրանց համար, ովքեր իրենց գործունեությամբ առնչվում են մարդկանց հետ, կազմակերպում են նրանց աշխատանքը, սովորեցնում են, դաստիարակում, գործնական բանակցություններ վարում կամ ծառայություններ մատուցում: Հաղորդակցվելու շնորհքը մարդու մեծագույն հարստություններից մեկն է:

Դասընթացը ներկայացվում է երկու գրքով: Սա առաջին գիրքն է (Գիրք Ա. **Հայոց լեզու. գրական արևելահայերենի նորմը**): Այստեղ ներկայացվում են լեզվի ընդհանուր հատկանիշները և գրական արևելահայերենի լեզվական այն հիմնական կանոնները, որոնցում առկա են կիրառական դժվարություններ, նկարագրվում են լեզվական մակարդակներում նկատվող հիմնական տեղաշարժերը: Խոսքի կառուցման առաջին և հիմնական պայմանը լեզվական կանոնների իմացությունն է:

Երկրորդ գիրքը (Գիրք Բ. **խոսքի մշակույթ**) վերաբերելու է խոսքի արժանիքներին և խոսքի գործառական տարբերակների (գիտական խոսք, առօրյա խոսք, պաշտոնական խոսք, հրապարակային խոսք, բանավիճային խոսք ևն) բառապաշարային և քերականական յուրահատկությունների նկարագրությանը:

Մ Ա Ս 1

ԼԵԶՈՒ. ԼԵԶՎԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԵՐԸ, ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Լեզուն որպես հաղորդակցման միջոց: Լեզուն որպես նշանային համակարգ, հիմնական հատկանիշները: Հայոց լեզուն աշխարհի լեզուների շարքում: Հայոց լեզվի ձևավորումը: Հայոց լեզվի տարբերակները՝ բարբառներ, խոսակցական լեզու, գրական լեզու. գրական լեզուն որպես ազգային լեզվի բարձրագույն ձև: Գրական լեզվի զարգացման փուլերը: Հայոց գրական լեզվի երկու տարբերակները՝ արևմտահայերեն և արևելահայերեն: Գրական լեզվի գրավոր և բանավոր ձևերը: Պետական լեզու: Հայոց լեզվի գործառնությունները:

Լեզուն հասարակական երևույթ է: Ստեղծվում է հասարակության, ժողովրդի կողմից: Լեզվական օրենքները առարկայական (օբյեկտիվ) բնույթ ունեն, դրանք գործում են խոսողի կամքից անկախ: Հասարակական գործունը մեծ դեր ունի լեզվի զարգացման մեջ. բարձր քաղաքակրթություն ունեցող և զարգացած հասարակական կյանքով ապրող ժողովրդի լեզուն նույնպես զարգացած է:

Հասարակական երևույթներ են նաև մշակույթը, կրթությունը, գիտությունը ևն: Լեզուն դրանցից առանձնանում է նրանով, որ մարդկանց ծառայում է որպես **հաղորդակցման միջոց**: Լեզվի միջոցով մարդիկ միմյանց հայտնում են իրենց մտքերը, հասնում են փոխադարձ ըմբռնման: Նա ապահովում է սերունդների միջև կապը և ժառանգորդությունը: Լեզուն հոգևոր-մշակութային առաջընթացի գործիք է:

Իբրև հաղորդակցման միջոց՝ լեզուն **նշանների համակարգ է**: Հաղորդակցական արժեքով նշաններ շատ կան՝ շարժումները, լուսային, ծայնային, գունային, գծային ազդանշանները, նշանային արժեքով օժտված այլ միջոցներ՝ հայելի, ծաղիկ, դրոշակ ևն: Դրանցից լեզուն առանձնանում է մի շարք էական հատկանիշներով. **1.** Լեզուն հաղորդակցման հիմնական, ամենակարևոր մի-

ջոցն է: **2.** Նշանակիչի դերում հանդես է գալիս ձայնը՝ իր բոլոր հատկանիշներով: **3.** Ընդհանրացնում է անհատական և հասարակական փորձի արդյունքները: **4.** Գործառնում է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: **5.** Մտածողության արտահայտման ձև է: **6.** Ազգային գոյության հիմնական ձևերից մեկն է, ինչպես ազգային մշակույթը, տնտեսությունը, բանակը, տարածքային ամբողջականությունը: **7.** Համակարգ է. նրա հորինվածքի տարրերը սերտորեն փոխկապակցված են, յուրաքանչյուր միավոր լեզվական կառուցվածքում ունի իր տեղը, դիրքը, դերը, գործառնությունը:

Մեռած և կենդանի լեզուների թիվը աշխարհում, ըստ տարբեր հաշվումների, 2500–3000 է: Այժմ գործածվում են 500–ից ավելի լեզուներ: **Ըստ տարածվածության** (խոսողների քանակի)՝ առաջին շարքերում են չինարենը (1,2 մլրդ), անգլերենը (1,1 մլրդ), իսպաներենը (0,5 մլրդ), ռուսերենը (260 մլն) ևն: Հայերենը առաջին հարյուր լեզուների շարքում է (9–10 մլն): Այս թվերը ժամանակի ընթացքում փոփոխվում են:

Աշխարհի լեզուների պատկերը տարբեր է նաև ըստ այն հատկանիշի, թե դրանցից որը քանի երկրում **պետական կարգավիճակ** ունի: Միայնակ կամ տեղական լեզուների հետ միաժամանակ պետական կարգավիճակ ունեն ֆրանսերենը (27 երկրում), արաբերենը (23), անգլերենը (20), իսպաներենը (19), ռուսերենը (7), չինարենը (3) ևն: Հայերենը պետական լեզու է 2 երկրում՝ Հայաստանի Հանրապետությունում և ԼՂ Հանրապետությունում: Պետական կարգավիճակ ունեն 116 լեզուներ:

Ըստ լեզուների ծագման գիտական տեսության՝ հայերենը **հնդեվրոպական ընտանիքի լեզուներից մեկն է**: Ցեղակից է հնդկերենին, պարսկերենին, ռուսերենին, եվրոպական գրեթե բոլոր լեզուներին: Ցեղակից չէ, օրինակ, վրացերենին, արաբերենին, եբրայերենին, թուրքերենին, ֆիններենին: Հնդեվրոպական հիմք լեզվից անջատվել է վաղնջական ժամանակներում՝ մեզանից 6000 տարի առաջ: Ձևավորվել է հայասա-արմենական ցեղերի ու ցեղախմբերի լեզուների հիմքի վրա:

Մինչև մ. թ. 5-րդ դարը հայերենի վերաբերյալ գրավոր վկայությունները խիստ սակավ են: Այս շրջանում գիր ունենալու մասին շրջանառվում են իրական և հավանական փաստեր: Այսպես՝ Մովսես Խորենացին հիշատակում է մեհենական մատյանների մասին, որոնք, ըստ վկայության, հայագիր էին: Հույն պատմիչ Փիլոստրատոսը (մ. թ. 2-րդ դար) գիր ունեցող ժողովուրդների շարքում թվում է նաև հայերին: Վարդան Արևելցին (13-րդ դարի պատմիչ) խոսում է Կիլիկյան Հայաստանում գտնված դրամների մասին, որոնք դրոշմված են եղել հայերեն գրով: Հավանական փաստերից են հետևյալները. 5-րդ դարում կարճ ժամանակահատվածում ստեղծվեց գրավոր բարձր մշակույթ՝ մշակված ու հղկված գրավոր լեզվով: Հեթանոսական աստվածների պանթեոնում ունեցել ենք գրի ու դպրության աստված (Տիր). գրի պաշտամունք ունեցող ժողովուրդը չէր կարող գիր չունենալ: Մեր հարևան գրեթե բոլոր ժողովուրդները (պարսիկները, ասորիները, արաբները և այլք) ունեցել են գիր. ինչո՞ւ պիտի հայերս չունենայինք գիր ու դպրություն, մանավանդ որ ունեցել ենք ուսյալ և կրթյալ թագավորներ, ովքեր պիտի որ մտահոգված լինեին այդ հարցով ևն: Փաստ է, սակայն, որ նախամեսրոպյան շրջանի հայերեն գրավոր խոսքի որևէ նմուշ մեզ չի հասել:

Հայերենի պատմության այդ շրջանը՝ մինչև 5-րդ դարը, կոչվում է **հայերենի նախագրային շրջան**: Գրերի գյուտից հետո (405 թ.) սկսվում է հայերենի պատմության **գրային շրջանը**: Այս շրջանը, իր հերթին, բաժանվում է երեք փուլի՝ **հին հայերեն** (գրաբար՝ 5-11 դդ.), **միջին հայերեն** (կիլիկյան հայերեն՝ 12-16 դդ.), **նոր հայերեն** (աշխարհաբար՝ 17-րդ դարից սկսած): Վերջինս ունի երկու տարբերակ՝ **արևելահայերեն** և **արևմտահայերեն**:

Հայոց լեզու կամ **հայերեն** ասելով՝ հասկանում ենք մեր լեզվի բոլոր տարբերակները՝ բարբառ, խոսակցական հայերեն, գրաբար, գրական նոր հայերենի երկու ճյուղերը ևն:

Բարբառներ: Լեզվի տարածքային տարբերակներ են և սպասարկում են հասարակության որոշակի հատվածների: Յուրաքան-

չյուր բարբառ ունի որոշակի տարբերություններ մյուս բարբառներից և, իհարկե, նաև գրական լեզվից: Դրանով է պայմանավորված այս կամ այն բարբառի ինքնուրույնությունը: Այդ տարբերությունները առկա են լեզվական բոլոր մակարդակներում՝ հնչյունական, բառային և բերականական: Խոշոր բարբառներն ունենում են նաև ենթաբարբառներ կամ խոսվածքներ. դրանց միջև եղած տարբերություններն ավելի քիչ են:

Ծանոթություն: Նախկինում բարբառ ասելով՝ հասկացել են լեզու, խոսք, նույնիսկ ծայն, հնչյուն, ինչպես գրաբարյան հետևյալ դարձվածքում՝ «Չայն բարբառոյ յանապատի», կամ՝ «Եվ բարբառ քոյ քաղցր է, եւ տեսիլ քոյ գեղեցիկ» («Երգ երգոց»): Այսօր էլ այդ իմաստը մասամբ պահպանվել է՝ «Ի՞նչ է ասում այդ գիրքը և ի՞նչ է բարբառում...» (Ե. Չարենց), «Եվ նա բարձր ծայնով բարբառեց...»:

Բարբառների առաջացման հիմնական պատճառը տարածքային և լեզվական տարանջատվածությունն է: Կարծիք կա, որ գրաբարում բարբառային մեծ տարբերություններ չեն եղել: Դրանք ավելի ակնառու են դառնում միջնադարում՝ հատկապես 15-16-րդ դարերից սկսած: Հայերենում բարբառների թիվը շատ է. հասնում է մոտ վեց տասնյակի: Հայերենի բարբառները, ըստ այս կամ այն հատկանիշի, ներկայացվում են տարբեր խմբերով: Առավել ընդունված մոտեցումներից է բարբառների դասակարգումն ըստ ձևաբանական հատկանիշների (Հրաչյա Աճառյան): Այս դեպքում հաշվի է առնվում սահմանական ներկայի կազմությունը: Ընդունվում են երեք խումբ կամ երեք ճյուղի բարբառներ:

Ում ճյուղ: Ներկան կազմվում է **ոււմ**, **ամ**, **իւմ** կամ նման այլ մասնիկներով (զնում են, էթըմ են): Այս ճյուղին են պատկանում Երևանի, Ագուլիսի, Ղարաբաղի, Աստրախանի, Ջուղայի բարբառները:

Կը ճյուղ: Ներկան կազմվում է **կը**, **կու**, **զը**, **գի** մասնիկներով (կը խօսիմ, կու գամ, երգեմ զը): Այս ճյուղին են պատկանում Պոլսի, Կարինի, Մշո, Վանի, Շապին-Գարահիսարի, Կիլիկիայի, Համշենի, Սիրիայի, Ղրիմի բարբառները:

Ել ծյուղ: Ներկայի կազմությանը մասնակցում են **ել, ալ, իլ** վերջավորությամբ դերբայներ (գրել են, չեն գրել, կարդալ են): Այդպիսիք են Մարաղայի, Խոյի, Ուրմիայի բարբառները: Հետագայում վերջինից (**ել ծյուղից**) առանձնացվում է **ս ծյուղը** (գրես են, կարդաս են)՝ իր բարբառներով՝ Մեղրու, Ուրմիայի, Հադրութի:

Ազգային լեզվի զարգացումը և փոխադարձ շփումները տանում են բարբառների աստիճանական վերացման:

Խոսակցական հայերեն: Ի տարբերություն բարբառների՝ որպես լեզվի տարբերակ ունի տարածական ավելի մեծ ընդգրկում, իր լեզվական կառուցվածքով միջին դիրք է գրավում բարբառների և գրական լեզվի միջև: Իհարկե, իր մշակվածությամբ զիջում է գրական լեզվին: Խոսակցական լեզվի գործառական հիմնական ոլորտը բանավոր հաղորդակցումն է, թեև ինչպես բարբառները, խոսակցական լեզուն արտահայտչական նպատակներով ազատ կարող է գործածվել նաև գործառական այլ ոճերում՝ գեղարվեստական գրականություն, զանգվածային լրատվության միջոցներ ևն: Բարբառային լեզվի տարրերը (հատկապես բառեր, դարձվածքներ) աստիճանաբար անցնում են խոսակցական լեզու և գտվելուց, մշակվելուց հետո փոխանցվում են գրական լեզվին: *Բարբառ – խոսակցական – գրական լեզու* ճանապարհով անցած բառեր են, **օրինակ՝ իրիկուն, ասուլիս, բերանքսիվայր, ծնկաչոք, հերթ, մարդավարի, նշանդրեք, սրտաբաց, պռունկ** ևն:

Ազգային և սոցիալական զարգացման որոշակի փուլում ազգային լեզուն ձեռք է բերում իր գոյության բարձրագույն ձևը, որ է **գրական լեզուն:**

Գրական հայերեն: Բարբառների և խոսակցական լեզվի հիմքի վրա ձևավորված և գրական մշակման ենթարկված, կանոնարկված լեզվի տարբերակ է: Նրա հիմնական հատկանիշներն են.

1. Մշակվածությունը և նորմավորվածությունը. գրական լեզուն ունի հնչյունական–արտասանական մշակված համակարգ, բառային հարուստ կազմ, քերականական կուռ կառուցվածք:

2. Միասնականությունը և հանրահասկանալիությունը. մյուս տարբերակները չունեն այդ հատկանիշը: Գրական լեզուն ունի համաժողովրդական բնույթ:

3. Ոճական բազմազանությունը և բազմարժեքությունը. նրա գործառական հնարավորությունները դրսևորվում են հասարակական կյանքի ու գործունեության բոլոր ոլորտներում՝ առօրյա հաղորդակցում, գիտական ու պաշտոնական գործունեություն, գեղարվեստական գրականություն, պարբերական մամուլ, կրթություն ևն:

Գրական լեզվի ձևավորման որոշակի փուլերում հնարավոր է՝ էական դեր կատարեն անհատները՝ գրական մեծությունները, ինչպես Ա. Պուշկինը՝ ռուս իրականության մեջ, Խ. Աբովյանը՝ հայ: Խաչատուր Աբովյանի մեծ ծառայությունը աշխարհաբար հայերենի ձևավորման ու մշակման գործում հատկապես այն էր, որ նա քիչ թե շատ մշակված նոր հայերենով գրեց բարձրարժեք գեղարվեստական գործ՝ «Վերք Հայաստանի» վեպը:

Իրարից պիտի զանազանել **ազգային լեզու** և **գրական լեզու** հասկացությունները: Առաջինը որպես ազգ ձևավորված հայ ժողովրդի լեզուն է, որ ընդգրկում է մարդկանց խոսքային գործունեության բոլոր ոլորտները, ներառում է բարբառները, ժարգոնը, խոսակցականը: **Գրական լեզու** հասկացությունը այս համեմատության մեջ ավելի նեղ իմաստ ունի. նշանակում է այն լեզուն, որը մշակվել է խոսքի վարպետների, գիտնականների, հասարակական գործիչների կողմից: Այս տեսակետից գրական լեզուն համաժողովրդական ազգային լեզվի խստորեն նորմավորված ձևն է՝ Գրական լեզուն ծառայում է տվյալ հանրության ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր հաղորդակցմանը: Գրական լեզու էր **գրաբարը**, մասամբ՝ **միջին հայերենը**: Այսօր մենք ունենք ազգային գրական լեզվի երկու տարբերակ՝ **արևելահայերեն** և **արևմտահայերեն**:

Գրաբար (5–11–րդ դդ.): Գրաբար բառացիորեն նշանակում է «գրի պես»: Պատճառն այն է, որ 7–րդ դարից սկսած՝ առաջին գրական հայերենը՝ գրաբարը, աստիճանաբար դադարում է ժողովրդի բանավոր հաղորդակցման լեզու լինելուց և մնում է միայն գրավոր լեզու, այսինքն՝ գրքի ու գրականության լեզու՝ **գրաբար**: Գրաբարի ծաղկման շրջանը 5–րդ դարն է, որ հաճախ անվանում են ոսկեդարյան հայերենի շրջան: Այս շրջանում գրաբարը և՛ բանավոր, և՛ գրավոր հաղորդակցման լեզու էր: Հետագա զարգացման ընթացքում գրաբարի մեջ մուտք են գործում բարբառների և աշխարհաբարի տարրեր: Գրաբարի հիմքում սկսում է ձևավորվել միջին հայերենը:

Գրաբարը մշակված, նորմավորված լեզու էր: Ուներ հարուստ բառապաշար: Գրաբարից վկայված բառերի թիվը հասնում է 70 հազարի: Այդ բառապաշարի հիմնական մասը՝ մոտ 50 հազար բառ, ամփոփված է գրաբարի ամենածավալուն երկհատորանոց բառարանում, որը կոչվում է «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» (Վենետիկ, 1836–1837 թթ.): Բառարանը հեղինակել են ժամանակի ճանաչված երեք մտավորական գործիչներ՝ Մկրտիչ Ավգերյանը, Գաբրիել Ավետիքյանը, Խաչատուր Սյուրմեյանը: Դա հեղինակների 50 և ավելի տարիների տքնաջան աշխատանքի արդյունքն է՝ Մխիթարյան միաբանության մատենադարանում եղած մոտ հազար ձեռագիր հուշարձաններից և հայ հին մատենագրության՝ այն ժամանակ տպագրված մատյաններից կատարված բառաքաղությանը:

Արդի հայերենը կառուցված է գրաբարի հիմքի վրա: Պահպանում է նրա բոլոր հիմնական հատկանիշները լեզվական բոլոր մակարդակներում: Լեզվաբան Գրիգոր Ղափանցյանի խոսքերով ասած՝ «Բարևից ցտեսություն գրաբար ենք խոսում»: Իբրև լեզվական համակարգ՝ գրաբարը, սակայն, իր մի շարք հատկանիշներով տարբերվում է արդի հայերենից և ուստի դիտվում է հայոց լեզվի զարգացման առանձին փուլ: Բացի հիմնական բառապաշարին պատկանող բառերից (**արև, տուն, հաց, նկար, վախ, սեր,**

հիշատակ, լավ, նվագ, ազատ ևն)՝ գրաբարից աշխարհաբարին են փոխանցվել զուտ գրաբարյան բազմաթիվ բառեր՝ **ակաղձուն, ամանոր, ատոք, արագոտն, գուբ, գուղծ, դշխո, դրանիկ, հանգույն, հիրավի, պախուրց, ունկ, ուստր**, դարձվածքային արտահայտություններ՝ **ակն ընդ ական, ատամն ընդ ատաման, դարծի շրջանս յուր, ի գիր արկանել, ի խորոց սրտի, ծայն բազմաց՝ ծայն Աստծո, ծայն մեծաց, միով բանիվ, քավ լիցի, քերականական կազմություններ՝ իրենց նոր կամ նորացված նշանակությամբ՝ առթիվ, առձեռն, ընդամին, ի դեմս, իրավ, ի փառս, կեցցե, հայոց, ձեռաց, մասին, շնորհիվ, վրաց** ևն:

Գրաբարով ստեղծվել է մատենագրական, իմաստասիրական հարուստ ժառանգություն՝ Մովսես Խորենացի՝ «Հայոց պատմություն», Կորյուն՝ «Վարք Մաշտոցի», Եզնիկ Կողբացի՝ «Եղծ աղանդոց», Դավիթ Անհաղթ՝ «Սահմանք իմաստասիրության», և չափածո հարուստ գրականություն՝ Մեսրոպ Մաշտոցի տաղերն ու շարականները, Սահակ Պարթևի հոգևոր տաղերը ևն: Իր տաղերը և «Մատյան ողբերգության» պոեմը (կոչվում է նաև Նարեկ) գրաբարով է ստեղծել Գրիգոր Նարեկացին (951–1003 թթ.): Գրաբարով 5–րդ դարում թարգմանվեց Աստվածաշունչը: Դա Աստվածաշնչի առաջին թարգմանություններից է:

19–րդ դարի կեսերից գրավոր լեզվից աստիճանաբար դուրս մղվեց գրաբարը՝ իր տեղը զիջելով աշխարհաբարին: Գրաբարի գործածությունը մինչև այժմ շարունակվում է միայն եկեղեցական արարողությունների ժամանակ: Դասավանդվում է ավագ դպրոցում և բուհերի բանասիրության ֆակուլտետներում:

Միջին հայերեն (12–16–րդ դդ.): Այս շրջանում իբրև համընդհանուր գրական լեզու շարունակում է գործածվել գրաբարը, իսկ խոսակցական ոլորտում՝ բարբառների հիմքի վրա ձևավորված միջին հայերենը: Միջին հայերենը միջին դիրք է գրավում գրաբարի և աշխարհաբարի միջև և՛ ժամանակագրական առումով, և՛ լեզվական որակի տեսակետից: Հայոց պատմության կիլիկյան շրջանում այդ լեզուն սկսեց գրաբարին զուգահեռ կատարել գրա-

կան լեզվի որոշ գործառույթներ և դարձավ Կիլիկյան թագավորության պետական լեզուն: Այդ պատճառով միջին հայերենը հաճախ կոչում են **Կիլիկյան հայերեն**: Կիլիկյան հայերենը, սակայն, չդարձավ համահայկական գրական լեզու, ինչպես գրաբարը կամ աշխարհաբարը: Միջին հայերենում են ստեղծվել կամ փոխառվել և արդի հայերենի բառապաշարին անցել թվով քիչ բառեր ու արտահայտություններ: Դրանք ունեն հիմնականում խոսակցական բնույթ՝ **գաթա, խավիժ, լավաշ, մեկիք, վեզիր, գզիր**: Ֆրանսերենից փոխառվեց **պարոն (բարոն)**. նշանակել է ազնվականական աստիճան, տիտղոս) բառը:

Միջին հայերենով նույնպես ստեղծվել է գեղարվեստական հարուստ գրականություն՝ Հովհաննես և Կոստանդին Երզնկացիների աշխարհիկ տաղերը, Ֆրիկի սոցիալական քնարերգությունը, Առաքել Սյունեցու «Աղամագիրքը», Նահապետ Քուչակի հայրենները ևն: Գրվել են գործեր, որոնք վերաբերում են գիտության տարբեր ոլորտներին՝ իրավագիտություն (Մխիթար Գոշ, Սմբատ Գունդստաբլ), բժշկագիտություն (Մխիթար Հերացի), պատմագրություն (Վարդան Արևելցի) ևն:

Աշխարհաբար կամ **նոր հայերեն** (17-րդ դարից սկսած): **Աշխարհաբար** տերմինի առաջացումը կապվում է հենց **աշխարհ, աշխարհիկ, աշխարհական** բառերի հետ: Սկզբնական շրջանում անվանվել է նաև **քաղաքացիական հայերեն, աշխարհորեն, աշխարհական լեզու**, իսկ ավելի ուշ՝ նաև **նոր հայերեն**: Գրական հայերենը ավելի ուշ շրջանի իրողություն է. աշխարհաբար հայերենի գրականացված տարբերակն է, որն ընդունված է անվանել նաև **նոր գրական հայերեն** կամ **արդի հայերեն**՝ իր երկու ճյուղերով՝ արևմտահայերեն և արևելահայերեն, կամ ուղղակի՝ **հայոց լեզու** և կամ **ժամանակակից հայոց լեզու (արդի հայերեն** անվանումը միայն պայմանականորեն է ենթադրում հայոց լեզվի երկու ճյուղերը՝ արևելահայերենը և արևմտահայերենը): 19-րդ դարից, նոր ժամանակներում հայոց ազգային մշակույթի և քա-

ղաքական զարթոնքին զուգահեռ, ձևավորվում է **հայոց ազգային գրական լեզուն**:

Գրավոր հաղորդակցման հիմնական լեզուն մինչև 19-րդ դարի կեսերը մնում էր գրաբարը: Գրաբարի կողմնակիցները համառ պայքար էին մղում գրաբարը վերականգնելու, ընդհանուր հաղորդակցման լեզու դարձնելու համար: Հիմնական փաստարկն այն էր, որ գրաբարը կանոնարկված և մշակված լեզու է, ունի հարուստ բառապաշար և քերականական ճկուն համակարգ, ուստի և նախընտրելի է գործառնման բոլոր ոլորտներում: Իսկ աշխարհաբարի կողմնակիցները, ընդունելով գրաբարի առավելությունները, նոր հայերենի իրավունքը պաշտպանում էին այն համոզմամբ, որ աշխարհաբարը թեև համեմատաբար քիչ է մշակված, բայց կենդանի լեզու է, ի տարբերություն գրաբարի՝ հասկանալի է ժողովրդին: 19-րդ դարի կեսերից հետո հարցը լուծվում է հօգուտ աշխարհաբարի: Գրաբարի և աշխարհաբարի կողմնակիցների պայքարը հետագայում կոչվեց **գրապայքար**: Աշխարհաբարը մշակվեց ու հղկվեց և համահայկական գրական լեզվի կարգավիճակ ձեռք բերեց 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբներին:

Արևմտահայերեն: Աշխարհաբարի արևմտյան տարբերակը՝ արևմտահայերենը, ձևավորվեց արևմտահայության մշակութային ամենախոշոր կենտրոնում՝ Կոստանդնուպոլսում, առավելապես Պոլսի բարբառի հիմքի վրա: Նրա արմատները գնում են դեպի միջին հայերեն: Աշխարհաբարի տրոհումը երկու ճյուղերի պայմանավորված էր արտալեզվական և լեզվական մի շարք գործոններով. **1.** Հայաստանի պատմաաշխարհագրական տրոհումը Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև (387 թ.): **2.** Դրանով պայմանավորված՝ գերիշխող լեզուների և որոշակիորեն տարբեր քաղաքակրթությունների ազդեցությունները. արևմտահայերենի վրա սկզբնապես մեծ եղավ թուրքերենի, իսկ ավելի ուշ՝ 19-րդ դարի կեսերից սկսած, ֆրանսերենի ազդեցությունը: Դա նկատվում է բառապաշարում, առանձին քերականական ձևերի կազմության մեջ: Արևելահայերենի վրա մեծ է եղել ռուսերենի ազդեցությունը:

Դա նկատելի է բառապաշարի մեջ և շարահյուսական առանձին կառույցներում: **3.** Տարբերակներից յուրաքանչյուրը յուրովի է կապվում մեր լեզվի զարգացման նախորդ փուլերին. արևմտահայերենը հնչյունական համակարգով, քերականական մի շարք հատկանիշներով սերտ առնչություններ ունի միջին հայերենի հետ, մինչդեռ արևելահայերենը նույն հատկանիշներով ավելի մոտ է գրաբարին: **4.** Տարբեր են երկու գրականների բարբառային հիմքերը. արևելահայերենը հիմնվում է հայերենի ամենատարածված բարբառներից մեկի՝ **Արարատյան** (Երևանյան) (ուև ճյուղի), իսկ արևմտահայերենը՝ **Պոլսի** (կը ճյուղի) բարբառի վրա:

Արևմտահայերենը և արևելահայերենը մեկ ազգային լեզվի երկու դրսևորումներ են, մեկ միասնական լեզվի տարբերակներ կամ ճյուղեր: Դրանցից որևէ մեկը մյուսի նկատմամբ չունի գերազանցություն, չկա բարբառ – գրական լեզու հակադրությունը: Երկուսին էլ հատուկ են գրական լեզվի հատկանիշները. երկուսն էլ բավարար չափով մշակված են, կանոնարկված և ծառայում են հայոց լեզվով խոսող հանրության գրավոր և բանավոր հաղորդակցմանը: Այլ խնդիր է, որ այսօր գրական արևելահայերենը համեմատաբար մշակված է և բառապաշարով ավելի հարուստ, պետական լեզու է և հասկանալի պատճառներով ունի զարգացման ավելի մեծ հնարավորություններ: Առավել մշակված են նրա գործառական որոշ տարբերակներ, մասնավորապես պաշտոնական և գիտական ոճերը:

Արևմտահայերենը Սփյուռքի հայության բավական ստվար հատվածի ընդհանուր հաղորդակցման լեզուն է: Դպրոցի, մանուկի, գեղարվեստական գրականության լեզու է: Քիչ է մշակված գիտական և պաշտոնական ոճերում, նորմավորման ինչ–ինչ հատկանիշներով զիջում է արևելահայերենին, հարուստ է զուգաձևություններով: Արևմտահայերենով ստեղծված են հարուստ մշակույթ, գեղարվեստական և գիտական գրականություն: Դուրյանի, Պարոնյանի, Զոհրապի, Մեծարենցի, Վարուժանի, Շահնու-

րի և այլոց գրական ժառանգությունը ապացույց է մեր լեզվի այդ տարբերակի հարստության ու մշակվածության:

Վերջին տարիներին հաճախ է խոսվում **երկու գրականների մերձեցման մասին**: Այս հարցը մտահոգության առարկա է դարձել դեռ աշխարհաբարի ձևավորման շրջանում: 19–րդ դարի 60–ականներին, երբ քննարկվում էր խնդիրը, Ստ. Նազարյանցը հանդես եկավ մի հողվածով, որտեղ ասվում էր, որ այս տարաբաժանումը պետք է ընդունել առանց ցավի՝ որպես իրողությունների պատմական զարգացման հետևանք: Եվ հետո, ըստ նրա, բոլորովին էլ վատ չէ մի ծաղկի փոխարեն երկու ծաղիկ ունենալը: 19–րդ դարի 80–90–ականներին հարցը նորից քննարկման առարկա դարձավ: «Էջմիածին» պարբերականի էջերում ծավալուն հողվածով հանդես եկավ Մանուկ Աբեղյանը: Հայտարարելով, որ ամիմաստ է խոսել ձուլման մասին՝ արևելահայ երիտասարդ լեզվաբանը մերձեցման ուղիները նշելիս զիջումներ էր պահանջում հիմնականում արևմտահայերենից: Դա առաջացրեց արևմտահայ մտավորականների բուռն դժգոհությունը:

20–րդ դարի շեմին հասկանալի պատճառներով առավել սրությամբ է դրվում հարցը: Արևմտահայ պարբերական մամուլում («Արևելք», «Մասիս», «Անահիտ», «Ազատամարտ» ևն) հանդես են գալիս ժամանակի և՛ արևելահայ, և՛ արևմտահայ ճանաչված մտավորական դեմքեր՝ Ա. Շիրվանզադե, Ա. Զոպանյան, Վրթ. Փափագյան, Դ. Վարուժան, Ռ. Զարդարյան, Հ. Քյուֆեճյան (Հ. Օշական), Դ. Աղայան, Մ. Վարանդյան և ուրիշներ: Ընդհանուր կարծիքն այն էր, որ պետք է խոսել միայն հնարավոր մերձեցման մասին, իսկ միացումը պետք է տեղի ունենա քաղաքական փոփոխությունների արդյունքում:

Երկու տարբերակների մերձեցման իրական հնարավորություն ստեղծվեց Հայաստանի անկախացումից հետո՝ պայմանավորված Հայրենիք — Սփյուռք հարաբերությունների ակտիվացմամբ: Այդ մերձեցումը շատ որոշակի է լեզվի հատկապես բառային մակարդակում. արևելահայերենը վերջին երկու տասնամյակում բազմա-

թիվ նոր բառեր է փոխառել արևմտահայերենից, ինչպես՝ **այլընտրանքային, կարգավար, գործարար, խոսնակ, երգահան, խոսափող, կաճառ, համույթ, հանրահավաք, տարածաշրջան, տեսաերիզ, տեսահոլովակ** ևն:

Արևմտահայերենի և արևելահայերենի մերձեցման տեսանկյունից այսօր քննարկվում է նաև միասնական **ուղղագրության խնդիրը**: Իբրև թե մեր երկու գրականների և առհասարակ հայության երկու հատվածների մերձեցման հիմնական խոչընդոտը առկա ուղղագրական տարբերություններն են. առաջարկվում է «մեկ լեզու՝ մեկ ազգ» կարգախոսով դարձ կատարել դեպի գրաբարի կամ ավանդական ուղղագրությունը: Մինչդեռ արևմտահայ և արևելահայ գրական լեզուների բուն տարբերությունները ուղղագրությամբ չեն պայմանավորված: Տարբերություններ առկա են լեզվի բոլոր մակարդակներում՝ հնչյունական–արտասանական համակարգից մինչև շարահյուսություն: Եվ ուղղագրության խնդիրը եղած տարբերությունների ընդամենը մի հատվածն է: Բացի այդ, մերձեցման իրական հնարավորությունները ստեղծվում են տնտեսական ու հոգևոր–մշակութային շփումների շնորհիվ: Իսկ երկու գրականների միացման համար հիմքեր կարող են ստեղծվել միայն բուն քաղաքական–պատմական խնդիրների լուծման դեպքում, ընդհանուր պետականության պայմաններում: Անհիմն են նաև այն պնդումները, թե երկու գրական տարբերակները փոխադարձաբար անհասկանալի են: Արևելահայերիս համար այսօր էլ որևէ դժվարություն չկա կարդալու և հասկանալու Վարուժան կամ Համաստեղ: Իսկ Սփյուռքի հայը լիարժեք հաղորդակցվում է արևելահայի հետ: Այլ հարց է, որ պետք է ընդլայնել շփումները, փոխադարձաբար օգտվել լեզվական հարստություններից, մանավանդ բառապաշարից, իսկ մնացածը ժամանակի խնդիր է:

Լինելով մեկ լեզվի տարբերակներ՝ արևելահայերենը և արևմտահայերենը երևան են հանում որոշակի տարբերություններ հնչյունային, բառային և քերականական մակարդակներում (տե՛ս Հավելված 1):

Հայոց գրական լեզուն գոյություն ունի երկու ձևով՝ **գրավոր և բանավոր**: Դրանք դրսևորմամբ խոսքային մակարդակի երևույթներ են և խոսքային հաղորդակցման մեջ՝ իրենց նշանակությամբ հավասարապես կարևոր (այդ մասին կխոսվի երկրորդ գրքում՝ խոսքին վերաբերող բաժնում):

Հայերենի արևելահայ տարբերակը **պետական լեզու** է: Անկախ պետականության դարաշրջաններում (Բագրատունիների թագավորություն, Կիլիկյան Հայաստան) հայերենը փաստացի կատարել է **պետական լեզվի** դեր: Գրաբարը՝ որպես պաշտոնական լեզու, գործածվել է հայոց հոգևոր և աշխարհիկ իշխանությունների կողմից: 1918 թ.՝ Հայաստանի Հանրապետության ստեղծումից հետո, հատուկ հրովարտակով հայերենը հռչակվեց պետական լեզու: Խորհրդային Հայաստանի Սահմանադրությամբ հայերենին վերապահված էր պետական լեզվի կարգավիճակ: Ներկայումս հայերենը պետական լեզվի կարգավիճակ ունի Հայաստանի և ԼՂ Հանրապետություններում: Հայաստանի Հանրապետությունում հայերենը նախ և առաջ պաշտոնական գործավարության լեզու է: Հայերենը պարտադիր գործառնություն ունի պետական–պաշտոնական գործունեության բոլոր ոլորտներում՝ մաքսային և հարկային ծառայություններ, դատարան, հանրակրթություն, զանգվածային լրատվություն: Հայերեն են ընդունվում և հրապարակվում օրենքները և օրենսդրական մյուս ակտերը: Ըստ ՀՀ օրենսդրության՝ հայերենի առկայությունը պարտադիր է զովազդներում, ցուցանակներում, պիտակներում, զանգվածային օգտագործման այլ տեքստերում: Հայերենը, ինչպես ասվեց, նաև կրթության, գեղարվեստական գրականության, թատրոնի, կինոյի և գիտության լեզու է: Հայաստանի Հանրապետությունը խրախուսում է հայերենի պահպանումն ու տարածումը նաև արտերկրում, մասնավորապես հայկական սփյուռքում:

Մ Ա Ս 2

ԼԵԶՎԱԿԱՆ ՆՈՐՄ (ԿԱՆՈՆ)

Լեզվական նորմ հասկացությունը, լեզվական նորմի զարգացումը. լեզվի նորմավորման չափանիշները: Հայոց գրական լեզվի հիմնական նորմերը՝ արտասանական, բառապաշարային, քերականական:

Լեզվական նորմը լեզվական միջոցների գործածության **համընդունված կանոններն են**: Լեզվի ձևավորման և պատմական զարգացման ընթացքում ստեղծվում ու մշակվում են օրինաչափություններ, որոնք ընդունելի և ընդհանուր են դառնում (համապարտադիր են) այդ լեզուն գործածող հանրության համար: «Լեզվական նորմը լեզվական միջոցների գործածության կանոնների ամբողջությունն է, որ ընդունված է բոլորի կողմից»²: Լեզվի նորմավորումը հասարակական և հոգեբանական պահանջ է: Դրա հիմնական նպատակը փոխադարձ ընկալման հասնելն է, իրար հասկանալի լինելը, հաղորդակցվելը:

Լեզվական նորմը **կայուն է** որոշակի ժամանակահատվածի համար: Նորմի այդ հատկանիշով է պայմանավորված լեզվական համակարգի կայունությունը: Առհասարակ լեզվական նորմի կամ կանոնի ձևավորումը և զարգացումը **հակասական ու բարդ գործընթաց է**: Լեզուն մի կողմից՝ ձգտում է պահպանելու մշակված, արդեն հաստատված կանոնը (նոր իրողությունները դժվար են մուտք գործում լեզվի համակարգ, դառնում հանրության սեփականությունը): Այս իմաստով՝ լեզուն պահպանողական է, ավանդապահ: Հանրալեզվաբանության հիմնադիրներից մեկը՝ ճանաչված գիտնական Ե. Պոլիվանովը, նկատում է, որ լեզվի զարգացումը արտահայտվում է նրանով, որ այն հնարավորինս քիչ ենթարկվի փոփոխության: **Քաղաքակիրթ հանրության խնդիրը այն է, որ չարագացնի լեզվի փոփոխությունը**: Որքան բարձր է

հանրության քաղաքակրթական մակարդակը, այնքան ավելի քիչ է փոփոխվում լեզուն³: Մյուս կողմից՝ լեզվի բնականոն զարգացումը իր հետ օբյեկտիվորեն բերում է փոփոխություններ կամ տեղաշարժեր: Նորմավորման որոշակի չափանիշներ բավարարելու դեպքում դրանք անհրաժեշտաբար ամրագրվում են լեզվում՝ որպես լեզվագործածության նորմեր կամ կանոններ:

Նշանակում է՝ լեզուն հարաբերականորեն է կայուն: Դա բխում է նրա՝ իբրև սոցիալական երևույթի բնույթից. լեզուն գտնվում է անընդհատ զարգացման, փոփոխության մեջ: Այն, ինչ այսօր նորմ է, վաղը կարող է նորմ չհամարվել: Պատմական զարգացման ընթացքում լեզվում նույն իրողության դրսևորման համար ստեղծվում է այլ ձև (կամ ձևեր). նախկին նորմը կարող է չանհետանալ, բայց նրա կողքին առաջանում է նորը: Դա պայմանավորում է նորմի այնպիսի մի կարևոր հատկանիշը, ինչպիսին տարբերակայնությունն է՝ զուգահեռ ձևի գոյությունը: Այդ իսկ պատճառով երբեմն դժվար է այս կամ այն տեղաշարժը կամ փոփոխությունը միանշանակ գնահատել **ճիշտ է, սխալ է, մերժելի է և** նման այլ բնորոշումներով: Պետք է հաշվի նստել կատարված էական փոփոխությունների հետ և գնահատումներում գործածել ավելի ճկուն, ոչ «կատեգորիկ» բնորոշումներ, օր.՝ **թույլատրելի է, նախընտրելի է, հանձնարարելի է և**։ Դա չի խախտում նորմը, այլ նրան դարձնում է ավելի նուրբ գործիք լեզվական միջոցների ընտրության մեջ: Լեզվի նորմավորմամբ չափից ավելի տարվելը հակասության մեջ է մտնում լեզվի «իրական կյանքի» հետ: «Անսահման նորմավորումը լեզվի համար աղետավոր է. այն անլացնում է լեզուն՝ զրկելով նրան ճկունությունից» (Լ. Շչերբա)⁴:

Լեզվում էական՝ համակարգային փոփոխությունները, սակայն, կատարվում են մեծ ժամանակահատվածներում: Ապացույցներից է, օրինակ, այն փաստը, որ գրավոր հայերենը գոյության շուրջ 1500 տարիների ընթացքում անցել է զարգացման (այսինքն՝ քիչ թե շատ էական փոփոխությունների) երեք շրջափուլ: Կամ՝ հա-

² Радугин А., Русский язык и культура речи, М., 2004, с. 63.

³ Տե՛ս Богданова Л., Стилистика русского языка и культура речи, М., 2011, էջ 27:

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 10:

յերենի ուղղագրությունը էապես փոփոխության է ենթարկվել ընդամենը մեկ անգամ: Ընդունված է ասել, որ լեզվի մեջ ամենից արագ փոփոխվող հատվածը բառապաշարն է, իսկ քերականական համակարգում փոփոխությունները տեղի են ունենում ավելի դանդաղ: Բայց, այնուամենայնիվ, բառապաշարի հիմքը՝ բառային հիմնական ատաղձը, հաստատուն է, փոփոխվում է շատ դանդաղ:

Նորընդ **համակարգային** երևույթ է և ունի իր ենթահամակարգերը: Օրինակ՝ հայոց լեզվի նորընդ ունի իր **ենթանորմերը**՝ ըստ լեզվի տարբերակային ձևերի, ինչպես՝ արևմտահայերենի նորմ և արևելահայերենի նորմ, բանավոր և գրավոր խոսքի նորմեր, գրաբարի և միջին հայերենի կամ բարբառային խմբերի նորմեր ևն: Այն, ինչ լեզվական այս կամ այն տարբերակում նորմ կամ կանոն է, այլ տարբերակ(ներ)ում կարող է նորմ չդիտվել: Օրինակ՝ արևմտահայերենի բառապաշարային համակարգի միավորներ են **հոսս, ասանկ, էրիկ, աղեկ, աղվոր** ևն, բայց դրանք դուրս են արևելահայերենի լեզվական կանոնի շրջանակներից: Կամ՝ արևելահայ բարբառներից հատուկ **ըստեղ, ընչի, հիմա, վռազ** հնչյունափոխական և բառային տարբերակները բնավ չեն կարող լեզվական կանոն համարվել գրական լեզվի համակարգում կամ արևմտահայ բարբառներում: Լեզվական նորմը չի հորինվում: Կանոնները ձևավորվում են լեզվի բնականոն զարգացման արդյունքում: Նորմավորումը կամ, ավելի ստույգ, նորմերի կանոնակարգումը իրականացնում են մասնագետները հատուկ որոշումների միջոցով: ՀՀ-ում դրանք արձանագրվում են բառարաններում, տեղեկագրերում, լեզվի տեսչության հրատարակած տեղեկատու ժողովածուներում և այլուր ու ըստ ամենայնի ներկայացվում հանրությանը:

Լեզվի նորմավորման չափանիշները: Հարց է առաջանում՝ երբ է լեզվական այս կամ այն կանոնը դառնում օրինաչափություն, ինչ սկզբունքով պետք է առաջնորդվել տեղաշարժը որպես լեզվական կանոն արձանագրելիս: Այլ կերպ ասած՝ որո՞նք են **լեզվի նորմավորման կամ կանոնակարգման չափանիշները:**

Դրանք կարելի է սահմանել հետևյալ կետերով:

1. Լեզվական նորմի բնորոշ նշաններից են լեզվական միջոցի **գործածականությունը, հասարակական ճանաչումը և ընկալումը:** Լեզվական այս կամ այն իրողությունը կանոնի վերածվելու համար անպայման պետք է ընդունվի հասարակության կողմից, տարածում գտնի հանրության մեջ: Իսկ դա հնարավոր է տևական գործածության ու աստիճանաբար տարածվելու շնորհիվ: Այդ հիմքով են, օրինակ, վերջին տարիներին մեր լեզվի բառապաշարում հաստատվել հազարավոր նոր բառեր և բառիմաստներ՝ **թափանցիկ** (վերահսկելի, արդար), **զամբյուղ** (սպառողական զամբյուղ), **համացանց, ընտրախախտում, հավաստագիր, ընտրազանգված, հեռուստախաղ, քարոզարշավ, ինքնիրավչություն, հրադադար, այլընտրանքային** ևն: Ավելին՝ շատ գործածվելու և տարածվելու հետևանքով երբեմն լեզվական կանոնի և օրինաչափության ուժ են ստանում նաև տվյալ նորմի տեսակետից բառային սխալ տարբերակներ, բառաձևեր ու քերականական կառույցներ, ինչպես՝ **արծագանք** (փոխ.՝ **արծագանգ**), **երկխոսություն** (փոխ.՝ **երկախոսություն**), **կայանալ** (փոխ.՝ **տեղի ունենալ**), **տնօրինություն** (дирекция իմաստով, փոխ.՝ **տնօրենություն**), **շերամ** (փոխ.՝ **շերաս**), **տանից** (փոխ.՝ **տնից**) ևն:

Ասվածը բնավ չի նշանակում, որ լեզվական իրողությունը եթե տարածում գտավ, անպայման պիտի դառնա նորմ, ճանաչվի որպես լեզվական կանոն: Բանավոր խոսակցական հայերենում գործածական են շատ իրողություններ, որոնք տեղ չունեն և առաջիկայում չեն էլ կարող տեղ ունենալ գրական լեզվի համակարգում: Դրանք գռեհկաբանություններ են, հասարակաբանություններ, օտար բառեր, քերականական անճիշտ ձևեր ու կառույցներ: Լավագույն օրինակը խոսակցականում գործածական դարձած՝ օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի բարբառային ձևն է (գործածվում է նաև որպես հանգույց)՝ **գնում ա, երգում ա, լավ ա, նա ա, երեխա ա** ևն: Նախ՝ այդ **ա**-ն խիստ անբարեհունչ է **եմ** օժանդակ բայի համապատասխան ձևի համեմատությամբ (**գնում է, երգում է, լավ է, նա է, երեխա է**): Բացի այդ՝ **ա**-ի դեպքում ակնհայտորեն

խախտվում է հարացույցի և՛ արտասանական, և՛ ձևային կազմը: Ներկայի շարքում՝ **եմ** [եմ], **ես** [ես], **ա** [ա] (փոխ.՝ է), անցյալի շարքում՝ **էի** [էի], **էիր** [էիր], **եր** [եր]: Ժխտական ձևերում **եմ**–ի դեպքում գործում է հստակ նորմավորված հարացույց՝ **չեմ, չես, չի** (չէ): Այնպես որ, այդ **անախորժ ա**–ն (Հր. Աճառյանի բնորոշումն է) վերականգնելու բոլոր փորձերը առայժմ դատապարտված են և հակառակում են լեզվի զարգացման ընդհանուր տրամաբանությանը:

2. Համապատասխանություն լեզվի կառուցվածքին, լեզվի զարգացման ներքին օրինաչափություններին: Լեզուն համակարգ է, որի տարրերն ու բաղադրիչները սերտ առնչությունների ու փոխալայնամավորված կապի մեջ են: Այդ կապը ամրագրված է որոշակի և համեմատաբար կայուն օրինաչափություններով: Դա նշանակում է, որ զարգացման գործընթացում տեղաշարժերը էական հակասության մեջ չեն կարող մտնել գործող օրինաչափությունների հետ, քանի որ կխախտվի լեզվի բուն կառուցվածքը: Լեզվական տեղաշարժերը հիմնականում օբյեկտիվորեն հանգում են այդ օրինաչափությունների հաստատմանը: Շատ բնորոշ օրինակ են հայերենի բայի խոնարհման համակարգում վերջին տասնամյակներին կատարվող տեղաշարժերը: Նշենք դրանցից մեկ–երկուսը: Մի շարք անկանոն բայերի անցյալ կատարյալի զուգածներից գրական հայերենում գնալով սկսում են գերակշռող դառնալ կանոնավոր բայերին բնորոշ տարբերակները, ինչպես՝ **բերի // բերեցի ⇒ բերեցի, դրի // դրեցի ⇒ դրեցի, տվի // տվեցի ⇒ տվեցի** ևն: Կամ՝ հայերենի բայական համակարգում գործող կանոն է հրամայականի դրական ձևերից արգելականի կազմությունը (**գրի՛ր – մի՛ գրիր, կարդա՛ – մի՛ կարդա**). սոսկածանցավոր և պատճառական բայերի արգելականի զուգածներից գրական լեզվում այսօր ակնհայտորեն հաստատվում են այդ ընդհանուր օրինաչափությամբ ձևավորված կազմությունները (**մի՛ մտնիր // մի՛ մտիր ⇒ մի՛ մտիր, մի՛ մոտենա // մի՛ մոտեցիր ⇒ մի՛ մոտեցիր, մի՛ խոսեցնիր // մի՛ խոսեցրու ⇒ մի՛ խոսեցրու**) ևն: Առաջանում են նաև, ինչպես վերը տեսանք, առանձին շեղում-

ներ, բայց դրանք որևէ էական դեր չեն կատարում լեզվի ընդհանուր զարգացման գործընթացում:

3. Լեզվական կանոնի հաստատման մեջ կարևոր դերակատարում ունի նաև լեզվական ավանդույթը: Տարիներով, ինչո՞ւ չէ, նաև դարերով հաստատված լեզվական կանոնը պահպանվում է երբեմն ավանդույթի ուժով. դժվար է լինում հրաժարվել դրանից գիտականորեն տրվող համոզիչ փաստարկումների դեպքում անգամ: Դա նաև հոգեբանական խնդիր է. ավանդախախտությունը հասարակական և անհատական հոգեբանության բնորոշ գիծ չէ: Օրինակ՝ մոտ մեկ տասնամյակ առաջ ՀՀ լեզվի պետական տեսչության որոշումը՝ **ՁԼՍ** (զանգվածային լրատվության միջոցներ) հապավումի փոխարեն գործածել **ՁՏՍ**–ն (զանգվածային տեղեկատվության միջոցներ), այդպես էլ կիրառություն չգտավ, քանի որ նախկին տարբերակը ավանդույթի ուժով հաստատուն գործածություն ուներ մեզանում:

Այլ չափանիշներ: Գործում են նաև չափանիշներ, որոնք առավել բնորոշ են լեզվական այս կամ այն մակարդակին: Այսպես՝ **նորակազմություններում** (բառային մակարդակ) ոչ միայն գործում է բառաբարդումներում հայերենին հատուկ բառակազմական ներքին օրինաչափությունը (բաղադրիչների լրացում – լրացյալ հարաբերությունը), այլև կարևոր գործոններ են դառնում մի շարք այլ չափանիշներ.

ա. Հասկացության բովանդակությունը հստակորեն արտահայտելը: Չափանիշը առավելապես վերաբերում է նոր ստեղծված բառերին: Օրինակ՝ **ընտրազանգված, համաներում, տարածաշրջան** բառերը հստակորեն արտահայտում են իրենցով նշանակվող հասկացությունների իմաստները և ուստի արագ հաստատվեցին լեզվի բառապաշարում: Հակառակը՝ **արիեստավարժ, սպայանոց, երաժշտանոց, հրասայլ** բառերը կարծես այդ հատկանիշը չունեն և դժվարությամբ են մուտք գործում լեզվի բառապաշար: Հնից ավանդված շատ բառերում այդ հատկանիշը չի գիտակցվում կամ հստակորեն արտահայտված չէ: Օրինակ՝

հրացան բառը իր նախնական իմաստով նշանակել է **հուր ցանող, ատրճանակ**–ը՝ **կրակով սպանող**, սակայն այսօր դրանք ընկալվում են այլ իմաստներով, բայց դա չի խանգարում հաղորդակցմանը:

բ. Բառի տարածվելու և համագործակցական դառնալու տեսակետից չափազանց կարևոր են բառի նաև **ձևային–արտասանական հատկանիշները**: Նոր կազմված կամ փոխառյալ նորաբանությունը նախընտրելի է, որ լինի **կարճ և բարեհունչ**: Օրինակ՝ **այլուրեքություն** բառը փոխարինելու է գալիս օտար՝ **ալիբի** բառին: Սակայն առաջինը ակնհայտորեն երկար է ու անբարեհունչ, թեև հասկացության իմաստը կարծես հստակ է արտահայտում, հայմարդու համար հասկանալի է և ընկալելի: Օտար բառի արտասանությունը չի հակասում հայերենի արտասանական հատկանիշներին. չկա բաղաձայնների կուտակում, ձայնային զուգորդումները անբնական չեն ևն: Հայերեն համարժեքը տևական ժամանակ է՝ տերմինային համակարգում չի դառնում ընդհանուր գործածական: Կամ՝ նույն պատճառներով **կիլոգրամ, կիլոմետր, ֆուտբոլ, լավա** բառերի փոխարեն բնավ չի խրախուսվում **հազարագրամ, հազարամետր, ոտքագնդակ, հրափրփուր** արտահայտությունների գործածությունը:

Եթե **ֆիզիկա, մաթեմատիկա, տերմին, բյուջե, կադաստր, ալիմենտ** և նման փոխառությունները հայերենում դյուրին են արտասանվում և գրվում, ապա ոչ միայն հայերենով չեն ստուգաբանվում, այլև դժվար արտասանվող ու գրվող, դժվարընկալելի, ուստի և դժվարհիշելի են **տետրաէդր, կոնգրուենտ, կոմպլանար, իդենտիֆիկացիա** և նման բառերը: Դրանց հայերեն համարժեքները նախընտրելի են՝ **քառանիստ, համընկնելի, համահարթ, նույնականացում**:

գ. Նոր բառը, լինի դա փոխառություն թե նորակազմություն, պետք է ունենա **գործառական ճկունություն, արտադրողականություն**: Երբեմն փոխառյալ բառը լինում է ավելի արտադրողական, ունենում է բառակազմական ճկուն հնարավորություններ, հեշտ է գործածվում բառակապակցություններում: Օրինակ՝ **բիզնես** բառի համարժեք է առաջարկվում **գործարարություն**–ը, որը,

սակայն, որոշչային կիրառություններում բնավ էլ չունի իր օտար տարբերակի գործառական հնարավորությունները. չեն հնչում **գործարար(ական) ծրագիր** (բիզնեսծրագիր), **գործարար(ական) քարտ** (բիզնեսքարտ), **գործարար(ական) փաթեթ** (բիզնեսփաթեթ) կամ **գործարարական նախագիծ** արտահայտությունները: Իսկ ինչպե՞ս վերակոչել **Հայբիզնեսբանկ**–ը: Նմանապես գործառական ճկունություն չունեն, օրինակ, **բանկ**–ի փոխարեն **դրամատուն**–ը (**Հայխնայդրամատուն** ← **Հայխնայբանկ**), (**դրամատնային** ← **բանկային**), **կոռուպցիա**–ի փոխարեն **կաշառում**–ը (**հակակոռուպցիոն, կոռումպացված**) ևն:

դ. Նորմավորման չափանիշ կարելի է համարել նաև **լեզվական նշանի** (բառ, բառաձև, քերականական կառույց ևն) **գործածությունը ճանաչված և հեղինակություն վայելող անձի կամ սոցիալական այս կամ այն խմբի կողմից**: Երևույթը դարձյալ առավել հատուկ է բառային կազմին. այս ճանապարհով են բառապաշար մուտք գործում հեղինակային նորակազմությունները, որոնք ստեղծում և շրջանառության մեջ են դնում լեզվական նուրբ զգացողություն ու ճաշակ ունեցող գրողը, լեզվաբանը, լրագրողը, պետական, քաղաքական կամ մշակութային գործիչը և այլք, օրինակ՝ **ամենազգաստ, ամենաազդեցիկ** (Նարեկացի), **ոսկեհուր, ոսկեփրփուր** (Թումանյան), **արևահամ, հեզաճկուն** (Չարենց), **առաջապահ, նշանոց, վերջապահ** (Աբեղյան), **գետանց, կրակահերթ, շրջանցել, փոխհրաձգություն** (մամուլ) ևն:

Լեզվական նորը մշակված և ամրակայված լեզվական կանոնն է **լեզվի բոլոր մակարդակներում**: Այս մոտեցմամբ էլ առանձնացվում են լեզվի հիմնական նորմերը՝ **արտասանական, բառապաշարային, քերականական**: Այդ մակարդակներում առանձնացվում են նաև **ենթանորմեր**, ինչպես, օրինակ՝ ուղղախոսության և ուղղագրության նորմեր, բառակազմական նորմեր, նախադասության կազմության օրենքներ ու օրինաչափություններ ևն:

2.1. ՀԱՅՅՈՒՆԱԿԱՆ (ԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ) ՄԱԿԱՐԴԱԿ

Ուղղախոսություն. ձայնավորների արտասանությունը, ձայնավորական զուգորդումներ, եռաշարք բաղաձայնների արտասանությունը: Տառադարձություն. օտար բառերի արտասանության յուրահատկություններ: Հնչյունափոխություն: Շեշտ:

ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ: Խոսքի ճշտության առաջին պայմանը **ուղղագրական և ուղղախոսական նորմերի** պահպանումն է: Գրության (նկատի ունենք նաև կետադրությունը) կամ արտասանության սխալներով լեցուն խոսքը մերժելի է նույնիսկ զուտ հաղորդակցական–տեղեկատվական մակարդակում, քանի որ կարող է տարընթերցումների և թյուրըմբռումների տեղիք տալ: Խոսողը կամ գրողը նախ և առաջ պետք է տիրապետի տվյալ լեզվի **գրական** արտասանության (ուղղախոսության), ուղղագրության և կետադրության կանոններին:

Ուղղախոսությունը տվյալ լեզվի՝ հանրության կողմից ընդունված արտասանական նորմերի, այսինքն՝ ճիշտ խոսելու կանոնների ամբողջությունն է: Դա վերաբերում է ոչ միայն բառերի ճիշտ արտասանությանը, այլև նախադասությունների հնչերանգին, շեշտադրությանը, առանձին հնչյունների կամ հնչաշարույթի ճիշտ արտաբերմանը ևն: Տարբեր մարդիկ բառերը կարող են արտասանել տարբեր կերպ, բայց լեզվում մշակվում են արտասանական ընդհանուր կանոններ, որոնք պարտավոր են յուրացնել տվյալ լեզվին տիրապետող հանրության բոլոր անդամները: Ընդհանուր այդ օրինաչափությունները կոչվում են ուղղախոսական նորմեր կամ կանոններ: Ինչպես լեզվական բոլոր կանոնները, սրանք նույնպես ենթակա են փոփոխությունների:

Վերջին տարիներին շատացել են բանավոր խոսքին ներկայացվող պահանջները: Քաղաքական կյանքի ակտիվացում, զանազան բանավեճեր ու հրապարակային քննարկումներ, քարոզարշավ-

ներ, դատավարություն, աննախադեպ բազմամարդ հեռուստալսարան, հաճախ ուղիղ եթերով՝ լսարանի հետ անմիջական կապով տրվող հաղորդումներ. այս բոլորը ավելի են մեծացնում ճիշտ ու հստակ խոսելու անհրաժեշտությունը: Դա ոչ միայն հարգանք է սեփական լեզվի հանդեպ, այլև լսարանին կամ խոսակցին հասկանալի լինելու, նրա ուշադրությունը գրավելու, հետևաբար նաև նրա վրա ազդելու կարևորագույն պայման: Անճիշտ արտասանված բառը կամ արտահայտությունը անմիջապես շեղում է ունկնդրի ուշադրությունը, դժվարացնում ընկալումը. խոսողության գործընթացը խաթարվում է:

Գրական հայերենով հաղորդակցվելիս արտասանական անճշտություններից («ուղղախոսական վթարներից») խուսափելու համար ձայնավորների, երկհնչյունների, բաղաձայնների և ձայնավորական զուգորդումների արտասանությունից պետք է հիշել հետևյալները.

1) **Ա, ի, ու** ձայնավորները հայերենում ինչպես գրվում, այնպես էլ արտասանվում են՝ **արագ, գիրք, ուրախ**:

2) Բառասկզբում **ե**–ն արտասանվում է **յե՝ [յե]րևալ, [յե]կամուտ** (բացառություն է եմ օժանդակ բայը՝ **ես [եմ], մենք [ենք]** ևն), բառամիջում արտասանվում է **է՝ աս[է]լ, գ[է]ղ[է]ցիկ**: Եթե բաղադրյալ բառերի բաղադրիչների կցույթում **ե**–ով սկսվող բաղադրիչին նախորդում է ձայնավոր, ապա **ե**–ն արտասանվում է **յե**, որպեսզի ձայնավորների կուտակում չառաջանա՝ **ամենա[յե]րկար, կիսա[յե]զրափակիչ**, իսկ եթե նախորդում է բաղաձայն, ապա **ե**–ն արտասանվում է **է՝ ան[է]րես, ինն[է]րորդ, արև[է]լք**:

Բառասկզբում **ո**–ն արտասանվում է **վօ՝ [վօ]րոշ, [վօ]րակ** (բաց.՝ **[օ]վ, [օ]վքեր**), իսկ բառամիջում արտասանվում է **օ՝ բ[օ]լ[օ]ր, հ[օ]սանք**: Եթե բաղադրյալ բառերի՝ **ո**–ով սկսվող բաղադրիչին նախորդում է ձայնավոր, ապա **ո**–ն արտասանվում է **վօ**, որպեսզի ձայնավորների կուտակում չառաջանա՝ **ամենա[վօ]րակյալ, բազմա[վօ]ճ**, իսկ եթե նախորդում է բաղաձայն, ապա **ո**–ն արտասանվում է **օ՝ բարձր[օ]րակ, բազմ[օ]տանի**:

Պետք է նկատել, սակայն, որ սահմանված կանոնը ժամանակակից հայերենի ուղղախոսության մեջ ամբողջությամբ չի գործում: Ան– ժխտական նախածանց ունեցող բառերի մի որոշ մասում (հատկապես գրական–գրքային երանգ ունեցող բառերում) գործում է արտասանական զուգահեռ տարբերակ. է–ի փոխարեն արտասանվում է յէ, իսկ օ–ի փոխարեն՝ վօ, ինչպես՝ **ան[է]րկյուղ // ան[յէ]րկյուղ, ան[է]կամտաբեր // ան[յէ]կամտաբեր, ան[է]նթակա // ան[յէ]նթակա, ան[է]ռանդ // ան[յէ]ռանդ, ան[օ]ղնաշարավոր // ան[վօ]ղնաշարավոր, ան[օ]ղջամիտ // ան[վօ]ղջամիտ, ան[օ]խակալ // ան[վօ]խակալ, ան[օ]րդի // ան[վօ]րդի, ան[օ]տնահարելի // ան[վօ]տնահարելի** ևն (բայց՝ **ան[է]րես, ան[է]զական** ևն): –երկու և –երեք բաղադրիչներով թվականներում ե–ն հնչվում է նաև որպես յէ (տասն բաղադրիչով կազմություններում արտասանվում է ը հենարանով)՝ **տասն[ըյէ]րեք, տասն[ըյէ]րկու, քսան[յէ]րկու, հիսուն[յէ]րկու**, փոխ.՝ **տասն[է]րեք, տասն[է]րկու, քսան[է]րկու, հիսուն[է]րեք** ևն: Արտասանական այս տեղաշարժերը մեր լեզվի արդի փուլի համար ոչ թե պետք է համարել շեղումներ, այլ պետք է ընդունել որպես հայերենի ուղղախոսության մեջ ձևավորվող արտասանական զուգահեռ տարբերակներ՝ **ան[յէ]րևակայելի // ան[է]րևակայելի, ան[վօ]խակալ // ան[օ]խակալ, վաթսուն[է]րեք // վաթսուն[յէ]րեք**:

Էական փոփոխություն է տեղի ունեցել կ և չ քերականական մասնիկներին հաջորդող ե–ի և ո–ի արտասանության մեջ: Գրական լեզվի կանոնով սահմանված արտասանությունը՝ **ե>է՝ կ[է]րագեն, չ[է]րևակայեն, ո > օ՝ կ[օ]րոշեն, չ[օ]րոնեն**, այսօր աստիճանաբար իր տեղը զիջում է այդ հնչյունների՝ **յէ և վօ** արտասանությանը: Ըստ որում՝ այս դեպքում չի աղավաղվում սկզբնաձևի արտասանական պատկերը՝ **[յէ]րագեն – կ[յէ]րագեն, [յէ]րևակայեն – չ[յէ]րևակայեն, [վօ]րոնեն – չ[վօ]րոնեն, [վօ]րոշեն – կ[վօ]րոշեն**: Բոլոր դեպքերում, ակնհայտ է, որ ունենք արտասանական զուգածներ, որոնցից արդի խոսակցական նորմի

շրջանակներում գործող տարբերակը միտում է դառնալու գրական լեզվի արտասանական կանոն:

3) Գրական լեզվի արտասանական կանոնով՝ ծայնավորական զուգորդումները (կից ծայնավորների միացությունը՝ **առ, ոա, աու, իու, իո** ևն) մի շարք բառերում արտասանվում են **յ** ծայնակապի հավելումով՝ **ան[էյ]անալ, գրե[յ]ի, մի[յ]ավոր, պի[յ]ոներ**, կամ վերածվում են **յ–ի՝ օվկ[յ]անոս, Անդր[յ]աս**: Սակայն լեզվի զարգացմամբ պայմանավորված՝ որոշակի տեղաշարժ է նկատվում ծայնական այդ զուգորդությունների արտասանության մեջ. դրանք արտաբերվում են կիսահունչ **յ–ով**: Գրական լեզվի համար հանձնարարելի է արտասանական այդ տարբերակը՝ **ան[էյ]անալ, գրե[յ]ի, մի[յ]ավոր, օվկ[յ]անոս**, ըստ որում, որոշ բառերում թույլ հնչում է նաև **յ–ին** նախորդող ծայնավորը՝ **Անդր[եյ]աս, հր[եյ]ա, Մար[իյ]ամ, պ[իյ]ոներ, քրիստոն[եյ]ական**:

4) Ը ծայնավորը չի գրվում, բայց թույլ արտասանվում է **սկ, զբ, ստ, զգ, սպ** և նման հնչյունակապակցություններից առաջ, ինչպես՝ **[ը]զբաղվել, [ը]զգուշանալ, [ը]սկսել, [ը]ստեղծել, [ը]ստանձնել** (Մ. Աբեղյանը **ը–ի** արտասանական այս տարբերակը անվանում է **կարծ ը**):

Ծիշտ չէ որոշ քանակական թվականների՝ ավելորդ **ը–ով** արտասանությունը, այսպես՝ ոչ թե **հինգ[ը], վեց[ը], յոթ[ը], ութ[ը]**, կամ՝ **վաթսուն[ը]մեկ, հիսուն[ը]հինգ, քառասուն[ը]չորս**, այլ՝ **հինգ, վեց, յոթ, ութ**, կամ՝ **վաթսունմեկ, հիսունհինգ, քառասունչորս** ևն:

5) Հնչյունը և նրա գրային նշանը կարող են չհամապատասխանել իրար. գրում ենք այլ տառ, արտասանում ենք այլ հնչյուն՝ **բարձր – բար[ց]ր, մարդ – մար[թ], վարձ – վար[ց]**:

6) Եթե բառի մեջ **և–ին** նախորդում է բաղաձայն, ապա **և–ը** արտասանվում է էվ՝ **առ[էվ]տուր, որ[էվ]իցե**:

7) Գրական հայերենին բնորոշ չէ բաղաձայն հնչյունների փափուկ արտասանությունը՝ քմայնացումը, որը ռուսերենի ազդեցությամբ է մուտք գործել մեր բանավոր խոսք: Մի շարք բառերում

դ, տ, ք գրային նշանները արտասանվում են **ծ, ծ, ց** հնչյունների քնայնացված տարբերակներով, ինչպես՝ **[ծյ]եխնիկա, մա[ծյ]ան, ա[ծյ]ան, [ծյ]իգրան, ար[ծյ]ունք, ակա[ծ]եմիա**, փոխանակ գրային ճիշտ արտասանության՝ **տեխնիկա, մատյան, ատյան, Տիգրան, արդ[թյ]ունք, ակադեմիա**:

8) Կրկնակ բաղաձայնները կա՛մ արտասանվում են որոշ տևականությամբ (**ուղղածիգ, աբբա, գրավվել, տարրական**), կա՛մ գաղտնավանկի հնչմամբ (**գ[ը]գվել, հույս[ը]ս, կ[ը]կառուցվի**): Ճիշտ չէ կրկնակ բաղաձայնների միջև **ը** արտասանելը, երբ առկա է արմատի ձայնավորի կամ երկհնչյունի սղում: Ոչ թե՛ **գ[ը]ն[ը]նել** (զնիմ), **ք[ը]ն[ը]նել** (քնիմ), **սովա[ը]լուկ, պ[ը]տ[ը]տահողմ** (պտույտ), **բ[ը]ջ[ը]ջային** (բջիջ), այլ՝ **գ[ը]ննել, ք[ը]ննել, սովա[լլ]ուկ, պ[ը]տտահողմ, բ[ը]ջջային**:

9) Առանձին բառերում որոշ բաղաձայնների համար մեր ընդհանուր խոսակցական լեզվում (բանավոր խոսքում) առաջացել են արտասանական զուգաձևեր, այսինքն՝ գործ ունենք բառի մեջ այս կամ այն հնչյունի երկակի արտասանության հետ. ձայնեղ բաղաձայնները՝ **բ, գ, դ, ձ, ջ**, արտասանվում են մեկ որպես ձայնեղներ, մեկ որպես շնչեղ խուլեր՝ **փ, ք, ք, ց, չ**, ինչպես, օրինակ՝ **գոգավորություն – գո[ք]ավորություն, երիտասարդ – երիտասար[թ], թագավոր – թա[ք]ավոր, Թադևոս – Թա[թ]ևոս, կախարդ – կախար[թ], կանխարգելել – կանխար[թ]ելել, միջանցք – մի[չ]անցք, միջնակարգ – մի[չ]նակարգ, միջազգային – մի[չ]ազգային, միջամտել – մի[չ]ամտել, միջոց – մի[չ]ոց, վարագույր – վարա[թ]ույր**: Այս դեպքում նախապատվությունը պետք է տալ նշված հնչյունների գրային արտասանությանը՝ **միջնակարգ, միջոց, միջոցառում, նվագել, վարագույր** և այլն: Բայց սա, անշուշտ, չպետք է ընդունել որպես ընդհանուր օրինաչափություն, քանի որ խոսակցական լեզվում նկատվող այս երևույթը ունի մասնակի դրսևորումներ: Թեև կարող ենք ասել, որ այսօր նշված բաղաձայնների գրային արտասանությունը ակնհայտորեն միտում ունի ընդլայնվելու: Ավելին՝ առանձին բառերի արտա-

սանության ժամանակ ձայնեղների անհարկի խլացումը պետք է համարել ոչ միայն անբարեհունչ, այլև անընդունելի, ինչպես՝ **ամ[փ]ողջ, ար[ց]ան, զար[ք]ացում, ըն[թ] որում, հաշման[թ]ան, հա[չ]ողություն, հուշար[ց]ան, նվա[ք]ել, [քթ]նել, փոխանակ՝ ամբողջ, արծան, զարգացում, ընդ որում, հաջողություն, հաշմանդան, հուշարծան, նվագել, գտնել** ևն:

10) Բանավոր խոսակցական լեզվում տարածված սխալ է **հ–ով** վերջացող մի շարք բառերում այդ վերջնահնչյունի սղումը (ոմանց նույնիսկ թվում է, թե այդ բառերը ոչ միայն արտասանվում, այլև գրվում են առանց **հ–ի**)՝ **նախագան** (≡ **նախագահն**) **ասաց, հերթապան** (≡ **հերթապահն**) **այստեղ է, հաշվապան** (≡ **հաշվապահը**) **տեղում չէ**: Առաջինները գրական լեզվում մերժելի ձևեր են:

Արտասանական կամ ուղղախոսական գրական նորմերից բազմաթիվ այլ շեղումներ կապվում են հնչյունափոխության, բառի անճիշտ կազմության և քերականական իրողությունների չիմացության հետ: Դրանց մասին կխոսվի համապատասխան բաժիններում:

Տառադարձություն. օտար բառերի արտասանական յուրահատկություններ: Տառադարձություն է կոչվում տեքստի արտահայտումը հնչյունական գրության սկզբունքով (հնչադարձություն): Մեկ այլ նշանակությամբ՝ տառադարձությունը գրային արտահայտության այն եղանակն է, ձևը, որը գործածվում է սովորական ուղղագրական համակարգում օտար բառերի համար: Վերջին նշանակությամբ **տառադարձություն** և **գրադարձություն** տերմինները համարժեք են⁵: Օտար բառերի ճիշտ տառադարձման համար պետք է իմանալ որոշակի սկզբունքներ, որոնք սահմանվել են տերմինաբանական կոմիտեի կողմից:

1) Օտար **բ–ն** (ռուսերենի **բ–ն**) բառասկզբում և բառամիջի արմատական բաղադրիչում տառադարձվում է **ռ՝ [ռ]ադիո, [ռ]ուրլի, Բելա[ռ]ուս**, բառամիջում՝ **ր՝ պ[ր]ոֆեսոր, Սանկտ Պետեր[ր]բուրգ, Լ, ն** ձայնորդներից առաջ՝ **ռ՝ Բե[ռ]նարդ, Կա[ռ]լեն, Կա–**

⁵ Տե՛ս Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջ 571–572:

լիֆո[ռ]նիա, սակայն երբեմն խախտվում է այս կանոնը՝ **Կա[ր]լ, Նիդե[ր]լանդներ, ինտե[ր]նացիոնալ**: Սխալ է օտար լեզուների կամ այլ ազդեցությամբ կամ պարզապես ինքնատիպ երևալու համար օտար բառերում նշված դիրքերում **ր-ի ռ** արտասանությունը՝ **Պե[ռ]մանիա, Ա[ռ]թուր (Ա[ռ]տուր), ի[ռ]անա-ի[ռ]աքյան, «Ա[ռ]մենիա», բ[ռ]ոնգ, գ[ռ]ոչ**: Բ-ի **ռ** արտասանությունը ճիշտ չէ նաև հայերեն մի շարք բառերում՝ **Ա[ռ]մեն, ա[ռ]իամարիել, ա[ռ]ծիվ, ե[ռ]եսուն, լ[ռ]իվ, խանգա[ռ]ել, վե[ռ]նագիր**:

2) Ռուսերեն կամ ռուսերենից փոխառված բառերում **о(ո)**-ն արտասանվում է **օ**, այսինքն՝ այնպես, ինչպես հայերենում գրվում է. չի դառնում **ա** (բառամիջում) կամ **ը** (**-տ[օ]ր, -[օ]ր, -[օ]վ** հնչյունամիացությամբ վերջացող բառերի մեջ): Ճիշտ է՝ **Մ[օ]սկվա, Դ[օ]ստ[օ]ևսկի**, կամ՝ **պրոֆես[օ]ր, դոկտ[օ]ր, ռեկտ[օ]ր, տրանսպ[օ]րտ, Փարաջան[օ]վ**: Սխալ է՝ **Մ[ա]սկվա, Դ[ա]ստ[ա]ևսկի, պր[ա]ֆես[ը]ր կամ՝ պրոֆես[ը]ր, դոկտ[ը]ր, ռեկտ[ը]ր, տրանսպ[ը]րտ, Փարաջան[ը]վ**: Չպետք է շփոթել **ա** հոդակապի հետ, որը հանդես է գալիս առանձին օտար և հայերեն բաղադրիչների միացման դերում՝ **электр/о ⇒ էլեկտր/ա-՝ էլեկտրաէներգիա, էլեկտրահաղորդիչ, евр/о ⇒ եվր/ա-՝ եվրատեսիլ, եվրախորհուրդ, եվրամիություն**: (Այսօր կանոնավոր է բնագրից տառադարձված **Բելառուս** ձևը):

3) Կրկնակ բաղաձայնները սովորաբար հայերենում արտասանվում են իբրև մենաբաղաձայն և այդպես էլ գրվում են, ինչպես՝ **congressman – կոնգրեսմեն, alligator – ալիգատոր, ammonium – ամոնիում, classicism – կլասիցիզմ, communist – կոմունիստ, коллектив – կոլեկտիվ**: Կրկնակ բաղաձայնների՝ հայերենում երկար կամ ուժգին արտասանության դեպքում գրվում են կրկնակ բաղաձայնով՝ **վաննա, վիլլա, Աննա, վատտ, բրուտտո**, կրկնակ **օօ-ն՝ ոո՝ կոոպերատիվ**, կրկնակ **րր-ն** (ռուս.՝ **рр**) ի ձայնավորից առաջ՝ **ր՝ բարիկադ**, մնացած դեպքերում՝ **ռ՝ Մառ, Պյունոս, Կառլոս**:

Ծանոթություն: Կանոնական է **Բելոգերսկ, Բելոգերով, Ղասաթոլյան, Դավութթոլու, Չարչօղլյան** և նման բառերի **օ-ով** գրությունը:

4) Վերջին շրջանում մեր գրականության մեջ և մամուլում ակնհայտ հակում է նկատվում օտար բառերի և հատուկ անունների տառադարձությունը ավելի մոտեցնելու փոխատու աղբյուրի արտասանական առանձնահատկություններին: Դա հատկապես նկատելի է անգլերեն բառերի և անգլերենում գործածվող հատուկ անունների տառադարձության մեջ: Նպատակ ունենալով միասնականացնելու նշված բառերի տառադարձության սկզբունքները՝ տերմինաբանական կոմիտեն հանձնարարում է ղեկավարվել հետևյալ կանոններով. 1. Անգլերեն **p, t, k-ն** և **k** արտասանվող **c-ն** տառադարձել բառասկզբում **փ, թ, ք**, մնացած դիրքերում՝ **պ, տ, կ**. Վերջին դեպքում կրկնավորները ևս տառադարձել մեկ բաղաձայնով, ինչպես՝ **[Թ]աֆտ (Taft), [Թ]եյլոր (Taylor), [թ]եննիս (tennis), [ք]արտեր (Quarter), [ք]ենեդի (Kennedy), [թ]եստ (test)**, բայց ավանդաբար՝ **Նյու Յորք, Մարկ [S]վեն, [կ]ոնգրես** ևն: 2. Անգլերենի **w(h)-ն** տառադարձել **ու** (**wa-ն՝ ուո**), բացի այն դեպքերից, երբ հայերենում իրար կողքի կարող են հանդիպել երկու **ու** (**wu, wo, woo**). այս դեպքում գրել և արտասանել **վու**, օր.՝ **[Ու]այտ (White), [Ու]այլդ (Wilde), [Ու]ոլտոն (Walton), Դ[ու]այտ (Dwight)**, բայց ավանդաբար՝ **[Վ]աշինգտոն (Washington), [Դ]արվին (Darwin), [վ]ատտ (Watt), [Վ]իլյամ (William)** ևն⁶:

ՀՆՉՅՈՒՆԱՓՈՒՍՈՒԹՅՈՒՆ: Լեզվական նորմերից շեղումները կապվում են նաև հնչյունափոխական առանձին իրողությունների հետ:

Գրական հայերենում մի շարք բառերի արտասանությանը բնորոշ է բաղաձայնների սղումը կամ, ավելի ստույգ, դրանց թույլ արտասանությունը՝ **աշխարհ – աշխար, ապաշնորհ – ապաշնոր, արհամարհանք – արհամարանք, ընդհանրապես – ընդհանրապես, խորհուրդ – խորուրդ, շնորհ – շնոր, որպեսզի – որպեսի** (բայց ոչ՝ **որպիսի**), **պաշտպան – պաշտպան, Սկրտչյան – Սկրտչյան**: Սա գործում է գրական լեզվի արտասանական նոր-

⁶ Տե՛ս «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու», Եր., 2006, էջ 178–183:

մերի շրջանակներում: Այս երևույթի հետ չպետք է շփոթել, սակայն, բարբառների կամ խոսակցական լեզվի ազդեցությամբ բառերի այլ խմբում արձանագրվող ձայնավոր կամ բաղաձայն հնչյունների անհարկի սղումները, որոնք աղավաղում են բառի հնչյունական ճիշտ պատկերը, ինչպես՝ **անդրադառնալ** – անրադառնալ, **գնահատական** – գնհատական, **դաստիարակել** – դաստիրակել, **երկրորդ** – եկրորդ, **համեմատություն** – համմատություն, **որովհետև** – որտև, **օրինակ** – օրնակ:

Բառի ածման (բառաբարդում, ածանցում) ժամանակ ույ երկհնչյունը փոխվում է ու–ի, արտասանվում է ու՝ համբույր (ոչ թե՝ համբյուր) – **համբուրել**, գրույց – **գրուցընկեր**, ողջույն – **ողջունել**: Սխալ է այս խմբի բառերի մեջ ու–ի փոխարեն **յու** կամ ույ արտասանելը՝ **համբյուրել**, **գրույցընկեր**, **ողջույնել** կամ **ողջունել**, բայց ունենք նաև՝ **ընկուզկոտրիչ** // **ընկուզկոտրիչ**, **հնչութային** // **հնչույթային**, **մշակութային** // **մշակույթային**, **սովորութային** // **սովորույթային** (հանձնարարելի են առաջին տարբերակները, թեև հաճախ ավելի բարեհունչ են երկրորդները՝ **հատույթային**, **հատույթավորել**, **կշռույթավոր**, **ծևույթային** ևն):

Ծանոթություն 1: Ճիշտ տարբերակներ են **ի + ա → ե** հնչյունափոխությամբ առաջացած հետևյալ ձևերը՝ **ընտանի + ական → ընտանեկան**, **հարսանի(ք) + ական → հարսանեկան**, **պատանի + ական → պատանեկան**:

Ծանոթություն 2: Առանձին բառերի բառակազմական և ձևակազմական որոշ հիմքերի տարբերակներից նախընտրելի են դրանց անհնչյունափոխ ձևերը, ինչպես՝ **Աղասիի** (Աղասու), **Աղասիով** (Աղասով), **Դավիթաշեն** (Դավթաշեն), **Դավիթի** (Դավթի), երեսունական (երեսնական), երեքունիի (երեքունու), երեքունիով (երեքունով), հիսունամյա (հիսնամյա), **հարուցիչի** (հարուցչի), **Սարգիսի** (Սարգսի), **քառասունական** (քառասնական) ևն: Այս դեպքում չի աղավաղվում բառի պատկերը, և խոսքը հնչում է ավելի հստակ ու հասկանալի⁷:

⁷ Որոշ հատուկ անունների զուգաձևեր տարբերակված են իբրև տեղանուններ, օր.՝ **Դավիթաշեն** (Երևանի թաղամաս) և **Դավթաշեն** (գյուղ). ընտրության հնարա-

Սի շարք բառերի երբեմն անճիշտ արտասանությունը կապվում է հատկապես հնչյունափոխության տեսակներից մեկի՝ **փոխազդեցական հնչյունափոխության** հետ: Դա բառի մեջ հնչյունների միմյանց վրա ազդելու հետևանքով տեղի ունեցող հնչյունափոխությունն է: Հնչյունափոխության այդ տիպին են պատկանում հետևյալները.

- **առնմանություն.** հնչյունը, ազդելով մեկ այլ հնչյունի վրա, ինչ–ինչ հատկանիշներով նմանեցնում է իրեն՝ **երագ** – **աղագ**, **գթափ** – **սթափ**, **ընդբռնել** – **ըմբռնել**, **ծանաչել** – **ճանաչել**, **ճանապարհ** – **ճանփա**, **ուրախության** – **ուրախությամբ**.

- **տարնմանություն.** մի հնչյունը, ազդելով նույն կամ նման մեկ այլ հնչյունի վրա, ինչ–ինչ հատկանիշներով հեռացնում է իրենից՝ **բոկիկ** – **բոբիկ**, **բող** + **բող** – **բողբոջ**, **շիճուկ** – **սիճուկ**.

- **հավելում.** բառասկզբում կամ հնչյունների միջև ավելանում է ևս մեկը՝ նպաստելով դրանց կապակցմանը՝ **աճար** – **հաճար**, **արդուկ** – **հարթուկ**, **արմուկ** – **արմունկ**, **երկպառակություն** – **պառակտել**, ինչպես նաև **կանաչ** – **կանանչ**, **կապվել** – **կապնվել**, **սրտաց** – **սրտանց**.

- **համաբանություն.** իրար հետ զուգորդվող կամ հաճախ իրար հետ զործածվող որոշ բառեր ազդում են միմյանց վրա, և մեկը աստիճանաբար սկսում է հնչյունական կազմով նմանվել մյուսին՝ **բարձր** → **ցած** – **ցածր**, **հոկտեմբեր** → **սեկտեմբեր**.

- **կորուստ** կամ **անկում.** բառի մեջ սղվում է որևէ հնչյուն՝ **դարսել** – **դաս/ավորել**, **հայթ/հայթել** – **հայթայթել**, **հեղ/հեղատ** – **հեղեղատ**, **հոգի** – **ոգի**, **հուզաարտահայտչական** – **հուզարտահայտչական**, **խորհ/ել** – **խոհ/ական**.

- **ամփոփում.** միանման հնչյունախմբերի համառոտումն է, որը մասնակիորեն կոչվում է **արագաբանություն**, օր.՝ **անձնանվեր** – **անձնվեր**, **կեղծածամ** – **կեղծամ**, **աշխարհահայացք** – **աշխարհայացք**, **ապաստանարան** – **ապաստարան**, **զբոսաշրջի-**

վորության դեպքում կարելի է նախապատվությունը տալ անհնչյունափոխ հիմքով ձևերին:

կություն – զբոսաշրջություն, ժողովրդավարակաճացում – ժողովրդավարացում, լիբանաճահայ – լիբանահայ, հայտարարագիր – հայտագիր, հասարակակարգ – հասարակարգ, հեծելանիվ – հեծանիվ, ճանապարհորդություն – ճամփորդություն, մեծայարգոյ – մեծարգո, մեքենայական – մեքենական, տնտեսականապես – տնտեսապես.

• դրափոխություն. բառի մեջ հնչյունը փոխում է իր դիրքը՝ կձմթել – ճմկթել, ձգել – գցել, մախր – մարխ, ինչպես նաև կամուրջ – կարմունջ:

Հնչյունափոխական այս երևույթների ազդեցությամբ երբեմն արտասանություն են մուտք գործում սխալ ձևեր՝ ամսեկան (← ամսական), անձեռնոցիկ (← անձեռոցիկ), անձիք (← անձինք), արտասունք (← արտասուք), բալանի (← բանալի), գտընվել (← գտնըվել), համբյուր (← համբույր), հույր (← հյուր), ձեռնըտու / ձեռնատու (← ձեռընտու), ձեռնըհաս (← ձեռընհաս), նաշխ (← նախշ), սեկտեմբեր (← սեպտեմբեր): Գրական նորմի տեսակետից դրանք արտասանական մերժելի ձևեր են:

Շեշտ: Շեշտը որևէ հնչյունի առանձնացված և ուժեղ արտասանությունն է, որը արտահայտվում է ձայնի տևողությամբ ու բարձրությամբ: Շեշտը լինում է բառային և տրամաբանական: Երկրորդն ունի ճարտասանական-իմաստային նշանակություն. դրվելով որևէ բառի վրա՝ իմաստային երանգ է հաղորդում ամբողջ նախադասությանը և կարող է արտահայտվել գրությամբ, ինչպես՝ Նա պատասխանե՛ց հարցին: Նա՛ պատասխանեց հարցին: Նա պատասխանեց հարցի՛ն:

Բառային շեշտը բառի մեջ որևէ ձայնավորի ուժեղ արտասանությունն է: Տարբեր լեզուներում բառային շեշտի դիրքը տարբեր է: Նախագրային հայերենում, մասամբ նաև գրաբարում շեշտակիր է եղել բառի վերջըներ վանկը (ահա՛ւասիկ, բոլորե՛քեան), որ այլ կերպ կոչվում է հարաշեշտություն: Ժամանակակից հայերենում շեշտը վերջնավանկային է. սովորաբար դրվում է բառի վերջին վանկի ձայնավորի վրա: Բառի աճման կամ փոփոխության

դեպքում շեշտը տեղափոխվում է վերջին վանկ, ինչպես՝ դա՛տ – դատավարությունի՛ց, վկա՛ – վկայի՛ – վկաների՛ ևն: Այսինքն՝ շեշտը հայերենում կայուն-շարժական է: Այս ընդհանուր օրինաչափությունից, սակայն, կան առանձին շեղումներ.

ա) Մի շարք բազմավանկ բառեր կրում են երկու շեշտ, որոնցից մեկը գլխավոր է (ավելի ուժեղ է), մյուսը՝ երկրորդական, ինչպես՝ ե՛նթահամակարգայի՛ն, հա՛մապետակա՛ն, վե՛րագործարկու՛մ (առաջինը՝ թույլ, երկրորդը՝ ուժեղ) ևն:

բ) Եթե բազմավանկ բառի վերջին ձայնավորը գրվող կամ չգրվող ը–ն է, ապա շեշտն ընկնում է նախորդ վանկի ձայնավորի վրա՝ ա՛րկղ, բա՛րձր, գի՛րքը: Եթե ը–ն բառի միակ ձայնավորն է, ապա գրվում է և շեշտվում՝ հը՛, չը՛խկ, շըը՛խկ, բայց՝ չըխկո՛ց, շըխկա՛լ ևն:

գ) Որոշ բառերում շեշտվում է նախավերջին կամ նրան նախորդող մեկ այլ վանկի ձայնավորը՝ գրե՛թե, իհա՛րկե, մի՛միայն, նա՛մանավանդ, մի՛գուցե, մի՛թե, ո՛րերորդ, ո՛րևէ, որպե՛սզի ևն:

դ) Երկակի արտասանություն ունեն –երորդ մասնիկով կազմված թվականները՝ երեսուներեքերորդ – երեսուներեքերո՛րդ, քսաներորդ – քսաներո՛րդ ևն, մի քանի այլ բառեր՝ գո՛նե – գո՛նե՛, գու՛ցե – գուցե՛, նա՛և – նաև՛, մա՛նավանդ – մանավա՛նդ, նո՛ւյնիսկ – նույնի՛սկ, նո՛ւյնպես – նույնպե՛ս, նու՛յնպիսի – նույնպիսի՛, նո՛ւյնքան – նույնքա՛ն ևն:

ե) Եթե բառը բարդ է, և բաղադրիչները կազմում են հարադրություն, ապա շեշտը հաճախ դրվում է առաջին բաղադրիչի վրա՝ ասե՛ս թե, դո՛ւրս գալ, գա՛րկ տալ, ի՛նչ–որ, խո՛սք տալ, հե՛նց որ, միա՛յն թե, մի՛տք անել, նե՛րս մտնել, վե՛ր կենալ, ո՛ւր որ է, օ՛ր օրի: Այլ դեպքերում շեշտը դրվում է հարադրության վերջին բաղադրիչի վրա՝ ասել–խոսե՛լ, ի դե՛պ ևն:

զ) Օտար հատուկ անունների ուղիղ ձևերում պահպանվում է բնագրի շեշտադրությունը, իսկ թեքված կամ ածանցված ձևերում գործում է հայերենի ընդհանուր կանոնը՝ Բերեզո՛վսկի – բերեզովսկիների՛, Դոստոև՛սկի – Դոստոևսկու՛, Եսե՛նին – Եսենի-

Ո՛վ, Լե՛նին – Լենինյա՛ն, Պո՛ւշկին – Պուշկինի՛, Ֆրա՛նսիա – Ֆրանսիայի՛ց:

Ծանոթություն 1: Վերջին շրջանում նկատվում է արտասանական տեղաշարժ. այդ բառերի թեք ձևերում նույնպես պահպանվում է բնագրի շեշտադրությունը՝ **Եսե՛նինի, Ֆրա՛նսիայից, Դոստոև՛սկու:** Դրանք կարելի է համարել արտասանական զուգաձևեր՝ նախապատվությունը տալով հայերենի արտասանական կանոնով տարբերակներին:

Ծանոթություն 2: Թեև տերմինաբանական կոմիտեի որոշումը վերապահում է անում միայն օտար հատուկ անունների համար⁸, սակայն ոմանք այս կանոնի շրջանակները անտեղի ընդլայնում են՝ տարածելով նաև օտարամուտ (փոխառյալ) հասարակ անունների վրա՝ **օ՛պերա, ֆի՛զիկա** ևն:

2.2. ԲԱՌԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿ

Հայոց լեզվի բառապաշարը. բնիկ հայերեն բառեր, փոխառյալ բառեր և օտարաբանություններ, հնաբանություններ, նորաբանություններ, բարբառային կամ խոսակցական բառաշերտ: Իմաստաբանություն. տերմին և տերմինաբանություն, իմաստափոխություն, բառերի ձևաիմաստային խմբերը՝ հոմանիշներ, հոմանիշների շփոթություն, համանուններ, հարանուններ, հարանունների շփոթություն, հականիշներ: Ստուգաբանություն: Բառակազմություն: Հասկանումներ: Համառոտագրություն: Բառային զուգակցում (համապատասխանություն). բառերի իմաստային, բառապաշարային և քերականական անհամատեղելիություն: Ավելորդաբանություն և կրկնաբանություն: Դարձվածքներ, դարձվածքների ճիշտ գործածություն: Բառարանագրություն:

ԲԱՌԱՊԱՇԱՐ: Լեզվի պարունակած բառերի ամբողջությունն է: Հաճախ այն կոչում են նաև բառագանձ, բառային կազմ, բառամթերք: Բառապաշարը լեզվի ամենից արագ փոփոխվող բաժիններից է: Պատմական բնույթ ունի և իբրև այդպիսին՝ լավագույնս արտացոլում է ժողովրդի հասարակական և տնտեսական–քաղաքական կյանքում տեղի ունեցող փոփոխությունները: Լեզվի պատմական զարգացման ընթացքում շատ բառեր հնանում են, գործածությունից դուրս են գալիս կամ անցնում ոչ գործուն բառերի շարքը, մյուս կողմից՝ բառապաշար են մուտք գործում նոր բառեր ու բառիմաստներ:

Հայերենը ունի հարուստ բառապաշար: Նորագույն տվյալներով՝ ժամանակակից հայոց լեզվի բառերի թիվը անցնում է 300 000–ից: Հայերենի ընդհանուր բառապաշարը, որ անհամեմատ մեծ թվով բառեր է ընդգրկում, արձանագրված է հայոց լեզվի (նկատի ունենք նաև գրաբարը, միջին հայերենը, բարբառները ևն) բառարաններում: Սակայն հայտնի է նաև, որ առհասարակ որևէ բառարան չի կարող տալ տվյալ կենդանի լեզվի բառապաշարի ամբողջական և ավարտուն պատկերը, քանի որ լեզվի բառապա-

շարը բաց համակարգ է և անընդհատ ենթակա է փոփոխությունների ու հարստացման:

Ամեն մարդ յուրացնում և գործածում է լեզվի բառապաշարի մի մասը միայն: Յուրաքանչյուր անհատ միջին հաշվով գիտի, հասկանում է 20–25 հազար բառ և գործածում է դրանցից 3–4 հազարը: Բայց բոլոր մարդիկ նույն բառերը չէ, որ գիտեն ու գործածում են: Մոտ 2000 բառ բոլորի բառապաշարում համընկնում է: Մնացածը տարբեր է լինում թե՛ քանակով, թե՛ կազմով՝ կախված մարդու մտավոր զարգացման մակարդակից, կրթությունից, զբաղմունքից, հետաքրքրություններից, միջավայրից ու շփումներից: Գեղարվեստական գրականության մեջ նշանակալից հետք թողած հեղինակները իրենց ստեղծագործություններում գործածել են իրենց մայրենի լեզվի բառերի 10–12 տոկոսը: Օրինակ՝ Շեքսպիրի ստեղծագործությունների բառապաշարը ընդգրկում է 15 000 բառային միավոր, Ա. Իսահակյանի չափածոյի բառապաշարը՝ 5000 ևն: Մեկ մարդու իմացած և գործածած բառերի ամբողջությունը տվյալ անհատի բառապաշարն է:

Հայոց լեզվի բառապաշարը կարելի է դասակարգել ըստ մի քանի սկզբունքների՝ **ըստ ծագման** կամ **առաջացման աղբյուրների** (ծագումնաբանական դասակարգում)՝ բնիկ հայերեն բառեր, ստացվածքային բառեր և փոխառյալ բառեր, **ըստ բառային կազմի շերտերի** (շերտաբանական դասակարգում)՝ ընդհանուր բառեր, գրաբարյան բառեր, միջին հայերեն բառեր, բարբառային բառեր, նոր հայերեն բառեր, **ըստ գործածության և ընդգրկած ոլորտների**՝ համագործածական և ոչ համագործածական բառեր, **ըստ կենսունակության** կամ **գործունության**՝ գործուն և ոչ գործուն բառաշերտ, **ըստ ոճական–արտահայտչական գործածության ու դերի**՝ միջոճային կամ չեզոք, ժողովրդախոսակցական և գրական–գրքային⁹:

Հայոց լեզուն, սերելով հնդեվրոպական հիմք լեզվից, ժառանգորդաբար վերցրել է այդ լեզվի բառապաշարի մի մասը:

⁹ Տե՛ս Ա. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Բառագիտություն, Եր., 1993, էջ 125–228:

Միաժամանակ պատմական զարգացման ընթացքում հայերենը, մշտապես շփումների մեջ լինելով այլ լեզուների հետ, կատարել է փոխառություններ, հարստացրել բառապաշարը: Մեր լեզվի բառապաշարի ծագումնաբանության մասին հավաստի տեղեկություններ է տալիս Հրաչյա Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»-ը¹⁰: Ըստ այդ բառարանի տվյալների՝ հայերենն ունի մոտավորապես 11 000 բառարմատ, որոնցից 2221–ը՝ անվավեր, 5095–ը՝ մեկնված, 4015–ը՝ փոխառյալ, իսկ 3680–ը՝ չմեկնված: Ծագումնաբանական տեսակետից, ինչպես վերն ասվեց, բառապաշարը բաժանվում է մի քանի խմբերի՝ 1. բնիկ հայերեն բառեր, 2. ստացվածքային բառեր, 3. փոխառություններ:

Հայոց լեզվի բառապաշարի հիմնական շերտը կազմում են հնդեվրոպական հիմք լեզվից սերված արմատներից կազմված բառերը, որոնք կոչվում են **բնիկ հայերեն բառեր**: Ծագումնաբանական տեսակետից ամենահին բառերն են, աչքի են ընկնում գործածության մեծ հաճախականությամբ: Հնդեվրոպական արմատների թիվը հասնում է մոտ 1000–ի: Բնիկ հայերեն բառերի շերտը մարդու կյանքի և գործունեության հիմնական ոլորտներին, մարդուն անմիջականորեն առնչվող իրողություններին վերաբերող բառեր են, անվանում կամ նշանակում են մարդու մարմնի մասեր (աչք, ականջ, կոկորդ, քիթ, մարդ, թև ևն), բնության առարկաներ ու երևույթներ (առու, լույս, արև, գետին, ծյուն ևն), կենդանիների անուններ (հավ, աքաղաղ, կով ևն), ազգակցություն, արհեստ, արվեստ, շինարարություն և նման բնագավառներին վերաբերող իրակություններ (դուստր, որդի, հայր, արտ, բերք, խնձոր, կանուրջ, դարբին, դուռ, ներկ ևն), մարդու կյանքին ու կենցաղին վերաբերող սովորական երևույթներ (գնալ, խոսել, երգել, ասել, իր, բան, կարդալ, ապրել, ուրախանալ) ևն: Առանձին խումբ են կազմում **բնածայնական բառերը**, որոնք բնության ծայների նմանողությամբ առաջացած բառեր են (զրը՛նգ, չը՛խկ, խշշալ, շշուկ, ֆշշոց, տզզալ, կչկչալ, ծլվլալ, մլավել ևն) և ըստ էության իրենց

¹⁰ Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 7, Եր., 1926–1935, 2–րդ հրատ., հ. 1–4, Եր., 1971–1979:

նմաններն ունեն գրեթե բոլոր լեզուներում կամ ունեն ընդհանրություններ այլ լեզուների նույն բառաշերտին պատկանող բառերի հետ:

Ստացվածքային են կոչվում այն **բառերը**, որոնք մասնագիտական գրականության մեջ արժանահավատ ստուգաբանության չեն ենթարկվել, կամ որոնց ծագման վերաբերյալ կան էական տարակարծություններ: Դրանք անվանում են կենդանիներ, բույսեր, գործիքներ, ընտանիք և ընտանեկան հարաբերություններ ևն, ինչպես՝ **նժույգ, սոխակ, ճայ, ծաղիկ, բարդի, բանջար, աթոռ, պարան, աներ, զոքանչ, պատանի, կույս, հաց, հունձ, ագահ, ուղեղ** ևն:

Փոխառյալ բառեր և օտարաբանություններ: Մի ժողովրդի լեզվից գրավոր կամ բանավոր ճանապարհով մեկ այլ ժողովրդի լեզվին անցած բառերն են: Հայերենը, ինչպես ցանկացած լեզու, փոխառություններ է կատարում իր զարգացման ամբողջ ընթացքում, բոլոր փուլերում: Ըստ այդմ՝ առանձնացնում են **հնագույն, հին և նոր ու նորագույն փոխառություններ:** Հին հայերենը փոխառություններ է կատարել՝ **• իրանական լեզուներից՝** ազգ, ազատ, աշխարհ, ատրճանակ, բարձ, գույն, դաշտ, դատ, դատավոր, դրախտ, դրամ, հազար, պանիր, ոստիկան, վարդ, փող, **հատուկ անուններ՝** Անահիտ, Արշակ, Արտակ, Արտաշատ, Արտավազդ, Շահեն, Սուրեն, Վահագն, Վաղարշապատ, Վարդան ևն, **• ասորերենից՝** արեղա, դար, հեթանոս, շաբաթ, տեղ, ուրբաթ, քահանա, **հատուկ անուններ՝** Աբգար, Եղիշե, Շամիրամ, Շուշան, Սարգիս ևն, **• հունարենից՝** ադամանդ, ամբիոն, դեկտեմբեր, եկեղեցի, կանոն, կրկես, հյուպատոս, հոկտեմբեր, մեղեդի, նոտար, **հատուկ անուններ՝** Բարսեղ, Հեղինե, Սինաս, Պետրոս, Սուքիաս ևն, **• արաբերենից՝** թաս, լոբի, կողպեք, հաշիշ, մզկիթ ևն:

Նոր և նորագույն փոխառություններ հայերենը կատարում է **ռուսերենից և եվրոպական լեզուներից.** դրանք բառեր են, որոնք բացակայում են հայերենի նախորդ փուլերում և գործած-

վում են նոր հայերենում: Նոր փոխառություններից են՝ **ալերգիա, բասկետբոլ, դեկանատ, դոցենտ, թեյ, թեորեմա, իռացիոնալ, ինտեգրալ, լոգարիթմ, կոլեկտիվ, հիերոգլիֆ, հորիզոն, մեթոդ, մատիտ, բոլշևիկ, կուլակ, դումա, զագս, տայգա, տոն, ինստիտուտ, ռենտգեն, վեկտոր, տաքսի, ֆուտբոլ, օրգան:** Նորագույն փոխառություններ են վերջին տասնամյակներում հայերենին անցած բառերը, օրինակ՝ **ագրեման, աերոբուս, արմենոիդ, բակալավր, բայբեր, բիրժա, բյուջե, գեյշա, գոլֆ, եվրո, դեյֆինարիում, դե ֆակտո, դիսպոզիցիա, էլեկտրաթերապիա, էքստրեմալ, իմունիտետ, լոբբիզմ, խարտիա, կադաստր, կոալիցիա, կոռուպցիա, մագիստրանտ, մուլտիպլիկատոր, վերբալ, ֆոտոմոդել** ևն:

Փոխառությունները լինում են **անմիջական և միջնորդավորված:** Երկրորդները փոխատու լեզվից փոխառու լեզվին են անցնում այլ լեզվի միջնորդությամբ: Հայերենը այդպիսի փոխառություններ է կատարել հատկապես ռուսերենի միջնորդությամբ՝ եվրոպական լեզուներից, ինչպես՝ **ասամբլեա, բանկ, բենզին, գեներալ, գրամ, դիպլոմ, դոլար, դոկտոր, էլեկտրոն, կադր, կոմպակտ, պլան, պրոտոն, պոեմ, ռադիո, տեխնիկա, ֆակուլտետ** ևն:

Փոխառությունները լինում են **անհրաժեշտ և անհարկի:** Առաջինները փոխառվում են բառապաշարի համալրման իրական պահանջով, երկրորդները իրենց համարժեքները ունեն փոխառու լեզվում: Դրանց մի մասը ինչ-ինչ առավելությունների շնորհիվ (կարծություն, բարեհնչունություն, արտադրողականություն ևն) կարող է գոյության իրավունք ձեռք բերել, որոշ ժամանակահատված զուգահեռ գործածվել, մրցել փոխառու լեզվի համարժեքների հետ, ինչպես՝ **ալիբի // այլուրեքություն, ակադեմիա // կաճառ, ավիաբազա // օդահենակետ, աուդիտ // հաշվեստուգում, դինամիկա // ուժաբանություն, էխոլոտ // ձայնախորաչափ, էֆտանագիա // բարեսպանություն, ժուռնալիստիկա // լրագրություն, լոկացիա // տեղորոշում, կոմպոզիտոր // երգահան, կոմունիստ //**

համայնավար, կրիմինալիստիկա // քրեագիտություն, սանկցիա // պատժամիջոց, օբյեկտիվ // առարկայական ևն: Սրանք կոչվում են **մրցորդ փոխառություններ**. Եթե հաղթում են, անցնում են հիմնական բառագանձ:

Վերջին տարիներին շատ բառերի հայերեն համարժեքները ավելի գործածական են դարձել, ինչպես՝ **գրոսաշրջություն** – **տուրիզմ**, **լրագրող** – **ժուռնալիստ**, **համույթ** – **անսամբլ**, **մարմին** – **օրգան**, **նվագավար** – **դիրիժոր**, **տնտեսություն** – **էկոնոմիկա** ևն:

Փոխառյալ բազմաթիվ բառերի համար հայերենում փոխարինիչ համարժեքներ ստեղծված են, սակայն դրանք առայժմ տարածված չեն և չունեն գործառական ակտիվություն, այդպիսի բառերից են, օրինակ՝ **արժենիչ** (կրեդիտ), **արժենվազում** (դեալվացիա), **արտադրաբանություն** (տեխնոլոգիա), **բախումնաբանություն** (կոնֆլիկտոլոգիա), **գեղարարություն** (դիզայն), **գրավընկալ** (բուքմեյքեր), **համարկում** (ինտեգրում), **հանրօդանավ** (աերոբուս), **ճեպամրցում** (բլից–տուրնիր), **քրեաբանություն** (կրիմինալոգիա), **օդաուժաբանություն** (աերոդինամիկա) ևն: Ժամանակը կորոշի՝ սրանք կդառնա՞ն համագործածական բառեր, թե՞ դուրս կմնան լեզվի բառապաշարից:

Օտար բառերի՝ հայերեն համարժեքներով փոխարինումը սովորաբար չի վերաբերում այդ բառերի տերմինային գործածությանը: Օրինակ՝ քիմիայի մեջ **ռեժիմ** և **ռեակցիա** տերմինները գործածվում են անթարգմանաբար: **Մոդուլ** բառը հայերեն երկու թարգմանությունների կողքին (1. Բացարձակ մեծություն..., 2. Գործակից...) իմաստի նեղացմամբ (3. Ելակետային ընդհանուր միավոր ծառայող չափ կամ թիվ) շարունակում է պահպանվել թվերի տեսության, ճարտարապետության, մեքենաշինության մեջ՝ որպես տերմին:

Ծանոթություն: **Կուլտուրա** բառը **մշակույթ**–ով է փոխարինվում, երբ խոսքը **հոգևոր մշակույթի** մասին է, կամ երբ նկատի է առնվում նվաճումների մակարդակը որոշակի հասարակարգում՝ **եգիպտական մշա-**

կույթ, **սոցիալիստական մշակույթ**: **Կրթվածություն**, **դաստիարակվածություն** իմաստով այդ բառը փոխարինվում է **կիրթ**, **բարեկիրթ** բառերով՝ **կիրթ** (բարեկիրթ) **մարդ**: Երբ նշանակում է որևէ **բույսի մշակում**, **բուծում**, փոխարինվում է **մշակաբույս** բառով՝ **գյուղատնտեսական մշակաբույսեր**, **գարնանացան մշակաբույսեր** ևն: Նմանապես **կվարտետ**–ի փոխարեն գործածվում է **քառյակ**–ը, իսկ երաժշտական ստեղծագործության տեսակ նշանակությամբ՝ **քառերգ**–ը:

Անհարկի փոխառությունները, որոնք փոխառու լեզվում գործածվում են առանց հաղորդակցական անհրաժեշտության, կարող են կիրառվել ոճական նպատակներով՝ խոսքին զանազան արտահայտչական երանգներ տալու համար (այդ մասին կխոսվի իր տեղում): Դրանք կոչվում են **օտարաբանություններ**: Օտարաբանությունները իրենց համարժեքներն ունեն փոխառու լեզվում, և դրանց գործածությունը չի հանձնարարվում գրական լեզվում: Օտարաբանություններ են, օրինակ (փակագծերում տրված են հայերեն փոխարինիչները)՝ **ալտերնատիվ** (այլընտրանքային), **գրանտ** (դրամաշնորհ), **դեմագոգ** (ամբոխավար), **դիագնոզ** (ախտորոշում), **դիվերսիա** (խափանարարություն), **դիվիդենտ** (շահաբաժին), **ժալյուզ** (շերտավարագույր), **ինտերնետ** (համացանց), **կոլեգա** (գործընկեր), **կոնցեպցիա** (հայեցակարգ), **կուրատոր** (խնամարկու), **միտինգ** (հանրահավաք), **պրոցես** (գործընթաց // ընթացք), **պրոբլեմ** (խնդիր // գերխնդիր), **ռեզիոն** (տարածաշրջան), **ֆոն** (համապատկեր // երանգ), **սֆերա** (ոլորտ), **ռեզլամենտ** (աշխատակարգ) ևն:

Օտարաբանությունների գործածությունը պետք է նպատակային լինի, այսինքն՝ անհրաժեշտությամբ պայմանավորված: Եթե հայերեն համարժեքի համեմատությամբ օտար բառը ոչինչ չի հավելում, չունի նրբիմաստներ, տերմինային նշանակության ինչ–ինչ առավելություններ, ապա այդ բառի գործածությունը ավելորդ է, անտեղի: Օրինակ՝ **վարկանիչ** հայերեն համարժեքն արտահայտում է անգլերեն **ռեյտինգ** (rating) բառի բուն բովանդակությունը, այն է՝ առարկային, խմբին, անհատին, ձեռնարկությանը տրվող

զնահատություն: Հետևաբար հայերեն տարբերակի գործածությունը նախընտրելի է: Կամ՝ դիվանագիտական փաստաթղթերում ընդունված է ֆրանսերեն **ագրեման (agreement)** բառի գործածությունը. հայերեն համարժեքն է՝ **համաձայնություն**: Գործածության մեջ հայերենը արտահայտում է հասկացության բովանդակությունը, իմաստային որևէ շփոթ չի ստեղծում և, ի տարբերություն օտարալեզու տարբերակի, միանգամայն ընկալելի է հայ ընթերցողի համար: Ինչպես՝ Դեսպանը նկալ երկրի կառավարությունը **ագրեմանի** (⇒ **համաձայնության**) հարցումն ստանալուց հետո քննարկում է..., Նստավայր պետությունը պարտավոր չէ հավատարմագրող պետությանը հայտնել **ագրեման** (⇒ **համաձայնություն**) տալու մերժման դրդապատճառները:

Մինչև վերջերս փոխառություն համարվող մի շարք բառեր այսօր արդեն դիտվում են որպես օտարաբանություններ, քանի որ ունեն իրենց հայերեն համարժեքները, օր.՝ **ագիտացիա** – քարոզչություն, **ալլոգրաֆ** – այլագիր, **ամնիստիա** – համաներում, **անոնս** – հայտարարություն, **ավիզո** – ծանուցում, **ատտաշե** – կցորդ, **արբիտոր** – իրավարար // հաշտարար, **արզումենտացիա** – փաստարկում, **արխիվ** – պահոց, **բիլլ** – օրինագիծ, դիվանագիտական **կորպուս** – դիվանագիտական **անձնակազմ**, **դիվիդենդ** – շահաբաժին // շահութաբաժին, **դիսիդենդ** – այլախոհ, **դիսկրիմինացիա** – խտրականություն, **դոմինանտ** – գերակա, գերիշխող, **էլեկտորատ** – ընտրազանգված, **իդենտիֆիկացիա** – նույնականացում, **ինաուգուրացիա** – ձեռնադրում, պաշտոնակալում, երդմնակալություն, **ինդեքս** – դասիչ, ցուցիչ, **իսկ** – բողոք, հայց, **լեգալ** – օրինական, **լեգիտիմ** – օրինական, **լոզունգ** – կարգախոս, **կոնդոմինիում** – համատիրություն, **կոնցեպցիա** – հայեցակարգ, **կոոպտացիա** – ինքնահամալրում, մաժորիտար – **մեծամասնական**, **մեմորանդում** – հուշագիր, **մենեջմենտ** – կառավարում, **մոնիթորինգ** // **մոնիտորինգ** – դիտորդում // դիտարկում, մշտադիտարկում, **նոտա** – հայտագիր, **պոլիս** – ապահովագիր, **պոպուլիզմ** – ամբոխահաճու-

թյուն, **ռեզյունե** – ամփոփում, **ռեկլամացիա** – վնասապահանջ // բողոքագիր, **ռեֆերենդում** – հանրաքվե, **սուալի** – առաջարկ, **ուզուրպացիա** – բռնազավթում, բռնատիրում, **օֆերտա** – գործարկ, **ֆիսկալ** – գանձարանային // հարկաբյուջետային, **ֆունկցիա** – գործառույթ, **ֆունկցիոնալ** – գործառական ևն:

Հայերենը առավելապես փոխառու լեզու է: Սակայն այլ ժողովուրդների հետ ունեցած կապերի ու հարաբերությունների ընթացքում հայերենը ինքն է շատ բառեր փոխանցել այլ լեզուների: Հ. Աճառյանի վկայությամբ՝ հայերի և կովկասյան մյուս ժողովուրդների լեզվում «հասարակաց» համարվող շուրջ 900 բառերի «մեծ մասը» հայերենից անցած բառեր են՝ պայմանավորված այդ ժողովուրդների վրա հայկական քաղաքակրթության ուժեղ ազդեցությամբ¹¹: Հայերենից կամ հայերենի միջնորդությամբ այլ լեզուների (վրացերեն, քրդերեն, պարսկերեն, ռուսերեն, թուրք-թաթարական լեզուներ ևն) փոխանցվել են հատկապես հայ կյանքը, կենցաղը, հավատալիքները բնորոշող բառեր՝ **աղյուս**, **ավել**, **գութան**, **գերան**, **գերանդի**, **եղան**, **խաչ**, **խնձոր**, **կաճ** (թաղիք), **կիր**, **մածուն**, **մանգաղ**, **յուղ**, **նուշ**, **պղինձ**, **տաճար**, **տաշտ**, **տափան**, **տավար** ևն:

Լեզվի բառապաշարի հիմնական շերտը կազմող ընդհանուր գործածական (համագործածական) բառերի կողքին առանձին խումբ են կազմում, այսպես կոչված, գործառական քիչ հաճախականություն ունեցող բառերը՝ **հնաբանություններ**, **նորաբանություններ**, **բարբառային-խոսակցական բառեր** ևն:

Հնաբանություններ: Հնից փոխանցված և ընդհանուր գործածությունից դուրս մնացած բառերն են: Սխալ է կարծել, թե դրանք ընդհանրապես չգործածվող բառեր են: Ընդհակառակը, պատկանելով բառապաշարի ոչ գործուն բառաշերտին՝ հնաբանությունները կիրառվելիս դրսևորում են ուշագրավ ոճական-արտահայտ-

¹¹ Տե՛ս **Հր. Աճառյան**, Հայոց լեզվի պատմություն, հ. II, եր., 1973, էջ 206: Հարցի մասին ավելի մանրամասն տե՛ս **Ա. Մարգարյան**, Ժամանակակից հայոց լեզու, եր., 1993, էջ 174–176:

չական նրբերանգներ և խոսքի կառուցման մեջ ունեն ընդգծված ոճական երանգ (այդ մասին կխոսենք համապատասխան տեղերում): Ի տարբերություն համագործածական բառերի՝ դրսևորման ոլորտով և գործածության հաճախականությամբ պարզապես ունեն սահմանափակ կիրառություն: Ըստ դրսևորման բնույթի կամ ձևավորման՝ հնաբանությունները լինում են **բառային** և **քերականական**:

Առաջինները բառային միավորներ են, ձևով կամ իմաստով և կամ միաժամանակ երկու հատկանիշներով էլ հնացած բառեր են՝ **ահաւասիկ, այր, անսալ, ատրուշան, բոլորէքեան, դրանիկ, իւր, հանգոյն, շուրջանակի, սատար, վասն, վասնզի** ևն: Ձևով հնացած են համարվում բոլոր այն բառերը, որոնք իրենց հնչյունական կազմով (նաև գրությամբ) տարբերվում են արդի հայերենում գործածվող բառաձևերից, ինչպես՝ **երեխայ, իրաւ, մատեան, Նուարդ, նուռն, տեսանել** ևն: Իմաստային հնացումը պայմանավորված է բառիմաստի փոփոխությամբ. իրենց նախնական իմաստով գործածվող բառերը այսօր իմաստային հնաբանություններ են, ինչպես՝ **ազգ** – տեսակ, պես, օրինակ՝ **ազգի–ազգի** (տեսակ–տեսակ) ժողովուրդներ, **գնացք** – ընթացք, գնալը՝ («Ո՛վ պերճութիւնը **գընացքին** իր հըպարտ»), **նախագահ** – «Որ ունի **գառաջին գահ**, գաթռ...», գահին մոտ նստող, գահերեց, գլխավոր, առաջին գահը գրավող՝ **նախագահ իշխան, նախագահ քաղաք, պատարագ** – զոհ, մատաղ («Տալ **պատարագս** զոյգս տատրակաց»), **պաղպաղակ** – սառնատեսակ քար՝ թափանցիկ և փայլուն («Որպէս բնութիւն **պաղպաղակի**, որ յանձնէ ունի լուսաւորութիւն»), **նախարար** – արքայի խորհրդական, գավառի և նահանգի մեծ իշխան, նահապետ ևն:

Քերականական հնաբանությունները հնացած քերականական ձևեր են՝ **գործոց, եղեւ, ի յարկէ, համբարծուեցաւ, ձեռամբ, ճշտիւ, մի՛ գնաք, մի՛ կարդար, միով բանիւ, մեծաւ մասամբ, մնացեալ, նախարարաց, ստուգիւ, տիկնայք** ևն: Քարացած քերականական ձևերը հնաբանություններ չեն, եթե չեն գիտակց-

վում ու գործածվում իբրև այդպիսին, ինչպես՝ **անցյալ, առթիվ, թհարկէ, կեցցե, հայոց, հասցե, շնորհիվ, սառուցյալ, վրաց**:

Հնաբանությունները, ըստ իրենց ծագման և բնույթի, լինում են **պատմաբառեր** և **հնաբառեր**:

Պատմաբառեր են կոչվում արտալեզվական գործոնների շեղանքով առաջացած հնաբանությունները: Դրանք գործածությունից դուրս եկած իրերի, երևույթների, հասկացությունների անվանումներ են, ինչպես՝ **ամրոց, այրուծի, աշտե, Աշտիշատ, բաբան, բագին, գեղարդ, հազարապետ, մարգպան, մեհյան, մոզպետ, Ողական, սեպուհ, տեգ, Տիգրան Մեծ, փոխարքա, նաև կոլխոզ, սովխոզ, սովետական, գյուղխորհուրդ, ԳԴՀ (Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետություն)**: Ինչպես տեսնում ենք, դրանք պատերազմական երբեմնի գործիքների, զենք ու զրահի անվանումներ են, տեղանուններ, անձնանուններ, պետությունների, պատմական պաշտոնների, զբաղմունքի անուններ, կոչում, աստիճան նշանակող բառեր ևն: Պատմաբառերը սովորաբար իրենց հոմանշային տարբերակները չեն ունենում, հետևաբար գործածվում են հիմնականում անվանողական նշանակությամբ, ոճական–արտահայտչական ընդգծված հատկանիշներ չեն դրսևորում:

Հնաբառերը գալիս են հնից, սակայն այժմ էլ գոյություն ունեցող առարկաների, երևույթների անվանումներ են, ունեն հոմանշային տարբերակներ և սովորաբար գործածվում են ոճական–արտահայտչական նպատակներով, ինչպես՝ **ամենեցուն – բոլորին, անսալ – լսել, ի հեծուկս – հակառակ, ձայն ածել – ձայն հանել, նգույր – եռուտանի սեղան, պախուրց – սանձ, սատար – նեցուկ, վասն – համար / մասին, ուստր – տղա, ունկն – ականջ**: Հնաբառեր են նաև իմաստային հնաբանությունները:

Հնաբանություններ են համարվում ոչ միայն գրաբարից, այլև միջին հայերենից և աշխարհաբարի վաղ շրջանից փոխանցված բառիմաստները, բառերն ու բառաձևերը՝ **պայլ, վեզիր, մունետիկ, մելիք, բումբ, մարաջախտ, գունդստաբլ, տանուտեր,**

հեղկոմ, գզիր, բանֆակ, նախագահ (կոլտնտեսության նախագահ), գործկոմ, շրջկոմ, շրջսովետ, Գերագույն խորհուրդ, ՀՍՍՀ, ՀամԼԿԵՄ, «Սովետական Հայաստան»:

Նորաբանություններ: Ժամանակի ընթացքում լեզվի բառապաշարը հարստանում է նոր բառերով ու բառիմաստներով: Դրանք ունեն ընդհանուր անվանում՝ նորաբանություններ: Այլ կերպ ասած՝ նորաբանությունները և՛ նոր ստեղծված բառերն են՝ **նորակազմությունները**, և՛ արդեն գործածության մեջ եղած բառերի նոր իմաստները՝ **իմաստային նորաբանություններ:** Լայն առումով՝ նորաբանությունները ընդգրկում են նաև քերականական կառույցները:

Դժվար է հստակ սահման գծել ընդհանուր գործածական և նոր բառերի միջև: Նոր հայկազյան բառարանը («Նոր բառգիրք հայկազեան լեզուի»՝ 1836–1837) ներառում էր մոտ 51 000 բառ, Ստ. Մալխասյանցի բառարանը (1944–1945)՝ 120 000 բառ և դարձվածքային միավոր, իսկ Էդ. Աղայանի բացատրական բառարանը (1976)՝ 135 000 բառ և 11 000 դարձվածքային միավոր: Վերջին բառարանը մոտ 26 000–ով ավելի բառային միավոր է պարունակում, քան նախորդը: Եվ բառերի այդ քանակը ավելացել է ընդամենը չորս տասնամյակի ընթացքում: Իսկ վերջին երեք տասնամյակում հայոց լեզվի բառապաշարը հարստացել է տասնյակ հազարավոր նոր բառերով ու բառիմաստներով (չհաշված էդ. Աղայանի բառարանում բաց թողած բառերը): Բառապաշարի արագ հարստացման հիմնական պատճառներն իհարկե քաղաքական ու տնտեսական զարգացումներն են, փոխադարձ շփումները այլ ժողովուրդների և այլ լեզուների հետ: Բայց դրա կարևոր նախապայմաններից է նաև լեզվի ներքին հնարավորությունների կիրառումը:

Նոր ստեղծված բառերը, եթե շատ են գործածվում, արագ հնանում են և անցնում ընդհանուր գործածական բառերի շարքը: Այդ իսկ պատճառով երբեմն դժվար է կողմնորոշվել՝ գործ ունենք նո՞ր բառի հետ, թե՞ արդեն ընդհանուր գործածական բառի: Օրինակ՝ մոտ անցյալում նորաբանություններ էին համարվում **գործըն-**

թաց, եռակցող, հայեցակարգ (կոնցեպցիա), **հավելավճար, հեռուստածրագիր, մարզադպրոց, մարզահամալիր, մարզահամերգային, նստաշրջան, շարժասանդուղք, ստուգայց, վարչակարգ, տեսածայնագրիչ, տիեզերագնաց, տիեզերանավ, փոխվարչապետ** և նման բազմաթիվ այլ բառեր: Այսօր դժվար է պնդել, որ դրանք նորաբանություններ են: Ընդունված է դրանք կոչել **նոր բառեր**¹²: Պայմանականորեն նորաբանություններ կարելի է դիտել վերջին մեկ–մեկուկես տասնամյակում ստեղծված և գործածության մեջ մտած բառերը:

Նորակազմություններ. դրանց երբեմն անվանում են նաև **բառային նորաբանություններ:** Մակայն այս բնորոշումով սովորաբար նկատի են ունենում նաև փոխառյալ նորաբանությունները, մինչդեռ բուն նորակազմությունները իրենց արտաքին հնչյունական կազմով նոր բառերն են: Նորակազմությունների առաջացման աղբյուրները բազմազան են: Դրանք նախ և առաջ բառակազմական գործող կաղապարներն են՝ **բառաբարդում, ածանցում, հապավում, ինչպես նաև բառապատճենում:**

Բառաբարդում ասելով՝ հասկանում ենք արմատների կցումով կազմվող նոր բարդությունները: Այդ ճանապարհով այսօր առավելապես կազմվում են հողակապով բարդություններ կամ ընդհանրապես իսկական բարդություններ, նաև բարդ ածանցավոր բառեր, ինչպես՝ **ահաբեկչագետ, աշխատակազմ, բռնագավթում, գազաթաժողով, դատալսում, դատահետքաբանական, դատածգաբանական, դատածեռագրաբանություն, դիպաշար, դրամաշնորհ, հանրակառք, պատկերամուտ** (սկաներ), **վեհաժողով, տեսահոլովակ, տեսածապավեն, տեսածայնագրառում, քրեածին, քրեակատարողական, օգտատեր** ևն: Քիչ են կազմվում անհողակապ բարդություններ՝ **այլընտրանքային** (ալտերնատիվ), **անկարգել** (պարաշյուտ), **արցախորդի, գործառնություն** (օպերացիա), **գործարկ** (օֆերտա), **դեսպանընկալ, թռչնախտ, «Հայլուր», հայօգուտ, ծշտորոշ** (կոռեկտ):

¹² Տե՛ս էդ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984:

Ածանցում ասելով՝ հասկանում ենք ածանցման ճանապարհով նոր բառերի առաջացումը: Բնականաբար կիրառվում են գործուն կամ կենսունակ ածանցները՝ **ան-** (անդիմագիծ, անհայ), **համա-** (համընկալում, համաքաշ), **-անի** (վարչանի), **-անք** (արգելանք), **-ային** (ուժային), **-ական** (կառուցողական), **-իչ** (բազմարկիչ, ծրիչ, դասիչ), **-որեն** (քրեորեն), **-ություն** (ինքնիրավչություն, համատիրություն), **-ուհի** (նախարարուհի, գեղալողուհի), **-ույթ** (եզրույթ, տեղեկույթ, հալույթ), **-ում** (ողորկում, քրեականացում) ևն:

Ածանցումով շատ բառեր են կազմվում **նաև փոխառյալ բառահիմքերից**, օր.՝ **ալերգ** + **ա** + **բան**, **լիբերալ** + **աց** + **ում**, **լիզինգ** + **ային**, **լինգաֆոն** + **ային**, **լիցենզ** + **ավոր** + **ել**, **լոբբիստ** + **ական**, **հակա** + **կոռուպցիոն**, **մագիստրոս** + **ական**, **օֆշոր** + **ային** ևն:

Բայածանցներից ակտիվություն են դրսևորում վ կրավորական ածանցը և **ան** սոսկածանցը, ինչպես՝ **ազատականանալ**, **ավարայրվել**, **բազմազանվել**, **կոռումպացվել**, **քաղաքականանալ**, **ուսանողանալ**: Առհասարակ, նոր բառերի ստեղծման մեջ առավել ակտիվ դեր ունի ածանցումը:

Բառաբարդման մի տեսակ է նաև **հապավումը**, որը վերջին տարիներին քաղաքական և տնտեսական նոր իրադրության պայմաններում լայն գործածություն ունեցավ, ինչպես՝ **Հայխնայբանկ**, **Հայֆուսգազարդ**, **Եվրաբանկ**, **ԱԱԾ** (ազգային անվտանգության ծառայություն), **ԵԱՀԽ** (Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհուրդ), **ՄՊԸ** (սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն), **ԲՀԿ** («Բարգավաճ Հայաստան» կուսակցություն), **ՀՌԱԿ** (Հայաստանի ռանկավար ազատական կուսակցություն), **ԱՊՀ** (Անկախ Պետությունների Համագործակցություն), **ԿԲ** (կենտրոնական բանկ), **ԱԳՆ** (արտաքին գործերի նախարարություն) ևն:

Լեզվի բառապաշարը հարստանում է նաև բառապատճենման միջոցով, ինչպես՝ **großmeister** (գերմ. **groß** – մեծ + **meister** – վար-

պետ) ⇒ **մեծավարպետ**, **биокриминология** (հուն. **bios** – կյանք + լատ. **crimen** – հանցագործություն + հուն. **logos** – գիտություն) ⇒ **կենսաքրեագիտություն** ևն: Բառապատճենումները ոչ միայն առանձին **բառեր** են (ամենագնաց – **вездеход**, բիզնեսփաթեթ – **бизнес-пакет**, թեյավճար – **чаевые**, շնորհանդես – **презентация**, շուկայագիտություն – **marketing**), այլև **բառակապակցություններ** (զանգվածային տեղեկատվության միջոցներ – **средства массовой информации**, բուֆերային գոտի – **буферная зона**, բանակցային գործընթաց – **переговорный процесс**, ուժային նախարարություն – **силовое министерство**, քջային հեռախոս – **сотовый телефон**), **դարձվածքներ** (խաղի մեջ մտնել – **войти в игру**, երրորդ աշխարհի երկրներ – **страны третьего мира**, փողերի լվացում – **отмывание денег**, երկակի խաղ – **двойная игра**, լողացող կուրս – **плавающий курс**), **հապավումներ** (Եվրադատարան – **Евросуд**), Եվրախորհրդարան – **Европарламент**, Եվրամիություն – **Евросоюз**) ևն:

Իմաստային նորաբանություններ. արդեն գործածության մեջ եղած բառերի նոր իմաստներն են: Օրինակ՝ **թափանցիկ** բառն ունի բառարանային 13 իմաստ՝ «Որի միջով լույսը թափանցում է, լուսանցիկ», «Որի միջով կարելի է տեսնել մյուս կողմի առարկաները», «Նոսր, նուրբ», «Ձգայուն, տպավորվող», «Հստակ, վճիտ» ևն: Այս բոլորին, սակայն, վերջին շրջանում ավելացել է ևս մեկ իմաստ՝ «վերահսկելի, արդար», ինչպես՝ Ամեն ինչ արվում է ընտրությունները **թափանցիկ** դարձնելու համար: **Սառեցնել** բառը ժամանակակից հայերենում նախկին իմաստների հետ միասին գործածվում է ինչ–որ բանի օգտագործումը կասեցնելու, նույն վիճակում թողնելու իմաստով: Սովորական են դարձել **ավանդների սառեցում**, **գների սառեցում** գործածությունները: Իմաստային նորաբանություններ են նաև՝ **այցեքարտ** – ներկայացուցիչ, ներկայանալի հատկանիշ (Կենտրոնական բանկը ՀՀ տնտեսության **այցեքարտն** է), **բանկ** – տվյալների շտեմարան (թեստերի **բանկ**), **գետին** – հիմք, հենք, ասպարեզ (գրական **գետնի** վրա), **գործիք** – միջոց (գիտելիքը **գործիք** է...), **դաշտ** – ոլորտ (քաղաքական

դաշտ, համաձայնության **դաշտ**), **դոնոր** – օգնություն տրամադրող, մատակարարող (**դոնոր** երկրներ), **երկխոսություն** – բանակցություն (քաղաքական **երկխոսություն**), **զամբյուղ** – գունարի կամ ծախսերի չափ (սպառողական **զամբյուղ**), **ընթերցում** – նախնական դիտարկում, քննարկում (նախագիծն ընդունվեց առաջին **ընթերցմամբ**), **թիմ** – համախոհների խումբ (քաղաքական **թիմ**), **թիրախ** – գործունեության հիմնական ուղղություն, նպատակ (զարգացման հիմնական **թիրախ** ունենալ...), **լուսն** – լսել–քննարկելը (**լուսններ** Ազգային ժողովում), **խողովակ** – ուղի (դիվանագիտական **խողովակներ**), **խոսնակ** – Ազգային ժողովի նախագահը, **հանում** – հանելը, վերացնելը (դատվածության **հանում**), **հոսք** (ֆինանսական **հոսք**), **ճեղքվածք** – պակասություն, անբավարարություն (բյուջեի **ճեղքվածք**), **նախագահ** (պրեզիդենտ իմաստով), **նախարար** (մինիստր իմաստով), **շնիկ** – համակարգչային գրանշան (համացանցային հասցեում **շնիկը** նշված է), **պատուհան** – հարցի ամբողջական լուծում վարչական մեկ օղակում (մեկ **պատուհանի** քաղաքականություն), **ստվերային** – չերևացող, թաքուն, ապօրինի (**ստվերային** տնտեսություն, **ստվերային** եկամուտներ), **փաթեթային** – ամբողջական, բոլոր հարցերն ընդգրկող, միաժամանակյա (դարաբաղյան խնդրի լուծման **փաթեթային** տարբերակ) ևն:

Իրենց ծագմամբ նորաբանությունները լինում են **հանրական** և **անհատական** (կամ հեղինակային): Առաջինները ձևավորվում են նոր առարկաների, երևույթների, հասկացությունների երևան գալու հետևանքով՝ **աշխարհատարածք**, **ընթացակարգ**, **իրավանորմ**, **լատենտային**, **կրկնահանցագործ**, **համապարտադիր**, **համացանց**, **հրթիռակոծում**, **մեղսագրվել**, **ոտնձգում**, **պնակիտ**, **քրեաիրավական**, **քրեակատարողական**, **օդահեն** ևն: Երկրորդները ստեղծում են անհատական, ոճական նկատառումներով, ինչպես՝ **ամպրոպաշունչ**, **անդունդվել**, **անզարթ**, **անմարդապաշտ**, **գաղտնափոխել**, **հոգսոտ**, **հրաբորբոք**, **ձևակերպ**, **մայրորեն**, **սիրամրմունջ** ևն:

Հասկանալի պատճառներով առաջին խմբի նորաբանությունները ավելի հաճախ են գործածվում և ավելի շուտ են անցնում համագործածական բառերի շարքը, դառնում ընդհանրական: Երկրորդները ընդհանրանալու միտում կարող են և չունենալ, ստեղծվում են արտահայտչական նկատառումներով, կատարում են իրենց որոշակի արտահայտչական դերը, և հնարավոր է, որ այլևս չգործածվեն: Սակայն անհատական նորաբանությունների մի մասը (պոտենցիալ՝ ներունակ նորաբանությունների), եթե հաջող կազմություն է և ընդունվում է հասարակության կողմից, կարող է մտնել գործածության մեջ և դառնալ համագործածական: Օրինակ՝ գրողների կողմից ստեղծված այդպիսի բազմաթիվ բառեր դարձել են ընդհանուր գործածական, ինչպես Գրիգոր Նարեկացու ստեղծած հետևյալ բառերը՝ **ամենազգաստ**, **անխախտ**, **անկասելի**, **անստեղծ**, **բարեխնամ** ևն:

Ծանոթություն: Երբեմն դժվար է բառի ստեղծումը միանշանակ վերագրել այս կամ այն անհատին: Այստեղ անհրաժեշտություն է առաջանում դիմելու բառարանների օգնությանը: Բայց դա էլ երբեմն չի օգնում: Օրինակ՝ ընդունված է **գրգարան** բառի հեղինակ համարել Դ. Վարուժանին, սակայն ըստ բանասիրության տվյալների՝ այդ բառը գործածել է Դ. Ալիշանը՝ այդպես անվանելով իր գրաբար քերթվածների մի ամբողջ շարք՝ «Գրգարան»: Կամ՝ **անանձնական**–ը վերագրվում է Մ. Մեծարենցին, մինչդեռ նրանից մեկ տասնամյակ առաջ այդ բառը գործածել է Ա. Չոպանյանը, թեև, այնուամենայնիվ, բառը տարածվեց, «քաղաքացիության իրավունք ստացավ» Մեծարենցի շնորհիվ: Եվ կամ՝ **սիրամրմունջ**–ը ոչ թե Հ. Շիրազի, այլ Ինտրայի (Տիրան Չրաքյան) ստեղծած բառն է: Կամ էլ, ըստ բառարանների տվյալների, **վերջալույս** բառին առաջին անգամ հանդիպում ենք Պ. Դուրյանի չափածոյում. արդյո՞ք դա պետք է վերագրել Դուրյանին. դժվար է ասել:

Անհատական նորակազմությունների մյուս մասը ստեղծվում է ուղղակի նյութի անմիջական թելադրանքով, իրականացնում է հաղորդակցական կամ արտահայտչական գործառույթ և տեսա-

կանորեն նախադրյալ չունի դառնալու ընդհանուր գործածական: Այդպիսի լեզվական միավորները կոչվում են **դիպվածային**: Օրինակ՝ **ամենաբերձ** (Ա. Իսահակյան), **սիրատրոփ**, **սիրաբուխ**, **սիրասուգ**, **սիրակայծ**, **բոցագես**, **մահադեմ** (Պ. Դուրյան), **անմարդապաշտ**, **մնացողիկ**, **սիրայծյամ** (Հ. Շիրազ), **խնդումադեմ**, **ամենագեղուհի**, **անձեռնպահ**, **կեսօրել**, **նախերգիչ** (Զ. Խալափյան), կամ՝ **ակտիվիստուհի**, **ընտրադաշինք**, **ընտրաշուռ**, **իշխանահաճո**, **լրամշակում**, **իրավաբաներեն**, **համայնքապատկեր**, **մաքսամետ** (նկատի ունի Մաքսային միությունը), **տոնավաճառք**, **քրեաթերթիկ**, **եթերադուլ** (մամուլ) ևն:

Անհատական նորակազմությունների գործածությունը արդարացվում է, եթե դրանք ունեն արտահայտչականություն: Դրանց մի մասը ընդունվելու դեպքում անցնում է բառարան և ստանում ընդհանուր գործածության իրավունք, ինչպես հետևյալները՝ **ընտրադաշինք**, **ընտրախախտում**, **ընտրակաշառք**, **ընտրակեղծիք**, **համայնքապատկեր**, **համասփռել**, **մահադեմ**, **մաքսամետ**, **ուկեհուր**, **ոսկեվառել**, **ոսկեփրփուր**, **սիրողաբար**, **վշտակոծ** ևն:

Նոր բառեր ստեղծելու համար լեզվական ճաշակ ու զգացողություն է պետք: Հաճախ նոր ստեղծված ոչ միայն դիպվածային բառերը, այլև հանրական նորակազմությունները չեն գոհացնում հասարակության լեզվական պահանջները և դուրս են մնում գործածությունից: Օրինակ՝ ի տարբերություն Մ. Աբեղյանի ստեղծած մի շարք հաջող կազմությունների, այդպես էլ հայերենի բառապաշար չանցան նրա իսկ կերտած ռազմական առանձին տերմիններ՝ **ձիգ** (выстрел), **բաժնյակ** (дивизион), **ինքնեկ** (автомат), **մեկնազեմ** (партизан): Անհաջող նորակազմություններ են նաև հետևյալները՝ **անասնաշենք** / **անասնոց** (= գոմ), **ավարտագիր** (= դիպլոմ), **կորիզաբան** (= ատոմագետ), **կորիզային բնագիտություն** (= միջուկային ֆիզիկա), **հանրակառք** (տրամվայ), **հրասայլ** / **մարտասայլ** (= տանկ), **հրասայլավոր** / **հրասայլորդ** (= տանկիստ), **սպայանոց** / **սպայախումբ** (= շտաբ), **ուժանիվ** (= հեծանիվ) ևն:

Բարբառային կամ խոսակցական բառաշերտ: **Բարբառային** հասկացությունը օգտագործելու ենք լայն առումով՝ հասկանալով ինչպես ժողովրդախոսակցական, այնպես էլ բարբառային բառերը: Ընդունելի չէ այն սկզբունքը, թե ինչ գրական չէ, բարբառային է: Պետք է իմանալ, որ գոյություն ունեն նեղբարբառային բառեր, որոնք հատուկ են տարածքային ավելի փոքր խմբերին: Դրանք կոչվում են նաև գավառաբանություններ: Խոսակցական լեզու ներթափանցած բարբառայինները ավելի մոտ են գրական բառապաշարին: Դրանց մի մասը ժամանակ առ ժամանակ թափանցում է գրական լեզու: Համեմատենք հետևյալ բառախմբերը.

գրական	խոսակց.	բարբառ.
այժմ	հիմա	մկա
աքաղաղ	աքլոր	խորոզ
գեղեցիկ	սիրուն	խորոտ
գուղձ	հողակոշտ	կռեթ
մորեղբայր	քեռի	դայի
շատախոս	լեզվանի	գյավագա

Առաջին երկու խմբի բառերը գործածության հաճախականությամբ շատ ավելի մոտ են իրար և ընկալելի են հասարակության լայն խավերի կողմից: Երրորդ խմբի բառերը բնորոշ են տարածքային որոշակի խմբի և անհասկանալի են կամ քիչ հասկանալի ընդհանուրին: Խոսքի մեջ, բնականաբար, արտահայտչական ընդգծված երանգ ունեն նեղբարբառային բառերը՝ որպես քիչ գործածվող բառաշերտ: (Այս բառաշերտի արտահայտչական դերի և գործածության յուրահատկությունների մասին կխոսվի առանձին):

ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ: Ուսումնասիրում է բառապաշարի իմաստային համակարգը: Բառերն ըստ իմաստի լինում են **մենիմաստ** և **բազմիմաստ**: Տերմինները, որպես կանոն, մենիմաստ բառեր են: Մենիմաստ բառերը բառապաշարում շատ ավելի մեծ թիվ են կազմում, քան բազմիմաստները: Մենիմաստ բառերը սովորաբար կազմությամբ բարդ են և բաղադրյալ՝ **այլընտրանք**,

ինքնիշխանություն, իրավաչափություն, քիմիագետ: Բազմիմաստ են, այսինքն՝ մեկից ավելի իմաստ ունեն սովորաբար շատ գործածվող բառերը, որոնք մեզ անմիջականորեն շրջապատող առարկաների, իրողությունների, հատկանիշների անվանումներ են՝ **աղբյուր, աչք, բարձր, բռնել, գիրք, երես, թեթև, կրակ, հին, հող, վատ:**

Բառի գլխավոր, երկրորդական և փոխաբերական իմաստները փոխալսմանավորված են իրարով. փոխաբերական և երկրորդական իմաստները գլխավորից ածանցված իմաստներ են: Փոխաբերությունը բառի մեկ այլ՝ լրացական իմաստով գործածությունն է: Փոխաբերության հիմքում ընկած է առարկաների, երևույթների, իրողությունների արտաքին կամ ներքին հատկությունների կամ զուգորդությունների նմանությունը: Օրինակ՝ **արև** բառը «արեգակ», «արեգակի արծակած լույս ու ջերմություն», «արևոտ եղանակ» գլխավոր և երկրորդական իմաստներից բացի, ունի նաև «ուրախություն», «տենչալի էակ», «կյանք», «լուսավոր, պայծառ» փոխաբերական իմաստները, որոնց հիմքում մի դեպքում ընկած է արևի ջերմությամբ կյանք հաղորդելու, **արև / կյանք** ներքին զուգորդությունը, ինչպես՝ «**Արև է երգել ու գարուն Այս հիվանդ, հանճարեղ պատանին**» (Ե. Չարենց), մյուս դեպքում՝ **լույսի / պայծառության** աղբյուր լինելու արտաքին հատկանիշը՝ «Ես էլ հիշում եմ մի փոքրիկ տուն, Փոքրիկ սենյակ մի՝ **արևով լի**» (Վ. Տերյան):

Ըստ իմաստային զարգացման, տարածվածության և ոճական-արտահայտչական արժեքի՝ փոխաբերությունները լինում են **լեզվական կամ ընդհանրական, հեղինակային կամ անհատական:** Առաջինները ընդհանուր գործածություն ունեն, ճանաչելի և ընկալելի են հանուրի համար, բառարաններում ամրագրված իմաստներ են, ինչպես՝ **կրակ**՝ «լուսավորություն», «տաքություն», «սաստիկ շոգ», «ծանր կացություն», «ոգևորություն, եռանդ» ևն: Կան լեզվական փոխաբերություններ, որոնց փոխաբերական իմաստները հաճախ գործածվելու հետևանքով մթագնել են, վերածվել են սովորական բառային նշանակության, բառարաններ-

րում էլ սովորաբար չեն արձանագրվում որպես փոխաբերական իմաստներ (այլ կերպ կոչվում են **մարած** փոխաբերություններ): Օրինակ՝ Էդ. Աղայանի բացատրական բառարանում **ծանր** բառի 49 իմաստներից և ոչ մեկը (ծանրաբարո, բարդ, անախորժ վիճակ ստեղծող, խիստ պատժի ենթակա, մեծ վիշտ պատճառող ևն) չի նշվում որպես բառի փոխաբերական իմաստ:

Երկրորդները՝ հեղինակային փոխաբերությունները, ստեղծվում են անհատ հեղինակների կողմից՝ ոճական-արտահայտչական նպատակներով՝ խոսքը ազդեցիկ ու պատկերավոր դարձնելու համար, ինչպես՝ «Կարապետը ... յուսահատօրէն **գաղթեցին**, Տերևները վիրաւորուած թշնամիներու նման Հոգեվարքի **ճիչերով** վար ինկան» (Սիամանթո), կամ՝ «Գինին **հեկեկաց** բաժակի մեջ» (Զ. Խալափյան):

Ըստ որում՝ բազմիմաստ բառի երկրորդական, այսինքն՝ ոչ գլխավոր իմաստ(ներ)ը կարող է(են) չլինել փոխաբերական իմաստ, ինչպես, օրինակ՝ **հողված** բառի՝ «գիտական կամ հրապարակախոսական ոչ մեծ գրվածք», «իրավական փաստաթղթի (օրենսգրքի, կանոնադրության ևն) ինքնուրույն հատված՝ բաժին՝ կետ», «բառարանի ինքնուրույն հատված, բառահոդված» իմաստները փոխաբերական չեն: **Լույս** բառի՝ Էդ. Աղայանի բառարանում նշված 19 իմաստներից առաջին ինը բառի ուղիղ՝ ոչ փոխաբերական իմաստներն են՝ «ճառագայթային էներգիա, ցերեկվա լուսավորություն, լուսաբաց, ցերեկ, լույսի աղբյուր» ևն, մյուս տասը՝ փոխաբերական՝ «քաղաքակրթություն, հաջողության / լավի խորհրդանիշ, պայծառ ու գեղեցիկ, սպիտակ / ճերմակափայլ, երջանիկ» ևն: **Դատավոր** բառը ունի երեք՝ ուղիղ, գլխավոր և երկրորդական իմաստներ՝ «1. Դատական մարմնի պաշտոնական անձ, որ վարում է դատավարությունը և դատավճիռ կամ որոշում ընդունում գործի մասին: 2. Գործն ըստ էության քննող դատարանի կազմի անդամներից յուրաքանչյուրը: 3. (սպորտ.): Մարզական խաղերն ու մրցումները դատող անձ», և մեկ փոխա-

բերական իմաստ՝ «4. փխբ. Որևէ բանի մասին դատավճռի պես կարծիք՝ գնահատական՝ դատողություն հայտնող մարդ»¹³:

Բառի բազմիմաստության տեսակ է **փոխանունությունը**: Այն հիմնված է սերտորեն առնչվող առարկաների, երևույթների և հատկանիշների զանազան կապերի ու հարաբերությունների և ոչ թե դրանց ներքին կամ արտաքին նմանությունների վրա: Փոխանունությունները արտահայտում են զանազան հարաբերություններ. ցույց են տալիս՝ **1. պարունակողը պարունակյալի փոխարեն՝ Մի գավաթ** (օր.՝ սուրճ) ըմպեցի: **Դահլիճը** համակ ուշադրությամբ լսում էր բանախոսին, **2. գործողությունը՝ արդյունքի կամ հակառակը՝ արդյունքը՝ գործողության փոխարեն՝ Հրամանը** իր գործը կատարեց, **3. հեղինակը՝ ստեղծագործության փոխարեն՝ Կարդում են Չարեց**: Հաճախ են լսում **Կոմիտաս**, **4. տեղանունը՝ կառավարող մարմնի, կազմակերպության, հաստատության և այլնի փոխարեն՝ Սպիտակ տուն** – ԱՄՆ–ի նախագահի նստավայր, **Ելիսեյան պալատ** – Ֆրանսիայի նախագահի նստավայր, **Downing Street (Դաունինգ Սթրիթ)** – Անգլիայի արտաքին գործերի նախարարություն, **Վաշինգտոն** – Միացյալ Նահանգներ, **Մոսկվա** – Ռուսաստանի Դաշնություն, **Կրեմլ** – Ռուսաստանի կառավարություն և իշխանություններ, **Պենտագոն** – ԱՄՆ–ի պաշտպանության նախարարություն կամ ԱՄՆ–ի ռազմական ուժեր, **Բաղրամյան 26** – ՀՀ նախագահի նստավայր, **5. նյութը նրանից պատրաստված առարկայի փոխարեն՝ Վերջին օլիմպիադայում** հայ մարզիկները երկու **ոսկի** ստացան, երեք **արծաթ** և:

Տերմին և տերմինաբանություն: Տերմինը (լատ. *terminus*՝ սահման, եզր) բառ կամ բառակապակցություն է, որը ճշտորեն արտահայտում է գիտության, տեխնիկայի, արվեստի, հասարակական կյանքի որևէ բնագավառի որոշակի հասկացություն: Ունի հետևյալ բնութագրական գծերը՝ **1. Հասկացության անուն է**: **2. Իմաստը ճշգրտորեն սահմանելի է**: **3. Բովանդակային պլանը միշտ ձգտում է մեմիմաստության. տերմինների մեծ մասը մեմի-**

մաստ է: Ընդհանուր գործածական բառերի մի մասը բազմիմաստ է: **4. Հիմնականում գոյականական արտահայտություն ունի. կան խոսքի մասեր, որոնք տերմինային արժեք չեն կարող ստանալ, որովհետև հասկացություններ չեն, թերիմաստ կամ սպասարկու բառեր են** (օր.՝ կապը, շաղկապը, վերաբերականը, ծայնարկությունը). բայական տերմինները ունեն գոյականացման միտում՝ լսել – **լսում**, ներել – **ներում**, մերժել – **մերժում**: **5. Ձերծ է հուզագացական երանգավորումներից, իբրև կանոն՝ չի ունենում իր հոմանշային տարբերակը, սովորաբար չի գործածվում ոճական–արտահայտչական նշանակությամբ**:

Տերմինները գործածվում են **տերմինային համակարգերում**: Դրանք ձևավորվում են ըստ գիտության և հասարակական կյանքի տարբեր բնագավառների՝ նշակույթ, միջազգային հարաբերություններ, քաղաքականություն, սպորտ, զանազան մասնագիտություններ ևն: Դրանցից յուրաքանչյուրն ունի տերմինաբանական իր ենթահամակարգերը՝ գիտության ամենատարբեր ճյուղերը, հասարակական կյանքի տարբեր ոլորտները ևն: Դրանց միջև, սակայն, խիստ անջրպետ չկա: Կան տերմիններ, որոնք գործածվում են ամենատարբեր ոլորտներում կամ տերմինաշերտերում: Օրինակ՝ **արմատ** բառը տերմինային զանազան իմաստներով գործածվում է մաթեմատիկայում, լեզվաբանության մեջ, կենսաբանության որոշակի ճյուղերում, **սեռ** տերմինը՝ լեզվաբանության, մարդաբանության մեջ, **իմունիտետ**–ը՝ իրավագիտության, դիվանագիտության և բժշկագիտության մեջ, **նյութ**–ը՝ իրավաբանության մեջ, քիմիայում, լրագրության ասպարեզում և այլուր:

Ասվեց, որ տերմիններին բնորոշ չէ հոմանշությունը, և տերմինային հոմանշության մասին խոսելիս այն հստակորեն պիտի առանձնացնել ընդհանուր բառագիտական հոմանշությունից: Եղուարդ Աղայանը նկատում է, որ երևույթը գնահատելիս պետք է հաշվի առնել, որ գիտական տերմինաբանության մեջ տերմինների զանազան կարգի տարբերակումները, ըստ գործառության, իմաստային նրբությունների կամ երանգավորման, ոճական–ար-

¹³ Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976:

տահայտչական նրբերանգների և այլն, հակասում են տերմինագործածության պահանջներին: «Իմաստային նրբություններով տարբերակում լինել չի կարող,— գրում է լեզվաբանը,— որովհետև տերմինը պետք է որոշակիորեն տարբերակված հասկացություն արտահայտի հասկացությունների ամբողջ համակարգի մեջ. եթե տվյալ իմաստային տարբերությունը մի տարբեր հասկացություն է արտահայտում տվյալ տերմինահամակարգում, ապա մենք գործ ունենք ոչ թե իմաստային նրբերանգի հետ, ոչ թե տերմինային նույնիմաստության հետ, այլ պարզապես ունենք տարբեր տերմիններ»¹⁴:

Այսպես, օրինակ՝ չկանոնարկված խոսքում **կողոպուտ, գողություն, ավազակություն** բառերը հոմանիշներ են: Ըստ հոմանիշների բառարանի՝ դրանք իրենց առաջին՝ հիմնական նշանակությամբ նույնիմաստ բառեր են. «**ԳՈՂՈՒԹՅՈՒՆ. 1. Կողոպուտ, թալան, կողոպտություն, հափշտակություն, ավազակություն**»¹⁵: Մինչդեռ ՀՀ քրեական օրենսգիրքը դրանց համար տալիս է իրարից էապես տարբեր ձևակերպումներ: Իսկ դա իր հերթին հանցագործության այդ տեսակների համար ենթադրում է միանգամայն տարբեր պատիժներ՝ տարբեր հոդվածներով: Պատկերացում տալու համար քրեական օրենսգրքից մեջ բերենք հոդվածների առաջին մասերը (ընդգծ.՝ Յու. Ա.).

Հոդված 175. Ավազակությունը

1. **Ավազակությունը՝ ուրիշի գույքը հափշտակելու նպատակով հարձակումը**, որը կատարվել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

¹⁴ Է. Աղայան, Տերմինագիտություն, Եր., 1978, էջ 47:

¹⁵ Ա. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Եր., 2009:

Հոդված 176. Կողոպուտը

1. **Կողոպուտը՝ ուրիշի գույքի բացահայտ հափշտակությունը**, պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից վեցհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

Հոդված 177. Գողությունը

1. **Գողությունը՝ ուրիշի գույքի գաղտնի հափշտակությունը**, զգալի չափերով՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով¹⁶:

Ինչպես տեսնում ենք, իրավաբանական տերմինային համակարգում նշված երեք բառերը ակնհայտորեն տարբեր տերմիններ են:

Մեկ այլ օրինակ: Չկանոնարկված խոսքում հոմանշային բառախմբի անդամներ են համարվում **հանցագործ, ոճրագործ, մեղապարտ, զանցառու, թիապարտ, մեղավոր, հանցավոր, գեհեճակից, մեղսակից, մեղադրակից** և մերժիմաստ մի շարք այլ բառեր: Մինչդեռ իրավաբանական գրականության մեջ դրանք հոմանշային շարքի անդամներ չեն: Նախ՝ նշված շարքի ոչ բոլոր անդամներն են գործածական տերմինային համակարգում. օրինակ՝ գործառապես իրավաբանական բառապաշարին չեն պատկանում, **մեղապարտ, զանցառու, թիապարտ, դատապարտակից, մեղադրակից, մեղսագործ, գեհեճակից, մեղսակից** և նման բառերը. դրանց մի մասը ոճական տեսակետից ակնհայտորեն նշույթավոր է և պատկանում է գեղարվեստական բառապաշարին: Մյուսները ուղղակի տարբեր տերմիններ են, օրինակ՝ **մեղսակից** բառը ոչ միայն իմաստային ակնհայտ տարբերություն ունի **ոճրագործ** և **թիապարտ** բառերից, այլև իմաստային նույնություն չունի **հանցավոր** բառի հետ. առաջինը՝ **մեղսակից**–ը, նշանակում է **հանցանքին մասնակից**, երկրորդը՝ **հանցավոր**–ը, **հանցանք գործող՝ գործած, հանցագործ: Հանցագործ** և **հանցավոր**

¹⁶ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք», Եր., 2009, էջ 91–92:

բառերը իմաստով համընկնում են միայն իրենց ածականական նշանակությամբ՝ **հանցանք պարունակող, ինչպես՝ հանցավոր խմբակցություն / հանցագործ խմբակցություն, հանցագործ աշխարհ / հանցավոր աշխարհ** և այլն: Իմաստային տարբերություններ ունեն նաև **հանցավոր** և **մեղավոր** բառերը: Ակնհայտ է, որ մասնագիտական խոսքում դրանք փոխադարձ փոխարինելի միավորներ չեն: Սկզբունքորեն փոխարինելի միավորներ չեն նաև **հանցավորությունը** և **հանցագործությունը**: Առաջինը հանցավորության հատկանիշներ պարունակելն է, երկրորդը՝ մեղավորությամբ կատարված, հանրության համար վտանգավոր այն արարքը, որը նախատեսված է քրեական օրենսգրքով: Դրանցից յուրաքանչյուրը տերմինային համակարգում հանդես է գալիս իր կայուն կապակցական դերով, ինչպես՝

հանցավոր. հանցավոր համաձայնության գալ, հանցավոր արարք, հանցավոր ոտնձգություն, հանցավոր համագործակցություն, հանցավոր գործարք, հանցավոր ոլորտ, հանցավոր շահ, հանցավոր անփութություն, կազմակերպված հանցավոր գործունեություն,

հանցագործ. հանցագործ դառնալ, վտանգավոր հանցագործ, քաղաքական հանցագործ, քրեական հանցագործ, պատերազմի հանցագործ, պետական հանցագործ,

հանցագործություն. հանցագործության պահին, անձի դեմ կատարված հանցագործություն, հանցագործության հատկանիշներ, սեփականության դեմ ուղղված հանցագործություններ, տնտեսական հանցագործություն,

հանցավորություն. պայքար հանցավորության դեմ, ընդհատակյա հանցավորություն, հանցավորության գործոն, հանցավորության ոլորտ, հանցավորությունը որպես սոցիալական երևույթ:

Տերմինների առաջացման ուղիները տարբեր են: Հայերենում կարելի է առանձնացնել հետևյալները.

1. **Բառակազմական միջոցներ:** Հայերենի տերմինաբանության հարստացման հիմնական աղբյուրն է: Բառակազմական գործիչ կաղապարներով հայերենում ստեղծվել են հազարավոր

տերմիններ: Բերենք մեկ-երկու օրինակ: **Քրեագետ, քրեածին, քրեական, քրեաբանություն, քրեորեն** իրավաբանական տերմինները բառաբարդմամբ և կամ ածանցմամբ կազմվել են հնում գործածական **քուրայ** հիմք բառից, որը սկզբնապես նշանակել է «Հալոց. բովք. վառարան հնոցի», մետաղ հալեցնելու տեղ: Նմանապես՝ **իրավ (իրաւ)** բառակազմական հիմքից կազմվել են իրավաբանական տասնյակ տերմիններ. ծագել է **իր** (բան, մի բան) բառից, որի գրաբար գործիական հոլովն է **իրաւ** (հոգն. գործ.՝ **իրաւք (իրօք)**): Գրաբարում **իրաւ**–ը ուներ ինքնուրույն գործածություն և նշանակում էր **արդարացիորեն, հավաստյալ, իրավամբ** («Անիրաւն իբրեւ արժանի արդարացաւ, եւ իրաւն իբրեւ զախոյեան ստացաւ»): Այսօր գործածվում է **մակբայական** (իսկապես, արդարև) և **ածականական** (իսկական, արդար, արդարացի) նշանակություններով: Բառակազմական կենսունակ բաղադրիչ լինելով՝ դեռևս գրաբարում բաղադրել է բազմաթիվ բառեր՝ **իրաւաբանեմ, իրաւաբանութիւն, իրաւաբար, իրաւաբեր, իրաւադատ, իրաւադատութիւն, իրաւագիտութիւն, իրաւական, իրաւախօս, իրաւարար, իրաւարարութիւն** ևն:

2. **Բառիմաստի փոփոխություն:** Համագործածական բառը վերածվում է տերմինի. տեղի է ունենում բառիմաստի նեղացում, օր.՝ **բազմություն, գիծ, կետ, հանում, հարթություն, շոշափող** (մաթեմատիկա), **ընտրություն, ժողով, խորհուրդ, կառավարում, ճնշում, ներկայացուցիչ** (քաղաքագիտություն), **ծառայություն, հյուրընկալ, նստավայր, սուրհանդակ, օղակ** (դիվանագիտություն), **բողոք, գողություն, գործ, ներում, վկա, վճիռ, սպանություն** (իրավագիտություն), **արծաթ, թթու, ջուր, մետաղ** (քիմիա) ևն: Տեղի է ունենում նաև հակառակ գործընթացը. իրենց հերթին տերմինները կարող են վերածվել համագործածական բառերի, ինչպես՝ **բռնարարք, ինքնիշխան, համակարգիչ, խճանկար, հեռախոս, հեռատեսություն, ռոմանտիկ, վրձին, վայրէջք** ևն:

3. **Փոխառություններ:** Հայերենի տերմինաբանության հարստացման հիմնական աղբյուրներից մեկն է: Հայերենը այլ լեզու-

ներից փոխառել է գիտության տարբեր բնագավառներին վերաբերող հազարավոր տերմիններ՝ **դուժա, ինտեգրալ, կապիտալիզմ, կիրթնետիկա, կոնգրես, մարքսիզմ, նեոռոմանտիզմ, սենատ, վոլտ, քվանտ** ևն: Վերջին շրջանում փոխառված տերմիններ են՝ **ալյանս** (միություն, դաշինք), **ակտ** (իրավագիր), **ակցեպտ** (հոժարագիր), **բոն** (դրամանիշ, արժետոմս), **դիսկրեցիա** (հայեցողություն), **կոալիցիա** (պետությունների, կուսակցությունների միավորում՝ ընդհանուր նպատակների շուրջ), **կոդեքս** (օրենսգիրք), **կոլեգիալ** (համավար), **կոնսենսուս** (միաձայնություն), **պարիտետ** (հավասարիրավություն), **ցեսիա** (կամարտահայտություն, հանձնարարական), **ֆրանչայզինգ** (իրավագործում, առանձնաշնորհ) ևն:

4. Գրաբարից և միջին հայերենից փոխանցված բառեր: Հնից եկած բառերն ու բառաձևերը տերմինացման են ենթարկվում նույն իմաստներով կամ, որ ավելի հաճախադեպ է, իմաստափոխությամբ, ինչպես՝ **դեղ** բառը մինչև բժշկագիտական տերմին դառնալը նշանակել է խոտ, **քարտեզ** նշանակել է մագաղաթի կամ թղթի կտոր, նամակ, հրովարտակ, գիրք, մատյան, **արբանյակ**՝ ժիր սպասավոր, պատանյակ, համբակ, ծառա, պաշտոնյա, **հրծիգ**՝ հրկիզող, **օդաչու**՝ օդախաղաց, օդագնաց («որ չու է ընդ օդս»), **մարշալ**՝ իշխան, զորավար, **օդապարիկ**՝ օդագնաց («Որ պարէ ընդ օդս»), **գնացք** («իբր ճեմելիք, ընթացք վարուց և գործոց») ևն:

5. Բարբառային բառեր: Դրանց տերմինացումը կենսունակ միջոց չէ և հիմնականում հանդիպում է որոշակի ոլորտներում՝ գյուղատնտեսություն, բժշկագիտություն, արհեստագործություն ևն՝ **այգեբաց, այգեէտ, աշնանացան, սղոց, գերանդի, մանգաղ, բահ, էտել, կանաչ կապ, դեղնախտ, կարմրուկ, կարմիր քամի** ևն¹⁷:

Տերմինաբանությունը լայն իմաստով տվյալ լեզվի տերմինների ամբողջությունն է, նեղ իմաստով՝ բառագիտության այն բաժինը

¹⁷ Տերմինների և տերմինաբանության մասին տե՛ս **Էդ. Աղայան**, Տերմինագիտություն, Եր., 1978, **Ա. Սուքիասյան**, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1999:

(= տերմինագիտություն), որն զբաղվում է տերմինների տեսության և կիրառության հարցերով: Առհասարակ, լեզվի տերմինային համակարգը պարբերաբար պիտի մշակվի, կանոնակարգվի և հարստացվի: Դա հիմնականում իրագործվում է տերմինաբանական կոմիտեի, հայերենի բարձրագույն խորհրդի, տերմինաբանական ճյուղային հանձնաժողովների միջոցով, որոնցում ընդգրկված են լինում ինչպես լեզվաբաններ, այնպես էլ տարբեր բնագավառների առաջատար մասնագետներ ու գիտնականներ:

Իմաստափոխություն: Լեզվի պատմական զարգացման ընթացքում բառերի իմաստները հաճախ ենթարկվում են փոփոխությունների: Դրանք սովորաբար լինում են երեք կարգի.

1. Բառիմաստի ընդլայնում. իմաստափոխական այն երևույթն է, երբ բառը, պահպանելով կամ մթազնելով իր նախկին՝ սկզբնական իմաստը, ձեռք է բերում նոր՝ լրացական իմաստ(ներ): Օրինակ՝ **հարազատ** բառը նախապես նշանակել է «մեկ հոր զաւակ, եղբայր կամ քոյր», «նոյն հորից և մորից ծնուած, արիւնակից», ապա՝ «մտերիմ, ազգակից, սիրելի»: **Բարեկամ** սկզբնապես նշանակել է «բարիք կամեցող մեկին, բարեացական», ապա՝ «ազգական, մտերիմ մարդ, դիվանագիտական լավ հարաբերությունների մեջ գտնվող» ևն: **Կառավարել** բառը սկզբնապես նշանակել է «կառք վարել» քշել», հետագայում ձեռք է բերել ընդհանրապես ղեկավարելու, վարելու իմաստ՝ «1. Երկիր՝ պետություն ղեկավարել՝ գլխավորել: 2. Գործունեությունը ղեկավարել, վարել, տնօրինել: 3. Խնամել, հոգ տանել» ևն: **Կանգնել** (// կանգնիլ) գրաբարում նշանակել է «Կառուցանել, հաստատել, զարդարել, շէն պահել, նորոգել», նաև՝ «Ձկայ առնուլ, դադարել, հանդարտիլ»: Բառը թեև կորցրել է իր առաջնային՝ նախնական իմաստը, բայց արդի հայերենում գործածվում է քսանից ավելի **նոր իմաստներով**՝ վեր կենալ, անշարժ ոտքի վրա մնալ, անշարժ վիճակում գտնվել, հավասարակշռությունը պահել, տեղում մնալ, սպասել, գտնվել, տեղ գրավել, խոյանալ, վեր հառնել, միավորվել, հաստատվել, որևէ աշխատանքի լծվել, ընդդիմադիր լինել ևն: Այդպես իրենց իմաստ-

ներն ընդլայնել են բազմաթիվ բառեր՝ **բանավոր, աթոռ, ամբիոն, արջ, նկարել, լսել, սեղան, չար, աշխարհ, դաշտ, զամբյուղ, խողովակ, հոսք, ծյուղ, թիրախ** ևն: Բառիմաստի ընդլայնում է նաև հատուկ անվան՝ հասարակ անվան վերածվելը: Օրինակ՝ **հուղա** նշանակում է մատնիչ, դավաճան (Քրիստոսի աշակերտ ու մատնիչ Հուդայի անունից): Նմանապես՝ **լիտր** – հեղուկի չափի միավոր, **խիկար** – իմաստուն, **կայսր** – արքա, թագավոր, **հերց** – պարբերական տատանումների հաճախականության միավոր, **նազար** – վախկոտ, բախտի բերմամբ մեծ բանի արժանացած, **նեռ** – նենգ, չար մարդ, **նյուտոն** – ուժի միավոր, **պասկալ** – ճնշման միավոր, **ջոուլ** – աշխատանքի, էներգիայի և ջերմության քանակի միավոր, **վասակ** – դավաճան, **վատտ** – էլեկտրական հոսանքի հզորությունը չափելու միավոր, **վեբեր** – մագնիսական հոսքի միավոր ևն:

2. Բառիմաստի նեղացում. բառը ժամանակի ընթացքում ձեռք է բերում ավելի նեղ՝ մասնավորված իմաստ(ներ)՝ պահելով կամ կորցնելով իր նախնական իմաստը: Օրինակ՝ **ատենախոս** բառը նախապես նշանակել է ատենաբան՝ «Ատյանում ճառող, հռետոր, հրապարակական տեղերում հասարակության առաջ մի հարցի մասին խոսող»¹⁸, այժմ ունի «Գիտական աստիճան ստանալու համար գիտական թեզ պաշտպանող (դիսերտանտ)» իմաստը¹⁹: **Ոստիկան** պահլավերեն բառը նշանակել է վերակացու, հրամանատար, հոգաբարձու, իշխան, կառավարող ևն: Նոր իմաստը՝ «կարգապահություն հսկող հասարակ քաղաքապահ»: **Վերարկու** բառը սկզբնապես նշանակել է առհասարակ արտահագուստ՝ «Ինչ որ վրայից ձգվում է: 1. Ծածկոյթ, ծածկոց: 2. Անկողնի ծածկոյթ: 3. Վերմակ: 4. Գլխի քող: 5. Կապերտ, օթոց: 6. Անասունների մորթի» ևն: Արդի հայերենում գործածվում է «Կոստյումի՝ զգեստի վրայից հագնելու երկար հագուստ» նշանակությամբ: **Համբակ** նշանակել է «1. Երախայ, նորածին մանուկ: 2. Տղայ, մանուկ: 3. Ջուրակ, որդի: 4. Աշակերտ» ևն, հետագայում՝ **թերուս:** Իմաս-

տի նեղացում են ունեցել **թռչուն** (սկզբնապես՝ «նա, որ թռչում է, ընդունակ է թռչելու...», արագասլաց), **կաղ** («որևիցե անդամով պակասաւոր, խեղ... այսպէս՝ «լեզուաւ կաղ), **հավ** («ընդհանրապէս թռչուն, ...հաւք»), **հեղինակ** («առաջնորդ, գլխավոր, վարիչ, ...պետ, իշխան»), **հոլով** («թաւալում, գլորում, շրջան»), **կարդալ** («ծայնել, գոչել, աղաղակել, հրաւիրել, կանչել, հորջորջել») և բազմաթիվ այլ բառեր:

Ծանոթություն: Բառիմաստի նեղացում կարելի է համարել նաև հասարակ անվան վերածվելը հատուկ անվան՝ **Ազատ, Ծաղիկ, Նարգիզ, Վարուժան, Վրեժ** ևն:

3. Բառիմաստի շրջում և վերաիմաստավորում. բառը, պահպանելով կամ կորցնելով նախնական իմաստը, ձեռք է բերում նախկին իմաստին հակառակ իմաստ կամ իմաստային այլևայլ նրբերանգներ: Օրինակ՝ **հանդես** նշանակել է հրապարակային քննություն, ատյան, դատ, ապացույց, տեսարան, հրապարակ, մրցարան, քաջագործություն, զորահամար ևն, այժմ՝ զանգվածային տոն, տոնախմբություն, մշակութային զանգվածային միջոցառում, պարբերական հրատարակություն ևն: **Հայց** նախապես՝ «1. Խնդրանք, աղաչանք: 2. Հարցուփորձ, քննություն» (հայցել – խնդրել), այժմ նաև՝ «1. (Իրավք.). քաղաքացիական իրավունքների պաշտպանության պահանջով դատարանին ներկայացվող գործ»: **Իմաստակ** սկզբնապես նշանակել է «Այն՝ որ համարեալ է որպէս իմաստուն կամ իմաստասէր ոք և գրագէտ, ճարտասան» ևն, այժմ՝ թերուս, տգետ, բայց իրեն իբրև գիտուն ներկայացնող մարդ: Նմանապես՝ **հարուստ**՝ զորեղ, ուժով, գեր, ավագ, ազնվական > ունևոր, ունեցվածքի տեր, **պարապել**՝ պարապ լինել > մի գործով զբաղվել, մի բան սովորել, **ապրել**՝ ազատվել, փրկվել > կյանք վարել, կենցաղավարել, **նահատակ**՝ կռվի մեջ առաջամարտիկ > վեժ գաղափարի համար կյանքը զոհած մարդ, զոհ, **աշխատել**՝ հոգնել, նեղություն կրել > գործ անել, զբաղվել, **սիրուն**՝ սեր ունեցող,

¹⁸ Տե՛ս Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, հ. I, Եր., 1944:

¹⁹ Տե՛ս Ս. Էլոյան, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Եր., 2002:

սեր կրող > գեղեցիկ, դուրեկան, **նվագ**՝ անգամ, հեղ > եղանակ, երաժշտություն, **տաղ**՝ խոսք, պատմություն > երգ, խաղ ևն:

ԲԱՌԵՐԻ ԶԵՎԱԻՄԱՍՏԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ: Ըստ ձևի և իմաստի փոխհարաբերության՝ բառերը լինում են՝ **հոմանիշներ, համանուններ, հարանուններ, հականիշներ:**

Հոմանիշներ: Արտաքին–հնչյունական կազմով տարբեր, սակայն իմաստով նույն կամ մոտ բառերն են: Երբեմն միմյանցից տարանջատում են իմաստով նույն և մոտ բառերը՝ առաջինները անվանելով **նույնանիշներ**, ինչպես՝ ուժեղ – հուժկու, նորից – վերստին – կրկին – նորեն, արև – արեգակ – արփի, Նոր տարի – Ամանոր, մազ – հեր – գես, արդ – հիմա – այժմ, ժուռնալիստ – լրագրող, ոտնձգություն – ոտնձգում ևն, երկրորդները՝ **համանիշներ**՝ կանգնեցնել – կասեցնել, օգնել – օժանդակել – նպաստել – սատարել, ազատել – ազատագրել, տույժ – տուգանք, երագ – ցնորք – անուրջ, քննել – զննել, երգ – տաղ – խաղ, ձի – մժույզ, հանցավոր – հանցակից – մեղսակից – հանցագործ ևն: Իրականում, սակայն, լեզվում դժվար է գտնել բացարձակապես նույնիմաստ բառեր. նույնիսկ նույնանիշ կոչվածները իրարից զանազանվում են գործառական յուրահատկություններով կամ իմաստային նրբերանգներով, ունեն արտահայտչական–վերաբերմունքային, կապակցական որոշակի տարբերություններ: Օրինակ՝ **լուսամուտ** և **պատուհան** բառերը իբրև թե համարվում են նույնանիշներ: Սակայն դրանց միջև կա կիրառության ոլորտի որոշակի տարբերություն. առաջինը առավելապես գործածական է արևելահայերենում և ի տարբերություն իր հոմանշային զույգի՝ ունի խոսակցական երանգ գրական արևելահայերենի նորմերի տեսանկյունից: **Պատուհան**–ը ունի նրբիմաստներ, որոնք արձանագրված չեն **լուսամուտ**–ի դիմաց: Օրինակ՝ «3. Պատի մեջ սարքած պահարան: 6. փխբ. Դասախոսի՝ ուսուցչի և պարապ՝ ազատ ժամ»²⁰ ևն: Կամ՝ **հեռատեսիլ / հեռուստացույց** հոմանշային շարքի առաջին եզրը գործածվում է միայն արևմտահայերենում, մյու-

սը՝ արևելահայերենում: Մեկ այլ օրինակ՝ **պարբերաբար** և **ժամանակ առ ժամանակ** հոմանիշ բառերը ունեն իմաստային էական տարբերություն. առաջինը նշանակում է որոշակի և հաստատուն հաճախականությամբ, երկրորդը՝ երբեմն–երբեմն, ոչ հաճախ: **Կրակ / հուր** զույգից առաջինը համագործածական բառ է, երկրորդը՝ գրական–գրքային, բարձր ոճի բառ է, զգացական–աստիճանական նշանակությամբ փոքր–ինչ տարբեր **կրակ**–ից: **Վիզ / պարանոց / ճիտ** շարքը ստեղծված է խոսակցական–գրական–բարբառ իմաստային զուգահեռով կամ հակադրությամբ: **Իրավաբան / իրավագետ**–ը իմաստային զանազանություն ունեն. առաջինը ընդհանուր իրավաբանական կրթություն ունեցող անձն է, երկրորդը՝ իրավագիտության մասնագետ, օրենքի գիտակ, մասնագետ–գիտնական:

Այնուամենայնիվ, համանիշները առանձնացնելով նույնանիշներից՝ մասնագետները նշում են դրանց նաև այլ հատկանիշներ՝ տարաստիճան իմաստներ արտահայտելը, ինչպես՝ **եղեռն – նախաճիր – կոտորած – սպանդ – սպանություն** ևն, իրենց շարքում ավելի շատ բառեր ներառելը՝ **ձի – գրաստ – մժույզ – երիվար – հովատակ – մտրուկ – վարգուն – աշխետ – սևուկ** ևն:

Հոմանիշներն արտահայտվում են հայերենի գրեթե բոլոր խոսքի մասերով (հոմանշային խիստ սակավ տարբերակներ ունեն թվականները՝ գրաբարյան, արևելահայերեն և արևմտահայերեն կամ այլ զուգածներով՝ **տասներկու–երկուտասան–տասնևերկու, տասնչորսերորդ–տասնչորրորդ, մեկական – մեկ–մեկ** ևն): Քանակային և որակային մեծ կշիռ ունեն գոյականով, բայով և ածականով արտահայտված հոմանիշները:

Ըստ իրենց արտահայտության ձևի՝ հոմանիշները լինում են **բառային** և **քերականական**: Առաջինները իմաստով իրար մոտ բառային միավորներ են՝ **վախ – երկյուղ – սարսափ, անպատեհ – անժամանակ** ևն, երկրորդները նույն իմաստն արտահայտող քերականական իրողություններ են՝ բառաձևեր՝ **պարոնայք – պարոններ, օրի – օրվա, գրե՛ք – գրեցե՛ք, մի՛ ել – մի՛**

²⁰ Տե՛ս էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976:

ելիր, շարժումով – շարժմամբ, շարահյուսական հոմանշային կառույցներ՝ ներգործական և կրավորական կառուցվածքի նախադասություններ՝ **ես գրեցի դիմում:** > **Դիմում գրվեց իմ կողմից,** ուրիշի ուղղակի և անուղղակի խոսք՝ **Մտածում էր.** «Արդյոք ճիշտ վարվեցի»: > **Մտածում էր՝ արդյոք ինքը ճիշտ վարվեց,** դերբայական դարձվածով պարզ նախադասություն և բարդ ստորադասական նախադասություն՝ **Իրերը դասավորելիս դրսից աղմուկ լսեց:** > **Երբ իրերն էր դասավորում, դրսից աղմուկ լսեց** ևն:

Ըստ ձևավորման և գործածության՝ լինում են **լեզվական և խոսքային:** Առաջինները հոմանիշներ են նաև լեզվական մակարդակում՝ իբրև բառարանային միավորներ (վեհ – խրոխտ, գրավիչ – առիքնող), երկրորդները լեզվական–բառարանային մակարդակում հոմանիշներ չեն, իբրև իմաստով մոտ բառեր են հանդես գալիս խոսքային միջավայրում, համատեքստում: Օրինակ՝ «Եվ օրերի հեռվում ես տեսնում եմ միայն մոռացություն, մոխիր, **Ստրկություն ու մահ եվ երկրային ընթացք** մի անիմաստ...»: Ակնհայտ է, որ ընդգծված բառերը հոմանշային որևէ բառարանում նշված չեն կարող լինել որպես հոմանիշներ, սակայն ոճական–արտահայտչական ինչ–ինչ նպատակներով (որոնց մասին կխոսվի հետագայում՝ հոմանիշների ոճական կիրառությունները բացատրելիս) Չարենցը դրանք գործածում է որպես խոսքային կամ համատեքստային հոմանիշներ:

Հոմանիշների շփոթություն: Իրար փոխարինող հոմանիշներից մեկը կամ մյուսը գործածելը ոճական խնդիր է, քանի որ դրանցից յուրաքանչյուրը յուրովի է երանգավորում խոսքը, դառնում որոշակի վերաբերմունքի արտահայտման միջոց: Իրար չփոխարինող հոմանիշների շփոթությունը պարզապես **բառագործածության սխալ** է, որ ստեղծում է անճիշտ խոսք: Հոմանիշները, ինչպես ասվեց, սովորաբար միմյանցից տարբերվում են իմաստային–ոճական նրբերանգներով և կամ կապակցելիության սահմանափակումներով: Հոմանիշ բառերը միշտ չէ, որ կարող են

իրար փոխարինել խոսքային նույն կառույցում, քանի որ դրանք խոսքային միջավայրում երբեմն դրսևորում են **կապակցական անհամատեղելիություն:** Օրինակ՝ Համերգը **տեղափոխվել է** մեկ ամսով: Այստեղ խոսքը ժամկետի տեղափոխման մասին է, որն արտահայտվում է **հետաձգել** բառով: Եիշտ ձևակերպումը հետևյալն է՝ Համերգը **հետաձգվել է** մեկ ամսով:

Հանրային և հասարակական բառերը, ըստ բառարանային տվյալների, հոմանիշներ են: **Հանրային.** «Ընդհանուրի, հասարակական, համայնական, բոլորին պատկանող»: **Հասարակական.** «1. Հանրային, ընդհանուրին կամ ամբողջ հասարակությանը վերաբերող, ժողովրդային: 2. Հասարակության՝ բոլորի օգտագործման համար ստեղծված՝ նշանակված»²¹: Խոսքային առանձին կառույցներում, իհարկե, սրանք կարող են փոխարինել միմյանց, ինչպես՝ **հանրային սեփականություն // հասարակական սեփականություն, հանրային կյանք // հասարակական կյանք:** Սակայն խոսքային շատ կառույցներում դրանք իրար չեն փոխարինում. օրինակ՝ անճիշտ ձևակերպումներ են՝ **հանրային** (← հասարակական) **վայրեր, հանրային** (← հասարակական) **կարծիք, հանրային** (← հասարակական) **հարաբերություններ, հանրային** (← հասարակական) **կառուցվածք, հասարակական** (← հանրային) **գրադարան, հասարակական** (← հանրային) **տնտեսություն** ևն: **Հասարակական** բառի փոխարինելիությունը բացառվում է նրա՝ տերմինային՝ իրավաբանական նշանակությամբ գործածություններում՝ **հասարակական մեղադրող, հասարակական պաշտպան, հասարակական ներգործության միջոցներ** ևն:

Այլ օրինակներ՝ Նման մեղադրանքներ չես կարող **ասել** (← ներկայացնել) այդ մարդուն: Կատարված խախտումների վերաբերյալ **ստեղծվեց** (← կազմվեց) արձանագրություն: Իրանը իր գորակցությունը **արտահայտեց** (← հայտնեց) Հայաստանին: Արարքում մեղքի **գոյությունը** (← առկայությունը) վկայում է հան-

²¹ «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հատոր III, Եր., 1974:

ցագործության մասին: Դժվարությամբ հաջողվեց **ազատագրել** (← ազատել) նրան այդ դրությունից: Սղաճը անհնար է **կանգնեցնել** (← կասեցնել): Գործի վարույթը **կանգնեցնել** (← կասեցնել): Այդ հանգամանքը ևս **նպաստեց** (< պատճառ դարձավ), որ տնտեսական մեր նոր ծրագիրը ձախողվի: **Հնօրյա** (← Հինավուրց) մի գրույց կա: Իրականացվեց տեղանքի **քննություն** (← զննություն): Դժվար է որոշել նախատեսվող **տույժի** (← տուգանքի) չափը: **Դատարկ** (← Թափուր) տեղերի համար մրցույթ է հայտարարված: Վերջացրել (← Ավարտել) է համալսարանի իրավագիտության ֆակուլտետը: **Ավարտվեց** (// **Վերջացավ**) (← Դադարեց) բնակչության արտահոսքը: Ուսումը **վերջացնելուց** (← ավարտելուց) հետո որևէ տեղ չի աշխատել: **Վերջացավ** (← Ավարտվեց) հիդրոկայանի շինարարությունը: Եթե նախագահը **զնում է** (← դիմում է) այդ քայլին... Փոխհրաձգության **արդյունքում** (← պատճառով) վիրավորվեց երկու, և զոհվեց մեկ մարդ: Լուրջ հիմքեր են պետք նրան դավաճան **որակավորելու** (← որակելու) համար:

Բառակազմական հոմանիշները (ստացվել են բաղադրիչների տարբեր համակցություններով՝ **լեզվային** // **լեզվական, տեղափոխել** // **փոխատեղել**) երբեմն ունենում են կապակցական յուրահատկություններ, տարբերվում են այս կամ այն բառի հետ գործածվելու սահմանափակումով:

–ական և **–ային** ածանցներն ունեն վերաբերական կամ ստացական նշանակություն: Դրանք երբեմն, նույն գոյական հիմքի վրա դրվելով, կազմում են զուգադիր բառեր: Ունեն ընդհանուր–վերաբերական իմաստ՝ մի բանին վերաբերող, մի բանին հատուկ, սակայն նաև դրսևորում են իմաստային մասնակի տարբերություններ. **–ային**–ով կազմությունները ցույց են տալիս բառահիմք գոյականի բնույթից, էությունից բխող հատկանիշ, **–ական**–ով կազմությունները՝ այդ գոյականին առհասարակ հատուկ հատկանիշ կամ իրողություն:

Այսպես՝ **դրամային** բառը (որը, ի դեպ, նորակազմություն է) նշանակում է **դրամ**–ի բուն էությանը ու բնույթով պայմանավոր-

ված, դրանից բխող, **դրամական**–ը՝ առհասարակ դրամի ոլորտին վերաբերող: Առաջինն ունի նեղ՝ տերմինային իմաստ՝ **դրամային դրամական** բազա, **դրամական** զանգվածի դրամային մաս, **դրամային դրամական զանգված**, երկրորդը՝ ավելի ընդհանրական–հատկացական (հատկացում ցույց տվող) նշանակություն՝ **դրամական** բազա, **դրամական** շուկա, **դրամական** բազմարկիչ:

Առևտրային նշանակում է առևտրին վերաբերող, առևտրից սերող՝ **առևտրային բանկ, առևտրային** գործարք, **առևտրային** կապիտալ: **Առևտրական**՝ առևտրին հատուկ, առևտրի ոլորտին վերաբերող՝ **առևտրական** գործակալություն, **առևտրական** ուղիներ:

Որակային նշանակում է որակի բնույթ ունեցող, որպիսություն ցույց տվող՝ **որակային տարբերություններ**: **Որակական**՝ որակին հատուկ, որակը բնութագրող՝ **որակական փոփոխություններ, որակական տեղաշարժեր, որակական բարձր հատկանիշներ**:

Այլ օրինակներ՝ **թվական** առավելություն – բնակչության **թվային** կազմ, **թվային** տվյալներ, **թվային** եղանակ, **խորհրդարանական** քննարկումներ – **խորհրդարանային** մտածողություն, մտածելակերպ (մենտալիտետ), **պաշտոնական** այցելություն – աշխատողների **պաշտոնային** համապատասխանելիությունը, **տեղական** կառավարման մարմիններ – **տեղային** մերսում, **տեղային** անզգայացում, **տեղային** պայմաններ, **տնական** հոգսեր – **տնային** կառավարչություն, **տնային** արգելք, **քանակական** գերակշռություն – **քանակային** ցուցանիշ:

Համանուններ: Ձևով, այսինքն՝ արտաքին–հնչյունական կազմով նույն, բայց իմաստով տարբեր բառերն են: Համանունների առաջացման ամենակենսունակ ուղին բառի բազմիմաստության հիմքի վրա առաջացած համանունությունն է, ինչպես՝ **փող** – տաբատի փողք, հրացանի փող, վիզ, երաժշտական գործիք, շեփոր, **տուն** – բանաստեղծության հատված՝ տուն, բնակության տեղ, կառույց, **հող** – կապ, շաղկապ, զոդ, գոյականի վրա դրվող մաս-

նիկ, կենդանիների մարմնի կռճիկների շարժական միացման տեղ: Դրանք կարելի է անվանել նույնարմատ համանուններ:

Ծանոթություն: Այս շարքին կարելի է դասել նաև այն համանունները, որոնք հասարակ – հատուկ անուն փոխանցումների արդյունքում են ձևավորվել, ինչպես՝ **արև – Արև, անդրանիկ – Անդրանիկ, ոստան – Ոստան, այգեստան – Այգեստան:**

Մյուս խումբը տարարմատ համանուններն են: Համանուններ կան, որոնք առաջացել են հնչյունափոխության կամ ուղղագրական փոփոխությունների հետևանքով՝ **գետ (առու) – գետ (գիտեմալ), հօտ (ոչխարի) – հոտ (բույր), յարկ (տուրք) – հարկ (հարկաբաժին, տան հարկ), սէր (զգացմունք) – սեր (կաթի սեր):**

Համանունների մյուս մասը փոխառյալ և հայերեն բառերի ձևային պատահական նույնության հետևանք է՝ **փող (իբրև դրամական միջոց՝ պարսկերենից) – փող (երաժշտական փողային գործիք՝ բնիկ հայերեն), ամեն (բոլոր՝ բնիկ հայերեն) – ամեն (կրոնական՝ եբրայերենից), գոլ (մարզական տերմին՝ ռուսերենից) – գոլ (տաք, գաղջ):** Այս շարքին կարող են դասվել նաև արևելահայերենի և արևմտահայերենի որոշ բառային միավորների պատահական նույնությունից սերված համանունները՝ **հոն – այնտեղ և հոն – հատապտուղ, հող – այդտեղ և հող – կապ, զոդ ևն:**

Կան համանուններ, որոնք առաջացել են բառակազմական ճանապարհով՝ նման, բայց տարբեր բաղադրիչների միացությամբ, ինչպես՝ **ռազմավար (ռազմ + ավար՝ ռազմական ավար) և ռազմավար (ռազմ + ա + վար՝ զորավար), թթվասեր (թթու + ա + սեր (թթու սիրող)) և թթվասեր (թթու + ա + սեր (թթված սեր)):**

Որոշ համանունների ծագումը դժվար է որոշել. հնարավոր է՝ դրանք պատահական նմանության արդյունք են, ինչպես՝ **կույս (օրիորդ) – կույս (կողմ), այր (քարանձավ) – այր (տղամարդ) ևն:**

Համանունները, ըստ իրենց ձևության կազմի, լինում են մի քանի տեսակ՝ **բառային, բառաքերականական, քերականական: Բառային համանունները** ինքնուրույն բառային միավոր-

ներ են, ինչպես՝ **կետ (կենդանի) – կետ (միշ, նշան), անհատ (անձ) – անհատ (չհատնող), հանդերձ (հագուստ) – հանդերձ (միասին), վարել (ղեկավարել) – վարել (վար անել) ևն:** Բառային համանունների շարքը հիմնականում լինում է երկանդամ, թեև հանդիպում են նաև բազմանդամ համանուններ:

Բառաքերականական համանունների մի եզրը (համանունների շարքի մի անդամը) բառ է՝ բառային միավոր, մյուսը՝ քերականական ձև, ինչպես՝ **անցավ (առանց ցավի՝ բառ) – անցավ (անցնել բայի խոնարհված ձև՝ անցյալ կատարյալ), արի (քաջ) – արի (զալ բայի եզակի հրամայականը), կողակից (ամուսին) – կողակից (կողակ բառի բացառական հոլովածևր), ինձ (կենդանի) – ինձ (ես դերանվան տրական հոլովածևր), հորդ (հորդառատ) – հորդ (հայր բառի՝ սեռական ստացական կազմությունը), Հորդանան (օտար հատուկ անուն) – հորդանան (հորդանալ բայի ըղծականը):**

Քերականական համանունների անդամները քերականական նույնանման ձևեր են՝ հոլովածևր, խոնարհման կազմություններ ևն, ինչպես՝ **երգեր (երգ բառի հոգնակի թիվ) – երգեր (երգել բայի ըղծական անցյալի եզակի երրորդ դեմք), կարդա (կարդալ բայի եզակի հրամայական) – կարդա (ըղծական եղանակի ապառնի եզակի երրորդ դեմք) – կարդա (ժխտական դերբայ), երգել (վաղակատար դերբայ) – երգել (անորոշ դերբայ).** վերջինը վերաբերում է **ե** խոնարհման բոլոր պարզ բայերին:

Ըստ գրության և արտասանության՝ համանունները լինում են **համագիր և համահունչ:** Առաջինները գրությամբ նույն, բայց արտասանությամբ տարբեր համանուններ են, ինչպես՝ **պարս (մեղունների խումբ) – պարս (պարել բայի պար գոյականական մասի ստացականով կազմությունը՝ պար[ը]ս),** երկրորդները գրությամբ տարբեր, արտասանությամբ նույնական բառեր են, ինչպես՝ **անօդ (առանց օդի) – անոթ (խողովակ), աղտ (կեղտ) – ախտ (հիվանդություն), ուխտ (դաշինք) – ուղտ (կենդանի) ևն:**

Համանունները իբրև այդպիսին ընկալվում են միայն միասին գործածվելու դեպքում: Հետևաբար խոսքում դրանց ոճական դերը պայմանավորված է միայն համատեղ գործածությամբ:

Հարանուններ: Արտաքին հնչյունական կազմով մոտ կամ նման բառերն են: Իմաստային տեսակետից դրանք տարբեր կարգի հարաբերությունների մեջ են: Կան հարանուններ, որոնք ձևով տարբերվում են աննշան չափով, սակայն արտահայտում են նույն իմաստը: Դրանք նույն բառի տարբերակներ են և հավասարապես գործածելի են մեկը մյուսի փոխարեն, ինչպես՝ **անծնանվեր – անծնվեր, արթուն – զարթուն, արտասվալի – արտասվալից, բարեհնչյունություն – բարեհնչունություն, բարիություն – բարություն, զագաթնաժողով – զագաթաժողով, դարձվածք – դարձված, ընծեռել – ընծեռնել, թախծալի – թախծալից, հուզարտահայտչական – հուզաարտահայտչական, մեքենաբար – մեքենայաբար:** Սրանք մի տեսակ միջին դիրք են գրավում հոմանիշների և հարանունների միջև:

Կան հարանուններ, որոնք ունեն իմաստային ընդհանրություններ, բայց նույն իմաստը չեն արտահայտում: Ինչպես՝ **անծնագիր – անցագիր, գործոն – գործուն, գործունություն – գործունություն, դատավորություն – դատավարություն, զանցանք – հանցանք, կասկածելի – կասկածալի, հասկացողություն – հասկացություն, հետագա – ապագա, հրածիգ – հրծիգ, միաժամանակ – միառժամանակ, շառաչյուն – շառաչուն, վաղորդայն – վաղորդյան, տեղի տալ – տեղիք տալ, ցուցում – ցուցմունք, քննել – զննել** ևն: Սրանց կոչում են **բուն հարանուններ:**

Հարանուններ կան, որոնք իմաստային որևէ կապ կամ առնչություն չունեն և ձևով իրար նման են պատահականորեն: Հասկանալի է՝ մեկը մյուսի փոխարեն դրանց գործածությունը սխալ է և անթույլատրելի, ինչպես՝ **վարկ** (հեղինակություն) – **վարգ** (ծիու համաչափ վագր) – **վարք** (կենսագրություն, պահվածք), **կարճել** (դատական գործը դադարեցնել, խափանել) – **կառչել** (բռնել, մի բանից կառչել), կամ՝ **գիրք – գիրգ – գիրկ, ծաղկել – ծաղկել,**

կարգ – կառք, համառ – համար, վառել – վարել, հարթ – հարդ, հաղթել – մաղթել, կամքին – կամ կին ևն: Սրանց կոչում են **ծևալին հարանուններ:**

Հարանունների շփոթություն: Հարանունների ամենաբնորոշ հատկանիշը դրանց շփոթելիությունն է: Դա առավել հավանական է նույնարմատ հարանունների դեպքում: Ահա մի քանի օրինակ՝ խոսքը **բացարձակապես** (← **բացառապես**) երկու երկրների դիվանագիտական հարաբերությունների մասին է: Ընկալումը, զգացության հետ համեմատած, **զգացական** (← **զգայական**) իմացության ավելի բարդ ձև է: Քեզանից էր նա քաղում իր **զգացական** (← **զգայնական**) երջանկությունը: **Զգայնությունը** (← **զգայությունը**) օբյեկտիվ աշխարհի սուբյեկտիվ պատկերն է:

Հարանունները հաճախ շփոթվում են՝ առիթ տալով ուղղաբանական սխալների: Ուստի հատուկ ուշադրություն պետք է դարձնել դրանց գրությանը՝ **ամենօրյա – ամանօրյա, վարք – վարկ, խոխոջյուն – խոխոջուն:** Հարանուն արմատների շփոթությունը կարող է նաև սխալ բառակազմության տեղիք տալ: Օրինակ՝ **վարկաբեկել** բառը սխալմամբ դառնում է **վարքաբեկել, անհարկի–ն՝ անհարգի** ևն:

Տնօրենություն բառը վերջերս է մտել շրջանառության մեջ և փոխարինում է ռուսերեն **дирекция** բառին: Մինչդեռ շատ հաճախ այդ բառը գրություններում հանիրավի փոխարինվում է իր «նմանակով»՝ **տնօրինություն** բառով: Վերջինս իր հիմքում ունի **տնօրինել** բառի նշանակությունը, իսկ նախորդը՝ **տնօրեն:** Հասկանալի է՝ նշված բառերը երբեք իրար փոխարինել չեն կարող: Ծիշտ են հետևյալ կիրառությունները՝ **Տնօրենությունը** կատարել է անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներ: Նյութերը հանձնում են համապատասխան բաժանմունքի **տնօրինությանը:**

Գործառություն բառը, որը հայերենում շուրջ երկուհարյուրամյա կենսագրություն ունի, վերջին տարիներին ձեռք է բերել նոր գործածություն՝ իբրև **функция** օտար բառի հայերեն համարժեք՝ «առարկայի կատարած դերը» իմաստով: **Գործառություն–ը**

տերմինային նորաբանություն է, որը տնտեսագիտության (նաև իրավագիտության) ոլորտում գործածվում է **գործարք, գործողություն** (операция) նշանակությամբ: Այդ բառերը ճիշտ գործառույթ ունեն հետևյալ նախադասություններում. Արտաքին **գործառնությունների** սպասարկման կշռի մեծացումը կարելի է համարել.... Պասիվային **գործառնությունների** մեծ մարժա: Այդ **գործառնությունը** վերապահվում է հիշյալ բանկերի մասնաճյուղերին:

Պատրաստականություն և **պատրաստականություն** բառերը տարբեր բառեր են. առաջինը նշանակում է որևէ բանի համար անհրաժեշտ պատրաստություն՝ գիտելիքներ, ունակություն, մյուսը՝ պատրաստական լինելը, որևէ բան անելու հոժարակամություն: Դրանք իրար փոխարեն գործածվել չեն կարող: Եթե նկատի ենք ունենում մեկի հոժարակամ վերաբերմունքը, ասում ենք՝ Պայմանագիր ստորագրողները **պատրաստականություն** են հայտնում աջակցելու այդ նախաձեռնությանը: Իսկ եթե նկատի ունենք ունակությունները, կարող լինելը, ասում ենք՝ Նա աչքի ընկավ իր մասնագիտական պատրաստականությամբ: Կամ՝ Տնօրենությունը հանդես է բերում անհրաժեշտ **պատրաստականություն** (բայց ոչ՝ **պատրաստականություն**)՝ խնդիրը կարգավորելու համար:

Վերաբերվել և **վերաբերել** բառերը ծևով իրարից տարբերվում են **վ** ածանցի առկայություն–բացակայությամբ: Տարբեր են նաև իմաստով. առաջինը նշանակում է վերաբերմունք ցույց տալ, երկրորդը՝ առնչություն ունենալ: Հետևաբար առաջինը կարող է վերաբերել միայն անձերին: Օրինակ՝ Այս հարցի քննարկմանը նա **վերաբերվում** է միանգամայն դրական: Բայց ոչ երբեք՝ Ինչ **վերաբերվում** (← վերաբերում) է ԱՊՀ երկրներին: Ասվածը **վերաբերվում** (← վերաբերում) է գների ինդեքսի սպասվող աճին:

Հարանունների ճիշտ գործածության այլ օրինակներ՝ **Փորձարկել** մեքենան – **Փորձել** մեկի հավատարմությունը: **Մրցության** մեջ են երկու հավասարազոր ուժեր: – Թափուր տեղի համար

դիմել են շատերը. ենթադրվում է, որ դժվար է լինելու **մրցույթը** վերահսկել: Ի **փոփոխումն** հրամանագրի հիմնգերորդ կետի... – Կառավարության կազմում նոր **փոփոխություն** է նախատեսվում: **Բավական** առաջարկներ են եղել: – **Բավակա՛ն** է, գործի՛ անցեք: – **Բավականին** շրջահայաց անձնավորություն է մեր նոր կառավարիչը: Ցո՛ւյց տվեք մեզ այն, ինչ որ արժանի եք համարում ձեր ապրանքներից՝ առաջիկա ցուցահանդեսում **ի ցույց դնելու** և գովազդելու: – **Ցուցադրել** (**ի ցույց դնել**) ստացված նոր նմուշները: – **Ցուցաբերել** հոգատարություն: **Հավաքագրել** վարձկաններ: – **Հավաքել** նյութեր, փաստեր: Քաղաքական այդ գործիչը մեծ **ժողովրդականություն** է վայելում: – Մեր էպոսի **ժողովրդայնության** գաղտնիքը նրա հայրենասիրական ոգու մեջ է: Ձեր **փաստարկները** անհամոզիչ են: – Բերված **փաստերն** ինքնին ապացուցում են իմ պաշտպանյալի անմասնակից լինելը այդ հանցանքին: Բանավիճող կողմերի միջև փոխըմբռնում, **հաղորդակցում** այդպես էլ չիրականացավ: – Այդ բնակավայրերի միջև **հաղորդակցությունը** վտանգված է: Մխավել ենք. **չփոթմունք** է եղել: – Կրակոցներից հետո թշնամու շարքերի մեջ **չփոթություն** ընկավ: Իրենց հնարավորությունները լավ **չէին հաշվարկել**: – Հետևողական պետք է լինել այդ գործում և պարբերաբար **հաշվել** եկամուտները: **Նվազարկեցին** սկավառակը: – **Նվազեց** քանոն: Ինքնամոռացումը խլեց նրանց **զգուշավորությունն** ու խելամտությունը: – Մեծ **զգուշություն** էր անհրաժեշտ վերահաս աղետից խուսափելու համար: **Խառնակչությամբ** է զբաղված: – Բարեկամների միջև **խառնակություն** պետք չէ սերմանել: **Ձգուշավոր** մարդ է: – **Ձգո՛ւյշ** եղիր, քեզ չվնասես: – Նա մոտենում էր **զգույշ** քայլերով: Կառավարությունը **վերահասու** է կատարվածին: – Պետք է խուսափել **վերահաս** վտանգից: **Դիտում ենք** մեր առջև բացված տեսարանը: – Այլևս **չենք դիտարկում** այդ հարցը: Մեր քաղաքամայր Երևանում փոքր **կառույցների** կողքին

հառնում են բազմահարկ շինություններ: – Քաղաքական այդ նոր **կառույցի** ղեկավար է ընտրվել նախկին պատգամավորներից մեկը: – Արևմտահայերենը և արևելահայերենը իրենց քերականական **կառուցվածքով** շատ չեն տարբերվում:

Հականիշներ: Կան բառերի զույգեր, որոնք միմյանց հակադիր իմաստներ են արտահայտում: Օրինակ՝ **լավ – վատ, ճիշտ – անճիշտ, գնալ – գալ** ևն: Միմյանց հակառակ իմաստ ունեցող բառերը հականիշներ են:

Հականիշները կարող են լինել՝ **1.** հակադիր իմաստ արտահայտող ինքնուրույն և սովորաբար տարարմատ բառերի զույգեր՝ **ներքև – վերև, հեռու – մոտիկ, ծնվել – մահանալ**. սրանք կոչվում են **հակադրական հականիշներ**, **2.** նույն արմատից (հիմքից) ժխտմամբ կազմված ածանցյալ բառերի զույգեր՝ **գիտուն – անգետ, ասուն – անասուն** ևն. սրանք կոչվում են **ժխտական հականիշներ:**

Պետք է զգուշանալ կեղծ հականիշներից, որոնք նույնարմատ, արտաքուստ հակադիր, բայց իմաստով հոմանիշ բառերի զույգեր են՝ **կիսաբաց – կիսափակ, կիսաքաղցր – կիսադառը, երեսով – աներես** (մարդ), **դիմություն – ընդդիմություն** ևն:

Թե՛ հոմանիշները, թե՛ հականիշները կարող են լինել նույնարմատ՝ **անբախտ – դժբախտ, շատախոս – քչախոս**, և տարարմատ՝ **անբախտ – ապերջանիկ, քչախոս – շաղակրատ:**

Թե՛ հոմանշությունը, թե՛ հականշությունը կարող են լինել մասնակի: Դա պատահում է այն դեպքում, երբ բազմիմաստ բառն իր տարբեր իմաստներով ունենում է հոմանիշների և հականիշների տարբեր փնջեր՝ շարքեր: Օրինակ՝ **դատել** բառն իր մի իմաստով հոմանիշ է **դատապարտել, մեղադրել**, մյուս իմաստով՝ **կշռադատել**, երրորդ իմաստով՝ **համարել, կարծել**, չորրորդ իմաստով՝ **մտածել, խորհել** բառերին: **Թերթ** բառն իր տարբեր իմաստներով հոմանիշ է մերթ **թիթեղ**, մերթ **ծաղկաթերթ**, մերթ **տերև**, մերթ **թուղթ**, մերթ **լրագիր** բառերին: **Բարձր** բառը իր մի իմաստով հականիշ է **ցածր** բառին՝ **բարձր** դիրք / **ցածր** դիրք, այլ իմաստով՝

վատ բառին՝ **բարձր** տրամադրություն / **վատ** տրամադրություն ևն: Պետք է հիշել նաև, որ բառերը լեզվական (ոչ խոսքային) մակարդակում միմյանց նկատմամբ հոմանիշ կամ հականիշ կարող են լինել, եթե պատկանում են միևնույն խոսքի մասին: Օրինակ՝ **չորս** և **քառյակ** բառերը հոմանիշներ չեն, քանի որ մեկը թվական է, մյուսը՝ գոյական:

Ստուգաբանություն: Ուսումնասիրում է բառի «կյանքը», այն է, թե բառը սկզբնապես ինչ կառուցվածք և իմաստ է ունեցել, հետագայում կառուցվածքային ինչպիսի գարգացումներ է ունեցել, բառակազմական և կամ իմաստային ինչ փոփոխություններ է կրել ևն: Բառի ստուգաբանական վերլուծությունը, բնականաբար, ավելի խոր գիտելիքներ է պահանջում: Շատ բառեր այսօրվա ընկալմամբ պարզ կազմություն ունեն, մինչդեռ ստուգաբանորեն բաղադրյալ են: Օրինակ՝ **անդունդ** < ան + դունդ (հատակ), **արահետ** < այր (տղամարդ) + հետ(ք), **արծագանգ** (արծագանք) < արծ (անծանոթ է) + գանգ (գանգյուն՝ ձայն, հնչյուն), **այժմ** < այս + ժամ, **բամբասել** < բամ (ասում են) + բաս (ասում ես) + ել, **դունչ** < ընդ + ունչ, **ընկեր** < ընդ (հետ, միասին) + կեր (ուտել), **ընտիր** < ընդ + դիր (դնել), **թեկուզ** < եթե + կ + ուզե, **լուցկի** < լույց (վառի՛ր) + կի, **հրդեհ** < հր (հուր) + դեհ (կիզում, այրում), **չակերտ** < չ + ա + կերտ, **սակայն** < սակ (պայման, սահմանված չափ, կարգ) + այն, **տիայր** < տի (մեծ, բարձրաստիճան) + այր ևն:

Ստուգաբանությունը «բացահայտում է բառերի (ավելի ճիշտ՝ բառարմատների) նախնական ծագումը, որոշում, թե որ բառերն են, որ հնդեվրոպական հիմք լեզվից են սերում, որ բառերն են, որ այլ լեզուներից են փոխառվել, և որ բառերն են, որ դեռևս ճշտորեն չեն ստուգաբանվել»²²: Այսպես, օրինակ՝ ստուգաբանությունը պարզում է, որ **ատրճանակ** բառը իրանական փոխառություն է և կազմված է **ātur**՝ կրակ, և **jan**՝ զարկել, սպանել բաղադրիչներից, **երիտասարդ** բառը բաղադրված է պիլ. **rētak** (պատանի) և **sard** (տարի) բառերից, նմանապես՝ **դատախազ** < պիլ. դատ + խազ

²² Ա. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1990, էջ 30:

(անհայտ է), **դատավոր** (դատաստան կտրող, նաև իշխան, կառավարիչ) < պիլ. *dātavar*, **կապիտան** < լատ.՝ *capitaneus* (գլխիմ վերաբերող, գլխավոր), գերմ. *kapitän* (գորահրամանատար), **մայոր** < լատ. *major*՝ ավելի մեծ: **Մարդ** (հնիս. *mrtó* ձևից) բառը բնիկ հայերեն բառ է. ստուգաբանորեն կապվում է մեռնել (նշանակում է «մահկանացու») բառի հետ: **Մայր**—ը բնիկ հայ բառ է, գալիս է հնիս. *māter* ձևից²³:

Ծանոթություն 1: Օտար լեզուներով ստուգաբանվում են շատ տերմիններ: **Դիվանագետ**—ը առաջացել է պահլավերեն *dēvān* (արխիվ) բառից, որ պարսկերենում (*divan*) նշանակել է նաև ատյան, դատարան, խորհրդարան, նաև ժողովածու՝ «ժողովածոյ գիրք բանաստեղծական երգոց ու տաղից» (օր.՝ Ա. Չօպանեան, «Նահապետ Քուչակի դիւանը» (1902)): Գրաբարում գործածվել է դահլիճ (գործերի քննության), արքունի սրահ, սենյակ, հրապարակ, ատյան, ինչպես նաև գրադարան՝ «Տուն մատենից եւ ուսմանց» նշանակություններով: Հնում գործածական են եղել **դիւան** բառով բաղադրված **դիւանագիր**, **դիւանապահ**, **դիւանապետ** և այլ բառեր: Հետագայում ձեռք է բերել այլևայլ իմաստներ՝ պետական գրագրությունները վարելու տեղ, ազգային կամ հասարակական ժողովի նախագահություն, դատ, արդարադատություն ևն²⁴: **Դիվանագետ**—ը համեմատաբար նոր կազմություն է, որ ժամանակակից հայերենում, իր տերմինային երկու նշանակություններից բացի («1. Կառավարության կողմից լիազորված պաշտոնական անձ՝ ուրիշ տերությունների հետ դիվանագիտական հարաբերություններ վարելու համար: 2. Դիվանագիտության մասնագետ»), ունի նաև փոխաբերական իմաստ՝ «Վարպետ՝ խորամանկ ու ծայրահեղորեն զգուշավոր մարդ, քաղաքագետ, դիպլոմատ»²⁵:

Ղեսպան (պիլ.՝ *dēspān*) բառը Հայկազյան բառարանում մեկնաբանվում է իբրև պատվիրակ, պատգամավոր երկու իշխանությունների միջև, «միջնորդ բանից ի մեջ տեղութեանց»: Հնում գործածական են եղել դրանով կազմված **ղեսպանագնաց լինել**, **ղեսպանութիւն**, նոր ժամանակ-

²³ Տե՛ս **Յր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, հ. I – IV, Եր., 1971–1979:

²⁴ Տե՛ս **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան, Եր., հ. I, 1944:

²⁵ Տե՛ս **Էդ. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976:

ներում՝ **ղեսպանական**, **ղեսպանատուն**, **ղեսպանաժողով**, **ղեսպանորդ** ևն: Արդի բառարաններով բացատրվում է որպես «1. Պետության դիվանագիտական ներկայացուցիչ մի այլ երկրում: 2. (հնց.): Պատգամախոս, պատգամավոր»: Ունի նաև փոխաբերական իմաստներ՝ միջնորդ, լրաբեր, սուրհանդակ:

Հյուպատոս (հնում՝ **հիւպատ**, **հիւպատոս**, **հիպատ**, **հիպատոս**, լատ.՝ *consul*, **կոնսուլ**). նշանակել է բղեշխ, իշխան, հրամանատար, փոխարքա, տարևոր (տարեկան, մեկ տարով) գործակալ կամ կուսակալ («Կացուցին հիւպատոս եւ զօրավարս»): Գործածական են եղել դրանով կազմված **հիւպատոսութիւն**, **հիւպատութիւն**, **հիւպատեան**, **հիւպատոսական** և այլ բառեր, համեմատաբար նոր ժամանակներում է ստեղծվել **փոխհյուպատոս**—ը: Արդի հայերենում **հյուպատոս** նշանակում է «Իր տերությունը ներկայացնող և տերության ու նրա քաղաքացիների շահերը պաշտպանող պաշտոնական անձ ուրիշ տերության մեջ»:

Ալիմենտ (< алимент < լատ. *alimentum*. **սնունդ**, **ապրուստի միջոց**), գ. (իրավբ.): Ապրուստի միջոց՝ **սննդավճար**, որ ըստ օրենքի տրվում է ընտանիքի առանձին ապրող անաշխատունակ անդամներին խնամակալի կողմից (երեխաներին, կնոջը, ծնողներին):

Բյուջե (< бюджет < անգլ. *budget*. **պայուսակ**), գ. (տնտեսգ.): Հավասարակշռված նախահաշիվ՝ 1. Պետության դրամական եկամուտների և ծախսերի՝ հերթական ժամկետի համար կազմված գրանցում: 2. Ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների կամ առանձին անձանց եկամուտների և ծախսերի որոշակի ժամկետով ծրագիր:

Դիսպոզիցիա (< диспозиция < լատ. *disposito*. **բաշխում**, **բաժանում**), գ. (իրավբ.): Իրավաբանական նորմի մասը՝ **նախադրույթ**, որը պարունակում է որոշակի կարգադրություն, արգելք:

Իմպիչմենտ (< импичмент < անգլ. *impeachment* < *impeach*. **մեղադրել**), գ. 1. Դատավարության կարգ, ըստ որի պատասխանատվության է ենթարկվում պետական հանցագործություն կամ զանցանք կատարած նախագահը (կամ բարձրաստիճան պաշտոնյան): 2. Պաշտոնազրկում:

Լոբբի, **լոբբիզմ** (< лобби < անգլ. *lobby*.), գ. ԱՄՆ—ում և այլ երկրներում օրենսդրական մարմիններին կից գրասենյակների և գործակա-

լրությունների համակարգ, որն ուղղակի ճնշում է գործադրում օրենսդիրների և պետական աստիճանավորների վրա՝ հանուն որոշակի շահերի, **շահախումբ**:

Կադաստր (< кадастр < ֆր. cadastre < միջին հուն. katastichon. **թերթ, ցուցակ**), գ. 1. Մատյան՝ **գույքացուցակ**, որը տեղեկություններ է ներառում օբյեկտների (հողերի, տների, ձեռնարկությունների) գնահատման և միջին եկամտաբերության մասին, որոնք օգտագործվում են համապատասխան իրական հարկերի հաշվարկման համար: 2. (պատմ.): Հարկատուների ցուցակ Հին Հռոմում:

Կոալիցիա (< коалиция < լատ. coalitus. **միացյալ**), գ. (քղք.): Պետությունների՝ կուսակցությունների **միավորում**՝ ընդհանուր նպատակների հասնելու համար:

Օմբուդսմեն (< омбудсмен < շվեդ. ombudsman. ինչ-որ մեկի իրավունքների պաշտպան), գ. (քղք.): Մարդու իրավունքների պաշտպան՝ **իրավապաշտպան**²⁶:

Ծանոթություն 2: Ծագումնաբանորեն իրար հետ կապվում են հետևյալ բառերը՝ **գաղջ – գուլ, գող – գաղտ – (գաղել՝ թաքցնել), դեղ – դեղձ, իբր – երբ, լույս – լույց, խարել (այրել) – խարույկ – խորով, ծաղր – ծիծաղ, ծանոթ – ճանաչ, կեղև – կլեպ – կձեպ, կոր – կեռ, հագնել – զգեստ, շեղ – շիլ, ողորկ – լերկ, տարտամ – տրտում, փայլ – փողփողել** ևն²⁷:

ԲԱՈՒԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ: Բառակազմությունը ուսումնասիրում է բառի կազմությունը կամ կառուցվածքը լեզվի զարգացման տվյալ փուլում (համաժամանակյա բառակազմություն):

Բառերը կազմությամբ լինում են պարզ (միաբաղադրիչ) կամ բաղադրյալ (բազմաբաղադրիչ): Վերջիններս իրենց հերթին լինում են ածանցավոր, բարդ կամ բարդ ածանցավոր: Բաղադրյալ բառ կազմող բառերը և մասնիկները բառակազմական բաղադրիչներ են:

²⁶ Տե՛ս Ա. Մարգարյան, Ա. Հայրապետյան, Օտար բառերի բացատրական բառարան, Եր., 2004: Ս. Էլոյան, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Եր., 2002:

²⁷ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. III, Եր., 1957, էջ 33–53:

Դրանք երկու տեսակ են՝ **արմատ** և **ածանց** (համապատասխանաբար կոչվում են նաև **հիմնական** և **երկրորդական** բառակազմական ձևությամբ). առաջինները կրում են բառի հիմնական իմաստը, երկրորդները, ավելանալով արմատին կամ բառին, փոխում են նրա իմաստը կամ խոսքիմասային պատկանելությունը: Օրինակ՝ **դաս**–ական, **դաս**–ային, **դաս**–իչ, **համա**–**դաս**, **ստորա**–**դաս**, **վերա**–**դաս** բառերի մեջ **դաս**–ը արմատ է, արտահայտում է բոլոր բառերի համար ընդհանուր «խմբավորում, կարգ» իմաստները: Մյուս բաղադրիչները՝ ածանցները, լրացուցիչ իմաստներ են տվել արմատին: Արմատներ կան, որ ինքնուրույն գործածվում են որպես պարզ բառեր, օր.՝ **պետ, գիր, բառ** ևն: Արմատներ էլ կան, որ ինքնուրույն գործածություն չունեն, հանդիպում են միայն այլ բաղադրիչների հետ միասին, օր.՝ **ան**–**զեն, խոս**–**ք, լս**–**արան** ևն:

Արմատները կարող են ունենալ տարբերակներ՝ հնչյունափոխության կամ զանազան ձևափոխությունների ենթարկվելու կամ հիմքակազմիչ մասնիկներ ստանալու հետևանքով: Դրանք կոչվում են **արմատային տարբերակներ**: Օրինակ՝ **ոսկոր** և **կրծոսկր, կեն**–ակցել, **կենս**–ական, **կենդ**–անի, **կենց**–աղ, **կյան**–ք, **նստա**–**կյաց** և **կեց**–ություն, **ասու**–**լիս** և **ախորժա**–**լուր, քառ**–[ր] որդ, **չոր**–որդ և **չորս**–ական, **լալ**–ագին և **ան**–**լաց**, **ան**–**դարձ** և **ան**–**դառն**–ալի, **հետա**–**գա**, **հերթա**–**գայ**–ել և **գալ**–իք, **ներ**–**կա**, **կայ**–ք, **կաց**–ություն, **կեն**–ալ և **կեց**–վածք, **լի**–ություն, **աստղա**–**լից**, **լեց**–ուն և **համա**–**լիր, ակ**, **ակն**–ոց, **ական**–ավոր և **սև**–**աչ**, **ենթա**–**մնա**, **մնայ**–ուն և **մնաց**–որդ ևն: Արմատային տարբերակները ժամանակի ընթացքում իմաստափոխվելու և միմյանցից տարբեր իմաստներ ձեռք բերելու դեպքում դառնում են ինքնուրույն արմատներ: Օրինակ՝ **այրական, առնական** և **արական, կոտորել, կոտրել, կտրել, կտոր** և **կտուր, հարդարել** և **զարդարել** ևն: Հնչյունական փոփոխության հետևանքով բառի փոփոխված ձևը դառնում է ինքնուրույն բառային միավոր՝ **արտահայտելով նույն կամ տարբեր իմաստներ՝ աղաչել – աղոթք – աղերս, ամաչել – ամոթ, արվեստ – արհեստ, գաղափար – կաղապար,**

խեղճ – խիղճ, ծիվ – ծիլ – ծաղիկ, հրաշք – հրեշ, ոգի – հոգի – շոգի, չիր – չոր – չոռ (երաշտ), պարապել – պարպել ևն:

Ածանցները հայերենում, ինչպես տեսանք, կարող են ավելանալ արմատի կամ բառի սկզբից (նախածանցներ) կամ վերջից (վերջածանցներ): Բառին կամ արմատին կարող են ավելանալ հաջորդաբար մեկից ավելի ածանցներ, օր.՝ **ան + տն + տես + վար + ություն**: Ածանցի կամ արմատի ամեն մի հավելում կոչվում է բառակազմական քայլ: Արմատի այն տարբերակը կամ բառի այն մասը, որի վրա ավելանում է ածանց (և կամ արմատ), կոչվում է բառակազմական հիմք:

Ածանցները մեծ մասամբ առաջացել են արմատներից և երբեմն պահպանում են բառային իմաստը կամ հանդես են գալիս մերթորպես արմատ, մերթ որպես ածանց, օր.՝ **ամենա–** նախածանցը՝ **ամենամեծ, ամենաարագ**, և արմատը՝ **ամենագետ, ամենակարող, ամենուր, ընդամենը**, նույն կերպ (նախածանցներ են առաջին բառերի ընդգծված բաղադրիչները)՝ **բացատրել / կիսաբաց, գերմարդ / գերագույն, համալիր / համույթ, հարադիր / հարել, շարունակ / շարան /, պարագիծ / պարույր, ստորադաս / ստորանալ, վերադարձ / վերին, փոխարքա / փոխարեն** ևն:

Խոսքիմասային իմաստ տվող կամ այդ իմաստը փոխող ածանցները լինում են՝ • **գոյականակերտ**՝ կարծ–իք, տզգ–ոց, տիր–ուհի, է–ություն ևն, • **ածականակերտ**՝ ան–տուն, փոշ–ոտ, երկաթ–յա, չ–կամ ևն, • **թվականակերտ**՝ եր–րորդ, վեց–երրորդ, հինգ–ական, ութ–սուն ևն, • **մակբայակերտ**՝ հերոս–աբար, մտերմ–որեն, հիմն–ովին ևն, • **բայակերտ**՝ կարդ–ալ, նվիր–ել:

Կան ածանցներ, որ կարող են կերտել մեկից ավելի խոսքի մասեր, օր.՝ **–ական**՝ հիմնական, մտավորական, գինվորական, **–ենի**՝ խնծորենի, մայրենի, **–եղեն**՝ մրգեղեն, հրեղեն, **–իչ**՝ գրիչ, դյուբիչ, **–ու**՝ թթու, վրիժառու, **–ուչ**՝ տեսուչ, վայելուչ, **վեր(ա)**՝ վերահաս, վերիուշ, **վերլուծել, փոխ(ա)**՝ փոխարքա, **փոխան–**ցել ևն:

Կան նաև համանուն ածանցներ, օր.՝ **աղաց / ռուսաց, ակ–նոց / հայոց, փշրանք / տեղանք, վագրենի / մայրենի, տնակ / հատակ, պիտանի / ազատանի, փոքրիկ / ջրիկ, արու / կծու, գլան / անգո ևն, հոմանիչ ածանցներ**՝ երկաթե / երկաթյա, զորավոր / զորեղ, մեղմորեն / մեղմաբար, սովորույթ / սովորություն ևն, **հականիչ ածանցներ**՝ անօրեն / օրինավոր, արժեքավոր / անարժեք, գեղանի / գեղեցիկ / անգեղ ևն:

Կան գործուն (կենսունակ) և ոչ գործուն ածանցներ: Վերջիններով նոր բառեր չեն կազմվում կամ կազմվում են խիստ հազվադեպ, ինչպես՝ **–աշ՝ մատղաշ, –ուրդ՝ ժողովուրդ, –ունդ՝ ծնունդ, –որ՝ հատոր** ևն:

Գործուն ածանցները անհամեմատ շատ են՝

Նախածանցներ՝ ամենա–՝ ամենամեծ, ամենաթույլ, ան–՝ անամոթ, անկիրթ, անդր(ա)–՝ անդրբևեռ, անդրաշխարհ, ապ(ա)–՝ ապագային, ապօրինի, առ–՝ առմիշտ, առձեռն, առհասարակ, արտ(ա)–՝ արտադրել, արտերկիր, բաց(ա)–՝ բացահայտ, բացարձակ, գեր(ա)–՝ գերխիտ, գերկարճ ևն,

վերջածանցներ՝ –(ա)բար՝ աստիճանաբար, ընտրողաբար, –(ա)գին՝ ահագին, ուժգին, –(ա)գույն՝ հնագույն, գերագույն, –ած՝ ողորմած, արարած, –ածո/–ածու/–ծու՝ գտածո, թեկնածու, շինծու, –ակ՝ տեսակ, որակ, որոյակ, միակ, –ացի/–եցի/–ցի՝ գավառ–ացի, երուսաղեմ–ցի, կեներովո–եցի, պերու–եցի, բարսելոնա–ցի ևն²⁸:

Հայերեն **–ցի, –ացի, –եցի** ածանցներով կազմված տեղաբնակ նշանակող գոյական անունների զուգահեռ ձևերի մասին գրական հայերենում գործում են որոշակի կանոններ, որոնց համաձայն *ճիշտ են համարվում ստորև նշված տարբերակներից առաջինները՝ արևելցի–արևելքցի, աշտարակցի–աշտարակեցի, շիրակցի–շիրակեցի, եղեգնաձորցի–եղեգնաձորեցի, սևանցի–սևանեցի, ալժիրցի–ալժիրեցի, լատվիացի–լատվացի, կոլումբիացի–կոլումբացի, Էջմիածնեցի–Էջմիածինցի, գորկիեցի–գորկեցի,*

²⁸ Հայերենի ածանցների մասին մանրամասն տե՛ս Ս. Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Եր., 1978:

հաճնեցի–հաճնցի, **մեխիկոեցի**–մեխիկոցի, **պերուեցի**–պերուցի, **սոմալիեցի**–սոմալացի են: Իսկ ներքոնշյալ ձևերից առաջարկվում է առավելություն տալ առաջիններին՝ **գորիսցի**–գորիսեցի, **ֆրանսիացի**–ֆրանսացի, **ավստրիացի**–ավստրացի, **փարիզցի**–փարիզեցի են: Ավանդական կազմությունները պահպանվում են՝ **Շիրակացի, Կողբացի, Օձնեցի, Սևանեցի, Խաչենեցի, Կապանեցի, Տաթևացի, Տարոնացի, Երուսաղեմացի** ևն²⁹:

Բառակազմական հիմքակազմիչ մասնիկներ: Բառակազմությանը մասնակցում են նաև որևէ իմաստ չարտահայտող և ընդամենը հիմքակազմիչ դեր կատարող մասնիկներ: Դրանք են՝ **հողակապը** (օր–ա–գիր, բաժն–ե–տեր, տար–ե–վերջ), **յ ծայնակապը** (երեկո–յ–ան, կա–յ–արան, գո–յ–ություն), որոշ բառերի նախկին **ն վերջնահնչյունը** (լեռ–ն–ազնաց, դռ–ն–ապան, սկզբ–ն–ապատճառ), **–աց, –եց, –ույց, –ույս** բայական մասնիկները (աս–աց–ող, մտ–աց–ա–ծին, մոտ–եց–ում, ազդ–եց–ություն, ջեռ–ուց–ում, կոր–ուս–յալ), **բայական վերջավորություններ** (խոս–ել–ա–ծև, հն–աց–ած–ություն, խոս–ող–ություն), **որոշ բայածանցներ** (մոռ–աց–ում, ընկ–ն–ավոր, սառ–չ–ող–ական–ություն, մոտ–եց–ում), **հոլովական վերջավորություններ՝ գարն–ան–անուտ, քր–ոջ–ական, մեղ–ս–ա–գործ, օրեն–ս–դիր** և այլ հավելատարրեր՝ **հ բաղաձայնը**, որ երբեմն սաստկական նրբերանգ է հաղորդում արմատին (գոր > հգոր, ուժ > հուժկու, ավել > հավելել, անարգ > հարգել, ետ > հետ, ագուցել > հագցնել), **գրաբարյան ց–, գ–, ի, ընդ, առ** նախդիրները (գիրկընդխառն, օրըստօրե, ապիկար, հևիհև, զառիվեր, օրեցօր, ոսկեգօծ, գերազանցել, հետզհետե, գիշերուզօր, քայլ առ քայլ), **և, ու շաղկապները** (միևնույն, առևտուր, շարժում, ահ ու դող):

Դրանց առկայությունը չի փոխում բառի տեսակն ըստ կազմության:

Պարզ բառեր. ինքնուրույն գործածություն ունեցող արմատներն են՝ առանց բառակազմական որևէ այլ բաղադրիչի (չհաշված հիմքակազմիչ մասնիկները ևն): Օրինակ՝ **տուն, հրաման, հրապարակ, պատասխան, եկեղեցի:** Դրանք այլ կերպ կոչվում են նաև **արմատական բառեր:**

Բաղադրյալ բառեր. կազմված են բառակազմական մեկից ավելի բաղադրիչներից: Լինում են՝ **1. ածանցավոր բառեր.** կազմված են մեկ արմատից և մեկ կամ ավելի ածանցից՝ **ռազմ–ական, ընդ–գրկ–ուն, ան–համ–ա–ծայն–ություն, 2. բարդություններ.** կազմված են երկու կամ ավելի արմատից: Դրանց կազմում կարող են լինել ածանցներ, ինչպես նաև բառակազմական այլ մասնիկներ (հողակապ, ծայնակապ ևն): Իրենց կազմում ածանց չունեցող բարդությունները կոչվում են **բարդ բառեր, օր.՝ կարգազանց, պետպատվեր, գործադիր:** Ածանց ունեցող բարդությունները կոչվում են **բարդ ածանցավոր բառեր, օր.՝ ինքն–իր–ավ–չ–ություն, ֆինանս–ա–տն–տես–ական:**

Արմատի կրկնությամբ կազմված բարդությունները կոչվում են **կրկնավորներ:** Արմատը կարող է կրկնվել՝ **1. նույնությամբ՝ պես–պես, մեծ–մեծ, ա՛յ–ա՛յ, 2. հնչյունափոխական տարբերակներով՝ բարբառ, կսկիծ, մարդ–մուրդ, կաս–կարմիր, 3. բառաձևային տարբերակներով՝ գյուղեգյուղ, օրավուր, դեմ դիմաց, եղած–չեղած:**

Ըստ գրության ձևի՝ բարդությունները բաժանվում են երկու խմբի՝ **համադրական և հարադրական** (վերլուծական) բարդություններ:

Ծանոթություն: Անհողակապ բարդությունները երբեմն կարող են ունենալ շփոթության տեղիք տվող համանուն բառակապակցություններ՝ **այսօր – այս օր, կեսգիշեր – կես գիշեր, տանտեր – տան տեր, ոսկեօղ – ոսկե օղ, խորիմաստ – խոր իմաստ, ութանկյուն – ութ անկյուն, հեքիաթասաց – հեքիաթ ասաց, հինգհազարանոց – հինգ հազարանոց** ևն: Օրինակ՝ Դա ինձ համար **մեծ արժեք** ունի, բայց՝ Նրա մոտ գնաց **մեծարժեք** նվերներով: Բանկը թողարկել է **հինգ հարյուրանոց** և տասներ-

²⁹ Տե՛ս «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու», Եր., 1988, էջ 315–318:

կու հազարանոց հորեյանական մետաղադրամներ, բայց՝ թողարկվում են **հինգհարյուրանոց** նոր թղթադրամներ: Այդ բարդությունների մի մասը համանուն գոյականական բառակապակցություններից առաջացած ածականներ են (քար սիրտ > քարսիրտ՝ «քար սիրտ ունեցող», մեծ արժեք > մեծարժեք՝ «մեծ արժեք ունեցող»):

Համադրական բարդությունների բաղադրիչները գրվում են միասին՝ առանց բացատի և առանց միության գծիկի, օր.՝ **մետաղալար, յուրաքանչյուր, բարենպաստ, այլևայլ**:

Հարադրական (վերլուծական) բարդությունների բաղադրիչները գրվում են իրարից առանձին կամ միության գծիկով, օր.՝ **վեր կենալ, դադար առնել, ուր որ է, ի պատասխան, ինչ-որ, քիչ-քիչ, ի միջի այլոց** ևն³⁰:

Հապավական բարդությունները կամ **հապավումները** կազմված են բառակապակցության կամ սովորական բարդության բաղադրիչների հապաված, կրճատված ձևերի միացումով: Դրանց միջոցով խնայվում են ժամանակը, տեղը, նյութի ընդգրկման ծավալը, խոսքը դառնում է հակիրճ: Կան հապավումների մի քանի տեսակներ՝ **տառային, վանկային և խառը**: Տառային հապավումները կազմված են բառերի կամ արմատների սկզբնատառերով, օր.՝ **աեկ** – ատոմային էլեկտրակայան, **ԱԺ** – Ազգային ժողով, **ՊՆ** – պաշտպանության նախարարություն ևն: Սպասարկու բառերն ու ածանցները հապավման մեջ սովորաբար չեն արտահայտվում, օր.՝ **ԵԱՀԵ** – Եվրոպայի և Ասիայի համագործակցության խորհուրդ: Տառային հապավումները, որպես կանոն, գրվում են մեծատառերով, օր.՝ **ՀՀ, ԱՄՆ, ՌԴ** ևն: Բացառություն են **բուհ, ջեկ, հեկ, աեկ, զագս** տառային հապավումները:

Վանկի արժեք չունեցող տառային հապավումները կարդացվում են տառ առ տառ: Օրինակ՝ **ԱՊՀ՝ ապրիլ, ԿԳՆ՝ կրգընը, ԱԳՆ՝ ագընը**: Արևմտահայերենից վերցված այդպիսի տառային

հապավումները հաճախ կարդացվում են տառերի անվանումներով: Օրինակ՝ **ՀՅԴ՝ հոհիդա, ՀՄԸՄ՝ հոմենըթմեն**:

Օտար լեզուներից վերցված տառային հապավումները (հայագիր փոխառյալ հապավումներ), եթե կարդացվում են տառերի անվանումներով, հնչադարձվում են և գրվում յուրահատուկ ձևով՝ որպես վանկային հապավումներ և մասամբ մեծատառով, օր.՝ **ՍիեՆեՆ, ԲիբիՍի, ԷյբիՍի**, իսկ եթե կարդացվում են որպես սովորական բառ, ապա գրադարձվում են և գրվում սովորական տառային հապավումների ձևով, օր.՝ **ՆԱՏՕ, ՅՈՒՆԵՍԿՕ, ԳՈՒԱՄ** ևն: Կարդացվում են և՛ թարգմանաբար, և՛ բնագրի լեզվով, ինչպես՝ **ՅՈՒՆԵՍԿՕ** – Կրթության, գիտության և մշակույթի հարցերով ՄԱԿ–ի կազմակերպություն / **UNESCO** – United Nations Educational, Scientific and Cultural Organization, **ՅՈՒՆԻԴՕ** – Միավորված ազգերի (կամ՝ ՄԱԿ–ի) արդյունաբերական զարգացման կազմակերպություն / **UNIDO** – United Nations Industrial Development Organization, **ՆԱՏՕ** – Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպություն / **NATO** – North Atlantic Treaty Organization, **զագս** – Քաղաքացիական կացության ակտերի գրանցում (**ՔԿԱԳ**): Հանդիպում են նաև հայագիր փոխառյալ վանկային հապավումներ՝ «ԱրմենՏել», «Մեծգոսբանկ», «Ռոսնեֆտ» ևն:

Ծանոթություն: Հայերեն տեքստերում հանդիպում են նաև օտարագիր տառային հապավումներ՝ **AGBU** (անգլ.) – Armenian General Benevolent Union (= ՀԲԸՄ՝ Հայկական բարեգործական ընդհանուր միություն), **ASHB** (անգլ.) – Արդշինբանկ (= **ԱՇԲ**), **DM** (գերմ.) – Deutsche Mark (գերմանական մարկ), **HSBC** (անգլ.) – ԷյչէսԲիՍի բանկ ևն:

Վանկային հապավումները կազմված են բառերի կամ արմատների առաջին վանկերով կամ հատվածներով, օր.՝ **տնտեսվար** – տնտեսական մասի վարիչ, **խմբկոլ** – խմբագրական կոլեգիա, **սոցապ** – սոցիալական ապահովություն, **մանկխորի** – մանկավարժական խորհուրդ, **զինկոմ** – զինվորական կոմիսար, **արիկոմ** – արհմիութենական կոմիտե ևն: Դրանք ընդհանուր առմամբ

³⁰ Հարադրական բարդությունների ուղղագրությունը տե՛ս Յու. Ավետիսյան, Հ. Ջաքարյան, Հայոց լեզու, Եր., 2012:

գրվում են փոքրատառով: Մեծատառով են գրվում միայն հատուկ անուններից վերցված առաջին վանկերի առաջին տառերը, օր.[՝] **Երևանիէկ, Հայխնայբանկ, ՀայՌուսզազարդ:**

Խառն են այն հապավումները, որոնք մասամբ տառային են, մասամբ՝ վանկային, կամ էլ վերջին բաղադրիչն ամբողջական բառ է, օր.[՝] **Ձորահէկ** – Ձորագետի հիդրոէլեկտրակայան, **հրամ-կազմ** – հրամանատարական կազմ, **առբաժին** – առևտրի բա-ժին, **բնակմակերես** – բնակելի մակերես, **վիճվարչություն** – վի-ճակագրական վարչություն, **քաղբանտարկյալ** – քաղաքական բանտարկյալ, **քիմնաքրում** – քիմիական մաքրում, **պետավտո-տեսչություն** – պետական ավտոմոբիլային տեսչություն, **էլփոստ** – էլեկտրոնային փոստ, **տնտեսաշվարկ** – տնտեսական հաշվարկ:

Ըստ հայերենի տերմինաբանական կոմիտեի որոշման՝ «Ու-ղիղ ձևով (առանց հոլովական վերջավորության) գործածվում են միայն հատկացուցչի պաշտոնում կիրառվող այն տառա-յին հապավումները, որոնց բաղադրիչ տառերն արտասանվում են առանձին–առանձին (բաղաձայններն ուղեկցվում են չգրվող ը–ով)»³¹, օր.[՝] **ՀՀ** Ազգային ժողով, **ԱԺ** պատգամավոր, **ՀՀ** արտ-գործնախարարություն, **ՀՀԿ** խմբակցություն, **ԱՊՀ** երկրներ, **ԱԺՄ** նախագահ, **ՀԲԸՄ** վարժարաններում, **ՀՀ ԿԳ** նախարար, **ՊՆ** հայ-տարարությունը: Մյուս բոլոր դեպքերում, ըստ նույն որոշման, տա-ռային հապավումները պետք է գործածել հոլովումներին հատուկ վերջավորություններով (կամ հոդերով), օր.[՝] **ՄԱԿ–ի** Անվտան-գության խորհուրդ, **ԱՄՆ–ի** և **ՌԴ–ի** միջև, **ՀՀ–ից** արտաքսված, **ՀԵԿ–ը** ակտիվացրել է գործունեությունը, **ՕԵԿ–ի** ներկայացուցի-չը, **ՀՕՍ–ի** ծրագիրը, **ՀՀ ԿԲ–ն** հանդես է եկել նախածեռնությամբ, այդ գործով զբաղվեց **ՊԱԿ–ը**, **ԱՄՆ–ում** Հայաստանի դեսպան:

Գրավոր խոսքում երբեմն չի պահպանվում ընդունված սկզբուն-քը. բաղադրիչ տառերն առանձին–առանձին (բաղաձայնները՝ ը–ով) հնչող հապավումը գործածվում է ոչ թե ուղիղ, այլ թեք ձևով (**ՉԺՀ–ի** կառավարությունը, **ՀԲԸՄ–ի** մասնաճյուղ, **ՔԴՄ–ի** հայտա-

³¹ «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու», Եր., 1988, էջ 311–312:

րարությունը, **ԱՄՆ–ի** Կոնգրեսը), կամ միևնույն հապավումը, ըստ արտասանության, գրվում է մեկ ուղիղ, մեկ թեք ձևով, ինչպես՝ **ԱԺ** Խոսնակ, **ԱԺ–ի** կանոնակարգը, **ԿԲ–ի** աշխատակիցներ, **ԿԲ** գոր-ծունեությունը, **ԱՄՆ** դոլար, **ԱՄՆ–ի** Սենատը, **ԱՄՆ–ի** շահերը:

Ծանոթություն: Տերմինաբանական կոմիտեի հիշյալ որոշումից ենթադրվում է, որ **ԱՄՆ** հապավումի արտասանության ճիշտ տարբերա-լը իբր բաղադրիչ տարրերի (բաղաձայնների) առանց ը–երի արտա-սանությունն է, մինչդեռ այդ հապավման ճիշտ և ընդունված արտասա-նության մեջ բաղաձայնները ուղեկցվում են չգրվող ը–երով՝ **ԱՄ[ը]Ն[ը]**, ինչպես՝ **Ձ[ը]Լ[ը]Մ[ը]**, **Հ[ը]Գ[ը]Մ[ը]**, **ԱԳ[ը]Ն[ը]**:

Համառոտագրություն: Խնայողության նպատակով երբեմն հարկ է լինում հաճախ հանդիպող և ծանոթ բառերը, հատկապես անձնանունները գրել ոչ թե լրիվ, այլ համառոտ ձևով՝ կրճատելով դրանց որոշ մասը: Բառերի կրճատ գրությունը կոչվում է համա-ռոտագրություն: Համառոտագրության մի քանի եղանակներ կան:

1. Գրվում է բառի սկզբնատառը, և կողքը կետ է դրվում, օր.[՝] **Վ. Թալին** (Վերին Թալին), **մ. թ. ա.** (մեր թվարկությունից առաջ), **ն. թ.** (նախքան Քրիստոսը) կամ **Ք. ա.** (Քրիստոսից առաջ), **ս. թ.** (սույն թվականի), **պ.** (պարոն):

Առանց կետի են գրվում չափի և կշռի որոշ միավորներ, օր.[՝] **վ** (վոլտ), **մվ** (միլիվոլտ), **կվ** (կիլովոլտ), **ր** (րոպե), **լ** (լիտր), **գ** (գրամ), **մ³** (մետր խորանարդ), **մմ²** (միլիմետր քառակուսի), **մ/վ** (մետր/վայրկյան):

Ավելի հասկանալի լինելու համար երբեմն գրվում են բա-ռի առաջին մի քանի տառերը՝ բաղաձայնից հետո ընկած մասի կրճատումով: Օրինակ՝ **Հովհ. Թումանյան** (Հովհաննես Թուման-յան), **օր.** (օրինակ), **հազ.** (հազար), **գնդ.** (գնդապետ):

2. Գրվում են բառի միայն բաղաձայնները կամ դրանց մեծ մասը, օր.[՝] **հմմտ.** (համեմատի՛ր), **պրն** (պարոն), **արևմտ.** (արևմտյան), **թրգմ.** (թարգմանություն), **մսնգ.** (մասնագիտական), **հմ.** (համար), **հզվդ.** (հազվադեպ), **օտարբ.** (օտարաբանություն), **դվնգ.** (դիվա-

նագիտական), **փխբ.** (փոխաբերություն), **բժշկ.** (բժշկագիտական), **տնտեսագ.** (տնտեսագիտական), **ժղ.** (ժողովրդական):

Եթե բառի վերջին բաղաձայնը գրվում է, ապա կետ չի դրվում, օր.՝ **մլն** (միլիոն), **մլրդ.** (միլիարդ), **հվ** (հարավ), **ևն** (և այլն):

3. Գրվում են բառի առաջին և վերջին տառերը կամ սկիզբն ու վերջը՝ միության գծիկով միացած, օր.՝ **պ–ն** (պարոն), **դ–ր** (դրկտոր), **մ–ր** (մայր), **գ–տ** (գնդապետ), **փ/գ–տ** (փոխգնդապետ), **գ–լ/գ–տ** (գեներալ–գնդապետ) ևն:

4. Չափ ու կշռի միավորների բաղադրյալ անվանումների համառոտագրությունները գրվում են երկու (երբեմն՝ երեք) տառով (բաղադրիչների սկզբնատառերով), միասին և առանց կետի՝ նմանվելով փոքրատառով գրվող տառային հապավումների: Օրինակ՝ **կգ** (կիլոգրամ), **սմ** (սանտիմետր), **քմ** (քառակուսի մետր), **ՄԲ**³² (մեգաբայթ), **դցմ** (դեցիմետր), **հա** (հեկտար): Սրանք հապավում չեն (ինչպես **բուհ–ը**, **ջեկ–ը**), քանի որ նոր բառ չեն դարձել և կարդացվում են լրիվ ձևով:

5. Բառակապակցությունը կամ բարդությունը համառոտագրելիս երբեմն գրվում են բաղադրիչների սկզբնատառերը՝ թեք գծով և առանց կետերի, օր.՝ **ս/թ** (սույն թվի), **գ/Ֆ** (գեղարվեստական ֆիլմ), **գ/ծ** (գինժառայող), **գ/մ** (գորամաս):

Եթե համառոտագրվող բառը հոգնակի թվով է, ապա համառոտագրությունը կրկնվում է (առանց բացատի), օր.՝ **պրոֆ.պրոֆ.** (պրոֆեսորներ), **ընկ.ընկ.** (ընկերներ): Մեկ տառով համառոտագրությունները կրկնվելիս գրվում են միասին՝ մեկ ընդհանուր կետով, օր.՝ **թթ.** (թվականներ), **դդ.** (դարեր), **հհ.** (հատորներ), **պպ.** (պարոններ): Համառոտագրությունները փոքրատառով են գրվում, եթե հասարակ անուններ են (օր.՝ մ. թ. ա.), և մեծատառով, եթե հատուկ անուններ են (օր.՝ Ա. Ս. Պուշկին, Զ. ա., Զ. հ.):

Ծանոթություն 1: Երբեմն արագագրությամբ առանձին համառոտագրությունների բաղադրիչներ միացնում են իրար՝ կազմելով յուրօրինակ հապավումներ, որոնք գրական լեզվում հանձնարարելի չեն, քանի որ մթազնում են հասկացության իմաստը. **ՀՀ քրոթ.** փոխ.՝ **ՀՀ քր. օր.** (ՀՀ

³² Տե՛ս ՀՀ կառավարության որոշումը «Մեծությունների միավորների, չափումների... մասին», «ՀՀ ՊՏ», 2012, 10.03/48 (922):

քրեական օրենսգիրք), **ՀՀ քրդատ.**, փոխ.՝ **ՀՀ քր. դատ.** (ՀՀ քրեական դատավարություն), **ՀՀ ջրօր.**, փոխ.՝ **ՀՀ ջր. օր.** (ՀՀ ջրային օրենսգիրք):

Ծանոթություն 2: Շփոթության առիթ է ստեղծվում այն դեպքում, երբ համառոտագրությունը համընկնում է նույն կազմությամբ ամբողջական բառի հետ՝ **բանկ // բանկ. = բանկային, ֆինանս // ֆինանս. = ֆինանսական, իրավ // իրավ. = իրավաբանական** ևն: Կարելի է պահպանել տառերի առավելագույն քանակ, բայց ոչ ավելի, քան ընդունված է հասկանալի լինելու համար՝ **արտասահմ. = արտասահմանյան, ֆին. = ֆինանսական, իրավաբ. // իրավբ.** (նախընտրելի) = **իրավաբանական**, բայց նաև՝ **ս. թ. = սույն թվականի:**

Բառի կազմության սխալ ընկալում: Բառի սխալ գործածության պատճառ կարող է դառնալ բառի կազմության չիմացությունը՝ բառապատկերի անճիշտ ընկալումը: Այսպես՝ **սնանկանալ** բառը կազմվել է **սնանկ** ածականից (ստուգաբանորեն՝ **սին–փուչ**, դատարկ, **անկ–ընկած**) + **ան** + **ալ** բայականական կաղապարով և նշանակում է **սնանկ դառնալ**՝ նյութական միջոցներից զրկված լինել ևն: Բայականությունը այս դեպքում չի ուղեկցվում հնչյունափոխությամբ, հետևաբար՝ ոչ թե **սննկանալ**, այլ **սնանկանալ:**

Տարկետում բառը բաղադրված է ոչ թե **տարի** բաղադրիչով, այլ **տար** (զատ, հեռու, դուրս) նախածանցով և նշանակում է ոչ թե մեկ տարի, այլ որոշակի ժամկետով (երեք ամսով, երկու տարով կամ այլ ժամանակահատվածով) որևէ բանի հետաձգում, ընդմիջում, ժամկետի փոփոխություն, ուստի՝ ոչ թե **տարեկետում** (տարի + ա + կետ (կետում)), այլ **տարկետում** (= տար + կետ (կետում)):

Պատճեն բառի ն վերջնահնչյունը թյուրիմացաբար ընկալվում է իբրև որոշիչ հոդ, և բառը ստանում է **պատճե** սխալ ձևը: Նմանապես՝ **արդուկել–ը** դառնում է **հարթուկել** (կապվելով **հարթ** բառի հետ), **հաշմանդամ–ը**՝ **հաշվանդամ** (կապվելով **հաշիվ** բառի հետ), **հոգաբարձու–ն**՝ **հոգեբարձու** (կապվելով **հոգի** բառի հետ), **մտացածին–ը**՝ **մտածածին** (կապվելով **մտածել** բայի հետ), **նախագահ–ը**՝ **նախագա** ևն:

Այսօրինակ սխալի պատճառներից մեկն էլ մի բառի ձևի անհարկի նմանեցումն է (համաբանությունը) մեկ այլ բառի: **Տարեկան** բառի նմանողությամբ, որում առկա է **ի + ա → Ե** հնչյունափոխությունը՝ **տարի + ական**, շատերը սխալ են կազմում և աղավաղված պատկերով են գործածում **ամիս** և **օր** բառերի՝ **–ական** ածանցով բաղադրված ձևերը՝ **ամսեկան**, **օրեկան**: Դրանցում, հասկանալի է, վերը նշված հնչյունափոխությունը բացառվում է: Հետևաբար ճիշտ ձևերն են՝ **ամսական** (= ամիս + ական), **օրական** (= օր + ական):

Բառային զուգակցում (համապատասխանություն). բառերի իմաստային, բառապաշարային և քերականական անհատադեղիություն: Բառի տեղին և ճիշտ գործածության առաջին պայմանը բառի ստույգ իմաստի իմացությունն է: Բառիմաստի անճիշտ ընկալումը, բառերի նրբիմաստային տարբերությունների անտեսումը խոսքային անճշտությունների հիմնական պատճառներից են: **Պետություն** և **պետականություն** բառերը իմաստով առնչակից բառեր են, սակայն ունեն իմաստային էական տարբերություններ. դրանց հիմնական նշանակությունները բառարանները արձանագրում են հետևյալ կերպ՝ **պետություն**. «1. Տիրող դասակարգի քաղաքական կազմակերպություն՝ համապատասխան մարմիններով ու հաստատություններով: 2. Այդպիսի կազմակերպություն ունեցող երկիր, տերություն: 3. Պետական կառավարման մարմինների ամբողջությունը», և կամ՝ «1. Պետ՝ իշխանավոր լինելը: 2. Պետի իշխանությունը, թագավորությունը», **պետականություն**. «Պետական կառուցվածք՝ կարգեր, պետական կազմակերպություն», «...պետության կազմակերպության համակարգը»: Հետևաբար սխալ է ստորև բերված նախադասություններում մեկը մյուսի փոխարեն գործածելը՝ անգլիական **պետությունը** սահմանադրական միապետություն է, հայկական պետությունը՝ հանրապետություն: 1920–ին հայ ժողովրդին հաջողվեց վերականգնել իր **պետականությունը**: **Պետությունը** ուժի մի յուրահատուկ կազմակերպություն է: Մեր **պետության** սահմանները շատ որոշակի

են: Անկախ **պետականության** ժամանակաշրջաններում Հայաստանը աննախադեպ զարգացումներ է ունեցել:

Բառը ճիշտ գործածելու համար, սակայն, բավարար չէ միայն նրա իմաստի իմացությունը: Անհրաժեշտ է նաև հաշվի առնել այլ բառերի հետ նրա զուգակցվելու, համապատասխանելու հնարավորությունները: Բառերը, իրար հետ հաճախակի գործածվելով, ձեռք են բերում համատեղելիության կամ կապակցական որոշակի հատկանիշներ: Բառի կապակցական հնարավորությունների անտեսումը պատճառ կարող է դառնալ խոսքի սխալ կառուցման:

Բառընտրությունը անպայման պետք է նկատի ունենա հարաբերակից բառերի միջավայրում տվյալ բառի իմաստային գործառույթի հնարավոր և առարկայական (օբյեկտիվ) տարբերակները: Բառի խոսքաշարային ավանդական առնչությունների նկատմամբ անուշադրությունը կարող է առիթ տալ բառի իմաստային աղավաղումների, հետևաբար նաև ոչ ճիշտ ընկալումների: Իրենց հերթին բառի իմաստային և ձևային յուրահատկությունների անտեսումը հանգեցնում է բառերի կապակցական անճշտությունների: Օրինակ՝ «գործավարության վարման մասին», «գործավարություն կատարել» կապակցություններում ընդգծված բառերը իրենց տեղում չեն, զբաղեցնում են **կազմակերպել** և **իրականացնել** բառերի տեղը՝ գործավարության **կազմակերպման** մասին, գործավարություն **իրականացնել**: Ճիշտ է՝ բառարանները ընդգծված բառերի դիմաց արձանագրում են առաջարկվող բառերի իմաստներին մոտ իմաստներ, բայց պետք է նկատի ունենալ, որ հանդես գալով իրենց ուղղակի և առաջնային նշանակությամբ՝ իմաստով մոտ կամ նույնիմաստ (հոմանիշ) բառերը պաշտոնական գրություններում խիստ հազվադեպ են իրար փոխարինում: Հիշենք նաև, որ բացարձակ նույնիմաստ բառեր լեզվում գոյություն չունեն: Դրանք միշտ դրսևորում են նրբիմաստային, հետևաբար նաև՝ ոճական–կիրառական ինչ–ինչ տարբերություններ:

Լեզվագործածությունը կամ, ավելի ստույգ, բառագործածությունը ունի տարիներով, ինչու չէ, նաև դարերով հաստատված

ավանդույթներ, մեր մտածողության մեջ հաճախ անրակայված անբացատրելի սկզբունքներ, որոնք չի կարող անտեսել նորմատիվ լեզվով գրագրությունը: Ժամանակի ընթացքում, օրինակ, **հրաման** բառի հետ կայուն կապակցություն է ստեղծել **արծակել** բառը՝ **հրաման արծակել**, որոշում բառի հետ՝ **կայացնել**–ը՝ **որոշում կայացնել**, **արձանագրություն** բառի հետ՝ **կազմել**–ը՝ **արձանագրություն կազմել**, կամ՝ **հրաման տալ**, **նամակ հղել**, **վճիռ արծակել**, **վճիռ կայացնել**, **դատավճիռ հրապարակել**, **վերջնագիր ներկայացնել**, **ակտ կազմել**, **ուղերձ հղել**, **հայց ներկայացնել**, **արմատ հանել**, **քառակուսի հավասարում կազմել**, **քրեական գործ հարուցել**, **անկախություն հռչակել**, **հաշվետվություն ներկայացնել**, **պայմանագիր կնքել**, **գործարք կնքել** կամ **գործարք կատարել**, **գործը կարճել** ևն:

Իհարկե, կան բառեր, որոնք, հաճախակի գործածվելով որոշակի՝ հիմնականում տերմինային նշանակությամբ, ձեռք են բերում նոր իմաստներ, նվաճում իմաստային–գործառնական նոր ոլորտներ, արձանագրվում բառարաններում՝ որպես իմաստային նորաբանություններ: Ահա մեր լեզվում եղած բառերի տերմինային նոր իմաստով գործածությունների օրինակներ՝ իրավական **դաշտ**, տնտեսական **դաշտ**, **թափանցիկ** ընտրություններ, ֆինանսական հատվածի **առողջացում**, վարկային **ռիսկ**, պետության **կայացում**, ֆինանսական **հոսք**, ֆինանսական համակարգի **թափանցիկություն**, աշխատանքային **շուկա**, **բաց** բաժնետիրական ընկերություն, դրամավարկային **հատված**, ցուցանիշների **վարքագիծ**, տնտեսության **բացվածություն**, **հարթ** դինամիկա, գների ինդեքսի **կախվածություն**, **ՀՀ նախագահ** ևն:

Սակայն կան բառեր էլ, որոնք, գործածվելով այլ բառերի փոխարեն, հանիրավի խլում են դրանց իմաստը և գործածության իրավունքը, փորձում են նվաճել նոր իմաստներ, որոնք անհարիր են այդ բառերի բուն նշանակությանը, առավել ևս դրանց կապակցական հնարավորություններին: Ահա այդպիսի բառագործածության մի շարք օրինակներ՝ նախաձեռնություն **դրսևորել**

(**«հանդես բերել**), աշխատանքը **վերջացնել** (**«ավարտել**), հանդիպումը **տեղափոխվում է** (**«հետաձգվում է**), **մեծացնել** (**«ավելացնել**) ապրանքաշրջանառությունը, աշխատանքներ **են տարվում** (**«կատարվում**), հարցեր **բարձրացնել** (**«առաջադրել**), նամակ ուղղել **ՀՀ վարչապետին՝ բարձրացված** (**«առաջադրված**) խնդիրներով, կտրուկ **միջոցառումներ** (**«միջոցներ**) ձեռնարկել, ժամանակի **մեծամասնությունը** (**«մեծ մասը**), **կառավարել** (**«տնօրինել**) ձուլակտորներ և մետաղադրամ, թղթակցությունների **ուղարկում** (**«առաքում**), հանդիպումը **կայացել է** (**«տեղի է ունեցել**), **պատրաստվում է** (**«մտադիր է**) բողոքարկելու, **այն** (**«դա**) կարևոր փաստաթուղթ է, բարձր (**«ամուր**) հիմքերի վրա դնել, հարցի **կապակցությամբ** (**«վերաբերյալ**), մենք **գտնում ենք** (**«կարծում ենք, այն կարծիքին ենք**), պաշտպանական հատկանիշներով **օժտված** (**«հատկանիշներ ունեցող**) թղթադրամներ ևն:

Բառերի անհամատեղելիությունը կարող է առնչվել անձ և ոչ անձ տարբերությանը: Երբեմն անձի հետ առնչվող բառը գործածվում է ոչ անձի համար և բնավ ոչ անձնավորման նպատակով: Բառի այդպիսի անհամապատասխան գործածությունը ստեղծում է իմաստային անճշտություն: Օրինակ՝ Արդեն ժամանակն է, որ գնամ **վաստակավոր** հանգստի: **Վաստակավոր** լինում են անձերը՝ գիտության վաստակավոր գործիչ, վաստակավոր մանկավարժ: Իսկ հանգիստը կարող է լինել **վաստակած**: Իմաստային անճշտություն է առաջացնում նաև հակառակ կարգի շփոթությունը, երբ անձի համար գործածվում է նրա հետ չառնչվող բառը: Օրինակ՝ Իմ պաշտպանյալը **ճիշտ է**, և նրան ներկայացվող մեղադրանքները **իրավացի** չեն, **անարդար** են. այս նախադասության մեջ իմաստային երեք անճշտություն կա: Ճշմարիտ կամ ճիշտ լինում են ոչ թե անձինք, այլ նրանց մտքերը, գաղափարները, խոսքերը, իսկ անձը կարող է լինել իրավացի, արդարացի, և հակառակը՝ իրավացի կամ անարդար չի կարող լինել մեղադրանքը:

Բառերի անհամատեղելիությունը հաճախ պայմանավորված է դրանց իմաստային յուրահատկություններով: Բառը իր այս կամ այն իմաստով համատեղելի է որոշակի բառերի կամ բառիմաստների հետ, և այդ հանգամանքի անտեսումը առաջ է բերում խոսքի անճշտություն: Այսպես՝ **մերձենալ** կարող են նյութեղեն իրերը, անձինք, իսկ կապերը կարող են **սերտանալ**: Հետևաբար ճիշտ չէ հետևյալ նախադասության մեջ **մերձենալ** բառի գործածությունը՝ Դա նպաստեց երկու երկրների միջև կապերի **մերձեցմանը**: Կամ՝ **Մերձեցին** (≡ **հերքեցին, ժխտեցին**) անվստահություն ցուցաբերելու մասին մեղադրանքները: Թերահավատորեն **մոտեցավ** (≡ **վերաբերվեց**) նախարարի խոսքերին:

Բառերի անհամապատասխանությունը երբեմն առաջանում է **բաղարկության** հետևանքով. երկու նման կառույցներ (բառակապակցություններ) խառնվում են իրար՝ Նշված **պայմանները չկատարելու** դեպքում պայմանագիրը վաղաժամկետ կխզվի: Այստեղ խառնվել են **պահանջները բավարարել** և **պայմանները կատարել** կապակցությունների ընդգծված բաղադրիչները: Ճիշտ են՝ պայմանները **չբավարարելու** դեպքում,պահանջները **չկատարելու** դեպքում:

–**երեն** ածանցով կազմությունները իմաստային քիչ առնչություն ունեն –**ական** ածանցով այն կազմությունների հետ, որոնք ցույց են տալիս ազգին, ժողովրդին կամ նրա մշակույթին բնորոշ հատկանիշ: Օրինակ՝ ըստ բացատրական բառարանների՝ **հայերեն**–ը 3–րդ իմաստով՝ որպես ածական, իմաստային կապ ունի **հայկական, հայացի** բառերի հետ: Սակայն երբ խոսքը լեզվին է վերաբերում կամ լեզվական միավորներին, **հայկական**–ը չի կարող գործածվել **հայերեն**–ի փոխարեն, կամ **Ֆրանսիական**–ը՝ **Ֆրանսերեն**–ի փոխարեն, ինչպես հետևյալ օրինակում՝ **Վճռաբեկություն** տերմինը ծագել է **Ֆրանսիական** (≡ **Ֆրանսերեն**) *casser* բառից, որ նշանակում է ջարդել, այսինքն՝ վերացնել դատարանի դատավճիռը:

Անճիշտ բառագործածության այլ օրինակներ՝ Կառավարման գործունեությունն իրականացվում է դրա համար **հատկապես** (≡ հատուկ) լիազորված պետական ծառայողները կողմից, որոնք նախատեսված են **նախորդ** (≡ նախկին) օրենսդրությամբ,չորրորդ կետով նախատեսված ծանրացնող հանգամանքի **առումով** (≡ կապակցությամբ) անհրաժեշտ է նշել նաև..., համապատասխան տեղեկատվության մուտք գործելու հնարավորության **փակումը** (≡ արգելքը)...., Անզգուշությամբ առաջացրել են մարդու մահ և (≡ կամ) այլ ծանր հետևանքներ, Եվրոպական պետությունների հիմնական մասը **բռնեց** (≡ ընտրեց) հիշատակված ուղիներից երկրորդը, Կողմերը համաձայնագրով ստանձնում են հետևյալ հիմնական **պարտականությունները** (≡ պարտավորությունները),անզգուշությամբ **առաջացրել է** (≡ հասցրել է) ծանր կամ միջին ծանրության վնաս մարդու առողջությանը, **Ավելացնել** (≡ բարձրացնել) բարեկեցության մակարդակը,սույն հոդվածը նպատակ ունի **երաշխավորել** (≡ ապահովագրելու) անձին ապօրինի մեղադրանքից, Այդ հարցի **հետ կապված** (≡ վերաբերյալ) ունեն դիտողություններ ևն:

Խոսքի անճշտության պատճառ կարող է դառնալ նաև բառերի կամ բառաձևերի **քերականական անհամատեղելիությունը**: Օրինակ՝ հաճախ հոգնակի լրացյալի հետ գործածվելիս շփոթվում են **բոլոր** և **ողջ** դերանունները: Ըստ կանոնների՝ **բոլոր** դերանունը պահանջում է հոգնակի թվով որոշյալ, **ամբողջ**–ը՝ որոշյալ առումով եզակի թվով լրացյալ: Այսպես՝ **բոլոր** հաճախորդները, **բոլոր** տարածքները, **ամբողջ** ունեցվածքը: (**Ամբողջ**–ը **մի** վերաբերականի հետ կարող է ունենալ նաև անորոշ առումով լրացյալ՝ **ամբողջ մի** երկիր, **մի ամբողջ** տարի): Միայն է՝ **ամբողջ** տարածքները, **ամբողջ** ունեցվածքները: Կամ՝ **յուրաքանչյուր**, **ամեն մի** դերանունների հետ սովորաբար քերականորեն անհամատեղելի են որոշյալ առումով լրացյալները՝ **ամեն մի հայցվորը**, **յուրա-**

քանչյուր պաշտոնատար անձը ևն (այս մասին ավելի մանրամասն տե՛ս քերականության բաժնում):

Ավելորդաբանություն և կրկնաբանություն: Երբեմն խոսքում գործածվում են բառեր ու արտահայտություններ, որոնք, իմաստային ու ոճական որևէ դեր չունենալով, ծանրաբեռնում են խոսքը, առիթ տալիս իմաստային անճշտությունների, դառնում խոսքի ավելորդ, մակաբույծ տարրեր (**ավելորդաբանություն**): Օրինակ՝ Տնօրենը Ձեր ներկայացրած փաստաթղթի **տակ** արդեն ստորագրել է. այս նախադասության մեջ բոլորովին ավելորդ է **տակ** բառը, քանի որ **ստորագրել**–ը արդեն իսկ այդ իմաստը պարունակում է: Գիշտ է՝ Տնօրենը Ձեր ներկայացրած փաստաթուղթը արդեն ստորագրել է: Կամ՝ Կրած ֆինանսական վնասը հասնում է **մինչև** 5 միլիարդ դրամի. ավելորդ է **մինչև** բառը: Գիշտ է նախադասության հետևյալ տարբերակը՝ Կրած ֆինանսական վնասը հասնում է 5 միլիարդ դրամի: Ավելորդաբանության այլ օրինակներ՝ **հետ** վերադարձնել (← վերադարձնել), այդպիսի **ծևով** (← այդպես), բնագրերի **տեքստում** (← բնագրերում), **ավելի** նախընտրելի է (← նախընտրելի է), **ապագա** կատարելիք (← կատարելիք), առ **այն** մասին (← առ այն), **զգալիորեն** վատթարացան (← վատթարացան // զգալիորեն վատացան), պետք է դիտվի **որպես** շրջանառությունից դուրս (← պետք է դիտվի շրջանառությունից դուրս) ևն:

Ավելորդաբանության մի տարատեսակ է **քերականական ավելորդաբանությունը**, որը հաճախ շփոթվում է քերականական ավելադրության հետ (վերջինս ոճական հնարք է): Ավելորդաբանություն է, երբ համապատասխան քերականական մասնիկը չի պահանջվում, սակայն դրվում է: Օրինակ՝ **հինգ, վեց, յոթ, ութ** թվականների՝ **ը**–ով գործածությունը, երբ դրանք փոխանուն չեն՝ **Վեցը** (← Վեց) օրով հետաձգվել է վարկի տրամադրումը: Բայց՝ **Վեցը** մեծ է **հինգից**: Կամ՝ ստացական հոդի և ստացական դերանվան համատեղ գործածությունը՝ **Իմ** հաշվետվությունս(ը): Եվ կամ՝ քերականական նույնիմաստ ձևերի միաժամանակ կի-

րառությունը՝ Դու մեր գործարքին վերաբերվի՛ր **ոնց որ** առաջվա **պես** (← առաջվա պես) ևն:

Ծանոթություն: Ավելորդաբանության հետ չպետք է շփոթել **ավելադրությունը**, որը ոճական ձև է՝ առավելապես բնորոշ խոսակցական լեզվին, և խոսքում ունի շեշտողական նշանակություն, ինչպես՝ **երկուշաբթի օրը** (երկուշաբթի), **ընդհուպ մինչև** (ընդհուպ / մինչև), **սպիտակ գույնը** (սպիտակը), **ընտանյոք հանդերձ** (ընտանյոք), **կարևոր դեր ունեն կատարելու** (կարևոր դեր ունեն), **երևան քաղաքը** (երևանը), **ապրիլ ամսին** (ապրիլին), **իր մեջ է ընդգրկում** (ընդգրկում է), **դուրս գալու ելք** (ելք), **ներս մտավ** (մտավ) ևն:

Հաճախ նախադասության մեջ որևէ հասկացություն անհարկի կրկնվում է նույն կամ տարբեր ձևավորումով (բացահայտ կամ թաքնված **կրկնաբանություն**): Օրինակ՝ Տեղի ունեցածը եվրախորհրդարանում ներկայացվել է որպես մարդու իրավունքների **ոտնահարման** կոպիտ **խախտում**: Այստեղ միմյանց կրկնում են **ոտնահարում և խախտում** մասնակի հոմանիշները, որոնցից մեկն ավելորդ է: Ուղղված տարբերակներն են՝ Տեղի ունեցածը եվրախորհրդարանում ներկայացվել է որպես մարդու իրավունքների կոպիտ **խախտում**, կամ՝ Տեղի ունեցածը եվրախորհրդարանում ներկայացվել է որպես մարդու իրավունքների **ոտնահարում**:

Նախադասության մեջ երբեմն հանդիպում են նույն, նույնիմաստ կամ իմաստով համընկնող բառերի կից անհարկի կիրառություններ: Օրինակ՝ Գործունեության **համար** անհրաժեշտ պայմաններ ապահովելու **համար** դիմեցին կառավարությանը: Դրանցից երկրորդը հեշտությամբ կարող է փոխարինվել հոմանշային տարբերակով, այսպես՝ Գործունեության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու **նպատակով** դիմեցին կառավարությանը: Այլ օրինակներ՝ Մտից գրանցման **համարը համարվում է** նրա հերթական **համարը**: ← Մտից գրանցման համարը նրա հերթական **համարն** է: Եզիպոսում **ստեղծվել է** անվերահսկելի **քաղաքական** իրավիճակ: Այդպիսի **քաղաքական** իրավի-

ճակ է ստեղծվել նաև Սիրիայում: «... Այդպիսի իրավիճակում է հայտնվել նաև Սիրիան: Ըստ դրամավարկային ծրագրավորման համաձայն... «Ըստ դրամավարկային ծրագրավորման // Դրամավարկային ծրագրավորման համաձայն...

Կրկնաբանության առաջացման պատճառ կարող է դառնալ լավ չհասկացված օտարաբանությունը: Օրինակ՝ Տուժողը լրագրողին դատի է տվել՝ պահանջելով իրեն պատճառած բարոյական վնասը փոխհատուցել դրամական կոնպենսացիայով: Կոնպենսացիա՝ի հայերեն համարժեքն է փոխհատուցումը, որը բայի ձևով արդեն կա նախադասության մեջ: Օտար բառը միանգամայն անտեղի է գործածված: Սխալը ուղղել կարելի է հետևյալ տարբերակներով՝ Տուժողը լրագրողին դատի է տվել՝ պահանջելով իրեն հասցված բարոյական վնասը փոխհատուցել դրամով: // Տուժողը լրագրողին դատի է տվել՝ պահանջելով իրեն հասցված բարոյական վնասի դրամական փոխհատուցում: Կամ՝ Շտապ պիտի զբաղվել առանձնատան ներքին ինտերիերով. ընդգծված բառը ֆրանսերենում (*intérieur*) նշանակում է «Շենքի ներսի ճարտարապետական և գեղարվեստական ձևավորումը», այսինքն՝ արդեն իսկ իր մեջ ունի ներս՝ի իմաստը, հետևաբար դրա հետ համատեղ չի կարող գործածվել: Ճիշտ է՝ Շտապ պիտի զբաղվել առանձնատան ներքին հարդարմամբ:

Երբեմն կրկնաբանությունը նույնանում է ավելորդաբանությանը, ինչպես՝ Շարադրեց իր ինքնակենսագրությունը: «Շարադրեց ինքնակենսագրությունը: Բանախոսը կարևորեց Վաչինգտոն-Երևան երկկողմանի երկխոսությունը:

Ծանոթություն: Կրկնաբանության հետ չպետք է շփոթել ոճական-արտահայտչական արժեք ունեցող կրկնությունները:

Ավելորդաբանությունների և կրկնաբանությունների զգալի մասը հայերեն է մուտք գործել այլ լեզուների, մասնավորապես ռուսերենի ազդեցությամբ՝ ձևավորելով օտարաբանությունների կամ ավելորդությունների մի շարք, որը հարիր չէ հայ մարդու

ազվամտածողությանը և արդի հայերենի կանոնին ու ոգուն: Այդպիսի կառույցների պատճառով խոսքը դառնում է երկարաբան և ոչ հստակ: Հայերենն ունի դրանց համապատասխան հայեցիկները՝ գերծ ավելորդ բառերից ու արտահայտություններից, հարկ միայն դրանք իմանալ և գործածել, ինչպես՝ **вопрос состоит в ом** – հարցը կայանում է նրանում ⇒ հարցն այն է, **вопрос в том** – արցը նրանումն է ⇒ հարցն այն է, **еще раз** – կրկին անգամ ⇒ րկին // մեկ անգամ ևս, **повторять снова** – նորից կրկնել ⇒ րկնել, **новая система, это...** – նոր համակարգը, դա... ⇒ նոր ամակարգը..., **является ответственным** – պատասխանատու է անդիսանում ⇒ պատասխանատու է, **вместе с заказчиком** – ատվիրատուի հետ միասին ⇒ պատվիրատուի հետ ևն:

ԴԱՐՉԱԿՑՔՆԵՐ: Երկու կամ ավելի բառերի կայուն կապակցություններ են՝ փոխաբերական նշանակությամբ: Ի տարբերություն ազատ բառակապակցությունների՝ ամեն անգամ չեն ստեղծվում տվյալ իրադրության համար, այլ պատրաստի դրվում են գործածության մեջ: Ի տարբերություն կայուն (ոչ դարձվածքային) բառակապակցության բաղադրիչների՝ դարձվածքի բաղադրիչները միասնաբար նոր՝ փոխաբերական-այլաբերական իմաստ են արտահայտում: Նույն բաղադրիչներով կազմված շատ բառակապակցություններ մի դեպքում սովորական շարահյուսական կապակցություններ են, ինչպես՝ Անզուշաբար ջուրն ընկավ, մեկ այլ դեպքում՝ կիրառության մեջ՝ դարձվածքներ՝ Բոլոր սպասումները ջուրն ընկան: Առանձին բառը հազվադեպ է ունենում դարձվածքի արժեք: Այդպիսի բառերը հիմնականում հարադրություններ են՝ կուչ գալ, լաց լինել, երեսով տալ ևն:

Դարձվածքի իմաստը կարող է արտահայտվել մեկ բառով՝ գլխի ընկնել – հասկանալ, բերման ենթարկել – բերել, հին երգը երգել – կրկնել: Որոշ դարձվածքներ հանդես են գալիս նախադասության տեսքով՝ Տաշած քարը գետնին չի մնում: Մի՛ դատիր, որ չդատվես: Լայն իմաստով՝ դարձվածքային միավորներ են նաև առածը, ասացվածքը, անեծքը: Դարձվածքները

առավելապես ժողովրդական ծագում ունեն՝ **թուկից փախած, ականջ դնել, ձեռք քաշել, լեղին պատռել, սատանայի բաժին դառնալ** ևն: Տարբերում են նաև գրական կամ գրքային ծագում ունեցող դարձվածքներ: Դրանք հայոց կամ օտար առասպելներից, Աստվածաշնչից, գրական երկերից սերված դարձվածքներ են, ինչպես՝ **պրոկրուստյան մահիճ** (մահվան մահիճ), **վերջին մոհիկան** (վերջին ներկայացուցիչ), **ձայն բարբառո հանապատի** (զուր հնչած խոսք), **դանայան տակառ** (անվերջանալի, անպտուղ աշխատանք), **գորդյան հանգույց** (դժվար լուծելի, կնճռոտ խնդիր), **Թեմիսի սպասավոր** (արդարության սպասավոր՝ դատավոր, իրավաբան), **ավերակացս որպես թագավորեմ, բաբելոնյան աշտարակաշինություն, մեռած հոգիներ, մեծապատիվ մուրացկաններ, մեղմացուցիչ դեպք հանցանաց, խելքից պատուհաս** ևն:

Թեև դարձվածքները պատրաստի վերարտադրվող միավորներ են, սակայն դրանց այս կամ այն բաղադրիչը թեև ոչ հաճախ, բայց կարող է փոխարինվել համարժեք կամ համապատասխան տարրով՝ ստեղծելով դարձվածքային տարբերակ (տարբերակային դարձվածքներ), ինչպես՝ **գայլի գլխին ավետարան կարդալ – գիլու գլխին քարոզ կարդալ, շան օրը գցել – շան օրի դնել, աստված չանի – աստված ոչ անի, սարերը ընկնել – սարեսար ընկնել** ևն: Անհատ հեղինակների կողմից կատարվող ներդարձվածքային հաջող փոփոխությունները ակտիվացնում են դարձվածքի արտահայտչական դերը:

Դարձվածքները, ինչպես բառային միավորները, լինում են **մեն-իմաստ՝ հաց կտրել – հյուրասիրվել, հավատ ընծայել – հավատալ, բազմիմաստ՝ ոտքի կանգնել – 1. նստած տեղից վեր կենալ, 2. ընկած տեղից բարձրանալ, 3. վիճակը լավացնել, 4. ըմբոստանալ, ընդվզել, 5. առողջանալ, հոմանիշ՝ ձեռքը վերցնել – բուռը հավաքել, հականիշ՝ աչքի լույս – աչքի փուշ // աչքի գրող, կրակի գին – ջրի գին, համանուն՝ հացը կտրել – 1. գրկել, 2. ընկերակից լինել, հյուրասիրվել, հարանուն՝ աչքի ընկնել – աչքից ընկնել** ևն:

Դարձվածքների ճիշտ գործածություն: Դրանց գործածությունը խոսքում հատուկ ուշադրություն է պահանջում: Խոսքաշարում լեզվական նորմերից շեղվելու պատճառ կարող են դառնալ դարձվածքի՝ դարձվածքային սխալ կամ անհարկի փոփոխությունը կամ ոչ ճիշտ նշանակությամբ գործածությունը:

Դարձվածքները կայուն կապակցություններ են, իսկ դա նշանակում է, որ նրա բաղադրիչները միմյանց հետ սերտ կապի և միասնության մեջ են: Դարձվածքային ամեն մի փոփոխություն պետք է լինի ճիշտ և նպատակային: Ներդարձվածքային փոփոխություն կատարելիս հեղինակից պահանջվում են ձիրք, նուրբ լեզվագագացողություն, ճաշակ: Այդ փոփոխությունները խոսքի արտահայտչականության կարևորագույն միջոցներից են: Պետք է զանազանել ներդարձվածքային փոփոխությունները կամ ձևափոխությունները տարբերակային դարձվածքներից. վերջինները լեզվում ամրակայված բառարանային միավորներ են՝ գոյություն ունեցող դարձվածքների տարբերակային ձևեր՝ **սուր ճոճել / նիզակ ճոճել, լեղին պատռել / լեղին ջուր դառնալ, ճամփեն թեթել / ճամփեն ծռել** ևն: Առաջինները գործածողի կողմից ոճական նպատակներով փոփոխությունների ենթարկված դարձվածքներ են: Փոփոխությունները հիմնականում լինում են հետևյալ կարգի.

1. Դարձվածքի՝ անորոշ ձևով բայական բաղադրիչը գործածվում է խոնարհված ձևով՝ Մեր ազգային քաղաքականության ծանրության կենտրոնը **սխալ տեղ դրին**: Հոս զանց կ'ամեն միջազգային մամուլին կողմ է Ձեզի տրուած «չափաւոր», «գործապաշտ» եւ նման այլ բնութագրումները, որովհետեւ անոնք իրենց **մանելիք բուրդը ունին**:

2. Բարբառային կամ խոսակցական բաղադրիչը փոխարինվում է գրական որևէ համարժեքով, կամ հակառակը՝ գրականը՝ բարբառայինով կամ խոսակցականով՝ աչքի **զարկել – աչքի ընկնել – աչքի զարնել, գյամը քաշել – սանձը քաշել, մարմանդ գետ – հանդարտ գետ**:

3. Դարձվածքի բաղադրիչները միջարկվում են խոսքի **Լայլ** տարրերով. հավելվում են բառեր կամ բառակապակցություններ. ընդլայնվում է դարձվածքի նշանակությունը. Աշխարհի բլին **չաքով** մի՛ չոքիր, Հիմ օրերի **տխուր** երգը երգել, Համբերության **բաժակը** լցվել է **պաղ, շատ պաղ** ջրով, Թեմիսի **անխոնջ** սպառակոր, Նա սիրում է կրակի հետ **ժամանակ առ ժամանակ** խաղալ:

4. Փոխվում է բաղադրիչներից որևէ մեկը, ինչպես՝ Բոլոր ճանապարհները տանում են **Բաղրամյան 26** (← Հոռոմ): ճաշակեցրոն իշխանությունների գործունեության **տհաս** (← դառը) պտուղները:

5. Փոխվում է բաղադրիչների շարադասությունը՝ Ձեր **հաղթանակը այլուռոսյան էր** (← այլուռոսյան հաղթանակ):

6. Կարող է կրել ձևաինաստային փոփոխություններ՝ **Սերը սուր է դարձել, արյունը՝ ջուր** ← **Սերը դարձել է սուր, ու ջուրը՝ արյուն**:

7. Փոփոխության է ենթարկվում, այսպես կոչված, դարձվածքային հավելումներով. իմաստային նոր նրբերանգներ են ավելանում ավանդական իմաստին՝ Հայրենիքը սկսվում է սահմաններից, ...հայրենիքը նաև **կորսվում է** սահմաններից: Հաղթողներին չեն դատում... **գուցե, առայժմ**: Չուկ են որսում **իրենց պղտորած** ջրում:

Ներդարձվածքային փոփոխությունը երբեմն կարող է վերածվել տարբերակային դարձվածքի: Օրինակ՝ **Պղտոր ջրում ձուկ որսալ / Ջուր պղտորել ձուկ որսալու համար: Մուխ սենյակում կատու բռնել / Մուխ սենյակում սև կատու բռնել**:

Դարձվածքի նպատակային և հաջող փոփոխությունը ակտիվացնում է դարձվածքի իմաստը, թարմություն հաղորդում խոսքին: Առանձին փոփոխություններ պարզապես առաջ են բերում դարձվածքային նոր իմաստ. այս դեպքում արդեն գործ ունենք տարբեր դարձվածքների հետ, ինչպես՝ **աչքի ընկնել / աչքին ընկնել / աչքից ընկնել / աչքով ընկնել** ևն: Դարձվածքների մեծ մասը ունի բաղադրիչների խիստ կայուն շարադասություն, ինչպես՝ **գլուխ հանել, նման զննան սիրե, ծայն բազմաց՝ ծայն**

Աստծո, բերման ենթարկել, ֆորս մաժոր, միտք անել, եկա, տեսա, հաղթեցի ևն, և շարադասական ցանկացած փոփոխություն կարող է խաթարել դարձվածքի իմաստը:

Խոսքի ճշտության հիմնական պայմաններից մեկը նաև դարձվածքի կիրառությունն է իր ճշգրիտ նշանակությամբ: Օրինակ՝ Մեր սպասելիքներն **ի դերև ելան**, և կարճ ժամանակում լուծվեցին բոլոր խնդիրները: **Ի դերև ելնել** նշանակում է ապարդյուն անցնել, և այս շարադրանքում սխալ է գործածվել, քանի որ իր նշանակությամբ հակասում է խոսքի բովանդակությանը: **Վերջին հրաժեշտն ենք տալիս** մեր սիրելի շրջանավարտներին. ընդգծված դարձվածքը միանգամայն սխալ նշանակությամբ է գործածված. այն ասվում է հանգուցյալին հրաժեշտ տալու առիթով:

Խոսքի բովանդակությունը կարող է պատճառ դառնալ դարձվածքային իմաստի ոչ ճիշտ մեկնաբանության, օր.՝ Քիչ մարդիկ ունեն **իրենց ծովային իններորդ ալիքը**:

Անթույլատրելի են՝ • **դարձվածքների անհաջող միախառնումը** (կոնտամինացիան)՝ ժողովրդին կիսատ **ճշմարտություններով օրորել** (??), **Հողն իմաստավորվեց** (??) հերոսների արյամբ, • **դարձվածքով անհարկի անձնավորումը**՝ Փաստաթուղթը **ուտքից գլուխ** տոգորված է կեղծավորությամբ, • **դարձվածքների բառային կազմի աղավաղումը**՝ ...ժողովուրդը **այրվում է** գիշերային ցրտից և շարունակ տեղացող **անձրևից**. այրվել թերևս կարելի է նաև ցրտից (սովորական է՝ **այրվել շոգից**), բայց ակնհայտորեն անճիշտ է **անձրևից այրվել**—ը, կամ՝ Բնակիչները փորձել են նրա նկատմամբ **լինչի դատարան կիրառել** (փոխ.՝ **լինչի դատաստան տեսնել**՝ պատժել, հաշվեհարդար լինել), Կրոնական այդ ուսմունքի հետևորդները մոլորության մեջ **են դնում** (← զցում, կամ՝ մոլորեցնում են) իրենց շրջապատի մարդկանց, • **քերականական անհարկի փոփոխությունները**՝ **հոգնակի թվի փոխարինումը եզակիով կամ հակառակը՝ Ձեռքը** լվաց և մի կողմ քաշվեց, • **կապերի անճիշտ փոփոխությունը**՝ **եզան կողքը** (← տակ) հորթ եք փնտրում:

ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ: Բառարանները համակարգված ներկայացնում են բառերի մասին զանազան կարգի տեղեկություններ՝ մեկնաբանություններ, բացատրություններ, թարգմանություններ, գործածության կանոններ, հոմանիշներ ևն: Որպեսզի դրանցում տեղեկություն գտնելը դյուրին լինի, նյութը բաժանվում է որոշակի ներքին կառուցվածքով մասերի, որոնք կոչվում են **բառահոդվածներ:** Բառարանների բազմազան տեսակներ կան: Դրանք բաժանվում են երկու մեծ խմբի՝ **հանրագիտական** և **լեզվաբանական** (բանասիրական):

Հանրագիտական բառարանում ներկայացվում է մարդկային գիտելիքի առկա վիճակը տվյալ բնագավառի վերաբերյալ: Հանրագիտական բառարանները լինում են **համընդհանուր** և **ճյուղային:** Համընդհանուր են, օրինակ, «Հայկական սովետական հանրագիտարան»-ը (1-12-րդ հհ., եր., 1974-1987), «Հայկական համառոտ հանրագիտարան»-ը (1-4-րդ հհ., եր., 1990-2003), «Ոսկեփորիկ» մանկական հանրագիտարան»-ը (1-3-րդ հհ., եր., 1993-1999): **Ճյուղային են**, օրինակ, **Հ. Պետրոսյանի** «Հայերենագիտական բառարան»-ը (եր., 1987), «Հայաստանի բնաշխարհ»-ը (եր., 2006), «Հանրամատչելի բժշկական հանրագիտարան»-ը (եր., 2001), **Հ. Աճառյանի** «Հայոց անձնանունների բառարան»-ը (1-5-րդ հհ., եր., 1942-1962), **Թ. Հակոբյանի, Ս. Մելիք-Բախչյանի, Հ. Բարսեղյանի** «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»-ը (1-5-րդ հհ., եր., 1986-2001) ևն:

Լեզվաբանական բառարաններից կարևորներն են բացատրականը, ուղղագրականը, ստուգաբանականը, թարգմանականը, դարձվածաբանականը, հոմանիշներիցը, բառակազմականը ևն:

Բացատրական բառարանում տրվում են բառերի իմաստներն ու նշանակությունները, իմաստային նրբերանգները, քերականական գլխավոր հատկանիշները, մասամբ նաև բառիմաստի կրած փոփոխությունները: Օրինակ՝ **Գ. Ալետիքեան, Խ. Սիրմելեան, Մ. Ալգերեան,** Նոր բառգիրք հայկազեան լեզուի, 1-2-րդ

հհ., Վենետիկ, 1836-1837: **Ս. Մալխասեանց,** Հայերեն բացատրական բառարան, 1-4-րդ հհ., եր., 1944-1945: **Էդ. Աղայան,** Արդի հայերենի բացատրական բառարան, 1-2-րդ հհ., եր., 1976: **Ա. Նալչաջյան,** Հոգեբանական բառարան, եր., 1984: **Գ. Կիրակոսյան, Հ. Ղուլչյան, Ի. Տիգրանյան,** Տնտեսագիտական բացատրական բառարան, եր., 1999: **Պ. Բեդիրյան,** Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, եր., 2011:

Ուղղագրական բառարանում տրվում են ուղղագրական դժվարություն ունեցող բառերը և բառաձևերը, դրանց ուղղագրական թույլատրելի տարբերակները: Ամենամբողջականը **Հ. Բարսեղյանի** «Հայերեն ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարան»-ն է (եր., 1973): Ուղղագրական նոր բառարաններ են՝ **Ա. Սուքիասյան, Զ. Սուքիասյան,** «Արդի հայերենի ուղղագրական-ձևակազմական բառարան» (եր., 2002): **Փ. Մեյթիխանյան,** «Հայերենի ուղղագրական նոր բառարան» (եր., 2013):

Թարգմանական բառարանում տրվում են որևէ լեզվի բառերի համարժեքները մեկ այլ լեզվով (երբեմն էլ՝ մեկից ավելի լեզուներով)՝ ըստ առանձին իմաստների: Հաճախ տրվում են լրացուցիչ ցուցումներ և օրինակներ գործածության յուրահատուկ դեպքերի վերաբերյալ: Թարգմանական բառարաններից նշանավորներն են **Ա. Ղարիբյան,** Ռուս-հայերեն բառարան, եր., 1968: **Գ. Անդրեասյան,** Գերմաներեն-հայերեն բառարան, եր., 1976: **Ն. Բարաթյան, Ե. Երզնկյան, Ա. Լազարյան, Ն. Համբարձումյան, Ի. Տեր-Պողոսյան,** Հայերեն-անգլերեն բառարան, եր., 2004: **Վ. Սարգսյան,** Իսպաներեն-հայերեն բառարան, եր., 2004: **Ա. Բարլեզիզյան,** Հայերեն-ֆրանսերեն բառարան, եր., 2009: **Զ. Հացագործյան, Ա. Դարբինյան, Ն. Հովումյան, Գ. Սրվանձտյան,** Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան, եր., 1988: **Լ. Պետրոսյան,** Արդի ռուս-հայերեն իրավաբանական բառարան, եր., 1988: **Ա. Սարգսյան, Ռ. Հակոբյան,** Իրավաբանական տերմինների և շրջասույթների ռուս-հայերեն բառարան, եր., 2005 ևն:

Հոմանիչների բառարանում տրվում են բառերի նույնանիշներն ու հոմանիշները՝ ըստ առանձին իմաստների, երբեմն՝ նաև դրանց նշանակությունների տարբերությունները և գործածության օրինակներ: Առավել ամբողջական է **Ա. Սուրբասյանի** «Հայոց լեզվի հոմանիշների բառարան»-ը (Եր., 1967):

Համանունների բառարանում տրվում են տվյալ լեզվի համանունները՝ քերականական և իմաստային նշումներով: Առավել ամբողջական է **Ե. Գևորգյանի** «Ժամանակակից հայոց լեզվի համանունների բառարան»-ը (Եր., 1978):

Բառակազմական բառարանում տրվում են բառերի կազմությունը, բաղադրիչների տեսակները, հնչյունափոխության դեպքերը ևն: Առայժմ առավել ամբողջական է **Ս. Գալստյանի** «Հայերեն բառակազմական դպրոցական բառարան»-ը (Եր., 2011):

Ստուգաբանական բառարանում տրվում են բառերի կամ արմատների ծագումը, նախնական իմաստները, պատմությունը, ածանցյալները, ցեղակից ձևերը այլ լեզուներում, հնագույն վկայությունները, գրական և բարբառային տարբերակները, ստուգաբանության պատմությունը ևն: Ստուգաբանական բառարաններից նշանավորներն են՝ **Հր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, 2-րդ հրատ., հ. 1-4, Եր., 1971-1979: **Գ. Ջահուկյան**, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010:

Կան բառարաններ, որ համակցում են տարբեր տեսակի բառարանների հատկանիշներ, ինչպես, օր.՝ **Հ. Բարսեղյանի** վերոհիշյալ «Հայերեն ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարան»-ը:

2.3. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ

2.3.1. ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ձևաբանական նորմ: Ձևաբանության ուսումնասիրության առարկան: Խոսքի մասեր: Խոսքի մասերի փոխանցում և փոխանունություն: Գոյական. հատուկ և հասարակ գոյականներ: Գոյականի թիվը. հոգնակի թվի կազմության տարբերակներ: Հավաքական գոյականներ: Անեզական գոյականներ: Որոշյալ և անորոշ առումներ: Գոյականի հոլով և հոլովում: Հոլովական տարբերակային ձևեր: Ածական: Ածականի տարբերակային ձևեր: Թվական: Թվականի տարբերակային ձևեր: Թվականի ուղղագրությունը: Դերանուն: Դերանվան տարբերակային ձևեր: Հոդ: Բայ. բայի կազմությունը, բայի սեռը: Բայի անդեմ ձևեր: Ժամանակաձևեր: Անկանոն բայեր: Մակբայ: Մակբայի գործածության յուրահատկություններ: Կապ: Կապերի գործածության յուրահատկություններ: Շաղկապ: Շաղկապների գործածության յուրահատկություններ: Վերաբերականներ: Ձայնարկություններ:

Խոսքի քերականական ճշտությունը ենթադրում է խոսողության գործընթացում քերականական ձևերի և շարահյուսական կառույցների նորմերի պահպանում: Դրանք թերևս ավելի բազմաբանակ են, քան մյուս մակարդակներում սահմանված նորմերը: Մենք կանդրադառնանք հիմնականում այն կանոններին, որոնց գործածությամբ խոսքը ճիշտ է կառուցվում, և դրանցից շեղումները պատճառ են դառնում քերականական անճշտությունների:

Ձևաբանական նորմ: Ձևաբանական օրենքների ու օրինաչափությունների ամբողջությունն է: Ինչպես լեզվական նորմի մյուս տեսակները, ենթակա է փոփոխությունների ու զարգացման: Եթե բառագիտական և շարահյուսական մակարդակներում նորմի փոփոխության հիմնական գործոնները հասարակական կյանքի զարգացումներն են, օտար լեզուների ազդեցությունները, ապա ձևաբանական մակարդակում դրանք առավելապես պայմանավորված են լեզվի ներկառուցվածքային փոփոխություններով՝ գրական և խոսակցական լեզուների փոխհարաբերությամբ, բարբառների ազդեցությամբ, լեզվի գործառական տարբերակների

զարգացմամբ ևն: Ձևաբանական նորմի զարգացումը ի վերջո հանգում է ձևաբանական զուգաձևություններից մեկի (երբեմն նաև տարբերակների) նախընտրությանը: Դա իր հերթին թելադրվում է որոշակի սկզբունքներով՝ տարբերակի բացարձակ գերակշռությունը գրական հայերենում, համապատասխանությունը հայերենի ձևաբանական կառուցվածքին, հարազատությունը ազգային լեզվամտածողությանը, հայերենի քերականական ձևերի միօրինակությանն ու զարգացմանը նպաստելը ևն³³:

Ձևաբանությունը քերականության երկու բաժիններից մեկն է: Մյուս բաժինը շարահյուսությունն է: Ձևաբանությունը ուսումնասիրում է խոսքի մասերը և բառերի ձևափոխությունների կանոնները:

Հաղորդակցման ընթացքում բառերը կարող են ենթարկվել ձևափոխությունների՝ առաջ բերելով տվյալ խոսքին անհրաժեշտ բառաձևեր: Այդ ձևափոխությունները կատարվում են մի քանի եղանակով. **1.** բառին մասնիկ ավելացնելով կամ վերջամասնիկը կամ նախամասնիկը փոխելով (**մասնիկավորում** կամ **արտաքին թեքում**)՝ **խաղ–ալ**, **շենք–ում**, **կ–մնա**, **գլոր–վ–ել**, **գինի–ու**, **2.** բառի (արմատի) ներսում **1–2** հնչյուն փոփոխելով (**ներքին թեքում**)՝ **շուն > շան**, **անուն > անվան**, **մայր > մոր**, **3.** ամբողջ բառարմատի փոփոխությամբ (**տարարմատություն**)՝ **ես > ինձ**, **ով > ում**, **ուտ–ել > կեր–ել**, **4.** օժանդակ կամ սպասարկու բառի միջոցով՝ **ավելի** գեղեցիկ, **պիտի** գնա, **մի՛** գրիր, **չեմ** կարդա:

Մասնիկները բառին կարող են ավելանալ՝ **1.** սկզբից (նախամասնիկ)՝ **կ–գա**, **չ–գնա**, **ամենա–մեծ**, **2.** վերջից (վերջամասնիկ կամ վերջավորություն)՝ **ծով–եր**, **մեծ–ագույն**, **կարդ–աց**, **գիրք–ը**:

Բառի այն ձևը, որին մասնիկ է ավելանում, կոչվում է հիմք: Օրինակ՝ **ծառ–ը**, **ծոր–եր**, **սար–ից**, **կ–ուտեմ**, **չ–ասաց**: Եթե բառի կազմում մեկից ավելի մասնիկներ կան, ապա հիմք է համարվում ամենավերջին քայլում ավելացած մասնիկից զատ բառամասը՝ ներառյալ ավելի շուտ ավելացած մասնիկ(ներ)ը՝ **ընկեր–ներ**, **ըն–**

կերներ–ից, **ընկերներից–ս**, **գր–եմ**, **կ–գրեմ**: Հիմքը կարող է լինել հնչյունափոխված կամ անհնչյունափոխ՝ **նկարիչ–ներ** (անհնչյունափոխ), **նկարչ–ի** (հնչյունափոխված):

Ներքին թեքման դեպքում մի բառաձևը **ելաձև** (ելակետային ձև) է լինում մյուս բառաձևի համար՝ **տուն > տան**, **հայր > հոր**: Տարարմատության դեպքում համեմատվող ձևերից մեկը լինում է **սկզբնաձև**, մյուսը՝ թեք ձև՝ **ուտել > կերա**, **դու > քեզ**:

Բառի ձևափոխությունները (այդ թվում՝ սկզբնական ձևը կիրառության մեջ) կոչվում են **բառաձևեր՝ գործ, գործի, գործից, գործով, գործում**: Բառաձևերից մեկը՝ սկզբնականը, ելակետայինը (գործ), համարվում է բառի **ուղիղ ձև**, իսկ մյուսները՝ **թեք ձևեր**: Բառաձև կազմող հիմքը և դրան ավելացող մասնիկները **ձևաբանական բաղադրիչներ** են: Ձևաբանությունը ուսումնասիրում է բառի ձևաբանական փոփոխությունները, խոսքի մասերը:

ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐ: Խոսքի մասերը բառերի իմաստային–քերականական խմբեր են: Հայերենում տարբերում են 10 խոսքի մաս՝ **գոյական (անուն)**, **ածական (անուն)**, **թվական (անուն)**, **դերանուն**, **բայ**, **մակբայ**, **կապ**, **շաղկապ**, **վերաբերական**, **ծայնարկություն**: Խոսքի մասերը լինում են ձևափոխվող (թեքվող) և չձևափոխվող (չթեքվող): Ձևափոխվող են գոյականը, բայը, մասամբ՝ դերանունը, փոխանվանաբար կիրառվելիս՝ նաև ածականը, թվականը:

Որոշ խոսքի մասեր ունեն խոսքիմասային տարբերակիչ, յուրահատուկ ձևեր, օրինակ՝ բայը, գոյականի թեք ձևերը: Մյուսները տվյալ խոսքի մասին բնորոշ ձևեր չունեն: Ուստի բառերի մեծ մասի դեպքում միայն ձևով չի կարող որոշվել, թե դրանք ինչ խոսքի մասի են պատկանում: Բառի խոսքիմասային պատկանելությունը որոշելիս առաջնորդվում ենք նախ և առաջ նրա արտահայտած ընդհանուր իմաստով (իմաստաբանական հիմունք): Ի՞նչ է անվանում՝ առարկա (գոյական), առարկայի հատկանիշ (ածական, թվական), գործողություն (բայ), գործողության հատկանիշ (մակբայ), ունի՞ քերականական հարաբերության իմաստ (կապ, շաղկապ)

³³ Հարցի մասին ավելի մանրամասն տե՛ս **Ձ. Աղաջանյան**, Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Եր., 2007:

կամ արտահայտող՝ և է վերաբերմունք (վերաբերական, ծայնարկություն): Կան շատ բառեր, որոնք կարող են արտահայտել երկու կամ ավելի խոսքի մասի իմաստներ՝ խոսքային տարբեր կիրառություններում: Օրինակ՝ **Մինչև** տեղ հասնելս գնացքը շարժվեց (կապ): **Մինչև** տեղ կհասնեի, գնացքը շարժվեց (շաղկ.): Հագել էր **զինվորական** գեղեցիկ համազգեստ (ած.): **Զինվորականը** իր հայրենիքի պաշտպանն է (գոյ.):

Խոսքի մասերի փոխանցում և փոխանունություն: Խոսքի մասերի փոխանցումը լեզվական այն երևույթն է, երբ լեզվի զարգացման ընթացքում բառը ձեռք է բերում խոսքիմասային նոր իմաստ՝ պահպանելով խոսքիմասային նախկին իմաստը կամ կորցնելով այն: Խոսքի մասի փոխանցումը հիմնականում պայմանավորված է **բառի բառային իմաստի փոփոխությամբ**. եթե բառիմաստի փոփոխությունը առաջ է բերում նաև քերականական իմաստի փոփոխություն, փոխվում է նաև խոսքիմասային պատկանելությունը: Այսպես՝ **համեստ, ազնիվ, վիրավոր, մրգաշատ, մուր** և առարկայի հատկանիշ ցույց տվող բազմաթիվ այլ բառեր ձեռք են բերել գոյականական իմաստ և վերածվել են նաև գոյականների՝ գործածվելով իբրև անձնանուններ, տեղանուններ կամ այլ բառեր: Ինչպես՝ **Չորս կողմը մրգաշատ** այգիներ են (ած.): **Մրգաշատ** գյուղը գտնվում է Արմավիրի մարզում (գոյ.):

Խոսքի մասերի փոխանցման հիմք կարող է դառնալ նաև մի **խոսքի մասի բառի կիրառությունը այլ խոսքի մասի բառի նշանակությամբ**: Օրինակ՝ **Առաջ** այդ մասին գրեթե չէր խոսվում (մակբ.): Գնացքը մեկ ժամ **առաջ** մեկնեց (կապ): **Մինչև** տուն ուղեկցեցի նրան (կապ): **Մինչև** ուշքի եկավ, պայուսակն անհետացել էր (շաղկ.): Ինձ անհայտ են այդ հիվանդությունը **ծնող** պատճառները (դերբ.): Ամեն **ծնող** մի մեծ սեր ունի իր սրտում (գոյ.):

Խոսքի մասերի փոխանցման կարևոր աղբյուրներից մեկը **գրաբարյան քարացած քերականական ձևերն** են, որոնք, ժամանակի ընթացքում կորցնելով բառական իմաստը, կրելով նաև քերականական իմաստի փոփոխություններ, ծնունդ են տալիս խոսքի

մասերի զանազան փոխանցումների: Օրինակ՝ **կեցցե** (գրբ.՝ **կենալ՝ ապրել**) բառը գրաբար ապառնի ժամանակաձև է (**կեցցեմ, կեցցես, կեցցե**). այսօր դարձել է վերաբերական՝ **Կեցցե՛** ազատ և անկախ Հայաստանը: **Կեցցե՛ս**, դու արեցիր անկարելին: Նմանապես՝ **անցյալ** (գոյ. ← անցեալ՝ գրբ. **անցյալ դերբայ**), **իրավ** (վերաբ. ← իրալ՝ գրբ.՝ **իր** բառի գործ. հոլ.), **իհարկե** (վերաբ. ← իհարկե՝ գրբ.՝ **հարկ** բառի բաց. հոլ.) ևն:

Փոխանունությունը լեզվական այն երևույթն է, երբ ոչ գոյական խոսքի մասերի բառերը գործածվում են գոյականաբար, ձեռք են բերում գոյականին բնորոշ խոսքիմասային հատկանիշներ: Օրինակ՝ **Քչերին** է տրված բարիքին հասու լինելու ունակությունը: Ժողովուրդը չի հասկանում **մեծին**, այսինքն՝ **ստեղծողին**, բայց նա հասկանում է մեծ գործեր **ներկայացնողներին** ու դերասաններին: Կան փոխանունության նաև այլ տարատեսակներ:

ԳՈՅԱԿԱՆ: Առարկա նշանակող կամ անվանող բառ է: Պատասխանում է **ո՞վ, ի՞նչ(ը), ո՞ր(ը), ո՞ւմ, ինչի՞(ն), ումի՞ց, ինչո՞վ** և այլ հարցերի: Կարող է ձևափոխվել ըստ հոլովի, թվի, առման: Չձևափոխված գոյականը խոսքիմասային հատուկ (բնորոշ) ձև չունի: Ըստ իմաստի՝ գոյականները սովորաբար բաժանում են երկու մեծ խմբի՝ 1. **անձնանիշ՝** անձ ցույց տվող գոյականներ՝ **մարդ, զինվոր, քույր, Բակունց, Գեղամենք**, 2. **ոչ անձնանիշ** կամ **իրանիշ՝** իր, կենդանի կամ վերացական երևույթ ցույց տվող գոյականներ՝ **գույք, երևան, Արև, սահման, պետություն, միություն, զգացմունք, արժեք, միտք**: Կենդանիների անունները և վերացական գոյականները նույնպես իրանիշ են: Անձնանիշ և իրանիշ գոյականները քերականորեն տարբերվում են ուղիղ խնդիր ձևավորելիս, երբ անձնանիշ գոյականները լինում են տրականաձև՝ Բերեցին **մեղադրյալին**, իսկ իրանիշները՝ ուղղականաձև՝ Բերեցին **փաստարկներ**: Հակառակը հնարավոր է, եթե իրանիշ գոյականները գործածվեն անձի առումով, ինչպես՝ Շատ է սիրում իր խնամած փոքրիկ **եղնիկին**, կամ անձնանիշ գոյականները՝ իրի առումով՝ Շատ է սիրում **երեխաներ**: Անձնանիշ և իրանիշ գոյա-

կանները քերականորեն տարբերվում են նաև ներգոյական հոլովի կազմության ժամանակ: Անձնանիշ գոյականների ներգոյական (-ում-ով) հոլովածները գործածական չեն: Դրանք փոխարինվում են սեռական-տրական հոլովածնով և մեջ կապով բաղադրված նույնիմաստ կապակցությամբ՝ մարդու մեջ, բժիշկների մեջ, Արամի մեջ, անձերի մեջ:

Հատուկ և հասարակ գոյականներ: Միևնույն տեսակի բոլոր առարկաներին տրվող ընդհանուր անունը հասարակ անուն է: Իսկ միևնույն տեսակի առարկաներից յուրաքանչյուրին տրվող առանձին անունը՝ հատուկ: Հատուկ անունների գրությունը ունի որոշ դժվարություններ (տե՛ս Հավելված 2):

Գոյականի թիվը: Հայերենում գոյականն ունի երկու թիվ՝ եզակի և հոգնակի: Եզակին նշանակում է մեկ առարկա, իսկ հոգնակին՝ նույն տեսակի մեկից ավելի առարկաներ: Սովորաբար հոգնակի թիվ չեն ստանում որոշ վերացական (ազնվություն, կամք, վերացում, ճախր, ծաղր), անհաշվելի (օդ, նավթ, անագ), հավաքական (ամանեղեն, ուսանողություն, վառելիք, դեղորայք) առարկաներ նշանակող գոյականները, հատուկ անունները (Սահարա, Հակոբ, Մեծ Բրիտանիա) և մի շարք այլ գոյականներ (տիեզերք, մթնոլորտ, լուսին):

Հատուկ անունը հոգնակի թիվ ունենում է երկու առանձնահատուկ դեպքերում:

1. Միևնույն անունով մեկից ավելի անձ կամ իր նշանակելիս՝ Եկան տեր և տիկին Արամյանները: Տիգրան Մեծի կառուցած երեք Տիգրանակերտներն էլ հայտնի քաղաքներ են եղել: Արարատ լեռը կազմված է Մեծ և Փոքր Մասիսներից: Հովհաննեսներն այսօր գործի չեն եկել:

2. Տվյալ անձին կամ առարկային բնորոշ հատկանիշ անվանելիս՝ Մենք վարդաններ շատ ենք ունեցել: Երիտասարդությունս անցել է մոսկվաներում: Մեր նոր պատմության մեջ սուլճախթ-

ներ շատ են եղել: Այս դեպքում բառը գրվում է փոքրատառով՝ որպես հատկանիշ անվանող հասարակ գոյական:

Պետք է զգուշանալ երկու կամ ավելի միանման մասերից կազմված առարկաներ ցույց տվող գոյականների՝ ակնոց, ականջակալ, տաբատ, զուգագուլպա, ձեռնաշղթա ևն, հոգնակիի ձևերը եզակիի իմաստով գործածելուց (ակնոցներ դնել): Միալի պատճառներից է այն, որ նման բառերը որոշ լեզուներում (ռուսերեն, անգլերեն) անեզական են:

Գոյականի, ինչպես նաև գոյականաբար գործածված այլ բառերի հոգնակի թիվը կազմվում է՝ ուղիղ ձևին՝ եզակիին, ավելացնելով -եր կամ -ներ վերջավորությունը: Բացառություն են մարդ և կին բառերը, որոնց հոգնակին է՝ մարդիկ, կանայք: Տիկին, պարոն, անձ բառերը, բացի կանոնավոր՝ տիկիներ, պարոններ և անձեր ձևերից, կարող են հոգնակի դառնալ նաև տիկնայք, պարոնայք, անձինք անկանոն ձևերով: (Երբեմն գործածվում է հնից ավանդված տիա՛րք հանդիսական դիմելածևը):

Միավանկ բառերի (այդ թվում՝ փոխանուն ածականների) հոգնակին սովորաբար կազմվում է -եր, իսկ բազմավանկներինը՝ -ներ վերջավորությամբ՝ տն-եր, տարր-եր, նյարդ-եր, շատ-եր, սեղան-ներ, կառավարություն-ներ, սիրամարգ-ներ, եկեղեցի-ներ:

Միավանկ (ինչպես նաև գաղտնավանկով վերջացող երկվանկ մեկուկես վանկանի) վերջնաբաղադրիչով բազմավանկ գոյականների մի մասի հոգնակին կազմվում է -եր վերջավորությամբ՝ ձեռագր-եր, դեղատն-եր, փաստաթղթ-եր, գաղթավայր-եր, բուժքույր-եր: Դրանք այն բառերն են, որոնցում այդ վերջնաբաղադրիչը՝ որպես գոյական, պահպանում է իր բուն իմաստը, իր նախորդ բաղադրիչին համադաս է (սարուձորեր, հարցուփորձեր, թերուղեմեր) կամ նրա լրացյալն է և նրա հետ միասին ցույց է տալիս այդ բուն իմաստի տարատեսակը՝ գիր – հեռագիր, լրագիր, ծրագիր, խորագիր, ճակատագիր, պահ – իրիկնապահ, ցույց – նստացույց, շերտ – հանքաշերտ, քույր – հորաքույր, բուժ-

քույր, այց – ստուգայց, համայց, զոր(ք) – հեծելազոր, կայազոր, թիկնազոր, շար(ք) – սյունաշար, ծայնաշար, ստեղնաշար:

Սա նշանակում է, որ **ձեռագիր–ը, հեռագիր–ը, ծրագիր–ը** գրի տեսակներ են, **առանձնատուն–ը, թոնրատուն–ը, իջևանատուն–ը** տան տեսակներ են, **միջնակետ–ը, ծայրակետ–ը, ստորակետ–ը** կետի տեսակներ են ևն: Այս բառերը մեծ մասամբ կարելի է արտահայտել բառակապակցությամբ, որի գերադաս անդամը (լրացյալը) հենց միավանկ վերջնաբաղադրիչն է, և բառակապակցությունը հոգնակի դարձնելիս **–եր** վերջավորությունն է ստանում հենց այդ բաղադրիչը՝ **խնդրագրքեր – խնդիրների գրքեր, ձեռագրեր – ձեռքի գրեր, նստացույցեր – նստած ցույցեր, միջնակետեր – միջին կետեր:**

Այլ դեպքերում միավանկ վերջնաբաղադրիչով բառն ստանում է **–ներ** վերջավորությունը, ընդ որում՝ այդ վերջնաբաղադրիչը չի ենթարկվում հնչյունափոխության՝ **կենսագիր–ներ, վիպագիր–ներ, հարկահան–ներ, լուսանցք–ներ** ևն: Պատճառն այն է, որ այս դեպքում բաղադրյալ բառը իր միավանկ վերջնաբաղադրիչի նշանակած երևույթի տարատեսակ ցույց չի տալիս, օրինակ՝ **հաշվապահ** նշանակում է ոչ թե «հաշվի պահ», այլ «հաշիվ պահող (անձ)» (նմանապես՝ **իրավապահ–ներ, թիկնապահ–ներ** ևն), **ժամկետ** նշանակում է ոչ թե «ժամանակի կետ», այլ «ժամանակահատված», **տեսակետ** նշանակում է ոչ թե «տեսնելու կետ», այլ «կարծիք, հայացք, մոտեցում», **լիազոր** նշանակում է ոչ թե «լրիվ զորք», այլ «բոլոր իրավունքներն ունեցող (անձ)»: Այսինքն՝ այս դեպքերում միավանկ բառը բաղադրյալ բառի կազմում իր գոյականական բուն իմաստով չէ, որ հանդես է գալիս, այլ մի նոր, մեծ մասամբ՝ բայական, երբեմն էլ՝ փոխաբերական իմաստով:

Միավանկ (ինչպես նաև գաղտնավանկով վերջացող երկվանկ) վերջնաբաղադրիչի՝ ածական լինելու դեպքում բառն ստանում է **–եր** վերջավորություն, եթե, ըստ վերոհիշյալ կանոնի, այդ բաղադրիչը նույն իմաստն ունի, ինչ առանձին կիրառության դեպքում՝

մեծամեծերը, գերծանրերը, ամենափոքրերը, կիսաբաղցրերը ևն, բայց՝ **հավասարամեծները, սրտաբացները** ևն:

Այնուամենայնիվ, կան միավանկ վերջնաբաղադրիչով բառեր, որոնք շեղվում են կանոնից՝ **ծովահեն–ներ, օդահեն–ներ, մանրե–ներ, միրհավ–ներ, վերելք–ներ**, կամ ունեն երկձևություն՝ **երկրաշարժ–(ն)եր, լեռնանցք–(ն)եր, կայազոր(ն)եր, ջրանցք–(ն)եր, ջրհոր–(ն)եր** ևն:

Հոգնակի թվի կազմության տարբերակներ: Լեզվական կանոնի խախտումները հաճախ կապվում են որոշակի կազմություն ունեցող գոյականների թվակազմության հետ:

1. Գաղտնավանկով վերջացող մի շարք երկվանկ բառերի (այդ թվում՝ փոխանուն ածականների) հոգնակին կազմվում է **–եր** վերջավորությամբ՝ **ազդր–եր, ծանր–եր, մանր–եր, տետր–եր, փոքր–եր** (դրանց **ներ–ով** ձևերը՝ **ծանր–ներ, մանր–ներ** ևն, գրական չեն): Միայն **անգղ, արկղ, գամփռ** բառերի հոգնակին կարող է կազմվել ոչ միայն **–եր**, այլև **–ներ** վերջավորությամբ՝ **անգղ–(ն)եր, արկղ–(ն)եր, գամփռ–(ն)եր**: Բարդ բառերի վերջնաբաղադրիչ դառնալու դեպքում նման բառերի հոգնակին ճիշտ է կազմել **–եր–ով՝ նոթատետրեր, բառատետրեր, խնայդրամարկղեր, տոմսարկղեր, այտոսկրեր, փղոսկրեր, գանգոսկրեր, ծովեզրեր** ևն: Գաղտնավանկով սկսվող երկվանկ գոյականների հոգնակին կազմվում է **–ներ** վերջավորությամբ՝ **շտաբ–ներ, սպի–ներ, սպա–ներ, սփյուռք–ներ, ձգան–ներ, վկա–ներ** ևն:

2. Մի շարք միավանկ բառերի հոգնակին կազմվում է **–ներ** վերջավորությամբ (գրաբարում **ն** վերջնահնչյուն ունեցող բառերի մեծ մասը նոր հայերենում հոգնակի կազմելիս վերականգնում է այն՝ **ն + եր**)՝ **ծնկ–ն + եր, ձկ–ն + եր, մատ–ն + եր, հարս–ն + եր**, ինչպես նաև խոսակցական **ձեռ–ն + եր, ոտ–ն + եր** (**ձեռք–եր, ոտք–եր** գրական տարբերակներին զուգահեռ): Բացառություն է նաև **ռուս** բառի հոգնակին՝ **ռուս–ներ** (նախկինում՝ **ըռուս // ուռուս–ներ**): Այս շարքի բառերը՝ որպես բաղադրյալ բառերի վերջնաբաղադրիչներ, նույնպես ստանում են **–ն + եր՝ շողակներ,**

սառցալեռներ, շնածկներ, դաշտամկներ, բելոռուսներ: Ող և ռունգ բառերի ողներ, ռունգներ ձևերն ակնհայտորեն հնացած են և անգործածական: Դրանց փոխարեն այժմ գործածվում են **ողեր, ռունգեր** ձևերը:

3. Ստեղն, եղեգն, բևեկն պարզ բազմական բառերը, ինչպես նաև **–ազն, –եղն, –ակն, –ոտն** երկական վերջնաբաղադրիչով բարդ բառերը ստանում են **–եր** վերջավորությունը՝ **ստեղն–եր, եղեգն–եր, բևեկն–եր, արքայազն–եր, դյուցազն–եր, հետիոտն–եր** ևն:

Ծանոթություն 1: Լինում են և հոգնակի ձևերի՝ հիմքի տարբերության հետևանքով առաջացած հարանուններ, օրինակ՝ **մանրամասն–եր** «մանրամասնություններ» և **մանրամաս–եր** «մանրակներ, դետալներ»:

Ծանոթություն 2: **–եր** վերջավորությունն ստացող միական ու որոշ բազմական բառեր (ինչպես նաև հոգնակի թիվ չունեցող անորոշ դերբայը) **–ներ** կարող են ստանալ ստացական հոգնակի կազմելիս՝ **աչքներս, տուններդ, վիզները, սանրներդ, բանուգործներս, գնալներդ:** Այդպես լինում է, երբ հողը փոխարինում է անձնական դերանունների հոգնակի սեռականի ձևերին, ինչպես՝ **մեր աչքը // աչքներս, ձեր տները // տուններդ, իրենց խոսքերը // խոսքները, նրանց շուրջը // շուրջները**՝ նշանակելով, որ տվյալ առարկան(ները) կամ տվյալ տեղը վերաբերում է յուրաքանչյուրին:

4. Մատ և հարս բառերով վերջացող բաղադրյալ բառերը ստանում են **–եր** կամ **–ներ** վերջավորությունը՝ **ցուցամատ–(ն)եր, բթամատ–(ն)եր, նորահարս–(ն)եր, ջրահարս–(ն)եր:** **Մատ–**ով բաղադրվածների համար առավել սովորական է **–ներ–**ով, իսկ **հարս–**ով բաղադրվածների դեպքում՝ **–եր–**ով կազմությունը: («խաղողի վազի ոստ» նշանակությամբ **մատ–**ը հոգնակին սովորաբար կազմում է **–եր–**ով՝ **խաղողի մատեր**):

5. –պետ և –նիչ գոյական վերջնաբաղադրիչով բառերի համար ճիշտ են և՛ **–եր–**ով, և՛ **–ներ–**ով կազմությունները՝ **քաղաքապետ–(ն)եր, ոստիկանապետ–(ն)եր, գնդապետ–(ն)եր, վարչապետ–(ն)եր, թաղապետ–(ն)եր, համարանիշ–(ն)եր, ուղեմիշ–(ն)եր, դրամանիշ–(ն)եր, չափանիշ–(ն)եր** ևն:

պետ–(ն)եր, թաղապետ–(ն)եր, համարանիշ–(ն)եր, ուղեմիշ–(ն)եր, դրամանիշ–(ն)եր, չափանիշ–(ն)եր ևն:

6. Կան միական վերջնաբաղադրիչով համանուններ, որոնցից մեկի հոգնակին կազմվում է **–եր**, մյուսինը՝ **–ներ** վերջավորությամբ՝ կախված իմաստից, օր.՝ **թթվասեր–եր** (թթվամշակված սերուցքներ) – **թթվասեր–ներ** (թթու սիրողներ), **հասակաչափ–եր** (հասակի չափը) – **հասակաչափ–ներ** (հասակը չափելու գործիք), **հուշագր–եր** (մեմորանդումներ) – **հուշագիրներ** (հուշ գրող հեղինակներ), **մատենագր–եր** (ծեռագիր մատյաններ) – **մատենագիր–ներ** (մատյան գրող հեղինակներ), **սառցահատ–եր** (սառույցի հատիկներ) – **սառցահատներ** (սառույց հատող նավեր), **սրտագիր–ներ** (սրտի աշխատանքը գրառող սարք) – **սրտագրեր** (սրտի աշխատանքի գրառումը), **քառատող–եր** (չորսական տողեր) – **քառատողներ** (չորս մասի բաժանողներ) ևն:

Ծանոթություն: Կան միական գոյականներ (և դրանցով բաղադրված բառեր), որոնց հոգնակին կազմվում է և՛ հնչյունափոխված, և՛ անհնչյունափոխ հիմքերով: Մի մասի համար գրական լեզվում սովորական են հնչյունափոխված հիմքով ձևերը (**սրբեր, գնդեր, արնաբծեր, մենախցեր, հողաթմբեր, պարախմբեր** ևն), մյուսների համար՝ անհնչյունափոխ հիմքովները (**սուրճեր, թուխպեր, խունկեր, մարտացուլեր, զարդատուփեր** ևն): Դրանց գործածության մեջ կողմնորոշվելու համար դժվար է հստակ ուղեգիծ սահմանել. երկուսն էլ կազմված են լեզվական կանոնին համապատասխան: Թեև պիտի նկատել, որ գնալով տարածում են ստանում անհնչյունափոխ հիմքով ձևերը: Լեզվի զարգացման ընթացքում ի վերջո հաղթող կարող է ճանաչվել դրանցից մեկը³⁴:

Հավաքական գոյականներ: Մի շարք գոյականներ, ձևով եզակի լինելով, բովանդակությամբ «հոգնակի» են, այսինքն՝ ցույց են տալիս միատեսակ առարկաների բազմություն, հավաքականություն՝ **ամբոխ, ժողովուրդ, հասարակություն, ազգ,**

³⁴ Գոյականի հոգնակի թվի կազմության մասին տե՛ս նաև Գ. Գյուրջինյան, Անուն խոսքի մասերի թվի կարգը արդի հայերենում (Քերականական բառարան–տեղեկատու), Եր., 2005:

քնակչություն, զորք, բազմություն, նախիր: Դրանք կոչվում են **հավաքական գոյականներ** կամ **հավաքական անուններ**: Մյուս գոյականների նման կարող են դառնալ հոգնակի՝ **ամբոխներ, ժողովուրդներ, զորքեր, բազմություններ**: Հավաքական իմաստով է գործածվում նաև **մաս** բառը մի շարք կապակցություններում ու բաղադրություններում՝ **ներկաների մի մասը, նրանց մեծ մասը, բերքի գերակշռող մասը, մեծամասնությունը**: Եզակի թվով հավաքական գոյականները ենթակա լինելիս վերցնում են եզակի թվով ստորոգյալ՝ **Մեծ մասը** չմասնակցեց ժողովին: **Ժողովուրդը** հզոր ուժ է: **Չորքը** շարժվեց առաջ:

Հոգնակերպ գոյականներ: Ձևով լինելով հոգնակի՝ բովանդակությամբ եզակի են, այսինքն՝ ունեն հոգնակերտ վերջավորություն, սակայն նշանակում են մեկ առարկա՝ եզակի թիվ են և ենթակա լինելիս վերցնում են եզակի թվով ստորոգյալ: Դրանք մեծ մասամբ աշխարհագրական անուններ են՝ **Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Արտեր (կղզի), Նիդերլանդներ, Տեղեր (գյուղ)**: Այսպիսի անունները հոգնակի թիվ չունեն: Սրանցից տարբեր են որոշ լեռնաշղթաների անուններ (Ալպեր, Կարպատներ, Անդեր, Ապենիններ, Պիրենեյներ, Հիմալայներ), որոնք թեև աշխարհագրական մեկ հասկացություն (անուն) են նշում, սակայն ունեն մերթ **հոգնակիի**՝ «լեռներ» իմաստը (Ալպյան լեռներ, Կարպատյան լեռներ), մերթ **եզակիի**՝ «լեռնաշղթա, լեռնահամակարգ» իմաստը (Ալպյան լեռնաշղթա, Կարպատյան լեռնահամակարգ): Հետևաբար դրանք վերցնում են մերթ հոգնակի թվով ստորոգյալ՝ Ալպերը շատ բարձր են, մերթ՝ եզակի թվով՝ Ալպերն ունի 1200 կմ երկարություն:

Անեզական գոյականներ: **–անք, –ենք, –ոնք, –ունք** ածանցներով կազմված անձնանիշ բառերը (Վարդանանք, Ծովինարենք, պապոնք, Բադունք) թեև չունեն հոգնակիի վերջավորություն, բայց արտահայտում են հոգնակի թիվ և ստորոգյալի կամ բացահայտիչի (բացահայտյալի) հետ գործածվելիս պահանջում են հոգնակի թվով համաձայնություն, օր.՝ Հրավիրված էին նաև **Մեծունք: Արա-**

մենք՝ մեր ազգականները, ապրում են Վանաձորում: Դրանք եզակի թիվ չունեն:

Ծանոթություն: Նույն ածանցներով իրանիշ բառերը գրական հայերենում արտահայտում են եզակի թիվ (**զրկանք, ուլունք, մասունք, իրավունք**): Դրանց մի մասը հոգնակի թիվ չի ունենում (**թշնամանք, զարթոնք, արբունք**):

Որոշյալ և անորոշ առումներ: Հատուկ վերջավորություն՝ հոդ ստանալով (երզը, տունը, տղան)՝ գոյականը նշանակում է խոսողին և կամ խոսակցին հայտնի կամ խոսքում արդեն հիշատակված առարկա՝ Ազգային ժողովում **հարց** քննարկվեց: **Հարցը** վերաբերում էր ՀՀ դատական համակարգում կատարվելիք փոփոխություններին: Հայերենում գոյականն ունի երկու առում՝ **անորոշ և որոշյալ**: Անորոշ առումով են թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվով գոյականները, եթե հոդ չունեն (տղա, տղաներ, ծառ, ծառեր): Գոյականի անորոշ առումը ընդգծում են **մի, ինչ–որ, որևէ** և այլ անորոշ դերանուններ՝ **ինչ–որ** հարցի շուրջ նրանք երկար վիճում էին: Որպես անմիտ զրույց մեզ պատմել են **մի** օր Նախնիների մասին մեր փառապանծ: (**Մի–ն** հաճախ համարում են անորոշ հոդ):

Գոյականի որոշյալ առումը կազմվում է՝ ուղիղ ձևին՝ անորոշին (եզակի կամ հոգնակի թվով, ուղղական կամ սեռական–տրական հոլովով) ավելացնելով **–ը** կամ **–ն** վերջամասնիկը: Բացառություն է **Աստված** (նաև **Քրիստոս**) բառը, որը եզակի ուղղականում առանց վերջամասնիկի էլ կարող է որոշյալ առումով լինել՝ **Աստված** ձեզ պահապան: Հոգնակիում որոշիչ հոդ չեն ստանում **մարդիկ, կանայք, տիկնայք, պարոնայք, անձինք** բառերի, **–անք, –ենք, –ոնք, –ունք** ածանցներով անձնանիշ բառերի (Վարդանանք, Սուրենենք, պապոնք, Թելունք) ուղղականն ու սեռական–տրականը:

Որոշյալություն արտահայտող վերջամասնիկը կոչվում է **որոշիչ հոդ**: Ծագումնաբանորեն **ն–ն** ավելի հին է. **ը** հոդը առաջացել է վերջնահանգում՝ **ը** գաղտնավանկից՝ (**ը**) **ն** > **ը** գարգացումով. **ը**

և **Ն** մասնիկները որոշիչ հոդեր են: Իմաստային առումով տարբերություն չունեն: Ցույց են տալիս առարկայի հայտնի, ծանոթ լինելը: Կարող են ցույց տալ նաև առարկան իր ամբողջ ծավալով, երբ հատկապես դրվում են նյութ ցույց տվող գոյականների վրա՝ **Ջուր** թափվեց հատակին: – **Ջուրը** թափվեց հատակին, կամ առարկան որպես տեսակի հասկացություն՝ **Շունը** մարդու բարեկամն է: Ունեն կիրառական տարբերություններ. ձայնավորով վերջացող բառերը միայն **Ն** հոդ են ստանում՝ ԿարոՆ, առուՆ, այգիՆ, Նարինեն: Բաղաձայնով վերջացող բառերը **ը** հոդ են ստանում բաղաձայնով (այդ թվում՝ **ե[յէ]–ով** և **ո[վօ]–ով**) սկսվող բառերից առաջ՝ գործը կարճվեց, լուսինը երևաց, հրանոթները որոտացին:

Ը հոդը ձայնավորով (ինչպես նաև **սկ, ստ, սպ, սթ, սք, սփ, զգ, զդ, զբ** տառակապակցություններով) սկսվող բառերից առաջ կարող է փոխարինվել **ն** հոդով՝ **Նախագահը ընդունեց // Նախագահն ընդունեց, Արամը ասաց // Արամն ասաց, գիրքը ընկավ // գիրքն ընկավ**: Այս փոխարինումը սովորաբար չի կատարվում այն դեպքում, երբ բանավոր խոսքում հոդ ստացած բառից հետո դադար է լինում (հատկապես թվարկման ժամանակ), որը գրավոր խոսքում արտահայտվում է ստորակետով, բութով կամ տրոհության այլ նշանով՝ Կարենը, Արամը և ես կգանք քեզ հետ: Մեր պատգամավորը՝ Ավագյանը, վերընտրվեց:

Բաղաձայնով վերջացող բառերը օժանդակ բայից և **էլ** (նաև **ու**) շաղկապից առաջ միայն **ն** հոդ են ստանում՝ Գործն է կարևորը: Այդ հարցն էլ լուծվեց: Խոսքն ու գրույցը անպակաս են:

Կետադրական նշանը հաճախ առոգանական դադարի արտահայտություն է, հետևաբար **ն** հոդի առկայության դեպքում կետադրական նշան կարող է և չդրվել, ինչպես՝ Խոսքն իհարկե դրա մասին է: Այդ հարցն անշուշտ մեզ հետաքրքրում է:

Ծանոթություն: Թյուր կարծիք կա, թե **հ**–ով սկսվող բառերից առաջ կարելի է գործածել **ն** հոդը՝ հազար **ինճ հարյուր**, լավ **գործն հիշվում** է: Սա գրական լեզվում չի հանձնարարվում:

Որոշյալ առման դեպքում **ը** և **ն** հոդերի փոխարեն կարող են գործածվել նաև **ս** և **դ** հոդերը՝ միաժամանակ արտահայտելով ստացականություն, դիմորոշություն կամ ցուցականություն՝ **ընկերս եկավ, գրությունդ կարդացի, ես՝ փաստաբանս, դուք՝ լրագրողներդ, վերջերս իմացա**:

Գոյականի հոլով և հոլովում: Հոլովումը գոյականին և գոյականի իմաստ ունեցող բառերին բնորոշ քերականական փոփոխություն է, որով արտահայտվում է գոյականի հարաբերությունը այլ առարկայի, գործողության կամ հատկանիշի նկատմամբ: **Հոլովում** ասելով՝ հասկանում ենք բառի այդ կարգի ձևափոխությունների ամբողջությունը, մի այլ իմաստով՝ ձևափոխության յուրաքանչյուր տիպը: Ձևափոխված յուրաքանչյուր ձև կոչում ենք **հոլով**, ձևափոխությունը՝ **հոլովում**:

Հոլովների թվի վերաբերյալ կան տարակարծություններ: Յոթ հոլովի կողմնակիցները (առանձին հոլովներ են դիտում ուղղականը և հայցականը, սեռականը և տրականը) առաջնությունը տալիս են հոլովական իմաստին, հոլովածների արտահայտած քերականական հարաբերություններին: Հայցական և ուղղական, սեռական և տրական հոլովների համար նշվում են ձևային և իմաստային–գործառական մի շարք տարբերակիչ հատկանիշներ. հայցականը ոչ թե անկախ, այլ կախյալ հոլով է, հաճախ ուղղականին հակադիր նշանակություն է արտահայտում, նախադասության մեջ հիմնականում ուղիղ խնդրի պաշտոն է կատարում. սեռականը և տրականը տարբերվում են կապային խնդրառությամբ (սեռական + կապ կապակցությունները՝ **գրքի մասին, սեղանի վրա, հատկացուցիչ–հատկացյալի յուրահատուկ կապակցություններ են**), սեռականը անխտիր առանց հոդի է գործածվում ևն³⁵:

Ըստ հինգ հոլովի կողմնակիցների՝ հոլովների հարցը որոշելիս ելակետը պետք է լինի ձևը, իսկ որոշիչը՝ իմաստը: Եթե մենք ուզում ենք պարզել, թե մեզ հետաքրքրող ձևերն արդյոք տարբեր

³⁵ Այդ մասին մանրամասն տե՛ս Ա. Մարգարյան, Հայոց լեզվի քերականություն. Չևաբանություն, Եր., 2004: Լ. Եզեկյան, Հայոց լեզու, Եր., 2007:

հոլովներ են, դիմում ենք հոլովների հարաբերություններին: Այսպես՝ ունենք՝ **որդու** և **հոր** տարբեր ձևերը՝ **որդու պատասխանը** և **հոր պատասխանը**: Հարաբերության իմաստը չփոխվեց (երկուսն էլ արտահայտում են պատկանելության, ստացականության իմաստ), ուրեմն ունենք ոչ թե տարբեր հոլովներ, այլ նույն հոլովի տարբերակներ: Վերցնենք **որդու** և **հորից** ձևերը՝ **որդու պատասխանը** և **հորից ստացած պատասխանը**. տարբեր են և՛ ձևով, և՛ իմաստով. առաջինը արտահայտում է պատկանելության իմաստ, երկրորդը՝ ելակետի: Սրանք արդեն տարբեր հոլովներ են, քանի որ ունեն և՛ հոլովական ձևի, և՛ հոլովական իմաստի տարբերություններ: (Հոլովական իմաստը չպետք է նույնացնել հոլովի շարահյուսական կիրառությունների հետ, թեև դրանք փոխադրմանավորված են): Նույն հոլովի տարբերակներ են՝ **անունով // անվամբ, ընկերոջից // այգուց, օրի // օրվա, գիշերից // գիշերվանից** ևն:

Արևելահայերենում գոյականն ունի հոլովական հինգ ձև, հետևաբար ունի հինգ հոլով՝ ուղղական–հայցական, սեռական–տրական, բացառական, գործիական, ներգոյական: (Արևմտահայերենը ունի չորս հոլով. բացակայում է ներգոյականը): Դրանցից ուղղականը կոչվում է նաև **ուղիղ հոլով**, մյուսները՝ **թեք հոլովներ**:

Ուղղականը (թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվով, թե՛ որոշյալ, թե՛ անորոշ առումով) բառի ուղիղ ձևն է՝ հոլովական զրո վերջավորությամբ: Գոյականի թեք հոլովները կազմվում են՝ անորոշ առումով ուղիղ ձևին՝ ուղղական հոլովաձևին (եզակի կամ հոգնակի թվով) ավելացնելով որևէ վերջավորություն (սեռական–տրականի դեպքում դրանք կոչվում են նաև հոլովիչ) կամ ուղիղ ձևը ենթարկելով ներքին թեքման: Կա վերջավորությունների (կամ ներքին թեքման) չորս խումբ. 1. սեռական–տրականի հոլովիչ՝ **–ի, –ու, –ան, –ոջ, –վա, –ց**, կամ ներքին թեքում՝ **ա** կամ **ո**, 2. բացառականի վերջավորություն՝ **–ից** կամ **–ուց**, 3. գործիականի վերջավորություն՝ **–ով** կամ **–բ**, 4. ներգոյականի վերջավորություն՝ **–ում**:

Սեռական–տրականում որոշիչ հոդ չեն ստանում միայն **–ց** հոլովիչով բառաձևերը (պապոնց, Արամենց), որոնք միշտ որոշյալ առումով են, ինչպես նաև անկանոն՝ **մարդկանց, կանանց, տիկնանց, անձանց** ձևերը:

Ս և **դ** հոդ կարող են ստանալ գոյականի բոլոր բառաձևերը՝ ընկերներիդ, եղբորս, ծեռքերիցս, մտքովդ, աշխարհումս, մարդկանցդ:

Հոլովական տարբերակային ձևեր: Դրանք սովորաբար ունենում են գործառական–ոճական տարբեր արժեքներ: Երբեմն էլ դրանցից մեկը լինում է առավել գրական, մյուս(ներ)ը՝ առավել խոսակցական: Երբեմն դրանց տարբերությունը լինում է զուտ կապակցական: Որոշ դեպքերում տարբերակներից մեկը լինում է հնարանություն կամ նորարանություն:

Սովորաբար ներգոյականի **–ում** վերջավորություն չեն ստանում, ներգոյական հոլով չունեն անծերի և կենդանիների հատուկ և հասարակ անունները (մարդ, սեր, դասախոս, ավանդատու, Հակոբ, արջ, Չալո), ինչպես նաև **–ություն, –ում** ածանցներով վերացական գոյականները (լռություն, նվիրում, զգուշացում): Այդ բառերի ներգոյական հոլովի իմաստն արտահայտվում է սեռական–տրական հոլովաձևի և **մեջ** կապի միջոցով՝ **մարդու մեջ, սիրո մեջ, լռության մեջ, նվիրումի մեջ, զգուշացման մեջ**: Մեջ կապով այսպիսի կազմությունները ներգոյական հոլովաձևեր չեն:

1. **–ու** հոլովման պատկանող բառերից զուգահեռաբար նաև **–ի** հոլովման են ենթարկվում՝ **–ելի, –ալի, –անի** ածանցով մի քանի գոյականներ՝ **հայելիի, բանալիի, խինկալիի, սպեղանիի** ևն, մի քանի հատուկ անուններ՝ **երեբունիի, Մուղնիի, Մեղրիի, Վեդիի, Աղասիի, Բաֆֆիի, Քենեդիի** ևն, մի շարք հասարակ անուններ՝ **այրիի, այրուծիի, գերիի, կանաչիի, նարդիի, նավաստիի, օղիի, քեռիի, սոնիի** ևն: (Բաֆֆի գրողի անվան համար սովորական է **–ու**–ով ձևը՝ **Բաֆֆու** «Սամվել» վեպը):

Գյումրի և **Լոռի** բառերի վերաբերյալ կա տերմինաբանական կոմիտեի հատուկ որոշումը՝ դրանց համար հանձնարարելի հա-

մարել ու–ով կազմությունները՝ **Գյուճրու, Լոռու**, հետևաբար՝ **Գյուճրուց, Գյուճրով, Գյուճրում, Լոռով, Լոռուց** (փոխ.՝ **Գյուճրի–ի, –ից, –ով, –ում, Լոռի–ի, –ից, –ով, –ում**): Ակնհայտորեն աղավաղվում է բառի պատկերը, նաև անբարեխունջ ձևեր են: Երկրորդները՝ **Գյուճրիից, Գյուճրիով, Լոռիից, Լոռիով** ևն, և՛ բառապատկերը պահպանելու, և՛ արտասանական առումով նախընտրելի են: Որոշումը վերանայման կարիք ունի: **Գյուճրի, Շուշի, Լոռի** բառերի **–վա–ով** կազմությունները (**Գյուճրվա** ուտեստներ, **Շուշվա** բնություն, **Լոռվա** բնաշխարհ) այսօր հնացած են:

Տերմինաբանական կոմիտեի որոշմամբ, բացի **Թբիլիսի** բառից, վրացական մյուս տեղանունների համար պահպանվում են առանց ի վերջնահնչյունի ձևերը (**Բաթում, Բորժոմ, Ախալքալաք, Սուխում, Քութայիս** ևն). սրանց սեռական–տրականի ձևերը կկազմվեն **–ի** հոլովիչով՝ **Բաթում–ի** (**–ից, –ով, –ում**), **Սուխում–ի** (**–ից, –ով, –ում**), **Քութայիս–ի** (**–ից, –ով, –ում**) ևն: Երկրորդը՝ **Թբիլիսի–ի, –ից, –ով, –ում**: Կանոնը չի տարածվում **ի–ով** վերջացող այլ տեղանունների վրա՝ **Կախի, Գորի, Փոթի** ևն:

–ելի, –ալի, –անի ածանցներով ածականների, մի շարք հատուկ անունների, **թի, դի, դար** բառերի՝ **ու** հոլովմամբ ձևերը, ինչպես՝ **Շուշու, Անու, Բջնու, Արենու, Արտենու, Փարպու, Բերկրու, Սոչու, Նոր Գեղու, Նելլու, Նազելու, թիու, դիու, դարու, պիտանու, խղճալու, պատվելու, ածելու**, հնացած են կամ խոսակցական, ոչ գրական:

Անկողին, մարդ, ամուսին բառերի՝ **–ի** հոլովմամբ ձևերը՝ **անկող(ի)նի, մարդի, ամուս(ի)նի**, խոսակցական են, ոչ գրական: Կանոնական են՝ **անկողնու, մարդու, ամուսնու**:

Ծանոթություն: Այս շարքում երբեմն նշվում է **կաշի** բառը (**կաշու, կաշուց**): Սրանք արդեն հնացած ձևեր են. **կաշի–ն** արդի գրական հայերենում ենթարկվում է **–ի** հոլովման՝ **կաշի–ի** (**–ից, –ով, –ում**):

2. –վա հոլովման պատկանող մի շարք ժամանականիշ բառեր (**օր–վա, առաջ–վա, գիշեր–վա, տար–վա, ցերեկ–վա, ժամ–**

վա ևն) ոչ ժամանականիշ իմաստով գործածվելիս սովորաբար ենթարկվում են այլ հոլովման՝ **օրի, ժամի, ամսի, գիշերի, կեսօրի, կեսգիշերի, առավոտի, ժամանակի, տարու** ևն: Օրինակ՝ Այս ի՞նչ **օրի** ես հասել, Հանգուցյալ պապիս **տարուն** հավաքվել էին մեր բոլոր հարազատները: «**Առավոտի**» վերջին էջում հետաքրքիր լուր կար: **Ժամանակի** մեծ մասը նա անցկացնում էր տանը: Վերադարձավ ճիշտ **ժամանակին**: Այս ուշ **ժամին** ի՞նչ եք անում այստեղ: **Ամսի 5–ին** կիրակի է, Գործարքը կնքվել է **կեսգիշերին**:

–վա հոլովման պատկանող բառերի մեծ մասի բացառականը կարող է կազմվել ոչ միայն սեռական–տրականի (**ամսվան–ից, շաբաթվան–ից, գիշերվան–ից**), այլև ուղղականի ձևից (**ամս–ից, շաբաթ–ից, գիշեր–ից**):

Ժամանականիշ **վայրկյան, րոպե, դար, երեկո** բառերը ենթարկվում են **–ի** հոլովման՝ **վայրկյանի, րոպեի, դարի, երեկոյի: Բոպե, դար, երեկո**, ինչպես նաև **այժմ** բառերի **–վա–ով** ձևերը համարվում են ոչ գրական:

–վա հոլովման պատկանող բառերը կարող են ունենալ նաև սեռական–տրականի ձևից կազմված բացառականի, գործիականի և ներգոյականի ձևեր՝ **օրվանով, օրվանում, վաղվանից, վաղվանով, վաղվանում**, որոնք իրականում փոխանուն հատկացուցիչի հոլովածներ են՝ **Վաղվա** ծրագիրն ավելի գրավիչ է, քան այսօրվանը. **վաղվանում** հետաքրքիր համերգներ կան, իսկ **այսօրվանում**՝ ո՛չ:

3. –ան մասնիկ եզակի սեռականում սովորաբար ստանում են **–ում** վերջածանցով գոյականները՝ **շարժման, ուսման, լարման, հարցման**, գործիականում ունենում են **–բ՝ շարժմամբ, ուսմամբ, լարմամբ, հարցմամբ**: Գործածական են նաև դրանց **–ի** հոլովմամբ ձևերը՝ **շարժումի, ուսումի, լարումի, հարցումի**, և այդ դեպքում գործիականը կազմվում է ոչ թե **–բ**, այլ ընդհանրական **–ով** վերջավորությամբ՝ **շարժումով, ուսումով, լարումով, հարցումով**: Առաջինները գրական–գրքային կազմություններ են, երկրորդները բնորոշ են խոսակցական լեզվին:

Ծանոթություն: **Դիմում** բառը ենթարկվում է միայն **-ի** հոլովման: **-ում** ածանցով վերջացող առանձին գոյականների համար սովորական է **-ի-ով** ձևը՝ **շահում-ի, տեղում-ի, վատնում-ի, ապրում-ի, պատում-ի, այցելում-ի:** Դրանցում առարկայական իմաստը առավել ընդգծված է:

Մահ բառը սեռական-տրականում ունենում է ոչ թե **-վա**, այլ **-վան** հոլովիչը՝ **մահվան, մահվանից, մահվանով // մահվամբ:** **Մահ** բառը ենթարկվում է նաև **-ի** հոլովման՝ **մահի, մահից, մահով**՝ Մահը մերն է, մենք՝ **մահինը:** Գլուխը **մահի** տալ: Սրանք ունեն որոշ խոսակցական երանգ: Հանդիպում է նաև **մահու** ձևը՝ որպես հնարանություն՝ կենաց և **մահու** պայքար, **մահու** հրեշտակ:

Բեռ, գառ, եզ, թռռ, ծոռ, լեռ, ծունկ, բուռ, մանուկ բառերը, **-ան** հոլովման ձևերից բացի (բեռ-ան, գառ-ան, թռռ-ան), ունեն նաև **-ի** հոլովիչով ձևեր՝ **բեռի, գառի, եզի, թռռի, ծոռի, լեռի, ծ(ու)նկի, բռի, մանուկի**, որոնք ունեն խոսակցական երանգ: **Մանուկ** հատուկ անունը ենթարկվում է միայն **-ի** հոլովման՝ **Մանուկի:**

Ամառ, ձմեռ բառերը ենթարկվում են նաև **-վա** հոլովման՝ **ամռան // ամառվա, ձմռան // ձմեռվա:** **Գարուն, աշուն** բառերի բացառականը և գործիականը, ինչպես նաև **ամառ, ձմեռ** բառերի միայն գործիականը հիմքային զուգաձևություն ունեն. դրանք կարող են կազմվել ոչ միայն ուղղականի՝ **գարուն-ից, աշուն-ից, գարուն-ով, աշուն-ով, ամառ-ով, ձմեռ-ով**, այլև սեռական-տրականի ձևից՝ **գարնան-ից, աշնան-ից, ամռան-ից, ձմռան-ից, գարնան-ով, աշնան-ով, ամռան-ով, ձմռան-ով:** **Ամառ, ձմեռ** բառերի բացառականը կարող է կազմվել ոչ միայն **-ան՝ ամռանից, ձմռանից**, այլև **-վա** հոլովման ձևով՝ **ամառվան-ից, ձմեռվան-ից:**

-ի հոլովման ենթարկվող **հիմք** բառի սեռական-տրականը (հիմքի) ունի նաև **-ան** հոլովման պատկանող զուգահեռ ձև՝ **հիման**. քարացած ձև է՝ **վրա** կապի հետ սահմանափակ կիրառությամբ՝ նյութերի **հիման վրա**, փաստերի **հիման վրա** ևն: Ուղղա-

կանի **հիմ, հիմեր // հիմներ** և գործիականի **հիմամբ** ձևերը ներկայումս գործածական չեն:

Ծունկի, ծնկի և ծնկան տարբերակներից գործածական են առաջին երկուսը. վերջինը աստիճանաբար դուրս է մղվում:

4. -ոջ հոլովման են պատկանում անձնանիշ **քույր, ընկեր, տեր, կին, աներ, սկեսուր, տալ, տեգր** բառերը և դրանցով կազմված այն բարդությունները, որոնցում դրանք վերջնաբաղադրիչ են՝ **քրոջ, ընկերոջ, տիրոջ, կնոջ, աներոջ, սկեսրոջ, տալոջ, գործընկերոջ:** **Քույր** բառը «բուժքույր» իմաստով կիրառվելիս կարող է ենթարկվել նաև **-ի** հոլովման՝ **քույրի, քույրից, քույրով, բուժքույրի, բուժքույրից, բուժքույրով:**

Սկեսուր, տալ, տեգր բառերը ենթարկվում են նաև **-ի** հոլովման՝ **սկեսուրի, տալի, տեգրի**, որոնք գնալով ավելի գործածական են դառնում: Ավելին՝ **սկեսուր, տալ, տեգր** բառերի բացառական և գործիական հոլովների **-ոջ-ով** ձևերը՝ **սկեսրոջից, սկեսրոջով, տալոջից, տեգրոջով**, այժմ խոսակցական են: Խոսակցական է նաև **տեգոր** ձևը: Դրանց գրական համարժեքները կազմվում են **-ի** հոլովմամբ՝ **սկեսուրով, սկեսուրից, տալով, տալից, տեգրով, տեգրից:**

Հույսով և հուսով տարբերակներից առաջինը գործածվում է առանձնաբար՝ **Հույսով** սպասելու են ձեզ, երկրորդը՝ սովորաբար **եմ-ի** հետ զուգակցված՝ **հուսով եմ:** Սխալ չէ՝ **հույսով եմ:**

Ծանոթություն: Մի քանի գոյականներ (անկյուն, հրապարակ, խաչմերուկ, փողոց ևն) ներգոյականի իմաստով գործածվում են **վրա** կապով զուգորդված՝ **անկյունի վրա, փողոցի վրա** ևն: Դա բնորոշ է խոսակցականին և գրական լեզվի կանոնով հանձնարարելի չէ:

Տեր վերջնաբաղադրիչով **տերտեր** բառը ենթարկվում է **-ի** հոլովման, **տանուտեր** բառը՝ թե՛ **-ի**, թե՛ **-ոջ** հոլովման, **տանտեր-ը**՝ միայն **-ոջ՝ տանտիրոջ:**

5. –g հոլովման պատկանող –անք, –ենք, –ոնք, –ունք ածանց-
ներով կազմված անձնանիշ բառերն ունեն միայն հոգնակիի
իմաստ՝ **Հայկենք, Հայկենց, Հայկենցից, Հայկենցով:**

6. ա ներքին հոլովման պատկանող **ծյուն, սյուն, անկյուն, արյուն, անուն** բառերը (ծյան, սյան, անկյան, արյան, անվան. **անուն** բառի դեպքում **ա** հոլովիչը ոչ թե փոխարինում է արմատի **ու** հնչյունին, այլ ավելանում է նրանից հետո, իսկ **ու**–ն դառնում է վ) կարող են ենթարկվել նաև –ի հոլովման՝ **ծյունի, սյունի, անկյունի, արյունի, անունի**, և այդ դեպքում **արյուն, անուն** բառերի գործիականը կազմվում է ոչ թե –բ (միությանը, արյամբ, անվամբ), այլ ընդհանրական –ով վերջավորությամբ՝ **արյունով, անունով:** Ե՛վ սեռական–տրականի, և՛ գործիականի այս ձևերը (անունի, անունով) խոսակցական երանգ ունեն:

–ուքյուն ածանցով բառերի՝ գործիականի կանոնական –բ վերջավորությամբ ձևերին զուգահեռ –ով–ով կազմությունները ունեն խոսակցական երանգ և գրական լեզվում հանձնարարելի չեն (միությանը – միությունով, ցնծությանը – ցնծությունով, պետությանը – պետությունով):

Տուն, շուն բառերի բացառականը կարող է կազմվել ոչ միայն հնչյունափոխված ուղղականի (տն–ից, շն–ից), այլև սեռական–տրականի ձևից (տան–ից, շան–ից): **Հարություն** անձնանունը ենթարկվում է միայն **ի** հոլովման՝ **Հարությունի:**

7. ո հոլովման պատկանող անձնանիշ **հայր, մայր, եղբայր** բառերը և դրանցով կազմված անձնանիշ բարդությունները (նախահայր, տիրամայր, հորեղբայր ևն) հոլովական զուգաձևություններ չունեն՝ **հոր, մոր, եղբոր, նախահոր, տիրամոր, հորեղբոր** (բայց՝ **տառամայրի, պտուտակամայրի**):

8. Այլաձև հոլովման պատկանող գոյականներից **սեր** բառը սեռական–տրականում ունի տարբերակային ձև՝ **սիրո / սիրուն** (երգը նվիրված է քո **սիրուն**), **սիրուց, սիրով:** Վերջինիս հետ չպետք է շփոթել համանուն **սեր** (սերուցք) բառը, որը պատկանում է –ի հոլովման՝ **սերի, սերից, սերով, սերում:**

Կայսր, դուստր, հույս, լույս, սուգ, հուր, պատիվ, խնդիր, մամուլ, ծնունդ, գալուստ, հանգիստ, կորուստ բառերը, բացի ընդհանրական –ի հոլովման ձևերից (կայսրի, դուստրի, հույսի, լույսի, ս(ու)գի, հրի, պատվի, խնդրի, մամուլի, ծն(ու)նդի, գալ(ու)ստի, հանգստի, կոր(ու)ստի), սեռական–տրականում ունեն նաև մեծ մասամբ քարացած կամ հնաձև կազմություններում հանդիպող անկանոն ձևեր՝ **կայսեր, դստեր, հուսո, լուսո, սգո, հրո, պատվո, խնդրո, մամլո, ծննդյան, գալստյան, հանգստյան, կորստյան:**

Աստված բառը սեռական–տրականում, բացի սովորական –ու հոլովման ձևից (աստծու), ունի նաև գրաբարից փոխանցված **աստծո** զուգաձևը: **Գալուստ** անձնանունը ենթարկվում է միայն –ի հոլովման՝ **Գալուստի:**

9. Հոլովման հնչյունափոխական զուգաձևությունները բնորոշ են արդի գրական հայերենին: –ու հոլովման պատկանող մի շարք բառեր գործիականում և ներգոյականում ունեն հիմքային տարբերակներ՝ **այգ(ի)ով, այգ(ի)ում, գին(ի)ով (գինով ձևը ունի նաև գինովցած իմաստը), Գյումր(ի)ով, Գյումր(ի)ում, գոլորշ(ի)ով, ընկուզեն(ի)ով, Լոռ(ի)ով, Լոռ(ի)ում, լուցկ(ի)ով, խճուղ(ի)ով, որդ(ի)ով, ոսկ(ի)ով, պատան(ի)ով, տար(ի)ով, տար(ի)ում, ուղ(ի)ով, ուղ(ի)ում** ևն: Թեքված ձևերում հիմքային տարբերակներ ունեն նաև –ի–ով հոլովվող մի շարք գոյականներ՝ **խորհ(ու)րդի / խորհ(ու)րդից / խորհ(ու)րդով / խորհ(ու)րդում** ևն, կամ՝ **բազմարկ(ի)չի, բացահայտ(ի)չի, խեցգետ(ի)նի, ծաղ(ի)կի, կոշ(ի)կի, համակարգ(ի)չի, հրահանգ(ի)չի, նվագարկ(ի)չի, ոճ(ի)րի, ուսուց(ի)չի** ևն: Դրանց մի մասի համար անհնչյունափոխ հիմքով ձևերը ակնհայտ խոսակցական երանգ ունեն, ինչպես՝ **թարգմանիչի, խորհրդանիշի, խորհուրդի, գիտխորհուրդի, ուսուցիչի, ոսկերիչի, տափաշիչի** ևն: Մյուս մասի համար նախընտրելի են անհնչյունափոխ ձևերը՝ **ախտանիշի, բազմարկիչի, ըմբիշի, կոշիկի, մանդարինի, մարգարիների, նիկոտինի, ոճիրի, ուղենիշի, քննիչի** ևն, քանի որ առավել ամբող-

ջական են պահում բառի պատկերը, ընկալումը ավելի դյուրին է դառնում: Մի շարք գոյականների դեպքում հանձնարարվում են անհնչյունափոխ հիմքով տարբերակները՝ **ասպիրինի, բաղադրիչի, բեմադրիչի, դարչինի, դելֆինի, ընդունիչի, կրակայրիչի, հոլովիչի, պարաֆինի, պինզվինի, վարիչի, տպագրիչի, ցրիչի** ևն: Վստահաբար դժվար է ասել, թե այս դեպքում ինչ կանոններ են գործում: Օրինակներից ելնելով՝ թերևս կարելի է ենթադրել, որ անհնչյունափոխ հիմքով գործածվելու միտում են դրսևորում հատկապես փոխառյալ բառերը, մասամբ նաև գրական-գրքային ծագում ունեցողները: Բայց վստահաբար կարելի է ասել, որ արդի գրական հայերենում ձևակազմության մեջ չհնչյունափոխվելու միտումը որոշակի է³⁶:

10. Փողոցների և հրապարակների բաղադրյալ հատուկ անունների՝ գոյականով արտահայտված լրացումը լրացյալի հետ, որպես կանոն, գործածվում է սեռական-տրական հոլովածևով: Օրինակ՝ **Ծերեթելու փողոց, Տիգրան Մեծի պողոտա, Գարեգին Նժդեհի հրապարակ, Մայիսի 9-ի փողոց, Հանրապետության հրապարակ, Արցախի փողոց, Ե. Չարենցի փողոց, Տպագրիչների փողոց** ևն: Սակայն եթե լրացումը **-յան** կամ **-յանց** ածանցով է կազմված, ապա լրացյալի հետ գործածվում է ուղղական հոլովածևով: Օրինակ՝ **Մոսկովյան փողոց, Աբովյան փողոց, Ալեք Մանուկյան փողոց, Մարշալ Բաղրամյան պողոտա** ևն:

Տարբեր հոլովածևեր խոսքի մեջ կատարում են տարբեր դերեր՝ պաշտոններ՝ ձևավորելով նախադասության տարբեր անդամներ:

Ուղղական հոլովածև կարող են ունենալ՝ **1. ենթական** (Հոսանք նշանակում է որևէ բանի շարժում կամ հոսում), **2. ստորոգելին** (Տեղերը լեռնային գյուղ է), **3. կոչականը** (միայն առանց որոշիչ հոդի) (**Սուրե՛ն**, արի տո՛ւն), **4. որոշիչը** (միայն առանց հոդի) (Ձայների ուժգնությունները միմյանցից տարբերելու համար օգտագործում են **դեցիբել** (դԲ³⁷) միավորը), **5. իրի առումով ուղիղ**

խնդիրը (**Կամավորներ** հավաքագրելը նրա համար ամենօրյա զբաղմունք էր), **6. տեղի պարագան** (Ձեռքը տարավ **գրպանը**), **7. ժամանակի պարագան** (Հաջորդ **օրը** կգամ), **8. չափ ու քանակի պարագան** (միայն առանց հոդի) (Լույսը 1 վ-ում անցնում է **300 000 կմ**), **9. երբեմն նպատակի պարագան** (**Կռիվ** գնացողները արժանի են խորին հարգանքի) ևն:

Սեռական-տրական հոլովածև կարող են ունենալ՝ **1. հատկացուցիչը** (միայն առանց հոդի) (**Տնօրենի** ձեռագիրն անընթեռնելի էր), **2. անձի առումով ուղիղ խնդիրը** (խնամում է **ծիերին**: Հիացնում է **հանդիսատեսին**), **3. հանգման կամ մատուցման խնդիրը** (Մոտեցի՛ր **դռանը**), **4. նպատակի պարագան** (Մեկնեց **հանդիպման**), **5. տեղի պարագան** (Իրերը դրեց **սեղանին**), **6. ժամանակի պարագան** (1968 թ. **սեպտեմբերին** տիեզերքից նկարվեց մեր մոլորակը) ևն:

Բացառական հոլովածև կարող են ունենալ՝ **1. անջատման խնդիրը** (Ընդհարումից մի կերպ խուսափեցի), **2. ներգործող խնդիրը** («**Քամուց** քշվածները»), **3. վերաբերության խնդիրը** (Գործերից խոսենք), **4. համեմատության խնդիրը** (Արարատ լեռը **Արագածից** բարձր է), **5. մասնական ուղիղ խնդիրը** (Ձեր **նյութերից** օգտագործել են), **6. պատճառի պարագան** (Ձայրույթից կարմրատակել էր) ևն:

Գործիական հոլովածև կարող են ունենալ՝ **1. միջոցի խնդիրը** ($r = RS/l$. այս **բանածևով** կարելի է որոշել տեսակարար դիմադրության միավորը), **2. ձևի պարագան** (Դժվամությամբ մի՛ արա իմ գործը), **3. հիմունքի պարագան** (Քարտուղարի **պահանջով**՝ ձևակերպումը փոխվեց) ևն:

Ներգոյական հոլովածև կարող են ունենալ՝ **1. տեղի պարագան** (Այլուսակ **8-ում** նշված է...), **2. ժամանակի պարագան** (Երեք **ամսում** շենքի նորոգումն ավարտվեց) ևն³⁸:

³⁶ Տե՛ս Պ. Բեդիրյան, Հայ լեզուն և մեր խոսքը, Եր., 1999:

³⁷ Տե՛ս էջ 96-ի հղումը:

³⁸ Հոլովների շարահյուսական կիրառության մասին մանրամասն կխոսվի շարահյուսության բաժնում:

ԱՃԱԿԱՆ: Ածականի տարբերակային ձևեր: Առարկայի հատկանիշ նշանակող բառեր են: Պատասխանում են **ինչպիսի՞, որպիսի՞, ո՞ր** հարցերին: Ըստ իմաստի՝ բաժանվում են երկու խմբի՝ **որակական** և **հարաբերական**: Որակական ածականը ցույց է տալիս առարկայի հատկությունը՝ **լավ, կույր, լուսավոր, հավասար**: Հարաբերական ածականը ցույց է տալիս ինչ-որ մի առարկայի հետ հարաբերությունը՝ որպես տվյալ առարկայի հատկանիշ՝ **փայտե, մայրենի, լեռնային, կառավարական, մայիսյան**:

Համեմատելի հատկությունն նշանակող ածականները կարող են ունենալ համեմատության աստիճաններ, որոնք ցույց են տալիս տվյալ առարկայի հատկության առավել կամ պակաս լինելը այլ առարկա(ներ)ի նույն հատկության համեմատ, այսինքն՝ առարկայի հատկանիշի չափը: Ածականն ունի համեմատության երեք աստիճան՝ **դրական, բաղդատական, գերադրական**:

1. **Դրական աստիճանը** նշանակում է տվյալ առարկայի հատկանիշը ինքնին՝ առանց համեմատելու այլ առարկաների հետ:

2. **Բաղդատական աստիճանը** ցույց է տալիս առարկայի հատկանիշի ավելի, պակաս կամ հավասար լինելը այլ առարկա(ներ)ի նույն հատկանիշի համեմատ: Կազմվում է՝ ածականի ուղիղ ձևին ավելացվելով **ավելի (առավել), պակաս (նվազ)** կամ **նույնքան** բառը՝ **ավելի մեծ, առավել իմաստուն, պակաս քաղցր, նվազ ծանր, նույնքան գործունյա**: Ունի երեք տարատեսակ՝ առավելական, նվազական և հավասարական: Բաղդատական աստիճանի նշանակությամբ գործածվում են նաև շարահյուսական մի քանի կառույցներ. Մայրամուտը լուսաբացից գեղեցիկ է: Ծիրանենին երկարակյաց է, քան դեղձենին: Վանա լճի ջուրը Կապուտանի ջրի չափ աղի չէ: Երազի պես (նման) մեր մանկությունը անցավ:

Գերադրական աստիճանը ցույց է տալիս առարկայի հատկանիշի գերազանց լինելը համեմատվող մյուս բոլոր առարկաների նույն հատկանիշից: Կազմվում է՝ ածականի դրական աստիճանին ավելացվելով **ամենից (բոլորից)** բառը կամ **ամենա**– նախածանցը կամ էլ **–(ա)գույն** վերջածանցը՝ **ամենից մեծ, բոլորից խելոք,**

ամենաքաղցր, նվազագույն, իսկ համեմատվող առարկան լինում է որոշյալ առումով՝ **ամենաքաղցր** (պտուղը), **նվազագույն** (աշխատավարձը), **ամենից լավ** (տունը), **մեծագույն** (նվաճումը): **Ամենից (բոլորից)** բառով կամ **ամենա**– նախածանցով գերադրական աստիճան կարելի է կազմել համեմատելի հատկությունն նշանակող բոլոր որակական ածականներից, իսկ **–գույն** վերջածանցով՝ ոչ բոլորից:

–գույն նախածանցով կազմվում են նաև **բացարձակ գերադրական** ածականներ, որոնք գործածվում են անորոշ առումով գոյականի հետ և ցույց են տալիս առարկայի տվյալ հատկանիշի բարձր կամ ցածր աստիճանը՝ անկախ ուրիշ առարկաներից՝ Սա **մեծագույն** նվաճում է: Ստանում են **նվազագույն** աշխատավարձ:

Նույն ածականի վրա չի կարելի միաժամանակ ավելացնել **ամենա**– և **–գույն** ածանցները՝ **ամենաբարձրագույն, ամենաուժեղագույն**: (Թույլատրելի է գործածել որպես մարզական տերմին՝ **ամենաթեթևագույն**):

ԹՎԱԿԱՆ: Թվականի տարբերակային ձևեր: Թվական կամ թվական անուն է առարկա(ներ)ի թիվ կամ թվային կարգ նշանակող բառը: Պատասխանում է **քանի՞, որքա՞ն, ինչքա՞ն, ո՞րերորդ, քանի՞երորդ** հարցերին: Թվականների մեջ կան արմատատարբերակներ՝ **եր**– // **եռ**– (երկրորդ տարբերակը բուն թվականների մեջ չի գործածվում. **երեք, եռակի**), **չոր**– // **քառ**– (չորրորդ, **քառասունչորս**), **հի**– // **հինգ** (հիսունհինգ), **վեց** // **վաթ**– (վաթսունվեց), **յոթ** // **յոթան**– (վերջինը գրաբարյան հոլովածն է. **յոթանասունյոթ**):

Ըստ իմաստի՝ թվականները բաժանվում են չորս խմբի. 1. **Քանական թվականներ** (կոչվում են նաև **բացարձակ**). նշանակում են թիվ կամ առարկաների որոշակի քանակ՝ **մեկ, տասը, քառասունյոթ, չորս հարյուր ութ**: Խոսքիմասային հատուկ (բնորոշ) ձև չունեն: 2. **Կոտորակային թվականներ** (համարվում են նաև քանակականների տեսակ). մատնանշում են ամբողջի մասերը՝ **մեկ վեցերորդ, մեկ հարյուրերորդական, հինգ ամբողջ**

վեց տասնորդական: 3. **Դասական թվականներ.** նշանակում են առարկայի թվային կարգ՝ **առաջին, երկրորդ, քսաներորդ:** 4. **Բաշխական թվականներ.** նշանակում են առարկաների հավասար քանակական բաշխում՝ **հինգական, երեք-երեք:**

Թվականը քերականորեն չի ձևափոխվում: Միայն գոյականաբար գործածվելիս կարող է հոլովվել:

Թվականներն ըստ կազմության լինում են՝ **պարզ՝ մեկ, հինգ, քսան, և բաղադրյալ՝ հինգերորդ, երեսուն, քսանհինգ, տասական, մեկ քառորդ:** **Մեկ** թվականն ունի նաև **մի** տարբերակը, որը համանուն է **մի** անորոշ դերանվանը: Թվականակերտ ածանցները վերջածանցներ են՝ երկ-**րորդ**, հինգ-**երորդ**, ութ-**սուն**, հնգ-**ական:** -**րորդ** և -**երորդ** ածանցները քանակական թվականներից կազմում են դասական թվականներ, ինչպես նաև **քառորդ** կոտորակային թվականը: -**րորդ**-ը գործածվում է միայն **երկրորդ, երրորդ, չորրորդ** կազմություններում: **Մեկ** քանակական թվականից նշված ածանցներով դասական թվական չի կազմվում: Դրա փոխարեն գործածվում է **առաջին** բառը:

Մեկ, երկու, երեք, չորս թվականները բաղադրյալ թվականի վերջին բաղադրիչ լինելու դեպքում ստանում են -**երորդ** ածանցը՝ **քսանմեկերորդ, երեսուներկուերորդ, իննսուներեքերորդ, հարյուրչորսերորդ:**

-**սուն** ածանցը միավոր նշանակող **երեք, չորս, հինգ, վեց, յոթ, ութ, ինը** պարզ թվականներից կազմում է տասնավոր նշանակող թվականներ՝ **քառասուն, ութսուն, իննսուն:** **երե-սուն, հի-սուն, վաթ-սուն, յոթան-ա-սուն** կազմությունների դեպքում հիմքը համապատասխան արմատների անկանոն տարբերակներ են: -**ական** ածանցը քանակական թվականներից կազմում է բաշխական թվականներ՝ **երեքական, քսանմեկական:** Կա բաշխական թվականների կազմության մեկ այլ՝ հոմանիշ եղանակ՝ քանակական թվականի կրկնությամբ՝ **երեք-երեք, տասնհինգ-տասնհինգ:**

Ինը և տասը թվականները ունեն ը կամ **ն** վերջնահնչյուն, որը փոխանվանական կիրառության դեպքում կատարում է նաև որոշիչ հոդի դեր: **Տասը** բառը երբեմն կարող է լինել **տաս** ձևով՝ **Իննից տաս** է պակաս: Բաղադրություններում հանդես է գալիս **ն** հոդով (տասներորդ, տասնամյակ, տասնապատիկ, տասնվեց), երբեմն էլ՝ անհոդ (տասհարկանի, տաստոննամոց, տասնետրամոց): **Ինը** թվականը միշտ պահպանում է իր ը կամ **ն** վերջնահնչյունը՝ **տասնինը, իննսուն, իննանիշ, իննհատորյակ // ինըհատորյակ, իննհարկանի // ինըհարկանի, իններորդ, իննից, իններ:**

Երկու թվականը գոյականաբար հոլովվում է **երկուս-** հիմքով՝ **երկուսը, երկուսի(ն), երկուսով, երկուսից, երկուսներ, երկուսս, երկուսներդ** ևն: Սակայն ուղիղ ձևը առանց հոդի գործածվելիս կարող է լինել **թե՛ ս-ով, թե՛ առանց ս-ի՝** Մատյանում քանի՞ **երկու(ս)** կա:

Մեկից բարձր քանակական թվականի լրացյալը կարող է լինել **թե՛ եզակի, թե՛ հոգնակի** թվով:

1. Սովորաբար եզակի է լինում, եթե՝ 1. չափի միավոր է կամ առնվում է իբրև այդպիսին՝ Մեկնարկին մնացել է **15 օր:** Անցանք ևս **100 կիլոմետր:** Եկել էին քսան **հոգով:** **Յինգ մասնակցից** ոչ մեկը չկա, 2. անորոշ առումով է, և տրամաբանական շեշտը (խոսողի ուշադրությունը) թվականով արտահայտված քանակի վրա՝ Դահլիճում **երեք** ազատ **տեղ** է մնացել:

2. Սովորաբար հոգնակի է լինում, եթե՝ 1. որոշյալ առումով է՝ Մեր երեք **գործընկերներն** էլ գործուղման մեջ են, 2. թվարկվող առարկաները նկատի են առնվում առանձին-առանձին՝ Հաղթեց երեք **մարզիկների,** 3. թվական որոշիչի և դրա որոշյալի միջև մեկ այլ որոշիչ կա՝ Մրցությանը կմասնակցեն տասնվեց **ուժեղագույն** մարզիկներ: Բայց նաև՝ Առգրավվել է երկու **ինքնաշեն** ատրճանակ:

3. Թվական որոշիչ ունեցող ենթական՝ 1. եթե հոգնակի է, ապա ստորոգյալն էլ հոգնակի է լինում՝ Երեք գուսաններ մրցում էին, 2. եթե եզակի է, ապա ստորոգյալը կարող է լինել **թե՛ եզակի,**

ինչպես՝ Այդ օրն ընդամենը երկու հոգի **եկավ**, թե՛ հոգնակի՝ Այդ օրն ընդամենը երկու հոգի **եկան**, **3**. եթե փոխանուն թվական է, ապա ստորոգյալը **մեկ**–ի դեպքում լինում է եզակի՝ Մեկն ինձ **դուր եկավ**, մյուս ամբողջ թվերի դեպքում՝ հոգնակի՝ Երեքն էլ **կորան**, կոտորակի դեպքում՝ սովորաբար եզակի՝ Մեկ երրորդը **այրվել է**:

Թվականի ուղղագրությունը: Քանակական թվականները՝ **մեկ**–ից մինչև **հարյուր**–ը, պարզ բառեր են կամ բաղադրյալ համադրական կազմություններ, **հարյուր մեկ**–ից սկսած՝ բաղադրյալ հարադրական կազմություններ են (բացի **հազար**–ից, **միլիոն**–ից, **միլիարդ**–ից ևն), գրվում են առանձին բաղադրիչներով՝ **երկու հազար վեց հարյուր քառասունյոթ, մեկ միլիոն, երեք տրիլիոն վեց հարյուր միլիարդ չորս հարյուր քսան միլիոն յոթ հարյուր քսանհինգ հազար ինը հարյուր ութսունութ**:

Կոտորակային թվականները հարադրական կազմություններ են. բաղադրիչները գրվում են առանձին–առանձին՝ **չորս հինգերորդ, երեք հազարերորդ, մեկ ամբողջ հինգ տասնորդական**: Բացառություն են **քառորդ** բառը՝ որպես **մեկ քառորդ** (**// մեկ չորրորդ**) դասական թվականի հոմանիշ, և **կես** բառը՝ որպես **մեկ երկրորդ** կոտորակային թվականի հոմանիշ (**մեկ երկրորդ // կես // 1/2 // 0,5 = զրո ամբողջ հինգ տասնորդական**), ինչպես նաև **կես**–ով մի շարք կազմություններ՝ **մեկուկես, յոթուկես** ևն:

Կոտորակային թվականի համարիչը ամբողջ թիվ նշանակող թվական է, իսկ հայտարարը՝ դասական թվական՝ **–ական** ածանցով կամ առանց դրա՝ **մեկ երկրորդ(ական), տասնմեկ հարյուրերորդ(ական)**: Եթե հայտարարը 1 թիվն է, ապա կարդացվում է **մեկերորդ(ական)** ձևով՝ **երկու մեկերորդ** կամ **երկու մեկերորդական**: Եթե հայտարար է դառնում **տասը** թվականը, ապա կարդացվում է երեք ձևով՝ **մեկ տասներորդ, մեկ տասներորդական, մեկ տասնորդական**. սովորական գործածության մեջ նախընտրելի է առաջին տարբերակը, մաթեմատիկայում՝ վերջինը՝ **մեկ տասնորդական, երկու տասնորդական** ևն:

Բաշխական թվականների կրկնավոր տարբերակները գրվում են միության գծիկով՝ **յոթ–յոթ, քսանմեկ–քսանմեկ**:

Եթե **դասական** թվականը կազմված է երկուսից ավելի բաղադրիչ ունեցող հարադրական քանակական թվականից, ապա հարադրական բարդություն է, այսինքն՝ գրվում է առանձին բաղադրիչներով՝ բացառությամբ վերջին երկու թվական բաղադրիչների՝ **երկու հարյուր տասնվեցերորդ, երեք հազար երկու հարյուր տասնմեկերորդ**: Հակիրճության համար այսպիսի դասականները սովորաբար գրվում են թվերով (վերջում կցվում է **–րդ** մասնիկը), ինչպես՝ **3211–րդ, 25 875–րդ**:

Թվականները, տառերով (որպես հնչյունագիր) գրվելուց բացի, ունեն նաև իրենց **գաղափարագիր նշանները**: Դրանք կա՛մ արաբական թվանշաններ են, կա՛մ այբուբենի տառերը՝ հատուկ թվային արժեքներով:

Արաբական թվանշանները և դրանց համակցությունները նշանակում են քանակական թվականներ: Դրանցից բաշխական և դասական թվականներ կազմելիս համապատասխան արաբական թվանշանին միության գծիկով կցվում է **–ական, –ին** կամ **–րդ՝ 1–ական, 1–ին, 2–րդ, 78–րդ**: Կոտորակային թվականների դեպքում տառերով գրվող այդպիսի կցումներ չեն արվում՝ **1/2, 0,5**:

Դասական թվականների՝ առանց նշված մասնիկների գործածությունը թույլատրելի է համարվում միայն հետադաս կիրառության դեպքում՝ **հողված 3** (կարդացվում է՝ **հողված երրորդ**), **հողված 78** (= **հողված յոթանասունութերորդ**), **կես 1** (= **կես առաջին**), **մաս 5** (= **մաս հինգերորդ**) ևն:

Թվարկումների ժամանակ դասական թվականների **–ին–ի** և **–րդ–ի** փոխարեն կարող է դրվել միջակետ կամ աջ փակագիծ՝ **1., 2., 3., 4., կամ՝ 1), 2), 3), 4)**:

Հետադաս դիրքում անթույլատրելի է համարվում «դասականի իմաստ արտահայտող թվանշանները և տառերը հոլովված ձևերով և հողերով գործածելը, այսինքն՝ գրել ոչ թե **կես 1–ի, գլուխ II–ով, բաժին 4–րդի, նկար 5–ը, սյունակ VI–ը** և այլն, այլ **1–ին**

կետի, II գլխով, գ մասից, 4–րդ բաժնի, 5–րդ նկարը, VI սյունակը և այլն»³⁹:

Հայերենի այբուբենի տառերը և դրանց համակցությունները սովորաբար նշանակում են քանակական թվականներ, եթե մեծատառերով են (Ա, ԺԲ, ՌԶԿԷ), և դասական թվականներ, եթե փոքրատառերով են (բ, իգ, մլե): Տառերի թվային արժեքը որոշվում է հետևյալ աղյուսակով.

Ա – 1	Ժ – 10	Ճ – 100	Ռ – 1000
Բ – 2	Ի – 20	Ս – 200	Ս – 2000
Գ – 3	Լ – 30	Յ – 300	Վ – 3000
Դ – 4	Խ – 40	Ն – 400	Տ – 4000
Ե – 5	Ծ – 50	Շ – 500	Ր – 5000
Զ – 6	Կ – 60	Ո – 600	Ց – 6000
Է – 7	Հ – 70	Չ – 700	Ի – 7000 ⁴⁰
Ը – 8	Ձ – 80	Պ – 800	Փ – 8000
Թ – 9	Ղ – 90	Ջ – 900	Բ – 9000

Հռոմեական թվանշանները (լատինական այբուբենի մեծատառերը) և դրանց համակցությունները նշանակում են դասական թվականներ՝ I, II, III, IV, V, VI, VII, VIII, IX, X, XI, XX (20–րդ), XXX (30–րդ), XL (40–րդ), L (50–րդ), LX (60–րդ), XC (90–րդ), C (100–րդ), CD (400–րդ), D (500–րդ), DC (600–րդ), CM (900–րդ), M (1000–րդ):

ԴԵՐԱՆՈՒՆ: Առարկա կամ հատկանիշ նշանակող խոսքի մասի (գոյականի, ածականի, թվականի կամ մակբայի) փոխարեն գործածվող բառ է: Ըստ այդմ՝ դերանուն համարվող բառերը լինում են՝ **գոյականական** (ես, մենք, սա, ինքը, միմյանց, ով, ամեն ոք, ոչ ոք, ոչինչ, ինչ ևն), **ածականական** (որ, այսպիսի, նման, ոմն, մի, սույն, միևնույն, այս, ոչ մի, ինչ–ինչ, ողջ ևն), **թվականական** (այսքան, ինչքան, որքան, այսչափ, նույնչափ, ինչչափ ևն), **մակբայական** (ուր, երբ, որտեղ, ինչու, ինչպես, այսպես, այսքան ևն):

³⁹ Տե՛ս «Հայոց լեզվի կանոններ (Գերատեսչական նորմատիվ ակտեր)», Եր., 2004:
⁴⁰ Տերմինաբանական կոմիտեի որոշմամբ՝ Ի(ւ)–ի թվային արժեքով այժմ գործածվում է ու տառը:

Դերանունը ոչ թե անվանում, այլ միայն մատնանշում, ցույց է տալիս առարկա կամ հատկանիշ: Դերանունը խոսքից դուրս ունի ընդհանրական նշանակություն (ցույց է տալիս ընդհանրապես առարկա կամ հատկանիշ), իսկ խոսքի մեջ որոշակիանում է՝ մատնացույց անելով խոսքի մասնակիցներին արդեն հայտնի կամ նույն խոսքում նախապես հիշատակված առարկան կամ հատկանիշը՝ փոխարինելով դրա անվանը՝ Երեկ մի դեպք պատահեց: **Դրա** մասին դեռ քչերը գիտեն: Ըստ իմաստի՝ դերանունները սովորաբար բաժանվում են ութ խմբի՝ **անձնական, ցուցական, փոխադարձ, հարցական, հարաբերական, որոշյալ, անորոշ, ժխտական:**

Ծանոթություն: Այլ լեզուներում և գրաբարում առանձնացնում են նաև **ստացական դերանուններ**, որոնց իմաստները արդի հայերենում արտահայտվում են անձնական դերանունների սեռական հոլովածներով՝ **իմ, քո, նրա, իր.** վերջիններս կարող են փոխարինվել ստացական հոդերով:

Դերանունը խոսքիմասային հատուկ (բնորոշ) ձև չունի: Գոյականին հարաբերակից (գոյականական) դերանունը ձևափոխվում է՝ հոլովվում է, հոդ է ստանում, կարող է հոգնակի կազմել:

Հայերենում անձնական դերանուններն են՝ **ես** (դու, նա) և **ինքը** (ինքս, ինքդ): Անձնական դերանվան ձևափոխությանը բնորոշ է տարարմատությունը, այսինքմ՝ դեմքի, թվի կամ հոլովի փոխվելու հետ հաճախ փոխվում է ոչ թե վերջավորությունը, այլ արմատը՝ **ես – դու – նա, ես – մենք, ես – իմ – ինձ, դու – քո – քեզ, նա – նրա, ինքը – իրեն:** Անձնական դերանվան հոլովածների թիվը, ի տարբերություն գոյականների և գոյականաբար հոլովվող այլ դերանունների, վեցն է. մեծ մասամբ ձևով տարբերակված են նաև սեռական և տրական հոլովները՝ **իմ – ինձ, քո – քեզ, մեր – մեզ, ձեր – ձեզ, իր – իրեն:**

Դերանվան տարբերակային ձևեր: 1. **Ինքս** (ինքդ, ինքը) դերանունը **ես** (դու, նա)–ի սաստկականն է, ավելի է շեշտում մասնակցի հատկապես դեմքը, այդ պատճառով էլ հաճախ կիրառ-

վում է դրա հետ միասին՝ **ես ինքս** (դու ինքդ, նա ինքը) (առանց որևէ կետադրության), 3–րդ դեմքում՝ նաև գոյականի հետ միասին՝ **Գործատուն ինքը** պիտի որոշի: **Ինքս** սաստկականը հոլովվում է միայն 3–րդ դեմքում (ինքը), ինչպես նաև ունի հոգնակիի երեք դեմք՝ **ինքներս, ինքներդ, իրենք** կամ **ինքները** (հզվ.՝ նրանք **ինքները**):

2. Տարահիմք զուգածներ կան 1–ին և 2–րդ դեմքերի բացառական, գործիական, ներգոյական հոլովներում՝ **ինձնից – ինձանից, քեզնով – քեզանով, մեզնում – մեզանում** ևն: Գրական լեզվին առավել բնորոշ են երկրորդները: Ըստ որում՝ անձնական դերանունների ներգոյականի ձևերը՝ **մեզնում // մեզանում, ձեզնում // ձեզանում, քեզնում // քեզանում** ևն, գրական լեզվի նորմերի սահմաններում են, բայց գործածվում են հազվադեպ: Գործածական որոշ հաճախականություն ունի **մեզանում** ձևը (որոշ իմաստափոխություն է կրել. նշանակում է նաև **մեր միջավայրում**, Հայաստանում ևն), մյուսները աստիճանաբար դուրս են մղվում գրական լեզվից (դրանց փոխարինում են **մեջ** կապով կառույցները՝ **մեր մեջ, քո մեջ** ևն):

3. **Ինքը** դերանունը որպես հատկացուցիչ (իր խոսքը, **իր** դեմքով) կամ կապի խնդիր (**իր** համար, **իր** մասին, **իր** մոտ, **իր** վրա, **իր** կողմից) օգտագործվում է **իր** (սեռականի) ձևով և ոչ թե **իրեն** (տրականի). չպետք է շփոթել **իրեն** ձևի հետ, որը գործածվում է որպես ուղիղ խնդիր՝ **իրեն** չի սիրում, խնամում է **իրեն**, կամ հանգաման խնդիր՝ **իրեն** կտամ, մոտեցա **իրեն**:

4. Անձնական դերանվան 2–րդ դեմքի հոգնակիի ձևերը կարելի է կիրառել նաև եզակիի նշանակությամբ: Այդպիսի կիրառությունը կոչվում է **քաղաքավարական հոգնակի**: Քաղաքավարական հոգնակիի ձևերը գրվում են մեծատառով՝ **Դուք, Ձեր, Ձեզ, Ձեզնից, Ձեզնով, Ձեզանում, Ինքներդ** ևն:

Ծանոթություն: **Մենք**–ը եզակի նշանակությամբ կարելի է գործածել գիտական գրականության մեջ, մասամբ պաշտոնական գրագրություններ

րում՝ **Մենք** այն կարծիքին ենք, որ... Հայտնում ենք Ձեզ, որ **մենք**... Այս գործածությունը, սակայն, բնավ էլ պարտադիր պայման չէ:

5. Հանձնարարելի է **միևնույն** դերանվան գործածությունը որոշիչ հոդով՝ որպես փոխանունություն: Ծիշտ կիրառություններ են՝ **Ինձ համար միևնույնն է (միևնույնը չէ)**, թե դու ուր կգնաս: Ես, **միևնույնն է**, քեզ չեմ հավատում:

6. **Նա** ցուցական դերանունը համանուն է **նա** անձնական դերանվանը և, ի տարբերություն դրա, կարող է մատնացույց անել ոչ միայն **անձ** (ինչպես՝ Սա ավագ եղբայրն է, դա՛ միջնեկը, իսկ **նա՛** կրտսերը), այլև **ոչ անձ** (Սրանք գեղարվեստական գրքերն են, դրանք՝ գիտականները, իսկ **նրանք՝** գիտահանրամատչելիները), և բնավ կարիք չկա **նա** ցուցական դերանունը անտեղի փոխարինելու **այն** դերանվամբ: Հանձնարարելի չէ **դա** դերանվան փոխարեն **նա**–ի գործածությունը, եթե խոսքը ոչ անձի մասին է, ինչպես՝ խաղողենին և **նրա** խնամքը: Ծիշտ ձևեր են՝ Հոմանիշները և **դրանց** ոճական կիրառությունը: Երիտասարդ թուրքերը և **նրանց** ոճագործությունները:

7. **Ի՞նչ** դերանունը իրանիշ է և ենթարկվում է ի հոլովման՝ **ի՞նչ(ը), ինչի՞(ն), ինչի՞ց, ինչո՞վ, ինչո՞ւմ, ինչե՞ր(ը), ինչերի՞(ն), ինչերի՞ց, ինչերո՞վ, ինչերո՞ւմ**: Հաճախ գործածվում է նաև որպես ածականական դերանուն՝ «**ինչպիսի՞**», «**ո՞ր**» իմաստով՝ **Ի՞նչ** խոսքերով երգեմ քեզ: Սա **ի՞նչ** սարք է: **Ի՞նչ** նշումներ պիտի արվեն: Այս դեպքում նրա լրացյալը սովորաբար լինում է անորոշ առումով՝ **Ի՞նչ մարդ** ես դու, երբեմն՝ որոշյալ՝ **Իմ ի՞նչ գործն** է:

8. Մակբայական **ե՞րբ** դերանունը արտահայտում է հարցում գործողության կամ եղելության ժամանակի մասին և ենթարկվում է –**վա** հոլովման միայն եզակի թվով՝ **երբվա՞, երբվանի՞ց**: Գործիական և ներգոյական հոլովներ չունի:

9. **Որտե՞ղ** դերանունը արտահայտում է հարցում գործողության կատարման կամ եղելության տեղի մասին: Ներգոյական հոլովածը չի գործածվում: Իսկ **ո՞ւր** դերանունը արտահայտում է հարցում գործողության ուղղության մասին և չի հոլովվում:

Հետևաբար՝ **Որտե՞ղ** է գտնվում: **Ո՞ւր** է առաքվում: **Որտե՞ղ** հանդիպեցիք:

10. Ինչո՞ւ դերանվանը հաճախ համարժեք է **ինչի՞** համար կապակցությունը՝ **Ինչո՞ւ** (= ինչի՞ համար) ես բերել այդ գործիքը: Ուստի սխալ է **ինչո՞ւ** դերանվան գործածությունը **համար** կապի հետ: Հանձնարարելի չեն նաև ռուսաբան **ինչո՞ւմն է բանը // հարցը (բանը // հարցն ինչո՞ւմն է)** կապակցությունը (որը նշանակում է «ի՞նչ է պատահել, ի՞նչ խնդիր կա, խնդիրը ո՞րն է») և դրա **բանը // հարցը նրանում(ն)** է պատասխանը:

11. Ամեն, ամեն մի, յուրաքանչյուր, ամենայն ածականական դերանունները գործածվում են անորոշ առումով լրացյալի հետ՝ ամեն մարդ, ամեն մի ուսանող, յուրաքանչյուր քաղաքացի, ամենայն ցանկություն, իսկ բոլոր դերանունը՝ որոշյալ առումով՝ բոլոր գրքերը:

12. Ողջ, ամբողջ, համայն դերանունները սովորաբար պահանջում են որոշյալ առումով լրացյալ՝ ողջ **աշխարհը**, ամբողջ **օրը**, համայն **մարդկությունը**, սակայն **մի** անորոշ դերանվան հետ զուգակցվելով՝ պահանջում են անորոշ առումով լրացյալ՝ **մի ամբողջ տիեզերք, մի ողջ ժողովուրդ**:

13. Հաճախ հոգնակի լրացյալի հետ գործածվելիս շփոթվում են **բոլոր և ամբողջ** դերանունները: Ըստ կանոնների՝ պետք է ասել **ամբողջ օրը** (գիրքը, սենյակը, երկիրը, տարածքը, աշխարհը ևն), բայց՝ **բոլոր օրերը** (գրքերը, սենյակները, երկրները, տարածքները, աշխարհները, գույները ևն): Միայն առանձին դեպքերում **ամբողջ**—ը կարող է գործածվել հոգնակի լրացյալի հետ, օրինակ՝ ևս **ամբողջ օրերով** բացակայում էր տնից:

14. Յուրաքանչյուրը, ամեն մեկը դերանուններով արտահայտված ենթակայի հետ ստորոգյալը լինում է եզակի երրորդ դեմքով: Օրինակ՝ Յուրաքանչյուրն իր գործն է **անում**: Ամեն մեկը մի բան է **ասում**: Եթե այդ նույն դերանուններով արտահայտված ենթական ունենում է դիմորոշ հոդ՝ **յուրաքանչյուրս, ամեն մեկս, յուրաքանչյուրդ, ամեն մեկդ**, ապա ստորոգյալը կարող է

առաջին կամ երկրորդ դեմքով լինել, եթե հոգնակի թվով է՝ Յուրաքանչյուրս մի առանձին գործ **ենք անում**: Ամեն մեկդ ձեր անելի՛քն **իմացեք**, կամ էլ երրորդ դեմքով լինել, եթե եզակի թվով է՝ Յուրաքանչյուրս մի առանձին գործ է **անում**: Ամեն մեկդ **պիտի իմանա** իր անելիքը:

15. Ոմն դերանունը եզակի թվով գոյականաբար չի գործածվում և չի հոլովվում: Ունի միայն որոշչային կիրառություն՝ **ոմն** Գրիգոր, **ոմն** քաղաքական գործիչ:

16. Մի քանի դերանունը հոլովվում է **քանի՞** հարցական դերանվան նման միայն եզակի թվով (մի քանիսը, մի քանիսի(ն), մի քանիսից, մի քանիսով, մի քանիսում), սակայն ենթակա լինելիս գործածվում է հոգնակի ստորոգյալի հետ՝ մի քանիսը **եկան**, մի քանիսով ճանապարհ **ընկան**:

17. Որոշ դերանվան գոյականաբար գործածությունը և հոգնակի թվով հոլովումը (**որոշները, որոշներից** ևն) խոսակցական բնույթ ունի և բնորոշ չէ գրական լեզվին:

18. Այլ դերանունը գոյականաբար երբեմն, իբրև հնաբանություն, գործածվում է միայն հոգնակի ուղղականում՝ **այլք (այլոք** ձևը սխալ կազմություն է), և սեռական—տրականում՝ **այլոց**:

19. Ածականական անորոշ դերանունները գործածվում են անորոշ առումով լրացյալի հետ (բացի **այսինչ, այնինչ** դերանուններից)՝ **ինչ—որ բան, ինչ—ինչ խնդիրներ, ոմն Սարգսյան, մի քառյակ, ուրիշ հարցեր, այլ դեպքեր, որոշ պայմաններ, որևէ խոչընդոտ, որևիցե պատճառ, բայց՝ այսինչ մարդը, այսինչ—այնինչ նկատառումները**: Դրանց հետ միայն փոխանուն թվականները երբեմն կարող են գործածվել որոշիչ հոդով՝ **ինչ—որ մեկը, ոմն մեկը, ուրիշ երկուսը, այլ մեկը, որևէ մեկը, որևիցե մեկը**:

20. Եթե **մի—ի** լրացյալը որոշիչ հոդով է՝ Մի **տողը** մոռացել եմ, ուրեմն **մի—ն** տվյալ դեպքում ոչ թե դերանուն է, այլ թվական անուն: Հակառակ դեպքում կարող է ընկալվել և՛ որպես թվական, և՛ որպես դերանուն, ինչպես՝ Մի **տող** մոռացել եմ:

21. Ածականական ոմն, մի, որևէ, որևիցե դերանունները գործածվում են միայն եզակի թվով լրացյալի հետ՝ ոմն **արվեստագետ**, մի **մարդ**, որևէ **խնդիր**, որևիցե **խոչընդոտ**, իսկ **ինչ-ինչ**, որոշ դերանունները՝ միայն հոգնակի թվով լրացյալի հետ՝ **ինչ-ինչ հանգամանքներ**, որոշ **դեպքեր**:

22. Ոչ մի դերանունը եզակի թվով որոշյալ և ստորոգյալ է պահանջում նույնիսկ որոշյալի բազմակի լինելու դեպքում՝ Ոչ մի տերև, ոչ մի ծաղիկ **չէր շարժվում** քամուց:

23. Հոգնակի **մեր, ձեր, իրենց** կամ **նրանց** ձևերի փոխարեն գործածված ստացական հոդից առաջ **–եր** հոգնակերտ մասնիկը կարող է փոխարինվել **–ներ** մասնիկով՝ **Ձեռքներդ** հեռո՛ւ: = **Ձեր** ձեռքերը հեռո՛ւ: Աչքներս լույս: = **Մեր** աչքը լույս: Մտքները փոխել են: = **Իրենց** մտքերը փոխել են: Հագներին շոր չունեին: = **Իրենց** հագին շոր չունեին: Մոտները փող չկա: = **Նրանց** մոտ փող չկա: Հոգնակիի այսպիսի արտահայտությունը, որ բնորոշ է գերազանցապես միավանկ գոյականներին, կոչվում է **ստացական հոգնակի**՝ նշանակելով, որ տվյալ առարկան(երը) կամ տվյալ տեղը վերաբերում է յուրաքանչյուրին: Բնորոշ է խոսակցական լեզվին:

24. Անձնական դերանվան սեռական հոլովի և ստացական հոդի համատեղ (միաժամանակյա) գործածությունը արևելահայերենում թույլատրելի չէ: Դա բնորոշ է արևմտահայ գրական լեզվին՝ **իմ գիրքս, քու մանչդ**: Դիմորոշ հոդի և անձնական դերանվան համատեղ (միաժամանակյա) գործածությունը թույլատրելի է՝ **մենք՝ աշակերտներս, դուք՝ մասնակիցներդ**:

25. Ցուցական մի քանի դերանունների հոգնակին կազմվում է **և՛ –ք, և՛ –ներ** մասնիկների միջոցով՝ **այդպիսիք–այդպիսիները, ինչպիսիք–ինչպիսիները, որպիսիք–որպիսիները** ևն: Առաջինները առավել հատուկ են գրական–գրքային խոսքին և համեմատաբար քիչ են գործածվում:

ՀՈՂ: Որոշ դերանուններ կարող են փոխարինվել **ս, դ, ն(ը)** վերջամասնիկներով, որոնք կոչվում են հոդեր կամ **դերանվանական հոդեր**: Հոդ ստանում են գոյականները՝ **գիրքս, աղջիկդ, կյանքը,**

գոյականական որոշ դերանուններ՝ **ինքդ, ամենքս, մեկը, ամեն մեկդ, մեկնումեկս, ոչ մեկը**: Մյուս բառերը հոդ ստանում են միայն գոյականաբար գործածվելիս՝ **մեծը, գյուղականը, երկուսս, քնածը, գնալուցդ, բոլորս, այսքանդ, ո՞րս, ինչպիսի՞ն, յուրաքանչյուրս, ամբողջը, այսինչը, մոտս, վրադ, վրայովս** ևն:

Ըստ դերանվանական նշանակության՝ տարբերում են հոդի չորս տեսակ՝ ստացական, դիմորոշ, ցուցական և որոշիչ:

Ստացական հոդ: Փոխարինում է անձնական դերանվան սեռական հոլովին՝ **իմ, քո, նրա, իր**, և մատնացույց է անում, թե խոսքի մասնակիցներից ում է պատկանում կամ վերաբերում տվյալ առարկան: Ստացական հոդ ունեցող բառը նախադասության մեջ փաստորեն համատեղում է հատկացյալի և հատկացուցիչի դերերը: Որպես ստացական՝ գործածվում են **ս, դ** հոդերը: Առաջին դեմքի **իմ (մեր)** դերանվանը կարող է փոխարինել **ս** հոդը՝ **Գործս** (= **իմ** գործը) ավարտել են: **Գործիս** (= **իմ** գործի) տեղը փոխվել է: **Գործիցս** (= **իմ** գործից) մի՛ խոսեք: **Գործովս** (= **իմ** գործով) հպարտանում են: **Մտքումս** (= **իմ** մտքում) ուրիշ ծրագրեր են: **Խոսքերիս** (= **իմ** խոսքերին) հավատացե՛ք: **Երկրորդ դեմքի քո (ձեր)** դերանվանը կարող է փոխարինել **դ** հոդը՝ **խնդրանքդ** (= **քո** խնդրանքը) կատարել են:

Դիմորոշ հոդ: Փոխարինում է անձնական դերանվան առաջին և երկրորդ դեմքերին՝ **ես, դու**, և մատնացույց է անում, թե տվյալ առարկան խոսողն է, թե՞ խոսակիցը: Սովորաբար դրվում է անձնանիշ բառերի վրա: Ուղղական հոլովով բառի վրա դրվելիս միշտ դեմքով համաձայնում է ստորոգյալի հետ՝ կրկնելով նրա դեմքը:

Որպես դիմորոշ՝ գործածվում են **ս** և **դ** հոդերը: Անձնական դերանվան առաջին դեմքի **ես (մենք)** ձևին և դրա թեք հոլովածներին կարող է փոխարինել **ս** հոդը՝ մասնակիցս = **ես**՝ մասնակիցս, մասնակցիս = **իմ**՝ մասնակցիս կամ **ինձ**՝ մասնակցիս, մասնակցիցս = **ինձնից**՝ մասնակցիցս, մասնակցովս = **ինձնով**՝ մասնակցովս, ներքոստորագրյալներս = **մենք**՝ ներքոստորագրյալներս ևն:

Անձնական դերանվան երկրորդ դեմքի **դու (դուք)** ձևին և դրա թեք հոլովածներին կարող է փոխարինել **դ** հոդը՝ ամենքդ = դուք՝ ամենքդ, ձեզանից յուրաքանչյուրը = յուրաքանչյուրդ (սխալ է՝ ձեզանից յուրաքանչյուրդ), ամենքիցդ = ձեզանից՝ ամենքիցդ ևն, օր.՝ **Հերոսիդ** (= քեզ) գնդակ երբեք չի դիպչի:

Երրորդ դեմքում դիմորոշ հոդը նույնանում է որոշիչ **ը(ն)** հոդին: Դիմորոշ հոդի և անձնական դերանվան համատեղ (միաժամանակյա) գործածությունը թույլատրելի է (**մենք՝** աշակերտներս, **դուք՝** մասնակիցներդ):

Ցուցական հոդ: Որպես ցուցական՝ գործածվում է **ս** հոդը: Փոխարինում է ցուցական **այս** դերանվանը և մատնացույց է անում առարկայի՝ ժամանակի կամ տարածության մեջ խոսողին մոտ լինելը՝ Օրերս (= այս օրերին) տեղի ունեցան կարևոր իրադարձություններ: Աշխարհումս (= այս աշխարհում) ախ չեմ քաշի: Վերջերս (= այս վերջին ժամանակներում) լրջացել ես: Առանձին գործածություններում **ս**-ն երկիմաստություն է դրսևորում՝ **կյանքս** (= այս կյանքը // իմ կյանքը) հոգսաշատ է դարձել: **Գիշերս** (= այս գիշերը // իմ գիշերը) լի էր երազներով:

Որոշիչ հոդ: Որպես որոշիչ հոդ՝ գործածվում է **ն(ը)**-ն: Արտահայտում է առարկայի՝ խոսողին և կամ խոսակցին ծանոթ, հայտնի լինելը, խոսքում արդեն հիշատակված լինելը: Իրեն փոխարինող որոշյալ դերանուն չունի: Բայց անորոշ առման դեպքում կարող է փոխարինվել **մի** կամ **ինչ-որ** դերանվամբ՝ *Տղան եկավ – Մի տղա եկավ: Ինչ-որ տղաներ եկան:* Որոշիչ հոդ ստանում են միայն ուղղական (ճամփորդը) և սեռական-տրական (ճամփորդներին) հոլովածները:

ԲԱՅ: Գործողություն կամ եղելություն նշանակող բառեր են: Բայն ունի իր բնորոշ ձևը՝ ուղիղ ձևում՝ **ել** կամ **ալ** ածանց-վերջավորությունը: Բայը կարող է ձևափոխվել ըստ դեմքի, թվի, ժամանակի, եղանակի՝ կազմելով դիմավոր ձևեր: Բայի այդպիսի ձևափոխությունը կոչվում է **խոնարհում**: Բայի բոլոր դրական

ձևերն ունեն իրենց ժխտական հակադեմքները, որոնք կազմվում են համապատասխան դրական ձևերից՝ **գրեցի – չգրեցի, ասում եմ – չեմ ասում, գնա՛ – մի՛ գնա** ևն:

Բայի կազմությունը: Որոշվում է ըստ նրա սկզբնաձևի՝ անորոշ դերբայի: Բայի սկզբնաձևը կազմված է լինում բայափնջից և **ել** կամ **ալ** ածանց-վերջավորությունից: **ել/ալ** ածանցի **ե** և **ա** ձայնավորները կոչվում են **խոնարհիչներ**: **ե** խոնարհիչով բայերը կոչվում են **ե** խոնարհման բայեր, **ա** խոնարհիչով բայերը՝ **ա** խոնարհման:

Բայափնջը (անորոշի փնջը) **ել/ալ** վերջավորությունից առաջ ընկած մասն է, որի կազմում կարող են լինել բայաժանցներ՝ փախ-չ-ել, գտ-ն-ել, հագ-են-ալ, խաբ-վ-ել, կայծ-կլտ-ալ, մոտ-եցն-ել:

Ծանոթություն: Կան բայեր, որոնք միմյանցից տարբերվում են միայն խոնարհիչով՝ **աղել – աղալ, մխել – մխալ, գնել – գնալ, թվել – թվալ, ծխել – ծխալ, ծպտել – ծպտալ** ևն: Դրանք կարող են լինել բառային տարբերակներ (**ոստոստել // ոստոստալ**) կամ առանձին բառային միավորներ (**գնել / գնալ**):

Բայերը բայակազմական տեսակետից լինում են **պարզ, ածանցավոր** և **բարդ**:

Ա. Ածանցավոր բայերն ըստ բայաժանցի բնույթի լինում են չորս տեսակի՝ • **սոսկածանցավոր՝** հեռ-ան-ալ, մոտ-են-ալ, մտ-ն-ել, թռ-չ-ել, • **պատճառական՝** արագ-ացն-ել, մոտ-եցն-ել, թռ-ցն-ել, • **բազմապատկական՝** կտր-ատ-ել, պոկ-ոտ-ել, բոց-կլտ-ալ, թռչ-կոտ-ել, կոխ-կռտ-ել, ճխլ-տ-ել, • **կրավորական՝** գր-վ-ել, սիր-վ-ել, նկար-վ-ել:

1. Սոսկածանցները (**են**-, **ան**-, **ն**-, **չ**-) մեծ մասամբ որևէ իմաստ չեն արտահայտում. ունեն սոսկ բառակազմական ու հիմքակազմական նշանակություն: Դրանցից **են**-, **չ**- ածանցները կատարյալի հիմքում ընկնում են (մտ-ն-ել > մտ-ա, թռ-չ-ել >

թո-անք), իսկ **-ան-ը** և **-են-ը** փոխարինվում են **-աց-**, **-եց-ով** (հեռ-**ան-ալ** > հեռ-**աց-ար**, մոտ-**են-ալ** > մոտ-**եց-աք**):

-չ- սոսկածանցով բայերը թվով քիչ են և անկայուն, թեև շատ գործածական են: Դրանցից **դիպչել**, **թռչել**, **կորչել**, **կայչել**, **փախչել**, **հանգչել** բայերը գրական լեզվում պահպանել են **-չ-** ներածանցով բայի հատկանիշները: Խոսակցական լեզվում հանդիպող **դիպչեցի**, **դիպչեց** և նման ձևերը գրական լեզվում գրեթե գործածություն չունեն և չեն հանձնարարվում: Երկու բայեր՝ **սառչել**, **ուռչել**, հանդիպում են զուգածություններով: **Ուռչել** բայի անցյալ կատարյալի արմատական ձևերը՝ **ուռա**, **ուռար** ևն, որոնք կանոնական են համարվում, գործածությունից դուրս են մղվում. ակնհայտորեն տարածում ունեն այդ բայի ցոյական ձևերը՝ **ուռեցի**, **ուռեցիր** ևն: Անկատար ներկայում և անցյալում զուգահեռ գործածություն ունեն **ուռում** և **ուռչում** տարբերակները: **Սառչել** բայի համար ևս գործածվող տարբերակային ձևեր են՝ **սառեցի** // **սառչեցի**, **սառչում** են // **սառում** են: Գրական լեզվում հանձնարարելի են առաջինները: **Հալչել**, **փլչել-ը** ունեն նաև **-վ-** ածանցով կրկնասեռ տարբերակներ (հալվել, փլվել), որոնք կանոնական են և ավելի տարածված:

2. Բազմապատկական ածանցները (**-ատ-**, **-ոտ-**, **-կոտ-**, **-տ-**, **-կոտ-**, **-կլտ-**, **-կտ-** ևն) ցույց են տալիս գործողության կրկնություն, բազմապատկություն՝ կոտրել – **կոտրատել**, պոկել – **պոկոտել**, թռչել – **թռչկոտել**, ծեծել – **ծեծկոտել**, փայլել – **փայլկտալ**: Շատ քիչ բայերից է հնարավոր նշված ածանցներով կազմել բազմապատկական բայեր: Այլ դեպքերում բազմապատկական նշանակությամբ բայեր կազմվում են արմատի կրկնությամբ՝ վազել – **վազվազել**, խշշալ – **խշխշալ**:

Ճանոթություն: Բայական **-ոտ-** և **-ատ-** ածանցները չպետք է շփոթել ածականակերտ **-ոտ** և **-ատ-** ածանցների հետ, որոնք կարող են հայտնվել բայի հիմքում՝ աղտոտել, մրոտել, փոշոտել, կնճռոտել, ժանգոտել, ցեխոտել, յուղոտել, թրատել, գլխատել, կրճատել, հորատել ևն:

3. Պատճառական ածանցները (**-եցն-**, **-ացն-**, **-ցն-**) ցույց են տալիս, որ ենթական գործողությունը կատարել է տալիս մեկ ուրիշի (անձի կամ իրի), պատճառ է դառնում մեկ ուրիշի գործողության՝ խաղալ – **խաղացնել**, երգել – **երգեցնել**, թռչել – **թռցնել** կամ էլ գործողությունը կատարում է ոչ թե ինքնին, այլ մեկ ուրիշի նկատմամբ՝ մոտենալ – **մոտեցնել**, սպիտակել – **սպիտակեցնել**: Ոչ բոլոր բայերը կարող են ստանալ նշված ածանցները: Հաճախ այդ ածանցների փոխարեն կամ դրանց զուգահեռ գործածվում է **տալ** բայը՝ **վարել տալ**, **աղալ տալ**, **թռչել տալ**:

Ճանոթություն 1: Սովորաբար հավելուրդային է լինում պատճառական ածանցի և **տալ** բայի համատեղումը՝ **խոսեցնել տալ**, **հիշեցնել տալ**, **զգացնել տալ**: Պատճառական ածանցի և **տալ** բայի համատեղումը հնարավոր է, եթե չեզոք բայից կազմվում է ոչ միայն պատճառակերպ ներգործական բայ, այլև դրան տրվում է **պատճառական** բայի նշանակություն: Օրինակ՝ Հայերի ապստամբության առաջնորդ Գրիգոր Մամիկոնյանը **կուրացնել տվեց** Աշոտ Բագրատունի իշխանին՝ իրենց չմիանալու համար: Ձանգեցի տեսուչին և մեր անջատված հոսանքը **միացնել տվեցի**:

Ճանոթություն 2: **Տալ** բայը անորոշ դերբայի սեռական-տրական հոլովածակի անորոշ առման հետ նշանակում է «ծնացնել, տպավորություն ստեղծել»՝ Շատ մեծ ամոթ էր, որ գիտեի, սակայն **չիմանալու էի տալիս** լսածներս: Ուրեմն, ինչպե՞ս, հեղեղներն արյան թողնել, որ ծածկի՞ մոռացման փոշին, խլացնե՞լ սիրտը, չզգա՞լ, չընդվզե՞լ, **Սոռանալո՞ւ տալ**, անգամ մոռանա՞լ:

• **-եցն-** ածանց ստանում են **ե** խոնարհման պարզ, ինչպես նաև **-են-** սոսկածանց ունեցող բայերը՝ **խմել** – **խմեցնել**, **հագեցնել**, • **-ացն-** ածանցը ստանում են **ա** խոնարհման պարզ և **-ան-** սոսկածանց ունեցող բայերը՝ **խաղալ** – **խաղացնել**, **հեռանալ** – **հեռացնել**, • **-ցն-** ածանցը ստանում են **-մ-** և **-չ-** սոսկածանց ունեցող բայերը՝ **հասնել** – **հասցնել**, **տեսնել** – **տեսցնել** (խսկց.), **թռչել** – **թռցնել**, **կորչել** – **կորցնել**՝ բացառությամբ մի քա-

նի դեպքի՝ պրծնել – պրծացնել (խսկց.), իջնել – իջեցնել, հալչել – հալեցնել, սառչել – սառեցնել, ուռչել – ուռեցնել:

Սխալ են պատճառական ածանցով բայերի անցյալ կատարյալի ավելորդ **-եց-**ով կեղծ գրական ձևերը՝ **խաղացրեցի, թռցրեցի, մոտեցրեցի**: ճիշտ ձևերն են՝ **խաղացրի, թռցրի, մոտեցրի**:

Խոսակցական լեզվում **ե** խոնարհման պարզ բայերից հաճախ պատճառական են կազմում ոչ թե **-եցն-** ածանցով՝ **խոսեցնել, քնեցնել, բռնեցնել, գժվեցնել, հաչեցնել, երգեցնել** ևն, այլ **-ացն-** ածանցով (խոսացնել, քնացնել, հարմարացնել, հաջողացնել, ծաղկացնել, վազացնել, հիշացնել, խմացնել, երգացնել ևն), որոնք սխալ, մերժելի ձևեր են: Դրան հակառակ՝ **-ան-** սոսկաժանցով բայերից **-եցն-** ածանցով երբեմն կազմում են կեղծ գրական ձևեր՝ մգանալ > մգեցնել (← **մգացնել**), հնանալ > հնեցնել (← **հնացնել**), խոնավանալ > խոնավեցնել (← **խոնավացնել**), ամայանալ > ամայեցնել (← **ամայացնել**), խլանալ > խլեցնել (← **խլացնել**), խստանալ > խստեցնել (← **խստացնել**): Սխալ ձևեր են նաև՝ մոտացնել (← **մոտեցնել** < մոտենալ), վախացնել (← **վախեցնել** < վախենալ), սառացնել (← **սառեցնել** < սառչել), հալացնել (← **հալեցնել** < հալչել // հալվել), ուտացնել (← **կերցնել** // ուտեցնել < ուտել), հեռվանալ / հեռվացնել (← **հեռացնել** < հեռանալ):

Ճանոթություն: Կան դեպքեր, երբ **-եցն-** և **-ացն-** ածանցներով հոմանիշ բայահիմքերից կազմվում են զուգահեռ ձևեր՝ **սպիտակեցնել** (< սպիտակել) և **սպիտակացնել** (< սպիտականալ), **նիհարեցնել** (< նիհարել) և **նիհարացնել** (< նիհարանալ), **հարթեցնել** (< հարթել) և **հարթացնել** (< հարթանալ): Երկրորդ տարբերակները հնարավոր է դիտել նաև որպես սխալակազմություններ՝ **սպիտակել, նիհարել, հարթել** ձևերից:

Սովորաբար պատճառական բայերի պես են խոնարհվում **հարցնել, լցնել, եզրակացնել** բայերը (հարցրի, հարցրիր, հարցրեց, հարցրինք, հարցրիք, հարցրին), որոնք պատճառական

ածանց չեն պարունակում և միայն արտաբուստ են նման պատճառական բայերին՝ **պատճառակերպ** բայեր են:

4. Կրավորական **-վ-** ածանց են ստանում ներգործական սեռի բայերը՝ **գտնել** > **գտնվել**, **կարդալ** > **կարդացվել**, **մոտեցնել** > **մոտեցվել**, **լցնել** > **լցվել**, **տանել** > **տարվել**, **անել** > **արվել** ևն:

Բ. Պարզ կոչվում են այն բայերը, որոնց հիմքում բայաժանց չկա՝ **խոսել, աղալ, անտեսել, փողփողալ, սիրահետել, տնտեսավարել, վերանորոգել** ևն:

Գ. Բարդ (վերլուծական, հարադրական) են այն բայերը, որոնք կազմված են երկու կամ ավելի առանձին գրվող բաղադրիչներից: **Հարադիր բարդ բայերը** լինում են երկու տեսակի՝ **1. անվանաբայական** (անուն + բայ)՝ **լաց լինել, խոսք տալ, բաց թողնել, վրա տալ, երես թեթել, ի չիք դառնալ** և **2. զուգաբայական** (բայ + բայ) գրվում են միության գծիկով՝ **եփել-թափել, ուտել-խմել, ասել-խոսել**, կամ էլ առանց գծիկի՝ **մեռնել պրծնել, պոկվել ընկնել, գնալ կորչել**:

Բայի սեռը: Արտահայտում է գործողություն կատարողի, գործողության և մի այլ առարկայի հարաբերություն: Սեռի քերականական ցուցիչներն են **-վ-** և **-ցն-** ածանցները. **-ցն-** ածանց ունեցող գրեթե բոլոր բայերը ներգործական սեռի են՝ **խոսեցնել, մոտեցնել, վախեցնել** ևն: Ըստ սեռի՝ բայերը լինում են երեք հիմնական տեսակի՝ **ներգործական, կրավորական և չեզոք**:

1. Ներգործական է այն բայը, որի նշանակած գործողությունը ենթակայից անցնում է որևէ առարկայի՝ **ջարդել, սիրել, հրավիրել, բռնել**: Ենթակայի գործողությունը կրող առարկան լինում է նախադասության **ուղիղ խնդիրը** (խուժքը կատարել է ծանր **հանցագործություն**): Ներգործական սեռի բայերի ձևային առանձնահատկությունն այն է, որ դրանք մեծ մասամբ կարող են ստանալ **-վ-** բայաժանց և դառնալ կրավորական՝ **հարգել – հարգվել, դնել – դրվել**, կամ էլ ունեն պատճառական ածանց՝ **մոտեցնել, թռցնել, խաղացնել**:

Բացառություն են մի քանի ներգործական սեռի բայեր՝ **ունենմ, ունենալ, գիտենմ, գիտենալ, ուզել, ուզենալ, սովորել, պատվել** («մեծարել»), **ափսոսալ, երդվել** ևն, որոնք –վ– ածանց չեն ստանում և կրավորական չեն դառնում:

2. Կրավորական է այն բայը, որի նշանակած գործողությունը որևէ առարկայից անցնում է ենթակային՝ **ջարդվել, սիրվել, հրավիրվել, բռնվել**: Ենթակմայի կրած գործողությունը կատարող առարկան լինում է նախադասության **ներգործող խնդիրը** (Գրություն ուղարկվեց **նախարարի կողմից**): Կրավորական սեռի բայերը ունենում են –վ– ածանց, առանց որի բայը դառնում է ներգործական՝ **նշանակվել – նշանակել, բերվել – բերել**: Կրավորական ածանցով բոլոր բայերը ե խոնարհման են և խոնարհվում են ե խոնարհման պարզ բայերի նման:

3. Չեզոք սեռի է այն բայը, որի նշանակած գործողությունը ենթակայից չի անցնում որևէ առարկայի, և ոչ էլ ենթական է կրում դրա ներգործությունը՝ **ննջել, կռկռալ, հեռանալ, թմրել**: Չեզոք սեռի բայը չի ունենում ո՛չ ուղիղ, ո՛չ ներգործող խնդիր (Անհանգիստ **նայում էր** ժամացույցին): Չեզոք սեռի բայերի առանձնահատկությունն այն է, որ դրանք կա՛մ չունեն և չեն կարող ստանալ –վ– ածանց՝ **սառչել, մտնել, ծիծաղել**, կա՛մ էլ ունեն և չեն կարող կորցնել –վ– ածանցը՝ **բնակվել, գանգատվել, սթափվել, սիրահարվել, սխալվել, վախճանվել, օգտվել** ևն: Բացառություն են **ազդել** և **ներգործել** բայերը, որոնք ուղիղ խնդիր չեն ստանում (չեզոք սեռի են), սակայն ստանում են –վ– ածանց և դառնում կրավորական:

Չեզոք սեռի բայերը, ստանալով պատճառական ածանց, դառնում են ներգործական սեռի բայեր՝ **սպասել – սպասեցնել, փախչել – փախցնել, զրնգալ – զրնգացնել, սթափվել – սթափեցնել**:

Ծանոթություն 1: Բնածայնական որոշ բայերից (**խոխռալ, փնջալ, թրմփալ, ֆշշալ** ևն) պատճառական ածանցով կազմված դրանց հոմա-

նիշները (**խոխռացնել, փնջացնել, թրմփացնել, ֆշշացնել**) նույնպես չեզոք բայեր են:

Ծանոթություն 2: Մի քանի բայեր չեզոք են թե՛ –վ– ածանցով, թե՛ առանց դրա՝ **բռնկ(վ)ել, խռպոտ(վ)ել, հակառակ(վ)ել, համաձայն(վ)ել, փար(վ)ել** ևն: Այդպես են նաև մի քանի այլ բայեր, որոնց –վ–ով ձևերը խոսակցական են և մերժելի՝ **դեղն(վ)ել, զուգադիպ(վ)ել, խաչակնք(վ)ել, հոժար(վ)ել, ճաքճք(վ)ել, շրջանառ(վ)ել, պապակ(վ)ել, վիճ(վ)ել, տափակ(վ)ել, տուժ(վ)ել, ցամաք(վ)ել, քծն(վ)ել** ևն:

Ծանոթություն 3: **Անպատվել, գզվել, երդվել, զզվել, թոթվել, թթվել, կռվել, հաշվել, հովվել, հրձվել** և մի շարք այլ բայերի –վ–ն ոչ թե սեռածանց է, այլ բառակազմական ածանց կամ արմատի վերջնահնչյուն:

Չեզոք սեռի են համարվում նաև *անդրադարձ*՝ **լվացվել, սանրվել, հագնվել, հարդարվել, զուգվել, սափրվել, և փոխադարձ համբուրվել, ողջագուրվել, գրկախառնվել, գժտվել, հաշտվել, տեսնվել, բախվել**, բայերը: Սրանց դեպքում տրամաբանական ներգործող խնդիրը համընկնում է ենթակային (Ես սանրվեցի: = Ես իմ կողմից սանրվեցի: = Ես ինձ սանրեցի: Մենք համբուրվեցինք: = Մենք միմյանց կողմից համբուրվեցինք: = Մենք իրար համբուրեցինք):

Ներգործականներից –վ– ածանցով կազմված մի շարք բայեր էլ խոսքի մեջ կարող են գործածվել և՛ կրավորական, և՛ չեզոք սեռերի նշանակությամբ՝ Վարդը **բացվեց** (չեզ.): / Պատուհանը **բացվեց** իմ կողմից (կրավ.): Մենք **բաժանվեցինք** (չեզ.): / Յուրաքանչյուրին **բաժանվեց** մեկական համակարգիչ (կրավ.) ևն:

Բայի անդեմ և դիմավոր ձևեր: **Դիմավոր** ձևերն ունեն դեմք, թիվ, ժամանակ, եղանակ, սեռ, իսկ **անդեմ** ձևերը՝ միայն սեռ: Բայի դիմավոր ձևերը կազմում են նախադասություն՝ լինելով նրա պարզ ստորոգյալը կամ բաղադրյալ ստորոգյալի հանգույցը (ստորոգիչը): Բայի անդեմ ձևերը նախադասության մեջ ունենում են զանազան պաշտոններ՝ բացի դիմավոր բային բնորոշ պաշտոններից: Անդեմ ձևերը կոչվում են **դերբայներ**:

Հայերենի դերբայները ութն են: Ըստ կիրառության բաժանվում են երկու խմբի՝ **անկախ** (ինքնուրույն) և **կախյալ** (ոչ ինքնուրույն): Անկախ դերբայները չորսն են՝ **անորոշ, ենթակայական, հարակատար, համակատար**: Կախյալ դերբայները, որոնք կոչվում են նաև **ձևաբայեր**, նույնպես չորսն են՝ **անկատար, վաղակատար, ապակատար, ժխտական**. սրանք ընդամենը բաղադրյալ հարադրական բայաձևերի բաղադրիչներ են (**գրում** են, **կարդացել էի**, **գրելու** ենք, **չենք գրի**) և առանց օժանդակ բայի չեն գործածվում: Մինչդեռ անկախ դերբայները ունեն ինքնուրույն գործածություն՝ **Գրել** չգիտես: Այս գիրքը **չճանաչված թռչող** առարկաների մասին է: Մեքենա **վարելիս** վթարի ենթարկվեց:

Անորոշ դերբայ: Համարվում է բայի սկզբնական ձևը: Արտահայտում է գործողության ընդհանուր գաղափար՝ **վազել, խաղալ**: Իբրև գործողության անուն՝ հոլովվում է (**ու** հոլովիչով), բայց միայն եզակի թվով: Հոգնակի թիվ սովորաբար չունի:

Անորոշ դերբայն իր հոլովածներով կարող է լինել՝

1. դիմավոր նախադասության • **ենթակա** (Անտեղի **խոսելը** բանի նման չէր), • **ստորոգելի** (Գլխավոր **խնդիրը** արդյունավետ **աշխատելն** է), • **զանազան լրացումներ** (Իմ **հակառակվելուն** նա ուշադրություն չդարձրեց: **Պարապ մնալուց** վատ բան չկա: Մեր **հետևից հեալով** վազում էր շունը),

2. բայական անդեմ նախադասության **գերադաս անդամ** (Սենյակում **չծխել**):

Ենթակայական դերբայ: Կազմվում է –ոդ վերջավորությամբ: Իմաստով հարաբերակից է ածականին: Նշանակում է գործելու ընդունակ կամ գործելու ընթացքում լինելը՝ որպես առարկայի հատկանիշ՝ **գործող** օրենք, զնացքի **սպասող** ուղևոր:

Նախադասության մեջ լինում է՝ • **որոշիչ** (**Քննարկվող** դեպքում $d < F$), • **ստորոգելի** (Նա **գործ անող** չէ):

Փոխանվանաբար գործածվելիս հոլովվում է գոյականի նման և կատարում նրան բնորոշ պաշտոններ՝ **Հաղթողը** պարգևատրվեց շքանշանով (ենթակա): Կոպիտ **խաղացողին** դաշտից հեռացրին

(ուղիղ խնդիր): Գումարտակը հայտնի էր իր լավ **կռվողներով** (անուղղակի խնդիր):

Ճանոթություն: Մի շարք բայերի ենթակայականի ձևեր վերածվել են նաև գոյականների՝ **ուսանող, ծնող, ընտրող, հարբեցող, մատուցող, ասմունքող, գրող, ուրացող**: Մի շարք դեպքերում –ոդ–ը պարզապես գոյականակերտ ածանց է՝ **լրագրող, ռադիոլսող, հեռուստադիտող, կինոսիրող** ևն:

Հարակատար դերբայ: Կազմվում է –ած վերջավորությամբ: Իմաստով հարաբերակից է ածականին: Նշանակում է գործողության հետևանքով առաջացած դրությունը, վիճակը՝ որպես առարկայի հատկանիշ՝ **թափված** ջուր, **մաշված** գիրք, **բեկված** ճառագայթ, **մթնեցրած** սենյակ:

Նախադասության մեջ լինում է՝ • **որոշիչ** (**Պարտված** երկիրը մեծ ռազմատուգանք վճարեց), • **ստորոգելի** (**Դուք հուզված** եք), • **ձևի պարագա** (**Մոլորված** կանգնել էր):

Փոխանվանաբար գործածվելիս հոլովվում է գոյականի նման և կատարում նրան բնորոշ պաշտոններ՝ վթարից **տուժածը** դիմեց բուժօգնության (ենթակա): **Եղածներից** ընտրեց (մասնական ուղիղ խնդիր): Քո **գրածում** ոչ մի ինքնուրույն միտք չկա (պարագա): Դա իմ **գրածը** չէ (ստորոգելի):

Ճանոթություն 1: Մի շարք բայերի հարակատարի ձևեր վերածվել են նաև գոյականների՝ **արարած, կոտորած, հարված, հատված, խորոված, նշանած, հավելված**, կամ ածականների՝ **սոված, նեխած, ցնդած, զինված**: Մի շարք դեպքերում –ած–ը վերածվել է գոյականակերտ ածանցի՝ **դիպված, առեղծված, վարկած, հողված, զանգված, սոխառած, արկած, հասարակած**:

Ճանոթություն 2: Վիճակ, հետևանք ցույց տվող որոշ թվով կրավորական բայերի հարակատար դերբայը (**մաշված, կառուցված, ավարտված, հնձված** ևն) երբեմն գործածվում է որպես ձևաբայ՝ օժանդակ բայի հատկապես 3–րդ դեմքի հետ կազմելով, այսպես կոչված, հարակատար ժամանակ: Օրինակ՝ Այդ մասին ոչինչ **չի գրված**: Դրան համարժեք է բա-

դադրյալ ստորոգյալով կառույցը՝ Այդ մասին ոչինչ **գրված չէ**, որտեղ նույն հարակատար դերբայը ստորոգելի է: Առաջինը գրական լեզվում հանձնարարելի չէ:

Համակատար դերբայ: Կազմվում է՝ անորոշ դերբային **–իս** մասնիկն ավելացնելով: Իմաստով հարաբերակից է ժամանակի մակբային: Նշանակում է ստորոգյալի կամ բայական այլ անդամի արտահայտած գործողությանը հանընթաց մեկ այլ գործողություն՝ որպես ժամանակային հատկանիշ՝ **գործ անելիս** խոսող, **կարդալիս** մտածել, **աշխատելիս** երգում էր, **վազելիս** ընկավ: Նախադասության մեջ լինում է **ժամանակի պարագա** (խնդիրը **լուծելիս** դա պետք է հաշվի առնել):

Ծանոթություն: Համակատար դերբայի փոխարեն խոսակցական լեզվում հաճախ գործածվում է անորոշի բացառական հոլովածևը (Տուն **գնալիս** (< **գնալուց**) հանդիպեցի նրան): Գրական լեզվում սա մերժելի երևույթ է:

Անկատար դերբայ: Կազմվում է անորոշի հիմքից **–ում** վերջավորությամբ (գր–**ում**, կարդ–**ում**) և արտահայտում է գործողության անավարտություն, շարունակականություն, ընթացքի մեջ լինելը՝ **գրում եմ**, **կարդում էին**:

Ապակատար դերբայ: Կազմվում է՝ անորոշ դերբային **–ու** վերջավորություն ավելացնելով (գրելու, կարդալու) և արտահայտում է գործողության կատարելիություն, չսկսված լինելը՝ **գրելու եմ**, **կարդալու էին**:

Վաղակատար դերբայ: Կազմվում է անորոշի կամ կատարյալի հիմքից **–ել** վերջավորությամբ (գրել, կարդացել) և արտահայտում է գործողության ավարտվածություն, կատարվածություն՝ **գրել եմ**, **կարդացել էին**:

Ժխտման կամ ժխտական դերբայ: Կազմվում է անորոշի հիմքից **–ի** կամ **–ա** վերջավորությամբ (գրի, կարդա) և արտահայտում է գործողության ոչ կատարելիություն՝ **չի գրի**, **չէին կարդա**:

Օժանդակ բայ: Կախյալ դերբայների հետ բաղադրյալ ժամանակաձևեր կազմող դիմավոր բաղադրիչն է, որի խոնարհված ձևերը դրվում են դերբայից հետո կամ առաջ՝ գրվելով առանձին: Խոնարհվում է ներկա (**եմ, ես, է, ենք, եք, են**) և անցյալ (**էի, էիր, էր, էինք, էիք, էին**) ժամանակներով: Անդեն ձևեր չունի: Ժխտական խոնարհման դեպքում օժանդակ բայը ստանում է չ նախամասնիկ և դրվում է միայն դերբայից առաջ՝ **չեմ գրում**, **չես գրել**, **չենք գրելու**, **չիք գրի**: Եզակի երրորդ դեմքի է ձևը ժխտականում դառնում է **չի՝ չի** գրում, **չի** գրի: Այս նույն **եմ** բայը նախադասության մեջ կարող է գործածվել նաև որպես պարզ ստորոգյալ (Տանը միայն **ես եմ**: Հիմա ծմեռ է: Նրա հագին սև մուշտակ **էր**) կամ բաղադրյալ ստորոգյալի հանգույց (Ես զինվոր **եմ**): Այսպիսի կիրառություններում **եմ** բայը կոչվում է **եական բայ**: Ի տարբերություն օժանդակ բայի՝ եական բայի ժխտական ձևը նախադաս չի դառնում՝ մութ է – մութ **չէ**, աշակերտ **եմ** – աշակերտ **չեմ**, և ներկա ժամանակի երրորդ դեմքում լինում է **չէ** ձևով՝ Դա փաստարկ **չէ**:

Հայերենում բայն ունի 5 եղանակ (սահմանական, ըղծական, ենթադրական, հարկադրական և հրամայական), որով արտահայտում է խոսողի վերաբերմունքը գործողության (եղելության) նկատմամբ: Ունի **3 ժամանակ** (ներկա, անցյալ, ապառնի), **3 դեմք** (առաջին, երկրորդ և երրորդ), **2 թիվ** (եզակի և հոգնակի):

Ժամանակաձևեր: Բայի խոնարհված ձևերը կոչվում են ժամանակաձևեր: Սահմանական եղանակն ունի **7** ժամանակաձև, ըղծական, ենթադրական, հարկադրական եղանակները՝ **2–ական**, հրամայական եղանակը՝ **1** ժամանակաձև:

1. Սահմանական եղանակ.

1.1. **անկատար ներկա** (կամ պարզապես **ներկա**). ցույց է տալիս ներկայում՝ խոսելու պահին հաստատ կատարվող, ընթացքի մեջ եղող գործողություն. կազմվում է անկատար ձևաբայով և օժանդակ բայի ներկայի ձևերով՝ **գրում եմ**, **կարդում եմ**,

1.2. **անկատար անցյալ**. ցույց է տալիս մի անցյալ ժամանակակետում հաստատապես ընթացքի մեջ եղած գործողություն.

կազմվում է անկատար ձևաբայով և օժանդակ բայի անցյալի ձևերով՝ **գրում էի, կարդում էի,**

1.3. **վաղակատար ներկա** (կամ պարզապես **անցյալ**). ցույց է տալիս անցյալում՝ խոսելու պահից առաջ հաստատ կատարված և ավարտված գործողություն. կազմվում է վաղակատար ձևաբայով և օժանդակ բայի ներկայի ձևերով՝ **գրել եմ, կարդացել եմ,**

1.4. **վաղակատար անցյալ**. ցույց է տալիս մի անցյալ ժամանակակետից առաջ հաստատապես ավարտված գործողություն. կազմվում է վաղակատար ձևաբայով և օժանդակ բայի անցյալի ձևերով՝ **գրել էի, կարդացել էի,**

1.5. **ապակատար ներկա** (կամ պարզապես **ապառնի**). ցույց է տալիս ապագայում՝ խոսելու պահից հետո հաստատ կատարվելիք գործողություն. կազմվում է ապակատար ձևաբայով և օժանդակ բայի ներկայի ձևերով՝ **գրելու եմ, կարդալու եմ,**

1.6. **ապակատար անցյալ**. ցույց է տալիս մի անցյալ ժամանակակետից հետո (և խոսելու պահից առաջ) հաստատապես կատարվելիք գործողություն. կազմվում է ապակատար ձևաբայով և օժանդակ բայի անցյալի ձևերով՝ **գրելու էի, կարդալու էի,**

1.7. **անցյալ կատարյալ**. ցույց է տալիս մի անցյալ ժամանակակետում հաստատապես կատարված (ավարտված) գործողություն՝ **գրեցի, կարդացի՞նք, լցրեց, թռան**. կազմվում է կատարյալի հիմքով և դիմաթվային վերջավորություններով՝ **գրեց-ի, -իր, -, -ինք, -իք, -ին** կամ **լցր-ի, -իր, -եց, -ինք, -իք, -ին** կամ **գտ-ա, -ար, -ավ, -անք, -աք, -ան:**

2. Ըղծական եղանակ.

2.1. **ըղծական ապառնի**. ցույց է տալիս ապագայում՝ խոսելու պահից հետո ցանկալի գործողություն՝ **գրեմ, կարդամ**. կազմվում է անորոշի հիմքով և ապառնիի դիմաթվային վերջավորություններով՝ **գր-եմ, -ես, -ի, -ենք, -եք, -են** կամ **կարդ-ամ, -աս, -ա, -անք, -աք, -ան,**

2.2. **ըղծական անցյալ**. ցույց է տալիս անցյալում՝ խոսելու պահից առաջ ցանկալի եղած գործողություն՝ **գրեի, կարդայի.**

կազմվում է անորոշի հիմքով և անցյալի դիմաթվային վերջավորություններով՝ **գր-եի, -եիր, -եր, -եինք, -եիք, -եին** կամ **կարդ-այի, -այիր, -ար, -այինք, -այիք, -ային:**

3. Ենթադրական եղանակ.

3.1. **ենթադրական ապառնի**. ցույց է տալիս ապագայում՝ խոսելու պահից հետո ենթադրվող, հավանական, հաճախ էլ հաստատապես կատարվելիք գործողություն. դրականը կազմվում է **կ** եղանակիչով և ըղծական ապառնիի ձևերով՝ **կգրեմ, կկարդամ**, ժխտականը՝ օժանդակ բայի ներկայի ժխտական ձևերով և ժխտման ձևաբայով՝ **չեմ գրի, չեմ կարդա,**

3.2. **ենթադրական անցյալ**. ցույց է տալիս անցյալում՝ խոսելու պահից առաջ ենթադրված, հավանական եղած գործողություն. դրականը կազմվում է **կ** եղանակիչով և ըղծական անցյալի ձևերով՝ **կգրեի, կկարդայի**, ժխտականը՝ օժանդակ բայի անցյալի ժխտական ձևերով և ժխտման ձևաբայով՝ **չէի գրի, չէի կարդա:**

4. Հարկադրական եղանակ.

4.1. **հարկադրական ապառնի**. ցույց է տալիս ապագայում՝ խոսելու պահից հետո անհրաժեշտաբար կամ պարտադիր կատարվելիք գործողություն. կազմվում է **պիտի** կամ **պետք է** եղանակիչով և ըղծական ապառնիի ձևերով՝ **պիտի գրեմ, պետք է կարդամ,**

4.2. **հարկադրական անցյալ**. ցույց է տալիս անցյալում՝ խոսելու պահից առաջ անհրաժեշտ կամ պարտադիր համարված գործողություն. կազմվում է **պիտի** կամ **պետք է** եղանակիչով և ըղծական անցյալի ձևերով՝ **պիտի գրեի, պետք է կարդայի:**

Ծանոթություն: Հարկադրական եղանակի բայաձևերի ժխտականում չ մասնիկը սովորաբար դրվում է **պիտի (պետք է)** եղանակիչի վրա՝ **չպիտի երգեմ, չպետք է ասի**, բայց կարող է դրվել նաև բայաձևի հիմնական մասի վրա՝ **պիտի չերգեմ, պետք է չասի:**

5. Հրամայական եղանակ.

5.1. **հրամայական ապառնի.** ցույց է տալիս, ըստ խոսողի հրամանի, հորդորի կամ խնդրանքի, ապագայում՝ խոսելու պահից հետո կատարվելիք գործողություն՝ **գրի՛ր, կարդացե՛ք.** կազմվում է անորոշի կամ կատարյալի հիմքով և դիմաթվային վերջավորություններով՝ **գր–ի՛ր, –(եց)ե՛ք** կամ **լցր–ո՛ւ, –ե՛ք** կամ **կարդ–ա՛, –(աց)ե՛ք:** Հրամայական բայաձևերը կրում են շեշտ, որը դրվում է դրական ձևերի վերջին վանկի և արգելական (ժխտական) ձևերի մի՛ նախամասնիկի վրա՝ **մի՛ գրիր, մի՛ կարդացեք:** Միակ ժամանակն է, որի ժխտականը կազմվում է ոչ թե **չ** մասնիկով, այլ **մի՛** արգելական նախամասնիկով, որը հարադրվում է դրական ձևերին սկզբից՝ **մի՛ թռիր, մի՛ թռեք:**

Հրամայական եղանակի ժխտականը կոչվում է նաև արգելական հրամայական. **մի՛ ժխտական մասնիկն ավելանում է բոլոր բայերի դրական հրամայականի ձևերի վրա՝ գրի՛ր – մի՛ գրիր, կարդա՛ – մի՛ կարդա, հագի՛ր – մի՛ հագիր, կարդացե՛ք – մի՛ կարդացեք, մոտեցի՛ր – մի՛ մոտեցիր, խոսեցրո՛ւ – մի՛ խոսեցրու, խոսեցրե՛ք – մի՛ խոսեցրեք** ևն: Հաճախ արգելական հրամայականի համար նշվում են զուգաձևեր, որոնք հնացած են և գործածությունից աստիճանաբար դուրս են մղվում, ինչպես՝ **մի՛ կարդար, մի՛ կարդաք, մի՛ հագնիր, մի՛ հագնեք, մի՛ մոտենար, մի՛ մոտենաք, մի՛ հուսար, մի՛ հուսաք, մի՛ լվար, մի՛ լվաք** ևն:

Ծանոթություն: Ե խոնարհման պարզ և կրավորական բայերի հրամայականի դրական խոնարհման հոգնակիում **–(եց)եք–**ով վերջացող ձևերը՝ **գրե՛ք** կամ **գրեցե՛ք,** արգելականում ունենում են **–եք** վերջավորությունը՝ **մի՛ գրեք, մի՛ խաբվեք:** Սխալ են ավելորդ **–եց–**ով ձևերը՝ **մի՛ գրեցեք, մի՛ խաբվեցեք:**

Այս ժամանակաձևերը խոսքաշարում կարող են արտահայտել նաև այլ իմաստներ՝ երբեմն փոխարինելով միմյանց ոճական յուրահատուկ նրբերանգներով: Օրինակ՝ սահմանական եղանակի ներկա ժամանակը կարող է նշանակել՝ **1.** անցյալում կատար-

ված–ավարտված գործողություն (Այնուհետև Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը **սկսում են** «Աստվածաշնչի» հայերեն թարգմանությունը), **2.** մոտ ապագայում կատարվելիք գործողություն (Երկու օրից **մեկնում են** գործուղման. կվերադառնամ մեկ շաբաթից):

Հրամայական եղանակի նշանակությամբ կարող են գործածվել նաև՝ **1. ենթադրական ապառնին** (Հենց հիմա **կգնա՛ս** և ներողություն՞ն **կխնդրես** արածիդ համար), **2. ըղձական ապառնիի ժխտականը** (Հիմա ոչինչ **չգրես**):

Անցյալ կատարյալը կարող է նշանակել ապառնի գործողություն (Դե՛, ես **գնացի,** ցտեսությո՛ւն): Ըղձական անցյալը կարող է նշանակել նաև ապագայում ցանկալի, բայց անհավանական կամ անհնարին գործողություն (**Լինեի** չոբան սարերում հեռու, **Գայիր անցնեիր** վրանիս մոտով...): Ենթադրական ապառնին կարող է նշանակել նաև ներկայում հավանական վիճակ (Մեր համախոհներով մենք մի հարյուր հոգի **կլինենք**)⁴¹:

Հարադիր բայերի խոնարհումը: Հարադիր բայերի անվանական մասը միշտ մնում է անփոփոխ (**լաց** եղա, **լաց** կլինի, **լաց** լինող): Բաղադրյալ ժամանակաձևերի օժանդակ բայը և արգելական **մի՛** մասնիկը սովորաբար միջադասվում են հարադիր բային՝ վեր **եմ** կենում, **լաց եմ** եղել, թույլ **չենք** տա, մայր **չի** մտնի, դուրս **մի՛** արի (բացառություն է **մի՛ վեր կաց** ձևը): **Պիտի (պետք է)** եղանակիչը կարող է լինել թե՛ միջադաս, թե՛ առաջադաս՝ վեր **պիտի** կենամ, **պիտի** վեր կենամ, **լաց պետք է** լինի, **պետք է** **լաց** լինի:

Չուգադրական բայերի խոնարհումը: Որպես կանոն՝ զուգահեռաբար խոնարհվում են զուգադրական բայերի երկու բաղադրիչներն էլ՝ **կերավ–խմեց, կտանի–կբերի, ասե՛ք–խոսե՛ք:**

Հարակատար և ենթակայական դերբայների թեք (հոլովված) ձևերը սովորաբար կազմվում են միայն երկրորդ բաղադրիչի փոփոխությամբ՝ **բերող–տանողները, բերած–տարածի, բերող–**

⁴¹ Ժամանակաձևերի արտահայտած այլևայլ իմաստների և դրանց ոճական կիրառությունների մասին հանգամանորեն կխոսվի երկրորդ գրքում:

տանողից, բերած–տարածից, իսկ անորոշ դերբայի դեպքում առաջին բաղադրիչը նույնպես կարող է թեքվել՝ **ասել(ով)–խոսել(ով), ասել(ու)–խոսելու, ասել(ուց)–խոսելուց, ասել(ում)–խոսելում**:

Համակատար դերբայով զուգադրական բայերից (ասելիս–խոսելիս) առաջինը կարող է լինել առանց **–իս–ի**, որը երկու բայի համար դառնում է ընդհանուր մասնիկ՝ **ասել–խոսելիս**:

Չուգադրական բայերի բաղադրյալ ժամանակաձևերի դրական խոնարհման օժանդակ բայը ուղիղ շարադասությամբ լինում է վերջադաս (ելնում–գնում է), իսկ շրջուն շարադասությամբ՝ առաջադաս (նա է եկել–գնացել), երբեմն՝ միջադաս (ելնում է–գնում է): **Պիտի (պետք է)** եղանակիչը լինում է միայն առաջադաս՝ **պիտի ելնեմ–գնամ, չպետք է ասես–խոսես**: Օժանդակ բայի ժխտակաձևը, **մի՛, կ** և **չ** մասնիկները կարող են «ընդհանուր հանվել» և դրվել միայն առաջին բաղադրիչի վրա (չեմ թողել գնացել, մի՛ թող գնա, կթողնի գնա, չելնեմ–գնամ) կամ էլ կրկնվել երկու բաղադրիչների վրա միաժամանակ (չեմ ասում–չեմ խոսում, չի ասի–չի խոսի, մի՛ թող մի՛ գնա, կթողնի կգնա, չմեռա չպրծա): Միջադաս և կրկնվող մասնիկի դեպքում երկու բայերի կապը թուլանում է, զուգադրական բայը կարծես քանդվում է:

Ծանոթություն: Բայի խոնարհման համակարգում առանձնացվում են նաև, այսպես կոչված, **բաղադրյալ երկրորդական ժամանակաձևեր**, որոնք կազմվում են հարակատար, համակատար, ապակատար դերբայներով և **լինել** օժանդակ բայի խոնարհված ձևերով՝ **մասնակցած է եղել, մասնակցելիս է եղել, մասնակցելու է եղել** ևն: Ժամանակակից արևելահայերենում համեմատաբար գործածական են հարակատարով կազմությունները: Մյուսները աստիճանաբար դուրս են մղվում լեզվից:

Անկանոն բայեր: Կան բայեր, որոնք բայերի մեծամասնության խոնարհման (կանոնավոր) ձևերից որևէ շեղում ունեն: Այդպիսի բայերը կոչվում են **անկանոն**: Դրանք են՝ **գալ, լալ, տալ, ասել, ուտել, զարկել, բացել, բերել, դառնալ, վեր կենալ, անել, դնել, տանել, ելնել, լինել, առնել, տեսնել, թողնել**:

Անկանոնությունները սովորաբար լինում են կատարյալի հիմքից կազմված ձևերում և հատկապես հրամայականում:

Գալ, ուտել, լինել բայերի խոնարհման դեպքում առկա է տարարմատություն. դրանց կատարյալի հիմքը կազմվում է համապատասխանաբար **եկ–, կեր–, եղ–** արմատներով՝ **եկա, կերա, եղա**:

Մի քանի բայերի կատարյալի հիմքը կազմվում է բայարմատի մասնակի փոփոխությամբ՝ տալ > **տվ–**, դնել > **դր–**, անել > **ար–**, դառնալ > **դարծ–** ևն:

Անկանոն բայերի մեծ մասի հրամայականի եզակին բայարմատն է՝ առանց վերջավորության (միաբաղադրիչ կազմություն ունեն)՝ **թո՛ղ, բե՛ր, ա՛ռ, տա՛ր, տե՛ս, կե՛ր** ևն:

Գալ, լալ, տալ բայերը անկատար ներկան կազմում են համակատարով՝ **գալիս է, լալիս է, տալիս է**:

Կան նաև բայեր, որոնք դիմավոր կամ անդեմ որոշ ձևեր չունեն: Դրանք կոչվում են **պակասավոր** բայեր: Այդ պակաս ձևերը սովորաբար լրացվում են այլ բայերի համարժեք ձևերով, որի պատճառով էլ պակասավոր բայերը ևս համարվում են անկանոն: Պակասավոր են **հուսալ, ցանկալ, լվանալ, լվալ, եմ, կամ, գիտեմ, ունեմ, արժեմ** բայերը: Վերջին հինգը չունեն անորոշ դերբայի ձևը: Դրանց համար որպես ելակետային ձև է առնվում սահմանականի ներկայի եզակի առաջին դեմքի բայածևը:

Հուսալ բայի պակաս ձևերը լրացվում են **հույս ունենալ** հարադիր բայով, **ցանկալ** բայինը՝ **ցանկանալ** բայով, **գիտեմ, ունեմ, արժեմ** բայերինը՝ **իմանալ, ունենալ, արժենալ** բայերով, **կամ** և **եմ** բայերինը՝ **լինել** բայով, **լվալ** բայինը՝ **լվանալ** բայով, **լվանալ** բայինը՝ **լվալ** բայով:

Ծանոթություն: **Բանալ, բառնալ** բայերը ներկայումս հնացած են և անգործածական: Դրանց փոխարեն գործածվում են **բացել, բարձել** բայերը, որոնցից երկրորդը կանոնավոր է:

Գիտենալ և **կենալ** բայերի ուղիղ և թեք ձևերը դուրս են մղվել գործածությունից և գրական լեզվում փոխարինվել են համապատասխանաբար **իմանալ** և **մնալ** բայերի ուղիղ և թեք ձևերով, ոչ թե՛ **գիտեցել, գիտեցած, գիտեցի՛ր // գիտցի՛ր, մի՛ գիտեցիր**

// մի՛ գիտցիր, մի՛ գիտենաք // մի՛ գիտեցեք ևն, այլ՝ իմանալ, իմացած, իմացի՛ր, մի՛ իմացիր, մի՛ իմացեք ևն, ոչ թե՛ կա՛ց, կեցի՛ր, կացե՛ք, մի՛ կաց, այլ՝ մնա՛, մնացե՛ք, մի՛ մնա: Նմանապես զարկել բայը աստիճանաբար իր տեղը զիջում է խփել-ին:

Մի շարք անկանոն և պակասավոր բայեր անցյալ կատարյալում ունեն գուգաձևեր՝ կազմված ներկայի կամ անցյալի հիմքից՝ **ասացի // ասի, արեցի // արի, բացեցի // բացի, բերեցի // բերի, դրեցի // դրի, թողեցի // թողի, լացեցի // լացի, տվեցի // տվի:** Դրանցից գրական լեզվում գործածական և հանձնարարելի են առաջինները՝ անցյալի ցոյական հիմքից կազմված ձևերը: Երկրորդները հնացած են և ունեն ընդգծված խոսակցական երանգ:

Անկանոն և պակասավոր բայերի խոնարհման ընդհանուր պատկերը անցյալ կատարյալում և հրամայականում այսպիսին է⁴²:

				Ե խոնարհման						
				պարզ						
պարզ ժամանակաձևեր	հրամայական եղանակ	սահման. եղանակ	Խոնարհման	վիտե	I դ.	1	ասացի, ասի*	կերա	զարկեցի, զարկի*	բացեցի, բացի*
					II դ.	2	ասացիր, ասիր*	կերար	զարկեցիր, զարկիր*	բացեցիր, բացիր*
					III դ.	3	ասաց	կերավ	զարկեց	բացեց
		հոգծի	I դ.	4	ասացինք, ասսինք*	կերանք	զարկեցինք, զարկինք*	բացեցինք, բացինք*		
			II դ.	5	ասացիք, ասսիք*	կերաք	զարկեցիք, զարկիք*	բացեցիք, բացիք*		
			III դ.	6	ասացին, ասսին*	կերան	զարկեցին, զարկին*	բացեցին, բացին*		
	հրամայական եղանակ	դրական	եզ.	հոգ.	7	ասա՛	կե՛ր	զարկի՛ր, զարկե՛ք*	բացի՛ր, բացե՛ք*	
					8	ասսե՛ք, ասսացե՛ք**	կերե՛ք	զարկե՛ք, զարկեցե՛ք**	բացե՛ք	
		արգելա-րոկ	եզ.	հոգ.	9	մի՛ ասա	մի՛ կեր, մի՛ ուտիր**	մի՛ զարկիր, մի՛ զարկե՛ք*	մի՛ բացիր, մի՛ բացե՛ք*	
					10	մի՛ ասեք	մի՛ կերեք, մի՛ ուտեք**	մի՛ զարկեք	մի՛ բացեք	

⁴² Անկանոն ձևերն ընդգծված են: Խոսակցական երանգ ունեցող ձևերը նշված են մեկ աստղանիշով (*), հնացած ձևերը՝ երկու (**):

	Ե խոն.	Ա խոնարհման			Ե խոնարհման	
		պարզ			-ն- սուկածանցով	
1	բերեցի, բերի*	եկա	լացեցի, լացի*	տվեցի, տվի*	արեցի, արի*	դրեցի, դրի*
2	բերեցիր, բերիր*	եկար	լացեցիր, լացիր*	տվեցիր, տվիր*	արեցիր, արիր*	դրեցիր, դրիր*
3	բերեց	եկավ	լացեց	տվեց	արեց	դրեց
4	բերեցինք, բերինք*	եկանք	լացեցինք, լացինք*	տվեցինք, տվինք*	արեցինք, արինք*	դրեցինք, դրինք*
5	բերեցիք, բերիք*	եկաք	լացեցիք, լացիք*	տվեցիք, տվիք*	արեցիք, արիք*	դրեցիք, դրիք*
6	բերեցին, բերին*	եկան	լացեցին, լացին*	տվեցին, տվին*	արեցին, արին*	դրեցին, դրին*
7	բե՛ր	արի՛, ե՛կ*	լա՛ց	տո՛ւր	արա՛	դի՛ր
8	բերե՛ք	եկե՛ք	լացե՛ք	տվե՛ք	արե՛ք	դրե՛ք
9	մի՛ բեր	մի՛ արի, մի՛ եկ*, մի՛ գա**	մի՛ լաց, մի՛ լա**, մի՛ լար**, մի՛ լացիր*	մի՛ տուր	մի՛ արա, մի՛ անիր **	մի՛ դիր, մի՛ դնիր**
10	մի՛ բերեք	մի՛ եկեք*, մի՛ գաք**	մի՛ լացեք, մի՛ լաք**	մի՛ տվեք	մի՛ արեք, մի՛ անեք**	մի՛ դրեք, մի՛ դնեք **

Ե խոնարհման						
-ն- սուկածանցով						
1	տարա	առա	ելա	տեսա	թողեցի, թողի*	եղա
2	տարար	առար	ելար	տեսար	թողեցիր, թողիր*	եղար
3	տարավ	առավ	ելավ	տեսավ	թողեց	եղավ
4	տարանք	առանք	ելանք	տեսանք	թողեցինք, թողինք*	եղանք
5	տարաք	առաք	ելաք	տեսաք	թողեցիք, թողիք*	եղաք
6	տարան	առան	ելան	տեսան	թողեցին, թողին*	եղան
7	տա՛ր	ա՛ռ	ե՛լ, ելի՛ր **	տես՛	թո՛ղ	եղի՛ր
8	տարե՛ք	առե՛ք	ելե՛ք	տեսե՛ք	թողե՛ք	եղե՛ք
9	մի՛ տար, մի՛ տանիր**	մի՛ առ, մի՛ առնիր**	մի՛ ել, մի՛ ելիր**, մի՛ ելնիր**	մի՛ տես, մի՛ տեսնիր **	մի՛ թող, մի՛ թողնիր**	մի՛ եղիր, մի՛ լինիր**
10	մի՛ տարեք, մի՛ տանեք**	մի՛ առեք, մի՛ առնեք**	մի՛ ելեք, մի՛ ելնեք**	մի՛ տեսեք, մի՛ տեսնեք **	մի՛ թողեք, մի՛ թողնեք**	մի՛ եղեք, մի՛ լինեք**

ՄԱԿՔԱՅ: Գործողության հատկանիշ նշանակող բառեր են: Պատասխանում են **որտե՞ղ, ե՞րբ, ո՞ւր, ինչպե՞ս, ինչքա՞ն** և նման հարցերի: Խոսքիմասային հատուկ ձև չունեն: Որպես կանոն՝ չեն ձևափոխվում:

Ըստ իմաստի՝ բաժանվում են չորս խմբի՝ **1. Ժամանակի՝** այժմ, այլևս, միշտ, հավետ, երեկ, երբեք, երբևէ, ի վերջո, ի սկզբանե ևն, **2. տեղի՝** ամենուրեք, դուրս, հեռու, շուրջը, վար, դեմ դիմաց, վերուստ, ներքև ևն, **3. ձևի՝** դանդաղ, ակամա, ինքնին, հմտորեն, հերոսաբար, հոտնկայս, հապճեպ ևն, **4. չափի՝** ամենևին, գրեթե, բնավ, հույժ, մասամբ ևն: Որոշ մակբայներ բազմիմաստ են՝ առաջ, մեկ-մեկ, հաճախ, իսկույն, շուտ-շուտ, շարունակ, միանգամայն, ստեպ-ստեպ ևն:

Մակբայի գործածության յուրահատկություններ:

1. Ամենևին, բնավ, բոլորովին, դույզն-ինչ, երբեք, էլ մակբայները գործածվում են միայն ժխտական բայերի հետ՝ **ամենևին հարկ չկա, բոլորովին հարմար չէ** ևն:

Ծանոթություն: Թվարկված մակբայներից է նաև **այլևս-ը՝ Այլևս չգաք, մեզ չանհանգստացնեք:** Արևմտահայերենում այս մակբայը **արդեն** իմաստով գործածվում է նաև դրական խոնարհման բայերի հետ՝ **Ես և իմ քոյրս այլևս Հայկազեան կը սորվինք:** Հավանաբար այդ ազդեցությամբ արևելահայերենում սկսել ենք գործածել նաև **այլևս + դրական խոնարհում կառույցը՝ Դա այլևս կատարված իրողություն է:** Գրական արևելահայերենում այս գործածությունը հանձնարարելի չէ:

2. Որոշ մակբայներ կարող են հոլովվել՝ հեռվից, մոտիկից, երեկվանից, վաղը չէ մյուս օրից, այսօրվա, ներսում ևն:

3. Մակբայների մի մասը կարող է գործածվել ածականաբար՝ կատարելով որոշչի դեր՝ բավական եկամուտ, միաձայն որոշում, ցմահ բանտարկություն, շտապ օգնություն, եռակի հերոս, շտապ եզրակացություն, արագ ընթացք ևն:

4. Մակբայների մի մասը կարող է լինել ոչ միայն բայով, այլև ածականով, մակբայով, իսկ չափի որոշ մակբայներ՝ նաև թվա-

կանով արտահայտված անդամի լրացում՝ **ներկայումս գործազուրկ, ներքուստ հպարտ, մասամբ հայտնի, մոտավորապես վաթսուն, գրեթե հարյուր, հազիվ երկու** ևն:

ԿԱՊ: Քերականական հարաբերություն (տարածական, ժամանակային, նպատակի ևն) արտահայտող բառեր են: Դրանց թիվը հասնում է մոտ 100-ի: Գործածվում են հիմնականում առարկայական իմաստ ունեցող բառերի հետ: Այդ բառերը կոչվում են **կապի խնդիր:** Կապը նախադասության անդամ է դառնում իր խնդրի հետ միասին (հիմնականում՝ պարագա և խնդիր, երբեմն՝ բաղադրյալ որոշիչ՝ **Քեզ նման** մասնազետ): Իրենց դերով նույնանում են հոլովների: Կապերի մի մասը արտահայտում է հարաբերակից հոլովների իմաստներ՝ **կամրջով – կամրջի վրայով, տնից մինչև այգի – տնից այգի, սեղանի վրա – սեղանին, ընտանյոք հանդերձ – ընտանյոք, այգում – այգու մեջ** ևն: Կապային կառույցները ավելի որոշակի, ավելի առարկայական իմաստ են արտահայտում: Կան կապեր, որոնց արտահայտած իմաստները հոլովները չունեն՝ **առանց դժվարությունների, հերոսի պես, նրա փոխարեն, մեր միջև, հաղթանակի առթիվ** ևն:

Կապերը լինում են երեք տեսակ՝ **1. իսկական կապեր.** զրկված են նյութական իմաստից, արտահայտում են միայն քերականական հարաբերության իմաստ՝ **առանց, առթիվ, բացի, դեպի, ի տրիտուր, նկատմամբ** ևն, **2. անիսկական կապեր.** իրենց առարկայական իմաստով պայմանավորված՝ հոլովվում են՝ **առջև, դեմ, դիմաց, մեջ, մոտ, վրա** ևն, **3. կապական բառեր.** այլ խոսքի մասեր են, բայց կարող են գործածվել կապի նշանակությամբ՝ **անունից, առաջ, երեսից, հավասար, հակառակ, հետո, մինչև, նման** ևն:

Կապերը առաջ են եկել նյութական իմաստ ունեցող բառերից. գրաբարյան նախդիրներ ու նախադրություններ են՝ **ի, առ, ըստ, առանց, իբրև, բացի,** հնում գործածական գոյականներ՝ **հետ – հետք, վրա – վեր, մոտ – մերձ, դեմ – դեմք, պես – ձև, հանդերձ – զգեստ** ևն, գրաբարի քարացած քերականական ձևեր՝

համար, ի դեմս, առթիւ, շնորհիւ, վերաբերմամբ, վերաբերեալ, յանձին, մասին ևն:

Կապերի արտահայտած իմաստները պայմանավորված են նրանց բառական իմաստներով: Ըստ այդմ՝ լինում են՝ **1. տարածական**՝ պատին կից, իրար դեմ դիմաց, հովանու ներքո, երկմքից վեր, **2. ժամանակի**՝ երկու ժամ անց, նրա օրոք, մինչև մեկնելը, **3. վերաբերության**՝ Ձեր մասին, ստորադասի նկատմամբ, **4. նպատակի**՝ շահի համար, հանուն արդարության, ի նպաստ զարգացման, **5. միասնության**՝ դրան զուգընթաց, դրանով հանդերձ, անձնակազմի հետ, **6. բացառման**՝ բացի նշվածից, առանց ապացուցման, դրանից զատ, չհաշված բացթողումները ևն:

Կան նաև բազմիմաստ կապեր՝ **պես** – տեսնելուն պես (ժամ.), քեզ պես (ծև), **մոտ** – դռան մոտ (տեղ), հինգին մոտ (ժամ.), **վրա** – փողոցի վրա (տեղ), կատարվածի վրա ծիծաղելով... (վերաբ.) ևն:

Կապերի հոլովառությունը (խնդրառությունը). պայմանավորված քերականական իմաստով՝ կապերը պահանջում են, որ կապվող բառը դրվի այս կամ այն հոլովով: **Ուղղականածև** կապվող բառ են պահանջում **առ, ի, ի վար, զերդ, նախքան, չանցած, չհաշված, դեպի, ինչպես, մինչ(և), առաջ** կապերն ու կապական բառերը, **սեռական–տրականածև՝ ի դեմս, զուգընթաց, նման, համար, չափ, նկատմամբ, հանուն, շնորհիվ, մասին, փոխանակ** ևն, **բացառական հոլովածև՝ անկախ, բացի, հեռու, վերև, ներքև, սկսած, առաջ** ևն, **գործիական հոլովածև՝ հանդերձ, չափ, մեկտեղ, մեկ:** Ներգոյական հոլովը կապերի հետ սովորաբար չի գործածվում:

Կապերի գործածության յուրահատկություններ: **1. Շնորհիվ, արդյունքում, պատճառով և հետևանքով** կապերն ու կապական բառերը, նշելով հիմունքի, պատճառի, հետևանքի իմաստներ, միաժամանակ վերաբերմունք են արտահայտում. առաջին երկուսը՝ դրական, վերջին երկուսը՝ չեզոք կամ բացասական: Մեկը մյուսի փոխարեն գործածվելիս առաջանում է իմաստային անճշտություն: Անճիշտ են հետևյալ նախադասությունները՝ երկու

երկրների միջև քաղաքական առճակատումն ավելի խորացավ, որի **արդյունքում** լարված իրավիճակ ստեղծվեց սահմանամերձ շրջաններում: Ընդգծված բառի փոխարեն պետք է գործածվեր **հետևանքով** հոմանիշը: Այլ օրինակներ՝ Անկազմակերպ աշխատանքի **շնորհիվ** (← պատճառով)...: Հրամանի արձակման **պատճառը** (← հիմքը)...: Վերը նշվածի **պատճառով** (← արդյունքում) ՀՅԱ–ում ընթացիկ հաշվի պակասուրդը կրճատվեց: Գճնաժամի **արդյունքում** (← հետևանքով) ռուսական ռուբլու արժեզրկման տեմպերը հանգեցրին դրամի փոխարժեքի անկման ևն:

2. Հետ, մոտ, վրա, պես, նման կապերը **ես, դու, մենք, դուք** դերանունների հետ կապակցվում են ոչ թե սեռական, այլ տրական հոլովածներով՝ **ինձ նման, մեզ պես, քեզ հետ, ձեզ վրա** ևն: **Մոտ, վրա** կապերի թեք ձևերի հետ նշված դերանունները լինում են սեռական հոլովով՝ **իմ մոտից, ձեր վրայով** ևն:

3. Մի շարք կապեր և կապական բառեր՝ առաջ, բացի, ի վեր, իբրև, ինչպես, որպես, հետո, անց, պահանջում են տարբեր հոլովներով կապվող բառ՝ մեկ **ժամ առաջ / դռան առաջ, օրեր անց / քսանից անց, փողոցն ի վեր / նրան տեսնելուց ի վեր** ևն:

4. Թեք հոլովներով կապվող բառ պահանջող մի շարք կապեր և կապական բառեր (առանց, առթիվ, չափ, նախքան, որպես, չհաշված, մասին, բացի, ժամանակ ևն) գործածվում են **այս, այդ, այն** ցուցական դերանունների նաև ուղիղ ձևերի հետ՝ **բացի այդ, այն մասին, առանց այդ էլ, այն ժամանակ:**

5. Հանձինս կապը պահանջում է **հոգնակի թվով խնդիր** կամ **կապի բազմակի խնդիր՝ հանձինս** աշխատակիցների, **հանձինս** տնօրենի և փոխտնօրենի, իսկ **հանձին** կապը՝ **եզակի թվով** կապի խնդիր՝ **հանձին** տնօրենի:

6. Ի թիվս կապը պահանջում է **հոգնակի թվով կապի խնդիր՝ ի թիվս սովորողների, ի թիվս այլոց:**

7. Կապերի մեծ մասը տրոհում չի պահանջում: Հիմունքի և զիջման կապերով (ըստ, համաձայն, նայած, չնայած, հակառակ) ձևավորված անդամները նախադասության մյուս անդամներից

սովորաբար տրոհվում են միջադաս դիրքում ստորակետերով, առաջադաս և վերջադաս դիրքերում՝ բութով՝ Մենք, **համաձայն** պայմանավորվածության, մեկնեցինք վաղ առավոտյան: **Ըստ** պայմանավորվածության՝ մեկնեցինք վաղ առավոտյան: Այդպես կարող են տրոհվել նաև բացառման որոշ կապերով (առանց, բացառությամբ, բացի, փոխանակ) ձևավորված անդամները: **Բացի** կապով ձևավորված անդամները կարելի է ստորակետով տրոհել ցանկացած դիրքում՝ **Բացի քեզնից**, ոչ մեկի չեմ ճանաչում: Չեմ ճանաչում ոչ մեկի, **քեզնից բացի**: Ես, **քեզնից բացի**, ոչ մեկի չեմ ճանաչում: Առաջադաս և վերջադաս դիրքերում նախընտրելի է բութով տրոհումը:

8. Ի դեմս կապը գործածվում է և՛ եզակի, և՛ հոգնակի թվով, բայց միայն անձնանիշ կամ անձի առումով վերցված գոյականների հետ՝ **ի դեմս գործընկերների** // **ի դեմս գործընկերոջ**, բայց ոչ՝ **ի դեմս հրամանագրի**: (**Ի թիվս**, **ի փառս**, **ի հեճուկս**, **ի դեմս** կապերը չունեն առանց ս վերջնամասնիկի ձևեր):

9. Հետ կապը **ծանոթանալ** բառի հետ գործածվելիս արտահայտում է փոխադարձության իմաստ: Եթե կապվող բառը իրի անուն է, ապա, պարզ է, փոխադարձության մասին խոսք լինել չի կարող: Հետևաբար այդ դեպքում գոյականը պետք է գործածել միայն տրական հոլովով՝ առանց հետ կապի՝ **ծանոթանալ փաստաթղթերի հետ** ← **ծանոթանալ փաստաթղթերին**, **ծանոթանալ փաստերի հետ** ← **ծանոթանալ փաստերին**: Իրենք, համաձայնելով ՀՀ նախագահի և արտգործնախարարի վարած արտաքին **քաղաքականության հետ** (← **քաղաքականությանը**), մնում են ընդդիմություն:

10. Բացի կապը պահանջում է բացառականով կապվող բառ, դրվում է և՛ դրանից առաջ, և՛ հետո՝ **բացի նշվածից** // **նշվածից բացի**:

11. Առանց կապը պահանջում է տրական հոլովով կապվող բառ՝ **առանց պատասխանի**, **առանց զգուշացման** կամ **զգուշացնելու** (սխալ է՝ **առանց պատասխան**, **առանց զգուշացնել**):

ՇԱՂԿԱՊ: Նյութական իմաստից զուրկ և հարաբերություն արտահայտող բառեր են: Կապում են նախադասության համազոր անդամներ, համազոր նախադասություններ (համադասական) և բարդ ստորադասական նախադասության բաղադրիչներ (ստորադասական): Համադասական շաղկապները լինում են **միավորիչ-հավելական** (և, ու, էլ, նաև, ոչ միայն... այլև, ևս, թե՛... թե՛ ևն), **հակադրական** կամ **ներհակական** (իսկ, բայց, սակայն, մինչդեռ, այնինչ, բայց և այնպես, այնուամենայնիվ ևն), **տրոհական** (կամ, և կամ, կամ թե չէ, թե) ևն:

Ստորադասական շաղկապների դեր են կատարում հաճախ հարաբերական դերանունները (կոչվում են շաղկապական բառեր՝ **երբ, ուր, որտեղ, ինչքան, ինչ** ևն), որոնք ունեն նյութական իմաստ, դառնում են նախադասության անդամ՝ **երբ** կոշիկը շատ է նեղում, Հաճախ ցավն է առաջ մղում: Արե՛ք (այն), **ինչ** պահանջվում է:

Ստորադասական շաղկապները արտահայտում են բազմազան հարաբերություններ՝ **ժամանակային** (հենց, հենց որ, նախքան, քանի դեռ, մինչև, թե չէ), **մեկնական** (որ, թե, ինչ), **պայմանի** (թե, եթե, նայած թե, որ), **պատճառի և հիմունքի** (քանի որ, որովհետև, մանավանդ որ), **նպատակի** (որպեսզի, որ), **զիջական** (թեկուզ, թեև, թեպետ, փոխանակ), **համեմատության** (ասես, կարծես, որպես թե, քան թե) ևն:

Շաղկապների գործածության յուրահատկություններ:

1. Նախադասության մեջ հաճախ իրար կողքի կարող են հայտնվել համադասական և ստորադասական կամ երկու ստորադասական շաղկապներ՝ **Գիտեի, որ եթե** բոլորը գան, նստելու տեղ չի լինի: Այսպիսի դեպքերում շաղկապների միջև կարելի է ստորակետ դնել՝ **Ջարթնեցի և, որովհետև** շատ շուտ էր, նորից քնեցի:

Կրկնադիր շաղկապներով կապակցված համազոր անդամներն իրարից անջատվում են ստորակետով, բացի այն դեպքից, երբ կապված են նաև և կամ ու շաղկապով. կրկնադիր շաղկապները ստանում են շեշտ՝ Այդ մասին չգիտեմ **ո՛չ** վկաները, **ո՛չ** տուժողը և **ո՛չ** էլ մեղադրյալը:

2. Թե և թե չէ շաղկապները և՛ համադասական են, և՛ ստորադասական. **թե** համադասական շաղկապը գործածվում է երկընտրական կապակցություններում՝ **Գնա՞լ, թե՞ մնալ**, կամ որպես միավորիչ շաղկապ՝ **Մեծ թե փոքր** աշխատում էին: **Թե չէ** ստորադասականը ունի **հենց** շաղկապի իմաստ՝ **Տեսավ թե չէ**, վրդովվեց: **Թե չէ** համադասականը տրոհական իմաստով է գործածվում՝ **Խոսի՛ր, թե չէ** հետո ուշ կլինի: Ինչպես տեսնում եք, կա նաև դիրքային տարբերություն:

3. Թե, որ հոմանիշ շաղկապներից **որ**-ը հաստատական նշանակություն ունի, օր.՝ **Պարզվեց, որ** նա անմեղ է, **թե**-ն՝ առավելապես կասկածական, ենթադրական՝ **Կարծում էի, թե** դրանով գործը կավարտվի: Հարցական դերանուն պարունակող երկրորդական նախադասությունը գլխավորին կապվում է **թե** շաղկապով՝ **Չեմ կարող ասել, թե** նա ինչով է զբաղված: **Չի** հանձնարարվում՝ **Ասաց, թե** գալու է:

4. Որ և որպեսզի շաղկապները իրար կարող են փոխարինել միայն այն դեպքում, երբ գլխավորին են կապում նպատակի պարագա երկրորդական նախադասություն՝ **Ներկայացուցիչներ են եկել, որ** (= **որպեսզի**) հարցի քննարկումը նախապատրաստեն: Այլ դեպքերում **որպեսզի**-ն չի կարող փոխարինել **որ**-ին, ինչպես՝ **Առաջարկություն է եղել (ինչի՞), որպեսզի** (\Leftarrow **որ**) նախագծի քննարկումը տեղափոխվի հաջորդ եռօրյա: Անհրաժեշտ է (ի՞նչ), **որպեսզի** (\Leftarrow **որ**) ակտիվ մասնակցություն ապահովեք:

5. Ոչ թե... այլ, ոչ միայն... այլև զուգահիշ շաղկապներն ունեն իմաստային և կիրառական տարբերություններ: Դրանց երկրորդ բաղադրիչները (**այլ, այլև**) երբեք չեն կարող իրար փոխարինել: Հետևաբար պիտի գրել՝ **Ոչ թե** աճել են դեպոզիտները, **այլ** նվազել: Բայց ոչ երբեք՝ **Ոչ թե** աճել են դեպոզիտները, **այլև** նվազել: Կամ՝ **Ոչ միայն** մասնակցել է գործողություններին, **այլև** ակտիվություն է դրսևորել: Բայց ոչ երբեք՝ **Ոչ միայն** մասնակցել է գործողություններին, **այլ** ակտիվություն է դրսևորել: (Հիշենք նաև, որ ճիշտ չէ **ոչ թե... այլ** շաղկապի **այլ** բաղադրիչի վրա բուք դնելը):

6. Ստորադասական շաղկապները կարող են զեղչվել: **Որ, թե, եթե, ինչ** շաղկապների զեղչման դեպքում գլխավոր և երկրորդական նախադասությունների միջև բուք է դրվում՝ անկախ դրանց շարադասությունից: Օրինակ՝ **Չպարզեցի՝ ինչ** պիտի անեն: Որևէ պայման խախտես՝ պայմանագիրը կդադարեցվի:

7. Երբեմն **սակայն** շաղկապը վերաբերականի նշանակություն է ստանում, երբ լինում է միջադաս դիրքում, և ստորակետերով տրոհվում է որպես միջանկյալ բառ՝ **Բուլդոզիս** հրավիրատոմս էր ուղարկվել: Ոչ ոք, **սակայն**, հրավերքին չմասնակցեց:

ՎԵՐԱԲԵՐԱԿԱՆՆԵՐ (ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐ): Արտահայտում են **դատողական վերաբերմունք**. երանգավորում կամ շեշտում են նախադասությունը կամ նրա որևէ անդամը: Որևէ հարցի չեն պատասխանում: Նախադասության անդամ չեն լինում: Չեն ձևափոխվում: Խոսքիմասային հատուկ (բնորոշ) ձև չունեն: Առաջացել են նյութական իմաստ ունեցող բառերից:

Ըստ իրենց արտահայտած վերաբերմունքի բնույթի՝ լինում են՝ **1. հաստատական՝** իհարկե, անշուշտ, ինչ ասել կուզի, հարկավ, իրավամբ, **2. ժխտական՝** ո՛չ, չէ՛, բնավ, **3. երկբայական՝** միգուցե, հավանաբար, թերևս, երևի, կարծես, **4. սահմանափակման՝** գոնե, գեթ, լուկ, միայն, **5. ցուցական՝** ահա, ահավասիկ, ա՛յ, **6. հորդորական՝** դե, թող, տես, մի, արի, **7. մեկնական՝** այսպիսով, այսինքն, արդ, մի խոսքով, ավելի ճիշտ, դիցուք, ասենք, **8. զիջական՝** այդուհանդերձ, համենայն դեպս, ինչ գնով էլ լինի, ինչևիցե, մինևույն է, **9. սաստկական՝** անգամ, մանավանդ, մինչև անգամ, նույնիսկ, հատկապես, մասնավորապես, ընդ որում, առավել ևս ևն:

Վերաբերականների գործածության յուրահատկություններ: **1.** Հաճախ որպես վերաբերական գործածվում են նաև մի շարք այլ բառածևեր ու կապակցություններ՝ **ասենք թե, հասկանալի է (որ), հաճելի է (որ), ցանկալի է (որ), ասում են (թե), ասվում է (որ), նշվում է (որ), հայտնի է (որ), մեկ է, հաստատ, հարց չկա, ոչ մի խնդիր, բայց և այնպես, չի կարող պատահել**

(որ), ինչ ուզում է լինի, ինչ էլ լինի, ինչ գնով էլ լինի, առանց այլևայլության են:

2. Նախադասության մեկ անդամի նշանակությունը եղանակավորող վերաբերականները չեն տրոհվում՝ Դու կարծես լավ չես զգում քեզ: **Հենց** դա էի ուզում: Ամբողջ նախադասության իմաստը եղանակավորողները մեծ մասամբ տրոհվում են՝ իբրև միջանկյալ բառեր՝ Դուք, **իհարկե**, պատասխան կստանաք: **Ի դեպ**, ես այդ մասին գիտեի:

3. **Մի՞թե, չլինի՞ (թե), չէ՞ որ, ի՞նչ արած, ինչպե՞ս չէ** վերաբերականները միշտ գրվում են հարցական նշանով, իսկ **այո՛, ո՛չ, չէ՛, ա՛յ, դե՛հ** վերաբերականները՝ շեշտով:

4. Մեկնական որոշ վերաբերականներ սկզբից տրոհվում են ստորակետով, վերջից՝ բութով՝ **մի խոսքով, ասենք, ավելի ճիշտ** (երբեմն էլ՝ **այսպես ասած**):

5. Սաստկական **այն էլ** վերաբերականը (երբեմն էլ՝ **մանավանդ, նամանավանդ, անգամ, մինչև անգամ, մինչև իսկ, նույնիսկ**) ստորակետով է տրոհվում միայն սկզբից՝ **Իհարկե եկել էր, այն էլ շքախմբով**:

6. Վերաբերականի արժեք ունեն նաև որոշ կարգի խոսքային բանաձևեր՝ **ողջո՛ւյն, բարի լո՛ւյս, շնորհակալություն, ներողություն, հուզական արտահայտություններ՝ կեցցե՛ս, Աստված իմ, գրո՛ղը տանի**:

ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Արտահայտում են **զգացական վերաբերմունք**: Որևէ հարցի չեն պատասխանում: Նախադասության անդամ սովորաբար չեն լինում: Չեն ձևափոխվում: Արտաքին յուրահատկությունն այն է, որ լինում են բացականչական հատուկ առոգանությամբ, որը գրավոր խոսքում արտահայտվում է բացականչական նշանով կամ շեշտով: Իբրև ձայնարկություն կարող են գործածվել բոլոր ձայնավորները. դրանց թիվը դժվար է որոշել:

Ըստ իրենց բնույթի՝ ձայնարկությունները սովորաբար բաժանվում են երեք խմբի.

1. **Չգացական. արտահայտում են** վիշտ, ցավ, կարեկցանք, զայրույթ, դժգոհություն, ծանծրույթ, զզվանք, տհաճություն, վախ, զարմանք, ուրախություն, հիացմունք կամ բավականություն՝ **ա՛, ա՛խ, ա՛հ, ամա՛ն, ա՛յ, բա՛, է՛, է՛հ, էհե՛, ը՛, հայ–հա՛յ, հը՛մ, ո՛ւ, օ՛, օխա՛յ, օ՛հ, օհօ՛, օ՛յ, օ՛Ֆ** են:

2. **Կոչական. արտահայտում են** կոչ, կանչ, խրախույս, հորդոր, հանդիմանություն, արգելք կամ վանում՝ **աղջի՛, ա՛յ, արա՛, է՛յ, էհե՛յ, հայ–հարա՛յ, հարա՛յ, հե՛յ, փը՛խկ, փը՛շտ, փիշի՛–փիշի՛** են: Մեծ մասամբ միանշանակ են: Օրինակ՝ **քշա՛** (հավերի համար), **փի՛շտ** (կատվի համար), **հո՛շ** (էշերի համար), **քը՛ս–քը՛ս** (շան համար), **հե՛յ, տո՛** (մարդու համար):

3. **Նմանաձայնություն. վերարտադրում են** կյանքում և բնության մեջ հանդիպող որևէ ձայն՝ **բը՛զզ, բը՛ռռ, թը՛խկ, թը՛շշ, խը՛շշ, հա՛Ֆ–հա՛Ֆ, ճը՛ռռ, միաո՛ւ, չը՛խկ, չըը՛խկ** են: Մեծ մասամբ միանշանակ են: Օրինակ՝ **տը՛զզ** (ճանճի համար), **բը՛զզ** (մեղվի համար), **կը՛ռռ** (ագռավի համար), **ծի՛վ–ծի՛վ** (ճնճղուկի համար), **Ֆը՛շշ** (օձի համար), **ճը՛ռռ** (դռան համար), **խը՛շշ** (ծառի սաղարթի համար):

Ձայնարկությունների գործածության յուրահատկություններ: 1. Չգացական ձայնարկությունների ճշգրիտ նշանակությունը դրսևորվում է միայն խոսքաշարում: Օրինակ՝ **վա՛յ** ձայնարկությունը կարող է արտահայտել մերթ **ցավ** (**վա՛յ**, ցավում է ուքս), մերթ **վախ** (**վա՛յ**, չբարձրանա՛ս, հանկարծ կընկնես), մերթ **զարմանք** (**վա՛յ**, դու որտեղի՞ց հայտնվեցիր), մերթ **դժգոհություն** (**վա՛յ**, այս ի՞նչ արիր, ամեն ինչ փչացրիր), մերթ **հանդիմանություն** (**վա՛յ** քեզ, այսպե՛ս ես սովորել դասը):

2. Տևական արտասանվող ձայնարկության երկարացվող հնչյունը կարող է գրվել երկու կամ ավելի տառերով՝ **ճը՛ռռ, էհեեե՛յ**:

3. Ձայնարկությունը սովորաբար ստորակետերով անջատվում է նախադասությունից՝ **է՛յ, փոքրի՛կ, արի՛** այստեղ: **Ա՛**, հասկացա... Եթե ձայնարկությունը կոչականին է վերաբերում, ապա նրանից չի

տրոհվում և նրա հետ միասին ստանում է մեկ ընդհանուր առողջանության նշան՝ **Ա՛յ սիրելիս**, այս ի՞նչ ես անում:

4. Չայնարկությունը կարող է ունենալ լրացումներ՝ դառնալով յուրատեսակ միջանկյալ բառակապակցության գերադաս անդամը՝ **Վուշ-վո՛ւշ**, **Անո՛ւշ**, **վուշ-վո՛ւշ**, **քուրի՛կ**, **Վո՛ւշ քու** սերին, **քու** յարին...

5. Նմանաձայնություններից ածանցներով կարող են կազմվել բայեր, գոյականներ, ածականներ՝ **տը՛զզ** – տզզալ, տզզոց, տզզան, **զրը՛նգ** – զրնգալ, զրնգոց, զրնգան, զրնգուն:

6. Չայնարկությունները ավելի շատ գործածվում են խոսակցական լեզվում և գեղարվեստական գրականության մեջ, վերաբերականները՝ գիտական գրականության մեջ:

2.3.2. ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Բառակապակցություն: Նախադասություն: Նախադասության անդամների կապակցման եղանակները. համաձայնություն, խնդրառություն, առդրություն: Շարահյուսություն: Հնչերանգ: Պարզ նախադասություն: Երկկազմ նախադասություն: Նախադասության գլխավոր անդամներ. ենթակա, ստորոգյալ: Նախադասության երկրորդական անդամներ. գոյականական անդամի լրացումներ, բայական անդամի լրացումներ: Նախադասության ծավալուն անդամ: Դերբայական դարձված: Նախադասության բազմակի անդամներ: Նախադասության այլ բաղադրիչներ: Միակազմ նախադասություն: Բառ-նախադասություն: Բարդ նախադասություն. բարդ համադասական նախադասություն, բարդ ստորադասական նախադասություն. ստորադաս նախադասության տեսակները: Բարդ ստորադասական նախադասության վերածումը պարզի: Մեջբերվող խոսք: Ուղղակի մեջբերված խոսքի փոխակերպումը անուղղակի: Ներգործական և կրավորական կառուցվածքի նախադասություններ: Ջեղչում:

Շարահյուսությունը քերականության երկու բաժիններից մեկն է: Շարահյուսությունը բառերը կապակցելու և նախադասություն կազմելու կանոնների ամբողջությունն է: Ուսումնասիրության առարկան բառակապակցությունն է, նախադասությունը, նրա կազմությունը, տեսակները և կիրառությունները խոսքի մեջ: Շարահյուսական նվազագույն միավորը նյութական իմաստով օժտված բառն է, որ հանդես է գալիս որպես նախադասության անդամ:

Բառակապակցություն: Լրացում-լրացյալ հարաբերությամբ միացած, նյութական նշանակություն արտահայտող բառերի քերականական կապակցություն է (բացի դիմավոր բայի և դրա լրացման կապակցությունից): Օրինակ՝ **բարձր տրամադրություն, ելման կետ, հարցի քննարկումը**: Ըստ լրացյալի (գերադաս անդամի) խոսքիմասային պատկանելության՝ լինում է՝

1. անվանական. ա. գոյականական՝ **լավ տրամադրություն**, բ. ածականական՝ **շատ լավ, բոլորին հայտնի**, գ. թվականական՝

ավելի քան երեսուն, դ. դերանվանական՝ մոտավորապես այս-քան, դրանցից ոչ ոք, 2. դերբայական՝ չափից ավելի հուզված, մեզ մոտեցող, քեզ հանդիպելիս, 3. մակբայական՝ փոքր-ինչ հեռու, բավականաչափ մոտ:

Ըստ բաղադրիչների կապակցության սերտության աստիճանի՝ տարբերում են **կայուն** և **ոչ կայուն** կամ **ազատ** բառակապակցություններ: Առաջինները նախադասության կազմում հանդես են գալիս որպես մեկ անդամ, միևնույն բաղադրիչների միասին հաճախակի գործածությամբ ամրակայված են մեր մտքում, ինչպես՝ **Ազգային ժողով, Սահմանադրական դատարան, բերման ենթարկել, չեզոք գոտի, նստավայր երկիր, բարձր լարում, էլեկտրական շղթա, հավասարակողմ եռանկյունի, Փոքր Ասիա, Մաքսային միություն** ևն:

Երբեմն բառակապակցություն է համարվում նաև կապը՝ իր կապի խնդրի (կապվող բառի) հետ՝ **ծեզ նման, հարցի մասին:**

Նախադասություն: Խոսքը կազմվում է բառերից: Բառերը, քերականորեն կապակցվելով, կազմում են նախադասություններ, որոնք էլ խոսքի նվազագույն միավորներն են: Նախադասությունը բառի կամ բառերի քերականական կապակցություն է, որ արտահայտում է միտք և կամ հույզ:

Նախադասությունը պետք է ունենա դիմավոր բայ (ստորոգյալ) և (կամ) հատուկ ավարտուն հնչերանգ: Խոսքի մեջ նախադասություններն իրարից բաժանվում են դադարով, որը գրավոր խոսքում նշանակվում է վերջակետով, երբեմն՝ կախման կետերով: Խոսքից դուրս առանձին գործածված նախադասության վերջում վերջակետ չի դրվում: Դա վերաբերում է վերնագրերին, նկարի մակագրերին, գովազդներին, ցուցանակներին, պիտակներին ևն: **Օրինակ՝ Առաջ, Հայաստան / Հին ընկերները չեն դավաճանում / Երևանը մեր տունն է / Մի՛ դատեք, որ չդատվեք / Երևանի պետական համալսարան / Պետությունը ես եմ / Սկիզբը՝ ժամը 10–ին / Օրենքներին ենթարկվի՛ր / Էլեկտրամագնիսական երևույթներ** ևն:

Նախադասություն կազմող բառերը քերականորեն կապված են իրար և նախադասության մեջ կատարում են որոշակի դեր: Դրանք կոչվում են **նախադասության անդամներ:** Նախադասության անդամի կատարած դերը կոչվում է **պաշտոն:** Նախադասության անդամներն ըստ իրենց պաշտոնի անվանվում են ենթակա, ստորոգյալ, ուղիղ խնդիր, որոշիչ ևն:

Նախադասության կազմի մեջ կարող են լինել նաև նախադասության անդամներին քերականորեն չկապված բառեր կամ բառերի կապակցություններ, որոնք կոչվում են **ներդրյալ միավորներ՝** վերաբերականներ, ձայնարկություններ ևն: Դրանք նախադասությունից սովորաբար բաժանվում են ստորակետերով կամ փակագծերով: **Օրինակ՝** Մեր գործը, իհարկե, արդար է:

Նախադասության մեջ լինում են նաև նախադասության անդամները կապակցող **սպասարկու բառեր՝** կապեր, շաղկապներ, որոնք նախադասության ինքնուրույն անդամներ չեն համարվում և հաճախ մտնում են որևէ անդամի կազմի մեջ: **Օրինակ՝** Պատերազմը Կիկերոնի **կողմից** գնահատվում է **որպես** հարկադիր ակտ:

Նախադասության որևէ անդամի կազմի մեջ կարող են լինել նաև օժանդակ բառեր (օժանդակ բայ, եղանակիչ կամ ժխտական բառ–մասնիկ), որոնք որևէ բառածևի առանձին գրվող բաղադրիչ են: **Օրինակ՝ Մի՛ կարծիր, թե մենք գործին տեղյակ չենք:**

Նախադասության անդամների կապակցման եղանակները: Նախադասության այն անդամները, որոնք քերականորեն հարաբերվում են միմյանց, կապակցվում են տարբեր եղանակներով: Դրանք երեքն են.

1. Համաձայնություն. կապակցվող անդամները փոխադարձաբար պայմանավորում են միմյանց քերականական ձևը: Այդպես են կապակցվում՝ • **ենթական ու ստորոգյալը.** համաձայնում են թվով, նաև դեմքով՝ **Մենք կմտածենք** դրա մասին, • **բացահայտիչն ու բացահայտյալը.** համաձայնում են թվով, հոլովով, դեմքով, հաճախ նաև առումով՝ **Մեզ՝ մասնակիցներիս,** պարզևատրելու են, • **հարաբերյալն ու հարաբերական բառը,** որոնք կա-

պակցում են գերադաս և ստորադաս նախադասություններ. սովորաբար համաձայնում են թվով՝ **խոսեցի նրանց հետ, ովքեր** ներկա էին:

2. Խնդրառություն (հոլովառություն, կառավարում). կապակցվող անդամներից մեկը պայմանավորում է մյուսի քերականական ձևը: Այդպես են կապակցվում՝ • **խնդիրն ու լրացյալ բայը՝ Տես երազ մի վառ, • անվանական պարագան ու ստորոգյալը՝ Անցա փողոցով, • հատկացուցիչն ու հատկացյալը՝ Մեր պատասխանը սա է, • կապն ու կապի խնդիրը՝ Քեզ նման է մտածում:**

Ճանոթություն: Առանձին բայերի համար արդի հայերենում առաջ են եկել **խնդրատական զուգածներ՝** կարոտել հայրենիքին // հայրենիքը, դավանել սկզբունք // սկզբունքի, ձեռնարկել գործ // գործի, կրակել մեկի վրա // մեկին, մեկից // մեկին հինգ է պակաս, կառչել բազրիքից // բազրիքին, կառչել խոսքերից // խոսքերին, կախել պատից // պատին, կպչել պատին // պատից, տիրել երկրին // երկիրը, խոչընդոտել զարգացումը // զարգացմանը, ուրախ եմ քո գալու համար // գալուն, բավարարել պահանջները // պահանջներին, խթանել զարգացումը // զարգացմանը ևն: Դրանցից մի քանիսը խոսակցական երանգ ունեն՝ խոչընդոտել զարգացմանը, ուրախ եմ քո գալուն ևն:

3. Առդրություն. կապակցվող անդամներից որևէ մեկը չի պայմանավորում մյուսի քերականական ձևը. անդամները կապակցվում են սոսկ իմաստով: Այդպես են կապակցվում՝ • **որոշիչն ու որոշյալը՝ Եվրոպական դատարան, • մակբայական** (ածականական, դերբայական) **պարագան ու ստորոգյալը՝ Խնդիրը դժվարությամբ լուծվեց, • համադասական հարաբերությամբ միացած բազմակի անդամները՝ Վարուժանը, Սիամանթոն, Թեքեյանը** արևմտահայ բանաստեղծներ են:

Ճանոթություն: Կա առդրության մի տարատեսակ, երբ լրացումն իր լրացյալին պարտադրում է որոշակի թիվ: Դա կոչվում է **թվային կախում:** Այսպես՝ **խումբ—խումբ, զույգ—զույգ, բազմաթիվ, մեծաքանակ** ածականները, **բոլոր, ինչ—ինչ** դերանունները պահանջում են հոգնակի թիվ

ունեցող որոշյալ՝ բոլոր **մարդիկ**, բազմաթիվ **գորքեր**, իսկ **յուրաքանչյուր, ամբողջ, ուրևէ, որևիցե, ամեն, ամեն մի, մի** դերանունները, **ցանկացած** ածականը պահանջում են եզակի թիվ ունեցող որոշյալ՝ ամբողջ **աշխարհը**, որևէ **մեկը**, յուրաքանչյուր **մասնակից**, ցանկացած **գործ**, մի **մարդ:**

Շարահյուսություն: Նախադասության մեջ բառերի դասավորության կարգն է: Նախադասության որոշ անդամների դասավորությունը կայուն է, անշրջելի: Այդպես է բացահայտյալի և բուն բացահայտիչի շարահյուսությունը (**Մենք՝ ներքոստորագրյալներս**, համաձայն չենք), ինչպես նաև կապերի մեծ մասի և կապվող բառի շարահյուսությունը (խոսի՛ր **իմ փոխարեն: Փոխանակ գնայիր**): Որոշ անդամների շարահյուսությունը թեև որոշակի է, բայց շրջելի է: Այդպես՝ որոշիչի և որոշյալի, հատկացուցիչի և հատկացյալի հակառակ շարահյուսությունը թույլատրելի է որոշ պայմաններում և կոչվում է **շրջուն՝** ի տարբերություն սովորական շարահյուսության, օր.՝ **Արձանագրություն** ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի համար 5 միստի:

Որոշ անդամների շարահյուսությունը ազատ է, այսինքն՝ հավասարապես թույլատրելի է ցանկացած հերթականությամբ: Օրինակ՝ ստորոգյալի և ժամանակի պարագայի շարահյուսությունը՝ **Կմեկնենք երեկոյան: // Երեկոյան կմեկնենք:**

Շրջուն և ազատ շարահյուսության դեպքում կարևոր դեր է ստանձնում տրամաբանական շեշտը:

Շարահյուսության թույլատրելի և նպատակահարմար կարգից շեղումները կոչվում են **շարահյուսության խախտումներ:** Երբեմն շարահյուսության խախտումները լինում են ոչ այնքան նկատելի, թեև խաթարում են խոսքի տրամաբանվածությունը: Ուստի պետք է նկատի ունենալ հետևյալը:

1. Նախադասության բազմակի անդամների ընդհանուր լրացումը կամ լրացյալը պետք է լինի այնպիսի դիրքում, որ չվերագրվի միայն մեկին: Օրինակ՝ երևանի բնակչության կտրուկ ավելացումը պայմանավորված է ոչ թե **հիմնականում** բնական, այլ մեխանիկական աճով: Այստեղ բազմակի անդամներն են **բնական**

(աճով) և մեխանիկական աճով կապակցությունները, որոնց համար ընդհանուր լրացում է **հիմնականում** բառը, ուստի այն պետք է լինի ընդհանուր անդամները կապակցող **ոչ թե...** այլ զուգարակական շաղկապից առաջ, այսպես՝ ...պայմանավորված է **հիմնականում** ոչ թե բնական, այլ մեխանիկական աճով:

2. Ձուգադրական շաղկապի մասերը համադաս նախադասություններ կապակցելիս պետք է լինեն դրանց այն մասերի սկզբում, որոնք հակադրվում են միմյանց: Դրանց կարող են նախորդել նախադասությունների միայն ընդհանուր անդամները: Օրինակ՝ Գործն ուղարկվելու է **ոչ թե** Վճռաբեկ դատարան, **այլ** քննվելու է վերաքննիչ դատարանում. այստեղ շաղկապի **ոչ թե** մասը պետք է լինի **ուղարկվելու է** ստորոգյալից առաջ, այսպես՝ Գործը **ոչ թե** ուղարկվելու է Վճռաբեկ դատարան, **այլ** քննվելու է վերաքննիչ դատարանում:

Չհիմնավորված շրջունը հաճախ ուղղակի պատճառ է դառնում լեզվական սխալ կառույցի՝ սխալ **շարահասության**: Օրինակ՝ Երկրորդ կիսամյակի առաջին ամիսներին շարունակեց պահպանվել **առաջին կիսամյակում ձևավորված** դրամավարկային քաղաքականության իրականացման **դաշտը**: Որոշիչ դերբայական դարձվածի (ընդգծված բառակապակցությունը) այս շարահասությամբ հասկացվում է՝ իբր առաջին կիսամյակում ձևավորվածը դրամավարկային քաղաքականությունն է, մինչդեռ խոսքաշարը ենթադրում է, որ խոսքը այդ քաղաքականության իրականացման՝ առաջին կիսամյակում ձևավորված դաշտի մասին է: Այդ նախադասության անդամների ճիշտ շարահասությունը հետևյալն է՝ Երկրորդ կիսամյակի առաջին ամիսներին շարունակեց պահպանվել դրամավարկային քաղաքականության՝ **առաջին կիսամյակում ձևավորված դաշտը**:

Սխալ շարահասությունը հաճախ հանգեցնում է արտառոց ու անհեթեթ մտքերի, ինչպես հետևյալ նախադասության մեջ. «Իրավասու մարմին առանց փաստաթղթերի **բերման ենթարկված** Սահմանադրական դատարանի անդամը պետք է անմիջապես

ազատ արձակվի նրա ինքնությունը պարզելուց հետո»: Այս շարահասությամբ՝ ընդգծված բառակապակցությունը լրացնում է ոչ թե **անդամը** բառին, ինչպես ենթադրվում է շարադրանքից, կամ ինչպես մտածել է հեղինակը, այլ **Սահմանադրական դատարանին**. ունենում ենք **բերման ենթարկված Սահմանադրական դատարան**: Ճիշտը հետևյալն է՝ «Սահմանադրական դատարանի՝ իրավասու մարմին առանց փաստաթղթերի բերման ենթարկված անդամը պետք է անմիջապես ազատ արձակվի նրա ինքնությունը պարզելուց հետո», կամ, որ ավելի սահուն է ու հասկանալի, հետևյալ տարբերակը. «Սահմանադրական դատարանի անդամը, որ առանց փաստաթղթերի բերման է ենթարկվում իրավասու մարմին, պետք է անմիջապես ազատ արձակվի նրա ինքնությունը պարզելուց հետո»:

Սխալ շարահասության այլ օրինակներ՝ Գնաճի մակարդակի գնահատումը, որ փոփոխություններ է կրել ← Գնաճի, որ փոփոխություններ է կրել, մակարդակի գնահատումը... // Գնաճի մակարդակի (որ փոփոխություններ է կրել) գնահատումը...; Պաշտոնական անփութությունը միակ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունն է, որ... ← Պաշտոնական անփութությունը պետական ծառայության դեմ ուղղված միակ հանցագործությունն է, որ..., ...պատշաճ կերպով լիազորված կառավարությունների կողմից ← ...կառավարությունների կողմից պատշաճ կերպով լիազորված ևն:

Միշտ էլ կարելի է ընտրել նախադասության անդամների այնպիսի դասավորություն, որը բոլորի կողմից կընկալվի որպես սովորական, ճիշտ, ոճականորեն չեզոք:

Հնչերանգ: Նախադասության անդամները լրացուցիչ կապակցվում են մասն հնչերանգով: Այս դեպքում կարևոր են դադարն ու ելևէջը: Իրար հետ քերականորեն կապված անդամները սովորաբար արտաբերվում են ավելի սերտ միասնությամբ, քան իրար չկապված անդամները, որոնց միջև սովորաբար դադար է լինում: Սակայն քերականորեն կապված որոշ անդամներ նույնպես իրար

հաջորդում են որոշ դադարով, օրինակ՝ բացահայտյալն ու բացահայտիչը (**Մեզ՝ հաղթողներիս**, պարզևատրեցին), որոշյալն ու հետադաս ծավալուն որոշիչը (Հայտնվեց ուղեկիցը՝ **հնամաշ բաձկոնով**):

Նախադասության անդամների և կամ հարակից միավորների միմյանցից առանձնացումը հնչերանգային դադարով, որը գրավոր խոսքում սովորաբար արտահայտվում է կետադրությամբ, կոչվում է **տրոհում**:

Նախադասության անդամներից հաղորդակցական տեսակետից առավել կարևորը սովորաբար ընդգծվում է հնչերանգով, ոչ սովորական շարադասությամբ կամ այլ եղանակով: Այդպիսի ընդգծումը կոչվում է **տրամաբանական**: Հնչերանգով ընդգծումը կատարվում է ուժգնության շեշտի միջոցով՝ Արդարությունը **թույլի՛** իրավունքն է, ձայնի բարձրացմամբ՝ **Ո՞վ** էր եկողը, կամ էլ տևական շեշտով՝ **Երկա՛ր** սպասեցինք: Շարադասությամբ ընդգծելիս կարևոր դեր ունի օժանդակ բայը կամ հանգույցը, որը սովորաբար լինում է տրամաբանական շեշտ կրող անդամից հետո՝ **Այդ կուսակցությանն** են տալու իմ ձայնը: Ընդգծումը կարող է կատարվել նաև շեշտողական ստորադասությամբ, երբ ընդգծվող անդամն առանձնացվում և արտահայտվում է որպես գերադաս նախադասություն՝ **Դա է**, որ ես ուզում եմ ընդգծել:

Ընդգծումը կարող է կատարվել նաև բառային միջոցներով, օրինակ՝ **սաստկական վերաբերականներով** (Անգամ ընդդիմությունը չի հակառակվում), **կրկնությամբ** (**Դո՛ւրս, դո՛ւրս** եկեք), **հավելադրությամբ** (Հաճույքով, մեծ ուրախությամբ ընդունեցի լուրը) ևն:

ՊԱՐԶ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ: Ինչպես տեսանք, նախադասությունը կարող է լինել **պարզ** կամ **բարդ**: Պարզ է մեկ ամփոփ միտք արտահայտող նախադասությունը: Օրինակ՝ **Մեկնեց ճամփորդության**: Ավարտուն միտք արտահայտող նախադասությունն ավարտվում է վերջակետով, ինչպես բերված օրինակում: Ոչ ավարտուն, առկախ միտք կամ հույզ արտահայտող

նախադասությունն ավարտվում է կախման կետերով: Օրինակ՝ **Շա՛տ կուզեի քեզ տեսնել...**

Պարզ նախադասությունը կարող է ունենալ ստորոգական հարաբերությամբ կապված երկու գլխավոր անդամ՝ ենթակա և ստորոգյալ, կամ ունենալ գերադաս անդամ: Ըստ այդմ՝ նախադասությունները լինում են **երկկազմ** կամ **միակազմ**:

Երկկազմ նախադասություն: Ունի երկու գլխավոր անդամ՝ **ենթակա և ստորոգյալ**: Դրանցից բացի՝ նախադասության կազմում կարող են լինել նաև երկրորդական անդամներ: Ըստ այդմ՝ պարզ նախադասությունները լինում են **համառոտ և ընդարձակ**:

Պարզ համառոտ է այն նախադասությունը, որը կազմված է միայն գլխավոր անդամ(ներ)ից՝ ենթակայից, ստորոգյալից՝ **Ես և ընկերս ճանապարհ ընկանք: Մեկնեցի**: Միջարկությունների (կոչականի, ձայնարկության ու վերաբերականի) առկայությունը նախադասության բնույթը և կազմը չի փոխում, քանի որ դրանք նախադասության անդամներ չեն՝ **Դու, Վահա՛ն, իհարկե**, պիտի վերադառնաս:

Ենթակա: Նախադասության այն անդամն է, որը կատարում է գործողությունը (Գնացքը մեկնեց), որը ենթարկվում է եղելությանը (Բաժակը ջարդվեց), որին վերագրվում է ինչ-որ հատկանիշ (Ճանապարհը բանուկ է): Պատասխանում է **ո՞վ, ովքե՞ր, ի՞նչ(ը)** կամ **ինչե՞ր(ը)** հարցին:

Արտահայտվում է՝ 1. **գոյականով** (Նիստն սկսվեց), 2. **գոյականական դերանունով** (Ի՞նչ պատահեց), 3. **անորոշ դերբայով** (Լավ ապրելը արվեստ է), 4. **փոխանվանաբար՝ այլ բառերով՝ ածականով** (Կարևորը դա չէ), թվականով (Վեցերորդը հաղթեց), **ածականական կամ թվականական դերանունով** (Չկա օրենք, որ բոլորի սրտով լինի: Այդքանը բավարար չէ), **ենթակայական կամ հարակատար դերբայով** (Մորը ուրացողը հայրենիքն էլ կուրանա: Շան կծածը կլավանա, լեզվինը՝ ո՛չ), **թեք հոլովածևով** (Քո խնդրանքը աստծունն է, իշխանավորինը հարկադրանք է), **որևէ լեզվական միավորով, նշանով կամ արտահայտությամբ**

(վերառված փոխանունությունը՝ **Հրապարակ**–ը արմատական բառ է: **X**–ը մեծ է **y**–ից):

Ենթական լինում է սովորաբար ուղղական հոլովով (ինչպես վերը նշված բոլոր դեպքերում), երբեմն՝ բացառական հոլովով՝ կոչվելով **մասնական ենթակա**՝ Նոր ընտրվածներից չեն գալիս հանդիպման: Կհնչեն Կոմիտասի **ստեղծագործություններից**:

Ստորոգյալ: Նախադասության այն անդամն է, որը արտահայտում է՝ • ենթակայի վիճակը (Ոչինչ էլ **պարզ** չէ), • ենթակայի կատարած կամ կրած գործողությունը (Նախագահը **վերընտրվեց**), • ենթակային է վերագրում որևէ հատկանիշ (Դուք **հերոսներ** եք): Պատասխանում է **ո՞վ է, ի՞նչ է, ո՞րն է, ինչպիսի՞ն է, ի՞նչ է անում, ի՞նչ եղավ, ի՞նչ չի լինի** և նման հարցերի: Կազմված է լինում դիմավոր (խոնարհված) բայից կամ պարտադիր պարունակում է դիմավոր բայ: Ըստ այդմ՝ ստորոգյալը լինում է երկու տեսակի՝ **պարզ** և **բաղադրյալ**:

Պարզ է այն ստորոգյալը, որը կազմված է միայն դիմավոր բայից (ժամանակածևից): Ընդ որում՝ դա կարող է լինել՝ • **պարզ ժամանակածև** (Հարցը իր լուծումը **պիտի ստանա**: Վիրավորն **ուշքի եկավ**), • բաղադրյալ ժամանակածև, որ կազմված է լինում ձևաբայից և օժանդակ բայից (**Ցրտում է**: Դատը **չի շահել**):

Ծանոթություն: Եմ բայը միայնակ նույնպես կարող է լինել պարզ ստորոգյալ՝ եթերում «Հայլուր» ծրագիրն է: Հարթակի վրա միայն ես **եմ**: Կարծիք կա նաև, որ այս կառույցները միակազմ նախադասություններ են:

Բաղադրյալ է այն ստորոգյալը, որը կազմված է դիմավոր բայից և որևէ այլ բառից (Հարցադրումը **պարզ է**: Սա **նա չէ**): Բաղադրյալ ստորոգյալի՝ դիմավոր բայով արտահայտված բաղադրիչը կոչվում է **հանգույց** (ստորոգիչ), իսկ այլ խոսքի մասով կամ անկախ դերբայով արտահայտված մասը՝ **ստորոգելի** (ստորոգելիական վերադիր):

Ստորոգելին բաղադրյալ ստորոգյալի այն բաղադրիչն է, որն արտահայտված է ոչ դիմավոր բայով: Ցույց է տալիս այն հատկա-

նիշը, որը վերագրվում, ստորոգվում է ենթակային: **Արտահայտվում է՝ • գոյականով** (Աժ–ն օրենսդիր **մարմին** է), • **ածականով** (Քուչակը **հայտնի է** եղել ժողովրդի մեջ), • **թվականով** (Ցուցանիշներով **հայ մարզիկներն առաջինն** են: Ժամը **11–ն** է), • **դերանունով** (Մեր փաստաբանը **նա** է), • **մակբայով** (Ընթացքը **արագ** էր), • **անորոշ, ենթակայական կամ հարակատար դերբայով** (Դա **պատասխանել** չէ, որ դու պատասխանում ես: Նա այդտեղ **գնացողը** չէ: Նամակը **առաքված** է), • **կապով և որևէ այլ բառով** (Ատրճանակը **սեղանի վրա** էր), • **բառակապակցությամբ** (դարձվածքով) (Նրա բան ու գործը **սրան–նրան ձեռք մեկնելն** է):

Հանգույցը (ստորոգիչը) բաղադրյալ ստորոգյալի այն բաղադրիչն է, որն արտահայտված է դիմավոր բայով: Ենթակային է կապում, վերագրում ստորոգելիի ցույց տված հատկանիշը՝ դրան գումարելով իր արտահայտած իմաստը: Արտահայտվում է **եմ** բայով (եական բայ)՝ Սա **հայերեն** չէ: Հանգույցի դեր կարող են կատարել **լինել, դառնալ, երևալ, մնալ, անվանվել, թվալ, ձևանալ** և մի քանի այլ բայեր, որոնք իրենց նույն կամ այլ իմաստներով կարող են կիրառվել նաև իբրև պարզ ստորոգյալ: Օրինակ՝ Այդպիսի բան երբեք **չի լինում** (պարզ ստորոգյալ): Մածունը սև **չի լինում** (հանգույց): **Դարձավ** եկած ճանապարհով (պարզ ստորոգյալ): Փաստաբան **դարձավ** (հանգույց): Ամպերը **ձևանում են** սառը օդից (պարզ ստորոգյալ): Հիվանդ **են ձևանում** (հանգույց): Հեռվում **երևաց** քաղաքը (պարզ ստորոգյալ): Դա մի պահ իմ աչքին մեքենա **երևաց** (հանգույց): Մենք **մնացինք** տանը (պարզ ստորոգյալ): Նա ինձ համար միշտ **մնաց** լավ բարեկամ (հանգույց):

Ենթակայի և ստորոգյալի շարահյուսությունը: Ուղիղ շարահյուսության դեպքում ենթական սովորաբար նախորդում է ստորոգյալին՝ **Ընտրություններն սկսվել են**: Այսպիսի կառույցներում ենթակայի և ստորոգյալի հակառակ շարահյուսությունը շրջուն է և կարող է հանդիպել միայն տրամաբանական շեշտի ազդեցությամբ կամ բանաստեղծական խոսքում՝ **Սկսվել են ընտրությունները**: Երբ հանգույցը մի դեպքում առկա է, մի այլ դեպքում՝ գեղչ-

ված, ապա ենթական կարող է լինել հետադաս՝ Օդը այնքան ջինջ է, որ տեսանելի է դիմացի լեռան ծաղկած մասրենին, և **լսելի՝** ծաղիկների մեջ մոլորված մեղվի հանդարտ **բզզոցը**:

Կան կառույցներ, որոնցում ուղիղ շարադասությամբ ենթական հաջորդում է ստորոգյալին: Դա բնորոշ է հատկապես անորոշ առումով ենթակա պարունակող նախադասությանը. այսպիսի դեպքերում ենթակայի նախադաս դիրքն է շրջուն. Քարոզարշավ է մեկնարկելու վաղ առավոտից: Ենթական պարտադիր հետադաս է լինում մեջբերվող խոսքի նկատմամբ միջադաս կամ վերջադաս հեղինակային խոսքում՝ «Մի՛ դատիր, որ չդատվես», — ասում է Սուրբ գիրքը:

Ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը: Ենթական և ստորոգյալը համաձայնում են **թվով**, ինչպես նաև **դեմքով**: Դիմային համաձայնությունը արտահայտվում է բայի դիմային վերջավորություններով կամ հոդերով: Ստորոգյալը եզակի թվով է դրվում, եթե ենթական եզակի է, այդ թվում՝ հավաքական կամ հոգնակերպ գոյական՝ ժողովուրդն է իրական ուժը: Միացյալ Նահանգները ներխուժել է Իրաք:

Ծանոթություն: Եթե եզակի թվով ենթական ունի մեկից մեծ թվականով կամ թվականական դերանունով արտահայտված որոշիչ, ապա ստորոգյալը կարող է լինել և՛ հոգնակի թվով՝ Հանձնաժողովում քննարկման են դրվելու երկու հարց, և՛ եզակի՝ Հանձնաժողովում քննարկման է դրվելու երկու հարց:

Ստորոգյալը հոգնակի թվով է, եթե ենթական՝ • **հոգնակի է՝** Պետությունները «սառնասիրտ հրեշներ են», • **բազմակի է՝** Ո՛չ «Բարգավաճ Հայաստան կուսակցությունը» և ո՛չ էլ ՀՀԳ-ն Ազգային ժողովի արտահերթ նիստին չեն մասնակցել:

Բազմակի ենթակայի հետ ստորոգյալը լինում է եզակի թվով, եթե՝

• Ենթականերն իմաստով հարաբերակից են և միասին արտահայտում են մեկ հասկացություն՝ Քննարկման ավարտից հետո **հարց ու պատասխան** չինչեց:

• Ենթականերն ունեն **յուրաքանչյուր, ամեն (մի), ոչ մի** դերանուններով արտահայտված ընդհանուր որոշիչ՝ Դատական քննության **յուրաքանչյուր** մաս, հատված ունի իր բովանդակությունը և նշանակությունը: **Ոչ մի** արարք, հանցանք այնքան քստմնելի չէ, որքան հոգեկան հանցանքը:

• Նույն դեմքով ենթակաները կապված են **կամ, կա՛մ ... կա՛մ, ոչ թե ... այլ** շաղկապներից որևէ մեկով՝ Կատարվածի համար պատժվելու է կա՛մ «BMW»-ի վարորդը, կա՛մ «Mercedes Benz»-ի:

• Ենթականերից մեկը՝ նախորդում, մյուսը հաջորդում է ստորոգյալին՝ Այդ ամենից ջինջ հիշողություն է մնացել և մի կսկիծ: Թե՛ զինվորն է պատասխան տալու կատարվածի համար, թե՛ հրամանատարը:

Հոգնակի կամ բազմակի ենթակայի հետ գոյականով (կամ փոխանվանաբար գործածված բառով) արտահայտված ստորոգելին սովորաբար լինում է հոգնակի թվով (Դրանք քննարկման ենթակա **ծրագրեր** են), բայց կարող է լինել նաև եզակի թվով, եթե՝ • Ենթական հարգական հոգնակի նշանակող անձնական դերանուն է՝ Դուք, պարո՛ն դեսպան, չարաշահում եք **Ձեր** լիազորությունները: • Ստորոգելին գնահատող իմաստ ունի և անհոգնական կամ անհաշվելի է՝ Երիտասարդները մեր երկրի **ապագան** են: • Ստորոգելին շեշտում է իր արտահայտած առարկայի ոչ թե քանակը, այլ տեսակը՝ դրվելով անորոշ առումով՝ Քո ցույց տված բոլոր ծառերը **կաղնի** էին:

1-ին կամ 2-րդ դեմքի անձնական դերանունով արտահայտված կամ դիմորոշ հոդ (**ս** կամ **դ**) ունեցող ենթակայի հետ ստորոգյալը լինում է համապատասխանաբար 1-ին կամ 2-րդ դեմքով՝ (**ես**) Մտավորականս, չեմ կարող չմասնակցել այդ շարժմանը: **Ի՛նքդ** փորձիր կողմնորոշվել: Մնացած դեպքերում ստորոգյալը լինում է 3-րդ դեմքով՝ Մեկ վկա նշանակում է ոչ մի վկա:

Ծանոթություն: 1–ին և 2–րդ դեմքի անձնական դերանուն ստորոգելի դեպքում հանգույցը դեմքով համաձայնում է դրան՝ Այդ ամենի կազմակերպիչը **դու ես:**

Տարբեր դեմքերով բազմակի ենթակաների դեպքում ստորոգյալը համաձայնում է առաջին դեմքի ենթակայի հետ (**ես**, **դու**, **նա կմեկնենք**), դրա բացակայության դեպքում՝ երկրորդ դեմքի ենթակայի հետ (**դու և նա իրար նման եք**), նաև վերջինիս բացակայության դեպքում դրվում է երրորդ դեմքով (**Որոշ չգրված օրենքներ ավելի զորեղ են գրվածներից**):

Պարզ ընդարձակ նախադասություն: Նախադասության անդամները, ինչպես ասացինք, լինում են գլխավոր և երկրորդական: Գլխավոր են նախադասության այն անդամները, որոնք իրենցից գերադաս անդամ՝ լրացյալ չունեն: Դրանք են ենթական և ստորոգյալը, որոնց փոխհարաբերությունը համարվում է համագործություն: Նախադասության մյուս անդամները լրացնում (ստորադասվում) են գլխավոր անդամներին կամ միմյանց: Դրանք նախադասության երկրորդական անդամներն են: Երկրորդական անդամ (լրացում) ունեցող նախադասությունը համարվում է **ընդարձակ:**

Երկրորդական են նախադասության այն անդամները, որոնք լրացնում են գլխավոր անդամներին կամ էլ միմյանց: Եթե նախադասության երկրորդական անդամը լրացնում է գլխավոր անդամներից որևէ մեկին, կոչվում է **լրացում**, եթե լրացնում է երկրորդական անդամ(ներ)ի, կոչվում է **լրացման լրացում**: Նախադասության այն անդամը, որին լրացնում է երկրորդական անդամը, կոչվում է **լրացյալ (լրացվող)**:

Երկրորդական անդամները բաժանվում են երկու խմբի՝ կախված այն բանից, թե ինչ խոսքի մասով է արտահայտված դրանց լրացյալը՝ գոյականով, թե՞ բայով: Ըստ այդմ՝ լինում են՝ գոյականական անդամի լրացումներ և բայական անդամի լրացումներ:

Գոյականական անդամի լրացումներ: Սրանք գոյականով, ինչպես նաև գոյականին հարաբերակից դերանունով, գոյականաբար գործածված այլ բառով արտահայտված անդամի լրացումներն են: Ցույց են տալիս լրացյալի որպիսությունը, պատկանելությունը, ով կամ ինչ լինելը: Ըստ այդմ՝ գոյականական անդամի լրացումները լինում են երեք տեսակի՝ **որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ:**

Որոշիչ: Գոյականական անդամի այն լրացումն է, որ ցույց է տալիս լրացյալի որպիսին, ինչպիսին լինելը կամ քանակը, թվային կարգը: Պատասխանում է **ինչպիսի՞, քանի՞, որքա՞ն, ո՞ր** կամ **ո՞րերորդ** հարցին:

Արտահայտվում է՝ • **ածականով** (Ամբաստանյալի վերջին խոսքի բովանդակությունը կարգավորված չէ օրենքով), • **թվականով** (Ըստ Վիեննայի կոնվենցիայի **2–րդ** հոդվածի **3–րդ** կետի՝ երկրների միջև հյուպատոսական հարաբերությունները կարող են գոյություն ունենալ նույնիսկ դիվանագիտական հարաբերությունների խզումից հետո), • **դերանունով** (**ի՞նչ** հարց եք քննարկում), • **մակբայով** (Հաղթանակի միակ գրավականը **ազգովին** պայքարն է), • **հարակատար** կամ **ենթակայական** դերբայով (**Տաշած** քարը գետնին չի մնա: **Աշխատող** մարդը քաղցած չի մնա), • **անորոշ դերբայի թեք ձևերով** (**Դիտողություն անելու** առիթ չեմ տվել), • **գոյականով**, որը կարող է լինել ուղղական, սեռական–տրական, բացառական, գործիական, հազվադեպ՝ ներգոյական հոլովով (Դիվանագիտական կարգավիճակի համար նախատեսված են «**D**», իսկ վարչատեխնիկական և սպասարկման համար՝ «**T**») տարբերանշանների համարներ: Տան մի անկյունում **փայտից** սեղան կա: Արդեն կարողանում ենք **որակով** արտադրանք տալ, **ԱՄՆ–ում** Հայաստանի դեսպան...), • **պես, նման** և այլ կապերի ու հոլովված բառի կապակցությամբ (**Նախագահի հետ** զրույցը հետաքրքիր էր), • **բառակապակցությամբ** (**Մի ոտքը կաղ** այդ մարդը ծանոթ է ինձ):

Որոշիչի լրացյալը (գերադաս անդամը) կոչվում է **որոշյալ**: Որոշիչը որոշյալին սովորաբար կապակցվում է **առդրությամբ**:

(Այլ մոտեցմամբ՝ գոյական որոշիչ–որոշյալի կապը համարվում է խնդրառություն՝ Ներս մտավ **ծեռնափայտով մի մարդ**: Որոշիչն ու որոշյալը թվով համաձայնում են հետևյալ դեպքերում.

• գոյական որոշիչը բազմակի որոշյալի դեպքում լինում է հոգնակի, օր.՝ **Պատգամավորներ** Եսայանն ու Պետրոսյանը հանդես եկան համատեղ հայտարարությամբ,

• մի շարք դերանուն որոշիչներ որոշյալից պահանջում են միայն եզակի կամ միայն հոգնակի թիվ, օր.՝ **Այս ու այն** կուսակցությունից..., **Բոլոր** մարդիկ..., **Որոշ** տվյալներ..., **Ինչ–ինչ** նկատառումներ...

Որոշիչը որոշյալի նկատմամբ սովորաբար լինում է նախադաս, բայց շրջուն շարադասությամբ կարող է լինել նաև հետադաս՝ Հոգնեցրին ինձ արդեն օրերը **լայն ու նեղ**...: Երբ հետադաս որոշիչը ծավալուն է կամ բազմակի, ապա իր որոշյալից տրոհվում է բութով, իսկ նախադասության այլ անդամներից՝ ստորակետով՝ Այդ հսկա քաղաքը՝ **մարդաշատ և աղմկոտ**, ապրելու տեղ չէ:

Եթե բազմակի որոշիչներից մեկը արտահայտված է որակական ածականով, իսկ մյուսը՝ հարաբերական, ապա վերջինս նախորդում է առաջինին՝ **Փայտե դեղին** քանոնս կոտրվել է: Այսպիսի տարաբնույթ բազմակի որոշիչները միմյանցից չեն տրոհվում և չեն կապակցվում **և, ու, կամ, թե** շաղկապներով:

Տարաբնույթ (տարադաս) բազմակի որոշիչների սովորական շարադասության նախընտրելի կարգը հետևյալն է. գոյական որոշիչ + դերբայ որոշիչ + ածականական դերանուն որոշիչ + հարաբերական ածական որոշիչ + թվական (կամ թվականական դերանուն կամ թվանիշ ածական) որոշիչ + որակական ածական որոշիչ + որոշյալ: Օրինակ՝ «Կարմիր գրքում» տեղ **գտած անտառային ո՞ր երեք գիշատիչ** գազանների մասին էր երեկվա դասը: Իմ **ծեռքի փչացած ոսկյա** ժամացույցը վաճառել են:

Շարադասության նշված կարգը կարող է խախտվել՝ **1**. Հետադաս բազմակի որոշիչի դեպքում (Դա մի փոքրամարմին կին էր՝ **տարօրինակ, ծեր, առողջությունից զրկված, անհրապույր**

տեսքով և խորհրդավոր: Այսպիսի հետադաս որոշիչները միմյանցից տրոհվում են ստորակետով կամ միանում են շաղկապով): **2**. Այն դեպքում, երբ առկա է որոշիչ–որոշյալի կայուն կապակցություն՝ տերմինի արժեքով (**ելից մատյան, խոսքի մաս, սեղանի թենիս, բացման խոսք, քրեական դատավարություն** ևն), որին նախորդում են մյուս բոլոր ազատ որոշիչներն ընդունված կարգով (Մեզ ներկայացրե՛ք **նոր ելից** մատյանը: **Բոլոր քրեական** գործերը քննվում են նախ առաջին ատյանի դատարանում): **3**. Այն դեպքում, երբ բազմակի որոշյալներից ամեն մեկն ունի իր որոշիչը, իսկ բոլորը միասին ունեն ևս մի ընդհանուր որոշիչ, որը, անկախ իր արտահայտությունից, նախորդում է մյուս բոլորին (Գրքում տեղ են գտել **բազմաթիվ** դաշնամուրային մանրանվագներ, մանկական երգեր, ժողովրդական խմբերգեր):

Հատկացուցիչ: Գոյականական անդամի այն լրացումն է, որը ցույց է տալիս լրացյալի պատկանելությունը, վերաբերությունը, սերումը, ծագումը: Պատասխանում է **ո՞ւմ կամ ի՞նչի՞** հարցին:

Արտահայտվում է՝ • գոյականի, գոյականական դերանվան կամ գոյականաբար գործածված որևէ բառի սեռական–տրական հոլովի անորոշ առումով (**Որոշման** ընդունումը անորոշ ժամանակով հետաձգվեց: **Տասնհինգի** դիմումն ընդունվեց, **մյուսների** խնդրանքը մերժվեց: Կարդացինք **մեկնածուների** ցուցակը), • անձնական դերանվան սեռական հոլովով (**Իմ** խոսքը կարճ է լինելու):

Հատկացյալը երբեմն զեղչվում է, իսկ նրա վերջավորությունները փոխանվանաբար իր վրա է վերցնում հատկացուցիչը՝ **Ձեր փաստարկները համոզիչ են, նրանը** (= նրա փաստարկները)՝ **ո՛չ**:

Ծանոթություն: Առաջին կամ երկրորդ դեմքի անձնական դերանվան սեռական հոլովով արտահայտված հատկացուցիչը իր հերթին կարող է փոխարինվել ստացական հոդով՝ **ժամանակ, զուր մի՛ վատնիր: Խոստումդ չմոռանաս**:

Հատկացուցիչի լրացյալը կոչվում է **հատկացյալ**: Հատկացուցիչը հատկացյալի նկատմամբ սովորաբար լինում է նախադաս, բայց շրջուն շարահասությանը կարող է լինել նաև հետադաս. «Գիրք ճանապարհի»: Հատկացուցիչը կարող է պարտադրված շրջուն շարահասություն ունենալ, եթե ունի որոշիչ ստորադաս նախադասությունն առանց հարաբերյալի: Օրինակ՝ **Դա պարտականությունն է յուրաքանչյուր մարդու**, ով մտահոգ է երկրի ճակատագրով:

Ծանոթություն: Միտում է նկատվում անորոշ դերբայի սեռական-տրական հոլովածևով արտահայտված հետադաս հատկացուցիչը ուղղականով գործածելու՝ ժամանակ չունեն **մտածել** (← **մտածելու**): Կարիք չկա **հիշեցնել** (← **հիշեցնելու**): Հանձնարարելի են սեռական-տրականով ձևերը:

Եթե հատկացուցիչի և հատկացյալի միջև լինում է գոյականով կամ գոյականաբար գործածված որևէ բառով արտահայտված (կամ էլ իր կազմում գոյական ունեցող) այլ անդամ, որը կարող է սխալմամբ ընկալվել իբրև հատկացյալ, ապա իմաստային հնարավոր շփոթը կանխելու համար հատկացուցիչի վրա բուխ է դրվում՝ Փավստոս մատենագիրը դժգոհ էր **Պապի**՝ եկեղեցու դեմ գործած վարմունքներից:

Ծանոթություն: Հատկացուցիչի և հատկացյալի միջև եղած գոյականական դերանունը թեև իմաստային շփոթ չի առաջացնում, սակայն այդ դեպքում ևս թույլատրվում է հատկացուցիչի վրա բուխ դնել իբրև գուգաձևություն՝ **Տնօրենության**(¹) մեզ ուղարկած նամակի պատասխանը պատրաստ է:

Երբ միևնույն լրացյալն ունենում է թե՛ որոշիչ(ներ), թե՛ հատկացուցիչ, ապա հատկացուցիչը նախորդում է որոշիչ(ներ)ին՝ **Օրենքի բուն** բովանդակությունը այլ է: Դերանունով արտահայտված հատկացուցիչը շրջուն շարահասությամբ երբեմն կարող է հաջոր-

դել որոշիչին՝ Սողում են դանդաղ օրերը անձիր, Կորած է մթնուն **մուր իմ** ուղին...

Բացահայտիչ: Գոյականական անդամի այն լրացումն է, որը ցույց է տալիս լրացյալի ով կամ ինչ լինելը կամ ճշգրտում, մասնավորեցնում է այն: Պատասխանում է նույն հարցերին, ինչ բացահայտյալը: Բացահայտիչի երեք հիմնական տեսակներն են՝ **բուն, մասնական, մասնավորող պարագայական**:

Բուն բացահայտիչ: Այսպես է կոչվում առանց կապի ձևավորված այն բացահայտիչը, որի լրացյալը ենթակա, ստորոգելի, հատկացուցիչ, բուն բացահայտիչ կամ խնդիր է:

Արտահայտվում է՝ • **գոյականով** (Դաշնակիցները՝ **աբխազները**, տեղ էին հասել), • **գոյականին հարաբերակից դերանունով** (Սա կտաս գլխավոր մասնագետին՝ **նրան**, ում դու շատ լավ ճանաչում ես), • **անորոշ դերբայով** (Ուզում է ժամանակը տեղին օգտագործել՝ **սովորել**, գիտելիքներ **ձեռք բերել**, որևէ տեղ **աշխատել**), • **գոյականաբար գործածված որևէ բառով** (Այդ մարզիկը՝ շարքում **վեցերորդը**, մեր հավաքականից է):

Նույն արտահայտությունն ունի նաև բացահայտիչի լրացյալը՝ բացահայտյալը:

Բուն բացահայտիչն ու բացահայտյալը կապակցվում են համաձայնությամբ: Համաձայնությունը սովորաբար լինում է դեմքով, թվով, հոլովով և առունով: Դիմային համաձայնությունը կատարվում է անձնական դերանուններով և կամ դիմորոշ հոդերով: Օրինակ՝ **Ձեզ**՝ այլախոհներիդ, շատերը հանդուրժել չեն կարողանում: **Ես**՝ երկրի անվտանգության երաշխավորս, իրավունք չունեն չհարգելու այդ երկիրը, նրա արժեքները, նրա ժողովրդին: Մարզիկներիդ՝ մեր երկրի պատիվը բարձրացնողներիդ, ցավոք, պատշաճ ուշադրություն չի դարձվում:

Բացահայտիչն ու բացահայտյալը երբեմն կարող են չհամաձայնել՝

• թվով. Ամենայն հոգատարությամբ պետք է վերաբերվենք **երեխաներին՝** մեր երկրի **ապագային**: Ջրկվեցինք մեր ամենամեծ **արժեքից՝** մեր նախնիների **տարածքներից**:

• հոլովով. Ռընե Դեկարտը մեծ հաջողություններ է ունեցել գիտության ամենատարբեր **ոլորտներում՝ փիլիսոփայություն, բնագիտություն, մաթեմատիկա** ևն: Մեր ընտանիքը բաղկացած է չորս **հոգուց՝ ես, մայրս, հայրս ու եղբայրս**: Վարչության երեք **աշխատակիցներից՝** Վահանյան, Աբրահամյան, Նազարյան, հաշվետվություն է ներկայացրել միայն մեկը:

• դեմքով. Արցախի ազատագրության համար **պայքարողներդ՝** մեր նոր կյանքի **կերտողն ու ապավենը**, մշտապես և բոլոր ժամանակներում պիտի գնահատված լինեք:

• առումով. Հայաստանի բոլոր **քաղաքները՝ Վան, Բագավան, Կարին, Վաղարշապատ**, բռնված էին պարսից զորքերով: Ռազմաճակատ մեկնեցին **բոլորը՝ կին թե տղամարդ**:

Ծանոթություն: Հոլովով չհամաձայնած բացահայտիչը չպետք է շփոթել բարդ համադասական նախադասության բաղադրիչ անվանական անդեմ նախադասության հետ՝ Դուրս եկա փողոց. մարդիկ, մեքենաներ, անասելի աղմուկ և իրարանցում:

Բացահայտիչը բացահայտյալի նկատմամբ սովորաբար լինում է հետադաս: Եթե դրանց տեղերը փոխենք, ապա կփոխվեն նաև պաշտոնները՝ Երևանը՝ Հայաստանի մայրաքաղաքը: > Հայաստանի մայրաքաղաքը՝ Երևանը:

Բազմակի բացահայտյալը կարող է ունենալ մեկ բառով արտահայտված բացահայտիչ, որը նրա ամփոփումն է որոշյալ կամ ժխտական դերանունով, և որի հետ էլ թվով համաձայնում է ստորոգյալը: Օրինակ՝ Գարունը, արևը, ծաղիկների բույրը, ամպերի պայծառ գույները՝ **այդ ամենը** նրա սիրտը **վրդովեց** անհանգիստ հույզերով: Եվ հակառակը՝ մեկ բառով արտահայտված բացահայտյալը կարող է ունենալ բազմակի անդամներով արտահայտված բացահայտիչ, որի հետ էլ թվով համաձայնում է ստորոգյալը՝

Ոչ ոք՝ ո՛չ ծնողները, ո՛չ կինը, ո՛չ երեխաները, ո՛չ ընկերները, նրան չներեցին:

Բացահայտյալը և բացահայտիչը երբեմն կապակցվում են **այսինքն, այն է** և այս կարգի՝ բացահայտման նշանակություն արտահայտող մեկնական բառերի միջոցով: Ավելի է ճշգրտվում ու որոշակի դառնում բացահայտիչը՝ Սեպտեմբերի 21–ին, **այսինքն՝** Անկախության օրը, կնքվելու է նոր պայմանագիր: Մեր բոլոր ջանքերը պիտի ծառայեն մեկ և նույն նպատակին, **այն է՝** անաղարտ պահել մայրենին:

Բացահայտիչը և բացահայտյալը կարող են ընդմիջված լինել ստորոգյալով և այլ անդամներով՝ Դա միայն գործավարը **կարող էր արած լինել՝** մեր նախկին աշխատակիցը:

Բացահայտիչը նախադասության՝ իրեն հաջորդող անդամներից մեծ մասամբ անջատվում է ստորակետով՝ **«Ապելյացիա՝ վերաքննություն**, բառը ծագել է լատիներեն **apellare** բառից, որ նշանակում է **կանչել դատարան, դիմել վերադաս** դատարանին»: Բացահայտիչից հետո ստորակետ սովորաբար չի դրվում, եթե՝

1. Այն սեռական–տրական հոլովի անորոշ առումով (անձնական դերանվան սեռական հոլովով) է՝ Այդ լրագրողի՝ **«Ազգ»–ի** քեզ ծանոթ թղթակցի ելույթը մեզ հետաքրքրեց:
2. Նրան հաջորդում է օժանդակ բայ կամ հանգույց՝ Եկողը իմ ընկերը՝ **Վահանն է**:
3. Նրան հաջորդում է շաղկապ կամ սաստկական վերաբերական (էլ, իսկ, անգամ, նույնիսկ ևն)՝ Հակոբը՝ մեր **ընկերն էլ** ներկա պիտի լինի:
4. Նրան հաջորդում է դերբայ՝ Ոտքի էին ելել նաև կենտրոնում՝ **սեղանի շուրջը** բոլորած մարդիկ:
5. Նրան հաջորդում է կապ (որն ընդհանուր է թե՛ իր, թե՛ բացահայտյալի համար)՝ Ներկայացված փաստաթղթի՝ **հայտարարության մասին** տեղյակ էին բոլորը:

6. Նրան հաջորդում է բութով տրոհվող այլ անդամ. Կաթողիկոսական գահին նստած էր վեհաշուք Խրիմյան Հայրիկը՝ Ամենայն հայոց հայրապետը՝ **արծվաքիթ, կապույտ աչքերով:**

Ծանոթություն: Եթե բացահայտիչին հաջորդող կապը միայն նրանն է, ապա ստորակետ է դրվում կապից հետո՝ Մեծ Հայքի Արցախ աշխարհում՝ Աղստև գետի մոտ, Սուրբ Խաչ վանքն է:

Մասնական բացահայտիչ: Սա բացահայտիչի այն տարատեսակն է, որ բացահայտյալին է միանում **որպես կամ իբրև կապով** և մասամբ է բացահայտում լրացյալի ով կամ ինչ լինելը՝ **Չարենցը՝ որպես գրող**, հանրաճանաչ է: Մասնական բացահայտիչը բացահայտյալի հետ սովորաբար համաձայնում է թվով, հոլովով և որոշիչ հոդ չի ընդունում. **Վահանյանին՝ որպես հմուտ ղեկավարի**, պարզատրեցին: Մասնական բացահայտիչը բացահայտյալի նկատմամբ կարող է լինել նախադաս. **Որպես կենսաթոշակառու՝** նա օգտվում է մի շարք արտոնություններից: Այս դեպքում բութը դրվում է բացահայտիչի վրա:

Ծանոթություն: **Որպես կամ իբրև կապով** ձևավորված անդամը, եթե լրացնում է ստորոգյալին, չի տրոհվում՝ Դիվանագիտական գործակալը պարտավոր չէ ցուցմունքներ տալու **որպես վկա:** Նույն կապերով կարող են ձևավորվել նաև այլ անդամներ՝ **ստորոգելի՝** Աշխատում է **որպես լրագրող, ձևի պարագա՝ որպես արծիվ** խոյացավ թշնամու վրա:

Մասնավորող պարագայական բացահայտիչ: Սա բացահայտիչի մի տարատեսակ է, որը ոչ թե պարագայես գոյականական, այլ պարագայական անդամի լրացում է և մասնավորեցնում, ճշգրտում է լրացյալի ցույց տված որևէ պարագայական հատկանիշ՝ բայական որևէ անդամի ցույց տված գործողության կամ եղելության տեղը, ժամանակը: Մասնավորող պարագայական բացահայտիչը և բացահայտյալը հոլովով և թվով կարող են համաձայնել, եթե երկուսն էլ արտահայտված են գոյականով կամ գոյականաբար գործածված որևէ այլ բառով՝ Ընտրական տեղամասեր

կլինեն բոլոր **բնակավայրերում՝** դպրոցական **շենքերում:** Հյուրերը կժամանեն մոտ մեկ **շաբաթից՝** վեց **օրից:** Բայց կարող են և չհամաձայնել. Հանդիպեցին **սահմանագծին՝ խրամատներում:**

Մասնավորող պարագայական բացահայտիչը, ինչպես և բուն բացահայտիչը, կարող են լինել ոչ միայն բազմակի, այլև կրկնակի, եռակի ևն, այսինքն՝ բացահայտիչն իր հերթին կարող է ունենալ բացահայտիչ՝ Հերթական ժողովը կկայանա հաջորդ **շաբաթ՝** հինգշաբթի **օրը՝** աշխատանքից **հետո՝** ժամը **վեցին:**

Բայական անդամի լրացումներ: Սրանք բայով (այդ թվում՝ դերբայով) արտահայտված անդամի լրացումներն են: Ցույց են տալիս լրացյալի նշանակած գործողության կամ եղելության հետ կապված առարկաներ կամ հանգամանքներ: Ըստ այդմ՝ դրանք լինում են երկու տեսակ՝ **խնդիրներ և պարագաներ:**

Ծանոթություն: Պարագաներ կարող են ունենալ ոչ միայն բայական, այլև ածականական, թվականական կամ մակբայական անդամները: Օրինակ՝ Ականատես եղանք **չատ հետաքրքիր** մի դեպքի: Այսօր քայլել են **մոտավորապես տասը** կիլոմետր: Հանդիպումը տեղի ունեցավ **խիստ անորոշ** ձևաչափով: Մեքենայի ընթացքը **ակնհայտորեն դանդաղ** է եղել:

Խնդիրներ: Գործողության հետ կապված առարկա(ներ) ցույց տվող լրացումը կոչվում է խնդիր: Արտահայտվում է գոյականով, գոյականին հարաբերակից դերանունով, անորոշ դերբայով կամ գոյականաբար գործածված այլ բառով: Լինում է երկու տեսակ՝ **ուղիղ և անուղղակի:**

Ուղիղ խնդիր: Այսպես է կոչվում ներգործական սեռի բայի խնդիրը, որը պատասխանում է **ո՞ւմ կամ ի՞նչ(ը)** հարցին և ունի հետևյալ երկու հատկանիշները.

1. Անձի և իրի առումների դեպքում ունենում է տարբեր ձևավորում. • անձի առման դեպքում (անձ ցույց տալիս, իբրև անձ ընկալվելիս) ունենում է սեռական–տրական հոլովի ձև (Վերջապես

տեսա գործընկերոջը), • իրի աման դեպքում (իր ցույց տալիս կամ իբրև իր ընկալվելիս) ունենում է ուղղական հոլովի ձև (Տեսա երազ մի վառ):

2. Կրավորական կառույցում (լրացյալ բայը կրավորական սեռի վերածելիս) դառնում է ենթակա՝ Նա ստուգում է փաստաթղթերը > Փաստաթղթերը ստուգվում են նրա կողմից):

Ունենմ և ունենալ բայերի ուղիղ խնդիրը սովորաբար միայն ուղղականաձև է (Ունենմ ծրագրեր: Ունենմ լավ ընկերներ): Ուղիղ խնդիրը երբեմն լինում է բացառական հոլովով՝ կոչվելով մասնական ուղիղ խնդիր (հմեց քրից):

Ծանոթություն: Անորոշ դերբայով արտահայտված հետադաս ուղիղ խնդիրը (Հանձնարարում եմ կարճ ժամկետում կատարել աշխատանքները: Թույլ չեմ տալիս այդ մասին արտահայտվել) սխալմամբ դրվում է նաև սեռական-տրական հոլովով (Հանձնարարում եմ կարճ ժամկետում կատարելու աշխատանքները: Թույլ չեմ տալիս այդ մասին արտահայտվելու): Գիշտ ձևը որոշելու համար պետք է առաջնորդվել բայ-ստորոգյալին տրվող հարցով՝ հանձնարարում եմ ի՞նչ (իրականացնել), թույլ չեմ տալիս ի՞նչ (արտահայտվել):

Անուղղակի խնդիրներ: Այսպես են կոչվում գործողության հետ անուղղակիորեն կապված առարկա(ներ) ցույց տվող խնդիրները: Լինում են մի քանի տեսակի՝ ներգործող, հանգման, անջատման, միջոցի, վերաբերության ևն:

Ներգործող խնդիր: Այսպես է կոչվում կրավորական սեռի բայի այն խնդիրը, որի կատարած գործողությունն իր վրա է կրում ենթական: Պատասխանում է ումի՞ց, ինչի՞ց, ումո՞վ, ինչո՞վ, ո՞ւմ կողմից կամ ո՞ւմ ձեռքով հարցին: Արտահայտվում է՝ • բացառական հոլովով (Իր բոլոր գործընկերներից հարգված մարդ է պարոն Մուշեղը), • երբեմն՝ գործիական հոլովով (Անտառը ծածկվեց ձյունով), • անձնանիշ բառի դեպքում՝ մեծ մասամբ սեռական-տրական հոլովով և կողմից կամ ձեռքով կապով (Տունը կառուցվեց հմուտ շինարարների ձեռքով):

Լրացյալ բայը ներգործական սեռի վերածելիս ներգործող խնդիրը դառնում է ենթակա, իսկ ենթական՝ ուղիղ խնդիր՝ **Չյունը ծածկեց անտառը:**

Կրող (ուղիղ) և ներգործող խնդիրները հաճախ կոչվում են **սեռի խնդիրներ**, քանի որ կախված են բայի սեռից:

Հանգման խնդիր: Ցույց է տալիս այն առարկան, որին հանգում է գործողությունը: Պատասխանում է ո՞ւմ, ինչի՞(ն), ո՞ւմ վրա, ինչի՞ վրա, ո՞ւմ դեմ, ինչի՞ դեմ, ընդդեմ ո՞ւմ, ընդդեմ ինչի՞, ո՞ւմ հանդեպ, ինչի՞ հանդեպ կամ ո՞ւմ հետ հարցին:

Արտահայտվում է՝ • սեռական-տրական հոլովով (Տարբեր հայտարարներ ունեցող կոտորակները գումարելու համար պետք է կոտորակները բերել ընդհանուր հայտարարի), • սեռական-տրական հոլովով և (ընդ)դեմ, հետ կամ այլ կապով (Անօրինությունների դեմ պայքարը չի դադարել: Հատուկ հարգանք եմ տածում Ձեր հանդեպ: Ծապոնացիները շատ զգայուն են հասարակական կարծիքի հանդեպ), • վրա, հետ կապերով և ստացական հոդով (Ծանոթ շները չեն հաչում վրադ, Ծանոթ մարդիկ են հաչում քեզ վրա: Հետդ պիտի խոսեմ):

Մի շարք բայեր (ծանոթանալ, մտերմանալ, բարեկամանալ, ընկերանալ, թշնամանալ, հաշտվել, գժտվել, վիճել, կռվել, խորհրդակցել) կամ դրանց հիմքով կազմված բաղադրյալ ստորոգյալներ (ծանոթ ենք, ընկեր են, համամիտ եմ ևն) հանգման խնդիր են պահանջում հետ կապով կամ էլ միայն փոխադարձ դերանունով (իրար, միմյանց, մեկմեկու), եթե առկա է փոխադարձության հարաբերություն անձերի (կամ անձնավորված իրերի) միջև: Օրինակ՝ Նոր տնօրենը սկսել է ծանոթանալ աշխատակիցների հետ: Անպայման կխորհրդակցեք իրար հետ: Մենք իրար թշնամի չենք: Եթե հարաբերությունը փոխադարձ չէ (սովորաբար այդպես է, երբ խնդիրը անձ չէ), ապա հանգման խնդիրը լինում է առանց հետ կապի: Օրինակ՝ **Գործին** ծանոթանամ, հետո կասեմ իմ կարծիքը: Ծանոթ եմ քո կարծիքին:

Ծանոթություն: Անորոշ դերբայով արտահայտված հետադաս հանգման խնդիրը (Տրամադրված են **աշխատելու:** Պատրաստվում է **մեկնելու**) կարող է դրվել նաև ուղղական հոլովով (Տրամադրված են **աշխատել:** Պատրաստվում է **մեկնել:**): Հանձնարարելի են սեռական–տրականով ձևերը:

Հանգման խնդիրը սովորաբար լրացնում է բայերին (**մոտենալ** մեքենային, ինչ–որ բան **մոտեցնել** մեքենային), մի շարք բաղադրյալ ստորոգյալների (**պատրաստ է մեկնելու**): Երբեմն լրացնում է զգացական ծայնարկություններին (**վա՜յ, թո՛ւ և ն**), որոշ վերաբերականների (**ամո՛թ, երանի՛, ափսո՛ս, ավա՛ղ**). **Վա՛յ քեզի**, որ կյանքդ հայրենիքեդ ավելի կը սիրես: **Ամո՛թ քեզ** նման գոված **իզիթին:** **Ո՛չ ապօրինություններին, ևն:**

Հաճախ շփոթվում է ուղիղ խնդրի հետ: Տարբերությունն այն է, որ հանգման խնդիրը իրանիշ բառով փոխարինելիս դարձյալ լինում է սեռական–տրական հոլովով (Հավատացի **բժշկին:** > Հավատացի **ասածներիդ**), մինչդեռ ուղիղ խնդիրը իրանիշ բառի դեպքում լինում է ուղղականածն (Հիշում են **բժշկին:** > Հիշում են **ասածներդ**):

Անջատման խնդիր: Ցույց է տալիս այն առարկան, որից սկսվում, ստացվում, անջատվում կամ բաժանվում է մի բան: Պատասխանում է **ումի՞ց** կամ **ինչի՞ց** հարցին: Դրվում է բացառական հոլովով՝ **Խուսափե՛ք շողոքորթներից:**

Ծանոթություն: Անորոշ դերբայով արտահայտված հետադաս անջատման խնդիրը (Խուսափում է **հանդիպելուց:** Հրաժարվում է **ցուցմունք տալուց**) կարող է դրվել նաև ուղղական հոլովով (Խուսափում է **հանդիպել:** Հրաժարվում է **ցուցմունք տալ:**): Հանձնարարելի են բացառականով ձևերը:

Միջոցի խնդիր: Ցույց է տալիս գործողության կատարման միջոցը: Պատասխանում է **ումո՞վ, ինչո՞վ, ո՞ւմ միջոցով** կամ **ինչի՞ միջոցով** հարցին:

Արտահայտվում է՝ • գործիական հոլովով (**Գործով** ապացուցի՛ր խոսքերիդ ճշմարտացիությունը), • սեռական–տրական հոլովով և **միջոցով** կապական բառով (**Ձեր միջոցով** պիտի լուծվի հարցը):

Ծանոթություն: Երբեմն միջոցի խնդիրը ձևով (գործիական հոլով) շփոթվում է ներգործող խնդրի հետ: Տարբերությունն այն է, որ ներգործող խնդրի ստորոգյալը միայն կրավորական բայ է լինում: Եթե բայն էլ է սեռով համընկնում, ապա պետք է հիշել, որ բայը ներգործական դարձնելիս ներգործող խնդիրը փոխվում է ուղղական հոլովի՝ դառնալով ենթակա՝ Քննարկվող հարցը լուծվում է ներկայացված **ծրագրով:** > Ներկայացված **ծրագիրը** լուծում է քննարկվող հարցը, իսկ միջոցի խնդիրը մնում է նույնը՝ Այդ աշխատանքները մեր կողմից իրականացվեցին նրա **ծրագրով:** > Այդ աշխատանքները մենք իրականացրինք նրա **ծրագրով:**

Վերաբերության խնդիր: Ցույց է տալիս այն առարկան, որի մասին խոսվում կամ մտածվում է: Պատասխանում է **ո՞ւմ մասին, ինչի՞ մասին, ո՞ւմ վերաբերյալ, ինչի՞ վերաբերյալ, ինչի՞ շուրջ, ո՞ւմ հասցեին, ումի՞ց** կամ **ինչի՞ց** հարցին:

Արտահայտվում է՝ • բացառական հոլովով (Մենք խոսեցինք **ամեն ինչից**, բացի **ամենակարևորից՝** մեր գործից), • սեռական–տրական հոլովով և **մասին, վերաբերյալ, հասցեին, առթիվ, նկատմամբ** կամ **շուրջ** կապով (Քննարկվող **խնդրի վերաբերյալ** ես հատուկ կարծիք ունեմ: Նրա ելույթում անորոշ ակնարկներ կային **իմ հասցեին**):

Ծանոթություն: Վերաբերության խնդիրը բացառական հոլովով այլ անդամներից տարբերելու համար պետք է փոխարկել **մասին** կապով արտահայտված տարբերակի՝ Տեղեկություն չունեմ **կատարվածից:** > Տեղեկություն չունեմ **կատարվածի մասին:**

Պարագաներ: Այսպես են կոչվում գործողության կամ եղելության հանգամանքներ կամ հատկանիշներ ցույց տվող անդամները: Արտահայտվում են մակբայներով, հոլովված գոյականներ

րով ևն: Լինում են մի քանի տեսակ՝ տեղի, ժամանակի, ձևի, չափի, նպատակի, պատճառի, հիմունքի, պայմանի, զիջման:

Տեղի պարագա: Ցույց է տալիս գործողության կամ եղելության տեղը: Պատասխանում է **որտե՞ղ, ո՞ւր, որտեղի՞ց** կամ **որտեղո՞վ** հարցին:

Արտահայտվում է՝ • տեղի մակբայով կամ դրան հարաբերակից դերանունով (Ոչ ոք չգիտեր՝ **որտեղից** է գալիս գորախումբը և **ուր** է գնում: **Հեռվում** լույս առկայծեց: Շրջում է **երկրեերկիր**), • տարբեր հոլովածներով (Տիգրիսը և Եփրատը սկիզբ են առնում Կովկասյան **լեռնաճյուղերից** և հոսում դեպի Պարսից ծոց: Ընկերս **ԱՄՆ-ում** է), • հոլովված բառով և տեղի կապով կամ կապական բառով (Ամրոցը թառել էր **ժայռի վրա**):

Ժամանակի պարագա: Ցույց է տալիս գործողության կամ եղելության ժամանակը: Պատասխանում է **ե՞րբ, երբե՞վ, երբե՞վանի՞ց** կամ **մինչև ե՞րբ** հարցին:

Արտահայտվում է՝ • ժամանակի մակբայով կամ դրան հարաբերակից դերանունով (**Վաղը** քարոզարշավի վերջին օրն է: **Ե՞րբ** է տեղի ունենալու հանդիպումը), • տարբեր հոլովածներով (**Գիշերով** մեկնեցին: Նա՛ իրավունք ունի կյանքի, ազատության, Ով **ամեն օր** դրանք կռվով կմվաճի: **Բանակցություններում** ֆրանսիացիները միշտ նախընտրում են գործածել իրենց մայրենի լեզուն), • հոլովված բառով և ժամանակի կապով կամ կապական բառով (Հաղորդալարերով Մոսկվայից Վլադիվոստոկ (S = 8000 կմ) ուղարկված էլեկտրական ազդանշանը հասնում է **մոտ 0,03 վ հետո**), • համակատար դերբայով (Ով թույլ է խիզախությամբ, զորեղ է **խարդավելիս**):

Ծանոթություն: Անորոշ դերբայի գործիական հոլովով արտահայտված ժամանակի պարագան հաճախ արտաքուստ շփոթվում է այլ պարագաների (ձևի, պատճառի, հիմունքի ևն) հետ, երբեմն էլ բովանդակությամբ համատեղում է նաև մեկ այլ պարագայի իմաստ: Այսպես՝ ժամանակի պարագայի հետ կարող են համատեղվել **պատճառի** (Մեզ **նկատելով**

հերթապահը շփոթվեց), **ձևի** (**Ընթերցելով նամակը**՝ հապճեպ հեռացավ սրահից), **հիմունքի** (**Համազգեստից ծանաչելով սպային**՝ մոտեցավ նրան), **պայմանի** (**Ծանաչելով նրան**՝ դու քեզ այդպես չէիր պահի) պարագաների իմաստները:

Ձևի պարագա: Ցույց է տալիս գործողության կամ եղելության կատարման ձևը, ինչպես նաև գործողություն կատարողի վիճակը: Պատասխանում է **ինչպե՞ս** հարցին:

Արտահայտվում է՝ • ձևի մակբայով կամ դրան հարաբերակից դերանունով (Խումբը **արագորեն** մեկնեց դեպի վայր: **Այդպես** ոչ ոք չէր զայրացրել նրան), • գործիական, երբեմն էլ՝ այլ հոլովածներով (**Հաճույքով** են լսում դասական երաժշտություն: **Կեսից** ընդհատված քննությունը վերսկսվեց), • հոլովված բառով և ձևի կապով (**Քթի տակ** ինչ-որ բան մոթմոթաց), • մակբայաբար գործածված որակական ածականով (**Ուրախ** դիմավորեցին մեզ), • հարակատար դերբայով (**Ձարմացած** ու **շփոթված** նայեցի խորհրդականին):

Ծանոթություն 1: Երբեմն **որպես, իբրև** կապերով ձևի պարագան շփոթվում է մասնական բացահայտիչի հետ: Դրանք պետք է տարբերել իրենց լրացյալով. ձևի պարագայի լրացյալը լինում է բայ (խոսեց նա **իբրև մասնագետ**), իսկ մասնական բացահայտիչինը՝ գոյական կամ գոյականաբար առնված որևէ բառ (Դիմեցի **նրան**՝ **իբրև** այդ գործի **պատասխանատուի**): Բացի այդ՝ ձևի պարագայի **որպես** կամ **իբրև** կապը հնարավոր է փոխարինել **պես** կամ **մման** կապով (խոսեց նա **իբրև** մասնագետ: > խոսեց նա մասնագետի **պես**):

Ծանոթություն 2: Երբեմն ձևի պարագան արտաքուստ (գործիական հոլով) շփոթվում է միջոցի խնդրի հետ: Տարբերությունը կարելի է պարզել հարցով՝ Մեկնեց **ինքնաթիռով** (ինչո՞վ): Մեկնեց **ծամպրուկով** (ինչպե՞ս): Խոսեց **արհամարհանքով** (ինչպե՞ս): Սակայն լինում են դեպքեր, երբ գործիականով ձևի պարագան համատեղում է նաև միջոցի խնդրի իմաստ՝ պատասխանելով թե՛ մեկի, թե՛ մյուսի հարցին. Կարդում էր **ակնոցով** (ինչո՞վ, ինչպե՞ս): Նամակն ուղարկված է էլեկտրոնային **փոստով** (ինչո՞վ,

ինչպե՞ս): Պետական հարկադրանքը սահմանվում և կիրառվում է իրավա- կան **նորմերով** (ինչո՞վ, ինչպե՞ս):

Չափի պարագա: Ցույց է տալիս գործողության կամ եղե- լության չափը: Պատասխանում է **որքա՞ն, ինչքա՞ն, որքանո՞վ, ինչքանո՞վ** կամ **ի՞նչ չափով** հարցին:

Արտահայտվում է՝ • չափի մակբայով կամ նրան հարաբե- րակից դերանունով (Կասկածները **իսպառ** վերացան: **Ինչքա՞ն** տխրեցինք մենք), • հոլովված բառով և չափի ու համեմատության կապով կամ կապական բառով (**Ուշաթափվելու աստիճան** ծե- ծել էին), • առավելապես թվական պարունակող բառակապակցու- թյամբ (**Երկու ամսով** հետաձգվեցին բանակցությունները):

Պայմանի պարագա: Ցույց է տալիս գործողության կամ եղե- լության պայմանը: Պատասխանում է **ի՞նչ պայմանով** կամ **ո՞ր դեպքում** հարցին:

Արտահայտվում է՝ • հոլովված բառով և **դեպքում, պայմա- նով** կամ **պարագայում** կապական բառով (**Ամեն պարագայում** գործը պետք է ուղարկվի դատարան: **Ոչ մի պայմանով** քեզ հետ չեն համագործակցի), • գործիական հոլովով (Հանգամանքների **ճշգրտումով** միայն կարելի է գործը հաջող ավարտի հասցնել: Տարածքը տրվում է **վարձով**):

Նպատակի պարագա: Ցույց է տալիս գործողության կամ եղե- լության նպատակը: Պատասխանում է **ինչո՞ւ, ի՞նչ նպատակով** կամ **ինչի՞ (համար)** հարցին:

Արտահայտվում է՝ • սեռական–տրական հոլովով (Մեկնեց Վա- յոց ծոր՝ **հանգստի**), • հոլովված բառով և նպատակի կապով կամ կապական բառով (Պետական հարկադրանքի կիրառման նպա- տակն է մարդուն ստիպել գործել **ի շահ պետության**: Մարտն- չեցին **հանուն հայրենիքի**), • գործիական հոլովով (Պետական **գործով** է մեկնել արտերկիր: Եկել է կարևոր **հարցով**): (Այս ձևը գրական լեզվում հաճախակի գործածություն չունի):

Ծանոթություն: Անորոշ դերբայի սեռական–տրական հոլովով արտա- հայտված նպատակի պարագան կարող է շփոթվել հետադաս հատկա- ցուցիչի և անորոշ առունով հանգման անուղղակի խնդրի հետ: Տարբե- րությունն այն է, որ հատկացուցիչն ունենում է գոյականով կամ գոյակա- նաբար առնված այլ բառով արտահայտված լրացյալ և կարող է տեղա- փոխվել ու տեղ գրավել դրանից առաջ՝ **Դուք կարիք ունեք հանգստի:** > **Դուք հանգստի** կարիք ունեք: Հանգման խնդիրը նման դեպքերում լրաց- նում է ածականով արտահայտված ստորոգելիին և կարող է որոշիչ հոդ ստանալ՝ **Դուք պատրա՞ստ եք հանդիպման/ը**, մինչդեռ նպատակի պա- րագան լրացնում է բային, որոշիչ հոդ չի ստանում, բայց կարող է ստանալ **համար** կապը կամ **նպատակով** կապական բառը՝ Մեկնեց Վայոց ծոր՝ **հանդիպման/հանդիպման նպատակով // համար:**

Նպատակի պարագան միշտ տրոհվում է բուժով, եթե առանց նպատակի կապի դերբայական դարձված է՝ **Հավաքեց նախա- րարներին՝ հանձնարարականներ տալու:** Մնացած դեպքերում (գոյականով կամ միայնակ դերբայով արտահայտվելիս, կապով կազմվելիս) նպատակի պարագան տրոհվում է, եթե ստորոգյա- լին չի հաջորդում՝ **Մեկնեց Ֆրանսիա՝ ստանձնելու համար** այդ երկրում **ՀՀ** դեսպանի պաշտոնը: Նստեցին սեղանի շուրջ՝ **հացի:** Որոշում ընդունվեց **ԱԺ–ում՝ ի նպաստ** սոցիալապես անապահով խավերի: Նույն նպատակի պարագաները ստորոգյալին հաջորդե- լիս չեն տրոհվում՝ **Սեղանի շուրջ նստեցին հացի:** **ԱԺ–ում** որոշում ընդունվեց **ի նպաստ** սոցիալապես անապահով խավերի:

Պատճառի պարագա: Ցույց է տալիս գործողության կամ եղե- լության պատճառը: Պատասխանում է **ինչո՞ւ, ինչի՞ց** կամ **ի՞նչ պատճառով** հարցին:

Արտահայտվում է՝ • բացառական, երբեմն՝ գործիական հոլո- վով (**Ահից** կուչ էր եկել: Անհանգստացել էի նրա **մեկնումով**: Հուզ- վեց՝ մանկության ընկերոջը այդ վիճակում **տեսնելով**), • հոլովված բառով և պատճառի կապով կամ կապական բառով (**Ինչի՞ շնոր-**

հիվ ես այդքան հաջողությունների հասել: Պիտի դատապարտել նրան իր արարքների համար), • դերանունով (Ինչո՞ւ ես լռում):

Ծանոթություն: Բացառական հոլովով պատճառի պարագան հաճախ նման է ներգործող խնդրին: Դրանք ձևականորեն տարբերվում են նրանով, որ ներգործող խնդրի լրացյալն արտահայտված է լինում միայն կրավորական սեռի բայով, իսկ պատճառի պարագայի լրացյալը՝ մեծ մասամբ չեզոք (Ապակին **ցրտից** ճաքել է), երբեմն՝ ներգործական (Ես **հուզմունքից** կորցրի ճանապարհը) կամ կրավորական բայով (Նա **կատարվածից** ոգևորվեց): Այնուամենայնիվ, կրավորական բայի՝ բացառականով լրացումը մեծ մասամբ համատեղում է ներգործող խնդրի և պատճառի պարագայի իմաստները (Ամրոցը խուճապի էր մատնվել անակնկալ **հարձակումից**), և զուտ տրամաբանորեն ենք հարկադրված այն երբեմն մեկնաբանելու միայն որպես պատճառի պարագա (Նրա հոգին տանջվում էր հակասական **մտքերից**):

Հիմունքի պարագա: Ցույց է տալիս գործողության կամ եղելության հիմունքը: Պատասխանում է **ինչի՞ց, ի՞նչ հիմունքով** կամ **ինչի՞ հիման վրա** հարցին:

Արտահայտվում է՝ • բացառական կամ գործիական հոլովով (Ի՞նչ **պատրվակով** մերժեցիք նրա խնդրանքը: **Համաձայնագրով** վերադարձվեցին տարածքները: **Ձայնից** ճանաչեցի նրան), • հոլովված բառով և հիմունքի կապով կամ կապական բառով (**Ավանդության համաձայն**՝ աստղային երկինքը դիտելիս Պյուսթագորասը հանկարծ մի հրաշալի մեղեդի է լսել: **Ըստ մեր ունեցած տեղեկությունների**՝ գործարքը կնքված է):

Հիմունքի պարագան սովորաբար տրոհվում է կապով և կամ դերբայական դարձվածով կազմված լինելու դեպքում՝ **Ըստ ընդունված արարողակարգի՝ տեքստը պետք է ընթերցի նիստի քարտուղարը: Նոր հրամանի հիման վրա՝** նա ազատվեց զբաղեցրած պաշտոնից: **Գործող քր. օր.–ի հոդված 104–ի առաջին մասի համաձայն՝** սպանությունը ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելն է:

Ջիջման պարագա: Ցույց է տալիս գործողությանը կամ եղելությանը հակառակ հիմունք կամ հանգամանք: Պատասխանում է **հակառակ ինչի՞, փոխանակ ինչի՞, չնայած ինչի՞, ո՞ւմ փոխարեն** կամ **ինչի՞ փոխարեն** հարցին: Իմաստով հակադիր է պատճառի և հիմունքի պարագաներին:

Արտահայտվում է՝ • հոլովված բառով և բացառման կամ զիջման կապով (**Հակառակ զգուշացման՝** նա ստորագրել է համաձայնագիրը: **Խոհեմ լինելով հանդերձ՝** վատ վարքագիծ է դրսևորել: **Փոխանակ մեղադրելու՝** ինքնե՛րդ վերահաշվարկ արեք), • անորոշ դերբայի գործիական հոլովով (**Գործին տեղյակ չլինելով՝** փորձեց միջամտել):

Ջիջման պարագան սովորաբար տրոհվում է կապով և կամ դերբայական դարձվածով կազմված լինելու դեպքում՝ Ֆինանսական այդ ծրագիրը, **հակառակ բոլոր ջանքերի, չիրականացավ:**

Նախադասության ծավալուն անդամ: Ծավալուն է նախադասության այն անդամը, որն արտահայտված է բառակապակցությամբ: Նախադասության մեջ որևէ բառ եթե ունի լրացումներ, ապա վերջին հաշվով նախադասության անդամ է դառնում այդ լրացումների հետ միասին՝ որպես պարզ կամ բաղադրյալ բառակապակցություն: Սակայն նախադասությունը վերլուծելիս սովորաբար այդպիսի բառակապակցության միայն գերադաս անդամն է նշվում որպես նախադասության տվյալ անդամ: Օրինակ՝ Հիմնական խոչընդոտը այդ հեռավոր գյուղի՝ աշնան հորդ անձրևներից վարարած լեռնային փոքրիկ, բայց արագահոս գետակն էր: Այստեղ ստորոգելին է **գետակը** բառը՝ **հորդ անձրևներից վարարած և լեռնային, փոքրիկ, արագահոս** լրացումների հետ միասին, իսկ **գետակ** բառի հատկացուցիչն է **գյուղի** բառը՝ **այդ և հեռավոր** լրացումների հետ միասին:

Լինում են բառակապակցություններ, որոնք՝ որպես նախադասության անդամ, հարմար է լինում նշել ոչ թե միայն իրենց գերադաս անդամով, այլ ամբողջությամբ՝ իբրև մեկ ծավալուն անդամ: Օրինակ՝ **Անտառային հողերի ֆոնդի մեջ** են մտնում երկու տի-

պի հողեր՝ **անտառային** և **ոչ անտառային**: Արտաշատը հիմնադրել է **Արտաշես 1-ինը՝ Հին աշխարհի** հռչակավոր զորավար **Հաննիբալի խորհրդով**: Արքիտրաժային դատարանը որոշումը կայացնում է՝ **միջազգային իրավունքին և սույն կոնվենցիայի դրույթներին համապատասխան**: Ծավալուն կարող են լինել նախադասության բոլոր անդամները: Բայց սովորաբար իբրև ծավալուն անդամ են վերցվում լրացում ունեցող բացահայտիչը, հետադաս որոշիչը, հիմունքի և զիջման կապերով ձևավորված պարագաները, դերբայով արտահայտված անդամները, **ինչպես** կապով պարագան ևն:

Ծանոթություն: Ծավալուն անդամը չպետք է շփոթել՝ • մեկ բառի արժեք ունեցող հարադրավոր բարդությամբ կամ դարձվածքով արտահայտված անդամի հետ (**Վեր են կենում և խոսքները մեկ արած** հեռանում են), • իր լրացյալին կապով (հիմունքի, զիջման և մի բանի այլ կապերից բացի) միացած բառի հետ, որը նախադասության անդամ է համարվում կապի հետ միասին (**Հաշտվեցի նրա հետ**: Քննարկվող **կետերի վերաբերյալ** առարկություններ ունեն), • բաղադրյալ ստորոգյալի հետ (**Դա կարող է վեճի առարկա դառնալ**), • նախադասության բազմակի անդամների հետ (**Խնամակալությունը և հոգաբարձությունը**, որպես հռոմեական մասնավոր իրավունքի ինստիտուտներ, առաջացել են հնագույն ժամանակներում), • երկրորդական նախադասությամբ արտահայտված անդամի հետ (Իրային իրավունքն ունի բացարձակ բնույթ. **երբ այն խախտվում է**, պետք է պաշտպանվի ցանկացած անձի ոտնձգությունից), • ծավալուն ներդրյալ միավորների հետ (**Դե լավ, հարգարժան գործընկերներ, ցավոք**, ժամանակի սղությունը թույլ չի տալիս մյուս հարցերին անդրադառնալ, ուստի ավարտում եմ խոսքս):

Դերբայական դարձված: Նախադասության ծավալուն անդամներից է: Դերբայական դարձվածը դերբայն է՝ իր լրացում(ներ)ով: Օրինակ՝ **Շատ խոսելը ու շատ բան ասելը** նույնը չեն: **Դեռ շատ երիտասարդ տարիքում դառնալով կիլիկյան**

զորքի հրամանատար՝ Սմբատ սպարապետը մինչև կյանքի վերջը գլխավորեց հայոց զորաբանակը:

Դերբայական դարձվածով կարող է արտահայտվել նախադասության ցանկացած անդամ՝ բացի պարզ ստորոգյալից (ինչպես նաև բաղադրյալ ստորոգյալի հանգույցից): **Դերբայական դարձվածի գերադաս անդամն** արտահայտվում է՝ • անորոշ դերբայի որևէ հոլովածով (Շատ երկրների նման՝ **Հայաստանում** ևս ընդունված է **մեկնող դեսպանի պատվին կազմակերպել** հրաժեշտի ընդունելություններ: Վերբալ (բանավոր) հայտագիրը կարող է բովանդակել հարցերի լայն շրջանակ՝ **ընդգրկելով քաղաքական, տնտեսական, գիտատեխնիկական, մշակութային և բազմաթիվ այլ խնդիրներ**: Մեկնեց օդակայան՝ **ընկերոջը դիմավորելու**), • հարակատար դերբայով կամ նրա գոյականաբար գործածված որևէ հոլովածով (**Հանձնաժողովին առաքված** փաստաթղթերը ուսումնասիրվում են: **Բակում հավաքվածներից** մեկին ծանաչում են), • ենթակայական դերբայով կամ նրա գոյականաբար գործածված որևէ հոլովածով (Դիվանագիտությունը **տվյալ պետության արտաքին քաղաքականության խնդիրներն ու նպատակներն իրականացնող** պետական գործունեություն է: Ձգուշացի՛ր **շատ խոսողներից**: **Այսքան դանդաղ գործ անողներով** մենք ժամկետի մեջ չենք տեղավորվի), • համակատար դերբայով (**Բանակցությունների գնալիս** կողմերը պիտի լավ պատկերացում ունենան իրենց առջև դրված խնդիրների մասին):

Դերբայական դարձվածները լինում են **տրոհվող** և **չտրոհվող**:

Տրոհվող են՝ • հետադաս որոշիչ դերբայական դարձվածը (Լսվեց մի աղեկտուր ծայն՝ **չարագույժ բոթը ավետող**), • պարագա դերբայական դարձվածների մեծ մասը, մասնավորապես՝ գործիական հոլովով անորոշ դերբայի դարձվածով պարագաները (**Օգտվելով իրեն ընձեռված իրավունքներից**՝ դեսպանը գլխավորում է դիվանագիտական ներկայացուցչության ամբողջ աշխատանքը), • հարակատար դերբայի դարձվածով պարագանե-

րը (Հանկարծ կիրճ մտավ Դավիթ իշխանը՝ **նստած ամեհի նժույգին**), • սեռական–տրական հոլովով անորոշ դերբայի դարձվածով նպատակի պարագան՝ առանց կապի (Հայ երգերի մեջ ամբարված դարավոր թախիծը, ողբն ու մրմուռը կուտակվել էին Կոմիտասի տանջալիլուկ հոգում՝ **պոռթկալու իբրև նոր աղոթք, նոր «Տե՛ր, ողորմեա՛»**), • հիմունքի, զիջման և բացառման կապով պարագա դերբայական դարձվածները (**Չնայած խոստումը կատարելուն՝** նա դեռ շատ անելիքներ ունի: **Բացի գործում նշվածներից՝** բերման են ենթարկվել նաև այլ անձինք: **Առանց որևէ բառ ասելու՝** հեռացավ: **Անգլերեն գրելով հանդերձ՝** Սարոյանը իրեն համարում էր հայ գրող), • կապական նպատակի պարագա վերջադաս դերբայական դարձվածը, եթե ստորոգյալին չի հաջորդում (Մեկնեց ռազմաճակատ() **հայրենի հողը ազատագրելու համար**), • բացահայտիչ դերբայական դարձվածը (Եկավ ճարտարագետը՝ **կամրջի նախագիծը կազմողը**):

Տրոհվող դերբայական դարձվածը սովորաբար կետադրվում է այսպես՝ • **առաջադաս և վերջադաս դիրքում** նախադասության մնացած մասից անջատվում է բուբով՝ **Տեսնելով մոտեցող գնացքը՝** նետվեց կառամատույց՝ **րոպե առաջ իր տեղը վագոնում գբաղեցնելու**, • **միջադաս դիրքում** նախադասության մյուս մաս(եր)ից անջատվում է ստորակետով (բացի բացահայտիչ և հետադաս որոշիչ դարձվածներից)՝ Մարդիկ, **տեսնելով չքնաղ իշխանադստերը**, կանգ էին առնում, • **բազմակի համադաս դերբայական դարձվածները** տրոհվում են իբրև մեկ ամբողջություն՝ Կանգնել են՝ **մտասուզված մտքերի մեջ և հայացքս հեռացող նավակին գամած**, • բարդ նախադասության բաղադրիչները միացնող **շաղկապին հաջորդող դերբայական դարձվածը** տրոհվում է առաջադասի կանոններով՝ Պարզ էր, որ **խնդրին ծանոթանալով՝** ավելի ենք խճճվելու, • **ստորադաս նախադասությամբ վերջացող առաջադաս դերբայական դարձվածը** կարելի է տրոհել թե՛ դարձվածի կանոնով (բուբով), թե՛ ստորադաս նախադասության կանոնով (ստորակետով)՝ **Իմանա-**

լով, որ վտանգն անցել է, դուրս եկավ թաքստոցից: // **Իմանալով, որ վտանգն անցել է՝** դուրս եկավ թաքստոցից:

Ծանոթություն 1: Հետադաս որոշիչ դերբայական դարձվածը կետադրվում է բուբով և ստորակետով՝ **Ներքոստորագրյալները՝ պատշաճ կերպով լիազորված իրենց կառավարությունների կողմից**, ստորագրեցին սույն կոնվենցիան: Այն հետադաս որոշիչ դերբայական դարձվածը, որը կարող է մեկնաբանվել նաև իբրև պարագա, թույլատրվում է կետադրել նաև միջադաս դերբայական դարձվածի տրոհման ընդհանրական կանոնով՝ երկու ստորակետով՝ **Իսկ դեղձենին՝ մեկուսի կանգնած**, պչրանքով շորորում էր: // **Իսկ դեղձենին, մեկուսի կանգնած**, պչրանքով շորորում էր:

Ծանոթություն 2: Լինում են նաև դերբայական դարձվածի նման ծավալուն անդամներ, որոնց գերադաս անդամը ոչ թե դերբայ է, այլ ածական, գոյական կամ այլ խոսքի մաս: Դրանց հաճախ կոչում են **զեղչված կամ վերառված դերբայով դերբայական** դարձված: Դրանք սովորաբար տրոհվում են (կամ չեն տրոհվում) դերբայական դարձվածի կանոններով: Օրինակ՝ **Հայացքը առաստաղին՝** խորհում էր: Ներս է մտել՝ **ատրճանակը ձեռքին:**

Ծանոթություն 3: Դերբայական դարձվածի հետ չպետք է շփոթել՝ • հարադիր բայերով և դարձվածքներով արտահայտված միայնակ դերբայները՝ Կանգնել էր **գլուխը կախ: Ուշքի գալով** մոտեցավ պատուհանին **հանգիստ առնելու**, • դերբայներով արտահայտված բազմակի անդամները՝ **Ներս մտավ հոգնած ու ընդարմացած:**

Ծանոթություն 4: Դերբայական դարձվածի հետ բազմակի անդամ կազմող այլ բառեր ու կապակցություններ կարող են տրոհվել նրա հետ միասին իբրև մեկ ամբողջական տրոհվող անդամ՝ Տխուր, պատահածից փոքր–ինչ անակնկալի եկած՝ **թափառում էր փողոցներում:**

Նախադասության բազմակի անդամներ: Բազմակի են կոչվում նախադասության այն անդամները, որոնք միևնույն պաշտոնն են կատարում և ունեն ընդհանուր լրացյալ կամ հարաբերակից գլխավոր անդամ (ենթակա): Բազմակի ստորոգյալներ չկան:

դրանցից ամեն մեկը մի նախադասություն է: Բազմակի կարող են լինել նախադասության մյուս անդամները, ինչպես նաև բաղադրյալ ստորոգյալի ստորոգելին և հանգույցը: Օրինակ՝ Նա իմ ընկերն է եղել և միշտ լինելու է: Խնդիրը կարևոր է և հրատապ: Սովորաբար հարսանիք գնալիս կամ այլ արարողության մասնակցելիս զարդարվում են: Ո՛չ հին երգն է հնչում, ո՛չ հին ձայնն է կանչում, ո՛չ հին ցուլքն է վառվում աչքերի մեջ քո հին: Գինի ստանում են խաղողից, նաև պտուղներից ու հատապտուղներից: Հայկական ոգին օգնեց Արշիլ Գորկուն ուժ առնելու, հաղթահարելու դժվարությունները և ստեղծելու այնպիսի նկարներ, որոնք հասկանալի ու գրավիչ են բոլոր ազգերի համար:

Ծանոթություն: Ընդհանուր ենթակայով համադաս նախադասությունների ստորոգյալները սովորաբար լինում են **հակադրական** (իսկ շաղկապով), **հավելական** (ինչպես նաև շաղկապով) կամ **հաջորդման հարաբերության մեջ** (ապա, հետո, այնուհետև մակբայներով), և ամեն մեկը կարող է ունենալ իր լրացում(ներ)ը՝ դրանց հետ դառնալով բարդ նախադասության բաղադրիչ նախադասություն՝ Պարբերաբար հաճախում է անգլերենի դասընթացների, ինչպես նաև զբաղվում է սեղանի թեմիսով:

Հակադրական և հաջորդման հարաբերության դեպքում ստորոգյալի մասնակի զեղչումն արտահայտվում է բութով՝ Գիշերը աշխատում է, ցերեկը՝ սովորում: Չինացիները ձգտում են բացահայտելու բանակցող կողմերի դիրքորոշումները և հետո միայն՝ իրենցը ներկայացնելու:

Ծանոթություն 1: Բազմակի բացահայտիչի հետ չպետք է շփոթել կրկնակի բացահայտիչը՝ Քիչ անց՝ հյուրերի գալուց հետո՝ կեսօրին, սկսվում է հանդիսությունը:

Ծանոթություն 2: Բազմակի անդամներից տարբեր են **կրկնվող անդամները**. Նայադների նման, նայադների նման Կարոտներիս կանչով կանչում ես ինձ... **Գործ, գործ** պիտի անել: **Կանչում էր, կանչում** ձյունոտ լեռներում Մեկը կարոտի իրիկնամուտին:

Եթե կրկնվող ենթականերն ունեն տարբեր ստորոգյալներ, ապա գործ ունենք համադաս նախադասությունների հետ՝ **Արդարությունը** բարձրացնում է իր ձայնը, սակայն **արդարությունը** խլանում է կրքերի ժխտում:

Բազմակի անդամները կարող են ունենալ նաև ընդհանուր լրացում՝ Ո՛նց է ժպտում իմ հոգին չարին, բարուն՝ **ամենքին...** Բազմակի անդամներն իրար նկատմամբ սովորաբար լինում են **համադաս (համասեռ)**: Սակայն բազմակի լրացումները կարող են լինել նաև **տարադաս (տարասեռ)**: **Համադաս** են այն բազմակի անդամները, որոնք կարող են կապակցվել համադասական շաղկապներով և կամ տրոհվել ստորակետով՝ Փոքր մարդը չի կարող ո՛չ բարձունքից ընկնել, ո՛չ էլ վնասվածք ստանալ: Ամբոխի **աչքն ու ականջը** հաճախ վատ վկաներ են: Սիրում են արիությունը **գրչիդ, խոսքիդ, սրիդ**:

Բազմակի համադաս անդամները միմյանցից չեն տրոհվում, եթե միացած են **և, ու, կամ, թե** շաղկապներով՝ **Քուն թե արթուն** օրիս շատը երազ եղավ, անց կացավ: Հռոմեացի մտածող, պետական **գործիչ և իրավաբան** Կիկերոնը պետության ծագման հիմնական պատճառ էր համարում ոչ այնքան մարդկանց **թուլությունն ու վախը** (ըստ Պոլիբիոսի), որքան նրանց միասին ապրելու բնական պահանջումը: Մնացած դեպքերում՝ առանց շաղկապի կամ համադասական այլ շաղկապներով կապակցվելիս, բազմակի համադաս անդամները միմյանցից տրոհվում են, ինչպես վերը բերված օրինակներում:

Ծանոթություն: Կրկնվող ենթակայով համադաս նախադասությունները միացնող **և, ու, կամ** շաղկապներից առաջ ստորակետ է դրվում, քանի որ կրկնվող ենթական ընդհանուր ենթակա չէ: Օրինակ՝ **Աստված** ամենակարող է, և **Աստված** արդարամիտ է:

Տարադաս են այն բազմակի լրացումները, որոնք չեն կարող միանալ համադասական շաղկապով կամ իրարից տրոհվել ստորակետով: Ամենից հաճախ հանդիպում են տարադաս բազմակի

որոշիչներ: Դրանք առանձնահատուկ են նրանով, որ ունենում են իրարից տարբեր արտահայտություն: Դրանցից մեկը արտահայտված է լինում կա՛մ որակական ածականով, կա՛մ հարաբերական ածականով, կա՛մ դերբայով, կա՛մ թվականով, կա՛մ գոյականով, կա՛մ դերանունով ևն, իսկ մյուսը դրսևորվում է այդ հնարավոր արտահայտություններից մեկ ուրիշով (տե՛ս նաև «Որոշիչ» հատվածը)՝ **Փայտե և երկաթե կոթերով այդ երկու փոքրիկ դանակները գտնվել են դեպքի վայրում:**

Բազմակի տարադաս որոշիչները, ինչպես արդեն ասվել է, նախադաս դիրքում չեն կապվում **և, ու, կամ, թե** շաղկապներով և ստորակետով չեն տրոհվում:

Այս օրինաչափություններին չեն ենթարկվում բազմակի հետադաս որոշիչները, որոնք, անկախ իրենց արտահայտության ձևից, միմյանցից տրոհվում են ստորակետով կամ միանում շաղկապով: Օրինակ՝ Հեծյալները՝ **կիսամերկ, կմախքացած, դեմքի մշուշոտ արտահայտությամբ և լուռունունջ**, օրորվում էին թամբերի վրա:

Տարադաս կարող են լինել նաև որոշ բազմակի պարագաներ (տեղի, ժամանակի, ձևի, չափի): Դրանք սովորաբար ունենում են միմյանցից տարբեր արտահայտություն, հաճախ էլ ստորոգյալի նկատմամբ գրավում են տարբեր դիրքեր (նախադաս և հետադաս) և պատասխանում տարբեր հարցերի: Օրինակ՝ Այն պետությունը, **որտեղ կամ որի սահմաններում քաղաքացիներն ամենից ավելի են խոնարհվում օրենքներին, երջանիկ է խաղաղ ժամանակ և անխոցելի՝ պատերազմի ժամանակ: Բանակցելիս** և առհասարակ **չփումների ժամանակ** ճապոնացիներին բնորոշ են **լսողունակությունը, ինքնատիրապետումը, զգացմունքայնությունից զերծ մնալը: Տնից** շարժվեցի **դեպի համալսարան:**

Նախադասության այլ բաղադրիչներ: Նախադասության կազմում կամ նրան կից լինում են նաև բառեր ու կապակցություններ, որոնք նախադասության անդամներ չեն: Դրանք երկու կարգի են՝ **1.** նախադասության անդամները կապակցող՝ սպասարկու բառեր, **2.** նախադասության և նրա անդամների հետ քերականորեն

չկապված բառեր ու կապակցություններ՝ **Ներդրյալ միավորներ:** Սպասարկու բառերի և ներդրյալ միավորների առկայությունը կամ բացակայությունը կապ չունի նախադասության պարզ կամ բարդ, միակազմ կամ երկկազմ, համառոտ կամ ընդարձակ լինելու հետ: Այսպես՝ պարզ համառոտ նախադասության կազմում կարող են լինել կոչական, վերաբերական, ծայնարկություն, շաղկապ և կամ միջանկյալ արտահայտություն, որոնք, ինչպես ասվել է, նախադասությունը չեն դարձնում ընդարձակ, քանի որ նախադասության անդամ չեն՝ Իհարկե, հարգելի՛ս, հենց **ես** ու **դու** էլ **կզրուցենք:**

Սպասարկու բառեր: Նախադասության անդամները, ինչպես նաև նախադասությունները կապակցող հատուկ բառերն են: Առանձին վերցրած՝ նախադասության անդամ չեն համարվում, ունեն միայն օժանդակ դեր: Սպասարկու բառերը լինում են երկու տեսակ՝ **կապեր և շաղկապներ:**

Ներդրյալ միավորներ: Սրանք բառեր, կապակցություններ, երբեմն էլ նախադասություններ են, որոնք տվյալ նախադասության ու նրա անդամների հետ քերականորեն չեն կապվում, սակայն նախադասության հաղորդած մտքին տալիս են լրացուցիչ նրբերանգ, արտահայտում են հուզական կամ դատողական վերաբերմունք, տեղեկություն, բացատրություն, հավելյալ միտք: Ներդրյալ միավորներ են **միջարկումը, վերաբերականը, ծայնարկությունը, կոչականը:**

Ծանոթություն: Առանձին ձեռնարկներում միջարկումը, վերաբերականն ու ծայնարկությունը միավորված են «միջանկյալ բառեր և կապակցություններ» անվան տակ:

Միջարկում: Միջարկումն արտահայտում է լրացուցիչ տեղեկություն, միտք և նախադասությունից անջատվում է ստորակետերով կամ փակագծերով՝ Ֆրանսիայի սահմանադրության համաձայն (**ընդունվել է 1958 թ. և գործում է մինչև օրս**)՝ արտաքին քաղաքականության մեջ վճռական դերը պատկանում է երկրի

նախագահին: Եվրոպական տնտեսական հանձնաժողովը (**ԵՏՀ**) վերսկսում է իր աշխատանքները:

Կոչական: Կոչականը ցույց է տալիս, թե ում կամ ինչին է ուղղված խոսքը՝ **Պարո՛ն նախարար**, ի պատասխան ձեր հարցումի... Կարող է լինել բառ կամ անվանական բառակապակցություն: Գերադաս անդամը ուղղական հոլովով գոյական է կամ գոյականաբար առնված այլ բառ: Որոշիչ հոդ չի ստանում, բայց կարող է լինել ստացական հոդով՝ **Հարգելի՛ս**, փորձեք ինձ հասկանալ: Նախադասությունից անջատվում է ստորակետ(եր)ով: Ունենում է շեշտ կամ բացականչական նշան, երբեմն՝ հարցական նշան, որ դրվում է գերադաս անդամի վրա՝ Նիստի **հարգարժա՛ն** մասնակիցներ: **Հայրենի՛** լեռներ, կարոտել եմ ձեզ: **Պետրո՞ս**, այդ ինչե՞ր ես քեզ թույլ տալիս:

Կոչականի գերադաս անդամի նախադաս լրացումը (**բացի դերանունից**) մեծ մասամբ իր վրա է վերցնում շեշտը կամ բացականչական նշանը՝ **Մեծահա՛րգ** պարոն նախագահ:

Եթե կոչականի նախադաս լրացումը ծավալուն է, ապա շեշտը կամ բացականչական նշանը սովորաբար դրվում է կոչականին անմիջապես նախորդող բառի վրա՝ **Խոսափողին մոտեցա՛ծ երիտասարդ**, խոսե՛ք ավելի հանգամանորեն: Բազմակի կոչականները կամ կոչականի նախադաս բազմակի լրացումները շեշտ են ստանում առանձին-առանձին, եթե նույնիսկ շաղկապով են միացած՝ է՛հ, մնաք բարով, **Աստվա՛ծ** և **արև՛**... **Շատ հարգարժա՛ն** և **մեծապատի՛վ հյուրեր**, խնդրում եմ զբաղեցրե՛ք ձեր տեղերը:

Կոչականի նախադաս դերանուն լրացումը կարող է վերցնել կոչականի շեշտի հետ նույնացող տրամաբանական շեշտ՝ **Մրցույթի բոլո՛ր մասնակիցներ**, եկե՛ք ներս: Տրամաբանական շեշտ չունեցող նախադաս դերանուն լրացումը չի վերցնում կոչականի շեշտը՝ **Քեզ երբեք չեմ մոռանա, իմ բարեկա՛մ:**

Կոչականի կազմում կարող են լինել նրանից չտրոհվող ծայնարկություններ, որոնք սովորաբար իրենց վրա են վերցնում կոչականի շեշտը կամ բացականչական նշանը՝ կոչականի հետ միա-

սին կազմելով մեկ ծավալուն միավոր՝ **Ո՛վ ամենակարողդ**, փրկի՛ր ինձ այս փորձությունից: **Ա՛յ փոքրիկ**, ի՞նչ ես փնտրում այդտեղ: **Ջա՛ն իմ հայրենիք**, քեզ շատ եմ սիրում: **Ձայնարկությունը** կարող է նաև կոչականի կազմում չլինել, նրանից անջատվել ստորակետով և չվերցնել նրա շեշտը կամ բացականչական նշանը՝ **Վա՛յ, տղա՛ս**, այդ ինչե՞ր ես ասում: Կոչականը երբեմն արտահայտված է լինում միայն կոչական ծայնարկությամբ՝ **Չե՛յ**, լռե՛ք վերջապես:

Ծանոթություն: Կոչականի հետ չպետք է շփոթել երկրորդ դեմքի անձնական դերանվամբ արտահայտված ենթական. Մարդկայի՛ն լեզու, **դու**, որ երկնային բույրով ու թույրով, շղարշով պայծառ Ծածկում ես մարդու դժոխքը հոգու, ոգե՛լ ես արդյոք ճշմարիտ մի բառ:

Միակազմ նախադասություն: Միակազմ է կոչվում մեկ գլխավոր (գերադաս) անդամ ունեցող նախադասությունը: Այդ գլխավոր (գերադաս) անդամը կարող է արտահայտված լինել դիմավոր բայով կամ այլ բառով: Ըստ այդմ՝ միակազմ նախադասությունները լինում են երկու տեսակ՝ **անենթակա** և **անդեմ**:

Անենթակա նախադասություն: Գերադաս անդամը դիմավոր բայ է, որը, սակայն, ենթակա չունի և չի կարող ունենալ: Այդպիսի նախադասություններն արտահայտում են՝ • ընդհանրական դատողություն՝ **Ջարմանում ես**. անգթությունը երբեմն սահմաններ չունի: • բնության երևույթներին վերաբերող եղելություն՝ **Անձրևում է: Արդեն ուշ է:** • գործողությունը կատարողի անորոշություն՝ **Դատարանի նախագահին նոր հանձնարարականներ են տրվել: Պաշտոնական այցեքարտերում անունն ու ազգանունը երբեք կրճատ չեն գրում:**

Ծանոթություն 1: Կարծիք կա, որ անենթակա միակազմ են նաև **մարդ** բառով արտահայտված ձևական ենթակա ունեցող և ընդհանրական դատողություն արտահայտող նախադասությունները՝ **Մարդ** չի հասկանում, թե ինչպես վարվի նման դեպքերում:

Ծանոթություն 2: Միակազմ նախադասությունների հետ (Ձեր տանը շատ հաճելի էր) չպետք է շփոթել այն երկկազմ նախադասությունները,

որոնց ստորոգյալն արտահայտված է միայն **եմ** բայով՝ Նրա ձեռքին նոր ընտրվածների ցուցակն է:

Անդեմ նախադասություն: Դիմավոր բայ չունեցող նախադասություն է, որի գերադաս անդամը արտահայտված է անդեմ բայով կամ այլ խոսքի մասով: Լինում է երկու տեսակ՝ **բայական** և **անվանական**:

Բայական անդեմ նախադասություն: Գերադաս անդամը անորոշ դերբայ է՝ **Պատժել**, բայց **չնվաստացնել**: **Չծխե՛լ**: **Ի՞նչ անել**: Ինչպե՞ս **վարվել** մարմնական վնասվածք ստացած անձի հետ:

Ծանոթություն: Երբեմն հանդիպում են հարակատար դերբայով արտահայտված բայական անդեմ նախադասություններ՝ **Ի՞նչ արած**: Հերն էլ **անիծած**:

Անվանական անդեմ նախադասություն: Անվանական է այն անդեմ նախադասությունը, որի գերադաս անդամը, որպես կանոն, արտահայտված է գոյականով կամ գոյականական դերանունով, երբեմն՝ ածականով, թվականով, մակբայով՝ **1915 թ.:** **Թվական կյանքի:** **Իրիկուն:** **Վերադարձ:** **Առավոտ:** Լինում են նաև անդեմ նախադասություններ, որոնց գերադաս անդամը արտահայտված է վերաբերականով կամ ձայնարկությամբ՝ **Վա՛յ** նրան, ով հոգով աղքատ է: **Ո՛չ** ինքնակոչ նախագահին: **Ա՛յ** քեզ բան... **Ահա** և մեր նոր բնակարանը: **Ահավասիկ** իմ ներդրումը: **Ափսո՛ս, հազա՛ր ափսոս** մեր չիրականացած ծրագրերին:

Միակազմ նախադասությունների հատուկ տեսակ է **բառ–նախադասությունը**, որն արտահայտվում է մեկ բառով: Չպետք է շփոթել մեկ բառով արտահայտված անդեմ կամ դիմավոր միակազմ նախադասությունների հետ (Ցրտում է: Չաղմկել), որոնք կարող են լրացում(ներ) ստանալ (Լեռներում շուտ է մթնում): Բառ–նախադասությունները լրացումներ չեն կարող ստանալ: Բառ–նախադասությունների հետ հաճախ գործածվում է կոչական՝ **Այո՛**,

սիրելի՛ս: **Ո՛չ, տիկի՛ն:** **Անշու՛շտ, պարո՛ն նախարար:** Կարող է գործածվել նաև երկկազմ կամ միակազմ նախադասություն՝ **Ո՛չ, մենք չենք մասնակցելու խորհրդակցությանը:**

Բառ–նախադասությունները ըստ նշանակության լինում են՝
• **հաստատական՝** Անշուշտ: Հարկավ: Ինչպես չէ: Վստահաբար: Միանշանակ: • **ժխտական՝** Ո՛չ: Չէ՛: Բնա՛վ: Վե՛րջ: • Կարող են ունենալ հարցական բնույթ, արտահայտել հարցում՝ **Ո՞չ: Ինչպե՞ս: Այո՞: Մի՞թե:**

Բառ–նախադասություններին առնչակից են ողջույնի, բարևի, շնորհակալության, բարենաղթանքի և նման այլ իմաստ ունեցող արտահայտությունները: Օրինակ՝ **Ողջո՛ւյն**, քաջե՛ր: **Շնորհակալություն**, շատ զգացված եմ: **Բարի ճանապարհ**, տե՛ր իմ: **Կեցցե՛ս**, շնորհավորում եմ հաղթանակդ: **Փառք ու պատիվ** քեզ:

Նախադասության հաղորդակցական–ինչերանգային տեսակները: Նախադասությունները արտահայտում են ոչ միայն միտք, այլև վերաբերմունք իրենց հաղորդած մտքի, տեղեկության նկատմամբ: Այդ վերաբերմունքը կարող է արտահայտվել տարբեր միջոցներով՝ վերաբերականներով ու ձայնարկություններով, հոմանիշների ընտրությամբ, պատկերավորման–արտահայտչական միջոցներով, նախադասության կառուցվածքով, հնչերանգով ևն: Այդ միջոցներից է նախադասության հաղորդակցական–ինչերանգային տեսակի ընտրությունը: Այդ տեսակները չորսն են՝ **պատմողական, հարցական, հրամայական և բացականչական:**

Դրանցից որևէ մեկի ընտրությունը կախված է խոսքային իրարությունից: Հաղորդակցման միևնույն նպատակն ունենալով՝ խոսողն ընտրում է այդ տեսակներից որևէ մեկը՝ հաշվի առնելով խոսակիցների առկայությունը և կազմը, իր և խոսակիցների հարաբերությունը և շատ այլ հանգամանքներ: Օրինակ՝ եթե ուզում եք իմանալ համագործակցության համար Ձեր կողմից կատարված առաջարկները մերժելու պատճառները, կարող եք Ձեր գործընկերոջը դիմել հետևյալ տարբերակներով՝ **1.** Ցանկալի կլիներ իմանալ մերժման պատճառները: **2.** Շա՛տ կցանկանայինք մեր

համագործակցությունը խոչընդոտող պատճառների մասին տեղեկանալ: **3.** Հարգարժան գործընկեր, չէի՞ք ասի՝ ի՞նչ հիմնական պատճառներից դրված էք մերժել համագործակցության մեր առաջարկները: **4.** Հիմնավորե՞ք մերժումը:

Այս տարբերակներից ամեն մեկն ունի իր հնչերանգային առանձնահատկությունը: Առաջին նախադասությունը պատմողական է. այն հնչերանգի առումով չեզոք է, չկան հատուկ ձևով շեշտված բառեր: Երկրորդը բացականչական է. նրանում կա տևական (բացականչական) շեշտով արտասանվող բառ: Երրորդը հարցական է. նրանում կա բարձրացող (հարցական) շեշտով բառ, կա նաև հորդոր: Չորրորդը հրամայական է. նրանում կա սուր (հրամայական) շեշտով արտասանվող բառ:

Նախադասությունների հնչերանգային տեսակները տարբերվում են նաև ստորոգյալի արտահայտությամբ՝ բայի եղանակով և ժամանակով: Լրացուցիչ դեր ունի նաև վերաբերականների, ծայրահարկությունների առկայությունը: Ի դեպ, նախադասության բնույթը չի փոխում կոչականը, որը սովորաբար ունենում է հատուկ շեշտադրում:

Պատմողական նախադասություն: Չեզոք հնչերանգով նախադասություն է: Նպատակն է՝ հաղորդել, պատմել, նկարագրել որևէ բան, դատողություն անել, միտք հաղորդել: Հնչերանգը հանդարտ է, առանց հատուկ (հարցական, տևական կամ սուր) շեշտի: Պատմողական նախադասության ստորոգյալը կարող է արտահայտվել բոլոր եղանակների դրական կամ ժխտական բայաձևերով՝ բացի հրամայականից՝ Հայտնի է, որ դարեր շարունակ ֆրանսերենը եղել է գերիշխող լեզու դիվանագիտական պաշտոնական շփումների ժամանակ: Գնացքը մեկնում է երեկոյան, պիտի շտապենք: Պատմողական նախադասությունը կարող է լինել նաև միակազմ՝ Բաժին 4. հատուկ հանձնարարականներ: Պատմողական նախադասություններում կարող են լինել հաստատական, ժխտական, երկբայական, սաստկական, գիջական, անջատական,

մեկնական և այլ վերաբերականներ՝ **Մի խոսքով**, մեկնում ենք: **Անշուշտ**, սա առաջին փորձն է: **Թերևս** լավ ստացվի:

Հարցական նախադասություն: Հարցական հնչերանգով նախադասությունն է: Նպատակն է՝ հարցի միջոցով տեղեկություն կամ վերաբերմունք ակնկալել, արտահայտել մեղմ խնդրանք, շեշտել որևէ փաստ, իրողություն՝ առանց պատասխան ակնկալելու (ճարտասանական հարց), ինչպես՝ Ի՞նչն է Ձեզ հատկապես մտահոգում: Ո՞վ չգիտի, թե նա ինչ հետին նպատակներ ունի: Չէի՞ք ասի՝ ինչպես հասնեմ քաղաք:

Հնչերանգին բնորոշ է հարցական շեշտը, որ սովորաբար դրվում է բայի կամ հարցական դերանվան, իսկ երբեմն՝ այլ բառի վրա՝ **Դա՞** է հիմնական պատճառը: **Կարո՞ղ եմ** արդյոք խոսել օրենքի մասին, երբ զինված եմ: **Չե՞ք** խոսելու: Եթե բազմակի անդամները միացած են **թե** երկընտրական շաղկապով, ապա վերջինս սովորաբար վերցնում է իրեն հաջորդող անդամի հարցական շեշտը՝ Հարցը այսօ՞ր է քննարկվելու, **թե՞** վաղը: Հարցական նախադասությունը երբեմն կարող է լինել միակազմ՝ Ներե՞լ, ինչի՞ համար:

Բացականչական նախադասություն: Բացականչական հնչերանգով նախադասությունն է: Նպատակն է՝ արտահայտել զգացմունք, հուզական վերաբերմունք, մասնավորապես՝ զարմանք, հիացմունք, ցնծություն, սարսափ, ցավ, ափսոսանք, ցանկություն, ինչպես նաև մաղթանք, ողջույն, կոչ, հանդիմանություն և այլն՝ Ի՞նչ դժբախտություն է չունենալ Աստված: Որքա՞ն շատ են ճշմարտության թշնամիները: Էլ ի՞նչ արահետ, որ տաճար չի տանում: Ա՛յ քեզ բան... Ամո՞թ քեզ...

Հնչերանգին բնորոշ է տևական (բացականչական) շեշտը, որը գրավոր խոսքում նշանակվում է երկարացման նշանով՝ Սև գիշե՛ր, և հուշե՛ր, և խոհե՛ր անհամար... Բացականչական նախադասությունը շատ հաճախ լինում է միակազմ. Տարիներ՛, տարիներ՛...

Հրամայական նախադասություն: Հրամայական հնչերանգով նախադասությունն է: Նպատակն է՝ արտահայտել հրաման,

կոչ, հորդոր, խնդրանք, կարգադրություն, ցուցում, առաջադրանք, թելադրանք, արգելք՝ Ստեղծե՛ք քիչ օրենքներ, բայց հետևե՛ք, որ դրանք կատարվեն: Ոչ մեկին մի՛ ենթարկվիր, բայց և ոչ մեկին էլ քեզ մի՛ ենթարկիր: Եթե դուք ցանկանում եք, որ ձեր գրությունը կարդան, գրե՛ք այն մեկ էջի վրա:

Հնչեթանգին բնորոշ է սուր շեշտը՝ Մի՛ վախեցեք կատարելությունից. դուք դրան չեք հասնի: Ստորագյալը մեծ մասամբ արտահայտվում է հրամայական եղանակի դրական և արգելական ժամանակաձևերով՝ **Մոտեցի՛ր** ինձ: Երբեք **մի՛ գործածիր** այն բառը, որի իմաստը չգիտես:

Կարող է արտահայտվել նաև հետևյալ ժամանակաձևերով.

• **Ենթադրական եղանակի ապառնիի երկրորդ դեմքի դրական կամ ժխտական ձևերով՝** Վաղը կհանդիպե՛ք, կպայմանավորվե՛ք հետագա անելիքների մասին: Չե՛ք պատասխանի որևէ հարցի:

• **Ըղծական եղանակի ապառնիի երկրորդ դեմքի ժխտական ձևերով՝** Չմիջամտե՛ք գործարքին:

• **Սահմանական եղանակի ապառնիի երկրորդ դեմքով՝** արտահայտելով մեղմ հրաման, կարգադրություն՝ «Գնալու եք և մասնակցելու եք այդ արարողությանը»,— կարգադրեց աշխատակազմի ղեկավարը:

• **Ըղծական եղանակի ապառնիի և սահմանական եղանակի անցյալ կատարյալի հոգնակի առաջին դեմքով՝** արտահայտելով կարգադրություն, հրաման թե՛ խոսակցին, թե՛ իրեն՝ խոսողին՝ Իսկ այժմ **անցնե՛նք** մտքերի փոխանակության, այնուհետև՝ քվեարկության:

• **Սահմանական եղանակի ներկայի երկրորդ դեմքով՝** հորդոր. ունի խոսակցական երանգ՝ Վաղը հանդիպում ես գործատուի հետ, ճշտում մեր անելիքները:

Հրամայական նախադասությունները հաճախ լինում են միակազմ՝ **Լռե՛լ: Դո՛ւրս այստեղից:** Հրամայական նախադասություններից բնորոշ են կոչականը, կոչական ձայնարկությունները, **այո՛,**

ո՛չ, չե՛ և այլ վերաբերականներ՝ **Այո՛,** սկսի՛ր: **Ո՛չ,** մի՛ գնա: **Է՛յ, մի՛** աղմկեք:

Ծանոթություն: Ոմանք ընդունում են նաև նախադասության հնչեթանգային ըղծական տեսակ՝ Տամ պարանոցս կարոտին այն երկնուղեշ Ու օրորվեմ եղերական ու անբասիր:

Խառը բնույթի նախադասություններ: Երբեմն միևնույն նախադասության մեջ համատեղվում են տարբեր բնույթի նախադասությունների տարրեր՝ Ծնվեցիր՝ ծնի՛ր՝ կարգն է բնության: Ի՛նչ գեղեցկություն. երբևէ տեսե՞լ ես այսպիսի բան: Այդ տարրերից որևէ մեկը սովորաբար լինում է գերիշխող և որոշում է նախադասության հաղորդակցական–հնչեթանգային տեսակը:

Բարդ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ: Բարդ է երկու կամ ավելի բաղադրիչ նախադասություններից կազմված նախադասությունը: Ի տարբերություն միջանկյալ նախադասություն ունեցող պարզ նախադասության՝ բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունները քերականորեն կապակցված են համադասական կամ ստորադասական հարաբերությամբ: Այդ հատկանիշով էլ որոշվում են բարդ նախադասության տեսակները՝ **համադասական և ստորադասական:**

Բարդ համադասական նախադասություն: Համադասական է այն բարդ նախադասությունը, որը կազմված է իրար համադաս բաղադրիչ նախադասություններից: Դրանցից որևէ մեկը մյուս նախադասության որևէ անդամի դերը չի կատարում, այսինքն՝ քերականորեն կախված չէ մյուս նախադասությունից: Այդպիսի բաղադրիչները կոչվում են համադաս նախադասություններ՝ Սխալվել կարելի է տարբեր կերպ, ճիշտ վարվել կարելի է միայն մեկ ուղիով, այդ պատճառով էլ առաջինը հեշտ է, երկրորդը՝ դժվար: Համադաս նախադասությունները (կամ դրանցից մեկը) կարող են լինել նաև միակազմ՝ Աշուն, և ծնվում են խոհեր:

Երկկազմ համադաս նախադասություններն ունենում են տարբեր ստորոգյալներ, որոնցից ամեն մեկը կարող է ունենալ իր ենթական(երը) և լրացում(ներ)ը՝ **Ի սկզբանե եղել է խոսքը, հետո ծագել է լռությունը**: Այսպիսի կառույցը կոչվում է **տարբեր ենթականերով** բարդ համադասական նախադասություն: Դրանի տարատեսակն է **կրկնվող ենթակայով** բարդ համադասական նախադասությունը, որի բաղադրիչներից ամեն մեկն ունի իր ենթական՝ միևնույն արտահայտությամբ և միևնույն բովանդակությամբ. **Մեկը** շշուկով պատմում է կամաց, **Մեկը** իմ հոգին տանջում է համար:

Եթե կրկնվող ենթական «ընդհանուր է հանված», այսինքն՝ արտահայտված է բաղադրիչ նախադասություններից միայն մեկում և զեղչված է մյուս(ներ)ում կամ էլ զեղչված է բոլորում, ապա այդպիսի բարդ նախադասությունը կոչվում է **ընդհանուր ենթակայով** բարդ համադասական նախադասություն՝ Դիվանագիտության մեջ **ջենտլմենյան համաձայնությունը** կողմերի միջև ձեռք բերված համաձայնությունն է և չունի պաշտոնական փաստաթղթի կարգավիճակ: Ընդհանուր ենթակայով չէ այն բարդ համադասական նախադասությունը, որի բաղադրիչներից առնվազն մեկը միակազմ է՝ **Բավական է**, էլ չեն ուզում ձեզ լսել:

Համադաս նախադասությունների կապակցումը: Բարդ համադասական նախադասության բաղադրիչ նախադասությունները կարող են կապակցվել՝ • **համադասական շաղկապով**՝ Մթնեց, և մենք ճանապարհ ընկանք, • **միայն հնչերանգով**՝ Եկա, տեսա, հաղթեցի:

Մենադիր շաղկապները սովորաբար լինում են համադաս նախադասությունների միջև: Օրինակ՝ Օրենքը դաժան է, **բայց** օրենք է: Սակայն էլ շաղկապը կարող է միջադասվել համադաս երկրորդ նախադասությանը: Օրինակ՝ Մեքենան շարքից դուրս էր եկել, վարորդն էլ ծանր վիրավոր էր:

Անշաղկապ (միայն հնչերանգով միավորված) համադաս նախադասությունների միջև դրվում է ստորակետ կամ միջակետ:

Ստորակետ է դրվում, եթե բաղադրիչ նախադասությունների կապը սերտ է՝ **Օրերը ծուխ կլին, տարին կմնա**:

Միջակետ է դրվում, եթե՝

1. Բաղադրիչ նախադասությունները համեմատաբար ինքնուրույն են՝ **Գործն ավարտվեց. ծանր օր էր**:

2. Բաղադրիչ նախադասություններից երկրորդը (կամ հաջորդները) առաջինի մեկնաբանությունն է (ստորոգական բացահայտումը) կամ հավելյալ տեղեկություն է տալիս առաջինում ասվածի վերաբերյալ՝ **Քննությունն ընթանում է. ևս երկու հոգի հարցաքննվեցին**: Հաղթում է ուժեղը և ոչ թե արդարը. **վա՛յ թույլերին**: Պատմությունը կրկնվում է. **դա նրա թերություններից մեկն է**:

3. Բաղադրիչ նախադասությունների միջև առկա է պատճառի, հետևանքի, հիմունքի հարաբերություն, որ կարելի է արտահայտել **որովհետև, քանի որ, ուստի, հետևաբար, ուրեմն, այնպես որ** շաղկապներով, **այդ պատճառով** շաղկապական բառով: Այսպիսի բարդ նախադասությունները իմաստով հաճախ ստորադասական են, բայց համարվում են համադասական՝ Վատ եմ զգում ինձ. **հավանաբար մրսել եմ**: Եղի՛ր ուժեղ. **թույլերը բարեկամ չունեն աշխարհի վրա**:

Միջակետով անջատված համադաս նախադասություններից երկրորդը երբեմն կարող է սկսվել շաղկապով, որը տվյալ դեպքում ոչ թե քերականական, այլ իմաստային կապ է ապահովում և այնքան սերտ չի դարձնում նախադասությունների կապակցումը, որ միջակետի փոխարեն ստորակետ դրվեր՝ Շատ մի՛ մտահոգվեք կատարվածի համար. **չնայած**, ով գիտի, միգուցե դուք ավելի լավ եք պատկերացնում իրավիճակը:

Համադաս նախադասությունների շարադասությունը կայուն է, եթե նրանց միջև առկա է ժամանակային կամ պատճառահետևանքային հարաբերություն՝ Անցան օրեր մեկ-մեկ, Անցան օրեր զույգ-զույգ, ճաշակեցինք և՛ սեր, և՛ տառապանք, և՛ սուգ: Այլ դեպքերում համադաս նախադասությունների շարադասությունը ազատ է, թեև կարող է ունենալ ոճական արժեք՝ ազդելով տրամա-

բանական շեշտի վրա՝ Փղոսկրե անիվներով հեռանում է բախտն օրեցօր, Մթնում է դեմքն արեգակի, խամրում է հավքը ոսկեցող...

Բարդ ստորադասական նախադասություն: Ստորադասական է այն բարդ նախադասությունը, որի բաղադրիչ նախադասություններից մեկը կատարում է մյուսի որևէ անդամի դերը, այսինքն՝ քերականորեն կախված է մյուս նախադասությունից: Այդպիսի հարաբերությամբ կապված բաղադրիչ նախադասություններից մեկը (ստորադասական նախադասությամբ արտահայտված լրացում ունեցողը) կոչվում է **գլխավոր** կամ **գերադաս**, մյուսը՝ **երկրորդական** կամ **ստորադաս**: Ընդ որում՝ երկրորդական (ստորադաս) նախադասությունը կարող է լինել գլխավորի (գերադասի) ենթական կամ ստորոգելին կամ էլ որևէ լրացում: Գերադաս (գլխավոր) նախադասությունը կարող է լինել միակազմ՝ **Վստահել միայն նրանց**, ովքեր դրան արժանի են: Երկրորդական (ստորադաս) նախադասությունը կարող է լինել կոչականի, վերաբերականի կամ էլ ծայնարկության լրացումը: Օրինակ՝ **Վա՛յ այն վարժապետին**, որ չի սովորում աշակերտներից:

Ծանոթություն: Ստորադաս (երկրորդական) նախադասությունը երբեմն լրացնում է ոչ թե գերադասի մեկ անդամին, այլ ամբողջ գերադաս նախադասությանը՝ որպես նրանից բխող հետևանք՝ Որդին երկար ժամանակ լուռ էր, ինչն սկսեց անհանգստացնել ծնողներին: Միակ վկան համառոտ են լռում էր, մի բան, որ շատերի համար անսպասելի էր:

Գերադաս և ստորադաս նախադասությունների կապակցումը: Բարդ ստորադասական նախադասության բաղադրիչները սովորաբար կապակցվում են՝ **1. ստորադասական շաղկապներով կամ դրանց դեր կատարող այլ բառերով՝ շաղկապական բառերով, ինչպես նաև հարաբերյալներով՝** ես գիտեմ, **թե** ունից փախչեմ, բայց չգիտեմ, **թե** ում հետևեմ: Մեծությունը միշտ չարիք է դառնում, **երբ** բաժանվում է գուրջ նրանից: Մենք գիտենք, որ հոսանքի աշխատանքը հաշվում են $A = UIt$ բանաձևով, **2. միայն հնչերանգով**, այսինքն՝ առանց շաղկապի՝ Վերջում հայտարար-

վեց. «Հաջորդ ժողովը՝ մեկ ամսից», **3. շաղկապի զեղչումով՝** (Եթե) Չեք ուզում ծանրաբեռնել ձեր հիշողությունը՝ ասե՛ք ճշմարտությունը:

Շաղկապներն ու շաղկապական բառերը սովորաբար լինում են երկրորդական նախադասության սկզբում, սակայն երբեմն կարող են միջադասվել նրան: Օրինակ՝ Իշխանությունը **եթե** ականջ չունի լսելու համար, ուրեմն նա գլուխ չունի կառավարելու համար:

Ծանոթություն: **Ասես, կարծես** շաղկապական բառերը սոսկ վերաբերականներից տարբերվում են նրանով, որ սովորաբար լինում են երկրորդական նախադասության սկզբում և գլխավոր նախադասության մեջ ունենում են (կամ կարելի է վերականգնել) **այնպես** կամ **այնքան** հարաբերյալը: Օրինակ՝ Երգեց (այնպես), **ասես** աղբյուրն էր կարկաչում: **Թե չէ** ժամանակի շաղկապը լինում է երկրորդական նախադասության վերջում: Այդ պատճառով էլ **թե չէ**-ով երկրորդականները գլխավորի նկատմամբ լինում են առաջադաս, երբեմն էլ՝ միջադաս (Ամպեց **թե չէ**, տեղատարափը սկսեց): Հենց իր դիրքով էլ ստորադասական **թե չէ** ժամանակի շաղկապը տարբերվում է համադասական **թե չէ** ներհակական շաղկապից, որը լինում է երկրորդ բաղադրիչ նախադասության սկզբում՝ Լռի՛ր, **թե չէ** ստիպված կլինեմ դուրս հրավիրել: Սրանց հետ կարող է շփոթվել նաև **թե չէ** նախադասությունը, որը երկու կողմից տրոհվում է. Չկարողացա պարզել՝ հանդիպում լինելո՞ւ է, **թե՞ չէ:**

Գլխավոր և երկրորդական նախադասությունների շարահասությունը: Բարդ ստորադասական նախադասության բաղադրիչները շաղկապով կամ շաղկապական բառով կապակցվելու դեպքում մեծ մասամբ ունենում են ազատ շարահասություն: Ընդ որում՝ ստորադաս նախադասությունը գլխավորի համեմատ կարող է լինել առաջադաս, միջադաս կամ վերջադաս: Օրինակ՝ **երբ գործն ավարտենք**, մենք կգանք: Մենք կգանք, **երբ գործն ավարտենք:** Մենք, **երբ գործն ավարտենք**, կգանք:

Ձեռքված շաղկապով կամ շաղկապական բառով նախադասությունները (բացի **թե-ից**) ունեն կայուն շարահասություն. • **եթե-ի**

և երբ—ի զեղչումով ստորադաս նախադասությունները լինում են միայն առաջադաս՝ (եթե) Պարտք եմ՝ միայն այս հողին եմ պարտք: (Երբ) Ասելու ոչինչ չունենա՝ լռի՛ր: • **որ—ի զեղչումով ստորադաս նախադասությունները լինում են միայն վերջադաս՝** Ասում են՝ [որ/թե] դեռ ժամանակ ունենք: Որոշիչ և բացահայտիչ երկրորդական նախադասությունները չեն կարող լինել առաջադաս, քանի որ պարտադիր հաջորդում են լրացյալին՝ Վերցրի մատյանը, **որ դրված էր սեղանին:** Հետո, **երբ մթնեց**, արդեն տանն էինք:

Ստորադաս նախադասությունը գլխավորից անջատվում է ստորակետ(եր)ով, եթե շաղկապի զեղչում չկա:

Գլխավոր նախադասության մեջ հարաբերյալը պարտադիր չէ այն դեպքում, երբ հոլովով համաձայնեցված է հարաբերական բառի հետ, և վերջինս միայնակ էլ հուշում է ստորադաս նախադասության բնույթը՝ Հրավիրեցի (նրանց), ում հարմար գտա:

Հարաբերյալը պարտադիր է, երբ՝ • իմաստով չի հարաբերակցվում կամ հոլովով չի համաձայնում հարաբերյալի հետ, և ինքն է հուշում ստորադաս նախադասության բնույթը՝ **Այնքան** բացատրեց, որ հասկացա: Ձգուշացի՛ր **նրանցից**, ովքեր սիրում են հաճոյախոսել: • ստորադաս նախադասության և դրա անմիջական լրացյալի միջև կան այնպիսի բառեր, որոնք կարող են լրացյալ կարծվել՝ Ինձ մտահոգում է **այն** երիտասարդի վիճակը, որ վատառողջ էր: Այսպիսով՝ հարաբերյալը (գլխավոր նախադասության այն ձևական անդամը, որի բովանդակությունն արտահայտված է երկրորդական նախադասությամբ) նշում է ստորադաս նախադասության բնույթը: Հարաբերյալի բացակայության դեպքում այդ դերը կատարում է հարաբերական դերանունը կամ շաղկապը:

Ստորադաս նախադասության տեսակները: Ստորադաս նախադասությունը կարող է կատարել գլխավոր նախադասության ցանկացած անդամի դեր (ներառյալ ենթական և ստորոգելին)՝ բացի պարզ ստորոգյալից և հանգույցից: Այդ նախադասությունները պատասխանում են նույն հարցին, ինչ տվյալ դերը կատարող սո-

վորական (բառով կամ բառակապակցությամբ արտահայտված) անդամը:

Ենթակա ստորադաս նախադասություն: Գերադաս նախադասության հետ կապվում է սովորաբար **որ, թե** շաղկապներով, **ով, ինչ, որ** շաղկապական բառերի տարբեր հոլովածներով, երբեմն՝ **երբ—ով:** Գերադասի մեջ կարող է ունենալ **նա (նրանք), այն** կամ **այն ամենը** հարաբերյալը (ձևական ենթական): Օրինակ՝ **Ով** թշնամիների հետ հաշտվում է, բարեկամների գլխացավանքը պիտի քաշի: Հայտնի դարձավ, **որ** դեպքը տեղի է ունեցել ուշ գիշերին: Դիվանագիտական հարաբերություններում վարվեցողության նորմերի խախտում է, **երբ** անձնական նամակին պատասխանում են վերբալ հայտագրով: Կրկնակի է արված այն, **ինչ** լավ է արված:

Գերադաս նախադասության ստորոգյալը սովորաբար լինում է բաղադրյալ կամ արտահայտվում է կրավորական կամ չեզոք սեռի բայով, երբեմն՝ նաև ներգործական սեռի բայով: Օրինակ՝ **Ով** օրենքից ավելի խիստ է, **նա բռնակալ է:** Շուտով **պարզվեց**, որ ձերբակալվածը վաղուց հետախուզման մեջ էր: **Թվաց՝** պատի տակով մի ստվեր անցավ: **Սխալ է**, երբ քեզ ավելի նշանակալից ես կարծում, քան կաս իրականում:

Ստորոգելի ստորադաս նախադասություն: Գերադաս նախադասության հետ կապվում է սովորաբար **ով, ինչ, որ** շաղկապական բառերի տարբեր հոլովածներով, **որ, թե** շաղկապներով, **ինչպես, ինչքան** հարաբերականներով: Որպես կանոն՝ ունենում է հարաբերյալ (ձևական ստորոգելի), որն արտահայտվում է ցուցական տարբեր դերանուններով: Օրինակ՝ Լավ կառավարությունն **այն** է, որտեղ ավելի շատ օրենքն է խոսում: Փաստերն **այնպիսին** են, որ հիմք չեն տալիս գործ հարուցելու: Բերվածը **այնքան** է, որ կբավականացնի բոլորին: Սպառնալիքը **ոչ այլ ինչ** է, քան վնաս պատճառելու հնարավորությամբ մարդուն վախեցնելը:

Հազվադեպ հանդիպում են գլխավորին առանց հարաբերյալի կապված ստորոգելի երկրորդական նախադասություններ: Օրինակ՝ Ես կհամարեմ, **թե գրպանիցս փող եմ կորցրել:**

Որոշիչ ստորադաս նախադասություն: Գերադաս նախադասության հետ կապվում է սովորաբար **որ**, երբեմն՝ **ինչպիսի, որքան, ինչքան, երբ, որտեղ, ուր** շաղկապական բառերով, **որ, թե** շաղկապներով: Կարող է ունենալ **այն, այնպիսի, այնքան** և այլ հարաբերյալներ: Օրինակ՝ Հռչակագիրը սովորաբար հանդիսավոր ձևով ներկայացվող փաստաթուղթ է, **որի** հիմքում ընկած է փաստերի և սկզբունքների հռչակումը: Անցան **այնքան** տարիներ, **որ** մոռացվեցին դեպքերը:

Հատկացուցիչ ստորադաս նախադասություն: Գերադաս նախադասության հետ կապվում է սովորաբար **ով, ինչ, որ** շաղկապական բառերի տարբեր հոլովածներով, նաև **որ, թե** շաղկապներով: Մեծ մասամբ ունենում է **նրա (նրանց)** հարաբերյալը (ծևական հատկացուցիչ): Օրինակ՝ Դատարանը վերջում լսեց **նրանց** ցուցմունքը, ովքեր դեպքերի անմիջական ակամատեսներն էին:

Բուն բացահայտիչ ստորադաս նախադասություն: Նման է որոշիչ երկրորդական նախադասությանը, բայց, ի տարբերություն նրա, դեմքով կարող է համաձայնել լրացյալին, որը կարող է լինել անծնական դերանուն: Օրինակ՝ **Դու, որ** գործից անտեղյակ ես, ինչո՞ւ ես խոսում: Գլխավոր նախադասությանը հաճախ կապվում է **որ(ը) (որոնք)** հարաբերականով և ունենում է բաղադրյալ ստորոգյալ, որի ստորոգելին արտահայտված է որոշյալ առունով գոյականով կամ գոյականաբար առնված այլ բառով: Օրինակ՝ Ազատագրվեց Շուշին, որ հայոց **բնօրրանն է եղել**:

Ծանոթություն: Գոյականին լրացնող բուն բացահայտիչ ստորադաս նախադասությունները հաճախ շատ դժվար է տարբերակել որոշիչ ստորադասներից: Օրինակ՝ **Վահանը, որ քո փաստաբանն է**, դեռ չի հասցրել ծանոթանալ գործին: Դրանք պիտի համարել և՛ որոշիչ, և՛ բացահայտիչ ստորադաս նախադասություններ:

Մասնական բացահայտիչ ստորադաս նախադասություն: Խիստ սակավադեպ է: Պարտադիր ունենում է հարաբերյալ, որը լրացյալին միացած է **որպես կամ իբրև** կապով: Գերադաս նա-

խադասության հետ կապվում է **ինչ, որ** շաղկապական բառերով: Օրինակ՝ **Դու՝ որպես այն, ինչ** ներկայանում ես, մեզ համար ընդունելի չես:

Մասնավորող պարագայական բացահայտիչ ստորադաս նախադասություն: Լրացյալը գլխավոր նախադասության որևէ պարագա է, սովորաբար՝ տեղի կամ ժամանակի: Օրինակ՝ **Երեկոյան, երբ** փոքր-ինչ մթնեց, թուխալը պատեց շրջապատը: **Բարձունքի վրա**, որտեղ հինավուրց վանքն էր, կանգ առավ հեծյալների մի խումբ: **Գերադաս** նախադասության հետ կապվում է սովորաբար **երբ, որտեղ, ուր** շաղկապական բառերով: Երբեմն կարող է ունենալ հարաբերյալ: Օրինակ՝ **Գիշերը՝ այն պահին, երբ** տանից դուրս էի գալիս, լսվեցին կրակոցի ծայներ:

Ուղիղ խնդիր ստորադաս նախադասություն: Գերադաս նախադասության հետ կապվում է **որ, թե** շաղկապներով, **ով, ինչ, որ** շաղկապական բառերի տարբեր հոլովածներով, երբեմն՝ **երբ** շաղկապական բառով: Կարող է ունենալ **նրան(ց), նա, նրանք, այն** կամ **այն ամենը**, երբեմն էլ՝ **նույնը** կամ **ամեն ինչ** հարաբերյալը (ծևական ուղիղ խնդիրը): Գերադաս նախադասության այն անդամը (ստորոգյալը կամ դերբայով ձևավորված այլ անդամ), որին լրացնում է ստորադաս նախադասությունը, **պարտադիր լինում է ներգործական սեռի բայ**: Օրինակ՝ Եկե՛ք միասին չհարգենք նրանց, ովքեր սերտում են և ոչ թե դատում: Կա՛մ լռի՛ր, կա՛մ ասա՛ այն, ինչ լավ է լռելուց: Թե ինչ է եղել հետո, ոչ ոք չգիտի:

Ծանոթություն 1: Ասացական (պատմել, վիճել, խոսել, գրել, զեկուցել, հայտարարել, հարցնել ևն) և մտածական (մտածել, խորհել, հիշել, մոռանալ ևն) բայերը ուղիղ խնդրի փոխարեն կարող են ունենալ վերաբերության խնդիր երկրորդական նախադասություն: Հարաբերյալի բացակայության դեպքում հաճախ շատ դժվար է որոշել՝ այդպիսի բայի լրացում ստորադասը ուղի՞ղ խնդիր է, թե՞ վերաբերության անուղղակի խնդիր: Օրինակ՝ Ձեկուցեց, որ ամեն ինչ կարգին է: Մտածում էր, թե հետո ինչ է անելու:

Ճանոթություն 2: Առաջարկել, խնդրել, ցանկանալ, ուզել, հրամայել, կարգադրել, խոստանալ, հանձն առնել և մի քանի այլ բայերի պահանջած ուղիղ խնդիր ստորադաս նախադասությունները (որ ունենում են ըղծական եղանակի բայածներով արտահայտված ստորոգյալ) հաճախ շփոթվում են նպատակի պարագայի հետ և որ շաղկապի փոխարեն՝ հանդիպում որպեսզի շաղկապով: Օրինակ՝ Հրամայեց, որպեսզի (← որ) գործը առաջ շարժվի: Ցանկանում եմ, որպեսզի (← որ) բարեհաջող տեղ հասնեք: Սրանք մերժելի ձևեր են:

Անուղղակի խնդիր ստորադաս նախադասություն: Գերադաս նախադասության հետ կապվում է որ, թե շաղկապներով, ով, ինչ, որ շաղկապական բառերի տարբեր հոլովածներով: Գլխավոր նախադասության մեջ կարող է ունենալ այն դերանվանք կամ նացուցական դերանվան տարբեր հոլովներով արտահայտված հարաբերյալ: Այդ հոլովը կախված է տվյալ խնդրի բնույթից (անջատման՝ բացառական, միջոցի՝ գործիական ևն):

1. Ներգործող խնդիր ստորադաս նախադասություն: Գլխավոր նախադասության մեջ ունենում է նրան(ց)ից, այն բանից, նրան(ց) կողմից, նրան(ց)ով, այն բանով հարաբերյալներից որևէ մեկը: Օրինակ՝ Հալածվում է նրանց կողմից, ովքեր ժամանակին իր կողքին էին: Մխիթարվում էր նրանցով, ովքեր սիրո հավաստիացումներ էին տալիս: Պարզատրվեց նրանցից, ովքեր իրենց գործի լավ գիտակներ էին:

Գերադաս նախադասության այն անդամը (ստորոգյալը կամ դերբայով ձևավորված այլ անդամ), որին լրացնում է ստորադաս նախադասությունը, պարտադիր լինում է կրավորական սեռի բայ:

2. Հանգման խնդիր ստորադաս նախադասություն: Սովորաբար լինում է վերջադաս: Գլխավոր նախադասության մեջ կարող է ունենալ նրան(ց), այն բանին, այն ամենին հարաբերյալներից որևէ մեկը: Օրինակ՝ Մարդիկ հաճույքով հավատում են նրան, ինչին ձգտում են: Նայում էի, թե ինչ ջանասիրությամբ էր նա աշխատում այգում:

3. Անջատման խնդիր ստորադաս նախադասություն: Գլխավոր նախադասության մեջ կարող է ունենալ նրան(ց)ից, այն բանից, այն ամենից հարաբերյալներից որևէ մեկը: Օրինակ՝ Հաջողությունների կախված են նրանից, թե քեզ ինչպես կդրսևորես բանակցություններում: Հեռու է նրանից, ինչ դու ես մտածում: Ջուրկ է այն ամենից, ինչ անհրաժեշտ է բարեկեցիկ կյանք վարելու համար:

Անջատման խնդիր ստորադաս նախադասությունը երբեմն կարող է լինել առանց հարաբերյալի: Օրինակ՝ Շատ էինք վախենում, թե անձրև կգա: Բավարարված կլինեմ, որ դու քո սխալը ընդունես: Այսպիսի նախադասությունները ունենում են նաև պատճառի պարագայի իմաստ:

4. Միջոցի խնդիր ստորադաս նախադասություն: Գլխավոր նախադասության մեջ կարող է ունենալ նրան(ց)ով, այն բանով, այն ամենով հարաբերյալներից որևէ մեկը: Օրինակ՝ Բավարարվիր այն ամենով, ինչ ունես: Երիտասարդությունը բախտավոր է նրանով, որ ապագա ունի: Հարաբերյալ կարող է և չլինել՝ Հպարտ եմ, որ հայ եմ: Դու շատ ճիշտ արեցիր, որ ծրագիրդ ոչ մեկի չհայտնեցիր:

5. Վերաբերության խնդիր ստորադաս նախադասություն: Գլխավոր նախադասության մեջ կարող է ունենալ նրա(նց) մասին, նրան(ց)ից, այն բանից, այն ամենից, այն բանում հարաբերյալներից որևէ մեկը: Օրինակ՝ Տարակուսում էր, թե մի օր ազատության մեջ կհայտնվի: Ջրուցում էինք այն ամենից, ինչ մեզ հետաքրքրում էր: Հին ժամանակներում համոզված էին, որ մարդու աջ ուսի վրա հրեշտակն է, ձախի վրա՝ սատանան: Սիրում էր խոսել նրանցից, ովքեր իրենց գորավիզ են եղել պատերազմի դաշտում:

Պարագա ստորադաս նախադասություն: Գլխավոր նախադասության մեջ կարող է ունենալ մակբայական որևէ դերանվանք արտահայտված հարաբերյալ: Դերանվան ընտրությունը կախված է պարագայի բնույթից: Երբեմն հարաբերյալի դեր են կատարում այն կամ նա դերանվան և որևէ մակբայի կամ կապի կապակցու-

թյուն (այն ժամանակ, այն բանի համար, այն նպատակով, նրա համար, նրանց մասին, այն բանից հետո ևն):

1. Տեղի պարագա ստորադաս նախադասություն: Գերադաս նախադասության հետ կապվում է որտեղ (որտեղից, որտեղով) կամ ուր շաղկապական բառով: Գլխավոր նախադասության մեջ կարող է ունենալ այնտեղ, այնտեղից, այնտեղով, դեպի այնտեղ, դեպի այն, դեպի նա, դեպի նրանց հարաբերյալներից որևէ մեկը: Օրինակ՝ Որտեղ ուժն իրավացի է, այնտեղ իրավունքն անուժ է: Հավաքվեցինք այնտեղ, որտեղից պիտի ճանապարհ ընկնեինք:

Ծանոթություն: Որտեղ կամ ուր հարաբերական դերանունով տեղի պարագա ստորադաս նախադասությունը, որը լրացնում է բայական անդամին, չպետք է շփոթել՝ • այն մասնավորող պարագայական բացահայտիչ ստորադաս նախադասության հետ, որը լրացնում է գլխավոր նախադասության տեղի պարագային՝ Շարժվեցինք դեպի քաղաք, ուր մեզ սպասում էին: • այն որոշիչ ստորադաս նախադասության հետ, որը լրացնում է գլխավոր նախադասության՝ տեղ ցույց տվող գոյականով արտահայտված որևէ անդամի՝ Դա մի չնաշխարհիկ վայր էր, ուր միայն ծաղիկներն էին թագավորում: Քայլում էի այն ծառուղիով, որտեղով մեկ էլ տասը տարի առաջ էի անցել: • այն ստորոգելի ստորադաս նախադասության հետ, որին գլխավոր նախադասության մեջ սովորաբար համապատասխանում է տեղ ցույց տվող դերանունով արտահայտված ձևական ստորոգելի հարաբերյալը՝ Մեր որոնածը այնտեղ է, որտեղ ոչ ոք ոտք չի դրել:

2. Ժամանակի պարագա ստորադաս նախադասություն: Գերադաս նախադասության հետ կապվում է հենց (որ), թե չէ, բանի (դեռ), նախքան, մինչ(և), մինչդեռ, ինչ, որ շաղկապներով, երբ շաղկապական բառով: Գլխավոր նախադասության մեջ երբեմն կարող է ունենալ այն ժամանակ, այն բանից հետո, այն բանից առաջ, նախքան այն հարաբերյալներից որևէ մեկը: Օրինակ՝ Երբ բռնությունը շեմից ներս է մտնում, արդարությունը թողնում, հեռանում է: Հենց որ լույսը ծագում է, չքանում է խավարը:

Նախքան կդատապարտես, միշտ մտածիր՝ չէր կարելի արդյոք արդարացում գտնել: Ինչ ԱՄՆ–ից վերադարձել է, չեմ տեսել նրան:

Ծանոթություն 1: Երբ հարաբերական դերանունով ժամանակի պարագա ստորադաս նախադասությունը, որը լրացնում է բայական անդամին և պատասխանում ե՞րբ հարցին, չպետք է շփոթել՝ • այն ենթակա ստորադաս նախադասության հետ, որը կապակցվում է ստորոգյալին և պատասխանում ի՞նչ հարցին՝ Հաճելի է, երբ թեզ գովաբանում են: • այն ուղիղ խնդիր ստորադաս նախադասության հետ, որը լրացնում է ներգործական բայով արտահայտված անդամին և պատասխանում ի՞նչ հարցին՝ Չեմ սիրում, երբ շատախոսում են: • այն մասնավորող պարագայական բացահայտիչ ստորադաս նախադասության հետ, որը լրացնում է գլխավոր նախադասության ժամանակի պարագային՝ Եկան երեկոյան, երբ արդեն մթնում էր: • այն որոշիչ ստորադաս նախադասության հետ, որը լրացնում է գլխավոր նախադասության՝ ժամանակ ցույց տվող գոյականով արտահայտված որևէ անդամի՝ Հանդիպեցինք այն օրերին, երբ կատարվածի մասին ոչ ոք չգիտեր: • այն ստորոգելի ստորադաս նախադասության հետ, որին գլխավոր նախադասության մեջ սովորաբար համապատասխանում է ժամանակի կապով և դերանունով արտահայտված ձևական ստորոգելի հարաբերյալը՝ Հատուցման պահը այն ժամանակ է, երբ դեմ առ դեմ կանգնում ես խղճիդ առաջ:

Ծանոթություն 2: Մինչ(և) շաղկապով ժամանակի պարագա ստորադաս նախադասությունը, որը լինում է սովորաբար առաջադաս և կարող է ունենալ այն ժամանակ հարաբերյալը գլխավոր նախադասության մեջ, չպետք է շփոթել նույն շաղկապով չափի պարագա ստորադաս նախադասության հետ, որը լինում է ցանկացած դիրքում և կարող է ունենալ այնքան (ժամանակ), այնքան ժամանակով կամ այնքան ժամանակում հարաբերյալը գլխավոր նախադասության մեջ: Օրինակ՝ Սպասեցի (այնքան), մինչև նա դուրս եկավ (չափի պարագա): (Այն ժամանակ) Մինչ(և) նա գլխի կընկներ, մենք դուրս նետվեցինք գնացքից (ժամանակի պարագա): (Այնքան ժամանակում) Մինչև դուք տեղ հասնեք, ես կգամ (չափի պարագա):

3. Ձևի պարագա ստորադաս նախադասություն: Գերադաս նախադասության հետ կապվում է **ինչպես, ոնց որ, ասես (թե)** կամ **կարծես (թե)** շաղկապական բառով, որ, երբեմն էլ՝ **թե** շաղկապով: Գլխավոր նախադասության մեջ կարող է ունենալ **այնպես, այն ձևով** հարաբերյալներից որևէ մեկը: Օրինակ՝ Դու այնպես ես սիրում, **կարծես թե** չես սիրում: Արեցի այնպես, **ինչպես** հանձնարարել էիք:

Ծանոթություն: Երբեմն հանդիպում են **ինչպես**–ի փոխարեն **որպես** շաղկապական բառով ձևի պարագա երկրորդական նախադասություններ, որոնցում **որպես**–ի գործածությունը հնացած է: Օրինակ՝ **Որպես** լեռն է մեր պայծառ տեսել հազար ծյուն, **Այնպես** նոր չեն մեզ համար դավ ու դառնություն:

Ինչպես շաղկապական բառով ձևի պարագա ստորադաս նախադասությունները հաճախ լինում են զեղչված ստորոգյալով, որը վերականգնման կարիք չի զգում: Օրինակ՝ Շաչում էր, **ինչպես ուշ աշնան հողմը**:

Ծանոթություն: Ձեղչված ստորոգյալով և **ինչպես** շաղկապական բառով ձևի պարագա երկրորդական նախադասությունը ճանաչելու համար պետք է նկատի ունենալ, որ այն իր կազմում ունենում է բայական անդամի լրացում և կամ որոշյալ առումով ենթակա և կարող է ստանալ **այնպես** հարաբերյալ՝ (**Այնպես**), **ինչպես ամեն տարի**, ահա նրանք ձիերով եկել են սարը:

4. Չափի պարագա ստորադաս նախադասություն: Գերադաս նախադասության հետ կապվում է **որքան(ով), ինչքան(ով)** կամ **քանի** շաղկապական բառով, **մինչև** կամ **որ** շաղկապով: Գլխավոր նախադասության մեջ կարող է ունենալ **այնքան(ով), այնչափ, այն աստիճան(ի), այնքան ժամանակ(ով), նույնքան** հարաբերյալներից որևէ մեկը: **Այնքան, նույնքան** հարաբերյալների հետ կարող են գործածվել նաև **ինչպես, ասես, կարծես** շաղկապական բառերը: Օրինակ՝ Քանի գնում, **այնքան** ավելի էր

մռայլվում: Խոսի՛ր, **որքան** սիրտդ ուզում է: Այն աստիճան հուզվեց, **որ** խոսել չէր կարողանում:

Ծանոթություն: **Մինչև** շաղկապով չափի պարագա ստորադաս նախադասությունները նման են ժամանակի պարագայի և դրանից դժվար են տարբերվում մանավանդ հարաբերյալի բացակայության դեպքում: Օրինակ՝ Խաղում էինք բակում, **մինչև** արևը մայր կմտներ: Սպասեցինք այնքան, **մինչև** ինքնաթիռը օդ բարձրացավ:

Որքան, երբեմն էլ **ինչպես** շաղկապական բառով և **քան** համեմատության շաղկապով ձևի պարագա ստորադաս նախադասությունները հաճախ լինում են զեղչված ստորոգյալով, որը վերականգնման կարիք չի զգում: Օրինակ՝ Ավելի գեղեցիկ ես, **քան արեգակը**: Ավելի դժվար ոչինչ չկա, **քան վատ դաստիարակված մարդուն վերադաստիարակելը**:

Ծանոթություն 1: **Որքան, ինչքան** շաղկապական բառերով և կամ **այնքան** հարաբերյալով գլխավորին կապված ձևի պարագա երկրորդական նախադասությունների հետ չպետք է շփոթել **որքան, ինչքան, այնքան** դերանուններով բացականչական պարզ նախադասությունները: Օրինակ՝ Այդ օրերին որքան երջանիկ էի ես: Այնքան լավ զգացի ինձ՝ քեզ տեսնելով:

Ծանոթություն 2: **Այնքանով... որքանով** կադապարով կառուցված նախադասությունների երկրորդական նախադասությունը հաճախ պատճառի կամ հիմունքի պարագա է:

5. Պայմանի պարագա ստորադաս նախադասություն: Գերադաս նախադասության հետ կապվում է **եթե, թե, միայն (թե), նայած (թե), եթե ... ապա, եթե ... ուրեմն** շաղկապներով: Գլխավոր նախադասության մեջ երբեմն կարող է ունենալ **այն պայմանով, այն դեպքում, այն ժամանակ** հարաբերյալներից որևէ մեկը: Օրինակ՝ Բանակցելիս գերմանացիները չեն ստորագրի համաձայնագիր, **եթե վերջնական երաշխիքներ չունեն այդ համաձայնագիրը կյանքի կոչելու հարցում**: Պարապ մի՛ մնա, **եթե**

նույնիսկ հարուստ ես: Թե ցանկանում եք ձեր ուղեղը ճիշտ աշխատի, հետևե՛ք ձեր մարմնին: Ուզում ես ցանկալի հյուր լինել՝ քի՛չ գնա բարեկամներիդ տուն:

6. Նպատակի պարագա ստորադաս նախադասություն: Գերադաս նախադասության հետ կապվում է **որպեսզի, որ, ինչ է թե, թե ինչ է** շաղկապներով: Գլխավոր նախադասության մեջ կարող է ունենալ **այն նպատակով, նրա համար** հարաբերյալներից որևէ մեկը: Օրինակ՝ **Ջոհաբերի՛ր, որ զոհ չդառնաս:** Մենք դատողություններ ենք անում առաքինության մասին նրա համար, **որ դառնանք լավ մարդիկ: Թե ինչ է պրծներ պատասխանավությունից, ամեն ստոր քայլի դիմեց: Որպեսզի չարը հաղթի, բավական է, որ բարի մարդիկ ոչինչ չանեն:**

7. Պատճառի պարագա ստորադաս նախադասություն: Գերադաս նախադասության հետ կապվում է **որովհետև, քանի որ, որ, թե որ, (նա)մանավանդ որ, քանի որ... ուրեմն, որովհետև... ուստի, քանի որ... հետևաբար, երբեմն՝ թե** շաղկապներով: Գլխավոր նախադասության մեջ երբեմն կարող է ունենալ **այն պատճառով, շնորհիվ այն բանի, այն բանի հետևանքով, նրա համար, այն բանի համար, նրանից, այն բանից** հարաբերյալներից որևէ մեկը: Օրինակ՝ **Տխրել էի, որ այդպես պատահեց:** Դժվար էր հանցանշաններ հայտնաբերելը, **մանավանդ արդեն մթնում էր:**

8. Հիմունքի պարագա ստորադաս նախադասություն: Նման է պատճառի պարագա ստորադաս նախադասությանը: Գերադաս նախադասության հետ կապվում է **որովհետև, քանի որ** շաղկապներով, **չէ՞ որ, ինչ, որ** շաղկապական բառերով: Գլխավոր նախադասության մեջ երբեմն կարող է ունենալ **այն բանի համաձայն, այն հիմունքով** հարաբերյալներից որևէ մեկը: Օրինակ՝ **Չգնացի, քանի որ հոգնած էի:** Աշխատանքից հեռացրին այն բանի հիման վրա, **որ չարաշահումներ էր թույլ տվել:**

9. Չիջման պարագա ստորադաս նախադասություն: Գերադաս նախադասության հետ կապվում է **թեև, թեկուզ(և), թե-**

պետ(և), չնայած, փոխանակ, որ, ինչ էլ (որ), որքան (էլ), ինչքան (էլ), որտեղ էլ, ուր էլ, թեև... բայց, թեպետ... սակայն, թեպետ(և)... այնուամենայնիվ, չնայած... այնուհանդերձ, չնայած որ... բայց, թեկուզ... բայց (և այնպես) և նման այլ շաղկապներով: Գլխավոր նախադասության մեջ երբեմն կարող է ունենալ **չնայած այն բանին, չնայած նրան, հակառակ այն բանին** հարաբերյալներից որևէ մեկը, **մեկ է կամ միևնույնն է** զիջական վերաբերականը: Օրինակ՝ **Թեպետ դարեր շարունակ պետականություն չենք ունեցել, բայց ունեցել ենք գոյատևելու և հաղթելու հզոր կամք: Թեև ժամը անպատեհ է, բայց և այնպես չէի ուզի գործը կիսատ թողնել:**

Բարդ ստորադասական նախադասության վերածումը պարզի: Երկրորդական նախադասությունները հաճախ ունենում են իրենց հոմանիշ դերբայական դարձվածները: Հետևաբար որոշակի կանոններով մեծ մասամբ հնարավոր է դերբայական դարձվածով պարզ նախադասությունը վերածել բարդ ստորադասական նախադասության, հաճախ էլ՝ հակառակը՝ բարդ ստորադասական նախադասությունը վերածել պարզի: Այդ երկու հոմանիշ շարահյուսական կառույցները նույն միտքն են արտահայտում՝ տարբերվելով միայն ոճականորեն, մտքի նրբերանգներով:

Բարդ ստորադասական նախադասությունը պարզեցնելու համար կատարվում է հետևյալը.

1. Դերբայի է վերածվում ստորադաս նախադասության պարզ ստորոգյալը կամ բաղադրյալ ստորոգյալի հանգույցը (բացի որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ, երբեմն էլ ենթակա, ստորոգելի երկրորդական նախադասությունների բաղադրյալ անվանական ստորոգյալի էական բայից, որը հանվում է), այսինքն՝ մեծ մասամբ նախադասությունը վերածվում է դերբայական դարձվածի:

2. Շաղկապները կամ շաղկապական բառերը՝ • կա՛մ դուրս են գալիս (Երբ պարտություն ես կրում, միշտ անիրավացի ես: > Պարտություն կրելիս միշտ անիրավացի ես), • կա՛մ փոխարինվում են համապատասխան կապով:

Մասնավորապես բնորոշ են «շաղկապ (շաղկապական բառ) – կապ» հետևյալ համապատասխանությունները. • **հենց(որ), թե չէ > (...լուն) պես, • երբ > ժամանակ, հետո, • նախքան, մինչ(և) > նախքան, մինչև, առաջ, • եթե, (թե) որ > դեպքում, • որ(պեսզի) > համար, նպատակով, • որովհետև, քանի որ (պատճառի պարագա) > պատճառով, հետևանքով, շնորհիվ, • թեև, թեպետ, չնայած > չնայած (...լուն), (...լով) հանդերձ, • ինչպես > պես, • որքան, ինչքան > չափ, • որտեղ, ուր > տեղում, տեղը, • փոխանակ > փոխանակ, փոխարեն:**

3. Ստորադաս նախադասության ենթական կարող է դրվել սենական հոլովով, մանավանդ եթե անծի առումով է, և իմաստային շփոթի վտանգի դեպքում տրոհվել բուրով: Օրինակ՝ եթե **հանցավորը** բացահայտ է գործում, ապա առկա է կողոպուտի հանցակազմը: > **Հանցավորի** բացահայտ գործելու դեպքում առկա է կողոպուտի հանցակազմը:

4. Ստորադաս նախադասության առաջին կամ երկրորդ դեմքի զեղչված ենթական հնարավորության դեպքում արտահայտվում է ստացական հոդով: Օրինակ՝ Ինչ մտածում ես, հանդիպման ժամանակ կասես: > **Մտածածդ** հանդիպման ժամանակ կասես:

5. Երբեմն հարկ է լինում դերբայական դարձվածում զեղչելու ստորադաս նախադասության ենթական: Օրինակ՝ Երբ **նա** ժպտում էր, նրա կապույտ աչքերը փոքրանում էին: > ժպտալիս նրա կապույտ աչքերը փոքրանում էին:

6. Կարող են տեղի ունենալ շարադասական փոփոխություններ:

7. Էական բայով կազմված բաղադրյալ անվանական ստորոգյալով բացահայտիչ, որոշիչ, հատկացուցիչ, երբեմն էլ ենթակա, ստորոգելի երկրորդական նախադասությունները փոխակերպվում են առանց դերբայական դարձվածի, որպես անվանական բառակապակցություն: Օրինակ՝ Հանցագործության սուբյեկտ կարող է լինել այն ֆիզիկական անձը, **որը մեղսունակ է:** > Հան-

ցագործության սուբյեկտ կարող է լինել **մեղսունակ ֆիզիկական անձը:**

8. Ստացված դերբայական դարձվածը (կամ անվանական բառակապակցությունը) դրվում է՝ **ա. հարաբերյալի փոխարեն՝** Դիվանագիտական գործակալը նստավայր պետությունում չպետք է զբաղվի այնպիսի գործունեությամբ, որ անձնական շահի նպատակ է հետապնդում: > Դիվանագիտական գործակալը նստավայր պետությունում չպետք է զբաղվի անձնական շահի նպատակ հետապնդող գործունեությամբ, **բ. հարաբերյալի բացակայության դեպքում՝** այն հարցի տեղում, որին պատասխանում է ստորադաս նախադասությունը՝ (ևա,) Ով բոլորից շատ է սովորեցնում, բոլորից քիչ գիտի: > Բոլորից շատ սովորեցնողը բոլորից քիչ գիտի:

Ծանոթություն 1: Դերբայական դարձվածով պարզ նախադասության փոխակերպումը բարդի կատարվում է հիմնականում վերը նկարագրված փոխակերպման հակառակ քայլերով:

Ծանոթություն 2: Դերբայական դարձվածից դուրս անդամները (ենթական ևն) փոխակերպելիս չպետք է մտցնել երկրորդական նախադասության մեջ: Օրինակ՝ թույլատրելի չէ հետևյալ փոխակերպումը՝ Սույն **համաձայնագիրը** ստորագրվելուն պես ուժի մեջ է մտնելու: > Հենց որ սույն **համաձայնագիրը** ստորագրվեց, ուժի մեջ է մտնելու: Ճիշտ փոխակերպումն է՝ Սույն **համաձայնագիրը**, հենց որ ստորագրվեց, ուժի մեջ է մտնելու: Պատճառն այն է, որ **համաձայնագիրը** դերբայի լրացումը չէ (դերբայական դարձվածի մեջ չէ), այլ բուն նախադասության ենթական է և այդպիսին էլ պիտի մնա փոխակերպումից հետո:

Մեջբերվող խոսք: Այսպես է կոչվում տվյալ խոսքում մեջբերված մեկ այլ խոսքը: Ամեն մի տվյալ խոսքի հեղինակ կարող է ոչ միայն արտահայտել իր մտքերն ու հույզերը, այլև մեջբերել խոսք, որ ասվել կամ մտածվել է նախկինում կամ ենթադրվում է, որ կասվի կամ կմտածվի ապագայում: Հեղինակը կարող է մեջբերել թե՛ ուրիշի, թե՛ իր խոսքը: Այդ խոսքը կարող է լինել ցանկացած ծավալի՝ սկսած մեկ բառից: Հեղինակն այդ խոսքը կարող է վերար-

տադրել նույնությամբ կամ պատմողաբար: Ըստ այդմ՝ մեջբերվող խոսքը լինում է **ուղղակի** կամ **անուղղակի**: Երկու դեպքում էլ մեջբերվող խոսքը կցվում է հեղինակի խոսքին՝ սովորաբար իբրև նրա ծավալուն ուղիղ խնդիր:

Ուղղակի մեջբերվող խոսք: Մեջբերվող խոսքը ուղղակի է, եթե իր բնօրինակին համընկնում է բառացիորեն և հեղինակի խոսքին կցվում է շարահարությամբ՝ իբրև զգալիորեն ինքնուրույն միավոր: Ուղղակի խոսքը կարող է հեղինակի խոսքից անջատվել՝

1. Բութով՝ եթե դիվանագետն ասում է՝ **այո՛**, ուրեմն նա մտածում է՝ **կարող է պատահել**, եթե ասում է՝ **կարող է պատահել**, ուրեմն մտածում է՝ **ո՛չ**, եթե ասում է՝ **ո՛չ**, ուրեմն նա դիվանագետ չէ:

2. Անջատման գծով (գրվում է նոր տողից)՝ Ի վերջո լավեց նախագահողի ծայնը.

— Պարոնա՛յք, նիստն ավարտված է:

3. Չակերտներով՝ Շեքսպիրը գրում է. «Ավելի լավ է ոչինչ չունենալ, քան թե ունենալ երկու ազնիվ խոսք, Որոնցից մեկը միշտ ավելորդ է»:

Ընդ որում՝ հեղինակի խոսքը մեջբերվող խոսքի նկատմամբ կարող է լինել առաջադաս, միջադաս կամ վերջադաս: Հեղինակի խոսքը կարող է նաև երկու (հազվադեպ՝ ավելի) հատվածների բաժանված լինել, որոնցից առաջինը սովորաբար լինում է առաջադաս, մյուսները՝ միջադաս և կամ վերջադաս:

Ուղղակի մեջբերվող խոսքը բութով տրոհվում է և սկսվում է փոքրատառով, եթե հեղինակի խոսքի նկատմամբ վերջադաս է և սովորաբար ոչ այնքան ծավալուն՝ Ցածրածայն պատասխանեց՝ **ո՛չ, չեմ կարող**:

Անջատման գծով և չակերտով սկսվող ուղղակի խոսքի դեպքում հեղինակի առաջադաս խոսքից հետո՝ մեջբերվող խոսքից առաջ, դրվում է միջակետ, իսկ մեջբերվող խոսքը սկսվում է մեծատառով: Ընդ որում՝ չակերտների մեջ առնված խոսքը, եթե մեկ պարբերությունից ավելին չէ, շարունակվում է նույն տողից:

Հեղինակի միջադաս խոսքը մեջբերվող խոսքից (որը կարող է առնված լինել չակերտների մեջ) անջատվում է սովորաբար ստորակետ–գծերով: Օրինակ՝ «Ազգային արվեստը,— **գրում է Ռ. Չարդարյանը**,— այն միակ փառքն է, որուն առջև ամեն քաղաքացի կրնա հպարտությամբ բարձր բռնել իր գլուխը»:

Հեղինակի միջադաս խոսքից հետո ստորակետ–գծի փոխարեն կարող է լինել նաև միջակետ–գիծ կամ վերջակետ–գիծ, եթե ուղղակի խոսքի՝ դրան նախորդող ու հաջորդող հատվածները միմյանց նկատմամբ ինքնուրույն կամ զգալիորեն ինքնուրույն են: Օրինակ՝

— Դուք սիրում եք հոգևոր երգը և իրավացի եք,— **պատասխանեց Վեհափառը**.— նրանում են թաքնված եկեղեցական արվեստի ամենից անաղարտ ներշնչումները:

— Արմենա՛կ, սիրելի՛ս, իմացած եղիր, որ հատկապես փոքր ազգերը անհատներով են ճանաչելի դառնում,— **շարունակեց իր խոսքը Կոմիտասը**:— Այնպես որ դու և Տիգրան Նալբանդյանը ազգի պարծանքն եք:

Հեղինակի միջադաս կամ վերջադաս խոսքից առաջ ստորակետ–գծի փոխարեն կարող է լինել նաև կախման կետեր–գիծ: Օրինակ՝ «Տպավորությունը աննախադեպ էր»...— գրում են օտար թերթերը:

Անջատման գծով կետադրությունը նախընտրելի է, եթե ուղղակի մեջբերվում է հնչած (այլ ոչ թե գրված կամ մտքում ասված) խոսքը, և մանավանդ եթե այն երկխոսություն է:

Չակերտներով կետադրությունը պարտադիր է, եթե ուղղակի մեջբերվում է գրավոր կամ ներքին (մտքում ասված) խոսքը: Օրինակ՝ Ինչ–որ անհայտ նկարիչ գրել էր պանդոկի ճակատին. «Քանի ողջ եմք, պիտի ապրենք»:

Անուղղակի մեջբերվող խոսք: Մեջբերվող խոսքն անուղղակի է, եթե վերապատմված է հեղինակի կողմից և հեղինակի խոսքի շարունակությունն է՝ որպես երկրորդական նախադասություն: Անուղղակի խոսքը սովորաբար հաջորդում է հեղինակի խոսքին

և նրան միանում է որ կամ **թե** շաղկապով: Վերջիններս կարող են և զեղչվել: Օրինակ՝ Մի տեղ կարդացել են, որ Կոմիտասը կյանքի միայն քառասուն տարում հազիվ ունեցավ սեփական դաշնամուր՝ նվեր ստանալով մեծագործ հայ պարոն Մանթաշովից:

Ուղղակի մեջբերված խոսքի փոխակերպումը անուղղակիի: Ուղղակի և անուղղակի մեջբերվող խոսքերը միմյանց հոմանիշ շարահյուսական կառույցներ են, որոնք նույն միտքն են արտահայտում՝ տարբերվելով միայն ոճականորեն: Հետևաբար որոշակի կանոններով հնարավոր է ուղղակի մեջբերված խոսքով նախադասությունը վերածել անուղղակի մեջբերված խոսքով նախադասության, և հակառակը:

Ուղղակի մեջբերված խոսքի փոխակերպումը անուղղակիի կատարվում է հետևյալ քայլերով.

1. Ըստ անհրաժեշտության՝ փոխվում է հեղինակի խոսքի դիրքը մեջբերվող խոսքի նկատմամբ, ընդ որում՝

ա. Հեղինակի միջադաս կամ վերջադաս խոսքը ամբողջությամբ կամ այն մասով, որ վերաբերում է մեջբերվող խոսքին, դարձվում է առաջադաս: Օրինակ՝ — Չեմ խոսելու,— **ասաց նա:** > **Նա ասաց**, որ ինքը չի խոսելու:

բ. Միջադաս է թողնվում հեղինակի խոսքի այն մասը, որը վերաբերում է մեջբերվող խոսքի միայն երկրորդ մասին: Օրինակ՝ — Մի՛ տխրեք,— **ասաց հայրը և ապա ավելացրեց**,— մի քանի օրից վերադառնալու են: > **Հայրն ասաց**, որ չտխրեն, և **ապա ավելացրեց**, որ մի քանի օրից վերադառնալու է:

գ. Վերջադաս է թողնվում հեղինակի խոսքի այն մասը, որը վերաբերում է մեջբերվող խոսքին հաջորդող գործողության կամ եղելության: Օրինակ՝ — Հիմա բոլոր քերթողներս ջարդ կը գրենք,— կիսաձայն ավելացրեց Սևակը և Սիամանթոյից մի քանի տող արտասանեց: > Սևակը կիսաձայն ավելացրեց, որ հիմա բոլոր քերթողները ջարդ կը գրեն, և Սիամանթոյից մի քանի տող արտասանեց:

ե. Հեղինակի խոսքն ըստ անհրաժեշտության մասերի բաժանելիս երբեմն հարկ է լինում ավելացնելու ասացական կամ մտածական բայեր (**ասել, խնդրել, հայտնել, ավելացնել, հարցնել, հիշել, մտածել, խորհել, գրել, շարադրել** ևն), դերանուններ, համադասական շաղկապներ ևն: Օրինակ՝ — Մի քիչ արագացրե՛ք,— նրանց դիմեց տարեց մի զինվորական: > Տարեց մի զինվորական նրանց ասաց, որ մի քիչ արագացնեն:

2. Հեղինակի միջադաս կամ վերջադաս խոսքը առաջադաս դարձնելիս՝

ա. Փոխվում է նրա ենթակայի և ստորոգյալի շարահյուսությունը. ստորոգյալի նկատմամբ հետադաս ենթական դարձվում է նախադաս: Օրինակ՝ — Կգամ ավելի ուշ,— **ասաց նա:** > **Նա ասաց**, որ ինքը կգա ավելի ուշ:

բ. Երբեմն հարկ է լինում փոխելու ասացական բայը: Օրինակ՝ — Խաղաղության միակ գրավականը թերևս հաշտության դաշինք կնքելն է,— **ասաց** գորավարը: > Ձորավարը **համաձայնեց**, որ խաղաղության միակ գրավականը թերևս հաշտության դաշինք կնքելն է:

3. Հեղինակի խոսքի և մեջբերվող խոսքի միջև ավելացվում է՝

ա. **Թե** շաղկապը, եթե մեջբերվող խոսքը հարցական նախադասություն է կամ ունի թեական բնույթ, համարվում է կասկածելի, անիրական: Օրինակ՝ — Ե՞րբ է ժամանում պատվիրակությունը,— հարցրի աշխատակազմի ղեկավարին: > Աշխատակազմի ղեկավարին հարցրի, **թե** երբ է ժամանում պատվիրակությունը:

բ. **Որ** շաղկապը՝ մնացած դեպքերում: Օրինակ՝ Սոկրատեսը սիրում էր կրկնել. «Ես գիտեմ այն, որ ոչինչ չգիտեմ»: > Սոկրատեսը սիրում էր կրկնել, որ ինքը գիտի այն, որ ոչինչ չգիտի:

4. Մեջբերվող խոսքի կոչականը՝

ա. Դառնում է հեղինակի խոսքում հանգման խնդիր: Օրինակ՝ — **Վահան՛ն**, մոտեցե՛ք խոսափողին,— խնդրեց նիստավարը: > Նիստավարը խնդրեց **Վահանին**, որ նա մոտենա խոսափողին:

բ. Կարող է դառնալ անուղղակի խոսքի ենթակա, եթե համապատասխանում է ուղղակի խոսքի գեղչված ենթակային: Օրինակ՝ — **Ձինվորներ**, պատրաստվե՛ք մարտի, — հնչեց հրամանատարի ձայնը: > Հնչեց հրամանատարի ձայնը, որ **զինվորները** պատրաստվեն մարտի:

գ. Այլ անդամ, եթե կոչականը իրանիշ է: Օրինակ՝ — Իմ մանկության անմոռա՛ց **օրեր**, կարոտել եմ ձեզ, — մրմնջում էր ծերունին՝ տխուր հառաչելով: > Ծերունին, տխուր հառաչելով, մրմնջում էր, որ կարոտել է իր մանկության անմոռաց **օրերը**:

5. Մեջբերվող հարցական, հրամայական և բացականչական նախադասությունները դարձվում են պատմողական: Ընդ որում՝

ա. Հարցական—հարաբերական դերանվան կամ **մի՞թե, չի՞նի՞** թե վերաբերականների բացակայության դեպքում ավելացվում է **արդյոք** վերաբերականը: Օրինակ՝ — Համոզվա՞ծ ես, որ քո գործողությունները համարժեք են, — տարակուսած հարցրի ընկերոջս: > Տարակուսած հարցրի ընկերոջս, թե ինքը համոզված է արդյոք, որ իր գործողությունները համարժեք են: Ըստ որում՝ հարցական նշանը կարող է դրվել կամ չդրվել: Իսկ **արդյոք** բառի բացակայության դեպքում հարցական նշանը դրվում է՝ Տարակուսած հարցրի ընկերոջս, թե ինքը համոզվա՞ծ է, որ իր գործողությունները համարժեք են:

բ. Հրամայական եղանակի կամ հրամայական իմաստով գործածված ենթադրական եղանակի բայը դառնում է ըղծական եղանակի: Եթե այդ բայը մեջբերվող խոսքի առաջին նախադասության մեջ չէ, ապա նրան հաճախ ավելանում է **թող** վերաբերականը: Օրինակ՝ — Դժվարանում եմ խորհուրդ տալ. ի՛նքդ կողմնորոշվիր, — ասացի գործընկերոջս: > Գործընկերոջս ասացի, որ դժվարանում եմ խորհուրդ տալ, թող ինքը կողմնորոշվի:

գ. Բացականչական հնչերանգով ցուցական կամ հարցական—հարաբերական դերանունները (այնքա՛ն, որքա՛ն, ինչքա՛ն, ի՛նչ, ինչպե՛ս) • փոխարինվում են **չատ** բառով: Օրինակ՝ — **Այնքա՛ն** կուզեի երգդ լսել, — ասացի: > Ասացի, որ **չատ** կուզեի իր երգը

լսել, • ժխտական բայի առկայությամբ երբեմն փոխարինվում են **բնավ, բոլորովին** կամ **երբեք** բառով: Օրինակ. — Եվ **որքա՛ն** դու ինձ չհասկացար, — ասաց ինձ: > Ինձ ասաց, որ ես իրեն **բնավ** չհասկացա:

6. Անուղղակի խոսքում վերանում են ուղղակի խոսքի՝

ա. Ջգացական և կոչական ծայնարկությունները, դրանց արժեքով բանաձևային արտահայտությունները, կոչականին ուղեկցող դիմելաձևերը (**պարո՛ն, տե՛ր, լսի՛ր** ևն), կոչականի՝ հուզական վերաբերմունք արտահայտող որոշիչները (**սիրելի, հարգելի, իմ միակ** ևն): Օրինակ՝ — Իմ **սիրելի՛ բարեկամներ**, ա՛խ, ինչ երջանիկ եմ ձեր ներկայությամբ, — հուզված արտաբերեց երգչուհին: > Երգչուհին հուզված ասաց, որ ինքը շատ երջանիկ է նրանց ներկայությամբ: — **Մեծահա՛րգ պարոն** Թամանյան, բոլորս ուշադիր լսում ենք Ձեզ, — խոսեց հայր սուրբը: > Հայր սուրբն ասաց Թամանյանին, որ իրենք բոլորը ուշադիր լսում են նրան:

բ. Դիմելաձևով արտահայտված և հեղինակի խոսքի հանգման խնդրին կրկնող կամ պարզապես հուզական վերաբերմունք արտահայտող կոչականները (**փոքրի՛կ, եղբա՛յր, քույրի՛կ, մայրի՛կ, սիրելի՛ս, անուշի՛կս, անիրա՛վ, ապո՛ւշ** ևն): Օրինակ՝ — Է՛յ, **փոքրի՛կ**, ծաղիկները մի՛ տրորիր, — ասաց ոստիկանը զբոսայգում խաղացող **երեխային**: > Ջբոսայգում խաղացող երեխային ոստիկանն ասաց, որ նա ծաղիկները չտրորի:

գ. Առաջադաս համադասական շաղկապները (և, ու, իսկ, բայց, սակայն): Օրինակ՝ — Եվ չքնաղ մագերիդ համար արշալույսի ցողերով թաթախուն ծաղիկներ եմ բերել, — ասաց Ադամը Լիլիթին: > Ադամը Լիլիթին ասաց, որ ինքը նրա չքնաղ մագերի համար արշալույսի ցողերով թաթախուն ծաղիկներ է բերել:

դ. Կամային վերաբերականները (**դե, արի, եկ, եկեք, թող, հապա, մի**), ինչպես նաև մեջբերված խոսքին կրկնող պատասխանական բառերը (**այո՛, ո՛չ, հա՛, չէ՛**): Օրինակ՝ — **Դե** արի ու սրան մի բան սովորեցրու, — նեղսրտեց ծերունին: > Ծերունին նեղսրտեց՝ ասելով, թե արի ու սրան մի բան սովորեցրու: — **Այո՛**, իմ գործն

ավարտվեց,— ասաց թիկնապահը: > Թիկնապահն ասաց, որ իր գործն ավարտվեց:

7. Ըստ անհրաժեշտության՝ փոխվում է անձնական դերանունների, ստորոգյալի և ս կամ դ հոդ ունեցող բառերի դեմքը: Օրինակ՝ Մի առիթով Մակեդոնացին ասել է. «Փիլիպոսը՝ հայրս, ավելի անվտանգ էր իրեն զգում ռազմադաշտում, քան թատրոնում»: > Մի առիթով Մակեդոնացին ասել է, որ Փիլիպոսը՝ իր հայրը, ավելի անվտանգ էր իրեն զգում ռազմադաշտում, քան թատրոնում:

8. Ըստ անհրաժեշտության՝ կարող են փոխվել իրադրական արժեք ունեցող տեղի, ժամանակի մակբայները, ցուցական դերանունները ևն: Օրինակ՝ Վաղուց եմ նրան ասել. «Այսպիսի ապրելակերպը անընդունելի է ինձ համար»: > Վաղուց եմ նրան ասել, որ այդպիսի ապրելակերպը անընդունելի է ինձ համար:

Ծանոթություն: Անուղղակի մեջբերված խոսքի փոխակերպումը ուղղակի կատարվում է հիմնականում վերը նկարագրված փոխակերպման հակառակ քայլերով:

Ներգործական և կրավորական կառուցվածքի նախադասություններ: Հաճախ նույն միտքը կարելի է արտահայտել տարբեր կառուցվածքի նախադասություններով: Դրանք նախադասության կառուցվածքային հոմանիշներ են: Դրանցից են նախադասության **ներգործական և կրավորական կառուցվածքները:** Նախադասությունը **ներգործական կառուցվածքի է**, եթե ստորոգյալը ներգործական սեռի բայ է և ունի ուղիղ խնդիր լրացում: Օրինակ՝ Սիրտը միշտ խաբում է մտքին: Ներգործական կառուցվածքի նախադասությունը կարող է լինել նաև անենթակա: Օրինակ՝ Նրան պարզևատրել են շքանշանով: Նախադասությունը **կրավորական կառուցվածքի է**, եթե ստորոգյալը կրավորական սեռի բայ է և կարող է ունենալ ներգործող խնդիր լրացում, որի կատարած գործողությունը իր վրա է կրում ենթական: Օրինակ՝ Վարչապետը շրջապատվեց համախոհներով:

Կրավորական կառուցվածքի նախադասությունը կարող է լինել նաև առանց ներգործող խնդրի: Օրինակ՝ Նա **պարզևատրվել է** շքանշանով:

Ծանոթություն: Նախադասությունը կրավորական կառուցվածքի չի համարվում, եթե ստորոգյալն ընդհանրապես կրավորական բայ է, բայց տվյալ կիրառությամբ չեզոք սեռի է, այսինքն՝ ոչ միայն ներգործող խնդիր չունի, այլև ենթական ինքն է կատարում գործողությունը: Օրինակ՝ Երկնքից ամպի ծվեմներ **կախվեցին:**

Կրավորական կամ ներգործական կառուցվածքի նախադասությունները սովորաբար փոխարկելի են մեկից մյուսը: Հենց դա էլ նրանց ստուգման եղանակն է կասկածելի դեպքերում: Ներգործական կառուցվածքի նախադասությունը կրավորականի փոխակերպելու համար անհրաժեշտ է.

1. Ներգործական բայով արտահայտված ստորոգյալը դարձնել կրավորական բայով արտահայտված՝ **գրում է > գրվում է, կկիրառի > կկիրառվի:**

2. Ներգործական կառուցվածքի նախադասության ենթական դարձնել կրավորական սեռի բայի ներգործող խնդիր, իսկ ուղիղ խնդիրը՝ ենթակա, ընդ որում՝ ներգործող խնդիրն արտահայտվում է՝ • **կողմից** կապով, եթե անձ է ցույց տալիս (Նա ղեկավարում է ներքին զորքերը: > Ներքին զորքերը ղեկավարվում են **նրա կողմից**), • **գործիական կամ բացառական հոլովով**, եթե իր է ցույց տալիս, երբեմն էլ՝ անձ (Այդ միտքը ծնվեց մեկ այլ **գաղափարից**): > Մեկ այլ **գաղափար** ծնեց այդ միտքը: Շրջապատը ողողված էր ծաղիկների **բույրով**: > Ծաղիկների **բույրը** ողողել էր շրջապատը):

3. Անհրաժեշտ դեպքերում թվով համաձայնեցնել կրավորական կառուցվածքի ենթական ու ստորոգյալը: Օրինակ՝ Մենք գործ **հարուցեցինք:** > Գործ **հարուցվեց** մեր կողմից:

4. Կատարել շարադասական անհրաժեշտ փոփոխություններ: Օրինակ՝ ՀՀ արտգործնախարարությունը մշակում է միջազգային

պայմանագրերի նախագծեր: > Միջազգային պայմանագրերի նախագծեր են մշակվում ՀՀ արտգործնախարարության կողմից:

Ծանոթություն: Կրավորական կառուցվածքի նախադասությունը ներգործականի փոխակերպելու համար հիմնականում կատարվում է վերը նկարագրվածի հակառակ գործողությունը:

Ձեղչում: Նախադասության բաղադրիչների՝ անդամների և սպասարկու բառերի մի մասը (ենթակա, ստորոգյալ, ուղիղ խնդիր, կապ, ստորադասական շաղկապ ևն) անհրաժեշտ է քերականորեն կամ տրամաբանորեն, իսկ մյուսների առկայությունը կամայական է՝ կախված իրադրությունից և խոսողի ցանկությունից: Սակայն անհրաժեշտ անդամներն ու սպասարկու բառերը նույնպես խոսքի մեջ կարող են բաց թողնվել, եթե՝ **1.** ինքնըստինքյան հասկանալի են խոսքային իրադրությունից, **2.** հիշատակված են հարևան՝ նախորդ (երբեմն՝ հաջորդ) նախադասության մեջ կամ նախընթաց խոսքում: Այսպիսով՝ նախադասության անդամը կամ սպասարկու բառը կարելի է բաց թողնել, եթե մտքով կամ քերականորեն կռահելի և վերականգնելի է: Ենթակայի և կամ ստորոգյալի զեղչում պարունակող նախադասությունը կոչվում է **թերի** նախադասություն: Ձեղչումը որոշ դեպքերում արտահայտվում է հատուկ հնչերանգով և համապատասխան կետադրությամբ:

Ենթակայի զեղչում: Ենթական սովորաբար զեղչվում է, եթե առաջին կամ երկրորդ դեմքի է, այսինքն՝ վերականգնելի է անձնական դերանվան **ես, դու, մենք, դուք** ձևերով: Այդ ձևերի կարիքը չի լինում, քանի որ ստորոգյալի դեմքը և թիվը լիովին փոխարինում են դրանց: Օրինակ՝ Մոտեցի՛ր ինձ: Օրինագծի քննարկման ժամանակ նոր առաջարկ չենք ներկայացրել:

Երրորդ դեմքի ենթական էլ կարող է զեղչվել, եթե որևէ ձևով հիշատակված է նախորդ (երբեմն՝ հաջորդ) նախադասության մեջ կամ նախընթաց խոսքում կամ էլ հայտնի է խոսքի մասնակիցներին: Օրինակ՝ Չի գնում, թող չգնա, իր գործն է:

Ստորոգյալի զեղչում: Ստորոգյալը զեղչվում է, եթե՝ • ինքնըստինքյան հասկանալի է և մոտավորապես վերականգնելի՝ Գիտունին՝ գերի, հիմարին՝ ոչ սիրելի, • նույն կամ տարբեր դեմքով ու թվով առկա է նախորդ (երբեմն՝ հաջորդ) նախադասության մեջ՝ Գերմանացիներն աչքի են ընկնում իրենց ճշտապահությամբ, լրջությամբ, իսկ կատակի ու հումորի նկատմամբ՝ ժխտողական կեցվածքով: Ես՝ աշխատանքի, դու դպրոց պիտի գնաս: Դատավորը խոսող օրենք է, իսկ օրենքը՝ համր դատավոր:

Ստորոգյալի զեղչումը լինում է **լրիվ** կամ **մասնակի**: Ձեղչումը լրիվ է, եթե զեղչված է ստորոգյալն ամբողջությամբ: Օրինակ՝ Մեծ խելքի առջև գլուխս **եմ խոնարհում**, մեծ սրտի առջև՝ ծնկներս: Ստորոգյալի լրիվ զեղչումն արտահայտվում է յուրահատուկ բարձրացող հնչերանգով, գրավոր խոսքում՝ բութով: Օրինակ՝ Կարճ խոսքը նշան է երկար խելքի, **երկար խոսքը՝ կարճ խելքի**:

Եթե բարդ համադասական նախադասության առաջին բաղադրիչի ստորոգյալը դրական խոնարհման բայ է, իսկ երկրորդը նույնն է՝ ժխտական խոնարհմամբ, ապա վերջինս զեղչվելիս փոխարինվում է **ո՛չ, բնավ, ամենևին** կամ **երբեք** բառով, որից առաջ բութ է դրվում: Օրինակ՝ Ես տարածքին ծանոթ էի, նա՝ **բնավ**: Ձեղչման բութը չի կարելի դնել վերաբերականների, շաղկապական բառերի ու շաղկապների վրա, բաղադրիչ նախադասությունների միջև: Հետևաբար երբեմն զեղչումը հնարավոր չէ նշել բութով: Օրինակ՝ Վաստակեց այնքան, որքան ոչ ոք: Այս անգամ էլ ստացել էր նույն պատասխանը, ինչ որ անցյալ տարի: Լուսանկարից նա ինձ էր նայում այնպես, ինչպես այն ժամանակ:

Ստորոգյալի զեղչումը **մասնակի** է, եթե զեղչված է բաղադրյալ ստորոգյալի հանգույցը կամ պարզ ստորոգյալի օժանդակ բայը: Ստորոգյալի մասնակի զեղչումը բարդ համադասական կամ պարզ նախադասության մեջ նշանակվում է բութով, եթե՝

1. վերաբերում է նախադասության բոլոր ստորոգյալներին (կամ միակ ստորոգյալին)՝ Բոլորս ենք մասնակցելու գործողություններին. դուք՝ այսօր, մենք՝ վաղը:

2. Ձեղչված և չզեղչված ստորոգյալների ենթակաները տարբեր են՝ Իմ գայրույթը լիքն է սիրով, Իմ գիշերը՝ լիքն աստղերով:

3. Ձեղչված և չզեղչված ստորոգյալներով բաղադրիչ նախադասությունների միջև առկա է հակադրական հարաբերություն, որն արտահայտված է կամ կարող է արտահայտվել **իսկ** շաղկապով՝ Նա զբաղված է իր գործերով, **իսկ** դու՝ Աստված գիտի, թե ինչով:

4. Ձեղչված և չզեղչված ստորոգյալներով բաղադրիչ նախադասությունների միջև առկա է հաջորդման հարաբերություն, որն արտահայտված է **ապա, հետո, այնուհետև, վերջապես** կամ ժամանակի այլ մակբայով՝ Կգնամ գործի, **ապա՝** գյուղ:

5. Ածականով արտահայտված ստորոգելին հանգույցի բացակայության դեպքում կարող է ընկալվել որպես ստորոգյալի լրացման կամ ենթակայի որոշիչ՝ առաջ բերելով իմաստային շփոթ՝ Մեր երկիրը համեմատաբար աղքատ է մակերևութային և հարուստ՝ ստորերկրյա ջրերով:

Դերբայական դարձվածի գերադաս անդամի գեղչում: Դերբայական դարձվածի գերադաս անդամի գեղչումը, որը հանգեցնում է անդերբայ դարձվածի առաջացման, թեև արտահայտվում է հատուկ հնչերանգով, սակայն կետադրությամբ սովորաբար չի նշանակվում: Բութով նշանակվում է միայն նույն գերադաս անդամով բազմակի դերբայական դարձվածներից որևէ մեկում այդ դերբայի գեղչումը: Օրինակ՝ Մի թիակով ալիքների դեմ կռիվ տալով, մյուսով՝ ամենի կենդանու՝ հազիվ հասա հանդիպակաց ափը: Հետո տեղի ունեցան անցքեր՝ մեկը քաղցր հիշողության հետ **կապված, մյուսը՝ դառն:**

Շաղկապի գեղչում: Գլխավոր և երկրորդական նախադասությունների՝ շարահարությամբ կապակցության գրեթե բոլոր դեպքերն էլ կարելի է դիտարկել որպես շաղկապի գեղչում: Դրանցից բութով նշանակվում են ստորադասական **որ, թե, եթե, ինչ** շաղկապների և **երբ** շաղկապական բառի գեղչումները: Օրինակ՝ Մեկ շաբաթ է (**, ինչ, որ**)՝ աշխատանքի են անցել: (**Թե, եթե**) Մեծ հաջողությունների են ուզում հասնել՝ չա՛տ աշխատիր:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Արևելահայերենի և արևմտահայերենի հնչյունական, բառային և քերականական տարբերություններ

Հնչյունական համակարգի տարբերություններ:

1. Խորհրդային Հայաստանում 1922 թ. կատարված ուղղագրության բարեփոխությամբ՝ արևելահայերենը ընդունեց նոր ուղղագրությունը, արևմտահայերենը որոշ տարբերություններով հիմնականում պահպանեց ավանդական ուղղագրությունը: Նոր ուղղագրության հիմքում ընկած է հնչյունի համապատասխանությունը տառին, այսինքն՝ գրությունը հնարավորինս մոտեցվել է արտասանությանը, սկզբունք, որ հնչյունագիր լեզուների ուղղագրության համակարգերում առաջնային է: Նոր ուղղագրության հիմնական առավելությունն այն է, որ էական խզում չի առաջացնում գրության և արտասանության միջև: Նոր ուղղագրությամբ, սակայն, փոխվում է շատ բառերի հնչյունական-գրային պատկերը, խախտվում են ուղղագրության ստուգաբանական և պատմականության որոշ սկզբունքներ: Այսպես, օրինակ՝ ունենք **հեղ(ում)** (1. թափել, հոսեցնել, լցնել, դատարկել, 2. հալել և **յեղ(ում)** (1. փոխել, դարձնել, 2. թարգմանել) բառերը (բառարմատները). ուղղագրական փոփոխությունների պատճառով այս երկու տարբեր բառերի գրությունը նույնացել է: Նմանապես՝ **գէտ** (> գիտենալ) և **գետ** (առու), **հօտ** (ոչխարի հոտ) և **հոտ** (բույր), **հարկ** (անհրաժեշտ պահանջ, կարիք) և **յարկ** (հարկաբաժին) ևն: Աղավաղվել են որոշ բառերի բառապատկերներ՝ **հավելում** (փոխ.՝ յ + աւելում < ի + աւել / ում – ավելացնել, աճեցնել), **հանուն** (փոխ.՝ յանուն < ի + անուն), **հօգուտ** (փոխ.՝ յօգուտ < ի + օգ / ուտ) ևն: Եվ, բացի այդ, նոր ուղղագրությամբ ինչ-որ չափով խզվում է կապը հայոց հին և նոր մատենագրությունների միջև: Օգտագործելով նույն այբուբենը (մասնակի տարբերություններով՝ արևմտ. Լ–ն առանձին տառի արժեք ունի, ու–ն = ո + ւ, և–ը = ե + ւ ևն)՝ արևմտահայերենը և արևելահայերենը փաստորեն երևան են հանում ուղղագրական զգալի տարբերություններ:

2. Արևմտահայերենը և արևելահայերենը տարբերություններ են դրսևորում պայթական բաղաձայնների արտասանության, մասամբ գրության մեջ, ինչպես նաև փոխառյալ և օտար բառերի տառադարձության մեջ: Արևմտահայերենում պայթական **խուլերի** գրանշաններով արտահայտվում են ձայնեղ հնչյուններ. **պ, կ, տ, ժ, ճ** շարքը արտասանվում է **բ, գ, դ, ծ, ջ** (պար – [բ]ար, կյանք – [գ]յանք, տերև – [դ]երև ևն), ձայնեղներով՝ շնչեղ խուլեր. **բ, գ, դ, ծ, ջ** շարքը արտասանվում է **փ, ք, թ, ց, չ** (բարձր – [փարցր], ծայն – [ցայն], ջահ – [չահ] ևն): Արևմտահայերենին հատուկ այս երևույթը հանգեցրել է նրան, որ այստեղ պայթականներն ունեն ոչ թե եռաստիճան, ինչպես արևելահայերենում, այլ երկաստիճան խլազուրկ համակարգ: Պատկերն այսպիսին է.

արևելահայերեն			արևմտահայերեն	
բ	պ	փ	բ	փ
գ	կ	ք	գ	ք
դ	տ	թ	դ	թ
ծ	ժ	ց	ծ	ց
ջ	ճ	չ	ջ	չ

Բաղաձայնական համակարգի այս առանձնահատկությունը՝ ձայնեղ–խուլ տեղաշարժ–տեղափոխությունը, արևմտահայերենում պատճառ է դառնում համահունչ համանունների նոր շերտի առաջացման, ինչպես՝ **անձաւ – անցաւ, գայլ – քայլ, դաս – թաս, դաւ – թաւ, դոյլ – թոյլ, ձախ – ցախ, ձող – ցող** ևն:

3. Արևմտահայերենը հիմնականում հետևում է ֆրանսերենի տառադարձությանը կամ պարզապես ձգտում է հավատարիմ մնալ փոխատու լեզվի արտասանական առանձնահատկություններին, այսինքն՝ տառադարձության ժամանակ պահպանում է փոխատու լեզվի պայթական բաղաձայնական համակարգը: Փոխառությունների և օտար բառերի արտասանության մեջ երկու ճյուղերում դրսևորվող այս տարբերությունները ավելի ակնառու են օտար աշխարհագրական անունների և անձնանունների արտասանություն–գրության մեջ. ներկայացնում ենք միայն արևմտահայերեն տարբերակները. **աշխարհագրական անուններ՝ Բարիզ // Փարիզ, Իսթամպուլ, Ճաբոն // Ճափոն, Ճիպրալթար, Նորվեկիա, Շուէտ, Պաքու, Տարտանէլ, Տփղիս, Քուպա, Քոնկո, Ֆինլանտա**

ևն, **անձնանուններ՝ Բուլշին, Չապէլ, Չօիրապ, Էտկար Փօ, Թուլսթոյ, Ժագ, Լոպանֆ, Լուքֆիկ, Կի տը Մոփասան, Մակելլան, Պաղտասար, Պոտլեռ, Օլկա, Ֆլոպէր // Ֆլոպէռ** ևն:

4. Արևմտահայերենում **ռ** բաղաձայնը բառամիջի և բառավերջի դիրքերում արտասանվում է փոքր–ինչ փափուկ՝ **ր–ի** նման. գրեթե վերացած է **ռ–ր** արտասանական հակադրությունը՝ **վառարան – [վարարան], բառ – [փար], ծմեռ – [ցմեր], լեռ – [լեր]** ևն: Արտասանական այս յուրահատկությունը պատճառ է դառնում արևմտահայերենում համահունչ համանունների նոր շարքի առաջացման՝ **բառ – բար → [փար], բարք – փառք → [փարք], գերի – քեռի → [քերի], լուռ – լուր → [լուր], գառ – քար → [քար], համառ – յամար → [համար], վառել – վարել → [վարել], առատ – արատ → [արատ]** ևն:

5. Արևմտահայերենը, որպես կանոն, ձևակազմության ժամանակ անփոփոխ է պահում հիմքերը. շեշտի կորստի պատճառով արևելահայերենում հնչյունափոխվող ձայնավորը արևմտահայերենում փակ դիրքում սովորաբար չի հնչյունափոխվում՝ **գիրք – գիրքերու, միտք – միտքերնիս, ուսուցիչ – ուսուցիչով, գաւիթ – գաւիթի, արժեթուղթ – արժեթուղթեր, երգչախումբ – երգչախումբեր, հարցում – հարցումի, սպասում – սպասումի:**

Բառապաշարային տարբերություններ: Հայոց լեզվի բառապաշարի մեծ մասը, իհարկե, թե՛ ձևով, թե՛ իմաստով ընդհանուր է երկու տարբերակների համար: Դրա վկայությունն է նաև այն փաստը, որ բառապաշարային տարբերությունները, ըստ նորագույն տվյալների, կազմում են ընդամենը 12–15 %: Մոտ 16 հազար բառ և դարձվածքային միավոր, արևելահայերենի հետ համեմատած, դրսևորում են ձևային կամ իմաստային գոնե մեկ տարբերություն: Ըստ այդ տարբերությունների՝ արևմտահայերենում և արևելահայերենում առանձնացվում են հետևյալ բառախմբերը.

1. **Ձուտ արևմտահայերեն բառեր:** Այն բառերն են, որոնք գործածվում են միայն արևմտահայերենում. առավելապես խոսակցական լեզվից և բարբառներից գրականին անցած բառեր ու դարձվածային միավորներ են: Արևելահայերենում դրանց գործածությունը կարող է արդարացվել միայն ոճական–արտահայտչական բովանդակությամբ, այն է՝

համապատասխան լեզվական միջավայրի ստեղծում, հերոսի խոսքի տիպականացում, ոճավորում են: Ոճական այդ նպատակներով են արևմտահայերեն բառերի գործածությանը դիմել մեր գրողներից շատերը՝ Վրթաճեն Փափազյան, Ավետիս Ահարոնյան, Վահրամ Փափազյան, Վահան Թոթովենց, Կոստան Ջարյան և ուրիշներ: Այդպիսի բառերից են՝ **աղէկ** (լավ, ազնիվ, բարի, սիրուն), **աղուոր** (սիրուն, վայելուչ, պատվական), **ասանկ** (այսպես), **ատեն** (ժամանակ), **գոց** (անգիր, բերանացի, փակ), **լմննալ** (լրանալ, սպառվել վերջանալ, ավարտվել), **խածնել** (կծել, խայթել, չարախոսել), **խորոտ** (սիրուն), **ծիրիլ** (հյուծվել), **կոնակ** (մեջք, թիկունք, շալակ, օգնական), **հոս** (այստեղ), **մէյ մը** (մի անգամ, հանկարծ), **շտկել** (ուղղել, ճշտել), **համամայր** (նույն մորից, բայց տարբեր հայրերից ծնված), **քեռայր** (քրոջ ամուսին):

2. Արևմտահայերենում և արևելահայերենում ձևով նույն, բայց իմաստային տարբերություններ ունեցող բառեր՝ **արևմտահայ – արևելահայ բառային համանուններ**: Սրանք կա՛մ տարբերվում են իմաստներով, կա՛մ մասամբ են միայն համընկնում: Օրինակ (տրվում են բառերի՝ արևելահայերենից տարբեր իմաստները)՝ **աներելոյթ** – անորոշ (դերբայ), **դաշնակ** – փոքր դաշնամուր, **ծռիլ** – խոտորել, **ախոյեան** – առաջամարտիկ, չեմպիոն, **անջրպետ** – տիեզերք, հեռավորություն, **անուշ** – մուրաբա, լիմոնադ, անուշեղեն, **անսուաղ** – անոթի, **բանաւոր** – տրամաբանական, **բարեկամ** – ընկեր, բարի կամեցող, **գետին** – հիմք, հիմունք, **գնացք** – ընթացք, **գրագէտ** – գրող, մտավորական, **ընկերային** – հասարակական, **թելադրութիւն** – թելադրանք են:

3. **Հնչյունափոխական–ուղղագրական տարբերություններ ունեցող բառեր**: Այս խմբի բառերը բավականին մեծ թիվ են կազմում: Միևնույն բառի կամ արմատի՝ տարբեր հնչյունափոխություններ կրած զուգահեռներ են կամ ուղղագրական զուգածություններ, ինչպես (սկզբում տրվում են արևելահայերեն ձևերը)՝ **առավոտ** – առաւօտ / առտու, **այլ** – ալ, **առաջաբան** – յառաջաբան, **արգելել** – արգիլել, **ասել** – ըսել, **արծագանք** – արծագանգ, **անել** – ընել, **բաղնիք** – բաղանիք / բաղնիք, **դասընթաց** – դասընթացք, **եժան** – աժան, **քենակալ** – քենեկալ, **ընկնել** – իյնալ, **լիճնել** – ըլլալ, **լողարան** – լոգարան, **լողորդ** – լուղորդ / լողորդ:

4. **Բառակազմական տարբեր կաղապարներով կամ բաղադրիչներով կազմված բառեր**: Նույն հասկացությունը արտահայտելու համար երկու գրականները ընտրել են տարբեր բառեր: Դա պայմանավորված է կա՛մ բարբառների, կա՛մ գերակա լեզուների ազդեցությամբ, ինչպես (սկզբում տրվում են արևելահայերեն տարբերակները)՝ թրթադրան – **դրամաթուղթ**, առևտուր – **տուրեւառ**, խաղակես – **կիսախաղ**, հետմիջօրե – **միջօրետք**, անդորրագիր – **ընկալագիր**, արտասահման – **արտերկիր** / **արտասահման**, բառարան – **բառարան** / **բառգիրք** (հնց.), բացահայտ – **բացորոշ** / **բացայայտ**, բռնցքամարտ – **կռփամարտ**, զանձապահ – **զանձապահ** / **դրամապահ** (հնց.), գեղագիտություն – **գեղեցկագիտութիւն**, գծանոց – **խենթանոց**, գործադուլ – **գործադուլ** / **բանդուլ** (հնց.), գրատուն – **գրախանութ**, գործարան – **գործարան** / **գործատուն** (հնց.), դասաժամ – **դասապահ**, դերանուն – **դերանուն** / **փոխանուն** (հնց.) ծայնային ազդանշան – **ճչակ**, Ամանորի նվերներ – **կաղանդչէք** են:

5. **Օտար կամ փոխառյալ բառեր և հայերեն համարժեքներ**: Արևմտահայերենը միշտ խուսափել է օտար բառեր ու բառաձևեր գործածելուց՝ փոխարենը ստեղծելով հայերեն նոր բառեր: Այս խմբի բառերից են (սկզբում տրվում են արևելահայերեն տարբերակները)՝ **ակադեմիա** – **կաճառ**, ակորդեոն – **ձեռնադաշնակ**, անարխիստ – **անիշխանական**, անսամբլ – **համոյթ**, ավտոմատ – **ինքնաձիգ**, **ինքնագործ**, ատոմ – **հիւլէ**, ատոմագետ – **կորիզաբան** // **հիւլէագէտ**, ատոմային – **կորիզային** // **միջուկային**, բալլադ – **գեղօն**, բանկ – **դրամատուն**, բորսա // բիրժա – **սակարան**, դիրիժոր – **նուագավար** են:

Քերականական տարբերություններ: Հայոց լեզվի երկու տարբերակներում զգալի են **ձևաբանական տարբերությունները**: Դրանք հատկապես առկա են գոյական, դերանուն և բայ խոսքի մասերի քերականական հատկանիշներում:

Գոյական անուն: Արևմտահայերենում մի շարք գոյականներ ունեն հոգնակի կազմության տարբերություններ՝ **մարդ** – **մարդեր** (տղամարդեր, այծամարդեր, նախամարդեր), **կին** – **կիներ** (տիկիներ) (նաև՝ **մարդիկ**, **կանայք**), **ռուսեր**, **ծուկներ**, **մուկներ**, **ծուկներ**, **նուռեր**, **ծնողք**,

որդիք, տղաք (նաև՝ **տղաներ, որդիներ, ծնողներ**): Արևմտահայերենում գործածական է նաև կրկնակի ստացական կազմությունը՝ **իմ գիրքս, քու պատասխանդ**, հոգնակի ստացականը կազմվում է **–նի** մասնիկով և համապատասխան հոդերով՝ **–նիս, –նիդ, –նին, ինչպես՝ տուն + եր + նիս, տուն + եր + նիդ, տուն + եր + նին, պարտեզ + նիս, պարտեզ + նիդ, պարտեզ + նին**:

Հատկացուցիչ սեռականը ծայնավորահանգ բառերում ստանում է որոշիչ հոդ՝ **ծովուն ծուկը, Ձոհրապին նկարը**: Որոշյալ առման դեպքում միշտ հոդով է գործածվում բացառական հոլովը՝ **տունեն, Յակոբեն, գիւղեն**:

Մի–ն արևմտահայերենում հոդ է և գործածվում է աշխարհաբարյան հնչյունափոխված տարբերակով՝ **մը < մի**: **Եմ** օժանդակ բայից և **ալ** շաղկապից առաջ բարեհնչության համար ստանում է **ն** մասնիկը՝ **մըն**. «Բառարանն իսկ առանց օրինակի կմախ **մըն է**» (Շ. Շահնուր):

Արևմտահայերենում **բացակայում է ներգոյական հոլովը**: Այդ հոլովի իմաստը արտահայտվում է. **1.** սեռական–տրականով և **մեջ** կապով՝ **Պարտեզին մեջ** աղուոր վարդեր տեսած էի, **2.** ուղղական–հայցականով՝ **Երևան** հանդիպեցանք, **Ֆրանսա** կը սորվիմ, **3.** առանձին քարացած կառույցներում արտահայտվում է ուղղակի սեռական–տրականով՝ Այս **պարագային** չեմ կրնար քեզի հետ խօսիլ:

Արևմտահայերենում սովորաբար ուղղական–հայցականով է արտահայտվում և՛ անձի, և՛ իրի առում ունեցող բառերի ուղիղ խնդիրը, քանի որ արևմտահայերենում բացակայում է անձի և իրի առման քերականական կարգը, ինչպես՝ Վահան իր **ծնողքը** կը սիրէ:

Բացառականը ունենում է **–է** և **–մէ** վերջավորությունները: **–Մէ**–ն ավելանում է **–ոջ** արտաքին և **օ** ներքին հոլովման պատկանող գոյականների վրա, ինչպես՝ **ընկերոջմէ, քրոջմէ, տալոջմէ, հորմէ, եղբորմէ, մորմէ**: Արևմտահայերենում **–մէ**–ով բացառական է կազմում նաև **Աստուած** բառը՝ **Աստուծմէ(ն)**: Գործիականում, բացի **–ով** և **–ք** վերջավորություններից, գործածական է նաև **–մով** վերջավորությունը: Այս վերջավորությամբ գործիական են կազմում **–ոջ** արտաքին և **օ(ո)** ներքին հոլովման պատկանող գոյականները՝ **քրոջմով, հորմով, եղբորմով, նաև՝ Աստուծմով**:

Եզակի թվում ի հոլովման ոլորտը արևմտահայերենում փոքր–ինչ ընդլայնվում է, քանի որ **ի**–ով են հոլովվում նաև **ի**–ով վերջավորվող գոյականները՝ **գինիի, որդիի, այգիի, հոգիի, ուսուցչուհիի, երկաթուղիի**: Բացի այդ, **–ում** ածանցով գոյականների համար առավել սովորական է **–ի** հոլովումը՝ **ուսում – ուսումի, հարցում – հարցումի, շարժում – շարժումի, կատարում – կատարումի** ևն: Ի տարբերություն արևելահայերենի՝ արևմտահայերենում **–ու** հոլովման են ենթարկվում նաև մի շարք միավանկ գոյականներ՝ **այգ, գահ, դար, ժամ, ծով, կով, հայ, հաւ, հով, մահ, նաւ, շահ, պապ, պահ** ևն: **–ու**–ով կարող են հոլովվել նաև **արեւ, գլուխ, ամիս, տղայ, ճամբայ** և մի քանի այլ բառեր: Այս հոլովման են պատկանում նաև **–եր, –ներ** հոգնակերտներով ձևավորվող բոլոր գոյականները, այդ թվում՝ փոխանունները՝ **այգիներու, գետերու, միրգերու, ջուրերու, մեծերու, նստածներու** ևն:

Արևմտահայերենում **–ոյ** հոլովման ոլորտը լայն է: Այս հոլովման են ենթարկվում՝ **1. սեր, Պոլիս, Աստուած** բառերը, **2. իա**–ով վերջավորվող օտարազգի հատուկ տեղանունները՝ **Ասիա, Իտալիա, Եդեսիա, Պերմանիա, Եւդոկիա, Ռուսիա** ևն:

Ժամանակ ցույց տվող գոյականների սեռական–տրականը արևմտահայերենում կազմվում է **–ուան (–վան)** վերջավորությամբ, ինչպես՝ **օր–օրուան, իրիկուն – իրիկուան, գիշեր – գիշերուան** ևն:

Դերանուն: Կան դերանուններ, որոնք գործածվում են միայն արևմտահայերենում: Դրանք կա՛մ նույն դերանվան հնչյունափոխված կամ տարբերակային ձևեր են, ինչպես՝ **ինք(ը), դուն, աս, ան, ուեւ, ոչ մէկ(ը), ամէն մէկ(ը), քանի մը**, կա՛մ էլ լեզվի զարգացման նախորդ փուլերից կամ բարբառներից փոխանցված կազմություններ՝ **հոս, հող, հոն, ասիկա, ատիկա, անիկա, ասանկ, ատանկ, անանկ, ինքզինք** (հոգն.՝ **իրենք–գիրենք**), **մէկզմէկ, ուրկէ՞, մէկ քանի(ն)** ևն:

Արևմտահայերենում նույնպես մի քանի դերանուններ ունեն գոյականներից տարբեր՝ դերանվանական հոլովում: Այդ դերանուններն են՝ **ես, դուն, մենք, դուք, ասիկա, ատիկա, անիկա, ով, ինք(ը)**: Նշված դերանունները, բացի երկուսից (ասիկա, ատիկա), հայցական հոլովում ունեն առանձին ձևավորում: **Ով** դերանունը չունի հոլովական առանձին ձևեր:

Պակաս ձևերը լրացվում են որ դերանվան հոլովածներով: Ընդհանուր պատկերը այսպիսին է.

ուղղ.	ես	դու	մենք	դուք	այս (սա, ասիկա)	այդ (ատիկա)	այն (ան, անիկա)	ով	իմք(ը)
սեռ.	իմ	քու	մեր	ձեր	ասոր	ատոր	անոր	որու(ն)	իր
տրակ.	իմօի	քեզի	մեզի	ձեզի	ասոր	ատոր	անոր	որու(ն)	իրեն
հայց.	զիս	քեզ	մեզ	ձեզ	ասոր	ատոր	զայն	որ (գոր)	զինք(ը)
բաց.	իմձմէ	քեզմէ	մեզմէ	ձեզմէ	ասկէ	ատկէ	անկէ	որմէ	իրմէ
գործ.	իմձմով	քեզմով	մեզմով	ձեզմով	ասով	ատով	անով	որով (որմով)	իրմով
ներգ.	—	—	—	—	—	—	—	—	—

Մէկ(ը) և **ամէն** դերանունները, ինչպես նաև **մէկ**–ով բաղադրված դերանունները, ի տարբերություն արևելահայերենի, արևմտահայերենում ենթարկվում են –ու հոլովման: Անվանական –ու հոլովում ունի նաև **որ** դերանունը՝ **որ – որու(ն)**:

Բայ: **Բայի լծորդությունը և կազմությունը:** Արևմտահայերենում բայն ունի երեք լծորդություն՝ **ա – կարդալ, երթալ, խաղալ, ե – երգել, ըսել, հագնել, ի – խօսիլ, սորվիլ, փախչիլ:** Կազմությամբ, ինչպես արևելահայերենում, բայերը լինում են պարզ և ածանցավոր: Գրական լեզվում չ սոսկածանցը գործածվում է միայն երեք բայերի մեջ՝ **փախչիլ, թռչիլ, դաչիլ:** Ունեն գուգածներ՝ **թռիլ, փախիլ, դաչնալ:** Ան սոսկածանց ունեցող մի շարք բայեր արևելահայերենում հանդես են գալիս **ն** սոսկածանցով, ինչպես՝ **հիննալ, մոռնալ, գողնալ, սևնալ, հասկնալ** ևն: Կրավորական բայերը պատկանում են **ի** լծորդության և ունեն վ (գրվում է **ու**) ածանցը՝ **գրուիլ, կարդացուիլ, մոռացուիլ:**

Պատկերն այսպիսին է.

1. Ե խոնարհման աններածանց բայեր՝ **գրել, յաղթել, յիշել:**
2. Ե խոնարհման **ն** սոսկածանց ունեցող բայեր՝ **մտնել, իջնել, գտնել:**
3. Ե խոնարհման պատճառական բայեր՝ **մոռցնել, խօսցնել, թոցնել, հագցնել:**
4. Ա խոնարհման աններածանց բայեր՝ **կարդալ, խաղալ, երթալ, հոգալ, անսալ:**

5. Ա խոնարհման **ան, են, ն** սոսկածանց ունեցող բայեր՝ **մոռնալ, խոստանալ, մերձենալ, գիտնալ, հիննալ:**

6. Ի խոնարհման աններածանց բայեր՝ **ապրիլ, խօսիլ, ծնիլ, ուռիլ, պայթիլ, սառիլ, սորվիլ, քրտնիլ:** Այս խմբում պետք է դասել նաև կրավորական բայերը՝ **գրուիլ, երգուիլ, մօտեցուիլ**, որոնք խոնարհվում և բայածներ են կազմում **ի** խոնարհման աններածանց բայերի նման:

7. Ի խոնարհման **ն, չ** սոսկածանց ունեցող բայեր՝ **հագնիլ, հասնիլ, թռչիլ, դաչիլ, փախչիլ:**

8. Ե, ի, ա խոնարհման բազմապատկական բայեր՝ **պոկոտել, թռչտիլ, կռուլըտիլ, ստուլըտալ:**

Բայի սեռը: Չեզոք սեռի բայերը արևմտահայերենում սովորաբար պատկանում են **ի** լծորդության՝ **մեռնիլ, բուսնիլ, խորհիլ, թռչիլ, փախչիլ**, բայց նաև՝ **իջնել, իյնալ, հիանալ** ևն: Երկու գրականներում էլ ներգործական են հիմնականում **ե** խոնարհման բայերը՝ **երգել, ներկել, ջրել, բերել, ընել, (պնել), ըսել (ասել)**, բայց նաև՝ **բանալ, մոռնալ, գիտնալ, կարդալ, սորվիլ** ևն: Բոլոր լծորդությունների համար արևմտահայերենում կրավորականը ելակետային ձևում ունի բառավերջում նույն –ուիլ մասնիկը: Կրավորական սեռի բայերը խոնարհվում են **ի** խոնարհման աններածանց բայերի նման:

Բայի անդեմ ձևեր կամ **դերբայներ:** Արևմտահայերենը չունի **անկատար** և **համընթացական (համակատար)** դերբայները: Կազմության մասնակի տարբերություններ ունեն **անորոշը, վաղակատարը** և **ժխտականը:** Արևմտահայերենում որոշ լեզվաբաններ առանձնացնում են նաև **ընթացակցական** դերբայը: Այսպիսով, դերբայները արևմտահայերենում յոթն են՝ **անորոշ, ապառնի, վաղակատար, հարակատար, ենթակայական, ընթացակցական, ժխտական:**

Հարակատար դերբայը արևմտահայերենում բաղադրում է ժամանակածներ՝ **հարակատար ներկա** և **հարակատար անցյալ**. ի տարբերություն արևելահայերենի՝ հարակատար + օժամդակ բայ կաղապարը բնորոշ է բոլոր բայերին՝ անկախ սեռից ու կազմությունից՝ **գրած եմ – գրած ես – գրած է, ըրած եմ – ըրած ես – ըրած է:**

Ընթացակցական դերբայը ցույց է տալիս դիմավոր բայով արտահայտված գործողությանը կամ եղելությանը զուգահեռ ընթացող ուրիշ գործողության կամ եղելության գաղափար: Կազմվում է դերբայական հիմքից –էն վերջավորությամբ՝ **աղօթելէն, լալէն, փշրելէն, ճեղքելէն:** Պատասխանում է **ի՞նչ ընելէն, ի՞նչ ըլլալէն** հարցերին:

Ժխտական դերբայը արևմտահայերենում կազմվում է ը վերջնամասնիկով. անորոշի լ–ն փոխվում է ը–ի՝ **վազել – վազեր, կարդալ – կարդար:** –ի խոնարհման բայերը ունենում են զուգաձևեր՝ **խօսիր // խօսեր, ապրիր // ապրեր, փախչիր // փախչեր, գրուիր // գրուեր:**

Վաղակատար դերբայը կազմվում է եր մասնիկով, որը դրվում է ե, ի խոնարհման պարզ բայերի ներկայի, իսկ մյուս բայերի անցյալի հիմքի վրա. **ի** խոնարհումը փոխվում է ե–ի: Պատասխանում է **ի՞նչ ըրեր, ի՞նչ եղեր** հարցերին՝ **գրեր, խօսեր, մօտեցեր:** Միանալով օժանդակ բայի ներկայի և անցյալի ձևերին՝ կազմում է սահմանական եղանակի վաղակատար ներկա և վաղակատար անցյալ ժամանակաձևեր՝ **վազեր են, վազեր էի:**

Ենթակայական և ապառնի դերբայները կազմությամբ համընկնում են արևելահայերենի հետ:

Բայի դիմավոր կամ եղանակային ձևեր (ժամանակաձևեր): Պարզ բայերի դրական խոնարհման համադրական և վերլուծական ժամանակների ընդհանուր պատկերը այսպիսին է.

	<i>Ե խոնարհում</i>	<i>Ա խոնարհում</i>	<i>Ի խոնարհում</i>
Սահմանական եղանակ			
Անկատար ներկա	կը գրեն, կը գրենք	կը կարդան, կը կարդանք	կը սորվին, կը սորվինք
Անկատար անցյալ	կը գրէի, կը գրէինք	կը կարդայի, կը կարդայինք	կը սորվէի, կը սորվէինք
Անցյալ կատարյալ	գրեցի, գրեցինք	կարդացի, կարդացինք	սորվեցայ, սորվեցանք
Ապառնի	պիտի գրեն, պիտի գրենք	պիտի կարդան, պիտի կարդանք	պիտի սորվին, պիտի սորվինք
Անցյալի ապառնի	պիտի գրէի, պիտի գրէինք	պիտի կարդայի, պիտի կարդայինք	պիտի սորվէի, պիտի սորվէինք
Վաղակատար ներկա	գրեր են, գրեր ենք	կարդացեր են, կարդացեր ենք	սորվեր են, սորվեր ենք
Վաղակատար անցյալ	գրեր էի, գրեր էինք	կարդացեր էի, կարդացեր էինք	սորվեր էի, սորվեր էինք

Հարակատար ներկա	գրած են, գրած ենք	կարդացած են, կարդացած ենք	սորված են, սորված ենք
Հարակատար անցյալ	գրած էի, գրած էինք	կարդացած էի, կարդացած էինք	սորված էի, սորված էինք
Ըղծական եղանակ			
Ըղծական ապառնի	գրեմ, գրենք	կարդամ, կարդանք	սորվիմ, սորվինք
Ըղծական անցյալի ապառնի	գրէի, գրէինք	կարդայի, կարդայինք	սորվէի, սորվէինք
Հարկադրական եղանակ			
Հարկադրական ապառնի	գրելու են, գրելու ենք	կարդալու են, կարդալու ենք	սորվելու են, սորվելու ենք
Հարկադրական անցյալի ապառնի	գրելու էի, գրելու էինք	կարդալու էի, կարդալու էինք	սորվելու էի, սորվելու էինք
Հրամայական եղանակ	գր՛, գրեց՛ք	կարդա՛, կարդաց՛ք	սորվ՛, սորմեց՛ք

Եղանակաձևերի կազմության հիմնական սկզբունքները պահպանվում են սուսկածանցավոր, պատճառական և կրավորական բայերի դեպքում: Պատճառական բայերը անցյալի հիմքում ունենում են –ուց բաղադրիչ մասնիկը՝ **խօսցուց–ի, խօսցուց–է՛ք, հարցուց–ինք:** Կրավորական բայերը, անկախ այն բանից, թե որ լծորդության են պատկանում, ունենում են **ի** լծորդը և խոնարհվում են **ի** լծորդության բայերի պես՝ **կը գրուին, գրուեր են, գրուեցայ, գրուեցար, գրուեցէ՛ք** ևն:

Անկանոն բայեր: Արևմտահայերենում անկանոն բայերին բնորոշ շեղումներն ու յուրահատկությունները, ինչպես արևելահայերենում, սովորաբար լինում են հարակատար դերբայում, վաղակատար ձևաբայում, անցյալ կատարյալում, հրամայական եղանակում, երբեմն էլ ենթակայական դերբայում: Արևմտահայերենում անկանոն բայերի թիվը փոքր–ինչ շատ է. անկանոն են նաև –ի խոնարհման աններածանց **նստիլ, սկսիլ, ծնիլ, փոթիլ, պրծիլ** բայերը, ինչպես նաև **ընկնել, երթալ, պագնել, խածնել** և մի քանի այլ բայեր: Դրանք սովորաբար անցյալի հիմքում և դրանից կազմվող ձևերում ունենում են հետևյալ հիմնական դրսևորումները՝

տարարմատություն՝ **ուտել**, հիմքը՝ կեր – կերած, կերեր են, կերայ ևն, **գալ**, հիմքը՝ եկ – եկած, եկող, եկեր են, եկայ, հրամ.՝ եկո՛ւր, եկէ՛ք, **ըլլալ**, հիմքը՝ եղ – եղած, եղող, եղեր, եղայ, հրամ.՝ եղի՛ր, եղէ՛ք, **երթալ**,

հիմքը՝ **գաց** – **գացած**, **գացեր են**, **գացի**, **գնաց**, **գացինք**, հրամ.՝ **գնա՛**, **գացե՛ք** ևն,

հիմքի մասնակի փոփոխություն կամ հերթագայություն՝ **գարնել**, հիմքը՝ **գարկ** – **գարկած**, **գարկեր են**, **գարկի** ևն, **ելլել**, անցյալի հիմքը՝ մեկ լ–ով՝ **ել** – **ելած**, **ելեր են**, **ելայ**, **ընել**, հիմքը՝ **ըր** – **ըրած**, **ըրեր են**, **ըրի**, հրամ.՝ **ըրե՛**, **դնել**, հիմքը՝ **դր** – **դրած**, **դրեր են**, **դրի**, **իյնալ**, հիմքը՝ **ինկ** – **ինկած**, **ինկող**, **ինկեր**, **ինկայ**, հրամ.՝ **ինկի՛ր**, **ինկե՛ք**, **տանիլ**, հիմքը՝ **տար** – **տարած**, **տարեր**, **տարայ**, հրամ.՝ **տա՛ր**, **տարե՛ք**, **դառնալ**, հիմքը՝ **դարծ** – **դարծած**, **դարծող**, **դարծեր**, **դարծայ**, հրամ.՝ **դարծի՛ր**, **դարծե՛ք** ևն,

հրամայականում արմատական կազմություն՝ ուտել – **կե՛ր**, գարնել – **գա՛րկ**, բերել – **բե՛ր**, ելլել – **ե՛լ**, դնել – **դի՛ր**, տեսնել – **տե՛ս**, առնել – **ա՛ռ** ևն,

նույն կազմության բայերում անցյալ կատարյալի ձևավորման օրինաչափություններից շեղումներ՝ **ըսել** – **ըսի**, **ըսիր**, **ըսաւ**, **առնել** – **առի**, **առիր**, **առաւ**, **պագնել** – **պագի**, **պագիր**, **պագաւ**, **նստիլ** – **նստայ**, **նստար**, **նստաւ**, **սկսիլ** – **սկսայ**, **սկսար**, **սկսաւ**, **ծնիլ** – **ծնայ**, **ծնար**, **ծնաւ** ևն:

Արևելահայերենի անցյալ կատարյալում մի քանի բայերի զուգածկությունը (բերի – բերեցի, տվի – տվեցի, դրի – դրեցի ևն) արևմտահայերենին բնորոշ չէ. արևմտ.՝ **բերի**, **բերիր**, **բերաւ**, **տուի**, **տուիր**, **տուաւ**, **դրի**, **դրիր**, **դրաւ**:

Ժխտական խոնարհում: Արևմտահայերենում բայի ժխտական խոնարհման կազմության սկզբունքները նույնն են, ինչ արևելահայերենում: Տարբերությունները դրսևորվում են որոշակի ժամանակաձևերի կազմության և առանձին ձևերի կիրառության մեջ. **սահմանական եղանակի անկատար ներկան** և **անցյալը** բոլոր բայերի համար կազմվում են օժանդակ բայի ժխտական ձևերով և ժխտական դերբայով՝ ինչպես՝ **կը գրեմ** – **չեմ գրեր**, **կը գրեի** – **չեի գրեր**, **կը սորվիմ** – **չեմ սորվիր**, **չեի սորվեր**, **չի երթար** – **չ’երթար**, **չի ըլլար** – **չ’ըլլար** (ըղծ. ապառնին՝ **չերթար**, **չըլլար**) ևն: **Արգելական հրամայականը** կազմվում է **մի** մասնիկով, որ եզակի թվում ավելանում է ոչ թե դրականի ձևերի վրա, ինչպես

արևելահայերենում է, այլ անորոշ դերբայի այնպիսի ձևի վրա, որի լ–ն փոխված է **ր–ի** (ժխտական դերբայ)՝ **մի՛ կարդար**, **մի՛ խօսիր**, **մի՛ երգեր**, **մի՛ թողուր**, **մի՛ հարցուր**, **մի՛ մօտենար**, **մի՛ խոստանար** ևն: Հոգնակի արգելականը կազմվում է՝ **մի** մասնիկը ավելացնելով ըղծական ապառնիի հոգնակի երկրորդ դեմքի վրա՝ **մի՛ գրեք**, **մի՛ խօսիք**, **մի՛ կարդաք**, **մի՛ մոռնաք**, **մի՛ գրուիք**, **մի՛ փախչիք**:

Շարահյուսական մակարդակում արևմտահայերենի և արևելահայերենի տարբերությունները անհամեմատ քիչ են: Նշենք դրանցից մեկերկուսը. 1. Ժխտական դերանուն + դրական բայ կաղապարը արևմտահայերենում օրինաչափ երևույթ է՝ **ոչ ոք ըսաւ**, **ոչինչ կրցաւ ընել**, 2. սա դերանունը ունի որոշչային կիրառություն՝ **սա** իրիկունն ըլլայի ես, **սա** գիրքը, 3. հատկացուցիչը որոշյալ հոդով է գործածվում հատկացյալի որոշյալ առման դեպքում կամ կապ գերադաս անդամով կապակցություններում՝ **թաղականին** կնիկը, **լոյսին** համար, 4. և՛ անծի, և՛ ոչ անծի առման դեպքում ուղիղ խնդիր–հայցականը ձևով նման է ուղղականին, կամ այլ կերպ ասած՝ ուղիղ խնդիրը դրվում է ուղղական–հայցականով, ինչպես՝ Այն երիտասարդը տեսաւ ֆրանսացի **աղջիկը**, **գերմանացին**, **իտալացին**, **հոյնը**, **ռուսը**... ևն:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Բաղադրյալ հատուկ անուններում մեծատառերի գործածության մասին⁴³

Նկատի առնելով բաղադրյալ հատուկ անունների մեջ մեծատառերի գործածության անմիօրինակությունն ու սահմանված կանոնների անհետևողական կիրառությունը, ինչպես նաև բաղադրյալ անունների ու անվանումների ավելացման հետևանքով սրանց գրության ուսուցման և տպագրական գործում ստեղծված դժվարությունները՝ վերջիններս հաղթահարելու և մեծատառերի գրության մեջ միասնականություն սահմանելու նպատակով ՀՀ Կառավարությանն առընթեր լեզվի պետական տեսչության հայերենի բարձրագույն խորհուրդը որոշում է.

1. Բոլոր բառերն սկսել մեծատառով.

Ա. Բոլոր պետությունների պաշտոնական բաղադրյալ հատուկ անուններում.

Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Արաբական Միացյալ Ամիրություններ, Աֆղանստանի Իսլամական Պետություն, Բելառուսի Հանրապետություն, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն (Նախկինում՝ Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետություն և Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետություն), Հայաստանի Հանրապետություն (Նախկինում՝ Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն), Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն, Ռուսաստանի Դաշնություն (այսպես նաև՝ Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետություն և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն), Օսեթ-Ալանիայի Հանրապետություն և այլն:

⁴³ Տե՛ս «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու», Եր., 2006, էջ 286–294: Սույն նախագծով մասնակի փոփոխություններ են կատարվել հատուկ անունների գրության մինչ այդ գործող կանոններում, սակայն դրանցում կան որոշ վիճելի դրույթներ:

Ծանոթություն: Պետությունների պատմական անուններում (պետություն, ամիրություն, թագավորություն, կայսրություն, խանություն, մելիքություն և այլն) մեծատառ է դրվում բաղադրյալ անվան միայն առաջին բաղադրիչը (տե՛ս իր տեղում):

Բ. Բոլոր բաղադրյալ այն անձնանուններում և մականուններում ու ծածկանուններում, որոնց մեջ՝

ա) բոլոր բաղադրիչներն առանձին–առանձին հատուկ անուն են, օրինակ՝ Ալեքսանդր Սերգեևիչ Պուշկին, Ալեքսանդր Ստեփանի Թևոսյան (Ակսել Բակունց), Եղիշե Աբգարի Սողոմոնյան (Եղիշե Չարենց), Խոսե Ռաուլ Կապաբլանկա, Կիմ Իր Սեն, Հո Շի Մին, Մաո Ցզեդուն, Մելիք–Հակոբյան Հակոբ Մելիք–Միրզայի (Րաֆֆի), Նիկոլայ Անդրեևիչ Ռիմսկի–Կորսակով, Ջորջ Նոել Գորդոն Բայրոն, *այսպես նաև՝* Գամառ–Քաթիպա, Նար–Դոս, Սայաթ–Նովա և այլն.

բ) լրացյալը հատուկ անուն է, իսկ լրացումը (նախադաս թե հետադաս)՝ մականուն, օրինակ՝ Աշոտ Երկաթ, Արա Գեղեցիկ, Գայոս Սեկունդոս, Դավիթ Անհաղթ, Իվան Ահեղ, Մխիթար Սպարապետ, Պետրոս Առաջին, Պլինիոս Ավագ, Ջորջ Բուշ Կրտսեր, Սահակ Պարթև, Տիգրան Մեծ, Անանիա Շիրակացի, Ներսես Աշտարակեցի, Սողոմոն Իմաստուն, Հայկ Նահապետ, *այսպես նաև՝* Առյուծաձև Միեր, Գայլ Վահան, Չախտրդ Փանոս, Չենով Օհան, Մայր Թերեզա, Քաջ Նազար, Անբան Հուռի, Միկիտան Սաքո և այլն:

Գ. Բոլոր բաղադրյալ այն աշխարհագրական անուններում, որոնց մեջ՝

ա) բոլոր բաղադրիչներն առանձին–առանձին հատուկ անուն են, օրինակ՝ Անի–Կամախ, Արփա–Սևան, Բաղք–Քաշունիք, Դոնի Ռոստով, Էլզաս–Լոթարինգիա, Խուրթ–Բռնաշեն, Մայնի Ֆրանկֆուրտ, Վան–Տոսպ, Վոլգա–Դոն և այլն.

բ) հասարակ անուն լրացումը նախադաս է, իսկ հատուկ անուն լրացյալը՝ հետադաս, օրինակ՝ Արևելյան Եփրատ, Արևմտյան Բեռլին, Բարձր Հայք, Կենտրոնական Աֆրիկա, Հարավային Ամերիկա, Մեծ Մասիս, Նոր Արեշ, Փոքր Ասիա, Ներքին Թալին, Վերին Արտաշատ, այսպես նաև՝ Հին Հունաստան, Հին Հռոմ և այլն.

գ) լրացումն ու լրացյալը օտարալեզու, բոլոր բաղադրիչները մեծատառով գրվող (վերոհիշյալ որևէ տեսակի) անուններ են, օրինակ՝ Ադիս

Արեթա, Ալմա Աթա (այժմ՝ Ալմաթի), Բուենոս Այրես, Իսիկ Կուլ, Խալխին Գոլ, Կրիվոյ Ռոզ, Ղարա Բողազ Գյուլ, Մատոչկին Շար, Միներալնիե Վոդի, Յասնայա Պոլյանա, Նիժնի Նովոգորոդ, Նյու Յորք, Սան Ֆրանցիսկո և այլն:

դ) երկու բաղադրիչներն էլ հասարակ անուններ են (առաջինը՝ նաև հատուկ), բայց պայմանական կամ փոխաբերական գործածությամբ դառնում են հատուկ անվան բաղադրիչ և գրվում մեծատառ, օրինակ՝ Ծիր Կաթին (աստղակույտ), Նոր Երկիր, Հեռավոր Արևելք, Հին Արևելք, Մերձավոր Արևելք (երկրամասեր), Հայկական Պար (լեռնաշղթա), Մեծ Արջ, Փոքր Արջ (համաստեղություններ): Այսպես նաև՝ հատուկ անվան և նրան հաջորդող պայմանական գործածության անվան բաղադրություններում, օրինակ՝ Աֆրիկայի Եղջյուր (թերակղզի), Վիեննայի Անտառ (լեռնազանգված), Բերենիկեի Վարսեր (համաստեղություն) և այլն:

Դ. Հոգևոր-պատմամշակութային այն բաղադրյալ հատուկ անուններում, որոնց մեջ բոլոր բաղադրիչներն առանձին-առանձին կամ «Սուրբ» մականվան հետ միասին հատուկ անուն են. օրինակ՝ Անգղա Սուրբ Նշան, Արգյազի Սուրբ Ստեփանոս Նախավկա, Դարաշամբի Սուրբ Ստեփանոս, Ընծայից Սուրբ Աստվածածին, Մաստարայի Սուրբ Հովհաննես, Մուղնու Սուրբ Գևորգ, Վասպուրականի Մոկաց Սուրբ Մինաս, կամ նաև՝ Սուրբ Նշան, Սուրբ Ստեփանոս Նախավկա, Սուրբ Աստվածածին, Սուրբ Հովհաննես, Սուրբ Գևորգ, Սուրբ Մինաս (վանք, եկեղեցի):

Ծանոթություն: Հայերեն թե օտարալեզու բաղադրյալ անձնանուններում և աշխարհագրական անուններում գործածված միջադաս և վերջադաս մեկնական-լրացական բառերն ու քերականական-վերաբերական նշանակության բառ-մասնիկները (նախդիր, հոդ, կապ, շղկապ) ինչպես այլ լեզուներում, այնպես էլ հայերենում, գրվում են փոքրատառ, օրինակ՝ Աբդ էլ Քերիմ, Անդրեա դե Սարտո, Անդրեա դըլլա Ռոբիա, Բողուն դե Կուրտենե, Ժաննա դ'Արկ, Լեոնարդո դա Վինչի, Հարուն ալ Ռաշիդ, Միրզա Մելքում խան (Հովսեփ Մելքոնյան), Միրզո Թուրսուն-գադե, Մուքիմի Մուհամադ Ամին-խոջա, Նուր ադ դին ալ Հալաբի, Շառլ դը Գոլ, Վիլիելմ ֆոն Հոմբոլդտ, Օմար Խայամ Ղիասսադդին Աբու-լ-Ֆաթի իբն Իբրահիմ, Մահարի Աբու-լ-Ալա, Ադրիան վան Օստադե, Մուհամեդ Սուլեյման օղլի Ֆիզուլի (Ֆուզուլի). այսպես նաև աշխարհագրական բաղադրյալ անուններում՝ Անտիոք առ Եփրատավ, Անտիոք առ Տավրոսիվ, Իլ դը Ֆրանս (պատմական մարզ Ֆրանսիայում), Մեծ կամ Խաղաղ օվկիանոս, Նահր էլ Արդեն (Հորդանան գետի արաբերեն անվանումը), Ռիո դե Ժանեյրո (քաղաք), Սեն Պիեռ և Միքելոն

(կղզեխումբ), Տուլլա դե Համդոն, Տալլ իբն Համտուն (Թիլ Համտուն բերդավանի ֆրանսերեն և արաբերեն անվանումները), Ջաբալ ալ Հարիթ (Արարադի՝ Ջուրի լեռան արաբերեն անվանումը) և այլն:

Սակայն բաղադրյալ հատուկ անվան սկզբում կամ նախադաս դիրքում (թե՛ հայերենում, թե՛ այլ լեզուներում) այդ կարգի մեկնական-լրացական բառերն ու կապակցական բառ-մասնիկները գրվում են մեծատառ, օրինակ՝ Իբն էլ Ֆաթի, Լա Կրոզ Մաթյուրեն Վեյսիե, Լա Վալե, Պուսեն Շառլ Ժան, Վան Գոգ Վինսենտ, Վան Դեյք Անտոնիս, Օ'Ռիորդան Մայքլ, Օ'Նեյլ (Օ'Նիլ) Յուջին, այսպես նաև՝ աշխարհագրական անուններում՝ Լա Մանչ (նեղուց), Լա Պլատա (քաղաք), Լե Կրեզո (քաղաք), Սեն Գոթարդի (լեռնանցք), Սեն Պիեռ (նավահանգիստ) և այլն:

Ծանոթություն: Հատուկ անձնանվան զբաղմունքը, մասնագիտությունը, պաշտոնը (բանաստեղծ, վիպասան, նկարիչ, երգիչ, ուսուցիչ, երկրագործ, կոշկակար, թագավոր և այլն) և տեղանվան տեսակը (գետ, լիճ, ծով, լեռ, դաշտ, գյուղ, քաղաք և այլն) որոշող հիմնաբառերը, բոլոր բառերը մեծատառով գրվող հատուկ անունների հետ գործածվելիս գրվում են փոքրատառ, օրինակ՝ Աշոտ Երկաթ թագավորը, Խրիմյան Հայրիկ կաթողիկոսը, Դերենիկ Դեմիրճյան վիպասանը, Եղիշե Չարենց բանաստեղծը, Մարտիրոս Սարյան նկարիչը, Անի-Կամախ քաղաքը, Արփա-Սևան ջրատարը, Արևմտյան Եփրատ գետը, Բարձր Հայք աշխարհը, Խալխին Գոլ լիճը, Հայկական Պար լեռնաշղթան, Մեծ Մասիս լեռը, Մաստարայի Սուրբ Հովհաննես եկեղեցին, Վասպուրականի Մոկաց Սուրբ Մինաս վանքը և այլն:

2. Միայն առաջին բառն սկսել մեծատառով (դրանց կազմում հատուկ անուն լինելու դեպքում պահպանելով նաև այդ անվան մեծատառով գրությունը):

Ա. Ֆիզիկաաշխարհագրական այն բաղադրյալ հատուկ անուններում, որոնց մեջ լրացյալը, առանձին վերցված, հատուկ անուն չէ. Աղթամար կղզի, Արայի լեռ, Արարատյան դաշտ, Բաղալի քար (բերդ-ամրոց), Գեղամա լեռներ, Լոռու հրաբխային բարձրավանդակ, Կասպից (Վրկանա) ծով, Կովկասի լեռնաշղթա, Հիմալայան լեռներ, Հրազդանի ծոր, Հյուսիսային սառուցյալ օվկիանոս (կամ Սառուցյալ օվկիանոս), Մեծ կամ Խաղաղ օվկիանոս (կամ Խաղաղ օվկիանոս), Որոտանի լեռնանցք, Պարսից ծոց, Սև ծով, Սևանա լիճ, Տրդատի թախտ (բերդավան, դաստակերտ), Ուրմիա (Կապուտան) լիճ և այլն:

Ծանոթություն: Այս կարգի աշխարհագրական բաղադրյալ հատուկ անունները գրաբարում ունեն այլ շարադասություն, որի հետևանքով հասարակ անուն լրացյալները լինում են նախադաս և նույնպես գրվում են մեծատառ, այն է՝ Աթոռ Անահտա(յ), Դուռն Անտիոքա(յ), Քարն Բաղակու, Թախտ Տրդատա(յ) և այլն:

Բ. Պետությունների վարչատարածքային հին ու նոր այն անվանումներում, որոնց մեջ լրացյալն, առանձին վերցված, հատուկ անուն չէ. Արագածոտնի մարզ, Վայոց ձորի մարզ, Տամբուլի մարզ, Լոձի վոյեվոդություն, Կրակովի վոյեվոդություն, Վանի նահանգ, Փենսիլվանիայի նահանգ, Մասյացոտն գավառ, Մուշի գավառ, Կրասնոյարսկի երկրամաս, Ստավրոպոլի երկրամաս, Լանկաշիրի կոմսություն, Քենտի կոմսություն, Հոկայդոյի արեֆեկտորա, **այսպես նաև՝ պետությունների, ավատական (ֆեոդալական) ինքնավար իշխանությունների պատմական անվանումներում՝** Կիլիկիայի հայկական պետություն (կամ թագավորություն), Կարսի թագավորություն, Սյունիքի թագավորություն, Վասպուրականի թագավորություն (բայց նաև՝ Կարսի Բագրատունիների թագավորություն, Վասպուրականի Արծրունյաց թագավորություն), Բյուզանդական կայսրություն, Հռոմեական կայսրություն, Խամսայի մելիքություն, Հուլիսյան միապետություն, Հայաստանի առաջին հանրապետություն **կամ** Առաջին հանրապետություն, Ֆրանսիայի հինգերորդ հանրապետություն **կամ** Հինգերորդ հանրապետություն և այլն:

Գ. Պետությունների խմբերի (դաշինքների, միավորումների) այն անուններում, որոնց մեջ լրացյալը (նաև սրան նախորդող միջադաս բաղադրիչը), առանձին վերցված, հատուկ անուն չէ.

Արաբական պետությունների լիզա, Երեք կայսրերի դաշինք, Եռյակ դաշինք, Սրբազան դաշինք, Նավթ արտահանող երկրների կազմակերպություն, Բրիտանիայի ազգերի համագործակցություն (բայց՝ Անկախ Պետությունների Համագործակցություն) և այլն:

Դ. Չակերտների մեջ առնվող անվանումներում.

ա. գրական, գիտական, արվեստի և այլ երկերի ու ստեղծագործությունների, լրագրերի, պարբերականների բաղադրյալ անուններ՝ «Պատերազմ և խաղաղություն», «Հացի խնդիր», «Իններորդ ալիք», «Ամբոխները խելագարված», «Գրական թերթ», «Հայկական բանակ»

(ամսագիր), «Հայոց աշխարհ» (թերթ), «Իմ ընկեր Նեսուն», «Մենք ենք, մեր սարերը», «Մամուլի տեսություն» (հեռուստածրագիր), «Հողի արյուն» (գինի), «Անհաղթ աքլոր» (կոնֆետ) և այլն:

բ. հիմնարկներին, կուսակցություններին, կազմակերպություններին և զանազան այլ հաստատություններին ու առարկաներին (տարբերանշաններ, շքանշաններ և այլն) տրվող բաղադրյալ անուններ՝ «Նաիրիտ» գործարան, «Ազգային միաբանություն» կուսակցություն, «Հզոր հայրենիք» կուսակցություն (բայց նաև՝ Գերմանիայի սոցիալ-ժողովրդավարական կուսակցություն, Հայաստանի ժողովրդական կուսակցություն), «Մայրական փառք» շքանշան, «Պատվո նշան» շքանշան և այլն:

Ե. Համաշխարհային կամ համապետական ճանաչման հաստատության, մրցանակի կամ բարձրագույն պատվավոր կոչման, ինչպես նաև պետություններից շնորհվող շքանշանների և մեդալների բաղադրյալ անուններում. (Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան) Մատենադարան, (ՀՀ) Գիտությունների ազգային ակադեմիա, Նոբելյան մրցանակ, Հերոսուհի մայր, **այսպես նաև՝** Հայրենիքի շքանշան, Փառքի (առաջին աստիճանի, երկրորդ աստիճանի) շքանշան, Հայաստանի Ազգային հերոս, «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշան և այլն:

Զ. Համաշխարհային միությունների, կազմակերպությունների, հաստատությունների, եզակի քաղաքական, արհմիութենական և հասարակական մարմինների ընդարձակ և համառոտ բաղադրյալ անուններում. Միավորված ազգերի կազմակերպություն, Անվտանգության խորհուրդ, Խաղաղության համաշխարհային խորհուրդ, Ազգերի լիգա, Շախմատի միջազգային ֆեդերացիա և այլն:

Է. Բոլոր պետությունների կենտրոնական ղեկավար օրենսդիր, գործադիր և դատական բարձրագույն մարմինների բաղադրյալ անուններում. ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատ և Սենատ, Բուլղարիայի Հանրապետության ժողովրդական ժողով և Նախարարների խորհուրդ, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով և Կառավարություն, ՀՀ Վճռաբեկ դատարան և Սահմանադրական դատարան, Սեծ Բրիտանիայի Լորդերի պալատ, Ռուսաստանի Դաշնության Պետական դումա և այլն:

Ծանոթություն: Պաշտոնական փաստաթղթերում և հաղորդագրություններում մեծատառով գրվող **Պառլամենտ, Կոնգրես, Սենատ, Սեյմ, Մեջլիս, Դումա, Ռադա, Կառավարություն** և այլ անունները՝ իբրև պետական կենտրոնական ղեկավար մարմնի տեսակ անվանող բառեր գործածվելիս գրվում են փոքրատառ և մտնում են բառարան որպես հասարակ անուն:

Ը. Պատմահասարակական նշանավոր անցքերի ու շրջափուլերի և պաշտոնական ու ազգային ավանդական տոների անուններում.

ա. պատմահասարակական նշանավոր անցքեր՝ Առաջին համաշխարհային պատերազմ (Առաջին աշխարհամարտ), Մեծ եղեռն, Հայրենական մեծ պատերազմ, 1920 թ. Մայիսյան ապստամբություն, Ռուսաստանի 1812 թ. Հայրենական պատերազմ, Թոնդրակյան շարժում, Հուլյան տոմար և այլն:

բ. պետական–պաշտոնական և միջազգային տոներ՝ Մայիսի մեկ, Մարտի ութ, Ապրիլի յոթ (Մայրության և գեղեցկության տոն), Նոր տարի կամ Ամանոր, Երեխաների պաշտպանության միջազգային օր, Սահմանադրության օր, Երկաթուղայինի օր և այլն:

գ. եկեղեցական–ծիսական և ժողովրդական, ավանդական դարձած տոներ՝ Քրիստոսի հարության կամ պայծառակերպության տոն, Մեծ պաս, Սուրբ ծնունդ (Սուրբ ծննդի տոն), Ջատկի տոն (Ջատիկ), Կարմիր կիրակի և այլն:

3. Դիվանագիտական և պաշտոնական հաղորդագրությունների ու փաստաթղթերի մեջ, Հայոց եկեղեցու պաշտոնական լեզվում, հեղինակային վերաբերմունքի՝ քաղաքավարական և մեծարման ոճերում թույլատրվում է մեծատառի ազատ գործածություն՝ ըստ ընդունված կարգի:

4. Վերոհիշյալ կանոնների մեջ չմտնող բաղադրյալ անվանումները, եթե տեղայնացված չեն, որպես հասարակ անուններ գրել փոքրատառով. (ՀՀ) արտաքին գործերի նախարարություն, կրթության և գիտության նախարարություն, գլխավոր դատախազություն, նկարիչների միություն, պետական համալսարան, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոն, հայկական երգի–պարի վաստակավոր անսամբլ և այլն:

Այսպես են գրվում կուսակցությունների՝ չակերտներում չառնվող բաղադրյալ անունները: Օրինակ՝ կոմունիստական կուսակցություն, դեմոկրատական կուսակցություն, լեյբորիստական կուսակցություն և այլն:

Այսպես են գրվում նաև պետական, զինվորական, գիտական պաշտոնների, պատվավոր և այլ կոչումների բաղադրյալ անունները: Օրինակ՝ գլխավոր դատախազ, ավիացիայի մարշալ, ժողովրդական արտիստ, գիտության վաստակավոր գործիչ, հանրապետության նախագահ և այլն:

Ծանոթություն: Եթե բաղադրյալ անվան վերադիր ածականը տեղայնացնող կամ մասնավորող նշանակություն ունի և օտարաբանությամբ գործածված է տեղանվան սեռական հոլովի իմաստով ու կարող է փոխարինվել այդ ձևով, գրվում է մեծատառով: Օրինակ՝ *Երևանյան լիճ, Կիևյան փողոց, Հայ (Հայաստանի կամ Հայկական) ռանկավար ազատական կուսակցություն* և այլն:

5. Հապավումների մեջ մեծատառերով գրել՝
Ա. Հատուկ և հասարակ բաղադրյալ անունների տառային հապավումներն ամբողջությամբ. ՌԴ, ԱՄՆ, ԳԱԱ, ՀՅԴ, ՄԱԿ, ԱՊՀ և այլն:

Ծանոթություն: Հասարակ գոյականի արժեք ստացած բուհ, մեկ, հեկ, զագս և նման տառային հապավումները գրել փոքրատառով:

Բ. Բաղադրյալ հատուկ անունների ոչ տառային հապավումների միայն առաջին տառը. (Լեհաստանի Հանրապետության) Պետխորհուրդ, (Ռուսաստանի Դաշնության) Պետդումա, Անդրֆեդերացիա և այլն:

Գ. Հասարակ անվան գործածություն ունեցող բաղադրյալ անունների տեղայնացնող բաղադրիչի առաջին տառը. Հայկինո, Հայպետհրատ, Մոսֆիլմ և այլն:

Դ. Խառը տիպի հապավումների նաև առանձին բաղադրիչների առաջին տառը. ԱՄ Նահանգներ, ԼԴ Հանրապետություն, ՌԴ Դումա, ՀՀ Կառավարություն և այլն:

Ե. Օտարազգի տառանուններով հատուկ անունների յուրաքանչյուր տառանվան առաջին տառը. ԷյֆիՍի, ՍիենեՆ, ԲիԲիՍի, ԱյԲիԵՆ և այլն:

ՀԱՎԵԼՎԱԾ 3

Հայերենի կետադրությունը⁴⁴

Կետադրությունը հատուկ գրանշանների համակարգ է, որով գրավոր խոսքում նշվում են լեզվական որոշ միավորների (նախադասությունների, նախադասության անդամների, բառերի ու դրանց բաղադրիչների) սահմաններն ու փոխհարաբերությունը, բառերի կամ տառերի զեղչումը, ինչպես նաև բանավոր խոսքի հնչերանգի որոշ տարրեր:

Սովորաբար առանձնացվում է կետադրական նշանների երեք խումբ՝ **տրոհության, բացահայտության և առոգանության**:

1. ՏՐՈՒՅՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Սրանք գրավոր շարադրանքում նախադասությունները և դրանց շարահյուսական բաղադրիչները սահմանազատող (միացնող), դրանց փոխհարաբերությունները, ինչպես նաև բանավոր խոսքի համապատասխան դադարներն արտահայտող կետադրական նշաններ են: Դրանք են **վերջակետը, միջակետը, ստորակետը, բութը**: (Տրոհության առանձին նշաններ հանդես են գալիս համակցված՝ **ստորակետ-գիծ, միջակետ-գիծ, վերջակետ-գիծ, եռակետ-գիծ**):

ՎԵՐՋԱԿԵՏ դրվում է.

1. Ավարտված **նախադասության** վերջում՝ նշելով համեմատաբար մեծ դադար: Հաջորդող նախադասությունը սկսվում է մեծատառով: **Օր.**՝ *Մեր իրավունքներն ու պարտականությունները հռչակվում են ՀՀ Սահմանադրությամբ: Յուրաքանչյուրս պարտավոր է ծանաչել և հարգել այդ օրենքները:*

2. Շարադրանքից պարբերությամբ չանջատված **վերնագրից, ենթավերնագրից** հետո, ինչպես նաև **ծանոթություն, վարժություն, խնդիր, առաջադրանք, հոդված** և նման բառերից կամ դրանց թվահամարից հետո: **Օր.**՝

⁴⁴ Տե՛ս նաև Ս. Աբրահամյան, Հայերենի կետադրություն, Եր., 2004: Հ. Զաքարյան, Կետադրական բառարան, Եր., 2013:

Վարժություն 1: *Տրված շարադրանքից դուրս գրել անկանոն բայերը:*

Հոդված 4: *Դիվանագիտական ծառայության խնդիրները:* Դիվանագիտական ծառայության խնդիրներն են **ա.** Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը իրականացնելը, **բ.** միջազգային հարաբերություններում Հայաստանի Հանրապետության շահերը և իրավունքները պատշաճ ու հետևողական ներկայացնելը:

Հայոց պատմություն: *Հանրակրթական դպրոցի 10–րդ դասարանի դասագիրք*

3. Թվարկում արտահայտող այն ինքնուրույն նախադասություններից հետո, որոնցից առաջինն արտահայտում է ընդհանրական միտք, իսկ մյուսները նրա մասնավոր դրսևորումներն են: Ընդհանրական միտք արտահայտող նախադասությունից հետո կարող է դրվել նաև **միջակետ** (տե՛ս նաև միջակետի գործածության 9–րդ կետը): **Օր.**՝

ՀՀ քրեական օրենսգրքով մեղքը սահմանվում է հետևյալ կերպ: (.)

1. *Մեղքը դրսևորվում է դիտավորությամբ կամ անզգուշությամբ:*

2. *Անզգուշությամբ կատարված արարքը հանցագործություն է, եթե դա նախատեսված է սույն օրենսգրքի Հատուկ մասով:*

Եթե բաղադրիչ նախադասությունները պակաս ինքնուրույն են և առավել սերտ կապի մեջ են իրար հետ, ապա կարող են տրոհվել **միջակետով** (տե՛ս միջակետի գործածության 9–րդ կետը):

4. Սատենագիտական ցանկում, տողատակում մատենագիտական ամեն մի առանձին հղումից հետո: **Օր.**՝ *Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. 3, Երուսաղեմ, 1927, էջ 3802: Գ. Լևոնյան, Հայոց պարբերական մամուլը, Եր., 1934, էջ XX: Թեոդիկ, Տիպ ու տառ, Կ. Պոլիս, 1912, էջ 136:*

5. Այս կամ այն բնագավառին վերաբերող հարցեր, թեմաներ ներկայացնող բառերի, բառակապակցությունների միջև, որոնք թվարկմամբ հաջորդում են իրար: **Օր.**՝

Կինեմատիկայի հիմունքները: *Ուղղագիծ հավասարաչափ շարժում: Ուղղագիծ հավասարաչափ շարժման արագություն (սահմանումը ֆիզիկական իմաստով): Արագության մոդուլը: Ճանապարհային արագություն: Արագության միավորը:*

Անջատման գծի հետ զուգորդվելով՝ կազմում է **վերջակետ-գիծ** համակցված նշանը, որը դրվում է ուրիշի ուղղակի խոսքի երկու ինքնուրույն նախադասությունների միջև ընկած հեղինակային խոսքից հետո (տե՛ս էջ 253)⁴⁵:

ՎԵՐՋԱԿԵՏ չի դրվում.

ա) Վերջադիր **կախման կետերից հետո**: **Օր.**՝ *Կոմիտասը տրորեց ճակատը, գլուխը բարձրացրեց... Հավաքած երգերից քչերն էին անխառն:*

բ) Շարադրանքից դուրս գործածված վերնագրից, ստեղծագործության, պարբերականի կամ այլ անվանումից, կարգախոսից, կոչից, աղյուսակի, քարտեզի կամ նկարի մակագրությունից, գովազդային կամ տեղեկատու նշանակությամբ նախադասությունից հետո: **Օր.**՝

*Դիվանագիտական և հյուպատոսական ծառայություն և իրավունք
Հաղորդիչների տաքսանալն էլեկտրական հոսանքով. Ջոուլ Լենցի
օրենքը*

*«Գագառու» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
Հզոր է այն ժողովուրդը, որը հզոր օրենքներ ունի*

Աղյուսակ 5. Ջերմաշարժիչներ

Հոդված 29. Հանցանքը դիտավորությամբ կատարելը

Սպառողական վարկեր

Առանց գրավի

Ծանոթություն: Վերջակետ, միջակետ կամ ստորակետ **չի դրվում** պաշտոնական գրագրություններում (նամակ, ուղերձ ևն), զեկուցումներում և այլ կարգի փաստաթղթերում դիմումի հարգական ձևերից հետո. կոչականի կամ դրան նախորդող լրացման վրա կարելի է շեշտ չդնել՝ շարադրանքը ավելորդ նշաններով չծանրաբեռնելու համար: **Օր.**՝

Տիկնայք և պարոնայք

Հարգարժան գործընկերներ

Մեծահարգ նախագահ, հարգարժան հյուրեր, սիրելի ներկաներ

Վերապատվելի պարոն:

⁴⁵ Այսուհետ կնշվի միայն էջը:

ՄԻՋԱԿԵՏ դրվում է.

1. Բարդ **համադասական նախադասության** բաղադրիչների միջև (235):

2. Այնպիսի բառակապակցություններում, որոնցից մեկն արտահայտում է մյուսի վերաբերյալ կամ նրա կապակցությամբ մասնավորում, ընդհանրացում, լրացուցիչ միտք: Դա հաճախ հանդիպում է վերնագրերում, ենթավերնագրերում, բուն վերնագրի և նրա հավելվածի միջև: **Օր.**՝ *Հռոմեական մասնավոր իրավունք. հռոմեական իրավունքի աղբյուրները:*

Պատերա՞զմ, թե՞ խաղաղություն. սթափվելու պահը:

Ոստիկանները Ուկրաինայի ՆԳՆ շենքը հանձնել են ցուցարարներին. ուղիղ միացում Կիևից:

3. Առաջադաս **հեղինակային խոսքի** վերջում՝ չակերտով կամ անջատման գծով սկսվող ուրիշի ուղղակի խոսքից առաջ (252):

4. Իրենից հետո **թվարկում** ենթադրող ավարտում նախադասության վերջում, կանոններից, սահմանումներից հետո, երբ դրանց անմիջապես հաջորդում է օրինակը՝ առանց մեկնական **օրինակ, ինչպես, այսպես** և նման բառերի: **Օր.**՝ *Ոչ թե... այլ—ը համադասական շաղկապ է և կապում է համազոր նախադասություններ. «Ժողովրդական հերոսները ժողովրդի ավանդությունների մեջ ոչ թե մեռնում են, այլ դարերի ընթացքում հետզհետե աճում են, մեծանում»:* Փորձերի հիման վրա կազմվել է մետաղների արտանդման շարքը. **K, Na, Mg, Al, Zn, Fe, Ni, Sn, Pb:**

5. Համառոտագրությունից հետո (95–96):

6. **Թվարկում նշող** թվանշաններից, տառերից հետո: **Օր.**՝ *1. Ի՞նչն են ընդունում որպես լարման միավոր: 2. Ինչպե՞ս են անվանում այդ միավորը: 3. Ի՞նչ լարում են օգտագործում լուսավորման ցանցում:*

Եթե թվարկում արտահայտող թվանշաններից կամ տառերից հետո կա փակագիծ, ապա միջակետ չի դրվում: **Օր.**՝

Բազմապատկե՛ք հետևյալ թվերը.

- ա) 94 x 84, գ) 81 x 317,
- բ) 314 x 15, դ) 189 x 563:

7. Թվարկվող այն միավորների միջև, որոնք արտահայտված են բառակապակցություններով կամ ունեն ստորակետով նշված ներքին տրոհումներ: **Օր.**

Արտերկրում ՀՀ դիվանագիտական անձնակազմը հիմնականում ունենում է հետևյալ կառուցվածքը.

1. արտակարգ և լիազոր դեսպան կամ գործերի հավատարմատար.
2. խորհրդականներ (քաղաքական, տնտեսական և այլն).
3. առաջին, երկրորդ և երրորդ քարտուղարներ.
4. մշակութային կցորդներ (որոշ երկրներում ռազմական):

Ծանոթություն: Եթե թվարկվող միավորներն ունեն վերջակետով նշված ներքին տրոհումներ, ապա թվարկվող միավորները տրոհվում են վերջակետով: **Օր.**

Ծրագրով նախատեսված նյութը բաժանվում է մի քանի հիմնական մասերի: (.)

1. Կինեմատիկա և դինամիկա:
2. Պահպանման օրենքները մեխանիկայում: Հեղուկներ և գազեր:
3. Մոլեկուլային ֆիզիկա: Ջերմային երևույթներ:
4. Էլեկտրաստատիկա: Մագնիսական դաշտ:

8. Անջատման գծի հետ զուգորդվելով՝ կազմում է **միջակետ-գիծ** համակցված նշանը, որը դրվում է բարդ համադասական նախադասությամբ արտահայտված ուրիշի ուղղակի խոսքի երկու համեմատաբար ինքնուրույն նախադասությունների միջև ընկած հեղինակային խոսքից հետո (253):

Ծանոթություն: Կապակցված խոսքից դուրս՝ նոր տողից կատարվող սոսկական թվարկումների դեպքում տրոհության նշան չի դրվում: **Օր.**

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

2010 թ. բուհական ընդունելության քննության ծրագիր

1. Հայաստանի բնաշխարհը

- ա) Հայկական լեռնաշխարհը
- բ) Գետերն ու լճերը
- գ) Վարչական բաժանումները

9. Թվարկում արտահայտող այն նախադասությունների միջև, որոնցից առաջինն արտահայտում է առարկան, երևույթն ընդհանուր կերպով, իսկ մյուսները նրա մասնավոր հատկանիշներն են, դրսևորումները, պակաս ինքնուրույն են և առավել սերտ կապի մեջ են իրար հետ՝ ի տարբերություն վերջակետով տրոհվող նախադասությունների: **Օր.**

ՀՀ քրեական օրենսգրքի 36-րդ հոդվածը սահմանում է.

1. Հանցագործությունն ավարտին հասցնելուց կամուլին հրաժարված անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե նրա փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ չի պարունակում.

2. Հանցագործության կազմակերպիչը, դրդիչը կամ օժանդակողը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե նա, պետական մարմիններից հաղորդելով կամ ձեռնարկված այլ միջոցներով, կանխել է կատարողի կողմից հանցագործությունն ավարտին հասցնելը.

10. Անվանում, կոչ, հարցադրում արտահայտող բառերից, բառերի կապակցություններից, ինչպես նաև նախադասություններից հետո, որոնց հաջորդում է դրանց հետ ուղղակիորեն կապված, դրանց անմիջականորեն վերաբերող կարծիք, գնահատություն, եզրակացություն: **Օր.** *Ժողովուրդը զարմանալիորեն երկարատև հիշողություն ունի. դա երբևէ չպետք է մոռանալ: Ամեն հայ մի հայ ունի, որի հետ թշնամի է մինչև մահ. սա նրա անհրաժեշտությունն է:*

ՍՏՈՐԱԿԵՏ դրվում է.

1. Պարզ նախադասության **և, ու, կամ, թե** շաղկապներով չմիացած **բազմակի** (համազոր) և **կրկնվող անդամների** միջև (223):

Ծանոթություն: **Եվ, ու, կամ** շաղկապներով կապակցված համադաս նախադասությունների միջև դրվում է ստորակետ, եթե դրանք չունեն ընդհանուր ենթակա: **Օր.** *Նա, ով ընդունակ է թույլերին վշտակցելու, ուժեղ է, և դրանով էլ արտահայտվում է նրա ոգու ուժը:*

Եթե ենթական համազոր նախադասություններում կրկնվում է նույնությամբ կամ այլ բառով, դարձյալ դրվում է ստորակետ: **Օր.** *Նա միանգամայն տիրապետում է իրավիճակին, և նա՛ պետք է մեզ առաջնորդի:*

2. Անշաղկապ բարդ համադասական նախադասության այն բաղադրիչների միջև, որոնք սերտ կապված են թե՛ իմաստով, թե՛ հնչերանգով (234–235):

3. Շաղկապավոր բարդ համադասական նախադասության բաղադրիչների միջև (234–235):

4. Ստորադասական շաղկապներով կամ հարաբերական դերանուններով միացած գլխավոր և երկրորդական նախադասությունների միջև (238):

Ծանոթություն 1: Իրար հաջորդող երկու շաղկապների դեպքում երկրորդ միավորը կարող է ստորակետով չանջատվել: **Օր.**՝ *ժողովրդավարության ողջ հանդիսակարգը, նրա թագն ու պսակը, նրա գլխավոր էությունը ընտրություններն են, և եթե դրանք կեղծվում են, ուրեմն հասարակությունը առողջ չէ:*

Ծանոթություն 2: Ստորադասական շաղկապից առաջ ստորակետ չի դրվում, երբ շաղկապը միջադասված է երկրորդական նախադասությանը: **Օր.**՝ *Նրան թե տեսնես, բացատրի՛ր ստեղծված իրավիճակը:*

5. Նախադասության հիմնական մասի և **կոչականի** միջև (վերջինիս միջանկյալ լինելու դեպքում՝ երկու կողմից) (226):

6. Նախադասության հիմնական մասի և **միջարկումների** (միջանկյալ բառերի, բառակապակցությունների, նախադասությունների) միջև, եթե դրանք փակագծերի մեջ չեն առնված (225–226):

7. **Չայնարկությունների** և նախադասության հիմնական մասի միջև (183–184):

8. Տրոհվող **վերաբերականների** և նախադասության հիմնական մասի միջև (181–182):

9. Միջադաս տրոհված **դերբայական դարձվածից**, ինչպես նաև զեղչված դերբայով դարձվածից առաջ և հետո (219–221):

10. **Հիմունքի** ու **զիջման** միջադաս տրոհված պարագաներից առաջ և հետո (216–217):

11. **Բացառման կապերով** (*բացի, բացառությամբ* ևն) ձևավորված միջադաս անուղղակի խնդրի սկզբում և վերջում (177–178):

12. Բուն և պարագայական մասնավորող, ինչպես նաև հետադաս մասնական **բացահայտիչներից** հետո (205–206):

Ծանոթություն: Երբ մասնական բացահայտիչը նախադաս է, բութը դրվում է նրանից հետո, իսկ բացահայտյալից հետո ստորակետ չի դրվում: **Օր.**՝ *Իբրև հին ծանոթներ՝ նրանք պետք է համերաշխության ձեռք մեկնեին միմյանց:*

13. Տրոհված **հետադաս որոշիչից** հետո (200):

14. **Համեմատության կապերով** (*ինչպես, ասես, ոնց որ* ևն) ձևի պարագաների և նախադասության այլ անդամների միջև: **Օր.**՝ *Պայծառ էր, ինչպես գարնան առավոտը:*

15. **Վերջադաս դերբայական դարձվածի** և միավորիչ **և, ու, կամ** շաղկապներով սկսվող հաջորդող համադաս նախադասության միջև: **Օր.**՝ *Վեր կացա՛վ հապշտապ ուղղելով փողկապը, և առանց հրաժեշտ տալու հեռացավ:*

16. Մատենագիտական աղբյուրի նկարագրության մեջ ներկայացվող սովյալների միջև: **Օր.**՝ «Վիեննայի կոնվենցիան դիվանագիտական հարաբերությունների մասին», Վիեննա, 1961 թ., ապրիլի 18:

17. Անջատման գծի հետ զուգորդվելով՝ կազմում է **ստորակետ–գիծ** համակցված նշանը (253):

ԲՈՒԹ դրվում է.

1. Բացահայտյալի և **բացահայտիչի** միջև (205):

2. Առաջադաս և վերջադաս տրոհված **դերբայական դարձվածների** (ինչպես նաև զեղչված դերբայով դարձվածների) և նախադասության հիմնական մասի միջև (219–221):

3. Առաջադաս և վերջադաս տրոհված **հիմունքի** և **զիջման** պարագաների և նախադասության հիմնական մասի միջև (216–217):

4. **Բացառման կապերով** (*բացի, բացառությամբ* ևն) ձևավորված առաջադաս կամ վերջադաս անուղղակի խնդրի և նախադասության այլ անդամների միջև (117–178):

5. **Հետադաս** բազմակի կամ ծավալուն **որոշիչից** առաջ (200):

6. Անորոշ առումով թվարկված վերջադաս **բազմակի ենթականերից** առաջ: **Օր.**՝ *Սփյուռքի հայաշատ քաղաքներից են Լոս Անջելես, Բեյրութ, Հալեպ, Մոսկվա և այլն:*

7. **Հետադաս նպատակի պարագայից** առաջ, եթե արտահայտված է առանց նպատակի կապի դերբայական դարձվածով կամ անմիջապես չի **հաջորդում ստորոգյալին** (215):

8. **Տրոհված հատկացուցիչից** հետո՝ իմաստային շփոթը կանխելու համար (202):

9. Նախադասության մեջ իրար հետ չկապվող, բայց իրար հաջորդող բառերից առաջինի վրա՝ **իմաստային շփոթը կանխելու համար:** **Օր.**՝ *Հանցագործությունն է համարվում մեղավորությանը կատարված՝ հանրության համար վտանգավոր այն արարքը, որը նախատեսված է սույն օրենսգրքով:*

10. **Ստորոգյալի, շաղկապի, երբեմն էլ դերբայի զեղչումը** նշելու համար (261–262):

11. Կապակցված խոսքից դուրս գործածվող տեղեկատու արտահայտություններում՝ **տեղեկույթ պահանջող բառի** կամ **արտահայտության** վրա: Ստորոգյալի զեղչման յուրահատուկ դեպք են անվանական (թերի) այն նախադասությունները, գիտական նկարագրություններն ու թվարկումները, կապակցված խոսքից դուրս գործածվող վերնագրերը, տեղեկատու արտահայտությունները, որոնցում առկա է ոչ վերջադաս ենթակա կամ ստորոգյալի լրացում, որի վրա էլ դրվում է բութը՝ ստորոգում արտահայտելու համար: **Օր.**

Հեղինակ՝ Վահան Թոթովենց

Թարգմանիչ՝ Գ. Մխիթարյան

Չափսը՝ 70 X 100 1/16

Զինակոչիկների անվտանգ ծառայությունը՝ գերխնդիր

Սոցիալական խնդիրների մ առանձնահատուկ ուշադրություն

Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Մարտիրոսյան

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ԴԱՏԱԽԱՋՎ. ՄԱՆԹԱՇՅԱՆ

ՊԱՇՏՊԱՆՎ. ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ

ՔԱՂՀԱՅՑՎՈՐՎ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

12. Տվյալ բաղադրիչ նախադասության սահմաններում վերջադաս հակիրճ (առավելապես մեկ բառով արտահայտված), չակերտների մեջ չառնված և հեղինակային խոսքից պարբերությամբ չանջատված ուրիշի **ուղղակի խոսքից** առաջ (252):

13. **Որոշիչի** վրա, երբ նրան հաջորդում է մեկնական նշանակությամբ անհամասեռ որոշիչ: **Օր.**՝ *Դիմեք մի նոր փորձառու մասնագետի:*

14. Թվարկում արտահայտող **նախ, ապա, հետո, մի կողմից, մյուս կողմից, առաջին, երկրորդ, երրորդ, վերջապես** և նման այլ բառերի ու բառակապակցությունների վրա: **Օր.**՝ *Նախ՝ այդ մասին տեղյակ չենք եղել, ապա՝ փոխօգնության մասին մենք որևէ պայմանավորվածություն չունենք:*

Ծանոթություն: Սրանցից տարբեր են ժամանակային հաջորդակա- նություն արտահայտող **նախ, ապա, հետո** և տարածական հարաբե- րություններ արտահայտող **մի կողմից, մյուս կողմից** բառերն ու արտա- հայտությունները, որոնք ինքնին տրոհում չեն պահանջում: **Օր.**՝ *Ճա- նապարհի մի կողմից մեզ սպառնում էին ժայռից պոկվելու պատրաստ քարերը, մյուս կողմից անդնդախոր կիրճն էր սպառնում: Նախ կմտնես գրանցման բաժին, հետո կբարձրանաս երրորդ հարկ՝ բժշկի մոտ:*

15. Թվարկումների, օրինակների, մեկնաբանությունների նկատմամբ նախադաս **մեկնական բառերի** (*այսպես, այսպիսով, որոնք են, դրանք են, որ են, այդպիսիք են, օրինակ ևն*), **բացահայտման շաղկապնե- րի** (*այսինքն, այն է*) վրա: **Օր.**՝ *Պետք է ավելի գործնական լինել, այն է՝ համագործակցության նոր ուղիներ առաջարկել:*

Ծանոթություն: Մեկնական բառից առաջ սովորաբար դրվում է ստո- րակետ, երբեմն՝ միջակետ: **Օրինակ, այսպիսով** բառերը միջադաս գոր- ծածության դեպքում ընկալվում են որպես միջանկյալ բառեր և առնվում են ստորակետերի մեջ: **Օր.**՝ *Դուք, օրինակ, այդ մասին պիտի տեղեկացված լինեիք մեկ շաբաթ առաջ:*

16. Վերջադաս թվարկված (սովորաբար՝ համարակալված) բազմա-
կի անդամների (համադաս նախադասությունների) և նախադասության
հիմնական մասի միջև: Օր.՝

*Դիվանագիտական գրագրության մեջ ընդունված դիմելաձևեր են
երկրի նախագահին՝ Ձերդ գերազանցություն, Պարոն նախագահ,
արտգործնախարարին, օտարերկրյա դեսպանին՝ Ձերդ գերազան-
ցություն, Պարոն նախարար, Պարոն դեսպան, Ամենայն հայոց կաթո-
ղիկոսին՝ Վեհափառ տեր:*

17. Թվարկումից առաջ, եթե թվարկմանը նախորդում է բառ կամ բա-
ռակապակցություն, կամ թվարկվող միավորները բառեր կամ բառակա-
պակցություններ են: Թվարկվող բաղադրիչները տրոհվում են միջակե-
տով կամ ստորակետով: Օր.՝

Տուժողը սույն օրենքով սահմանված կարգով իրավունք ունի՝

1. ծանոթանալու առաջադրված մեղադրանքին,
2. ցուցմունքներ տալու,
3. բացատրություններ տալու,
4. ներկայացնելու նյութեր՝ քրեական գործին կցելու և հետազոտելու
համար,
5. բացարկներ հայտնելու,
6. միջնորդություններ հարուցելու ևն:

Թվարկումը կարող է շարունակվել նույն տողում: Օր.՝ *Բարձրագույն
դիվանագիտական աստիճաններն են ա. ԳՅ արտակարգ և լիազոր
դեսպանի աստիճանը. բ. ԳՅ արտակարգ դեսպանորդի և լիազոր նախա-
րարի աստիճանը:*

2. ԲԱՑԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Սրանք գրավոր խոսքում նախադասության միտքը, բառերի հարաբե-
րությունը պարզող, շարահյուսական որոշակի կառույցներ, անվանում-
ներ, վերնագրեր և խոսքի այլ տարրեր նշող, ինչպես նաև բանավոր խոսքի
համապատասխան դադարներն ու ծայնի ելևէջները լրացուցիչ կերպով
արտահայտող կետադրական նշաններն են և դրանց համակցություննե-
րը: Դրանք են **չակերտները, փակագծերը, կախման կետերը, բազմա-
կետը, անջատման գիծը, միության գծիկը, ենթամնան, ապաթարցը:**

ՉԱԿԵՐՏՆԵՐՈՎ անջատվում են շարադրանքի՝ որոշակի հատկանիշով
առանձնացվող հատվածներ: Հատվածի սկզբում դրվում է բացող (ծախ)
չակերտը, վերջում՝ փակող (աջ) չակերտը:

Չակերտների մեջ են առնվում.

1. Մեջբերվող **ուղղակի խոսքը**՝ լինի գրավոր, հնչող թե ներքին, իրա-
կան, ենթադրյալ թե վերագրվող, ամբողջական թե թերի, հեղինակի խոս-
քին քերականորեն ծուլված թե չծուլված (252):

2. Գիտական և արվեստի երկերի, հոդվածների **վերնագրերը**, պար-
բերականների անունները, հիմնարկների, կազմակերպությունների, զբո-
սայգիների, ապրանքների, շքանշանների պայմանական անունները,
մակնիշները՝ խոսքում մեջբերվելու դեպքում: Դրանք սկսվում են մեծա-
տառով: Միջադաս լինելու դեպքում չակերտից առաջ կետադրություն չեն
պահանջում: Օր.՝ *«Կոմիտաս» դաշնամուր, «Լեզենդա Արենի» կոնյակ,
«Պեժո» ավտոմեքենա, «Պառլամենտ» ծխախոտ, «Գրանդ Քենդի» ընկե-
րություն, «Սև ասպետ» կակաչ, «Միացյալ Հայաստան» կուսակցություն,
«Պատվո նշան» շքանշան, «Մարտական ծառայությունների համար» մե-
դալ: Հոլովվելիս վերջավորություններն ու հոդերը սովորաբար չակերտ-
ներից դուրս չեն հանվում: Օր.՝ *Եղիշե Չարենցի «Գիրք ճանապարհին»
պոեմ է: «Ամերիաբանկից» վարկ պիտի ստանամ:**

Վերջավորություններն ու հոդերը չակերտներից դուրս՝ գծիկով միա-
ցած են գրվում, եթե անվան կամ վերնագրի հետ միանալիս դժվարաց-
նում են բնագրի ընկալումը կամ առաջ են բերում հայերենի համար անսո-
վոր ձևեր: Մասնավորապես.

ա) եթե վերնագիրն արտահայտված է ամբողջական նախադասու-
թյամբ, **օր.՝ «Իմ սիրտը լեռներում է»—ի հանդիսատեսը մեծ ոգևորություն
ապրեց:**

բ) եթե անվան կամ վերնագրի վերջին բաղադրիչը կա՛ն ինքնին հո-
լովված բառաձև է, կա՛ն չհոլովվող բառ, կա՛ն անձնական, ցուցական,
հարցական դերանուն, կա՛ն թվական, կա՛ն տառային հապավում, **օր.՝
«Մարդը ափի մեջ»—ով Պ. Սևակը ճանաչում ձեռք բերեց: «Հայաստանը
երգերի մեջ»—ը բանաստեղծությունների շարք է: «Ես և նա»—ի հեղինա-**

կը Նար-Դոսն է: «Boeing-777»-ը անհետացել է Պեկինի ճանապարհին: «X-7»-ի տեխնիկական ցուցանիշները անգերազանցելի են:

գ) Եթե անունը բերված է օտար կամ կրճատ գրությամբ, օր.՝ «tert. am»-ի և «Facebook»-ի օգտատերերը հետաքրքիր հարցադրումներ են անում: Դրամական փոխանցումը կատարվել է «ProCredit Bank»-ով:

Գիտական և արվեստի երկերը խոսքից դուրս՝ որպես վերնագիր, կամ մատենագիտական ցանկերում, ցուցակներում հեղինակի անվան հետ գործածվելիս չակերտների մեջ չեն առնվում, բայց դարձյալ սկսվում են մեծատառով: օր.՝ **Քիզանդ Եղիայեան**, Ատանայի հայոց պատմութիւն, Անթիլիաս, 1970, էջ 263:

Ծանոթություն: Պարբերական հրատարակություններից կատարված հղումներում եթե պարբերականի տիպը չի նշվում, ապա պարբերականի անունը գրվում է չակերտներում: օր.՝ *Հայաստանի Հանրապետություն, օրաթերթ, Եր., 2013, թիվ 98: Բայց՝ «Հայաստանի Հանրապետություն», Եր., 2013, թիվ 98:*

Ժողովածուների (փաստաթղթեր, որոշումներ, օրենքներ, հոդվածներ ևն), խմբագրական համատեղ աշխատանքի արդյունք հանդիսացող աշխատությունների վերնագրերը առանց հեղինակի անվան հիշատակվելիս առնվում են չակերտների մեջ: օր.՝ «Քաղաքացիական, իրավական պայմանագրեր (օրենսդրական պարզաբանումներով)», խմբ.՝ Վ. Նազարյան, Երևան, 1999: «Հայաստանի ստանդարտ. ՀՍՏ 6.3-98: Պաշտոնական հրատարակություն», Երևան, 1998: «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն», Երևան, 1996 թ.:

Ծանոթություն: Հղվական վերջավորությունը կամ հոդը չակերտներից դուրս է գրվում նաև այն դեպքում, երբ վերջավորության կամ հոդի անջատ գրությամբ անհրաժեշտ է լինում առանձնացնել անվան ուղիղ ձևը՝ այն հստակ ու հասկանալի դարձնելու նպատակով: օր.՝ *Արդեն հրատարակվել են «Ինչ է, ով է»-ի բոլոր չորս հատորներն էլ: «Բա՛ց կեղևդ, ծա՛ռ»-ի հեղինակը Ռազմիկ Դավոյանն է:*

Նախադասությամբ արտահայտված կամ հոլովված բառով վերջացող որոշ անունների հոլովական վերջավորություն կամ հոդ ավելացնելու դեպքում երբեմն առաջանում են անվան ընկալումը դժվարացնող ու հայերենին անսովոր ձևեր: Դրանցից խուսափելու համար խորհուրդ է տրվում անվան հետ գործածել համապատասխան լրացյալ: օր.՝ «Մատյան ողբերգության»-ի հեղինակը > «Մատյան ողբերգության» պոեմի հեղինակը: «Հայրենիքիս հետ»-ի վերջին տունը > «Հայրենիքիս հետ» բանաստեղծության վերջին տունը: Կամ՝ Վահրամ Փափազյանի վերջին դերը Մեք Գրեգորն է Վիլյամ Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» պիեսում: «Մենք ենք, մեր սարերը» ֆիլմի ցուցադրությունը հետաձգվեց: Սարտիրոս Սարյանը իր խոհերն ամփոփել է «Գրառումներ իմ կյանքից» գրքում:

3. Հեգնական, ծաղրական, ժխտական կամ փոխաբերական իմաստով գործածված բառերը, արտահայտությունները: օր.՝ *Լինելով չափից ավելի «գաղափարական»՝ նա հակված չէ դավանելու որևէ հաստատուն սկզբունքի:*

4. Խոսքում հիշատակվող բառը, լեզվական միավորը, ինչպես նաև խոսքի բաղադրիչ այն օտարաբանությունները, բարբառային, ժարգոնային բառերն ու արտահայտությունները, որոնց կիրառության միտումնավոր և ոճական բնույթն անհրաժեշտ է շեշտել: օր.՝ *ՀՀ ներկա նախագահից «նեղացածները» հանգրվանել են նախորդ նախագահի հովանու տակ: Ռուսաստանի «օրենքով գողերը» Ուկրաինայի հարցով հավաքել են ամենախոշոր «սխողկան»:*

Ծանոթություն: Խոսքի մեջ հիշատակվող բառի, միավորի, խոսքի բաղադրիչ օտարաբանության և այլ արտահայտությունների առանձնացումը կարող է կատարվել նաև ընդգծումով, թավ տառատեսակով, շղատառով կամ բուն շարվածքից տարբեր այլ տառատեսակով: օր.՝ *Գրականության մեջ վերջին հաշվով կարևորը ԻՆՉ-ն է և ոչ թե ԻՆՉՊԵՍ-ը: Պոլիկլինիկա, պոլիտեխնիկ բառերը հունական փոխառություններ են և ունեն ընդհանուր բաղադրիչ՝ պոլի-, որը նշանակում է «բազում, շատ»: Այստեղից էլ՝ պոլիկլինիկա՝ բազում հիվանդությունների բուժման տեղ:*

5. Բանասիրական շարադրանքում **իմաստ** նշող, մեկնաբանող բառը, բառակապակցությունը, արտահայտությունը: **Օր.**՝ *Եպիսկոպոս բառը կազմված է **epi-skop-os** բաղադրիչներից. հունարեն նշանակում է վեր(ա)–տես–ուչ՝ «վերադիտող կամ վերահսկող»:*

ՓԱԿԱԳԾԵՐՈՎ անջատվում են շարադրանքին քերականորեն չկապված, շարադրանքի մեջ ներդրված և ազատ կերպով հանվելու ենթակա ասույթները, տեղեկույթները, խոսքի հատվածները, նշանները: Դրանք կարող են միջանկյալ կամ կից լինել շարադրանքին, նախադասությանը, բառին: Ասույթի (տեղեկույթի, հատվածի, տառի) սկզբում դրվում է բացող (ծախ) փակագիծը, վերջում՝ փակող (աջ) փակագիծը:

Փակագծերի մեջ են առնվում.

1. **Միջարկումները:** **Օր.**՝ *Ըստ օվկիանոսի մակարդակից իրենց բարձրության հարթավայրերը լինում են դաշտավայրեր (մինչև 200 մ), բարձրավայրեր (200–500 մ), սարահարթեր (500 մ–ից բարձր) և ցածրավայրեր (օվկիանոսի մակարդակից ցածր) (Նկ. 4. 14):*

2. Որպես **նմուշ կամ լուսաբանում** բերվող նշանները, տառերը, բառերը, արտահայտությունները: **Օր.**՝ *Ընդունենք, որ առաջին անհայտը (x) մեծ է երկրորդից (y): Աստղանիշը (*) դրվում է թե՛ շարադրանքի համապատասխան բառի վրա, թե՛ տողատակում ծանոթագրության սկզբում:*

3. **Այլընտրանքի** ձևով նշվող վերջավորությունները, բառերի բաղադրիչները: **Օր.**՝ *Անձնական դերանունները մատնացույց են անում մասնակից(ներ)՝ առանց անվանելու: Ժամանակի պարագա ստորադաս նախադասությունը գերադաս նախադասության հետ կապվում է **հենց (որ), թե չէ, քանի (դեռ), մինչ(և), ինչ, որ** և այլ շաղկապներով:*

4. Բառերի, արտահայտությունների, անվանումների **տարբերակները:** **Օր.**՝ *Առաջին ատյանի դատարանները քննում են քրեական բոլոր գործերը, քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված այլ գործեր (նյութեր): Բայց զոգավոր (ցրող) ոսպնյակը նույնպես ունի կիզակետ, միայն թե այն «կեղծ» է: Հայոց համազգային շարժումը (ՀՀՇ) այդ օրերին վայելում էր ժողովրդականություն:*

5. Շարադրանքի մեջ տրվող **հղումներն ու մատենագիտական սովալները:** **Օր.**՝ *Մաքուր տոնայնությամբ ծայներ է արծակում կամեր-*

տոն կոչվող գործիքը (Ս–ածև մետաղյա երկթևանի ծող է), երբ դրան հարվածում են (Նկ. 167.10): ՏԵՍ Գ. ԽՈՒԴԻՆՅԱՆ, ՀՅ Դաշնակցության քննական պատմություն (ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը), Եր., 2006:

6. Մաթեմատիկայում՝ գործողությունների առաջնահերթությունները նշելու համար: **Օր.**՝

Վարժություն 510: Կատարե՛ք գործողությունները.

ա) (21058 – 208 : 104) – (394 – 2527 : 19)

բ) (1567 + 891 : 33) : (78 – 2052 : 27)

7. Միակողմանի (փակող) փակագիծ դրվում է թվարկում նշող թվանշաններից, տառերից հետո: **Օր.**՝

Ծավալն ունի հետևյալ հիմնական հատկությունները.

1) Հավասար մարմիններն ունեն հավասար ծավալներ:

2) Եթե մարմինը տրոհվում է մասերի, ապա մարմնի ծավալը հավասար է նրա մասերի ծավալների գումարին:

ԿԱԽՄԱՆ ԿԵՏԵՐ (ԵՌԱԿԵՏ) դրվում են.

1. Կցկուր, հեղինակի կողմից միտումնավոր **անավարտ** կամ իբրև այդպիսին ներկայացվող **խոսքի** այն հատվածում, որտեղ ակնկալվում են հնարավոր կամ անհնար (անսպասելի) շարունակությունը, բառերով չարտահայտված հույզը, զգացումը: Դրվում է նախորդող բառին (առաջադաս լինելու դեպքում՝ հաջորդող բառին) կից: Վերջադաս եռակետը փոխարինում է վերջակետին: **Օր.**՝

Պատմությունը... Ա՛հ, դատավորների այդ մեծ և անմահ դատավորը...

Խոսքի՝ չակերտների կամ փակագծի մեջ առնվելու դեպքում մնում է չակերտների ներսում: **Օր.**՝ *«Դժվարությամբ է համակերպվում...»:*

2. **Ձարմանք** հարուցող կամ անսպասելի տեղեկություն նշող բառից, արտահայտությունից առաջ: Բացատրվում է թե՛ նախորդ, թե՛ հաջորդ բառից: **Օր.**՝ *Մարդկության կյանքը միշտ էլ զարգացել ու զարգանում է ... կարիքի շնորհիվ:*

Անջատման գծի հետ զուգորդվելով՝ կազմում է **եռակետ–գիծ** համակցված նշանը, որը դրվում է թերի, անավարտ նախադասությամբ

ուրիշի ուղղակի խոսքի նկատմամբ հետադաս հեղինակային խոսքից առաջ (253):

ԲԱԶՄԱԿԵՏԸ կազմված է չորս կամ ավելի կետերից (....): Նշում է մեքերվող խոսքի որևէ հատվածի, բառի կամ դրա բաղադրիչի կրճատված լինելը: Դրվում է տողի վրա՝ նախորդ (առաջադաս լինելու դեպքում՝ հաջորդ) բառին կից՝ **մեքերման կրճատված մասի տեղում**: Մեքերվող խոսքի՝ չակերտների մեջ առնվելու դեպքում մնում է չակերտների ներսում: **Օր.**՝ *Եվ ի՛նչ գեղեցիկ են էս խոսքերը, ի՛նչ վեհ ու պայծառ է էս ազգային իղծը. «Տե՛ր, ապրեցրո՛ւ հային և պայծա՛ռ արա նրան....»:*

Բազմակետով սկսվող առաջադաս ամբողջական նախադասությունը սկսվում է մեծատառով: **Օր.**՝ *Եղիշեի իմաստուն խոսքերից է նաև հետևյալը. «...Բոլոր առաքինություններից գլխավորը համբերությունն է»:*

Սկզբից կրճատված նախադասությունը բազմակետից հետո սկսվում է փոքրատառով: **Օր.**՝ *ԶԼՄ-ի լեզվի ամենաբնորոշ հատկանիշներից մեկը «...նվազագույն լեզվամիջոցներով առավելագույն ինֆորմացիա» հարդրելն է:*

Ծանոթություն 1: Աշխատության կամ ժողովածուի վերնագիրը երկար լինելու դեպքում կարելի է գրել կրճատ՝ շարունակությունը նշելով բազմակետով: **Օր.**՝ *Յ. Օշական, Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հ. 5, Երուսաղեմ, 1952, էջ 300: > Յ. Օշական, Համապատկեր...., հ. 5, Երուսաղեմ, 1952, էջ 300:*

Ծանոթություն 2: Վերջին շրջանում բազմակետերի փոխարեն հաճախ գործածում են կախման կետեր:

ԱՆՁՍՄԱՆ ԳԻՃԸ բառերից անջատվում է բացատով: Դրվում է՝

1. Իրական կամ ենթադրյալ հնչող **ուրիշի ուղղակի խոսքի**, երկխոսության ամեն մի մասի սկզբում: Անջատման գծով սկսվող ուղղակի խոսքը գրվում է նոր տողից, սկսվում է մեծատառով: Հեղինակի առաջադաս խոսքն ավարտվում է միջակետով: Հեղինակի վերջադաս և միջադաս խոսքերն սկսվում են **ստորակետ-գծով** (երբեմն՝ **եռակետ-գծով**): Հեղինակի միջադաս խոսքն ավարտվում է **ստորակետ-գծով** (երբեմն՝ **միջակետ-գծով**, **վերջակետ-գծով**, **եռակետ-գծով**) (252-253):

2. Տարածական կամ հակադրական հարաբերության մեջ գտնվող անվանումների ու բառերի միջև: **Օր.**՝ *Երևան — Արարատ — Արցախ մայրուղու շինարարությունը շուտով կավարտվի: Հայաստան — Ռուսաստան խաղն ավարտվեց ոչ-որի:*

3. **Թատերգություններում**՝ խոսողի անվան և նրա խոսքի միջև: **Օր.**՝ *Սիմօն վանական — Մահն է քու առջեւդ, թշուառակա՛ն:*

Աբեղան — Մահն ալ ձեր վախն է ու ձեր վախի հնարածը:

4. Թվարկումով ներկայացված բառերի ու անվանումների և դրանց վերաբերյալ տեղեկույթի միջև՝ արտահայտելով տարբեր **հարաբերություններ** (բառ և բացատրություն, հեղինակ և ստեղծագործություն, դեր և դերասան, գործող անձ և բնութագիր և այլն): **Օր.**՝

Լեզուների համառոտագրությունների ցանկ

լատ. — լատիներեն

անգլ. — անգլերեն

Վերնիսաժ — գեղարվեստական ստեղծագործությունների հանդիսավոր բացում բացման արարողություն:

5. **Թվարկման**՝ նոր տողից սկսվող չհամարակալված ծավալուն անդամների սկզբում: **Օր.**՝

Արևմտահայերի ինքնապաշտպանական մարտերը 1915 թվականին

— Վանի հերոսամարտը,

— Ինքնապաշտպանական մարտերը Շապին-Գարահիսարում և Մասունում,

— Մուսա լեռան և Ուրֆայի ինքնապաշտպանությունը:

6. Թվանշաններով արտահայտված **թվականների** այնպիսի կապակցության բաղադրիչների միջև, որի առաջին բաղադրիչն ունի բացառականի իմաստ: **Օր.**՝ *էջ 10 — 15, 1 — 3-րդ դասարաններ, IV — VIII հատորներ, ժԲ — ժԹ գլուխներ* ևն: Նույնը տառերով գրվում է առանց գծի՝ անջատ:

Արանից պետք է տարբերել թվականների այն կապակցությունը, որն ունի մոտավորության իմաստ (**10-15 մարդ, 2-3 ամիս** ևն) և գրվում է միության գծիկով նաև տառերով արտահայտելիս (չորս-հինգ հոգի, քսանհինգ-երեսուն տարեկան):

ՄՈՒԻԹՅԱՆ ԳԾԻԿԸ դրվում է.

1. Հարադրական բարդության մի շարք տեսակների բաղադրիչների միջև՝ առանց բացատրերի (92):

2. Որոշ համառոտագրությունների առաջին և վերջին տառերի կամ տառախմբերի միջև (96):

ԵՆԹԱՄՆԱՆ ցույց է տալիս, որ բառի մի մասը տարված է հաջորդ տող: Դրվում է տողադարձված բառի այն մասին աջից կից, որը թողնվել է նախորդ տողում: **Օր.**՝ բարձր- լեռնային, սահմանա- դրական, քրե- որեն, ի- սպառ:

Գործածվում է նաև բառը կամ ասույթը **վանկատված** գրելիս: **Օր.**՝ բաժ-նե-տեր, հե-տա-քըն-նու-թյուն, հայ-տա-րա-րա-գիր:

Ենթամնան հաճախ նույնացվում է միության գծիկի հետ, երբ վերջինով միացած բաղադրիչներով հարադրավոր բարդությունների տողադարձի ժամանակ հաջորդ տող է տարվում երկրորդ բաղադրիչն ամբողջությամբ: **Օր.**՝ տուն- թանգարան, ազգային- քաղաքական, իտալա- գերմանական, աղբյուր- հուշարձան:

ԱՊԱԹԱՐՑԸ գործածվում է.

1. Արևմտահայերենում, միջին հայերենում, բարբառային խոսքում՝ **սղված ծայնավորը** նշելու համար: **Օր.**՝ Կ'ապրիմք այդ երկրին մեջ, բայց կ'երագենք մեր հայրենիքը: Վերջալոյսի աղջի՞կ մ'է սա, ռ'վ Աստուած:

2. Օտար բաղադրյալ հատուկ անունների որոշ մասնիկ-բաղադրիչներն անջատելու կամ դրանց սղված ծայնավորը նշելու համար: **Օր.**՝ ժաննա դ'Արկ, Օ'Նեյլ (Օ'Նիլ), դ'Արտանյան, Օ' Հենրի, դ'Անունցիո:

3. ԱՌՈԳԱՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Սրանք բանավոր խոսքի առոգանության երանգները, ծայնի ելևէջները և շեշտադրությունը գրավոր խոսքում արտահայտող կետադրական նշաններն են: Դրանք են **շեշտը** (շեշտանշանը), **պարույկը** (հարցական նշանը), **բացականչական** (երկարացման) նշանը:

ՇԵՇՏԸ (ՇԵՇՏԱՆՇԱՆ) դրվում է.

1. Հրամայական նախադասության մեջ՝ **հրամայական բայածևի վրա** (168, 232):

Երբեմն հրամայական շեշտը կարող է տեղափոխվել նախադասության այլ անդամի վրա: **Օր.**՝ Մի՛ ուշացրեք. արա՛գ ավարտեք այդ աշխատանքը:

Ծանոթություն 1: Հրամայական եղանակի բայածևի վրա կարող է շեշտ չդրվել՝ պայմանավորված որոշակիորեն մեղմ հնչերանգով: **Օր.**՝ Խնդրում եմ, ուշադրություն դարձրեք հետևյալ հանգամանքին:

Ծանոթություն 2: Հրամայական նախադասության մեջ շեշտի փոխա-րեն կարող է գործածվել բացականչական նշան, եթե բառն արտաբերվում է բացականչումով: **Օր.**՝ Փրկեցե՛ք ինձ Ձեր գթասրտությունից. ես դրա կարիքը չունեմ:

Ծանոթություն 3: Հարադրավոր բայերի շեշտը դրվում է առաջին ոչ բայական բաղադրիչի վրա՝ **մո՛տ արի, վե՛ր կաց, ցո՛ւյց տուր, բա՛ց արեք, աչքի՛ ընկեք** ևն: Նմանապես **որ, թե** բառերով բաղադրված հա-րադրավոր կազմություններում շեշտվում է առաջին բաղադրիչը՝ **հե՛նց որ, ասե՛ս թե, ե՛րբ որ, միա՛յն թե, մա՛նավանդ որ, այնպե՛ս որ, ինչպե՛ս թե** ևն:

2. Կոչականի կամ դրա՝ դերանունով չարտահայտված նախադաս լրացման վրա (226):

3. Կամային (կոչական) **ծայնարկությունների** և բնածայնությունների վրա (183–184):

4. Կրկնադիր շաղկապների վրա (179):

5. Մաղթանքի, ողջույնի, շնորհավորանքի և անվանական բառա-կապակցությամբ արտահայտված խոսքային այլ բանաձևերի գերադաս անդամի, **պատասխանական բառերի** վրա: **Օր.**՝ Ողջո՛ւյն, ինչպե՛ս են գործերդ: **Բավական է, շարժվեցինք: Վե՛րջ, չեմ ուզում շարունա-կությունը լսել:** Ամենայն **բարի՛ք** Ձեզ: **Այո՛,** տեղյակ եմ:

ՊԱՐՈՒՅԿ (ՀԱՐՑԱԿԱՆ ՆՇԱՆ) դրվում է.

1. Հարցական **հնչերանգով** արտասանվող բառի վրա՝ հարցում արտահայտելու համար (231):

Պարույկ չի դրվում անուղղակի հարց արտահայտող **դերանունների** վրա: **Օր.**՝ *Ինչ էր կատարվում ետնաբեմում՝ ոչ ոք չգիտեր: Պարզեցի, թե իրականում դեպքը ինչպես է տեղի ունեցել:*

Անուղղակի հարցում արտահայտող նախադասության մեջ **արդյոք** բառի (կամ նախադասության այլ անդամի) վրա սովորաբար հարցական նշան դրվում է: **Օր.**՝ *Հայտնի չէ, թե մեր պատվիրակությունը արդյո՞ք մասնակցելո՞ւ է խորհրդաժողովին:*

2. Որոշ վերաբերականների (մի՞թե, չլինի՞, չլինի՞ թե, պատկերացնո՞ւմ եք, ինչպե՞ս չէ, չէ՞ որ, ո՞վ իմանա) վրա (182):

ԲԱՏԱԿԱՆՉԱԿԱՆ (ԵՐԿԱՐԱՑՄԱՆ) ՆՇԱՆ դրվում է.

1. Բացականչական հնչերանգով և համեմատաբար տևականորեն արտասանվող բառի վրա՝ բացականչություն, հույզ, կիրք արտահայտելու համար: **Օր.**՝ *Որքա՞ն շատ են ճշմարտության թշնամիները:*

2. Սովորաբար բացականչական նշան են կրում ծայնարկությունները (183–184):

3. Բացականչումով արտասանվող կոչականի կամ հրաման, հորդոր, խնդրանք, կոչ արտահայտող բառի վրա՝ շեշտանշանի փոխարեն (226):

4. Բաղձանքի (երբեմն էլ՝ այլ) վերաբերականների վրա: **Օր.**՝ *Ի՞նչ լավ եղանակ է: Ո՞չ, դա անիրագործելի է:*

ՀԱՎԵԼՎԱԾ 4

Բառակազմական, մասամբ իմաստային ընդհանրություններ ունեցող բառերի ցանկ⁴⁶

- ագույց** (մեխանիկական կապ)
- ագուցվածք** (մեխանիկական կապի ձևը)
- ագատագրել** (մեկին, կամ մի հանրության անազատ՝ ճնշված վիճակից ազատել)
- ագատել** (փրկել, նեղ դրությունից հանել)
- անմիջաբար** (անմիջականորեն՝ առանց միջնորդի)
- անմիջապես** (իսկույն՝ առանց հապաղելու)
- առաջի խսկց.** (առջևի, առջևում եղող)
- առաջին** (համար 1–ին, I)
- առկայություն** (ներկայություն, այդ պահին լինելը)
- գոյություն** (գոյություն ունենալը, լինելը)
- ավանդություն** (գրույց, ծես, անգիր պատմություն)
- ավանդույթ** (սովորույթ)
- արարմունք** (արարք, քայլ)
- արարում** (արարելը, ստեղծելը)
- արժանավոր** (արժանիք(ներ)ով օժտված)
- արժանի** (մի բանի համար արժանիք ունեցող, հարմար)
- արտահանություն** (արտահանելու գործողությունը)
- արտահանույթ** (արտահանվող ապրանքը)
- բավական** (մկբ., ած., բավարար չափով, բավ է, հերիք է)
- բավականին** (մկբ., բավականաչափ, բավարար չափով)
- բարդություն** (դժվարություն)

- բարդույթ** (կոմպլեքս, կաշկանդվածություն)
- գերադասություն** (գերադաս, նախընտրելի լինելը)
- գերազանցություն** (որևէ բանում մեկի (մի բանի) հմտ. առավել լինելը, (դվնգ.) դիմելու հարգական տիտղոս՝ Ձերդ գերազանցություն)
- գերակայություն** (գերազանց, գերիշխող լինելը)
- գնողականություն** (դրամական միավորի գնողական կարողությունը)
- գնողունակություն** (գնումներ կատարելու ունակություն)
- գործածել** (կիրառել, բանեցնել)
- օգտագործել** (գործադրել, օգտվել, ծառայեցնել) **գործարկել** (գործածության մեջ դնել, գործի դնել, փորձարկել)
- գործառնություն** (ֆինանսական, առևտրային ևն գործարք, միավորված գործողությունների ամբողջություն (օպերացիա))
- գործառություն** (գործառելը, գործառնություն կատարել, վարել, գործել, (գիտ.) իր դերը, պաշտոնը՝ գործառույթը կատարել)
- գործառույթ** (երևույթի գործունեություն (ֆունկցիա))
- գործոն** (ազդակ, ներգործող ուժ)
- գործուն** (գործող, գործունյա)
- գրախոս** (նա, որ գրախոսություն է գրում, աշխատանքը ներկայացնող, գնահատող)
- ընդդիմախոս** (մեկի կարծիքին ևն հակառակ խոսող, գիտական գնահատումով հանդես եկող)
- դիտարկել** (քննել, վերլուծել, ուշադրության առնել)

⁴⁶ Ձուգահեռ տրվող բառերի մի մասը ունի համընկնող իմաստներ: Այստեղ բերվում են դրանց միայն տարբերվող իմաստները:

դիտել (նայել, հետևել)
երախտագիտություն (զգացմունք՝
 լավության դիմաց)
երախտիք (լավություն)
զանցանք (թեթև հանցանք)
հանցանք (հասարակականորեն
 վտանգավոր, դատապարտելի
 արարք կամ անգործություն)
զգայնություն (զգայունություն,
 զգացողություն)
զգայություն (զգալը, գիտակցության
 մեջ նյութական աշխարհի արտա-
 ցումը)
զգոնություն (զգոն, աչալուրջ լինելը)
զգացմունք (մարդու ֆիզ. և հոգ.
 զգայությունների ամբողջություն)
զգացում (զգալը, հոգեկան ապրում,
 հույզ, զգացողությունը)
զգույշ (կշռադատող, հնարավոր
 վտանգները նախատեսող ևն)
զգուշավոր (զգուշություն հանդես
 բերող)
զգուշավորություն (զգուշավորի
 հատկությունը, զգուշավորի վար-
 մունք)
զգուշություն (զգույշ լինելը)
զեկույց (հաղորդում)
զեկուցում (բանախոսություն)
զերծ (ազատ, անմասն, մի բանից հեռու)
զուրկ (զրկված, մի բան չունեցող, աղ-
 քատ)
զինակիր (սպառազեն, զինավառ)
զինակից (դաշնակից, ռազմընկեր)
զննել (ուշադրությամբ նայել, տնտղել
 իրերը, փաստաթղթերը, դիակը)
քննել (քննության ենթարկել, դիտել)
ընդդիմադիր (դիմադրող, դեմ կանգ-
 նող, հակառակ ուղղությամբ ազ-
 դող, հակաճառող)
ընդդիմություն (ընդդեմ՝ հակառակ
 լինելը, ներհակություն, դիմադրու-
 թյուն, դիմություն)
թողարկել (պատրաստի արտադրանք
 բաց թողնել, արտադրել, վաճառքի
 հանել)
թողնել (թույլ տալ, թույլատրել,
 արտոնել)

թվարկել (իրար հետևից թվել)
թվել (հիշատակել, նկարագրել)
ժողովրդականություն (համբավ, հե-
 դինակություն)
ժողովրդայնություն (ժողովրդային
 լինելը)
ի ցույց դնել (երևացող տեղ դնել, ձևի
 համար դնել, տեսցնել, մեկի պա-
 կասությունները բոլորի առաջ
 ասել)
ցույց տալ (տեսնել տալ, այնպես
 անել, որ տեսնեն, ապացուցել,
 հանդես բերել, վկայել ևն)
ցուցադրել (մի երևացող տեղ դնել, որ
 տեսնեն, կինոնկար ցույց տալ, բե-
 մադրել, ի ցույց դնել)
իմաստնություն (իմաստուն լինելը)
իմաստություն (երևույթների, դեպքերի
 ևն խոր իմացություն)
լերկ (բուսազուրկ, առանց մազային
 ծածկույթի, տերևներից զուրկ)
մերկ (առանց հագուստի, անհանդեր-
 ծանք)
լուսավորական (լուսավորության՝
 կրթության, դաստիարակության
 վերաբերող)
լուսավորչական (Գրիգոր Լուսավորի-
 չի սահմանած օրենքներով, այդ
 դավանանքն ընդունող)
խնդիր (հարց)
խնդիրք (խնդրանք)
կազմակերպական (կազմակերպելուն
 հատուկ)
կազմակերպչական (կազմակերպչին
 հատուկ)
կանգնեցնել (ոտքի վրա բարձրացնել,
 դնել, պահել, աշխատանքը, գործո-
 ղությունը դադարեցնել ևն)
կասեցնել (ընթացքը, զարգացումը,
 օրենքի կիրառությունը)
կառույց (նոր կառուցվող շենք՝ շինու-
 թյուն)
կառուցվածք (որևէ բանի կազմության
 մեջ մասերի դասավորությունը,
 հարաբերակցությունը, ներքին
 կազմություն)

կառչել (ամուր բռնել ինչ-որ բանից,
 պինդ կպչել, հաստատվել)
կարծել (կարծացնել, (իրավք.), դատա-
 կան գործը դադարեցնել՝ խափա-
 նել)
կասկածալի (կասկածով լի)
կասկածելի (կասկած ներշնչող)
կատարելիություն (կատարելի լինելը)
կատարելություն (կատարյալ լինելը)
հազվագյուտ (ած., դժվարությամբ
 գտնվող, մեծ արժանիքով օժտ-
 ված)
հազվադեպ (ած., մակբ., սակավադեպ,
 քիչ պատահող, հազիվ պատահող)
հաղթանակել (հաղթանակ տանել,
 տիրապետել)
հաղթել (պարտության մատնել)
հաղորդակցություն (ճանապարհային
 հաղորդակցում)
հաղորդակցում (մարդկանց հարա-
 բերվելը խոսքով)
հայեցակարգ (տեսակետների ամբող-
 ջություն)
հայեցակետ (տեսակետ)
հայեցողություն (ընտրություն անելը,
 ըստ կամքի)
հայեցություն (հայացք, արտաքին
 երևույթ)
հանկարծակի գալ (հանկարծ,
 անսպասելի ձևով)
հանկարծակիի գալ (անսպասելի
 բանից շփոթության մեջ ընկնել)
հանցագործ (գ. հանցագործություն
 կատարող անձ)
հանցակից (հանցանքի մասնակից,
 մեղսակից)
հանցավոր (ած. հանցանք գործող,
 գործած, հանցապարտ)
հաշվարկել (մի բանի տարբեր կողմե-
 ըր նկատի առնել)
հաշվել (համրել)
հառել (անքթիք նայել)
հառնել (վեր կենալ, ելնել, վեր խոյա-
 նալ)
հասկացողություն (ըմբռնելու կարո-
 ղություն)
հասկացություն (զաղափար)

հավակնոտ (հանդուգն, հավակնա-
 միտ)
հավակնորդ (թեկնածու)
հավաստագրել (վկայագրել, գրավոր
 կերպով վավերացնել, ճշգրտորեն
 գրի առնել)
հավաստել (ստուգությունը հաստա-
 տել, հավաստի ցույց տալ, հավաս-
 տի դարձնել, հավաստիացնել)
հավատ (հավատալը, վստահություն
 դեպի կյանքը՝ մարդիկ, ընդհանուր
 իմաստով)
հավատամք (հավատի դավանանքի
 ամփոփումը, քաղաքական համոզ-
 մունքների ամբողջություն՝ ուղղու-
 թյուն)
հավատք (դավանանք՝ մասնավորեց-
 ված իմաստով)
հավաքագրել (շատերին վարձել մի
 բանի համար, համալրել, համախմ-
 բել)
հավաքել (խմբել, ժողովել, հրավիրել,
 կանչել)
հարմարանք (հարմար լինելու պարա-
 գա, հանգամանք)
հարմարություն (հարմար լինելը)
հետախուզություն (հետախուզելը)
հետախուզում (որոնում, փնտրելը,
 հետախուզելը)
հետնորդ (ժառանգ, հաջորդ, սերունդ)
հետևորդ (հետևող, գաղափարակից,
 գործը շարունակող, կողմնակից)
հիմնադրել (հիմք դնել, հաստատել,
 հիմնարկել՝ հաստատուն և ամբող-
 ջական կարգով)
հիմնել (սկիզբ դնել, հիմք գցել, կազ-
 մակերպել)
հիմնավորք (օրերով հիմ, շատ տարի-
 քավոր, ծերացած)
հնօրյա (հին օրերում եղած, անցյա-
 լում, վաղեմի)
հնար (ճար, միջոց, հնարավորություն,
 ջանք)
հնարանք (որևէ բան արտահայտելու
 ձև, եղանակ)
հնարք (ճարտարություն, վարպետու-
 թյուն, խորամանկություն)

հրաձիգ (հրացանով լավ կրակող, զինվոր)

հրծիգ (հրդեհաձիգ, հրահրող, խռվարկու)

հրապարակել (հրապարակ հանել, հայտարարել)

հրատարակել (տպագրել)

հրավեր (հրավիրելը, հրավիրատոմս)

հրավերք (խնջույք, ճաշկերույթ)

հրատարակություն (հրատարակելը, տպագրելը)

հրատարակչություն (հրատարակությանը զբաղվող հիմնարկ)

ծեռներեց (ծեռնարկու, գործարար, խիզախ)

ծեռնիս (իրավասու, իրավագոր, կարող, օրինավոր)

մանրամասներ (առանձին մանրամասնություններ)

մանրամասնություններ (բոլոր հանգամանքները)

մեղա գալ (մեղքը խոստովանել, ներում հայցել)

մեղանչել (մեղք, հանցանք գործել)

մեղադրյալ (նա, որ մեղադրվում է հանցանքի մեջ և դրա համար դատի է ենթարկված)

մեղավոր (օրենքի դեմ մեղանչած, հանցավոր)

մեղսակից (հանցանքին մասնակից)

միաժամանակ (միևնույն ժամանակ)

միառժամանակ (ժամանակավորապես)

միասնական (միասնություն կազմող, միավորված, միահամուռ)

միացյալ (մի ամբողջություն կազմող, միասին հավաքված)

մտածողություն (մտածելու ունակություն, մտածելը)

մտածություն (դատողություն)

մրցակցություն (մրցակից լինելը)

մրցություն (իրար հետ մրցելը)

մրցույթ (առավել արժանավորին ի հայտ բերելու հնարավորություն ընծեռող մրցություն, կոնկուրս)

նկարագիր (դեմք, պատկեր)

նկարագրություն (մեկի բնութագիրը)

Նորելուկ (որևէ ասպարեզում նոր հայտնված մարդ, դուրսպրծուկ)

Նորընծա (նոր ձեռնարկված քահանա, տվյալ բնագավառը նոր մուտք գործած)

Նորություն (նոր լինելը, նոր վիճակը, նոր լուր)

Նորույթ (զիտության և այլ բնագավառի նորություն)

շփոթմունք (շփոթ վիճակ, շփոթ(վ)ած բան, հուզմունք, իրարանցում)

շփոթություն (թյուրիմացություն, սխալանք, շփոթելը)

ոգեկոչել (մեռած մարդու ոգին կոչել, որևէ մեկի հիշատակը վերակոչել)

ոգևորել (ոգի ներշնչել, խանդավառել)

որակավորել (որակը բարձրացնել, որակյալ դարձնել, բնորոշել, որոշել զիտելիքների մակարդակը)

որակել (սահմանել՝ որոշել որակավորումը, բնութագրել, գնահատել)

չափ (չափման միավոր, քանակ, սահման)

չափս (չափերը որոշող տվյալների ամբողջություն)

պահանջ (պարտադրվող ցանկություն)

պահանջարկ (տնտես. մարդկանց՝ ապրանքներ գնելու ցանկությունը և ունակությունը)

պահանջմունք (բավարարման ենթակա կարիք)

պահել (որոշ դրության մեջ թողնել, խնամել)

պահպանել (առանց կորստի կամ փչացման պահել)

պաշտպանել (անվտանգությունն ապահովել)

պահեստ (ապրանք, մթերք պահելու շենք)

պահուստ (հոգեպահուստ, պահ մտնելը, պահպանություն)

պաշտոնական (պաշտոնին վերաբերող)

պաշտոնական (ծառայողական)

պատկանելիություն (պատկանելի լինելը)

պատկանելություն (պատկանելը)

պատճառ (չարժառիթ, դրդապատճառ)

պատճառաբանություն (փաստարկներ՝ որևէ բան հիմնավորելու համար)

պատվեր (որևէ բան պատրաստելու հանձնարարություն)

պատվիրան (կրոնաբարոյական պատվեր, պատգամ)

սերմացան (մեքենա)

սերմնացան (մարդ)

սկզբունքայնորեն (սկզբունքային կերպով)

սկզբունքորեն (որպես սկզբունք)

սովորություն (անհատի վարժված լինելը, անհատի վարժություն)

սովորույթ (ավանդաբար հաստատված հասարակական (կենցաղային, ժողովրդի) վարքագծի կանոնների ամբողջություն ևն)

վաստակաբեկ (պարտասուն, հոգնած, դադրած)

վաստակաշատ (մեծ վաստակ ունեցող, վաստակավոր)

վերահաս (անսպասելիորեն վրա հասնող, սկսված)

վերահասու (մի բանի ուշադիր հետևող, գիտակ)

տարածություն (անսահմանափակ ընդարձակություն)

տարածք (որոշակի տարածություն, մակերես)

տարեդարձ (տարին լրանալու թվականը, օրը, տոնախմբություն)

տարելից (որևէ դեպքի որևէ տարին լրանալը)

տեղեկատվություն (տեղեկություն տալը, լրատվություն)

տեղեկություն (տեղյակ լինելը, լուր, ծանուցում)

տեղի տալ (նահանջել, զիջել)

տեղիք տալ (առիթ տալ)

տիրություն (խնամք, հոգատարություն, խնամելը, իշխանություն)

տիրույթ (հող՝ կալված, տիրապետություն, սեփականություն, տարածություն (մաթ.՝ կապակցված բաց բազմություն))

տնօրենություն (տնօրեն լինելը, ղեկավարություն)

տնօրինություն (տնօրինելը)

տուգանք (նյութական պատիժ)

տույժ (բարոյական պատիժ)

ցեղական (ընտիր ցեղի պատկանող, ցեղին հատուկ)

ցեղային (ցեղին պատկանող, ցեղի, ժառանգական)

ցուցմունք (վկայություն)

ցուցում (հրահանգ, առաջադրանք)

ուսմունք (զիտություն, վարդապետություն)

ուսում (կրթություն, ուսումնասիրություն)

փաստ (իրողություն, եղելություն, իսկություն, օրինակ ևն)

փաստարկ (հիմնավորում, պատճառաբանություն)

փոխակերպել (կերպարանքը փոխել, վերածել այլ կառուցվածքի, առհասարակ՝ փոփոխության ենթարկել)

փոխարինել (մի բանի փոխարեն մի ուրիշը դնել, գործածել)

փոխարկել (մի բան այլ բանի վերածել)

փորձարկել (փորձնական օգտագործմամբ ստուգել որակը՝ պիտանիությունը)

փորձել (փորձ կատարել, որևէ բանի ձեռնարկել, համտես անել ևն)

փոփոխություն (փոփոխվածը)

փոփոխում (փոխելը, փոփոխելը)

քառատող (չորս տողից բաղկացած, բանաստեղծական տուն)

քառյակ (չորս տողից կազմված չափածո գործ, չորս մարդուց կազմված խումբ ևն)⁴⁷

⁴⁷ Այս և նման բառերի գործածությանը դիմելիս մի՛ խուսափեք օգտվելուց ձեր ձեռքի տակ եղած համապատասխան մասնագիտական կամ բացատրական բառարաններից:

ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 3

ՄԱՍ 1. ԼԵՁՈՒ. ԼԵՁՎԻ ՀԱՍԱՐԿԱԿԱՆ ԴԵՐՆ, ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐՆ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐՆ

Լեզուն որպես հաղորդակցման միջոց: Լեզուն որպես նշանային համակարգ, հիմնական հատկանիշները: Հայոց լեզուն աշխարհի լեզուների շարքում: Հայոց լեզվի ծնավորումը: Հայոց լեզվի տարբերակները՝ բարբառներ, խոսակցական լեզու, գրական լեզու. գրական լեզուն որպես ազգային լեզվի բարձրագույն ձև: Գրական լեզվի զարգացման փուլերը: Հայոց գրական լեզվի երկու տարբերակները՝ արևմտահայերեն և արևելահայերեն: Գրական լեզվի գրավոր և բանավոր ձևերը: Պետական լեզու: Հայոց լեզվի գործառույթները:..... 4

ՄԱՍ 2. ԼԵՁՎԱԿԱՆ ՆՈՐՄ (ԿԱՆՈՆ)

Լեզվական նորմ հասկացությունը, լեզվական նորմի զարգացումը. լեզվի նորմավորման չափանիշները: Հայոց գրական լեզվի հիմնական նորմերը՝ արտասանական, բառապաշարային, քերականական: 18

2.1. ՀՆՉՅՈՒՄԱԿԱՆ (ԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ) ՄԱԿԱՐԴԱԿ

Ուղղախոսություն. ծայնավորների արտասանությունը, ծայնավորական զուգորդումներ, եռաշարք բաղաձայնների արտասանությունը: Տառադարձություն. օտար բառերի արտասանության յուրահատկություններ: Հնչյունափոխություն: Շեշտ: 26

2.2. ԲԱՌԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿ

Հայոց լեզվի բառապաշարը. բնիկ հայերեն բառեր, փոխառյալ բառեր և օտարաբանություններ, հմաբանություններ, նորաբանություններ, բարբառային կամ խոսակցական բառաշար: Իմաստաբանություն. տերմին և տերմինաբանություն, իմաստափոխություն, բառերի ձևաիմաստային խմբերը՝ հոմանիշներ, հոմանիշների շփոթություն, համանուններ, հարանուններ, հարանունների շփոթություն, հակահիշներ: Ստուգաբանություն: Բառակազմություն: Հապավումներ: Համառոտագրություն: Բառային զուգակցում (համապատասխանություն). բառերի իմաստային, բառապաշարային և քերականական անհամատեղելիություն: Ավելորդաբանություն և կրկնաբանություն: Դարձվածքներ, դարձվածքների ճիշտ գործածություն: Բառարանագրություն: 39

2.3. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ

2.3.1. Ձևաբանություն

Ձևաբանական նորմ: Ձևաբանության ուսումնասիրության առարկան: Խոսքի մասեր: Խոսքի մասերի փոխանցում և փոխանունություն: Գոյական. հատուկ և հասարակ գոյականներ: Գոյականի թիվը. հոգնակի թվի կազմության տարբերակներ: Հավաքական գոյականներ: Անեզական գոյականներ: Որոշյալ և անորոշ առումներ: Գոյականի հոլով և հոլովում: Հոլովական տարբերակային ձևեր: Ածական: Ածականի տարբերակային ձևեր: Թվական: Թվականի տարբերակային ձևեր: Թվականի ուղղագրությունը: Դերանուն: Դերանվան տարբերակային ձևեր: Հոդ: Բայ. բայի կազմությունը, բայի սեռը: Բայի անդեմ ձևեր: Ժամանակաձևեր: Անկանոն բայեր: Մակբայ: Մակբայի գործածության յուրահատկություններ: Կապ: Կապերի գործածության յուրահատկություններ: Շաղկապ: Շաղկապների գործածության յուրահատկություններ: Վերաբերականներ: Չայնարկություններ: 115

2.3.2. Շարահյուսություն

Բառակապակցություն: Նախադասություն: Նախադասության անդամների կապակցման եղանակները. համաձայնություն, խնդրառություն, առդրություն: Շարահասություն: Հնչերանգ: Պարզ նախադասություն: Երկկազմ նախադասություն: Նախադասության գլխավոր անդամներ. ենթակա, ստորոգյալ: Նախադասության երկրորդական անդամներ. գոյականական անդամի լրացումներ, բայական անդամի լրացումներ: Նախադասության ծավալուն անդամ: Դերբայական դարձված: Նախադասության բազմակի անդամներ: Նախադասության այլ բաղադրիչներ: Միակազմ նախադասություն: Բառ-նախադասություն: Բարդ նախադասություն. բարդ համադասական նախադասություն, բարդ ստորադասական նախադասություն. ստորադաս նախադասության տեսակները: Բարդ ստորադասական նախադասության վերածումը պարզի: Մեջբերվող խոսք: Ուղղակի մեջբերված խոսքի փոխակերպումը անուղղակիի: Ներգործական և կրավորական կառուցվածքի նախադասություններ: Ձեղչում: 185

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

- Հավելված 1.** Արևելահայերենի և արևմտահայերենի հնչյունական, բառային և քերականական տարբերություններ 263
- Հավելված 2.** Բաղադրյալ հատուկ անուններում մեծատառերի գործածության մասին. 276
- Հավելված 3.** Հայերենի կետադրությունը 284
- Հավելված 4.** Բառակազմական, մասամբ իմաստային ընդհանրություններ ունեցող բառերի ցանկ 305

Ավետիսյան Յուրի Սրապիոնի
ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԽՈՍՔԻ ՄՇԱԿՈՒՅԹ

Գիրք Ա

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ. ԳՐԱԿԱՆ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ՆՈՐՄԸ

Դասագիրք բուհերի ոչ բանասիրական
ֆակուլտետների ուսանողների համար

Կրթության նախարարության հրատարակչություն՝ Լիանա Միքայելյան, Սերժ Մելքունյան
Շապիկը և Էջաղրունը՝ Գրիգորի Հարությունյանի

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84/16: Թուղթը՝ օֆսեթ:
Ծավալը՝ 19.5 տպ. մամ.:

Տպագրվել է «ԶԱՆԳԱԿ-97» ՍՊԸ տպարանում
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23-25-28
Հեռապատճեն՝ (+37410) 23-25-95, էլ. փոստ՝ info@zangak.am
էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am